Ա. Մ. ԻՆՃԻԿՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

А. М. ИНДЖИКЯН

ЛЕТОПИСЬ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ МИКАЕЛА НАЛБАНДЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1954

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

8(092)
Ի-58

Ա. Մ. ԻՆՃԻԿՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1608

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1954

ԳՐԱԴԱՐԱՆ

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

Պատ. խմբագիր Գ. ՀՈՎՆԱՆ

4895

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ
ծննդյան 125-ամ յակին

(1829—1954)

Մեր աչքի առաջև են հայոց ազգի համար սոսկաձից հարյուր տարի հետո գալոց օրերը...

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ



ԱՌԱՋԱԲԱՆ

Միքայել Նալբանդյանը հայ հասարակական մտքի զարգացման նախամարքսիստական շրջանի ամենամեծ դեմքն է և սոցիալ-դեմոկրատիայի նախորդը մեր իրականության մեջ։ Նա կանգնած է 60-ական թվականների ռուս մեծ ռևոլյուցիոներ-դեմոկրատների կողքին, որոնց պատմական դերն ու նշանակությունը բարձր գնահատելով, Վ. Ի. Լենինը նշում էր, թե որքան մենք ավելի ենք հեռանում նրանց ապրած ժամանակաշրջանից, «այնքան ավելի է պարզվում մեզ համար նրանց մեծությունը» (Լենին, երկեր, 4-րդ հրատ., հատ. 17, էջ 139)։

Հայ հասարակական-քաղաքական միտքը բարձրացնելով ռուս ռևոլյուցիոներ-դեմոկրատների պայծառ պլեադայի՝ Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի դաղափարների մակարդակին, Նալբանդյանը նշանավորեց մի ամբողջ դարաշրջան հայ ժողովրդի կուլտուրայի պատմության մեջ։

Լինելով իր ժամանակի հայ իրականության ամենառաջավոր, ամենալուսամիտ դեմքը, նա տեսավ, որ Ռուսաստանի հետ իրենց բախտը կապած բոլոր ժողովուրդների թվում նաև հայ ժողովուրդը տնտեսական և ազգային ճնշումներից կազատագրվի միայն ռուսական ռևոլյուցիայի հաղթանակի շնորհիվ։ «Ռուսիո ազատությունը,— մարգարեաբար կանխատեսում էր նա,—ընդհանուր մարդկության վերաբերմամբ մեծ խորհուրդ ունի»։

Չինակցելով Չերնիշևսկուն, Գերցենին, Օգարևին, Նալբանդյանն անվեհեր ու անձնվեր պայքար մղեց հորատատիրության և ցարիզմի դեմ հանուն համառուսական դեմոկրատական ռևոլյուցիայի։ Իր ամբողջ տաղանդն ու էրուդիցիան նա ծառայեցրեց այդ մեծ նպատակին։

Հարատահարվող ժողովրդի իրավունքների պաշտպանությունը Նալբանդյանը դարձրեց իր կյանքի և գործունեության «բուն խորհուրդը և նպատակը»: Ժողովրդի լուսավորության, նրա ազատագրության գաղափարներով են տոգորված հայ մեծ ռևոլյուցիոներ-դեմոկրատի երկերը՝ անկախ նրանց ժանրից ու բնույթից. գեղարվեստական արձակ և բանաստեղծություն, հրապարակախոսական հոդված և պամֆլետ, փիլիսոփայական-տնտեսագիտական տրակտատ և գրաքննադատություն,— գաղափարական զենքի այս բոլոր տեսակներով, իրեն հատուկ կրքով ու ավյունով, Նալբանդյանը բարձրացնում էր ժամանակի առաջնակարգ, կենսական կարևորություն ունեցող հարցերը՝ ձգտելով ժողովրդին պատրաստել իրականության ռևոլյուցիոն վերափոխման գործի համար:

Այդ հիմնական նպատակից ելնելով, Նալբանդյանը գրականության և արվեստի հարցերում հետևողականորեն պաշտպանում և իր գեղարվեստական ստեղծագործություններում կիրառում էր ռեալիզմի սկզբունքը: Գեղեցիկը կյանքն է, և գրականության, ինչպես և առհասարակ արվեստի չափանիշը՝ կյանքի նկատմամբ նրանց ունեցած հարաբերությունն է. մերկացնել, ցույց տալ ցարական-ճորտատիրական իրականության այլանդակությունները՝ ահա Նալբանդյանի առաջադրած ռեալիզմի խնդիրը: Բելինսկու և Չերնիշևսկու էսթետիկական սկզբունքները կիրառելով հայ իրականության մեջ, Նալբանդյանը նշում էր, որ գրողը, արվեստագետը չպետք է կանգ առնի այդտեղ. նա պետք է դատավճիռ կարդա իրականության այլանդակ երևույթների նկատմամբ, բարձրացնի ժողովրդական մասսաների ակտիվությունը, նրանց հասարակական գիտակցությունը:

Ժխտելով արևմտաեվրոպական իդեալիստական-մետաֆիզիկական փիլիսոփայությունը, Կանտի, Շելլինգի, Ֆիխտեի ռեակցիոն հայացքները, Նալբանդյանը հայ հասարակական միտքը կողմնորոշում էր դեպի մատերիալիզմը, որը հանդիսանում էր ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատների քաղաքական ծրագրի տեսական հիմքը: Կանգնելով մատերիալիզմի դիրքերում, մատերիայի և գաղափարի փոխհարաբերության հարցում առաջնությունը տալով մատերիային, Նալբանդյանը շարժումն ու պայքարը տեսնում էր ոչ միայն բնության մեջ, այլև այդ համարում էր հասարակական զարգացման բովանդակությունը. «Գործունեությունը,— գրում էր նա,— շարժողության հետևանք է, և առանց շարժողության չկա գործունեություն: Ուր չկա գործունեություն, ասել է չկա շարժողություն, իսկ

ուր շարժողություն չկա, այնտեղ կյանք չկա, այնտեղ թագավորում է մահը»: Հենվելով մատերիալիստական այս սկզբունքների վրա, Նալբանդյանը մերկացնում էր հայ լիբերալներին, որոնք, ձգնելով ավղել սոցիալական հակասությունները, հաշտություն ու համաձայնություն էին քարոզում: Նալբանդյանն այդ համարում էր վնասակար ու կործանարար, նշելով, որ պայքարի ու շարժման մեջ է ծնվում առաջավորի հաղթանակը, հին՝ իր դարն ապրած ֆեոդալական-հոգևորականական կարգերի նկատմամբ:

Ճիշտ, անդրդվ պայքար մղելով բուրժուական նացիոնալիզմի և սոցիալականության դեմ, Նալբանդյանը բացառիկ ուժով ու սրությամբ մերկացրել է արևմտյան բուրժուական պետությունների ազգամիջյան քաղաքականությունը, որ այդ պետությունները, «քաղաքակրթության» տարածելու անվան տակ, վարում էին ժողովուրդների նկատմամբ, սոցիալական լուծը դնելով նրանց ուսերին, բռնապետական ճնշման ու ճնշվելու ենթարկելով նրանց: Հետևողականորեն պաշտպանելով ժողովուրդների բարեկամության գաղափարը, Նալբանդյանը հատկապես ընդգծում էր ռուս ժողովրդի պատմական դերը մյուս ժողովուրդների ազատագրության և զարգացման գործում: «... Ոչ միայն ինքը՝ ռուսը կուզե իր ազատությունը, այլ կարդալե, թե՝ Լեհաստան, Ֆինլանդիա, Փոքր Ռուսիա (16 միլիոն ժողովուրդ), Կովկաս, Վրաստան և Հայաստան պետք է որ ազատ և անկախ լլլան...»:

Հսկայական է Նալբանդյանի դերը հայ գրականության և հասարակական մտքի հետագա զարգացման գործում: Մեր կլասիկ գրականության լավագույն ներկայացուցիչները՝ Աղայան, Պռոշյան, Պատկանյան, Թումանյան, Հակոբյան, այս կամ այն չափով կրել են Նալբանդյանի բարերար ազդեցությունը: Առաջավոր, դեմոկրատական երիտասարդության համար նա եղել է ժողովրդին անձնվիրաբար ծառայելու լավագույն օրինակ, նրա անունը ներշնչել է ակնածանք ու հպարտություն:

Իր պայծառատես, խորաթափանց հայացքով Նալբանդյանը տեսավ հարազատ ժողովրդի լուսավոր գալիքը՝ իրենից «հարյուր տարի հետո գալոց օրերը»: Նա լի էր անսասան հավատով, որ ապագան պատկանելու է ճշմարտության և ազատության զինվորներին, որ գալիք սերունդներն ըստ արժանվույն պիտի գնահատեն նրանց սխրագործությունը. «Ճշմարտության զինվորների և նոցա առաջնորդի անունները,— գրում էր նա,— վաղվողուն աստղերի նման փայլելու են մշտնջենավոր ժամանակով, գալոց հայկական

սերունդի աչքի առաջև, նորա ժամանակակից պատմության հորիզոնի վերա»:

Ժողովրդի ազատագրության համար կատարած իր մեծ սխրագործությամբ, վսեմ գաղափարներով ու ազնիվ տենչերով տոգորված իր ստեղծագործություններով Նալբանդյանը հարազատ է մեզ, նա մեր ժամանակակիցն է:

Նալբանդյանի կարճատև, բայց հարուստ ու մեծիմաստ կյանքը մեր պատմական անցյալի ամենապայծառ և ուսանելի էջերից մեկն է:

* * *

Գրողի կյանքի և գործունեության տարեգրությունը՝ նրա բազմակողմանի ուսումնասիրության փաստական հիմքն է հանդիսանում: Անտարակույս, առանց այդ հիմքի՝ առանց փաստերի կուտակման ու ճշման, անհնարին է տվյալ գրողի կամ գործչի կյանքի և ստեղծագործության գիտական ուսումնասիրությունը:

«Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը» այս ժանրի առաջին փորձն է սովետահայ գրականագիտության մեջ: Մեր աշխատանքի ընթացքում ղեկավարվել ենք սովետական ռուս գրականագիտության մեջ այս ժանրի ստեղծած լավագույն տրադիցիաներով, աչքի առաջ ունենալով հատկապես Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի տարեգրությունները:

Ի՞նչ աղբյուրներից ենք քաղել «Տարեգրության» փաստերը: Առաջին աղբյուրը, բնականաբար, Նալբանդյանի երկերն են եղել, երկեր բառի տակ հասկանալով Նալբանդյանի ստեղծագործական մտքի բոլոր արդյունքները՝ հրապարակախոսական հոդված, գեղարվեստական արձակ, բանաստեղծություն, նամակ, պաշտոնական գրություն և այլն: Բացի այն, որ այդ երկերն իրենց գրության և տպագրության ժամանակով նշվել են համապատասխան տեղում՝ ժամանակագրական կարգով, այլև օգտագործվել են կենսագրական-փաստական այն բոլոր տվյալները, որ պարունակում են դրանք: Ըստ հնարավորին օգտագործելով Նալբանդյանի երկերում եղած ինքնակենսագրական փաստերը և նույնիսկ ակնարկները (намёк), վերապահությամբ ենք վերաբերվել Կոմս Էմմանուելի «Հիշատակարանին», նկատի ունենալով այդ երկի ժանրային առանձնահատկությունները: Ընդարձակորեն օգտագործել ենք Նալբանդյանի օրագրային նյութերը («Ծոցատետրի նկատողությունները»՝ «Մատյան

ցնացած թղթերի», «Ճանապարհորդության ընթացքը» և բերդի հիշատակարանը), որոնք բացառիկ կարևոր նշանակություն ունեն նրա կյանքի վերջին տարիների (1859—1865) ուսումնասիրության համար: Ի դեպ, պետք է նկատել, որ Նալբանդյանի «Հին տարիների հիշատակարանը» («Իմ տեսածն ու լսածը»), ինչպես և ճանապարհորդության օրագրերն առայժմ կորած են համարվում, որոնք հսկայական փաստական նյութ կարող էին տալ նրա կենսագրության համար:

Երկրորդ հիմնական աղբյուրը եղել է թե՛ Նալբանդյանի ժամանակակից (50—60-ական թվականների) և թե՛ հետագա տարիների պարբերական մամուլը: «Տարեգրության» մեջ նշված է ո՛չ միայն այն, թե Նալբանդյանի տվյալ երկը ե՞րբ, ո՞րտեղ (ո՞ր ամսագրում, շաբաթաթերթում, թերթում) է առաջին անգամ լույս տեսել կամ արտատպվել (իր կենդանության օրով), այլև ժամանակի պարբերական մամուլում տպագրված այն բոլոր փաստերը, որոնք այս կամ այն չափով առնչվում են Նալբանդյանի կյանքի և գործունեության հետ՝ նրա երկերի մասին եղած գրախոսականները, հրատարակությունները, արձագանքները, ակնարկները, նրան նվիրված բանաստեղծությունները, նրա դեմ գրված հոդվածներն ու պամֆլետները, նրա երկերից, այս կամ այն առիթով, քերված քաղվածքներն ու առյուծները և այլն: Հետագա տարիների պարբերական մամուլից օգտագործված են այն բոլոր նյութերը, որոնք ունեն կենսագրական-պատմական ուշագրավ արժեք ու նշանակություն, ինչպես և հավելվածում նշված են Նալբանդյանի հետմահու հրատարակությունները մամուլում:

Նկատի ունենալով, որ Նալբանդյանի երկերի մեծ մասի գրության ճիշտ ժամանակը անհայտ է, նրանց առաջին տպագրությունը պարբերական մամուլում և առանձին հրատարակությամբ նշել ենք գրաքննության բուլլետինների թվականով, որն ավելի մոտ է տվյալ երկի գրության ժամանակին:

«Տարեգրության» համար երրորդ հիմնական աղբյուրը եղել են տպագրված և անտիպ արխիվային փաստաթղթերը: Ուսումնասիրելով մեզ մատչելի բոլոր արխիվները, օգտագործել ենք այն բոլոր վավերագրերը, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով առնչվում են Նալբանդյանի կյանքի և ստեղծագործության հետ՝ Նալբանդյանի բարեկամների և ընտանիների նամակագրությունները, պաշտոնական հիմնարկների գրագրությունները, մամուլի արխիվները, Սինոդի օրագրությունները և այլն:

«Տարեգրության» համար որպես աղբյուր ծառայել են նաև, որոշ չափով, ժամանակակիցների, դժբախտաբար, սակավաթիվ և սակավախոս, հիշողություններ. առաջին հերթին նկատի ենք ունեցել Դ. Աղայանի, Պ. Պռոշյանի, Ն. Տուլկովա-Օգարևայի, ինչպես նաև Նալբանդյանի ուսուցիչ Գաբրիել Պատկանյանի հիշողությունները:

«Տարեգրության» մեջ նշված են նաև ժամանակի հասարակական և քաղաքական կարևորագույն այն դեպքերն ու իրադարձությունները, որոնք, այս կամ այն չափով, կապված են հայ մեծ ուտոպիստներ-դեմոկրատի կյանքի և գործունեության հետ, կամ իրենց արտացոլումն են գտել նրա ստեղծագործության մեջ (գյուղացիական ապստամբությունները և «ռեֆորմը», ուսանողական հուզումները, քաղաքական պրոցեսները, Զեյթունի ապստամբությունը և այլն):

Գալով «Տարեգրության» նյութի շարադրման և մատուցման սկզբունքներին, ձգտել ենք հեռու մնալ տվյալ ժանրի համար, որոշ իմաստով, անխուսափելի չոր փաստագրությունից: Չենք բավականացել միայն փաստերը հիշատակելով. աշխատել ենք, որքան հնարավոր է եղել, բացահայտել դրանց իմաստը, որ առաջին հայացքից թվացել է աննշան: Փաստաթղթերի հակիրճ բովանդակությունը վերարտադրելու հետ միաժամանակ, բացահայտել ենք հազիվ նշմարելի ակնարկները, ընդգծել այն մոմենտները, որոնք, ըստ էության, կապվում են Նալբանդյանի հասարակական-քաղաքական գործունեության, նրա մղած պայքարի խնդիրների հետ: Փաստաթղթերի առավել ցայտուն և բնորոշ տեղերը բերել ենք քաղվածաբար, եղած գրաբար տեքստերը վերածելով աշխարհաբարի: Քաղվածքներ կատարել ենք հատկապես Նալբանդյանի նամակներից, երկերից և կենսագրական-պատմական հավաստի այլ աղբյուրներից: Անհրաժեշտ ենք համարել ժամանակագրական կարգով, իրենց տեղում, նշել նաև Նալբանդյանի այն նամակները, որոնց գրության ժամանակը, տեղը և հասցեատերը հայտնի են, բայց որոնք մեզ չեն հասել:

Աշխատել ենք, որ «Տարեգրության» մեջ նշված յուրաքանչյուր տվյալ՝ փաստարկված լինի. այդ նպատակով, ամեն անգամ ցույց ենք տվել այն աղբյուրը, որտեղից վերցված է տվյալ փաստը և որի վրա հենվելով, արված է այս կամ այն եզրակացությունը: Բոլոր դեպքերում ղեկավարվել ենք «Տարեգրության» ժանրի համար պարտադիր՝ ճշգրիտ վավերականության սկզբունքով: Տեղ-տեղ պահանջվող անհրաժեշտ բացատրություններն ու լրացումները,

այդ հավանական կռահումներն ու եզրակացությունները տվել ենք «Լրացումներ և ծանոթագրություններ» բաժնում:

Մովսեսյան գրականագետների վերջին հետազոտությունների արդյունքների հիման վրա, բնականաբար, վերանայել և ճշտել ենք Նալբանդյանի կյանքի և գործունեության որոշ փաստերը, և այդ առիթով հարկ եղած բացատրությունները տվել ենք նույնպես «Լրացումներ և ծանոթագրություններ» բաժնում:

«Տարեգրության» բոլոր փաստերը նշել ենք հին տոմարով, իսկ նոր փաստաթուղթը (Նալբանդյանի արտասահմանից գրած նամակներն ու գրությունները) թվագրված է հին և նոր տոմարով զուգահեռաբար. վարվել ենք նույն կերպ. երբ փաստաթղթում ամսաթիվը նշված է նոր տոմարով, վերջինս առնելով փակագծերի մեջ, դրել ենք հին տոմարը՝ ժամանակագրության ընդհանուր կարգը չխախտելու համար:

Ելնելով նրանից, որ տվյալ փաստի կամ փաստաթղթի ամիսը հայտնի է, իսկ ամսաթիվը՝ ոչ, զեկավարվելով մեր ունեցած հավանական տվյալներով, դրել ենք նույն ամսի սկզբում, կեսում կամ վերջում: Նույն կերպ ենք վարվել, երբ տարին է հայտնի, իսկ ամիսը՝ ոչ. Նալբանդի տվյալներով որոշված ժամանակը՝ տարին, ամիսը, ամսաթիվը, ինչպես և տարվա եղանակը, դրել ենք ուղղանկյուն փակագծերի մեջ: Նույնպիսի փակագծերում են դրված քաղվածքի կամ փաստաթղթի տեքստում մեր հակիրճ լրացումները, բացատրություններն ու նշումները:

«Հավելվածում», Նալբանդյանի երկերի բիբլիոգրաֆիայի հետ, տվել ենք նաև նրա, դեռևս անհայտ կամ կորած երկերի և նամակների ցանկը, նկատի ունենալով, որ այն գեթ մասամբ կհեշտացնի բանասիրական հետագա պրպտումների գործը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Գրական թանգարան — Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարան։

Մատենադարան — Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Ձեռագրատուն (Մատենադարան)։

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ — Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ։

Կաթ. դիվան — կաթողիկոսական դիվան
Կաթ. ֆոնդ — կաթողիկոսական ֆոնդ
Կարգ. մաս — կարգադրիչ մաս (Սինոդի)
Ֆ. — ֆոնդ
Թղթ. — թղթապանակ
գ. — գործ
վ. — վավերագիր
թ. — թերթ

Գրական թանգարանի «Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդը» կազմվել է վերջերս՝ «Նոր-Նախիջևանի քաղաքագլխի ֆոնդի» և «ե. Շահազիզի հավաքածուի» միացումից, և դեռևս չի մշակված, ուստի հնարավորություն չենք ունեցել վավերագրերի №№-ը նշելու։

ЦГИАМ—Центральный государственный исторический архив в Москве.

ЦГИАЛ—Центральный государственный исторический архив в Ленинграде.

МОГИА—Московский областной государственный исторический архив.

ПБЛ, ф. А. Ф. Сорокина—Рукописный отдел Государственной публичной библиотеки им. М. Е. Салтыкова-Щедрина в Ленинграде, фонд инж. генерала Сорокина Алексея Федоровича, коменданта Петропавловской крепости 1860-х годах (Тетрадь с записями получаемой и отправляемой политическими заключенными корреспонденции за 1862—1868 гг.)

ОППС—Особое присутствие правительствующего сената.

отд.—отделение
эксп.—экспедиция
ф.—фонд
д.—дело
л.—лист

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ 1829 -1866

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆ—ՖԻՇԻՆԵՎ

1829–1853 հուլիսի [8–11]

1 8 2 9

Նոյեմբերի 2.— Դոնի Նոր-Նախիջևան քաղաքում ծնվեց Միքայել Նալբանդյանը։ Հայրը՝ Ղազար Գրիգորի Նալբանդյան, մայրը՝ Մարիամ Հովակիմի Նալբանդյան-Զերչենյան։

Ռուսական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 178։
Երկերի լիակատար ժող., IV, 311։

[1 8 3 6]

Առաջ երկու ամիս.— Նալբանդյանը սովորում է տիրացու Օգանեսա (Եղիշե) վարժապետի մոտ։ Իր արտակարգ ընդունակությունների շնորհիվ կարճ ժամանակամիջոցում նա հասնում է մեկ կամ երկու տարի սովորած աշակերտներին. սահմանափակ գիտելիքների ամբ ուսուցիչն այլևս չի կարողանում բավարարել հարցասեր աշակերտին։

Նալբանդյանը առաջին գիտապիր և ժամանակակից Մ. Տեր-Գրիգորյանը գրում է.

... Բազմաթվաստղոտ երկնքի շնորհ նա այս Եղիշեի մոտ, քան որում, կարճ ընդհատում, տանջվելին մի երկու ամիս շանցած, այս սրամիտ, ուշիմ և աշխույժ նկարման ուշիմ վարժապետ և գրել սովորեցավ, որ այնուհետև խեղճ վարժապետը շատ փնդրտանում էր գոնացուցիչ պատասխան տալ իր մանուկ աշակերտի Մատթեոսյանների և այլոց Հարցումներին»։

Մ. Տեր-Գրիգորյան, Մ. Նալբանդյանցի համառոտ կենսագրությունը — Ղազար Փարպեցու գրած բուղքը, VI։

Նալբանդյանի առաջին ուսուցչի «գիտությունն» աստիճանի մասին գաղափար կարելի է կազմել «Երկխոսության» հետևյալ տողերից, «որը որպես 7–8 տարեկան

1829 Ա

տղա հարցնում էի «վարժապետից» այդ բանի («լուսավորչի կանթեղի» — Ա. Ի.) նշանակությունը, նա գրականապես և ինքնաբավական կերպով պատասխանում էր ինձ, թե՝ «երբ սուրբ Գրիգոր լուսավորիչը գնում էր այդ սարի գլուխը, գիշերային առանձնության մեջ Նարեկ բաղելու, այն ժամանակ հրամայում էր և խկույն օդի մեջ երևում էր այդ կանթեղը և լույս տալիս, որով նա կարողանում էր գրերը ջոկել և կարդալ»։ Գիտեմ ի՛նչ էր հանցանքս, միայն երբ հարցուցի. «Հայկի՛, ո՞ւմ էր հրամայում», ճիպոտն եղավ պատասխանը, այնպես որ ցավիցը մղկտալով, վարպետիս էլ, կանթեղն էլ մոքումս միասին շուռ եկան»։

Երկերի լիակատար ժող., III, 143—144։

[1837—1845]

Նալբանդյանի ծնողները նրան հանելով տիրացու Օգսենտի մոտից, տալիս են Գաբրիել Պատկանյանի մասնավոր դպրոցը։ Այստեղ նա սովորում է հայոց լեզու, ռուսաց լեզու, հայոց պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, ճարտասանություն, կրոն։

Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 139, վ. 415, թ. 286։

«Այս գործունյա և բանասեղծ քահանայի Նախիջևան լինելը շատ լավ հետևանքներ ունեցավ Նալբանդյանի համար,— գրում է Մ. Տեր-Գրիգորյանը։— Քահանան, տեսնելով իր աշակերտի աշխուժ բնավորությունը, սրամտությունը, ուշիմությունը և բանաստեղծական հարմարությունքը, առանձին ուշ դարձուց նորա վերա և ամենայն ջերմեռանդությամբ ու սիրով պարապեցավ հետը։ Վարժապետի այս մասնավոր հոգացողությունը և աշխատությունը իզուր և անօգուտ չեղան, ըստ որում Նալբանդյանցը հատաջադիմությամբ ուսման մեջ բոլոր իր աշակերտներից գերազանց հանդիսացավ»։

Մ. Տեր-Գրիգորյան, Մ. Նալբանդյանցի համառոտ կենսագրությունը — Ղազար Փարպեցու գրած բուղրը, VI։

Գաբրիել Պատկանյանի, որպես ուսուցչի, բնութագիրը տվել է Գ. Զմշկյանը, որ 1849 թ. աշակերտել է նրան Ներսիսյան դպրոցում. «Հայր Գաբրիելը, տեսուչ լինելով, հանձն էր առել և անցնել ընդհանուր պատմություն բարձր դասատան մեջ, որի թվում գտնվում էի և ես 1849 թվականին։ Այդ թվականից սկսած, մինչև իմ վերջնական ուսում ավարտելս արքունական երկրաչափական փակ ուսումնարանում 1854 թվականին, երբեք ես չեմ պատահել այդպիսի մի հմտոր ուսուցչի, որ կարողանար գրավել այդքան աշակերտների ուշադրությունը, առանց շինծու արտիստական միջոցներու։ Նա պատմում էր մեզ տրոյացվոց պատերազմը։ Բայց ինչպե՞ս էր պատմում... Նորա պատմելու ժամանակ մենք ամեն մեկս զգում էինք մեզ այդ հին, անցած, հոմերոսական առասպելական դարում։ Զգում էինք մեզ այն երկրի վերա, Միջերկրական ծովի ափում, հելլենական երջանիկ ցեղերի շրջանում, ապրում էինք նորանց կյանքով, տխրում կամ գլուրճանում, նայելով, թե ինչ անցք էր պատմում մեզ ճարտար հեռուորը»։

Գ. Զմշկյան, Իմ ճիշատակարանը, 6։

1839

Հունիս.— Նալբանդյանի հորից՝ Ղազար Նալբանդյանից հատուկ ցուցակով պահանջվում է վճարել պետական հարկը, որ նա չավորության պատճառով ի վիճակի չէր եղել վճարելու։

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 139, գ. 48, թ. 6.
«Էջմիածին» ամս., 1948, մայիս—հունիս, 58։



Նալբանդյանների տունը Նոր-Նախիջևանում

1840

Փետրվարի 5.— Նոր-Նախիջևանի հասարակությունը լիազորում է երկու հոգու, որպեսզի վերջիններս գնան Պետերբուրգ և [illegible] տարին՝ իրենց ազատել նոր նշանակված պետական ծառեր [illegible]։ Բոլոր այս դիմումներն ապարդյուն են անցնում։

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 139, գ. 48, թ. 3.
«Էջմիածին» ամս., 1948, մայիս—հունիս, 59։

1845

Նշումներ.— Ներսես կաթողիկոսը փակել է տալիս Գաբրիել Պատկանյանի դպրոցը, որտեղ սովորում էր Նալբանդյանը, իսկ [illegible] Պատկանյանին, որպես «խռովարարի», հեռացնում է Նոր-Նախիջևանից։ Միաժամանակ իր և Խալիբյանի համախոհ-գործա-

կից Մկրտիչ Եկենյանին (Սիմոնյանին) նշանակելով ուսուցիչ, Նոր-Նախիջևանի բոլոր տիրացուներին և քահանաներին կարգադրում է հաճախել նրա դպրոցը։ Նալբանդյանը երկու կամ երեք անգամ հաճախելուց հետո, տեսնելով, որ նրանից սովորելու ոչինչ չունի, կտրականապես հրաժարվում է։ Երկեր լիակատար ժող., IV, 21։

Գ. Պատկանյանն իր «Հուշատետրում» այդ մասին պատմում է.

«... Եվ Մկրտիչ վարժապետն սկսավ նորան քերականություն ուսուցանել. և երևեցավ, որ Նալբանդյանն քերականությունն գիտեր յոթնապատիկ լավ, քան զԵկենյանն։ Սկսավ աշխարհագրություն ուսուցանել, բայց Նալբանդյանն, քան զնա քաջավարժ հանդիսացավ. սկսավ պատմություն ուսուցանել, Նալբանդյանն սկսավ նորա պատմական և ժամանակագրական սխալներն հայտնելով խայտառակել»։ Գրական թանգարան, ֆոնդ 1, թ. 383—385։

Կաթողիկոսն իմանալով, որ Նալբանդյանը հրաժարվում է Եկենյանի դպրոցն հաճախելուց, հրամայում է նրան քննության ենթարկել. «Իսկույն Մկրտիչ վարժապետն տալիս է նորան [Նալբանդյանին] շարադրության բնաբանը և հրամայում է, որ իր դիմաց գրեւ Քաջասիրտ և շնորհալի պատանին առանց այլևայլի, նստում գրում է և մեծապես զարմացնում է, թե Ներսեսին և թե Մկրտիչ վարժապետին, որքան բովանդակությամբ, այնքան և լեզվի կանոնավորությամբ»։ [Մ. Տեր-Գրիգորյան, VII]։ Ըստ Գ. Պատկանյանի, տեղի է ունեցել մրցություն Նալբանդյանի և վարժապետ Մկրտիչ Եկենյանի միջև. «Այս շփոթի ժամանակ,— պատմել է ներկա եղողներից մեկը Գ. Պատկանյանին,— մի օր ժողովեցանք վարժարան, ուր պիտի Նալբանդյան և Եկենյան շարադրություններով մրցեին, զանազան առարկաների վերա, սև տախտակի վերա գրելով։ Երկու տախտակ էր դրած. տեր Մարտիրոս և տեր Աստվածատուր դատավոր էին նատած. այնտեղ ներկա էին Խադամյանն, Օգարաշյան Դավիթն, Ավագյան երկու եղբարք, Տիգրանյան բժիշկ և այլ ուսանողք, որ Լազարյան ճեմարանի աշակերտ էին։ Դոքա տվին մի գաղափար. մինչև Եկենյան երկու տող գրեց, Նալբանդյանն ոտանավոր գրեց և լրացույց, որ այն էր, որ դու [Գաբրիել Պատկանյանը] «Արարատի» մեջ ևս տպել էիր։

Նալբանդյանն թեպետ հաղթեց, բայց յուր հաղթությունն ինքն ոտնակոխ արար. սև տախտակի վերա Ներսեսի անունը փոխանակ գրելու կաթողիկոս, գրել էր՝ կեթողիկոս»։ Գրական թանգարան, ֆոնդ 1, թ. 383—385։

Նալբանդյանը, պատանեկան հասակում, իր գիտելիքները մեծ չափով հարստացրել է ընթերցանությամբ, օգտվելով մանավանդ գրադարաններից։ Հովհ. Պապաբենյանը պատմում է, թե ինչպես մի անգամ պատանի Մուխայլը (Նալբանդյանը) եկավ իրենց տուն և վերցրեց Խորենացու «Հայոց պատմությունը»։ «Լույս» շաբաթաթերթ, 1913, № 17—18, 7։

1846

Փետրվարի 5.— *Նալբանդյանի նամակը տիրացու Սարգսին (Բարսեղ քահանա Պոպովյան), Միքայել դպիր Ղազարյան Ուստայանց ստորագրությամբ։*

Նոր վրդովմունք է արտահայտում, որ Ներսես կաթողիկոսի հրամանով իր ուսուցիչ Գաբրիել Պատկանյանը վտարված է Նոր-Նախիջևանից և նրա փոխարեն ուսուցիչ է կարգված Խալիբյանի և մյուս աղաների կողմից հրավիրված «ոմն հիմար և լատինադավան» Մկրտիչ Եկենյան։

Նալբանդյանն աննկարագրելի է համարում նրանց հիմարությունը, եթե նույնիսկ Աֆրիկայի անապատները թուղթ դառնային, Ատլանտյան լճերը՝ թանաք և Կովկասի անտառները՝ գրիչ։ Այնուհետև նա հիշեցնում է տեղեկացնել, թե կարո՞ղ է, արդյոք, վաղուց ի վեր (Գ. Պատկանյանին աշակերտած ժամանակ) գրած իր շարադրությունը՝ «Մարդեղություն Քրիստոսի», ուղարկել Սինոդին, տպագրության թույլտվություն ստանալու համար։

Երկեր լիակատար ժող., IV, 7—8։

Մարտի 5.— *Երկրորդ նամակը տիրացու Սարգսին՝ իր շարադրությունը տպագրելու մտադրության մասին։*

Երկեր լիակատար ժող., IV, 8։

Մարտի 29.— *Տիրացու Սարգիս Պոպովյանը Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարության ատենադպիր Եղիա Տեր-Աստվածատրյանին ուղղած նամակում, հայտնելով Նալբանդյանից (Ուստայան) ստացած նամակների մասին, դատապարտում է նրա անհնազանդությունը և եզրակացնում, որ եթե նա պատանի հասակում այդպես անհնազանդ է, ապա չափահաս դառնալով, կարող է ուրանալ նաև քրիստոնեական հավատը։ Վերջում խոստանում է, որոշ ժամանակից հետո, Նալբանդյանի նամակներն անպատճառ ուղարկել Նոր-Նախիջևանի «պատվավոր» անձնավորություններին՝ նրա հանդգնությունը սաստելու համար։*

Մատենադարան, Կար. դիվան, թղթ. 122, վ. 310, թ. 10—11։

Հունիսի 30.—*Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությունը Ներսես կաթողիկոսին է ուղարկում տիրացու Սարգսին Նալբանդյանի ստացած նամակների պատճենները, նրան պատասխանատվության ենթարկելու համար։* Մատենադարան, Կար. դիվան, թղթ. 165, վ. 272։

[1846—1847]

Նալբանդյանը Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությանը բողոք է գրում Մկրտիչ Եկենյան (Սիմոնյան) վարժապետի դեմ։ Չի պահպանվել։

Երկեր լիակատար ժող., IV, 21։

1847

Սեպտեմբերի 30.— *Ներսես կաթողիկոսը Խալիբյանին գրում է, թե այն հոգևորականները, որոնց անզգամությունները հայտնի են մեզ իրենց ձեռագրերով, պետք է բոլորովին արտաքսվեն հոգևորականությունից, որովհետև նրանց «դառն երիտասարդությունը» եկեղեցու համար չի կարող «քաղցր պտուղ տալ»։ Ակնարկը վերաբերում է հատկապես Նալբանդյանին, որի՝ տիրացու Սարգսին գրած նամակները արդեն գտնվում էին կաթողիկոսի մոտ։*

Պետական թանգարան, Կար. ֆոնդ, վ. 163/87։

1848

Ապրիլի 7, Նոր-Նախիջևան.— *Նալբանդյանը գրում է ուղերձ՝ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Մատթեոս Վահաբետյանի գալստյան առթիվ։*

Ե. Շահազիզ, Դիվան Մ. Նալբանդյանի, 27—28։

Մինչև մայիսի 10.— *Տնտեսական ծանր պայմաններից ստիպված և հարկերից ազատվելու նպատակով, Նալբանդյանը դիմում է ներկայացնում Նոր-Նախիջևանի հասարակական ժողովին, խնդրելով ազատել իրեն մեշչանական դասից՝ հոգևոր կոչման մեջ մտնելու համար։*

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 693, թ. 21։
«Էջմիածին» ամս., 1948, մայիս—հունիս, 60։

Մայիսի 10.— *Նոր-Նախիջևանի հասարակական ժողովը, քննելով Նալբանդյանի դիմումը, որոշում է նրան արձակել մեշչանական դասից և հանձն է առնում, մինչև նոր մարդահամարը, նրա փոխարեն վճարել բոլոր տեսակի արքունի (պետական) հարկերը։*

Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանը Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությանը ներկայացնելով մեշչանական դասից արձակման իր վկայականը, խնդրում է այն ուղարկել ուր հարկն է՝ իրեն հոգևոր կոչման մեջ ընդունելու համար։*

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 693, թ. 18։
«Էջմիածին» ամս., 1948, մայիս—հունիս, 60։

Հունիսի 2.— *Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությունը, քննելով Նալբանդյանի դիմումը՝ հոգևոր կոչման մեջ ընդունելու մասին, որոշում է խնդրել Մ. Վահապետյանին, որ վերջինս անի համապատասխան կարգադրություն։*

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 693, թ. 19։
«Էջմիածին» ամս., 1948, մայիս—հունիս, 61։

Հունիսի 8.— *Նալբանդյանի՝ մեշչանական դասից արձակման վկայականը Սինոդին ներկայացնելով, Մ. Վահապետյանը խնդրում է բնթացք տալ՝ նրան հոգևոր կոչման մեջ ընդունելու հարցին։*

Մատենադարան, Սինոդի կարգ. մաս, թղթ. 55, վ. 89, թ. 1։

Հունիս.— *Նալբանդյանը հիվանդանում է խոլերայով. «մահահրավեր խոլերան,— գրում է նա ն. թ. օգոստոսի 9-ին Մ. Վահաբետյանին,— բռնեց ինձ իր ճանկերում, և թեև մահից ազատվեցի, բայց անադորուն հիվանդության հիրանների հետքերը՝ թալկություն և մինչև անգամ սրտի նվազումն՝ մնացին իմ վրա, որ մի ամիս [շարունակ] բժիշկների և դեղորայքի մեծ ծախսեր անելուց հետո վերջապես հաստատվեց [խոլերայի հետևանքը] իմ վրա, մնայուն անբուժելի»։ Հաճախ, թուլության հետևանքով, նա ընկնում է անկողին։*

Երկերի լիակատար ժող., IV, 9։ Մատենադարան, Սինոդի կարգ. մաս, թղթ. 55, վ. 89, թ. 8 և հետ.։

Նալբանդյանի այս հիվանդությունը տևում է մինչև 1852 թ.։ Այդ ժամանակաշրջանում, պաշտոնավարելով Հանդերձ, նա բուժվում է Օդեսայի և Քիշինևի բժիշկների մոտ։

Երկերի լիակատար ժող., IV, 26—27։

Հուլիսի 7.— *Սինոդը որոշում է խնդրել Կովկասի փոխարքային, պահպանի վճռով միջնորդի կառավարիչ Սենատի առաջ՝ հոգևոր կոչման մեջ մտնելու համար Նալբանդյանին հարկատու վիճակից ազատելու մասին։*

Մատենադարան, Սինոդի օրագրություններ, 1848, թղթ. 29, թ. 493։

Հուլիսի 17.— *Նալբանդյանն ստանձնում է Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմական առաջնորդարանի քարտուղարի պաշտոնը, որը վարում է մինչև 1853 թ. հուլիսի 8-ը։*

ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, л. 3.

Իր պաշտոնը Նալբանդյանին հնարավորություն է տալիս ծանոթանալու ժողովրդի կյանքին ու կենցաղին, նրա տնտեսական և իրավական ծանր վիճակին ոչ միայն Նոր-Նախիջևանում, այլև Քիշինևում և շրջակա գյուղերում։ Նա

ականատես է լինում հոգևորականության և վաճառականության շահատակություններին ու կեղեքումներին. տեսնում է և բոլոր մանրամասնություններով ուսումնասիրում հասարակական դումարների յուրացումը Խալիբյանի կողմից և Ներսես կաթողիկոսից հավանավորվելը, «ազգային բարերար» հռչակվելը։ Այդ բոլորը Նալբանդյանի մեջ առաջացնում են ատելություն և ցասում ժողովրդի կեղեքիչների նկատմամբ և պայքարի լիցք են տալիս նրան։ Այդպիսով, Նալբանդյանը հետզհետե ներգրավվում է հասարակական գործունեության մեջ։

Օգոստոսի 9, Նոր-Նախիջևան.— *Նալբանդյանը Մ. Վեհապետյանին գրած խնդրագրում, պատրվակ բերելով խոլերայով հիվանդանալը և դրա հետևանքները (թալկություն, սրտի նվազումն), իրեն անկարող է համարում մնալ հոգևորական կոչման մեջ և խնդրում է միջնորդել Էջմիածնի Սինոդին, որպեսզի վերջինս իրեն արձակի, եթե ընդունել է հոգևորական կոչման մեջ, իսկ եթե այդ մասին դեռևս կարգադրություն չի արված՝ ոչնչացնել հոգևորական կոչման վերաբերյալ իր գործը և ետ ուղարկել միշչանական դասից արձակման վկայականը, որպեսզի ինքը դառնի կյանքի այլ եղանակ՝ «բուն հասարակյալ օրինաց»։*

Երկերի լիակատար ժող., *IV, 9. բնագիրը՝* Մատենադարան, Սինոդի կարգ. մաս, *թղթ. 55, վ. 89։*

Օգոստոսի 10.— *Մ. Վեհապետյանը Սինոդին է ներկայացնում Նալբանդյանի՝ օգոստոսի 9-ին իրեն ուղղած խնդրագրի պատճենը, խնդրելով հարկերից ազատման վկայականը վերադարձնել Նալբանդյանին՝ վերջինս ցանկության համաձայն։*

Հետագայում, Նալբանդյանի դեմոմի և Մ. Վեհապետյանի այդ գրության հիման վրա, Սինոդը դադարեցնում է Նալբանդյանի հոգևոր կոչման մեջ ընդունելու գործը, իսկ ն. թ. նոյեմբերի 26-ին հարկերից ազատման վկայականը վերադարձնում է։

Մատենադարան, Սինոդի կարգ. մաս, *թղթ. 55, վ. 89, թ. 4։*

Օգոստոսի 10-ից հետո.— *Խոլերայի հետևանքներից բժշկվելու նպատակով Նալբանդյանը լինում է Ղրիմում և Օդեսայում, սակայն չի կարողանում բարելավել իր առողջությունը։ Այնուհետև վերադառնում է Քիշինև՝ իր պաշտոնատեղին, ուր մեկ տարի ևս տևող հիվանդությունից հետո, առողջանում է։*

Մատենադարան, Սինոդի կարգ. մաս, *թղթ. 55, վ. 89, թ. 8 և հետ.։*

Օգոստոսի 19.— *Մ. Վեհապետյանը Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությանն է տեղեկություն հայտնում է, որ, տեսնելով*

Նալբանդյանի ընդունակությունները, նրան վերցնում է իր մոտ գրագիր-բարուտղարի պաշտոնով։

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, *ֆ. 54, գ. 693, թ. 22։*
«*Էջմիածին*» *ամս., 1948, մայիս—հունիս, 61։*

Օգոստոսի 30.— *Նալբանդյանը լինում է Նոր-Նախիջևանում։*

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, *ֆ. 54, գ. 45, թթ. 2, 5։*

Սեպտեմբերի 15.— *Սինոդը որոշում է վերադարձնել միշչանական դասից արձակման Նալբանդյանի վկայականը, նրան հոգևոր կոչման մեջ ընդունելու գործը բոլորովին կարճել, և, այն ավարտված համարելով, սահմանված ժամկետին հանձնել արխիվ։*

Մատենադարան, Սինոդի օրագրությունները, *1848 թ., թղթ. 30, վ. 55։*

Հոկտեմբեր։— *Խալիբյանը Ներսես կաթողիկոսին հաղորդում է, թե Մ. Վեհապետյանը Միքայել Դարբինյանի (Նալբանդյանի) հետ,— որն իր «ստահակությամբ» հայտնի է Մկրտիչ վարժապետ Ծիծեռնյանի նամակից,— գնացել է Քիշինև։*

Գրական բանգարան, Կար. ֆոնդ, *վ. 163/60ա։*

Հոկտեմբերի վերջը — նոյեմբերի սկիզբը.— *Նալբանդյանը լինում է Ներսոնում և Օդեսայում։*

Գրական բանգարան, Կար. ֆոնդ, *վ. 163/65ա։*

Նոյեմբերի 2—դեկտեմբերի 2.— *Նալբանդյանը լինում է Օդեսայում։*

Գրական բանգարան, Կար. ֆոնդ, *վ. 163/59։*

Մ. Վեհապետյանի վկայությամբ, Նալբանդյանը Ղրիմ և Օդեսա էր մեկնել ցրտերի հետևանքներից բուժվելու նպատակով։

Մատենադարան, Կար. դիվան, *թղթ. 122, վ. 310ա, թ. 103—104։*

1849

Մինչև հունվարի 7.— *Նամակ Գրիգոր, Ղազարոս և Սերոբ եղբայրներին։ Չի պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV, 10։*

Հունվարի 7, Օդեսա.— *Նամակ եղբայրներին՝ Գրիգոր և Ղազարոս Նալբանդյաններին, նրանց առևտրական գործերի և մասնավոր այլ հարցերի մասին, Նոր-Նախիջևանի բարբառով։*

Երկերի լիակատար ժող., *IV, 10—12։*

Հունվարի 7—25.— *Նալբանդյանը լինում է Օդեսայում։*
ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 50, թթ. 2, 10։

Սեպտեմբերի 2.— *Նալբանդյանի՝ տիրացու Սարգսին գրած նամակները Ներսես կաթողիկոսը հատուկ կոնդակով ուղարկում է Նոր-Նախիջևանի քաղաքային Մագիստրատ, պահանջելով հոգևոր կառավարության ներկայացուցիչ-քահանայի հետ քննության առնել հիշյալ նամակները և քննության արձանագրությունն ուղարկել իրեն։*
Մատենադարան, Կար. դիվան, թղթ. 165, վ. 272։

Սեպտեմբերի 4.— *Ներսես կաթողիկոսը Խալիբյանին ուղղած կոնդակում հայտնելով, որ Նալբանդյանի նամակների պատճեններն ուղարկել է Մագիստրատ՝ քննության, խնդրում է նրան հատկապես՝ կանոնավոր քննության ենթարկել Միքայել դպիր Ղազարյանի (Նալբանդյանի) «այնքան լրբևնի գրություններ հասարակության նախապատիվ անձնավորությունների վերաբերյալ»։*
Մատենադարան, Կար. դիվան, թղթ. 149, վ. 692։

Դեկտեմբերի 1.— *Խալիբյանը, Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությանը տեղեկացնելով Ներսես կաթողիկոսի պահանջի մասին, խնդրում է քահանաներից մեկին «դեպուտատ» նշանակել Նալբանդյանի նամակների քննությանը մասնակցելու համար, նաև, նկատի ունենալով Նալբանդյանի բացակայությունը քաղաքից, համապատասխան կարգադրություն անել։*
Մատենադարան, Կար. դիվան, թղթ. 122, վ. 310ա, թ. 35։

Դեկտեմբերի 2.— *Խալիբյանը Ներսես կաթողիկոսին հայտնում է, թե Միքայել դպիր Ուստայանը (Նալբանդյանը) Նոր-Նախիջևանից բացակայում է, և հենց որ ներկայանա, քննությունը կկատարվի՝ կաթողիկոսի ցանկության համաձայն։*
Մատենադարան, Կար. դիվան, թղթ. 139, վ. 415, թ. 174։

Դեկտեմբերի 7.— *Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությունը, քննելով Խալիբյանի գրությունը, որոշում է. քանի որ հոգևոր կառավարությունը ենթակա է վիճակային Կոնսիստորիային՝ դիմել վերջինիս և խնդրել նրա կարգադրությունը՝ Նալբանդյանի նամակները քննելու խնդրի մասին։*
ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 681, 7։
«Էջմիածին» ամս., 1948, մայիս—հունիս, 55։

Դեկտեմբերի 16.— *Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարության անդամ Կարապետ Զոլախյանը Խալիբյանին հայտնում է, թե՝ քանի որ հոգևոր կառավարությունը ենթակա է վիճակային Կոնսիստորիային, ուստի դիմել են վերջինիս, իմանալու՝ ինչպես վարվեն Նալբանդյանի նամակների քննության հարցի նկատմամբ, երբ Նալբանդյանն ինքը Նոր-Նախիջևանից բացակայում է։*
Մատենադարան, Կար. դիվան, թղթ. 122, վ. 310ա, թ. 26։

Դեկտեմբերի 24.— *Ներսես կաթողիկոսը Սինոդին է ներկայացնում Նալբանդյանի՝ տիրացու Սարգսին գրած նամակները։ Սինոդի ուշադրությունը հրավիրելով նամակներում Մկրտիչ վարժապետ Եկենյանի վերաբերյալ եղած «ամբաստանության» վրա, անհրաժեշտ է համարում, որ Սինոդն առաջարկի Մ. Վեհափեսյանին՝ հոգևոր կառավարության և Մագիստրատի անդամների ներկայությամբ քննության ենթարկել Նալբանդյանին՝ «վասն ումանց, բարուց և վարուց»։* Մատենադարան, Սինոդի օրագրություններ, 1850, թղթ. 33, թ. 18—19։

1850

Հունվարի 4, Քիշինև.— *Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի վիճակային Կոնսիստորիան հոգևոր կառավարությանը հրամայում է կատարել Ներսես կաթողիկոսի կոնդակի վրա հիմնված Խալիբյանի պահանջը, նշանակել մի դեպուտատ Նալբանդյանի նամակների գործը քննելու համար, և քննության արդյունքի մասին տեղեկացնել վիճակային Կոնսիստորիային։* Եվ քանի որ *հոգևոր կառավարությունն իր հայտարարության մեջ չի հայտնել, թե ո՛ւր է Նալբանդյանը և ի՛նչ գործով է հեռացել քաղաքից, ուստի վիճակային Կոնսիստորիան չի կարող որևէ կարգադրություն անել, որ Նալբանդյանը նամակների քննության ժամանակ ներկա գտնվի։*
Մատենադարան, Սինոդի օրագրություններ, 1852, թղթ. 35, թ. 750։

Հունվարի 6, 10, 17.— *Նալբանդյանը լինում է Թեոդոսիայում։*
ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 139, գ. 1972, թթ. 2, 4.
ֆ. 54, գ. 714, թ. 42։

Հունվարի 22.— *Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի վիճակային Կոնսիստորիան Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությանը հրամայում է՝ Նալբանդյանի նամակների գործը քննելու համար «դե-*

պատասխան» նշանակել ավագ քահանա Խաչատուր Սեթյանին և Խալիբյանից պահանջել Ներսես կաթողիկոսի 1849 թ. սեպտեմբերի 2-ի կոնդակի վավերացրած պատճենը՝ Նալբանդյանի նամակների գործը քննելու մասին։ ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 681, էջ 20։

Հունվարի 24.— Նալբանդյանը լինում է Թեոդոսիայում։
ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 1465, թ. 16։

Նույն օրը.— Խալիբյանը, Ներսես կաթողիկոսին պատմելով Նալբանդյանի նամակների քննության ձգձգվելու հանգամանքները, նրան հավաստիացնում է, թե դա բնավ իր թուլության և զանցառության հետևանքը չէ, և որ ինքը «հոգվով չափ» պատրաստ է միշտ ծառայելու նրան՝ մինչև իր վերջին շունչը։
Գրական թանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Փետրվարի 7.— Նալբանդյանը լինում է Թեոդոսիայում։
ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 139, գ. 1550, թ. 12։

Մարտի 6.— Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությունը որոշում է Խալիբյանից պահանջել Ներսես կաթողիկոսի 1849 թ. սեպտեմբերի 2-ի կոնդակի պատճենը և նոր ապա քննել Նալբանդյանի նամակների գործը։
Մատենադարան, կար. դիվան, թղթ. 122, վ. 310ա, թ. 37։

Մարտի 8, Նոր-Նախիջևան.— Նալբանդյանը հոգևոր կառավարությանն ուղղած դիմումի մեջ ի նկատի է բացատրություն պահանջել Բարսեղ քահանա Պոպովյանից (Նախկին տիրացու Սարգսից), որ սա Միքայել դպիր Խազարյան Ուստայանց ստորագրությամբ իր ստացած նամակները կաթողիկոսին հանձնելով, հայտնել է, թե դրանց հեղինակը Նալբանդյանն է։ Հրաժարվելով հիշյալ նամակների հեղինակ ճանաչվելուց, Նալբանդյանը նպատակ ուներ հակառակորդներին զրկել իրեն հալածելու համար՝ նրանց կողմից օգտագործվող այդ «իրեղեն ապացույցից»։
Երկերի լիակատար ժող., IV, 13։

[Մինչև մարտի 9].— Նալբանդյանը գալիս է Նոր-Նախիջևան։
Մատենադարան, կար. դիվան, թղթ. 122, վ. 310ա, թ. 37։

Մարտի 9.— Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությունը, հիմնվելով վիճակային Կոնսիստորիայի հրովարտակի վրա (տե՛ս

Հունվարի 22), Խալիբյանից պահանջում է Ներսես կաթողիկոսի 1849 թ. սեպտեմբերի 2-ի կոնդակի վավերացրած պատճենը, որից հետո միայն հնարավոր է համարում մի քահանա «դեպուտատ» նշանակել Նալբանդյանի նամակները քննելու համար։
Մատենադարան, կար. դիվան, թղթ. 122, վ. 310ա, թ. 37։

Նույն օրը.— Նալբանդյանն ստանում է հոգևոր կառավարության գրությունը, որով նրան հայտնվում է Կոնսիստորիայի հունվարի 22-ի հրովարտակի բովանդակությունն ի գիտություն։
Մատենադարան, կար. դիվան, թղթ. 151, վ. 68։

Մարտի 15.— Բարսեղ քահանա Պոպովյանը հոգևոր կառավարությանը գրած բացատրականում հայտնում է, թե իր ստացած նամակներն ստորագրված էին ո՛չ թե Միքայել դպիր Ղազարյան Նալբանդյանց, այլ՝ Միքայել դպիր Ղազարյան Ուստայանց, ուստի չի կարող ստույգ ասել, թե նամակների հեղինակը Նալբանդյանն է։
Մատենադարան, կար. դիվան, թղթ. 151, վ. 68։

Մարտի 17.— Հոգևոր կառավարությունը Խալիբյանին հայտնում է, թե՝ քանի որ նրա գրություններում շփոթված են կաթողիկոսի կոնդակի ամսաթիվն ու համարը, ուստի որոշել է Նալբանդյանի նամակների քննության գործը թողնել անհետևանք՝ մինչև որ Խալիբյանը ներկայացնի կաթողիկոսի իսկական կոնդակը։
Մատենադարան, կար. դիվան, թղթ. 122, վ. 310ա, թթ. 38, 39—40։

Մարտի 18.—Նույն բովանդակությամբ Մ. Վեհափեսյանը գրություն է ուղղում Խալիբյանին։
Մատենադարան, կար. դիվան, թղթ. 122, վ. 310ա, թ. 41։

Այսպիսով, Մ. Վեհափեսյանը և Նալբանդյանի մյուս համակրողները ձգձգում էին նամակների քննության գործը՝ ձգտելով բոլորովին անհետևանք թողնել այն։

Մարտի 28.— Խալիբյանը, Ներսես կաթողիկոսին ուղարկելով Նալբանդյանի նամակների քննության գործի առթիվ գրագրությունների պատճենները, հայտնում է, թե Կոնսիստորիան և հոգևոր կառավարությունը նպատակ ունեն անհետևանք թողնել հիշյալ գործը։
Մատենադարան, կար. դիվան, թղթ. 122, վ. 310ա, թ. 31—32։

Խալիբյանի այս նամակը հիշյալ գրագրությունների պատճենների հետ Ներսես կաթողիկոսը ներկայացնում է Սինոդին, և վերջինիս ուշադրությունը դարձնելով այն անհնազանդության վրա, որ ցույց են տալիս հոգևոր կառավարությունն ու Կոնսիստորիան եկեղեցական բարձրագույն իշխանության կարգադրությունների նկատմամբ, պահանջում է արմատախիլ անել այդ անկարգությունը։

Այնուհետև, կաթողիկոսը Սինոդին առաջադրում է՝ հրամանագրել Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիային՝ Միքայել դպիր Ղազարյան Ուստայանցին (Նալբանդյանին) ուղարկել Էջմիածին՝ անձամբ պատասխան տալու Սինոդի ատյանի առաջ։

Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 122, վ. 310ա, թ. 43—44։

Ապրիլի 3, Նոր-Նախիջևան.— *Նալբանդյանը տիրացու Սարգսին գրած նամակների գործի առթիվ երկրորդ դիմումն է ներկայացնում հոգևոր կառավարությանը։ Իր զարմանքն ու վրդովմունքն է հայտնում, որ հոգևոր կառավարությունն իրենից է բացատրություն պահանջում. մինչդեռ ինքն է բողոքել Բարսեղ քահանա Պոպովյանից, հետևաբար, պետք էր նրանից պահանջել բացատրություն։ Հենվելով Բ. Պոպովյանի (նախկին տիրացու Սարգսի) երկբայական պատասխանի վրա (տե՛ս մարտի 15), Նալբանդյանը եզրակացնում է, որ հիշյալ նամակների հեղինակը հենց ինքը Պոպովյանն է, և պահանջում է նրան ենթարկել պատասխանատվության, այլապես կդիմի բարձրագույն դատաստանի։*

Երկերի լիակատար ժող., *IV*, 14—15։

Մայիսի 10—17.— *Նալբանդյանը լինում է Նոր-Նախիջևանում։*

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 1482, թթ. 40, 44։

Մայիսի 11—16.— *Բարսեղ քահանա Պոպովյանը Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարության՝ Նալբանդյանի նամակների գործի առթիվ ներկայացրած հարցաթերթիկի պատասխանների մեջ նշում է, թե ինքը Նալբանդյանի՝ իրեն գրած նամակները ո՛չ թե ինքնակամ է հանձնել կաթողիկոսին, այլ վերջինիս պահանջով, և հայտնում է, որ մինչև իր հեռանալը Նոր-Նախիջևանից և մինչև «Ռևիզսկի սկազկային ութերորդ աշխարհագրությունը» (մարդահամարը) Նալբանդյանը հայտնի էր Ուստայան ազգանունով («զի որպէս այլք յորջորջեն զնա Ուստայեան, նոյնպէս և ես գիտեմ զնա Ուստայեան և ոչ Նալբանդեան»։*

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 69, թթ. 2—16։

«Էջմիածին» ամս., 1948, հոկտեմբեր—դեկտեմբեր, 52։

Հունիսի 2.— Նալբանդյանը լինում է Նոր-Նախիջևանում։

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 56, թ. 26։

Հուլիսի 31.— Նալբանդյանը լինում է Նոր-Նախիջևանում։

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 709, թ. 10։

Օգոստոսի 2, 11, 23.— Նալբանդյանը լինում է Նոր-Նախիջևանում։

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 58, թ. 9. գ. 70, թ. 10. գ. 1465, թ. 18։

Հոկտեմբերի 27.— Միքայել Նալբանդյանը Ներսես կաթողիկոսին գրած նամակում գանգատվում է, թե ոչ ոք այլևս չի հաճախում իր տունը՝ նրա գրքերն անվճար կարդալու Միքայել Ղազարյանին (Նալբանդյանին)։ Ընտանեկան խոսում է Նալբանդյանի խոշոր ազդեցության մասին, անվճար նրան գրքեր տրամադրելու մասին։

Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 157, վ. 473։

Նոյեմբերի 28.— Նալբանդյանը լինում է Նոր-Նախիջևանում։

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 1482, թթ. 14—20։

Դեկտեմբերի 1, 12.— Նալբանդյանը լինում է Նոր-Նախիջևանում։

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 59, թ. 6. գ. 1465, թ. 11։

Դեկտեմբերի 28.— *Նալբյանը Ներսես կաթողիկոսին է ուղարկում իր և հոգևոր կառավարության միջև եղած գրագրության պատճենները Նալբանդյանի նամակների հարցի առթիվ, և խնդրում է նրա անօրինությունը։*

Մատենադարան, Սինոդի օրագրություններ, *1852*, թղթ. 35, թ. 164։

1851

Հունվարի 27.— «Արարատ» շաբաթաթերթում տպագրվում է Նալբանդյանի «Ժամանակ» բանաստեղծությունը՝ «Միքայէլ Նալբանդեանց, յաշակերտութենէ տեառն Գաբ. Պատկանեան ի Նոր-Նախիջևան» ստորագրությամբ։ Դա Նալբանդյանի առաջին տպագրված երկն է։

«Արարատ», *1851*, № 20, 307—309։

Երկերի լիակատար ժող., *I*, 15—16։

Մարտի 9.— *Մկրտիչ վարժապետ եկեղեցիներ Ներսես կաթողիկոսի պահանջով նրան է ուղարկում իր դպրոցը հաճախելու համար ստորագրություն տված տիրացուների «ընդհանուր ցուցակը», նրանց հակիրճ բնութագրականներով։ Դպիր Միքայել Ղազարյան (Նալբանդյան) անվան դիմաց գրված է. «Չերևեցավ երբեք։ Ընդունակ։ Չարաբարո և ստամբակ»։*

Մատենադարան, Կար. դիվան, թղթ. 162, վ. 375։

Մարտի 17.— *«Արարատ» շաբաթաթերթում տպագրվում է Նալբանդյանի «Մի այլ յաստեղս լուսաճաճանչս Ուրանիա սիգասցի» բանաստեղծությունը՝ «Միքայէլ Նալբանդեանց, յաշակերտութենէ ս. Գ. Պ.[ատկանեանց] ի Նոր-Նախիջևան» ստորագրությամբ։*

«Արարատ», 1851, № 27, 419—420։
Երկերի լիակատար ժող., I, 17։

Մարտի 30.— *Նալբանդյանը լինում է Նոր-Նախիջևանում։*

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 1499, թ. 40։

Ապրիլի 21.— *«Արարատ» շաբաթաթերթում տպագրվում է Նալբանդյանի «Հիմարաց ուման վրա ունեցած կարծիքը» բանաստեղծությունը՝ նույն ստորագրությամբ։*

«Արարատ», 1851, № 32, 509—510։
Երկերի լիակատար ժող., I, 18։

Ապրիլի 28.— *«Արարատ» շաբաթաթերթում տպագրվում է Նալբանդյանի «Հերքումն յիմարական կարծեաց, զոր անմիտք ունին ի վերայ ուման» բանաստեղծությունը՝ նույն ստորագրությամբ։*

«Արարատ», 1851, № 33, 519—520։
Երկերի լիակատար ժող., I, 19—20։

Մայիսի 23.— *Նալբանդյանը լինում է Նոր-Նախիջևանում։*

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 718, թ. 15։

Սեպտեմբերի 5, Սիմֆերոպոլ.— *Նալբանդյանը եփրեմ վ. Ալթունյանին գրած նամակում խնդրում է օժանդակել Ռափայել Պատկանյանին՝ ստանձնելու Պետերբուրգի հայոց հոգևոր կառավարության գրագրի պաշտոնը, որպեսզի նա նյութական հնարավորություն ունենա ընդունվելու Զինվորական բժշկական ակադեմիան։*

Երկերի լիակատար ժող., IV, 16։

Սեպտեմբերի 15, Քիշինև.— *Նալբանդյանը գրավոր դիմում է Նոր-Նախիջևանի հայոց հոգևոր կառավարությանը, խնդրելով տալ իր քրոջ՝ Վառվառեի որդի Ավետիք Վատուժյանին ծննդյան վկայական՝ Լազարյան ճեմարանն ընդունվելու համար։*

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 725, թ. 7։

Դեկտեմբերի 2, Քիշինև.— *Նամակ է գրում Կարապետ Զոլախյանին, վստահացնելով, որ նրա որդին Մատթեոս Վեհապետյանի և իր ջանքերով կընդունվի Լազարյան ճեմարանը։*

Երկերի լիակատար ժող., IV, 17։

Դեկտեմբերի 9, Քիշինև.— *Նամակ է գրում Կարապետ Զոլախյանին, որով հայտնում է, թե նրա որդուն, Մատթեոս Վեհապետյանի միջնորդության շնորհիվ, Լազարյանները կարգադրել են ընդունել ճեմարանի ձրիավարժ աշակերտների շարքը։*

Երկերի լիակատար ժող., IV, 17—18։

1852

Հունվարի 8.— *Ներսես կաթողիկոսը հատուկ կոնդակով Սինոդին առաջարկում է՝ հրամանագրել Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիային, որ վերջինս Միքայել դպիր Ղազարյան Ալատայանցին (Նալբանդյանին) ուղարկի էջմիածին, Սինոդի առաջև անձամբ պատասխան տալու, միաժամանակ, բացատրություն պահանջել Մատթեոս Վեհապետյանից՝ կաթողիկոսի կամքին հակառակ գործելու համար։*

Մատենադարան, Սինոդի կարգ. մաս, թղթ. 68, վ. 12, թ. 1 և հետ.։

Հունվարի 9, Քիշինև.— *Նամակ կարապետ Զոլախյանին. հայտնում է, որ նրա որդին ընդունվել է Լազարյան ճեմարանը։*

Նույն նամակից երևում է, որ Նալբանդյանն այդ շրջանում [illegible] հիվանդացած է եղել և հազիվ է ազատվել մահից. «Դրուժանք մեր է առողջ. գոհանամք զաստուծոյ, զի մարդասիրութեան նորա ժամանեալ կորզեաց զողորմելի անձն իմ ի գերեզմանէ»։

Երկերի լիակատար ժող., IV, 19։

Փետրվարի 22.— *Սինոդը Ներսես կաթողիկոսի Հունվարի 8-ի [illegible] համաձայն, որոշում է հրամանագրել Նոր-Նախիջևանի [illegible] կորիային՝ «հույժ փութով» Նալբանդյանին էջմիածին ուղար-*

կել՝ Սինոդի առյանի առաջ անձամբ պատասխան տալու, և բացատրություն պահանջել Մատթեոս Վեհապետյանից՝ կաթողիկոսի հրամանի և կամքի հակառակ գործողությունների համար։

Մատենադարան, Սինոդի օրագրությունները, *1852 թ., թղթ. 35, թ. 166։*

Մարտի 6-ից հետո.— *Նալբանդյանը մեկնում է Օդեսա («Հաղորդագիր առ գուբերնաթորն Բեսարաբիոյ, վասն տալոյ զպողոտիժնոյ Միքայէլին Նալբանդեանց գնալ յՕդեսայ»։*

Մատենադարան, Սինոդի ֆոնդ, Թեմ. գործեր, *թղթ. 27, վ. 14, թ. 25բ։*

Մարտի 7.— *Սինոդը, փետրվարի 22-ի իր որոշման համաձայն, հրամանագրում է Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիային՝ հուժ շտապ էջմիածին ուղարկել դպիր Միքայել Ղազարյան Ուստայանցին՝ անձամբ բացատրություն տալու Սինոդի առյանին իր «անկարգությունների և ամբարիշտ գործողությունների համար»։* Մատենադարան, Սինոդի օրագրությունները, *1852 թ., թղթ. 35, թ. 166։*

Ապրիլի 9.— *Մատթեոս Վեհապետյանը էջմիածնի Սինոդին գրած «հայտարարությամբ» խնդրում է հոգևոր կոչման մեջ վերահաստատել Նալբանդյանին, որի գրավոր խնդիրն իր մոտ է (Նալբանդյանի հիշյալ խնդիրը մեզ անհայտ է)։*

Մատենադարան, Սինոդի կարգ. մաս, *թղթ. 55, վ. 89, թ. 8 և հետ.։*

Նույն օրը.— *Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի վիճակային Կոնսիստորիան, Սինոդի մարտի 7-ի հրովարտակի համաձայն, հրամայում է. Դպիր Միքայել Ղազարյան Նալբանդյանցին (քանի որ նրանից բացի ուրիշ դպիր Միքայել Ղազարյան չկա) անցագիր տալ և պատվիրել, որ շտապ մեկնի էջմիածին և ներկայանա Սինոդի առյանին։ Միաժամանակ, Կոնսիստորիան որոշում է, իր այս հրամանի մասին անհապաղ հայտնել կաթողիկոսին և Սինոդին, որպեսզի վիճակային Կոնսիստորիան «անբասիր լինի... Բնորոշ է, որ այս հրամանի տակ, Կոնսիստորիայի ատենադպրի տեղ, ստորագրել է Բարսեղ քահանա Պոպովյանը, նույն ինքը՝ տիրացու Սարգիսը։* Մատենադարան, Կաթ. դիվան, *թղթ. 165, վ. 272։*

Ապրիլի 20, Քիշինև.— *Նալբանդյանը Մատթեոս Վեհապետյանին ուղղած ընդարձակ «Հայտարարությամբ» բացատրում է, թե Սինոդում իր դեմ սկսված գործի հիմքը հանդիսացող տիրացու Սարգսին գրած նամակների հեղինակն ինքը չէ, այլ դրանք հորինված են իր հակառակորդների՝ Մկրտիչ Եկենյանի, Բարսեղ քահանա Պոպովյանի և ուրիշների կողմից, որպես որոգայթ իր դեմ։ Եվ եթե նույնիսկ ինքն էլ լիներ այդ նամակների հեղինակը, քանի որ դրանց հորինման ժամանակ, 1846 թվականին, եղել է 16-ամյա պատանի, պետական օրենքի համաձայն, չի կարող դատապարտվել։*

Նալբանդյանը Վեհապետյանին խնդրում է միջնորդել ուր հարկն է՝ իրեն ազատել էջմիածնի Սինոդին ներկայանալու հարկադրանքից. իր նյութական պայմանները՝ աղքատությունը թույլ չի տալիս իրեն կատարելու այդքան երկար ճանապարհորդություն, որի համար պահանջվում է մոտ 400 ռ., մինչդեռ ինքը ո՛չ միայն այդքան դրամ չունի, այլև դրանից ավելի պարտքի տակ է՝ ավելի քան երկու տարվա հիվանդության հետևանքով։ Իսկ եթե կաթողիկոսի կամքն այնպես է, որ ինքն անպատճառ անձամբ պետք է ներկայանա պատասխան տալու, ապա խնդրում է, որ բարեհաճի (կաթողիկոսը) նշանակել ճանապարհածախսի համար անհրաժեշտ գումարը, որպեսզի կարողանա մեկնել, առանց դրան ինքը միջոց չունի. մանավանդ որ, այն գործը, ինչի համար կանչվում է, օրինական չէ, թող որ՝ Քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հատորի 2280-րդ հոդվածով այդօրինակ «հրավերներն» արգելված են։

Երկերի լիակատար ժող., *IV, 20—23։*

Ապրիլի 23.— *Մ. Վեհապետյանը, Սինոդին ներկայացնելով Նալբանդյանի ապրիլի 20-ի «Հայտարարությունը», հաստատում է, որ Նալբանդյանն իրոք աղքատ վիճակում է գտնվում և տարեկան 100 ռ. ռոճիկ է ստանում. մինչդեռ Քիշինևից էջմիածին և ետ՝ 4600 վերստ ճանապարհ է, որի համար պահանջվում է 400 ռ., իսկ կաթողիկոսը և Սինոդն այդ մասին որևէ կարգադրություն չեն արել։ Հետևաբար, Վեհապետյանը գրում է, թե բացի Նալբանդյանից չունենալով մեկ ուրիշը, որը որպես «գրագիր և լեզվագետ» կարողանար փոխարինել նրան, անհնար է համարում առանց նրան իր գործերը վարելը, մանավանդ որ, ինքն էլ ոտաերեն չի իմանում. ուստի, խնդրում է ազատել Նալբանդյանին էջմիածին գնալու և անձամբ Սինոդին ներկայանալու պահանջից, իսկ եթե Սինոդն այդ անհնարին է համարում, ապա խնդրում է նշանակել անհրաժեշտ գումարը ճանապարհածախսի համար, որից հետո միայն կարող է*

ուղարկել Նալբանդյանին, որն այդքան չարշարանքը կրելու է միայն կաթողիկոսի հրամանը կատարած լինելու համար։

Մատենադարան, Սինոդի կարգ. մաս, թղթ. 68, վ. 12, թ. 13։

Մայիսի 3.— *Ներսես կաթողիկոսը Սինոդին ուղղած կոնդակում բողոքում է Մ. Վեհապետյանի դեմ, որը ո՛չ միայն անհետևանք է թողել Նալբանդյանի նամակների քննության գործը, այլև հոգևոր կառավարության անդամությունից զրկել է նրանց, ովքեր Նալբանդյանի նամակներն իրեն՝ կաթողիկոսին էին ուղարկել. բացի այդ, Վեհապետյանը Նալբանդյանին դարձրել է զեկավար իր վիճակային կառավարության։ Կաթողիկոսը պահանջում է պատժել Վեհապետյանին անզուսպ և անհնազանդ գործողությունների համար։*

Մատենադարան, Ձեռագր. բաժին. № 8916, թ. 279—280։

Մայիսի 14, Քիշինև.— *Նալբանդյանը եղբորը՝ Գրիգոր Նալբանդյանին գրում է, որ իրեն էջմիածին կանչելու առթիվ չանհանգըստանան. ինքը «պատասխանը տվել է, ինչպես հարկն է»։*

Նրկերի լիակատար ժող., IV, 24։

Մայիսի 26.— *Սինոդը, քննելով Մ. Վեհապետյանի ապրիլի 9-ի «Հայտարարություն»՝ Նալբանդյանին հոգևոր կոչման մեջ վերահաստատելու մասին, որոշում է՝ քանի որ Նալբանդյանի «զանազան անվայել նամակագրություններին» գործը Սինոդում դեռևս շարունակվում է, ուստի մինչև այդ գործի վախճանը, նրան հոգևոր կոչման մեջ ընդունելու խնդիրը թողնել անհետևանք։*

Մատենադարան, Սինոդի կարգ. մաս, թղթ. 55, վ. 89, թ. 10 և հետ.։

Հունիսի 21.— *Սինոդը որոշում է՝ Նալբանդյանի և Մ. Վեհապետյանի «Հայտարարությունները» ներկայացնել Ներսես կաթողիկոսին և խնդրել նրա «բարեհաճություն», որպեսզի նա թույլատրի Նալբանդյանին պրավոր բացատրություն տալու Նոր-Նախիջևանում գտնվող Ս. վ. Ջալալյանին, իսկ վերջինս այդ բացատրությունը ներկայացնի Սինոդին, և կամ՝ թույլատրի, որ Նալբանդյանի ճանապարհածախսի գումարը վճարի հոգևոր իշխանությունը՝ եկեղեցիների կամ վիճակի եկամտի հաշվին։*

Մատենադարան, կարգ. մաս, թղթ. 68, վ. 12, թ. 23։

Ինչպես երևում է գործի հետագա ընթացքից, կաթողիկոսը մերժում է Սինոդի այս առաջարկները։

Հուլիսի 27.— *Գաբրիել Պատկանյանը դիմում է Մ. Վեհապետյանին, խնդրելով միջնորդել ում հարկն է՝ Նոր-Նախիջևանում ապարան հիմնելու համար։*

Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 142, վ. 464, թ. 55։

Սեպտեմբեր.— *Նալբանդյանը մի քանի օրով լինում է Ղրիմում, ապա, սեպտեմբերի 27-ին, վերադառնում է Քիշինև (Խալիբյանի նամակը Ներսես կաթողիկոսին)։*

Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 164, վ. 159։

Հոկտեմբերի 17.— *Խալիբյանը Ներսես կաթողիկոսին գրած նամակում խորհուրդ է տալիս նրան՝ Մ. Վեհապետյանին էջմիածին կանչել՝ կաթողիկոսի կամքին հակառակ կատարած գործերի համար, ապա թե ոչ, զգուշացնում է Խալիբյանը, եթե նա երկար մնա այստեղ, Նալբանդյանի խորհուրդներով շարադրած իր գրություններով շարունակելու է անդադար անհանգստություն պատճառել։*

Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 164, վ. 159։

Դեկտեմբերի 7.— *Նալբանդյանը «Հայտարարություն» է գրում Մկրտիչ Եկենյանի դեմ. «Վասն պատկանելութեան ուսուցչին Նախիջևան քաղաքի Մկրտչի Սիմէօնեան հռոմէական դաւանութեան և ցուցանելոյ գինքն ի վերին երեսս կեղծուպատիր եղանակաւ լուսաւորչակրօն հայ»։ Չի պահպանվել։*

Մատենադարան, Սինոդի օրագրություններ, 1853, թղթ. 37, թ. 126։

Դեկտեմբերի 10, Քիշինև.— *Նալբանդյանը Սինոդին դիմում է գրում, խնդրելով արագացնել իրեն հոգևոր կոչման մեջ ընդունելու կամ մերժելու հարցի լուծումը, որովհետև օրերն անցնում են և ժամանակը կորչում է, մինչդեռ ինքը մինչև այժմ, իր 24 տարեկան հասակին, դեռևս կյանքի այլ եղանակի չի ձեռնարկել, որի հետևանքով ծայր աղքատության մեջ է և չնչին թոշակով է հայթայթում իր կարիքները։ Եվ եթե Սինոդը մերժելու է, թող օր առաջ վճռի և շողոքի, որ ինքը ժամանակ կորցնի չարաչար զրկանքների մեջ։ Մերժման դեպքում, խնդրում է վերադարձնել հարկերից ազատման իր վկայականը, որն իրեն պետք կլինի այլ գործի ձեռնարկելիս։*

Նալբանդյանն այստեղ պարզ խոստովանում է, որ ինքն ուրիշների հորդորներով է դիմումներ արել հոգևորական կոչումն ընդունելու համար։ Դիմումի մեջ բացահայտ է Նալբանդյանի ձգտումը՝ Սինոդից պաշտոնական թույլ ունենալ մերժման մասին և հա

ստանալ հարկերից արձակման վկայականը։ Այդպիսով, Նալբանդյանը նպատակ ուներ ազատվել Ներսես կաթողիկոսի հալածանքներից և որպես «ազատ քաղաքացի», տնօրինել իր բախտն՝ ինչպես ինքն էր ցանկանում։

Երկերի լիակատար ժող., IV, 24—25։

1853

Հունվարի 19.— *Ներսես կաթողիկոսը Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովին հայտնելով, որ «զանազան հակաօրինական արարքների մեջ մեղադրվող Միքայել Ուստայանը (Նալբանդյանը) խուսափում է իր պահանջով Սինոդի դատաստանին ներկայանալուց, խնդրում է հրամայել ո՛ւմ հարկն է՝ Նալբանդյանին ձերբակալել և էջմիածին ուղարկել։ Միաժամանակ հայտնում է, որ Նալբանդյանին ուղարկելու ծախսերը վճարելու է Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ Խալիբյանը՝ եկեղեցական գումարներից։*

Դրական բանգարան, Կար. ֆոնդ, վ. 163/101ա։

Հունվարի 31.— *Ներսես կաթողիկոսը Խալիբյանին տեղեկացնելով, որ Նալբանդյանին ձերբակալելու և էջմիածին ուղարկելու մասին ինքը դիմել է Մ. Ս. Վորոնցովին, խնդրում է նրան, որպես քաղաքագլխի, «տերության սահմանած օրենքների համաձայն», հոգալ՝ «դատապարտյալ» Նալբանդյանին էջմիածին ուղարկելու ծախսերը։*

Նույն տեղը։

Նույն օրը.— *Մ. Ս. Վորոնցովը գրում է Ներսես կաթողիկոսին, որ Նալբանդյանին ձերբակալելու և էջմիածին ուղարկելու մասին արդեն կարգադրված է Եկատերինոսլավի նահանգապետին և հենց որ գաղտնի խորհրդական Ֆաբրից զեկուցագիր ստանա, անհապաղ կհաղորդի։*

Դրական բանգարան, Կար. ֆոնդ, վ. 163/148։

Փետրվարի 5.— *Ներսես կաթողիկոսը Ս. վ. Ջալալյանին հայտնելով Նալբանդյանին ձերբակալել տալու համար իր ձեռնարկած միջոցառումների մասին և ուղարկելով Վորոնցովի՝ հունվարի 31-ի գրության պատճենը, խնդրում է այն հանձնել Խալիբյանին։ Միաժամանակ հույս է հայտնում՝ անհապաղ սանձել հոգևորականների մոլեգնությունը, որ եթե շարունակվի, կարող է առաջ բերել եկեղեցու և ազգի համար «չարաչար վտանգ»։*

Մատենադարան, Ձեռագր. բաժին, № 4586, թ. 312բ։

Փետրվարի 9.— *Սինոդը, քննելով Նալբանդյանի՝ 1852 թ. դեկտեմբերի 7-ի «Հայտարարություն» Մկրտիչ եկենյան (Սիմոնյան) վարժապետի դեմ, որոշում է՝ Նալբանդյանը մասնավոր անձն լինելով, իրավունք չուներ Սինոդին դիմելու հասարակ թղթի վրա գրված հայտարարությամբ, այն էլ անձամբ, ո՛չ թե տեղական հոգևոր իշխանության միջոցով, ուստի Նալբանդյանի «Հայտարարությունը» ուղարկել Քիշինևի քաղաքային ոստիկանությանը, խնդրելով այն վերադարձնել Նալբանդյանին, վերջինից պահանջելով 90 կոպեկ անդրոշմ թղթի արժեքը, որ Սինոդը ծախսել է այս հարցի առնչությամբ։*

Մատենադարան, Սինոդի օրագրություններ, 1853 թ., թղթ. 37, թ. 126։

Փետրվարի 18.— *Նալբանդյանի 1852 թ. դեկտեմբերի 10-ի դիմումի առթիվ Սինոդը որոշում է. քանի որ չի կարելի որևէ տնօրինություն անել Նալբանդյանին հոգևոր կոչման մեջ ընդունելու հարցի վերաբերյալ, մինչև կաթողիկոսի առաջադրությամբ սկսված նրա «անվայել նամակագրության» գործի ավարտը,— իսկ Նալբանդյանը, ինչպես երևում է նրա դիմումից, չի ցանկանում այլևս սպասել,— ուստի հարկերից ազատման վկայականը վերադարձնել նրան՝ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիայի միջոցով։*

Մատենադարան, Սինոդի օրագրություններ, 1853 թ., թղթ. 37, թ. 145—146։

Մայիսի 15.— *Նալբանդյանին հոգևոր կոչման մեջ ընդունելու հարցն անհետևանք թողնելու և հարկերից ազատման նրա վկայականը վերադարձնելու մասին փետրվարի 18-ի իր որոշումը Սինոդն ուղարկում է Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիային։*

Նույն տեղը։

Մայիսի 24, Քիշինև.— *Նալբանդյանը 1852 թ. դեկտեմբերի 10-ի իր դիմումի պատասխանը չստանալով, կրկին դիմում է Սինոդին, խնդրելով իրեն ազատել հոգևորական կոչումից։*

Երկերի լիակատար ժող., IV, 26—28։

Մայիսի 25.— *Տագանրոգի քաղաքապետը Ներսես կաթողիկոսի և Մ. Ս. Վորոնցովի հրամանի համաձայն, Նոր-Նախիջևանի Մագիստրատին կարգադրում է՝ «զանազան հակաօրինական արարքների մեջ նկատված» Միքայել Ուստայանին (Նալբանդյանին) ոստիկանական հսկողության տակ ուղարկել էջմիածին։*

ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, лл. 14—15.

Սակայն, քանի որ այդ ժամանակ Նալբանդյանը գտնվում էր Քիշինևում, Նոր-Նախիջևանի Մագիստրատը վերագաս իշխանության այդ կարգադրության մասին գրում է Քիշինևի ոստիկանությանը, որպեսզի վերջինս Նալբանդյանին ձերբակալի և ուղարկի էջմիածին: Պարզվում է, որ Նալբանդյանը Քիշինևից մեկնել է:

Գրական թանգարան, կար. ֆոնդ, վ. 163/67:

Հունիսի 5.— Նալբանդյանը Քիշինևից գալիս է Նոր-Նախիջևան և ոստիկանության հետապնդումներից ազատվելով, նույն գիշերն էլ վերադառնում է Քիշինև:

Գ. Պատկանյանը պատմում է, թե երբ Նալբանդյանը Քիշինևից Նոր-Նախիջևան գալով այցելում է իրեն, ոստիկանները, հետապնդելով նրան, հասնում են մինչև իր (Գ. Պատկանյանի) բնակարանը. սակայն Նալբանդյանը, պատուհանից նկատելով ոստիկաններին, անցնում է խոհանոց, և մինչդեռ նրանք զբաղված էին խուզարկությամբ, Նալբանդյանը, նստելով Գ. Պատկանյանի կառքը, մեկնում է Ռոստով, իսկ այնտեղից էլ՝ Քիշինև:

Ժամանակակիցներից մեկ ուրիշը, Պետրոս Սիմոնյանը, նույն դեպքերի մասին պատմելով, ավելացնում է, որ Նալբանդյանը մեկնել էր Մոսկվա առանց այդ մասին նույնիսկ իր ծնողներին հայտնելու. «...Մյուս օրը Նալբանդյանցի հոր տանը սուգ էր, որովհետև այդ գիշեր նա անհայտացել էր. չգիտեին՝ ո՛ւր է գնացել կամ արդյոք Դոն գետը չէ՞ բռնել և կամ սպանվել: Անցավ մոտ տասը օր և լուր տարածվեցավ Նոր-Նախիջևանում, որ Միքայել Նալբանդյանցը Մոսկվայումն է»:

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 139, գ. 798, թ. 39.
Գրական թանգարան, ֆ. 1, վ. 1, թթ. 409—412.
«Լումա», 1901, գիրք Ա, 284—285:

Նույն օրը.— Հ. Խալիբյանը Ս. վ. Ջալալյանին գրած նամակում հայտնում է, թե «այսօր» Նալբանդյանը եկավ Նոր-Նախիջևան և, միայն երկու ժամ մնալուց հետո, «փախավ»՝ տեղեկանալով իրեն ձերբակալելու հրամանի մասին:

ՀՍՍՌ Պետ. կենտր արխիվ, ֆ. 139, գ. 798, թ. 39:

Հունիսի 26.— Խալիբյանը Ներսես կաթողիկոսին հայտնում է, որ Նալբանդյանը թե՛ Քիշինևում և թե՛ Նոր-Նախիջևանում խուսափելով ոստիկանության հետապնդումներից, և միայն երկու ժամ մնալով հոր տանը, մեկնել է Նոր-Նախիջևանից՝ Գաբրիել Պատկանյանի աջակցությամբ:

Գրական թանգարան, կար. ֆոնդ, վ. 163/67:

Հուլիսի 3.— Հ. Խալիբյանը Ս. վ. Ջալալյանին գրած նամակում հայտնում է, որ Նոր-Նախիջևանի Մագիստրատը հատուկ պահակ է նշանակել՝ Նալբանդյանին ձերբակալելու՝ հենց որ նա երևա քաղաքում:

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 139, գ. 798, թ. 40:

Հուլիսի 6.— Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիան, էջմիածնի Սինոդի մայիսի 15-ի հրամանագրի համաձայն, Նալբանդյանին տալիս է հոգևոր կոչումից ազատման վկայական:

МГОИА, ф. Лаз. института, д. 179, л. 6.

Հուլիսի 8, Քիշինև.— Մոսկվա մեկնելու կապակցությամբ Նալբանդյանը թողնում է Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմական առաջնորդի քարտուղարի պաշտոնը:

ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, л. 3.

Նույն օրը.— Մ. Վեհափսեյանը Մսեր Մսերյանին գրած նամակում խնդրում է աջակցել Նալբանդյանին՝ Լազարյան ճեմարանում հայոց լեզվի ուսուցչի պաշտոն ստանալու գործում:

Մատենադարան, Մսերյաննեի արխիվ, թղթ. 207, վ. 1972:

[Հուլիսի 8—11].—Նալբանդյանը Քիշինևից մեկնում է Մոսկվա:
Տե՛ս Հուլիսի 8 և 11:

Հուլիսի 11.— Քիշինևի քաղաքին ոստիկանը ոստիկանապետին (պրիստավ) զեկուցում է, որ Նալբանդյանը գործով մեկնել է Իզմայիլ քաղաքը և շուտ չի վերադառնա:

Մատենադարան, Սինոդի կարգ. մաս, թղթ. 68, վ. 12, թ. 71:

Նույն օրը.— Ներսես կաթողիկոսը Սինոդին հայտնում է, որ արդեն կարգադրություն է արված Նալբանդյանին էջմիածին բերել տալու մասին, որից հետո կկայանա պատշաճ վճիռ՝ նրա հանցանքին համապատասխան:

Մատենադարան, Սինոդի օրագրություններ, 1853 թ., թղթ. 37, թ. 579—580:

Հուլիսի 18.— Ս. վ. Ջալալյանը Մ. Մսերյանին ուղղած նամակում հայտնում է, թե Նալբանդյանը, որ Մ. Վեհափսեյանի հանձնարարականով ուղարկված է ուման վկայական ստանալու, «փախստական է կաթողիկոսից». նրան, իր «հանդուգն և ժպիրհ» գրություններ համար, կաթողիկոսը փոխարքայի միջոցով պահանջել է ձերբակալել, իսկ Նալբանդյանը թե՛ Նոր-Նախիջևանում և թե՛ Քիշինևում կարողացել է խուսափել ոստիկանության հետապնդումներից և մեկնել է Մոսկվա: Ս. վ. Ջալալյանն այս մասին «գաղտնիամական տեղեկություն» տալով Մսերյանին, զգուշացնում է գործել այնպես, որ ապագայում կաթողիկոսը նրանից չվշտանա:

Անտիպ երկեր, 316:

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

1853 հուլիսի երկրորդ կեսը—1857 դեկտեմբերի 11

1 8 5 3

Հուլիսի երկրորդ կեսը.— *Նալբանդյանը հասնում է Մոսկվա։*
Մինչև օգոստոսի 3.— *Մոսկվայից մեկնում է Պետերբուրգ։*

Մատենադարան, Մսերյանների արխիվ, *թղթ. 207, վ. 1972։*

Օգոստոսի 3.— *Հովհաննես Լազարյանը, Մ. Վեհափեսյանի խնդրի համաձայն, Ճեմարանի վարչությանն առաջարկում է ընդունել Նալբանդյանին հայոց լեզվի ուսուցչի պաշտոնում, նրան անվանելով Վեհափեսյանի քրոջ որդին։ Ըստ երևույթին, ձգտելով, որ Նալբանդյանն անպայման ընդունվի Լազարյան Ճեմարանը, Վեհափեսյանը նրան ներկայացրել էր որպես իր քրոջ որդին, իրականում ազգակցական ոչ մի կապ չունենալով Նալբանդյանի հետ։ Ինչպես երևում է նույն գրությունից, Վեհափեսյանը Նալբանդյանին բնութագրել է լավագույն հատկություններով, որ նա «լիակատար կերպով գիտե հայ գրականությունը, լավ ընդունակություններ ունի և գերազանց բարոյականության տեր է»։ Լազարյանն ավելացնում է, թե չի կարելի անկատար թողնել Վեհափեսյանի խնդիրը, քանի որ վերջինս Լազարյան տոհմին մեծ ծառայություններ է մատուցել։*

Պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», *հ. 34, 197։*

Նույն օրը, Պետերբուրգ.— *Նալբանդյանի նամակը Մ. Մսերյանին։ Հայտնում է, որ Հովհ. Լազարյանը, հարգելով Մ. Վեհափեսյանի միջնորդությունը, Ճեմարանի վարչությանը կարգադրություն է արել՝ իրեն հայոց լեզվի ուսուցչի պաշտոնում ընդունելու վերաբերյալ։ Չի պահպանվել։*

Մատենադարան, Մսերյանների արխիվ, *թղթ. 207, վ. 1972։*

Օգոստոսի 6.— *Մ. Մսերյանը Մ. Վեհափեսյանին գրում է, թե ուրիշ դպրոցներ ավարտածները, Լազարյան Ճեմարանում ուսուցչի պաշտոն ստանձնելու համար, պետք է ներկայացնեն օրինավոր վկայական նույն ուսումնական հաստատություններից, իսկ եթե այդպիսիք չունեն, պարտավոր են քննություն տալ Պետերբուրգի համալսարանում և այնտեղից վկայական ստանալ։ Այդ հանգամանքը նկատի ունենալով, Նալբանդյանը շտապեց մեկնել Պետերբուրգ, ուր Վեհափեսյանի հանձնարարական նամակի հիման վրա, Հովհ. Լազարյանը Ճեմարանի վարչությանը կարգադրել է Նալբանդյանին ընդունել հայոց լեզվի ուսուցչի պաշտոնում։ Նալբանդյանն այժմ մնացել է Պետերբուրգում՝ քննություններն ավարտելու համար։*

Մատենադարան, Մսերյանների արխիվ, *թղթ. 207, վ. 1972։*

Օգոստոսի 10.— *Քիշինևի քաղաքային ոստիկանությանն ուղղած գրությամբ Մ. Վեհափեսյանը հայտնում է, թե Նալբանդյանն ազատված է քարտուղարի պաշտոնից։*

Մատենադարան, Սիմոդի ֆոնդ, Թեմական գործեր, *թղթ. 27, վ. 14, թ. 46։*

Օգոստոսի 21.— *Նալբանդյանի մայիսի 24-ի դիմումի առթիվ Սիմոդը որոշում է նրան հայտնել, որ արված է համապատասխան անօրինություն, նրա ցանկության համապատասխան, այսինքն՝ վերադարձված է հարկերից ազատման վկայականը, որով փակված է հոգևոր կոչման մեջ ընդունելու հարցը։*

Մատենադարան, Սիմոդի կարգ. մաս, *թղթ. 55, վ. 89, թ. 18։*

Օգոստոսի 22.— *Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիան Նալբանդյանին ուղարկում է վկայական Թեմական առաջնորդարանում նրա պաշտոնավարության մասին, որ պահանջվում էր Լազարյան Ճեմարանում պաշտոնի ընդունվելիս։*

Մատենադարան, Սիմոդի ֆոնդ, Թեմական գործեր, *թղթ. 27, վ. 14, թ. 46։*

Օգոստոսի 25.— *Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիան ուղարկում է Նալբանդյանին նրա ծննդյան վկայականը, որ պահանջել էր նա՝ ուսուցչի պաշտոնով Լազարյան Ճեմարանն ընդունվելու կապակցությամբ։*

Երկերի լիակատար ժող., *IV, 311—312։*

Օգոստոսի 27.— *Ներսես կաթողիկոսը հայտնում է Վորոնցովին, որ Միքայել դպիր Ուստայանը (Նալբանդյանը) դեռ չի ուղարկվել էջմիածին, և որ, իր ունեցած տեղեկությունների համաձայն, նա գտնվում է Քիշինևում։ Կաթողիկոսը խնդրում է՝ կարգադրել Նովոռոսիյսկի և Բեսարաբիայի գեներալ նահանգապետ Ֆեոդորովին՝ Նալբանդյանին էջմիածին ուղարկելու վերաբերյալ։*

Մատենադարան, Կար. դիվան, թղթ. 122, վ. 310ա, թ. 45։

Օգոստոսի 31.— *Ներսես կաթողիկոսը Խալիբյանին հայտնում է, թե ինքն արդեն գրել է փոխարքային, խնդրելով, որ վերջինս Նովոռոսիյսկի և Բեսարաբիայի գեներալ նահանգապետի պաշտոնակատար Ֆեոդորովին կարգադրի՝ Միքայել Ուստայանին (Նալբանդյանին) ձերբակալելու և էջմիածին ուղարկելու մասին։ Հույս է հայտնում, որ Նալբանդյանը շուտով կձերբակալվի և կպատժվի՝ հենց որ ինքը էջմիածին վերադառնա։*

Գրական թանգարան, Կար. ֆոնդ, վ. 163/102ա։

Նույն օրը.— *Մ. Մ. Վորոնցովը Ներսես կաթողիկոսին հայտնում է, որ սույն գրության հետ միաժամանակ կարգադրում է, դպիր Միքայել Ուստայանին (Նալբանդյանին) Քիշինևից ուղարկել էջմիածին։*

Մատենադարան, Կար. դիվան, թղթ. 22, վ. 310ա, թ. 49։

Մինչև սեպտեմբերի 17.— *Նալբանդյանը դիմում է Պետերբուրգի ուսումնական օկրուգի հոգաբարձուին, խնդրելով թույլատրել իրեն Պետերբուրգի համալսարանում քննության ենթարկվելու հայոց լեզվից՝ այդ առարկան Մոսկվայի Լազարյան ճեմարանում ավանդելու իրավունք ստանալու համար։*

Տե՛ս սեպտեմբերի 17։

Սեպտեմբերի 17.— *Պետերբուրգի ուսումնական օկրուգի հոգաբարձուն, Նալբանդյանի դիմումի հիման վրա, առաջարկում է Պետերբուրգի համալսարանի ռեկտորին՝ թույլատրել նրան հայոց լեզվից քննության ենթարկվելու։*

Պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 34, 193։

Սեպտեմբերի 18.— *Հ. Խալիբյանը Նալբանդյանի մասին տեղեկություններ է հաղորդում Ներսես կաթողիկոսին.— պատանի Միքայել Ուստայանը, որի մասին փոխարքային առաջարկել էիք Ֆեոդորովի միջոցով ուղարկել էջմիածին, հուլիս ամսին փախել է Մոսկվա և Պետերբուրգ, և ըստ Սարգիս վ. Ջալալյանի աված տե-*

ղեկության, նպատակ ունի Մոսկվայում հայոց լեզվի ուսուցչի իրավունք ձեռք բերելու։ Խալիբյանն այնուհետև գրում է, թե իրեն հայտնի չէ՝ մինչև այսօր Նալբանդյանը Քիշինև վերադարձե՞լ է, թե ոչ։ Վերջում ավելացնում է, որ եթե կաթողիկոսը մտադիր է Նալբանդյանին կրկին Քիշինև վերադարձնել, խնդրում է ուղարկել Նորնախիջևանի վրայով, որպեսզի ինքը որոշակի տեղեկություն ունենա այդ մասին։ Նամակի լուսանցքում ավելացնում է, թե հենց նոր Մոսկվայից եկողներից լուր ստացավ, որ Նալբանդյանը հայոց լեզվի ուսուցիչ է նշանակվել Լազարյան ճեմարանում։

Մատենադարան, Կար. դիվան, թղթ. 171, վ. 303։

Սեպտեմբերի 24.— *Պետերբուրգի համալսարանում Նալբանդյանը քննություններ է տալիս։*

I. Բանավոր պատասխաններ հայոց լեզվից.
1. Ածականների կապակցումը գոյականների հետ։
2. Դոյականների կապակցումը գոյականների հետ։
3. Հարաբերական դերանունների գործածությունը։
4. Ենթական, ուղղյալ հոլովից բացի, էլ ի՞նչ հոլովում կարող է լինել։
5. Քանի՞ տեսակ է լինում ոճը և ո՞ր դեպքերում է գործածվում դրանցից յուրաքանչյուրը։

II. Փոքրձնական դասախոսություն. պոեզիայի կանոնները։

III. Գատողություն. հայոց լեզվի վաղեմիության մասին։

IV. Գրավոր.
1. Քերականության օգուտը։
2. Քերականության և ճարտասանության տարբերությունը։

V. Հայաստանի աշխարհագրությունից.
1. Հայաստանի կլիման։
2. Հայաստանի նշանավոր գետերը։

VI. Հայոց պատմությունից.
1. Հայաստանի նախնական բնակչության մասին։
2. Տրդատ Թագավորի գործունեության մասին։

VII. Թվաբանությունից.
1. Առաջին չորս կանոնները։
2. Անվանական թվերի մասին։

Քննել է նույն համալսարանի հայոց լեզվի դասախոս Մկրտիչ Բերոյանը։ Հեղինակը բոլոր առարկաներից Նալբանդյանին ստացել է հինգ (շատ լավ) գնահատական։

Պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 34, 194—196։

Սեպտեմբերի 28.— *Նալբանդյանը ռուսերենից գրում է շարադրություն «Приезд в Петербург» խորագրով, որի համար ստանում է երեք (բավարար) գնահատական։*

Քննական կոմիտեն որոշում է Նալբանդյանին շնորհել Մոսկվայի Լազարյան ճեմարանի հայոց լեզվի ուսուցչի կոչում, որի մասին հայտնվում է Պետերբուրգի ուսումնական օկրուգի հոգաբարձուին, կցելով քննության արձանագրությունը, գրավոր պատասխաններն ու շարադրությունները, ինչպես նաև Նալբանդյանի ծննդյան, մեշչանական դասից արձակման, վարքի և հայոց լեզվի ուսուցչի կոչման վկայականները։

Պետ. համալսարանի «Ֆիտական աշխատություններ», հ. 34, 196։

Սեպտեմբերի 30.— Պետերբուրգի համալսարանի ռեկտոր Պ. Պլետնյովը ուսումնական օկրուգի հոգաբարձուին գրում է, որ Նալբանդյանը Մոսկվայի Լազարյան ճեմարանի հայոց լեզվի ուսուցչի կոչման համար քննության է ենթարկվել և քննական կոմիտեի կողմից այդ կոչմանն արժանի է ճանաչվել։

Պետ. համալսարանի «Ֆիտական աշխատություններ», հ. 34, 194։

Նույն օրը.— Պետերբուրգի համալսարանից Նալբանդյանն ստանում է վկայական, որ նրան Սանկտ-Պետերբուրգի ուսումնական օկրուգի հոգաբարձուի՝ 1853 թ. սեպտեմբերի 17-ի գրությամբ, թույլատրված է եղել Պետերբուրգի համալսարանի քննական կոմիտեում, Մոսկվայի Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի հայոց լեզվի ուսուցչի կոչման համար քննություն տալու և, կոմիտեն, հարգելով Նալբանդյանի շատ լավ գիտելիքները, նրան այդ կոչմանն արժանի է ճանաչել։ Երկերի լիակատար ժող., VI, 312—313։

Հոկտեմբերի 3.— Հովհ. Լազարյանը ճեմարանի դիրեկտոր Ս. Ի. Զելենոյին, հիշեցնելով Մ. Վեհապետյանի միջնորդության մասին և հայտնելով, որ Նալբանդյանը Պետերբուրգի համալսարանում լավ քննություն է տվել և ճանաչվել է հայոց լեզվի ուսուցչի կոչմանն արժանի, խնդրում է, Մ. Վեհապետյանին «հաճելի մի բան արած լինելու համար», առաջին իսկ հնարավորության դեպքում Նալբանդյանին տեղավորել ճեմարանում հայոց լեզվի ուսուցչի պաշտոնով, իսկ մինչ այդ, ընդունել նրան վերակացուների թվում, տալով աշխատավարձ, բնակարան և ճեմարանի ճաշարանից օգտվելու իրավունք։ ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, л. 2

Հոկտեմբերի 6.— Ս. Ի. Զելենոյը Հովհ. Լազարյանին հայտնում է, որ Նալբանդյանին, որպես կրտսեր ուսուցչի, հանձնված են հայոց լեզվի դասեր առաջին և երկրորդ դասարաններում։ Այնուհետև ավելացնում է, որ նրան տեղավորել է ռուս գրականության պրոֆեսոր Ա. Զ. Զինովևի նախկին բնակարանում, չնայած՝ դրանով ճեմարանը տարեկան կորցնում է մոտ 40 ռուբլի։

ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, л. 4—5.

Հոկտեմբերի 13.— Հովհ. Լազարյանը Ս. Ի. Զելենոյին հայտնում է իր համաձայնությունը, որ Նալբանդյանը դասավանդի հայոց լեզու առաջին և երկրորդ դասարաններում, տալով նրան հաստիքային կրտսեր ուսուցչի աշխատավարձ։ Միաժամանակ, հավանություն է տալիս դիրեկտորի կարգադրությանը՝ ճեմարանի շենքի փոքրիկ սենյակը Նալբանդյանին բնակվելու համար տրամադրելու մասին։

Նույն օրը Հովհ. Լազարյանը դիմում է Եկատերինոսլավի Պետական ատյան՝ Նալբանդյանին հարկատու դասից արձակելու մասին։ МГОИА, ф. Лаз. института, д. 179, л. 2.

Հոկտեմբերի 15.— Ներսես կաթողիկոսը Սինոդին հայտնում է, թե ինքը վերստին դրել է փոխարքային, խնդրելով գտնել և ուղարկել Միքայել Ուստայանին։ «... Սպասում էինք փախստականին, իսկ նա ուշացավ...»։ Մատենադարան, Սինոդի կարգ. մաս, թղթ. 68, վ. 12, թ.39։

Հոկտեմբերի 24.— Ներսես կաթողիկոսը Սինոդին ուղղած իր կոնդակով առաջադրում է՝ պարտավորեցնել Մ. Վեհապետյանին, որ նա հաշվետու լինի Ս. վ. Ջալալյանին։ Այս առնչությամբ կրկին հիշեցնելով, որ Վեհապետյանը չի կատարել իր հրամանը Նալբանդյանի նամակների գործը քննելու վերաբերյալ, ավելացնում է, թե նրա (Վեհապետյանի) «մտաց և գործոց» ղեկավար Ուստայանին պետական իշխանությունները տակավին որոնում են։

Մատենադարան, Ձեռագր. բաժին, № 8916, թ. 310։


Հոկտեմբերի 31.— Նոր-Նախիջևանի հայկական Մագիստրատը Մոսկվայի ոստիկանատան «Բարեկարգության վարչությանը» հայտնում է, որ Տագանռոգի նախկին քաղաքապետը 1853 թ. մայիսի 25-ին, ի հետևումն Ներսես կաթողիկոսի գրության և Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովի հրամանագրի, կարգադրել է «զանազան հակաօրինական արարքների մեջ նկատված» Միքայել Ուստայանին (Նալբանդյանին) հսկողության տակ ուղարկել Ներսես կա-

Թողիկոսի մոտ։ Ի հետևումն Ուստայանին փնտրելու մասին եղած գրագրությունների, Բեսարաբիայի զինվորական նահանգապետը հայտնել է, որ Ուստայանը, հոգևոր կոչումից ազատվելու վկայական ձեռք բերելով, մեկնել է Մոսկվա բնակվելու՝ Նալբանդով ազգանունով։ Նախիջևանի հայկական Մագիստրատը խնդրում է «Բարեկարգության վարչությանը», ըստ հնարավորին, ամենաշտապ կարգով գտնել հիշյալ Նալբանդյանին, որ, ինչպես Մագիստրատին հավաստի աղբյուրներից հայտնի է, բնակվում է Լազարյան ճեմարանի շենքում, և հսկողության տակ ուղարկել Մագիստրատ։

ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, лл. 14—15.

Հոկտեմբեր.— *Քննություններն ավարտելուց հետո, Պետերբուրգից վերադառնալով Մոսկվա, Նալբանդյանն ստանձնում է հայոց լեզվի ուսուցչի պաշտոնը Լազարյան ճեմարանի առաջին և երկրորդ դասարաններում։*

Նալբանդյանի աշակերտներից մեկը հետագայում իր տպավորությունները հաղորդել է այսպես. «Ես երրորդ դասարանի աշակերտ էի, երբ ճեմարանի առաջին երեք դասարանի հայոց լեզվի ուսուցիչ Հովհաննիսյանը թողեց յուր պաշտոնը և յուր տարածվեցավ, որ [Լազարյան] առանձին հաճությամբ այդ պաշտոնին նշանակվել է Նախիջևանցի Միքայել Նալբանդյանը։ Մենք օրեցօր սպասում էինք նորան, որովհետև նոր ուսուցիչը դեռ Պետերբուրգումն էր։ Մեկ օր էլ հանկարծ էմինի հետ դասարան մտավ մի բարակ-բարակ, միջին հասակով երիտասարդ։ Տեսուչը նորան ծանոթացրեց մեզ հետ, հայտնելով, որ այսուհետև նա պետք է մեզ հայոց լեզվի դաս տա։ Մեր առաջ կանգնած էր Միքայել Նալբանդյանը։ Ճշմարիտը խոստովանած, նորա չոր կազմվածքը, դեմքի խժժոտ գծագրությունը, սափրած բնչացքով ու մորուքով երեսը և կարճ ֆրակը առաջին նվազ շատ էլ ախորժելի տպավորություն չարին մեր վերա։ Բայց այդ անախորժությունը շարունակվեցավ մինչև տեսչի նորան մեզ ծանոթացնելու պաշտոնական ծիսակատարության վերջանալը, որովհետև երբ որ տեսուչը գնաց և նա ամբիոն բարձրանալով, սկսավ յուր առաջին դասը, նա կերպարանափոխվեցավ. նորա առանց այն էլ փայլուն աչքերը կրակով լցվեցան և երեսը մի այնպիսի գեղեցիկ և գրավիչ արտահայտություն ստացավ, որ իսկույն հափշտակեց մեր սիրտը և ընդմիշտ կապեց մեզ յուր հետ։ Նա խոսում էր ազատ այն ժամանակվա մաքուր աշխարհաբարով, չէր կմկմում, չէր կակազում. նա բառերը հնչում էր մաքուր առոգանությամբ և, որ գլխավորն է, նախադասությունները շատ հարատարությամբ կոկում էր և միտքը հայտնելու համար բառեր ու ոճեր չէր որոնում։ «Տղա՛յք, թողնենք գրաբարը, այսուհետև մենք աշխարհաբար պետք է սովորենք»,— այս խոսքերով նա սկսավ յուր դասախոսությունը։ Եվ մենք սկսանք աշխարհաբար սովորել։ Էմինի «Ընտիր հատվածքի» դրաբար հոդվածները մենք թարգմանում էինք աշխարհաբար։ Խոսում էր ինքը և մեզ էր խոսեցնում. կարգացածներիս պատմական նյութը նա լրացնում էր հայոց պատմությունից ամբողջ գլուխներ պատմելով, շատ անգամ էլ, նյութից հեռանալով, ուրիշ պատմություն-



Մոսկվայի Լազարյան ճեմարանը

ներ էր անում, որոնք բոլորը ևս հայկական կյանքին վերաբերելով, շարժում էին մեր հետաքրքրությունը և մեծ բավականություն տալիս մեզ։ Այսպես անցնում էին օրեր ու շաբաթներ և մեր դասերն ավելի նմանում էին ախորժելի և հետաքրքիր զրույցատրության, քան թե մեր սովորական դասերին։ Մեկ անգամ ևս, որ արդեն գրաբարի ճաշակը մասամբ առել էի, հարցրի. «Վարժապե՛տ, ապա մենք ե՞րբ պետք է քերականություն, գրաբար ոճեր սովորենք։ «Ոճեր սովորելը մի ապարդյուն աշխատանք է, իսկ քերականությունը միայն միջոց է և ո՛չ նպատակ»,— պատասխանեց նա, և սկսավ այդ նյութի վերա երկար խոսել։ «Մենք պետք է հայերեն մտածել սովորենք — ահա՛ մեր ուսմունքի գլխավոր նպատակը»,— ասում էր նա։ Մենք, որ մինչև այդ ժամանակ հայոց լեզուն միայն գրաբարն էինք համարում, իսկ նորա քերականությունը՝ համարյա նպատակ, հայտնի բան է, այդ ժամանակ չհասկացանք նորա ասածի միտքը. նա էլ ժամանակ չունեցավ այդ մեզ հասկացնելու, որովհետև շուտով ստիպված եղավ թողնել Ճեմարանի գասերը։ Մենք հետո միայն հասկացանք, թե ի՛նչ էր ուզում ասել նա, թե մենք պետք է հայերեն մտածել սովորենք...»։

Ե. Շահազիզ, Միքայել Նալբանդյանց, 46—48։

«... Ես բախտ եմ ունեցել հանգուցյալի աշակերտներից մեկը լինելու։ Իբրև կենդանի կանդնած է իմ առաջ. նրա ձայնի մեջ անկեղծություն էր, որ շարունակ հնչում էր. յուր գաղափարներն արտահայտելիս այնպես զգացված և համոզիչ էր խոսում, որ յուր առաջ կանգնողը, ով էլ լիներ, կամա ակամա ենթարկվում էր նրա համոզին։ Նրա հշանաբանն էր արդարություն, ազատություն և ճշմարտություն, որով նա երևան եկավ մեր մեջ, նրանով էլ իջավ գերեզման։ Նա մնաց միշտ հավատարիմ յուր պաշտած վեհ սկզբունքներին, յուր մարդկային բարձր կոչմանը։

Հաչ. Հուսիկյան, Միքայել Նալբանդյանի հիշատակին, «Նոր կյանք», 1907, № 13, 165։

Նոյեմբերի 3.— *Հովհ. Լազարյանը Ճեմարանի գլխավոր կառավարիչ Ա. Ֆ. Օռլովին ներկայացնելով Նալբանդյանի ծննդյան, մեշչանական դասից արձակման և ուսուցչական կոչման վկայականները, խնդրում է կարգադրություն անել՝ նրան ուսումնական մասում ծառայության մեջ հաստատելու և գլխահարկից ազատելու վերաբերյալ։* Պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 34, 198։

Մինչև նոյեմբերի 12.— *Լազարյան Ճեմարանի գլխավոր կառավարիչ Ա. Ֆ. Օռլովի գրությունը Կովկասյան կոմիտեի նախագահ Վ. Պ. Բուտկովին՝ Նալբանդյանին ուսումնական մասում պաշտոնի մեջ հաստատելու և գլխահարկից ազատելու վերաբերյալ։*

Տե՛ս նոյեմբերի 12։

Նոյեմբերի 12.— *Կովկասյան կոմիտեի նախագահ Վ. Պ. Բուտկովը լուսավորության մինիստր Ա. Ս. Նորովին խնդրում է հայտնել, թե մինիստրությունում ի՛նչ կարգ գոյություն ունի «Նալբանդյանի նման անձնավորություններին» ուսումնական մասում պաշտոնի մեջ հաստատելու և գլխահարկից ազատելու վերաբերյալ։ Միաժամանակ ուղարկելով Նալբանդյանի վկայականները, խնդրում է, ծանոթանալուց հետո, դրանք վերադարձնել իրեն։*

Պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 34, 199։

Նոյեմբերի 17.— *Ս. վ. Ջալալյանը Մ. Մաերյանին հայտնելով, որ Նոր-Նախիջևանի Մագիստրատը Մոսկվայի ոստիկանությունից պահանջել է իր տրամադրության տակ ուղարկել Նալբանդյանին, զարմանք է արտահայտում, թե ինչպես է, որ Լազարյանները մատաղ և քնքուշ մանկանց վրա ուսուցիչ են կարգել մեկին, որը կրող է միայն նրանց բարոյականությունը գլխովին ապականել, որ դառն է մահից։*

Անտիպ երկեր, 324։

Նոյեմբերի 18.— *Ա. Ս. Նորովի գրությունը Վ. Պ. Բուտկովին, որով հայտնում է, թե հարկաւոր անձանց ուսումնական մասում պաշտոնի մեջ հաստատելու և միաժամանակ գլխահարկից ազատելու համար պետք է դիմել Սենատ։ Գրության հետ վերադարձվում են Նալբանդյանի վկայականները։*

Պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 34, 200։

Նոյեմբերի 21.— *Լազարյան Ճեմարանի գլխավոր կառավարիչ Ա. Ֆ. Օռլովը դիմում է կառավարիչ Սենատին, խնդրելով Նալբանդյանին ուսումնական մասում ծառայության մեջ հաստատել՝ միաժամանակ ազատելով նրան գլխահարկից։*

Պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 34, 201։

Նոյեմբերի 30.— *Իզմայիլի թաղային ոստիկանը հայտնում է իր պետին, որ գպիր Միքայել Նալբանդյանցը բոլորովին Իզմայիլում չի եղել և այժմ էլ այնտեղ չէ։*

Մատենադարան, Սիմեոնի կարգ. մաս, թղթ. 68, վ. 12։

Դեկտեմբերի 8.— *Ս. վ. Ջալալյանը Մ. Մաերյանին տեղեկացնելով Նալբանդյանին ձերբակալելու վերաբերյալ Մոսկվայի ոստիկանությանը հասցեագրված գրությունների մասին, ավելացնում է, թե՝ հույս ունի, որ ինչպես Մաերյանը, նույնպես և Մ. Էմինը «այդպիսի անձնավորությանը կհեռացնեն վարժապետական պաշտոնից՝ խնայելով արդարամիտ մանկանց մաքուր և անարատ բարոյականությունը»։*

Անտիպ երկեր, 324։

Դեկտեմբերի 22.— *Իզմայիլի քաղաքային ոստիկանությունը գրում է Քիշինևի ոստիկանությանը, թե դպիր Միքայել Նալբանդյանը բոլորովին Իզմայիլում չի եղել և այժմ էլ այնտեղ չէ։*

Մատենադարան, Սինոդի կարգ. մաս, թղթ. 68, վ. 12, թ. 68։

[1 8 5 3]

Մոսկվայում Նալբանդյանը գրում է սաաիրա հոգևորականության դեմ։ Չի պահպանվել։ ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, лл. 7—8.

1 8 5 4

[Հունվարի սկիզբը].— *Տագանռոգի քաղաքապետը Մոսկվայի ավագ ոստիկանապետին գրում է, թե Միքայել Նալբանդյանը (նույն ինքն՝ Ուստայան), որ նկատված է զանազան հակաօրինական արարքների մեջ, անցյալ 1853 թ. հուլիսի 6-ին հոգևոր կոչումից ազատվելու վկայական ստանալով, մեկնել է Մոսկվա։ Քաղաքապետը խնդրում է՝ գտնել Նալբանդյանին և ուղարկել Նոր-Նախիջևան, որ այստեղից էլ, Ներսես կաթողիկոսի պահանջով, ուղարկվի Էջմիածին։* ЦГИАЛ, ф. 880. 1853, д. 312, лл. 23—24.

Հունվարի 23.— *Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովի պահանջով Մոսկվայի ոստիկանությունը Նալբանդյանին ձերբակալում է՝ Նոր-Նախիջևանի Մագիստրատ ուղարկելու համար։*

ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, л. 25.

Նույն օրը.— *Լազարյան ճեմարանի դիրեկտոր Ս. Ի. Զելենոյը Հովհ. Լազարյանին հայտնում է Նալբանդյանի ձերբակալության մասին. «Այսօր, վերադաս իշխանության հրամանագրի համաձայն, Կովկասի փոխարքայի պահանջով, Նալբանդյանը ձերբակալված է որպես հակաօրինական զանազան արարքների մեջ նկատված անձնավորություն՝ Նախիջևանի հայկական Մագիստրատ ուղարկվելու համար»։ Նամակի շարունակության մեջ ցարական չինովնիկը նշում է իր զղոնությունը Նալբանդյանի նկատմամբ և ճիգ է գործ դնում ապացուցելու, որ նրա ձերբակալությունը ճեմարանի վարկը չի շոշափում.— «Նալբանդյանի՝ մեզ մոտ ընդունվելու ժամանակ,— գրում է նա,— արդեն նրա վերաբերյալ իմ ականջին էին հասնում աննպաստ լուրեր, որոնց մասին նրան պաշտոնի նշանակելուց առաջ, ես պատիվ եմ ունեցել գրելու Իվան Դավիդովիչին (Դելյանով)։ Չնայած որ Նալբանդյանը ճեմարանում դասավանդում էր, բայց դեռևս չէր կարող ծառայության մեջ համարվել՝ չունենալով ուսուցչի կոչում, և այն հրամանագրում, որի զորությամբ նա ձերբակալված է, նշված է միայն որպես ճեմարանում ապրող, այնպես որ՝ նրա վարկի հետ դեռևս կապված չի եղել հիմնարկության վարկը, ինչպիսին կլիներ այն դեպքում, եթե նա, ծառայության մտնելով, լիներ իսկական դաստիարակ։ Ընդ որում, պետք է ասել, որ Նալբանդյանը, հայոց լեզվի իր գիտելիքներով, եթե, թեև, ի վիճակի էլ լիներ օգտակար դառնալու, բայց իր բնավորությամբ և բարոյական հատկություններով դաստիարակ լինել չէր կարող, քանի որ կարճ ժամանակում Մոսկվայում գտնվելով, ինչպես ասում են, նա այստեղի հայ հոգևորականության մասին գրել է սաաիրա, որը քիչ էր մնում ընկներ սանների ձեռքը, իսկ նրանց ձեռքն ընկնելով, իհարկե, ինչպես բոլոր նման բանները, կարող էր վնասակար ազդեցություն ունենալ պատանիների տալավորվող մտքերի վրա։ Այսպիսով, թվում է, թե ճեմարանը չի կարող ցավել մի այնպիսի մարդու հեռացման համար, որն իր արարքներով և կասկածելի վարկով կարող էր վնասել հիմնարկությանը՝ բարոյական և հասարակական կարծիքի տեսակետից։* ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, лл. 7—8.

Հունվարի 25.— *Նալբանդյանը Մոսկվայի ոստիկանատան «Բարեկարգության վարչությունում» իր ձերբակալության առթիվ բացատրություններ տալով, հայտարարում է, որ չի կարող մեկնել, նախ՝ հիվանդության պատճառով (մշտական կրծքացավ և շարժման ժամանակ ուժեղ գլխացավ), ուստի, խնդրում է քննության ենթարկել իր առողջական վիճակը. երկրորդ՝ հոգևորական կոչում չունենալով, իրեն պարտավոր չի համարում ներկայանալ հոգևոր իշխանությանը և ենթակա չէ կաթողիկոսին, և երրորդ՝ քանի որ Լազարյան ճեմարանի հոգաբարձուն է իրեն դասատուի պաշտոնում նշանակել և հաստատման համար իր բոլոր փաստաթղթերը ուղարկել կառավարող Սենատ, ուստի խնդրում է՝ հոգաբարձուից տեղեկանալ, թե ինքը կարո՞ղ է թողնել պարապմունքները և մեկնել Նոր-Նախիջևան։* ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, лл. 14—15.

Նույն օրը.— *Մոսկվայի «Բարեկարգության վարչության» պահանջով կատարված բժշկական քննությունից պարզվում է, որ Նալբանդյանն իրոք հիվանդության հետևանքով ի վիճակի չէ մեկնելու Նոր-Նախիջևան։* ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, лл. 14—15.

Նույն օրը.— «Բարեկարգության վարչությունը» նկատի ունենալով, որ Նալբանդյանը հոգևորական կոչումից ազատ լինելով, ենթակա չէ կաթողիկոսի իշխանությանը, ինչպես նաև հաշվի առնելով Մ. Վեհապետյանի և Ստ. Նազարյանի երաշխավորությունները, նրան ազատում է բանտարկությունից։

ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, лл. 11—12, 14—15.

Նույն օրը.— *Մսեր Մսերյանը Ս. վ. Ջալալյանին ուղղած նամակում հայտնում է, թե Մոսկվայի ոստիկանությունը Նալբանդյանին ձերբակալել է։* Անտիպ երկեր, *325։*

Հունվարի 26.— *Ս. Ի. Զելենոյը Հովհ. Լազարյանին հայտնելով Նալբանդյանի՝ բանտարկությունից ազատվելու լուրը, գրում է, թե գործի ընթացքից և վստահություն վայելող մարդկանց կարծիքներից ելնելով, պետք է ենթադրել, որ Նալբանդյանը հանցավոր է։ Նախապես չիմանալով, թե ինչ կորոշի հոգաբարձուն, Զելենոյը գրում է, թե ինքն օգտակար է համարել Ճեմարանում Նալբանդյանին հիվանդ հայտարարել, իսկ նրան խորհուրդ է տվել ըստ հնարավորին՝ ավելի շատ տանը մնալ, որպեսզի իր երևումով խոսակցությունների տեղիք չտա։ Իր կողմից Զելենոյն անօգուտ չի համարում, եթե հնարավոր լինի, Նալբանդյանին հեռացնել դաստիարակի պարտականությունները կատարելուց. դաստիարակը պետք է օրինակելի կերպով մաքուր լինի, որովհետև ոչինչ այնպես ուժեղ չի ներգործում պատանիների մաքերի և սրտերի վրա, ինչպես օրինակը։ Չի կարող գաղտնիք մնալ այն, որ նա (Նալբանդյանը) ընդդիմանում է հոգևորական գերագույն անձնավորության պահանջին, անձնավորության, որի հանդեպ սաների կարծիքով, չպետք է մեղանչել. կաթողիկոսի հրամանները չկատարելը, ընդհանրապես, կարող է ծառայել որպես ամենահամոզիչ և կործանարար օրինակ անհնազանդության։ Եթե Նալբանդյանը, ենթարկվելով հանգամանքներին, կաթողիկոսին ներկայանար և արդարանար, այդ դեպքում ներկա գայթակղությունը տեղի չէր ունենա։ Նալբանդյանի օրինակն այժմ Ճեմարանում կլինի մի մշտական առիթ իշխանության պահանջին ընդդիմանալու հնարավորության, և կարող է առաջ բերել վնասակար սկզբունքներ պատանիների զգայուն սրտերում, և դրա համար,— եզրակացնում է Զելենոյը,— ձեր գերազանցությունը եթե չի հաճի նրան ուղարկել [Նոր-Նախիջևան], ապա, մինչև այս գործի վերաբերյալ կաթողիկոսի վերջնական վճիռը, ո՛չ միայն օգտակար,

այլև նույնիսկ անհրաժեշտ եմ համարում Նալբանդյանին հեռացնել ինստիտուտից [Ճեմարանից], և նույնիսկ, որ լավագույնն է՝ Մոսկվայից։ Զելենոյը հարկ է համարում ավելացնելու, որ իր այս կարծիքը բխում է իր խնամքին հանձնված սանների նկատմամբ ունեցած հոգատարությունից։ ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, лл. 11—12.

Հունվարի 27.— *Կառավարող Սենատը Նալբանդյանին հաստատում է ուսումնական մասում ծառայության մեջ և արձակում մեշչանական դասից։*

Պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. *34, 202։*

Հունվարի 28.— *Հովհ. Լազարյանը Ս. Ի. Զելենոյին ուղղած նամակում, դրսևորելով իր իսկական վերաբերմունքը Նալբանդյանի նկատմամբ, անհրաժեշտ է համարում հիշեցնել, որ եթե Նալբանդյանը Ճեմարան է ընդունվել, ապա դա տեղի է ունեցել, «իհարկե, դեպի թեմական առաջնորդ Մատթեոսն ունեցած սիրո և նվիրվածության պատճառով, որը քանիցս խնդրել է տեղավորել Նալբանդյանին, օժտելով նրան գերազանց վկայականով»։ Այնուամենայնիվ, Հովհ. Լազարյանը գտնում է, որ, նկատի ունենալով Նալբանդյանի վատառողջ վիճակը, նրան, որպես հանցավորի, ուղով, էտապով տանելը վտանգավոր է, ուստի՝ Զելենոյի հայեցողությանն է թողնում՝ խնդրել Արսենի Անդրեևիչին (Մոսկվայի գեներալ նահանգապետին), որպեսզի Նալբանդյանին թողնի Մոսկվայում, մինչև ինքը կաթողիկոսից կտեղեկանա, թե հակաօրինական ի՞նչ հանցանքների համար է մեղադրվում Նալբանդյանը, որից հետո կարելի կլինի ըստ այդմ վարվել։* ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, лл. 9—10.

Հունվարի 29.— *Մսեր Մսերյանը Հովհ. Լազարյանին և Իվան Դելյանովին ուղղած նամակներում, հայտնելով Նալբանդյանի ազատվելը ձերբակալությունից, զգուշացնում է դրանից առաջանալիք հետևանքներից։ Նույն օրը Ս. վ. Ջալալյանին տեղեկացնում է Նալբանդյանի շուրջը տեղի ունեցող անցքերի մասին։*

Անտիպ երկեր, *325։*

[Հունվարի 29].— *Մ. Մսերյանը Ս. վ. Ջալալյանին գրում է, թե Նալբանդյանն ավելի համարձակություն է ստացել և ամենուրեք հայտարարում է, որ «իր թշնամի ներսես [կաթողիկոսը] իրավունք և իշխանություն չունի իրեն ստյան կանչելու և թե ինքը նրա ծա-*

ոան չէ ու նրա իշխանության տակ չի գտնվում, իսկ նրան (Ս. վ. Ջալալյանին) և Խալիբյանին իր Թշնամիներն է համարում։

Անտիպ երկեր, 325—327։

Փետրվարի 4.— *Մոսկվայի «Բարեկարգության վարչությունը» Հովհ. Լազարյանին ուղղած գրությամբ խնդրում է տեղեկացնել, թե Նալբանդյանը, Նոր-Նախիջևանի Մագիստրատի պահանջի կապակցությամբ, կարո՞ղ է հեռացվել Ճեմարանից, թե ոչ։*

ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, лл. 14—15.

Փետրվարի 9.— *Ս. Ի. Զելենոյն իր զեկուցագրում հայտնում է Հովհ. Լազարյանին, որ, ինչպես նրան հայտնի է, հայոց լեզվի կրտսեր ուսուցչի պաշտոնը վարող Նալբանդյանը ներկայումս չի կարող կատարել իր պարտականությունները և նրա դասարանները հանձնված են վերակացուներ Աթամանյանին, Սուրենյանին և Եղիազարյանին։*

МГОИА, ф. 213, д. 170, лл. 6—7.

Փետրվարի 12.— *Հովհ. Լազարյանը, Ներսես կաթողիկոսին պատմելով Նալբանդյանի գործի հանգամանքները և հավաստիացնելով իր որդիական հատատաուն անձնվիրության մասին, խոնարհաբար խնդրում է՝ մանրամասն և հիմնավոր կերպով հայտնել իրեն Նալբանդյանի հակաօրինական արարքների մասին, նշելով հանցանքի ապացույցները։ Այնուհետև, խորհուրդ է տալիս դիմել Թիֆլիսի և Մոսկվայի քաղաքացիական իշխանություններին՝ Նալբանդյանին դատի հանձնելու համար։ Եվ եթե նա հանցավոր է, անշուշտ, կպատժվի և դուցե Սիբիր էլ աքսորվի։ Լազարյանը հավաստիացնում է կաթողիկոսին, որ ինքն այդ ժամանակ, «պաշտելի ճշմարտությունը թողած՝ ո՛չ միայն չի պաշտպանի Նալբանդյանին, այլև կգործադրի իր ամբողջ ազդեցությունը, որպեսզի նա արժանի պատիժն ստանա։ Վերջում հարկ է համարում ընդգծել, որ դրանով, նախ՝ Նալբանդյանն իր «չարագործ կենցաղավարության» հատուցումը կստանա, և երկրորդ՝ Ճեմարանի բոլոր որդեգիրներն ու ծառայողներն օրինակ կվերցնեն՝ ապագայում զգուշանալու համար։*

ՀՍՍՌ Մատենադարանի «Փիտական նյութերի ժողովածու», 1941, № 1, 204—205։

Փետրվարի 12-ից հետո.— *Մ. Մսերյանը Ս. վ. Ջալալյանին իր վրդովմունքն արտահայտելով Նալբանդյանի ձերբակալությունից ազատվելու առթիվ, հայտնում է, որ նա այժմ անգործ է ու ան-*

պաշտոն, և բնակվում է Ճեմարանի սենյակներից մեկում, շարունակելով ստանալ իր ամսական ռոճիկը։

«Լումա», 1901, գիրք Ա, 288—290։

Փետրվարի 16.— *Հովհ. Լազարյանը Մոսկվայի «Բարեկարգության վարչությանը» գրում է իր եղրակացությունը Նալբանդյանի գործի առթիվ.— Նալբանդյանը որպես աշխարհական ենթակա է քաղաքացիական դատաստանի. և քանի որ, բժիշկների վկայության համաձայն, նա ի վիճակի չէ ուղևորվելու, պետք է թողնել Մոսկվայում, իսկ որպեսզի նա պատժից չխուսափի, ինքը Լազարյանն արդեն գրել է Ներսես կաթողիկոսին, խորհուրդ տալով դործել քաղաքացիական իշխանությունների միջոցով։*

ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, лл. 19—21.

Մարտի 12.— *Մոսկվայի ավագ ոստիկանապետի գրությունը Ս. Ի. Զելենոյին. հայտնելով, որ Տագանրոգի քաղաքապետը պահանջում է՝ Նալբանդյանին գտնել և ուղարկել Նոր-Նախիջևան, ոստիկանապետն իր վրդովմունքն է արտահայտում, որ Նալբանդյանը 1853 թվականի հուլիսի վերջերից ապրում է Լազարյան Ճեմարանի շենքում, առանց որևէ ձևով գրանցվելու. նրա այդտեղ բնակվելու մասին ո՛չ միայն ոչ մի տեղեկություն չի տրված ոստիկանության, այլև տնային դրքույկում էլ չի գրանցված։ Ենդրելով հայտնել, թե չկա՞, արդյոք, որևէ արդելք Նալբանդյանին, հիշյալ պահանջի համաձայն, ուղարկելու վերաբերյալ, ավելացնում է, որ Ճեմարանում բոլոր բնակվողների անձնագրերն անպայման ուղարկվեն ոստիկանատուն գրանցելու, միաժամանակ հայտնելով անձնագիր չունեցողների մասին։*

ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, лл. 23—24.

Մինչև ապրիլի 30.— *Ստ. Նազարյանի դիմումը Լազարյան Ճեմարանի դիրեկտորին՝ «Ռուսիա» («Россия») անունով ամսագիր հրատարակելու մասին։ Ամենայն հավանականությամբ, Նալբանդյանը մասնակից է եղել այդ նախաձեռնությանը, քանի որ 1856 թ. մարտի 21-ին (տե՛ս սույն «Տարեգրությունը») Ս. Գ. Սուլթանշահին ուղղած նամակում գրում է, թե ինքը և Նազարյանը վաղուց է, ինչ մտադիր են եղել հրատարակելու «մի հայկական օրագիր աշխարհաբար լեզվով, հասարակին հասկանալի», սակայն, զանազան հանգամանքներ արգելք են եղել։ Հովհ. Լազարյանը մերժում է Նազար-*

յանի դիմումը։ «Ռուսիայի» ծրագիր-նախագիծը հետագայում դառնում է «Հյուսիսափայլի» ծրագրային հիմքը։

«Տեղեկագիր» ՀՍՍՌ Գիտ. ակադ., Հաս. գիտ., *1953, № 12։*

Ապրիլի 24.— *Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիան հայտնում է Մոսկվայի հայկական հոգևոր վարչությանը, որ էջմիածնի Սինոդի 1853 թ. մայիսի 15-ի հրամանագրով, Նալբանդյանը հոգևոր կոչումից ազատված է։*

МГОИА, ф. Лаз. института, д. 179, л. 6.

Մայիսի 8.— *Հ. Խալիբյանը Մոսկվայից (Մ. Մսերյանից) իր ստացած տեղեկությունների համաձայն, Ս. վ. Ջալալյանին հայտնում է, որ Նալբանդյանը համարձակ շրջում է Մոսկվայում. նա դարմանը ու վրդովմունք է արտահայտում, որ կաթողիկոսի ու դաստաիարանական օրգանների պահանջը անցել է անհետևանք և Նալբանդյանը մնում է «հետայալ ու անբնկճելի»։*

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. *139, գ. 798, թ. 27։*

Մայիսի 9.— *Տագանրոգի քաղաքապետը, հիմնվելով Մոսկվայի ավագ ոստիկանապետի գրության վրա, Ներսես կաթողիկոսին հայտնում է, որ Նալբանդյանը Պետերբուրգի համալսարանում ուսուցչի կոչման քննությունները տալով, կառավարող Սենատի հրամանագրով հաստատված է այդ պաշտոնի մեջ՝ Լազարյան ճեմարանում։* Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու», *1941, I, 203։*

Մայիսի 10.— *Մոսկվայի հայկական հոգևոր գործերի կառավարությունը Լազարյան ճեմարանի դիրեկտորին հայտնում է, որ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիայի գրության համաձայն՝ էջմիածնի 1853 թ. մայիսի 15-ի հրամանագրով Նալբանդյանն ազատված է հոգևոր կոչումից։ Այնուհետև խնդրվում է, որ ճեմարանի դիրեկտորը Սինոդի վերոհիշյալ հրամանագրի մասին տեղեկացնի Նալբանդյանին։* МГОИА, ф. Лаз. института, д. 179, л. 6.

Մայիսի 26, Մոսկվա.— *Նալբանդյանը դիմում է Ս. Ի. Զելենոյին, խնդրելով թույլատրել իր գործերով մեկնել Պետերբուրգ։ Այս մասին Զելենոյը հարցում է անում Հովհ. Լազարյանին։*

ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, л. 27

Նույն օրը.— *Ս. վ. Ջալալյանը Հ. Խալիբյանին գրած նամակում հայտնում է, թե Մ. Վեհապետյանը Նալբանդյանի համար*

խնդրել է, «ուսած հարկն է, գաստիճան ռեգիստրաթորի», որպեսզի Լազարյան ճեմարանից ազատվելուց հետո նա հնարավորություն ունենա մտնելու պետական ծառայության մեջ։ Ջալալյանն ավելացնում է, որ այդ նրան չի հաջողվի, որովհետև ուր հարկն է տեղեկացնելու է Նալբանդյանի «ապօրինի գավակ» լինելը։

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. *139, գ. 798, 34։*
Համմ. «Լումա», *1901, գիրք II, 289։*

Մայիսի 31.— *Հովհ. Լազարյանն արգելում է Նալբանդյանի Պետերբուրգ մեկնելը՝ մինչև նրա «գործի վերջնական պարզաբանումը»։*

ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, л. 28.

Հունիսի 13.— *Սարգիս վ. Ջալալյանը Ներսես կաթողիկոսին հայտնելով, որ տեղի (Քիշինևի) հոգևոր իշխանությունը (Մատթեոս Վեհապետյան) նպաստել է, որ Նալբանդյանը խուսափի ձերբակալությունից և գնա Մոսկվա՝ նրան տալով համապատասխան փաստաթղթեր, հարցնում է Ներսես կաթողիկոսի «բարեհաճությունը», թե ինքը կարո՞ղ է իր կողմից հայտնել «ուր հարկն է» (Ներքին գործերի մինիստրություն) «արդարությունը պաշտպանելու», այսինքն՝ ոստիկանության միջոցով շարունակելու Նալբանդյանի հետապնդումը։*

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. *53, գ. 659, թ. 75։*
«Էջմիածին» ամս., *1948, հոկտեմբեր—դեկտեմբեր, 55։*

Հունիսի 28.— *Ներսես կաթողիկոսը հայտնում է Խալիբյանին Տագանրոգի քաղաքապետից իր ստացած տեղեկությունները Նալբանդյանի մասին։* Գրական բանգարան, կար. ֆոնդ, *վ. 163/107։*

Հուլիսի 27.— *Նալբանդյանը Մոսկվայի համալսարանում, որպես ազատ ունկնդիր, դասախոսություններ լսելու նպատակով Լազարյան ճեմարանից վերցնում է վկայական, որ Պետերբուրգի համալսարանից ուսուցչի կոչման իրավունք է ստացել և գտնվում է ճեմարանում։ Ինչ-որ մեկի արած մակագրությունից երևում է, որ վկայականը համալսարանի վարչությանը չի բավարարել, «վերադարձվում է, որովհետև չի բացատրված, թե՝ դասախոսություններ լսելու դեմ արգելքներ չկա՞ն»։*

МГОИА, ф. Лаз. института, д. 179, л. 10.

Նույն օրը.— *Մ. Վեհապետյանը հաշ. Լազարյանին գրում է, թե քանի որ Հովհ. Լազարյանը, Նալբանդյանի թշնամիներին լսելով*

չի ցանկանում նրան վերականգնել իր նախկին պաշտոնում, ուստի խնդրել էր պատշաճ վկայական տալ Նալբանդյանին, որպեսզի վերջինս, մինչև իսկական ուսանողների կարգն անցնելը՝ լսի համալսարանի դասախոսությունները։ Բայց իր խնդիրը մինչև այժմ չի հարգվել, իսկ Նալբանդյանի գրությունը ճեմարանում «հաղիվ թե բանից լավ լինի»։ Մ. Վեհապետյանը վրդովմունքով է նշում, որ Ի. Դելյանովը ևս հավատ է ընծայում Նալբանդյանի թշնամիների «պղտոր և անհաստատ խոսքերին». նա լուրջ է պատասխանել Պետերբուրգ մեկնելու համար Նալբանդյանի գրած դիմումին, իսկ իր այնքան գրությունները համարել «կարծիքական»։

Այնուհետև Վեհապետյանը հիշեցնում է, որ Դելյանովը խոստացել էր Նալբանդյանին պաշտպանել ապօրինի հալածանքներից, բայց քիչ ժամանակ անցած նա, իհարկե, ո՛չ առանց բարձրագույն իշխանության կամքի՝ դարձավ Նալբանդյանին հալածողը։ Նալբանդյանի մասին տարածված լուրերը համարելով բոլոր հիմքերից զուրկ, լոկ հորինված նրա թշնամիների կողմից, Վեհապետյանն ընդգծում է, որ, եթե հոգաբարձուն (Հովհ. Լազարյանը) չի ցանկանում Նալբանդյանին այսուհետև պահել ճեմարանում, Նալբանդյանն ինքն էլ այլևս չի կամենում մնալ այնտեղ, ուր շատացել են նրա թշնամիները։ Վեհապետյանը խնդրում է, որ Լազարյանը Նալբանդյանին բոլորովին ազատի ճեմարանից, վերադարձնելով նրա բոլոր փաստաթղթերը և տալով վկայական, որ նա ծառայել է ճեմարանում և հաստատված է ուսուցչական կոչման մեջ։ Վերջում ավելացնում է, որ այդ փաստաթղթերն ունենալով, Նալբանդյանը կարող է պաշտպանվել, եթե Կովկասի փոխարքան կրկին պահանջ դնի նրան ձերբակալելու մասին։ ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312.

Օգոստոսի 5.— *Ներսես կաթողիկոսը Հովհ. Լազարյանին սպառնում է, որ եթե նա Նալբանդյանին Սիբիր ուղարկելու իր խոստման համաձայն չուղարկի նրան էջմիածին, ապա ինքը կգործադրի իր ամբողջ կարողությունը, նույնիսկ կդիմի «կայսերական մեծության գերահզոր հովանավորությանը»՝ իր կաթողիկոսական իրավունքները պաշտպանելու համար։*

Մատենադարան, Կար. ֆոնդ, *թղթ. 122, վ. 310ա, ԹԹ. 95—96։*

Օգոստոսի 9, Մոսկվա.— *Նալբանդյանը Խաչ. Լազարյանին ուղղած դիմումով խնդրում է վերադարձնել ճեմարանում գտնվող իր փաստաթղթերը և տալ վկայական, որ Սենատն իրեն հաստատել է ուսուցչական կոչման մեջ։ Հիշեցնում է, որ այդ մասին երկու անգամ խնդրել է Եփրեմ վ. Ալթունյանի միջոցով, և որ՝ հիշյալ փաստաթղթերն անհրաժեշտ են Մոսկվայի համալսարանն ընդունվելու համար։* ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312.

Օգոստոսի 12.— *Ս. Ի. Զելենոյն իր զեկուցագրում Հովհ. Լազարյանին գրում է, թե քանի որ Նալբանդյանին դասավանդել թույլատրելու հարցում մեծ դժվարություններ կան և հանգամանքներ, որոնք կարող են վնասել ճեմարանին, ուստի նրան վերակացու նշանակելու ո՛չ մի հնարավորություն չկա, մանավանդ որ նա այդ պաշտոնը վարելու իրավունք էլ չունի։ Գեղագրության ուսուցիչ չի կարող լինել, որովհետև, գուցե և շատ լավ գրում է հայերեն, բայց բոլորովին ծանոթ չէ եվրոպական լեզուների գեղագրությանը... Նրա համար պետք է որոնել այլ զբաղմունք, որ օգտակար լիներ ճեմարանին, բայց այդպիսի զբաղմունք չկա, իսկ նրան աշխատավարձ տալ առանց աշխատելու, ճեմարանի սահմանափակ միջոցներից՝ բոլորովին ձեռնտու չէ։ Դրա համար Ս. Ի. Զելենոյն առաջարկում է՝ Իվանովի (Հովհաննիսյանի) հայոց լեզվի կրասեր ուսուցչի պաշտոնին անցնելու օրվանից բոլորովին դադարեցնել Նալբանդյանին աշխատավարձ վճարելը, ինչպես նաև ճեմարանի հաշվարանից օգտվելը և ազատել տալ նրա զբաղեցրած բնակարանը։*

Պետ. նամալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 34, *205—206։*

Օգոստոսի 13.— *Խալիբյանը Ներսես կաթողիկոսին հիշեցնելով, որ ապստամբ պատանին (Նալբանդյանը) իրեն ապահով կարծելով, մեծամտացել է, անհրաժեշտ է համարում նրան կրկնակի և նոակի պատժի ենթարկել։*

Մատենադարան, Կար. դիվան, *թղթ. 1854ա, վ. 69։*

Օգոստոսի 20.— *Հովհ. Լազարյանը Ս. Ի. Զելենոյին կարգադրում է՝ մինչև կաթողիկոսից պատասխան ստանալը և մինչև Նալբանդյանին հեռացնելը, նրան ժամանակավորապես թողնել ճեմարանում, տալով ցածր դասարանների հայոց լեզվի և գեղագրության դասերը, երբ որ դասարաններն ազատ լինեն և հիվանդության պատճառով ուսուցիչները բացակայեն։ Իբրև Նալբանդյանի աշխատանքի վարձատրություն, Լազարյանը կարգադրում է վճարել այժմյան ռոճիկի չափով (28 ռ. 54¼ կ.), այլև թույլ տալ օգտվելու ճե-*

մարանի սաների ճաշարանից և իր այժմ զբաղեցրած բնակարանից. հիշեցնելով, որ «այդ երկար չի շարունակվի», Լազարյանն անհրաժեշտ է համարում բացատրել, որ «այս զիջողությունն արվում է... Մ. Վեհապետյանի միջնորդության շնորհիվ»։ Այնուհետև Ս. Ի. Զելենոյի կարծիքը (Նալբանդյանին բոլորովին հեռացնելու մասին) «հիմնավոր» համարելով, գտնում է, որ թեև այն առաջիկայում կիրականացվի, «բայց այժմ կարելի է մի փորք սպասել»։

Պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 34, 207։

Օգոստոսի 21.— Ս. Ի. Զելենոյը զանազան պատրվակներով, բայց որոշակի ակնարկելով Նալբանդյանի՝ քաղաքականապես անվստահելի լինելը, Հովհ. Լազարյանին գրած նամակում մերժում է նրան դասեր տալու առաջարկը, կտրականապես պահանջելով, որ Նալբանդյանը հեռացվի։ Զելենոյը մերժում է նաև Նալբանդյանին որևէ վկայական տալը, պատճառաբանելով, թե ճեմարանում գոյություն չունի Սենատի հրամանագիրը՝ Նալբանդյանին ուսումնական մասում ծառայության մեջ հաստատելու վերաբերյալ։

МГОИА, ф. Лаз. института, д. 179, лл. 11—12.

Օգոստոսի 28.— Հովհ. Լազարյանը Ս. Ի. Զելենոյին գրում է, որ Նալբանդյանին ժամանակավորապես պետք է թողնել ճեմարանում, որպես ցածր դասարանների հայոց լեզվի դասատու, ու ժամանակ հնարավորություն տալով օգտվելու բնակարանից, ճաշարանից և սահմանված աշխատավարձ։ «Հավանաբար նրա գործը շուտով կվճռվի, այն ժամանակ Նալբանդյանը կհեռացվի։ Իսկ այժմ այդ անել չի կարելի, որովհետև նրա գործը դեռ շարունակվում է քննվել»։ Այնուհետև, հարցնում է Զելենոյի կարծիքը, թե ինչպիսի վկայական պետք է տալ Նալբանդյանին, որպեսզի օրենքի և ճեմարանի կանոնադրության համաձայն լինի և «տհաճ բյուրմացություններ» առաջ չգան։

МГОИА, ф. Лаз. института, д. 170, л. 29.

Պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 34, 208։

Սեպտեմբերի 1.— Նալբանդյանը Լազարյան ճեմարանի վարչությունից ստանում է վկայական, որ նա Պետերբուրգի համալսարանում ձեռք է բերել հայոց լեզվի ուսուցչի իրավունք, այժմ պաշտոնավարում է Լազարյան ճեմարանում, և որ՝ Մոսկվայի հա-

մալսարանի բժշկական ֆակուլտետում դասախոսություններ լսելու համար արգելքներ չկան։

МГОИА, ф. Лаз. института, д. 171, л. 12.

Պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 34, 211։

Սեպտեմբերի 2, Մոսկվա.— Նալբանդյանը դիմում է Մոսկվայի համալսարանի ռեկտորին, խնդրելով ընդունել իրեն բժշկական ֆակուլտետի ազատ ունկնդիրների շարքը։ Քննությունների անբավարար արդյունքի հետևանքով, դիմումը մերժվում է և Լազարյան ճեմարանի վկայականը վերադարձվում է Նալբանդյանին։

МГОИА, ф. Лаз. института, д. 645, лл. 62—63.

Երկեր լիակատար ժող., IV, 29։

Սեպտեմբերի 10.— Ս. Ի. Զելենոյը Հովհ. Լազարյանին գրում է, թե «Նալբանդյանը մինչև այժմ ոչ մի էական օգուտ չտալով ճեմարանին, օգտվում է բնակարանից, ճաշարանից և հաստիքային աշխատավարձ է ստանում։ Աշխատավարձի վճարումը դադարեցրած է և նրա դասերն ուրիշներին են տրված»։ Նա պետք է երախտապարտ լինի ճեմարանին,— գրում է Զելենոյը,— որ ուշ ամիս տապարտ լինի ճեմարանին, ոչ մի պարտականություն չի կատարել»։ աշխատավարձ ստանալով, Բնակարանը և ճաշը, չնայած ճեմարանին չեն ծանրաբեռնում, ինչպես աշխատավարձը, սակայն մյուս վերակացուներին նա գերակում է լավագույն բնակարանից, և այդ կարող է դժգոհություն առաջ բերել նրանց մեջ։ Ինդրում է Լազարյանի կարգադրությունը։ Հայտնելով Նալբանդյանին տրված վկայականի մասին, հարկ է համարում նշել, որ այն «պաշտոնական փաստաթղթի նշանակություն չունի»։


ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, лл. 32—33.

Սեպտեմբերի 11.— Նալբանդյանն ազատվում է Լազարյան ճեմարանում հայոց լեզվի կրտսեր ուսուցչի պաշտոնից։ Տրվում է վկայական, որ նա «բոլորովին» ազատված է «իր ցանկության համաձայն»։

МГОИА, ф. Лаз. института, д. 179, л. 23—24.

Սեպտեմբերի 16.— Հովհ. Լազարյանը, Նալբանդյանին հեռացնելու մասին իր համաձայնությունը տալով, Ս. Ի. Զելենոյին կարգադրում է, որ հրամանագիրն ստանալուց յոթ օրվա ընթացքում Նալբանդյանն ազատի ճեմարանի շենքում իր զբաղեցրած բնակարանը։

ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, л. 39—40.



Մոսկվայի Վերափոխման տաճարը

Սեպտեմբերի 21.— *Ներսես կաթողիկոսը, Մ. Վահապետյանին հանդիմանելով Նալբանդյանին հովանավորելու համար, վրդովմունքով հայտնում է, որ նա (Նալբանդյանը) Մոսկվայում «անօրեն չարաբանությամբ» պարսավում է Խալիբյանին և իրեն՝ կաթողիկոսին:*

Մատենադարան, Ձեռագր. բաժին, № 8916, թ. 319—320:

Սեպտեմբերի 23.— *Հովհ. Լազարյանը Ս. Ի. Զելենոյին կարգադրում է՝ Նալբանդյանին բոլորովին հեռացնել Ճեմարանից՝ դադարեցնելով աշխատավարձի վճարումը և Ճաշարանից օգտվելը:*

Պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 34, 210:

Սեպտեմբերի 30.— *Ս. Ի. Զելենոյը Հովհ. Լազարյանին զեկուցում է, որ «նորին գերազնվության» գրության համաձայն, Նալբանդյանը Ճեմարանից բոլորովին հեռացվել է, դադարեցվել է աշխատավարձի վճարումը և Ճաշարանից օգտվելը:*

МГОИА, ф. Лаз. института, д. 170, л. 47.

Նույն օրը.— *Քիշինևի թաղային ոստիկանը, հիմնվելով տեղի հայկական Կոնսիստորիայի տեղեկությունների վրա, ոստիկանապետին հայտնում է, թե՝ «Դպիր Նալբանդյանը մեկ տարուց ավելի է փախել է, հայտնի չէ՝ ինչպես»:*

Մատենադարան, Սիճոդի կարգ. մաս, թղթ. 68, վ. 12, թ. 69:

Մինչև հոկտեմբերի 4.— *Նալբանդյանը դիմում է Լազարյան Ճեմարանի դիրեկտոր Զելենոյին, խնդրելով վկայական՝ Մոսկվայում ապրելու իրավունք ունենալու համար:*

ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, л. 39—40.

Հոկտեմբերի 4.— *Ս. Ի. Զելենոյը մերժում է Նալբանդյանի դիմումը, պատճառաբանելով, թե Նալբանդյանն այլևս Ճեմարանի հետ կապված չէ:*

Նույն տեղը:

Հոկտեմբերի 9.— *Կովկասյան կոմիտեի նախագահ Վ. Բուտկովը, ուշացումով (հավանաբար՝ Նալբանդյանի ոստիկանական գործի կապակցությամբ) հայտնում է Հովհ. Լազարյանին, որ կառավարիչ Սենատի հունվարի 27-ի հրամանագրով Նալբանդյանը հաստատված է ուսումնական մասում ծառայության մեջ՝ միաժամանակ արձակվելով մեշչանական կոչումից:*

Պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 34, 203:

Հոկտեմբերի 11.— *Խաչ. Լազարյանը Ա. Ի. Զելենոյին հայտնում է, որ Նալբանդյանի դործի առթիվ դիմել է Կովկասյան կոմիտե, որտեղ գտնվում են նրա փաստաթղթերը. «այստեղ առաջ են դալիս որոշ դժվարություններ...»,— ավելացնում է նա։*

Նույն օրը, ստանալով Վ. Բուտկովի հոկտեմբերի 3-ի դրությունը, Խաչ. Լազարյանը հնարավոր է համարում Նալբանդյանին տալ Սենատի հրամանագրի և Բուտկովի հիշյալ դրության պատճենները, ինչպես նաև նրա երկու վկայականների բնագրերը. «հետևվապես Նալբանդյանը կարող է ապրել, որտեղ ցանկանում է...»։

Պետ. համալսարանի «Ռիտական աշխատություններ», հ. 34, 212։

Հոկտեմբերի 14.— *Հովհ. և Խաչ. Լազարյանները, Ներսես կաթողիկոսին դրած նամակում, հերքելու համար վերջինիս կարծիքը, թե իրենք Նալբանդյանին «սերտ պաշտպանության տակ են առել», հայտնում են, որ Ճեմարանի վարչությունն իրենց կարգադրության համաձայն, նրան հեռացրել է Ճեմարանից, ուր այժմ, Նալբանդյանն առանց պաշտոնի, միայն օդտվելով Ճաշարանից, բնակվում է ո՛չ թե Ճեմարանի շենքում, այլ քաղաքում, և մտադիր է համալսարան մտնել։ Այնուհետև, «մեծահոդաբար» խնդրում են ներել Նալբանդյանին, և եթե, իրոք, հանցավոր է, խորհուրդ են տալիս նրա գործը հանձնել տեղի (Մոսկվայի) քաղաքացիական դատարանին։*

Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 147, վ. 73։

Նույն օրը.— *Մատթեոս Վեհապետյանին գրած նամակում Լազարյան եղբայրները հավաստիացնում են, որ գործադրում են բոլոր ջանքերը, սակայն Ներսես կաթողիկոսը Նալբանդյանի նկատմամբ ցանկանում է անել միշտ հակառակը։*

Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 152, վ. 44։

Հոկտեմբերի 19, Մոսկվա.— *Նալբանդյանը դիմում է Հովհ. և Խաչ. Լազարյաններին, խնդրելով Ճեմարանից ազատվելու մասին վկայական, որն անհրաժեշտ էր Մոսկվայի համալսարանի իսկական ուսանողների կարգն անցնելու համար։*

Երկերի լիակատար ժող., IV, 30—31։

Նոյեմբերի 24.— *Խաչ. և Հովհ. Լազարյանները, Երեմիա Արծրունուց տեղեկանալով, որ Ներսես կաթողիկոսը դժգոհ է իրենցից՝ Նալբանդյանին, իբր, պաշտպանելու համար, կաթողիկոսին գրում են, որ իրենք Նալբանդյանին բնավ չեն պաշտպանել, այլ միայն*

խնդրել են ներողամտություն նրա նկատմամբ։ Իսկ եթե կաթողիկոսը դա հանցանք է համարում, ապա խնդրում են, որ մեծահոդաբար մոռանա իրենց սխալները։

ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312, лл. 42—43.

Նոյեմբերի 28.— *Քիշինևի քաղաքային ոստիկանությունը էջմիածնի Սինոդին է ուղարկում Նալբանդյանին որոնելու վերաբերյալ եղած դրագրությունը։*

Մատենադարան, Սինոդի կարգ. մաս, թղթ. 68, վ. 12, թ. 67։
Տե՛ս սեպտեմբերի 30։

Դեկտեմբերի 18.— *Ներսես կաթողիկոսը, տեղեկանալով, որ Նալբանդյանին հաջողվել է ձեռք բերել հոգևոր կոչումից ազատ լինելու վկայական, Սինոդին առաջադրում է ներկայացնել իրեն այն բոլոր փաստաթղթերը, որ վերաբերում են Նալբանդյանի հոգևոր կոչման հարցին։*

Մատենադարան, Սինոդի կարգ. մաս, թղթ. 55, վ. 89, թ. 22։

[1854]

Մոսկվայում Նալբանդյանը գրում է «Ну хорошо!» սատիրական բանաստեղծությունը՝ իր կյանքի մոսկովյան շրջանի առաջին տարվա դեպքերի անմիջական ազդեցության տակ։

Երկերի լիակատար ժող., I, 68—71։

[1854]

Գրում է «Ցաղագս հայկական մատենագրութեան ճառը»։

Երկերի լիակատար ժող., II, 9—60։

1855

Հունվարի 21.— *Էջմիածնի Սինոդը Ներսես կաթողիկոսին հայտնում է, որ Միքայել Նալբանդյանը, լինելով արքունական հարկատու անձի որդի, իր ամբողջ կյանքում երբեք հոգևորական կարգի մեջ հաստատված կամ համարված չի եղել, հետևապես և՝ Սինոդից երբեմն հոգևորական կոչումից ազատման թուղթ չի ստացել։*

Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 122, վ. 310ա, թ. 98։

Փետրվարի 10, Մոսկվա.— *Նալբանդյանը գրում է նամակ եղբորը՝ Ղազար Նալբանդյանին. հայտնում է, որ ամբողջովին կլան-*

ված է ուսանողական գործերով թե՛ համալսարանում, թե՛ տանը։ Նամակների համար նշում է համալսարանի հասցեն՝ Его благородию студенту Московского Императорского Университета Михаилу Лазаревичу г-ну Налбандову в Москве.

Երկերի լիակատար ժող., *IV, 32—34։*

Փետրվարի [18].— *Գրում է «Հոգևարք» և «18 փետրվարի 1855» բանաստեղծությունները։* **Երկերի լիակատար ժող., *I, 48—49, 57—58։***

Մարտի 2.— *Գրում է «Գարնան մուտ» բանաստեղծությունը։*
Երկերի լիակատար ժող., *I, 61—63։*

Մարտի 21.— *Էջմիածնի Սինոդը Մոսկվայի հայոց հոգևոր կառավարությանն ուղարկելով Նալբանդյանի բողոքը Մկրտիչ եկենյանի «ապօրինի արարքների» դեմ, խնդրում է այն հանձնել Նալբանդյանին՝ նրանից գանձելով 90 կոպեկ՝ այս հարցի համար գործածված անդրոշմ թղթի արժեքը։*
Մատենադարան, Սինոդի կարգ. մաս, *թղթ. 68, վ. 12, թ. 70։*

Ապրիլի 29.— *Նոր-Նախիջևանի և շրջակա հինգ հայկական գյուղերի բնակիչները, 144 հոգու ստորագրությամբ, դիմում են ներկայացնում Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի քեմական առաջնորդ Մ. Վեհապետյանին, բողոքելով Հ. Խալիբյանի դեմ, որ նա յուրացրել է հասարակական (եկեղեցական) գումարները՝ մոտ 100 հազար ռուբլի։ Խնդրում են համապատասխան կարգադրություն՝ Խալիբյանից հիշյալ գումարը վերցնելու և պետական գանձարան հանձնելու մասին։*

Դիմումի տակ դրված է նաև Նալբանդյանի ստորագրությունը։
Մատենադարան, Կար. դիվան, *թղթ. 1855, վ. 319։*

Մայիսի 12, Մոսկվա.— *Նալբանդյանի նամակը Հարությյուն քահ. Գեոքչեյանին։ Խոսելով հայոց լեզվի զարգացման պատմական շրջանների մասին, հայտնում է, որ նրան հանձնած իր բանաստեղծությունները (գրված մինչև 1855 թվականը) նոր, աշխարհաբար լեզվի «տղայական» հասակին են վերաբերում. «վերանորոգյալ հայախոսության այս հասակի վերաբերած քանի մի հիշատակարանք ունելով ես իմ մոտ, կամ իմ սեփական մտածողության պտուղը և կամ ուրիշից մշակած, որոնց անունը տակերումը նշանակած է, կամենում էի նորանց չմատնել հավերժական կորուստի, ինչպես մինչև այսօր իմ անհոգությունովը իմ գրած բաներից շատերը այս կամ այն կողմ ցրված կորած են, որոնց անունը. ես օրըստօրե մոռանում եմ։ Վասն որո, ինչքան որ այժմ ձեռումս ունիմ այս տետրակիս մեջ գրած, ավանդում եմ ձեզ, հուսալով, որ ձեզ մոտ չէ կարող Սատուրնոսը մերձենալ և իմ գրածներովը յուր որկորը խճողել։ Թեպետ այս գրվածքը մի երևելի բաներ չեն, այլ նոր լեզվի տղայության հասակի հիշատակարանք կարող են համարվել»։*
Երկերի լիակատար ժող., *I, 21—23։*
Հիշված բանաստեղծությունները տե՛ս ն. տ., 24—67։

Մայիսի 17.— *Մ. Վեհապետյանն ի պատասխան Նոր-Նախիջևանի և շրջակա գյուղերի բնակչության բողոքի, քաղաքագլխին ուղղած գրության մեջ հայտնում է, որ ինքը քեմական առաջնորդ նշանակված օրից բազմաթիվ անգամ դիմել է եկեղեցական (հասարակական) գումարների առթիվ, սակայն ապարդյուն, քանի որ դա հակառակ է եղել կաթողիկոսի կամքին, որովհետև վերջինս ինքն է Խալիբյանին հանձնել եկեղեցական գումարների լիազորությունը։*
Մատենադարան, Կար. դիվան, *թղթ. 1855, վ. 320։*

Հուլիսի 11, Մոսկվա.— *Գրում է նամակ եղբորը՝ Ղազարոս Նալբանդյանին՝ մասնավոր, ընտանեկան հարցերի մասին. նշում է իր հասցեն՝* В Столечниковом переулке, в доме г. Леве, № 8.
Երկերի լիակատար ժող., *IV, 35—36։*

Մինչև հուլիսի 18.— *Նալբանդյանը դիմում է Լազարյան ճեմարանի վերատեսչին, խնդրելով տալ վկայական, որ ինքը գտնվում է միանգամայն չքավոր վիճակում և ո՛չ մի միջոց չունի վճարելու Մոսկվայի համալսարանում դասախոսություններ լսելու համար կառավարության սահմանած գումարը՝ 50 ռուբլի։*
МГОИА, ф. Лаз. института, д. 179, л. 25.

Հուլիսի 18.— *Նալբանդյանի դիմումի առթիվ վերատեսուչը խնդրում է Հովհ. Լազարյանի կարգադրությունը։ Վերջինս կարգադրում է տալ Նալբանդյանի խնդրած վկայականը՝ դիրեկտորի, վերատեսչի և ճեմարանի վարչության անդամների ստորագրություններով, ինչ վերաբերում է իրեն՝ Լազարյանն իր կոչմանն «անվայել» է համարում ստորագրել այդ կարգի թղթերի տակ։*

Նույն տեղը։

[1851—1855]

Պահպանվել են այս ժամանակամիջոցում Նալբանդյանի գրած և թարգմանած հետևյալ բանաստեղծությունները.

«Ջերքեզի երգ» (Պուշկինից), «Կյանք», «Մուսայից մուսային», «Վազող ջրին», «Ուսանող և մեծատուն», «Մտածություն» («Անցան օրերս»), «Մարգարե» (Լերմոնտովից), «Մտածություն» («Ա՜խ, փոքրոգի...»), «Պալեստինու ոստ», «Մտածություն» («Պատուհանում նստած...»), «Բանաստեղծ» (նմանություն), «Ֆիզիկայի քննություն» (նվեր Անանիա Սուլթանշահի), «Օտարի գերեզմանի վերա», «Աստված», «Վեճ» (Լերմոնտովից), «Մտածություն» (նվեր պարոն Կարապետյանի և Բերբերյանի), «Հոգևարք», «Աբբատ», «Նվեր Ամիրյանի», «Վեցերորդը — մի՛ շնար», «Հույս», «18 փետրվարի 1855», «Լսարան», «Գարնան մուտ», «Ճշմարտություն»:

Երկերի լիակատար ժող., *I*, 24—67:

1856

Հունվարի 23, Մոսկվա.— *Նամակ եղբորը՝ Ղազարոս Նալբանդյանին, գերազանցապես մասնավոր, ընտանեկան հարցերի շուրջը: Խոսում է Ղրիմի պատերազմին (1853—1856) մասնակցող կողմերի միջև այդ ժամանակ սկսված խաղաղության բանակցությունների մասին:*

Երկերի լիակատար ժող., *IV*, 37—38:

Փետրվար, Մոսկվա.— *Նալբանդյանը կարդում է Իսկանդերի (Գերցենի) 1855 թ. մարտի 10-ի նամակն՝ ուղղված Ալեքսանդր II ցարին:*

«Մուրճ», *1905, № 4*, 65:

Իսկանդերի նամակը տպագրված է «Полярная звезда»-*ի առաջին գրքում՝* «Полярная звезда на 1855, третное обозрение освобождающейся Руси, издаваемое Искандером, книжка первая, Лондон», 1855, стр. 11—14: *Փաստը վկայում է, որ Նալբանդյանն այդ ժամանակ կարդում էր Գերցենի անլեգալ հրատարակությունները:*

Իր այդ նամակում Գերցենը, դեռևս հավատ ընծայելով ցարի «բարեհաճեցողությանը» ճորտատիրության վերացման հարցում, նրան կոչ էր անում.

«Սրբեցե՛ք Ռուսաստանի վրայից ճորտատիրության ամոթալի բիծը. բուժեցե՛ք մեր եղբայրների մեջքերին խարազանի կապույտ



«Պոլյարնայա զվեզդա»-ի առաջին գրքի անվանաթերթը

վիրակոսները՝ մարդու նկատմամբ անարգանքի այդ սարսափելի հետքերը։ Շտապեցե՛ք։ Գյուղացուն ազատեցե՛ք գալիք չարագործություններից, փրկեցե՛ք նրան այն արյունից, որ նա ստիպված կլինի թափել»։

А. И. Герцен, Полное собрание сочинений, т. VIII, стр. 162.

Մինչև մարտի 5.— *Նալբանդյանը գնում է Պետերբուրգ՝ ձուլիչ տպարանատեր Ռևիլիոնից «Հյուսիսափայլի» համար մայրեր ձեռք բերելու նպատակով։ Այդ մասին նա հայտնում է Ռափայել Պատկանյանին, ինչպես երևում է վերջինիս՝ 1856 թ. մարտի 5-ին Գ. Քանանյանին ուղղած նամակից։ (Տե՛ս մարտի 5)։*

«Մուրճ», *1905, № 4, 65։*

Մարտի 5.— *Ռ. Պատկանյանը Գ. Քանանյանին գրած նամակում հայտնելով, որ Իսկանդերի (Գերցենի) նամակը հանձնել է Նալբանդյանին, գրում է. «Խնդրեմ հենց այս դիրս ստանալու րոպեդ երթաս նորա [Նալբանդյանի] մոտ (թեկուզ ջահաննամի մեջը), որպես և իցե հնարքով առնուս այն վատանդավոր ձեռագիրը [Գերցենի նամակը], թե չէ նորա ձեռին այն չար գործի[ք] է, և ինձ միամտացնես»։*

Նույն նամակում Պատկանյանն անհանգստություն է արտահայտում նաև այն առթիվ, որ Նալբանդյանը, մայրեր (матрицы) ձեռք բերելով, կունենա իր տպագրական օրգանը.

«Նալբանդյանի այստեղ գալու պատճառը,— գրում է նա,— ըստ ամենայնի ինձ հայտնի չէ՝ բայց ինչպես որ ինքն է ասում, իբր թե Ռևիլիոնից մայրեր առնելու համար է եկել. ինչ և իցե, բայց դու աչքերդ բաց պահիր. այդ թեև աղգասիրական խնդիր է, բայց մեր կորստյան դուռն է. լավ էր, եթե մի ուրիշ մարդ, և ոչ Նալբանդյանը ձեռնարկեր այդ սրբազան ձեռնարկությանը, բայց վերջինի համար... ի՞նչ ասեմ. մնացածը կհասկանաս. ասելս այն է, որ չի քնեք»։ Նույն տեղը։

Մարտի 10.— *Ռ. Պատկանյանը Գ. Քանանյանին գրած նամակում կրկին խնդրում է, որ նա Իսկանդերի [Գերցենի] նամակը վերցնի Նալբանդյանից. «Ստացա՞ր Նալբանդյանցից Իսկանդերի նամակը դեպի կայսրը. թե չես առել տակավին, գուցե մի հնար անշուշտ առնելու, որ միամտանամ»։* «Մուրճ», *1905, № 4, 69։*

Մարտի 18.— *Ստ. Նազարյանը գրում է «Հյուսիսափայլի» նախագիծը և ներկայացնում լուսավորության մինիստր Ա. Ս. Նորովին՝ հրատարակության թույլտվություն ստանալու համար։*

Լեո, Ստեփանոս Նազարյանց, *Հատ. երկրորդ, Թիֆլիս, 1902, 5։*

Մինչև մարտի 21, Մոսկվա.— *Նալբանդյանը վերին աստիճանի թուլության մեջ է ընկնում և հիվանդանում, որ տևում է 10 օր։*

Երկերի լիակատար ժող., IV, 40։

Մարտի 21, Մոսկվա.— *Նալբանդյանի նամակը Ս. Գ. Սուլթանշահին։ Հայտնում է, որ ինքը և Նազարյանը վաղուց է, ինչ մտադիր են եղել հրատարակել մի հայկական օրագիր [1854], «աշխարհաբար լեզվով, հասարակին հասկանալի», սակայն զանազան հանգամանքներ (մինիստրության մերժումը) արգելք են եղել այս գործին. նշելով «արգելատիպ հանգամանքների փոփոխությունը» (Ղրիմի պատերազմից հետո մամուլի նկատմամբ եղած խստությունների մեղմացումը), հայտնում է, որ ինքը և Նազարյանը կըրկին ձեռնարկել են այդ գործին. Նազարյանի անունով դիմում է ներկայացված լուսավորության մինիստրին՝ ամսագիր հրատարակելու թույլտվություն ստանալու համար։ Խնդրում է Ս. Գ. Սուլթանշահին, որ վերջինս օգտագործի իր կապերը դրական արդյունքի հասնելու իմաստով։*

Նալբանդյանը շարադրում է նաև «Հյուսիսափայլի» հրատարակության խնդիրները. «Մեր ցանկությունն այն է, որ կարողանանք ժողովրդին մոտեցնել փոքր ինչ դպրության հետ, նյութ և սնունդ դնել հայկական շոր ու ցամաք դպրության մեջ, և ինչպես մի կողմից լեզուն, մյուս կողմից և նույն ինքյան դպրության հոգին և ուղղությունը որքան կարելի է շինենք ժողովրդական, ազատելով աբեղայականությունից, որի մեջ մնացած է այժմ անտեր-անտերությունջ»։ Երկերի լիակատար ժող., *IV, 38—40։*

Մինչև մարտի 26.— *Լինում է Պետերբուրգում։*

Երկերի լիակատար ժող., IV, 40։

Մարտի 26, Մոսկվա.— *Նամակ Գ. Սալթիկյանին. հայտնում է համալսարանի պարապմունքներով խիստ զբաղված լինելը։ Եղել է*

Պետերբուրգում, և քիմիայի քննություններին է պատրաստվել։ Հույս է տածում, որ եթե հաջողվի «Հյուսիսափայլը» հրատարակել, Սալթիկյանը կաջակցի ամսագիրը Նոր-Նախիջևանում տարածելու գործին։ Այնուհետև հայտնում է, որ «Հյուսիսափայլի» հրատարակության մասին իրենց դիմումի պատասխանը Պետերբուրգից դեռևս չի ստացվել։ Նշում է իր նոր հասցեն՝ На Большой Дмитровке, в доме Рудакова, *հետևյալ նամակում ավելացնում է՝* возле Дворянского клуба. Երկերի լիակատար ժող., *IV, 40—41։*

Ապրիլի 19, Մոսկվա.— *Նամակ Գ. Սալթիկյանին։ Ակնարկելով պայքարը խալիբյանականների դեմ, կոչ է անում գործել միասնական ուժերով, խելացի կերպով և քաջությամբ, որ հաջողության երաշխիքն է։ Հետաքրքրվում է իր ուսուցիչ Գաբրիել Պատկանյանի գործով, որ Խալիբյանի դեմ մահափորձ կազմակերպելու մեջ մեղադրվելով, բանտարկված էր։* Երկերի լիակատար ժող., *IV, 41—42։*

Հունիսի 11, Մոսկվա.— *Նալբանդյանը համալսարանում քննություն է հանձնում. «Մեր սիրելի Մուխալ եղբարս բարև ունի ամենեցուն ձեզնից,— գրում է Նալբանդյանի Ղազարոս եղբայրը՝ Գրիգոր եղբորը.— ինքն ալ պետք է գիր գրեր, բայց էկզամենին կերթար»։*
Գրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *№ 123/139։*

Հունիսի 15.— *Ղազարոս Նալբանդյանի նամակը Գրիգոր Նալբանդյանին. «... Միքայել եղբայրս ալ բարև կանչե ամենուստ, պետք է գիր գրեր, բայց այս օրերս ունիվեռսիտետս մեկ մեծ մը եկավ Բեռեզովբրեն. ամենը հոն էին. կանչել էր...»։*
Գրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *№ 123/138։*

Հուլիսի 13.— *Նոր-Նախիջևանի և շրջակա գյուղերի բնակիչների բողոքի (տե՛ս 1855, ապրիլի 29) առթիվ Ներսես կաթողիկոսը ներքին գործերի մինիստր Լանսկոյին ուղղած նամակում հայտնում է, որ Խալիբյանը գործել է իր հրամանների համաձայն, և խնդրում է, որ Նովորոսիյսկի և Բեսարաբիայի գեներալ նահանգապետը Խալիբյանին անհանգիստ չանի. «Խալիբյանին ամենափոքր նեղելու հակումն ունեցող ամեն մի կարգադրություն,— գրում է նա,— ես չեմ կարող այլ կերպ ընդունել, եթե ոչ իմ անձին ամենամեծ վիշտ պատճառելու հայտնի դիտավորություն, որովհետև Խալիբյանն*

ինձնից նշանակված և իմ հանձնարարությունները կատարող անձնավորություն է»։ Մատենադարան, Երիցյանի արխիվ, *թղթ. 150, վ. 34։*

Օգոստոսի 24.— *Մ. Վեհապետյանին գրած կոնդակում Ներսես կաթողիկոսը կրկին նրան հանդիմանում է, որ հովանավորել է Միքայել դպիր «Չուստայանին» (Նալբանդյանին) և վերջինիս՝ Էջմիածնի Սինոդի ատյանին ուղարկելու իր հրամանը չի կատարել։*
Մատենադարան, Ձեռագր. բաժին, *№ 2946, թ. 104բ—105ա։*

Ամառ.— *Նալբանդյանը Գևորգ Գեղամյանի հետ ամառն անցկացնում է Շերեմետևի գյուղում։ Այդ մասին նա հիշատակում է Գ. Գեղամյանի մահվան առթիվ գրած «Մահագուցակում». «Շատ անգամ խոսում էր մեր հետ այդ մասին [բժշկականության դոկտորի ատեճան ստանալու համար պատրաստվելու մասին], դեռևս յոթ ուսման ընթացքն ավարտելուց մի տարի առաջ, երբ բնակվում էինք ամառը միասին կոմս Շերեմետևի գյուղում»։*
Երկերի լիակատար ժող., *II, 154։*

Հոկտեմբերի 8.— *Մ. Մաերյանը Ներսես կաթողիկոսին գրած նամակում թախանձագին խնդրում է, որ եթե ցանկանում է իրեն ազատել ամենօրյա անասելի վշտերից, որևէ կերպով Նալբանդյանին հեռացնել տա քաղաքից (Մոսկվայից)։ Նամակի ամբողջ բովանդակությունից և տապնապալից տոնից երևում է, որ Նալբանդյանն իր համարձակ մերկացումներով վրդովել էր ո՛չ միայն Մաերյանին, այլև կղերա-ռեակցիոն հոսանքի ներկայացուցիչներից շատերի անդորրությունը։* Մատենադարան, Երիցյանի արխիվ, *թղթ. 154, վ. 208։*

Մինչև հոկտեմբերի 19.— *Նալբանդյանը թարգմանում է Էժենն Սյուի «Թափառական հրեա» վեպի առաջին հատորը և գրում «Հիասուսյանք» ուսումնասիրությունը, որ կցում է վեպին որպես ներածություն, ուր մերկացնում է Ճիզվիթների ռեակցիոն, հակամարդկային գործունեությունը։* Երկերի լիակատար ժող., *II, 70—141։*

Հոկտեմբերի 19.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում Էժեն Սյուի «Թափառական հրեա» վեպի առաջին հատորի՝ Նալբանդյանի թարգմանությունը։*

Նոյեմբերի 27.— *«Հյուսիսափայլի» հրատարակության թույլտվությունն ստանալու համար լուսավորության մինիստրին ներկա-*

յացրած իր դիմումի պատասխանը չստանալով և տեղեկանալով, որ ամսագրի հրատարակության գործը հանձնված է Կովկասի փոխարքա իշխ. Բարյատինսկուն, Նազարյանը նրան դիմելով, բացատրում է իր ձեռնարկության հիմնական նպատակը։

«Իմ գրական ձեռնարկությունը,— գրում է նա,— լինելու է Ռուսաստանում ցրված հայերին ռուսական կրթության և գիտության պատուղները մատուցելու օրգան, միաժամանակ նա ծառայելու է իմ համազգայիններին ռուսական մտքի և կյանքի ասպարեզը առաջնորդելու գործին...

Հայկական հողի վրա ռուսական զենքի փայլուն հաղթանակներից հետո, թվում է, թե ժամանակն է այնտեղ պատվաստել նաև գիտության, արվեստի, քաղաքակրթության ասպարեզում ռուսական մտքի ոչ նվազ փառահեղ նվաճումները»։

Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 154, վ. 221։

Դեկտեմբերի 31.— *Կովկասի փոխարքա իշխ. Բարյատինսկին լուսավորության մինիստրին ուղղած իր գրությամբ, հայտնելով, որ Նազարյանի խմբագրությամբ «Հյուսիսափայլ» ամսագրի հրատարակվելու դեմ ինքն առարկություն չունի, օգտակար է համարում ամսագրի շորս բաժիններին ավելացնել հինգերորդը, նվիրված յուրաքանչյուր անցած ամսի կառավարական գլխավոր որոշումներին և քաղաքական իրադարձություններին, եթե լուսավորության մինիստրն այդ հարմար կգտնի։*

Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 154, վ. 222։

1857

Մարտի 17.— *Ալեքսանդր II-ը «բարեհաճում» է թույլատրել «Հյուսիսափայլի» հրատարակությունը։*

«Լումա», 1902, № 4, 219—220։

Ապրիլի 4.— *Նալբանդյանը գրում է նամակ-պամֆլետ՝ ուղղված Մսեր Մսերյանին։ Չի պահպանվել։*

Դատելով այդ առթիվ Հովհ. Լազարյանին Մսերյանի գրած բողոքից, ինչպես և Հովհ. Լազարյանի Ս. Ի. Զելենոյին ուղղած պաշտոնական գրության մեջ արտահայտած վրդովմունքից, այդ նամակում Նալբանդյանը սուր ծաղրի է ենթարկել Մսեր և Զարմայր Մսերյաններին, ինչպես նաև Ներսես կաթողիկոսին։

МГОИА, ф. Лаз. института, д. 179, лл. 26—27.

Ապրիլի 8, Մոսկվա.— *Նամակ Գ. Սալթիկյանին։ Չի պահպանվել։*

Երկեր լիակատար ժող., IV, 43։

Ապրիլի 12, Մոսկվա.— *Նամակ Գ. Սալթիկյանին. հայտնում է, որ դեռևս կատարելապես չի առողջացել։*

Նույն տեղը։

Նույն օրը.— *Մ. Մսերյանը Նալբանդյանի ապրիլի 4-ի նամակ-պամֆլետը թարգմանելով ռուսերենի, ուղարկում է Ի. Գ. Դելյանովին և խնդրում խորհուրդ՝ Նալբանդյանի դեմ միջոցներ ձեռնարկելու մասին։*

Անտիպ երկեր, 744։

Ապրիլի 20.— *Նալբանդյանի՝ Մ. Մսերյանին գրած նամակ-պամֆլետի առթիվ Հովհ. Լազարյանը Ճեմարանի դիրեկտորին հանձնարարում է հայտնել Նալբանդյանին, որ նրա հարձակումները Մսերյանի դեմ անհիմն են, և որ վերջինս ամեն տեսակի վրատահության արժանի է։ Այնուհետև զգուշացնելով, որ այսուհետև նման գրություններով Նալբանդյանը Մսերյանին չանհանգստացնի, սպառնում է՝ հակառակ դեպքում ինքը՝ Հովհ. Լազարյանն ստիպված կլինի դիմելու բարձր իշխանություններին, խնդրելով Նալբանդյանին հեռացնել մայրաքաղաքից (Մոսկվայից), իսկ եթե նա Մսերյանի դեմ դատ սկսի, ինքը դատին կմիջամտի՝ խնդրելով գործը քննել օրենքի համաձայն և պատժել Նալբանդյանին։*

МГОИА, ф. Лаз. института, д. 179, лл. 26—27.

Մայիսի 10.— *Գրաքննությունը թույլատրում է տպագրել «Հյուսիսափայլի» հայտարարությունը։*

Մայիսի 13.— *Մ. Մսերյանը Ղուկաս արքեպիսկոպոսին ուղղած նամակում գրում է, թե էջմիածին տեղափոխվելու հեռանկարը մինչ այժմ իրեն հույս էր ներշնչում, թե կազատվի Նալբանդյանի պատճառած անախորժություններից (մերկացումներից). իսկ այժմ Ներսես կաթողիկոսի մահից հետո, Նալբանդյանը և նրա «բազկակիցները» (համախոհները), ավելի սաստկությամբ, «բանիվ և գրով» «նախատակած» են անում նրան (Ներսես կաթողիկոսին) և իրեն։*

Մատենադարան, Մսերյաննեերի արխիվ, թղթ. 207, վ. 1965։

Մայիսի 26.— *Ստ. Նազարյանը հաստատում է, որ ստացել է Մոսկվայի հայկական տպարանը կարգավորելու համար Կ. Հայբրապետյանի ուղարկած հաղար ռուբլին։*

Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 185, վ. 50։

Մայիսի 29, Մոսկվա.— *Նալբանդյանը Գ. Սալթիկյանին գրած նամակում հայտնում է իր «անթիվ զբաղմունքների» մասին. մի կողմից համալսարանական պարապմունքները, մյուս կողմից՝ եկեղեցական (հասարակական) գումարների խնդիրը, և ապա՝ Էոժեն Սյուի «Թափառական հրեայի» իր թարգմանության տպագրությունը, որի սրբագրությունն ինքն է կատարում: «Պետք է տեսնես, թե «Ժիտր» («Թափառական հրեան») ինչ վտառավոր տպվում է. փիր փերվենտե և լավ հասկանալի լեզվով. կաթոլիկների մեջքը կոտրելու է այդ»:*

Երկերի լիակատար ժող., *IV*, 44—45:

Մայիսի 30.— *Մոսկվայում լույս է տեսնում «Հյուսիսափայլի» «Հայատարարությունը»՝ ամսագրի ծրագրի և բաժանորդագրության պայմանների մասին:*

Հեո, Ստեփանոս Նազարյանց, *Հատ. II, 1902, 8:*

Մայիս.— *Տպագրվում է Էոժեն Սյուի «Թափառական հրեա» վեպի առաջին հատորը Նալբանդյանի թարգմանությամբ:*

Երկերի լիակատար ժող., *IV*, 44:

Հունիսի 1, Մոսկվա.— *Նալբանդյանը Գր. Սալթիկյանին ուղղած նամակում հայտնում է, որ «Հյուսիսափայլի» հրատարակության թույլտվություն ստացած լինելով, այժմ հրատարակում են հայատարարությունը, որի մի օրինակն ուղարկում է նրան: Խոստանում է հետևյալ փոստով մի քանի օրինակ ևս ուղարկել, խնդրում է տարածել և հորդորելով ավելացնել «Հյուսիսափայլի» բաժանորդների թիվը: Դարձյալ նշում է, որ «Հյուսիսափայլը» պայքարելու է կղերական ռեակցիայի դեմ. «Հերի՛ք է, սրբե՛նք մեր վերայից այն մոռթը, թե լուսավորությունը մեր ազգի մեջ պիտու է փճած պապական աբեղաների ձեռքով մտանե. նոցա լույսը խավարից շատ վատ է, վասն որո թող յուրյանց պահեն. հայոց ազգի մեջ այժմ կան մարդիկ, որ կարող էին հազար անգամ լավ գրել, լուսավոր, ճշմարիտ և մաքուր, քան թե մի վենետկեցի աբեղա»:*

«Թափառական հրեայի» տպագրությունը շարունակվում է. Նալբանդյանն ընդգծում է այդ գրքի նշանակությունը կաթոլիկ հոգևորականության մերկացնելու գործում: Նշում է իր լարված, անդադրում աշխատանքը. մի կողմից համալսարանական պարապմունքները, մյուս կողմից՝ «Թափառական հրեայի» տպագրության գործը և «Հյուսիսափայլի» հրատարակության նախապատրաստական աշխատանքները կլանում են իր ամբողջ ժամանակը: «Մոխիր եմ դարձել,— գրում է նա,— հիվանդությունից հետո մի լավ, օրինավոր առողջության երես տեսած չեմ»:

Հույս է հայտնում հուլիսի վերջերին կամ կեսերին լինել Նոր-Նախիջևանում:

Երկերի լիակատար ժող., *IV*, 45—47:

Հուլիսի 1.— *Լոնդոնում սկսում է լույս տեսնել Ա. Ի. Գերցենի «Կոլոկոլը»: Չանցած մի քանի ամիս, նա լայն տարածում է ստանում ամբողջ Ռուսաստանում. ցարական կառավարությունը և նրա ժանդարմները ո՛չ մի կերպ չեն կարողանում խանգարել «Կոլոկոլի» ձայնի տարածմանը: Նա տարածվում է ամենուրեք, ճորտատիրական Ռուսաստանի բոլոր անկյուններում. չկար նահանգական, այլև գավառական ո՛չ մի քաղաք, որտեղ չիմանային «Կոլոկոլի» մասին:*

М. Лемке, Очерки освобод. движ. 60-х годов, 18.

Հուլիսի 22, Պետերբուրգ.— *Ռ. Պատկանյանը Քերովբե Պատկանյանին հայտնում է, թե՝ «Նալբանդյանը գնաց արտասահման, և ինչպես լսեցի՝ օրագրի [«Հյուսիսափայլի»] համար մամուլ, տառեր և կլիշեներ պիտի բերե...»:*

Ծրագիր բանգարան, Ռ. Պատկանյանի ֆոնդ, № 270, նամակ 10բ:

Օգոստոսի 16.— *Գրաքննիչը թույլատրում է տպագրության Ա. Արովյանի «Վերք Հայաստանի» վեպը (լույս է տեսնում 1858 թ.):*

Սեպտեմբերի 5.— *Նալբանդյանը Մոսկվայից մեկնում է Քիշինև:*

Գրական բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ:

Սեպտեմբերի 24, Մոսկվա.— *Գրում է «О новом журнале на армянском языке (письмо к редактору)» հոդվածը «Հյուսիսափայլի» ծրագրի և ուղղության մասին:*

К. Н. Григорьян, Статья Микаела Налбандяна в газете «Молва». *ՀՍՍՌ Գիտ. ակադ. «Տեղեկագիր», Հաս. գիտ., 1954, № 5:*

Հոկտեմբերի 5.— *Ռուսական «Молва» շաբաթաթերթի № 26-ում տպագրվում է «О новом журнале на армянском языке (письмо к редактору)» հոդվածը, որտեղ, Նալբանդյանը շարադրելով մայիսի 30-ին լույս տեսած «Հյուսիսափայլի» «Հայտարարության» բովանդակությունը, ռուս ընթերցող հասարակայնությանը ծանոթացնում է հայկական նոր ամսագրի ուղղության և խնդիրների հետ:*

Շարաթաթերթի նույն համարում տպագրված է խմբագրի ծանոթությունը՝ «По поводу письма г. Налбандянца», *որով նա ողջունում է «Հյուսիսափայլի» հրատարակության նախաձեռնությունը։*

Նույն տեղը։

Հոկտեմբերի 31.— *Գրաքննության թույլտվությունը «Սովրեմեննիկի» 1857 թ. № 11—12-ի տպագրության մասին։ Այդ համարում են տպագրված Բերանժեի մի շարք բանաստեղծությունները՝ Դ. Լենսկու թարգմանությամբ։ «Վայր ընկնող աստղերը» և «Աղքատ կինը» Նալբանդյանը փոխադրել է Դ. Լենսկու այդ թարգմանություններից։*

Նոյեմբերի 4.— *Կ. Խալիբյանը (?) Հ. Խալիբյանին գրած նամակում հաղորդելով, որ սեպտեմբերի 5-ին Նալբանդյանը Մ. Վահապետյանի, Ստ. Նազարյանի և ուրիշների հետ մեկնեց Քիշինև (?), հատկապես ընդգծում է Նալբանդյանի ազդեցությունը Մ. Վահապետյանի վրա, քն «նորա (Նալբանդյանի) խելքով գործ կատարում է»։ Այնուհետև նամակագիրը նշում է, որ վերջին ժամանակները Մ. Վահապետյանի և Լազարյանների միջև առաջացած սառնության, նույնիսկ «փոքր մի խռովության» պատճառը ևս Նալբանդյանն է, որովհետև վերջինս Լազարյանների «հայտնի թշնամին է, իսկ Մ. Վահապետյանը Նալբանդյանի հետ մոտ է»։ Նամակից երեվում է, որ Նալբանդյանը, Մ. Վահապետյանի միջոցով, մտադիր է եղել Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքում «հայոց վարժատուն բանալ»։ Նամակագիրն այդ ծրագիրը համարում է «ավազի վերա շինված տուն»։*

Գրական բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Մինչև նոյեմբերի 7.— *Նամակ Կ. Հայրապետյանին «Մինին խոսք, մյուսին հարսն» վեպի մասին։ Չի պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., IV, 54։

Նոյեմբերի 7, Մոսկվա.— *Կարապետ Հայրապետյանին ուղղած նամակում Նալբանդյանը խնդրում է նվիրատվությունների ձևով ապահովել «Մինին խոսք, մյուսին հարսն» իր վեպի տպագրության գործը։ Վեպի բնույթի մասին Նալբանդյանը գրում է, որ նրա «խորհուրդն է բարոյական լուսավորություն և կրթություն. և որովհետև այդ բանի գլխավոր նյութն առած է նախիջևանցոց կյանքից, վասն որո և մանավանդ հասկանալի և օգտակար նախիջևանցոց համար»։*



Խաչատուր Աբովյան

Նա հույս է հայտնում, որ մի խումբ համակրողների աջակցությամբ «Մինին խոսք, մյուսին հարսն» վեպը կտպագրվի, որով իր «տարեվոր (այսինքն՝ տարուց ի վեր գրված) աշխատությունը պիտի կենդանանա աղդի համար»։ Երկերի լիակատար ժող., *IV, 53—54։*

Դեկտեմբերի 11.— *Հովհ. Գրիգորյան-Թաթռեղյանը (?) Աբել Մխիթարյանին գրած նամակում հայտնում է, թե՝ «... զգոնամիտ Միքայել Նալբանդյանց ի բաժնի (?) պարապի բժշկական արվեստի ի Մոսկվա», ավելացնելով, թե, ինչպես լսել է, երկու տարուց հետո նա արդեն բժիշկ է։*

Մատենադարան, Պատկանյանների արխիվ, *թղթ. 144, վ. 272։*

«ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼԻ» ՇՐՋԱՆ

1857 դեկտ. 14—1860 նոյեմբ. 13

1 8 5 7


Դեկտեմբերի 14.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» առաջին (հունվարի) ամսատետրակը։*

Նալբանդյանի գրչին է պատկանում՝

«Կրիտիկա — «Հանդես նոր հայախոսության», գործ Սահափառնոս վարդապետի Նազարյանց, Ա. հատոր, Մոսկվա, 1857» (էջ 71—80)։

[1 8 5 5—1 8 5 7]

Հետագայում, բանտում (1863) Նալբանդյանը ջերմությամբ է հիշում իր ուսանողական շրջանի մասին. «Հիշո՞ւմ ես անցյալը, երբ ջերմ բնկերական շրջանում գիշերներ էինք լուսացնում. ո՞ւր են այժմ մեր անատոմա-պաթոլոգիական և ֆիզիկո-բժշկական հավաքույթները, գրքերը, տետրակները, զրույցները, և որպես այդ բոլորի անհրաժեշտ ատրիբուտներ՝ շշերն ու բաժակները։ Ճիշտ է ասում Շիլլերը, թե՝ «կյանքի մայիսը մի անգամ է ծաղկում». անգառնալի են մեզ համար ավյունով ու հույսերով լի այն երջանիկ օրերը։ Չնայած մեզանից յուրաքանչյուրի կյանքի պայմաններն ավելի քան սահմանափակ էին, բայց այն քաղցր բերկրանքն ավելի լայն պայմաններում այլևս չենք տեսնի։ Ուսանողի կյանքի պոեզիան բաղկացած է՝ ցանկացածի պես ապրելուն արգելակող միջոցների դեմ մղած պայքարից և իրական այն կյանքից, որ նա վարում է, չնայած սահմանափակ միջոցներին։ Նա քչով բավականանում է, բայց այնուամենայնիվ, իր ուզածն է անում և ապրում է այնպես, ինչպես կցանկանար ապրել»։ Երկերի լիակատար ժող., *IV*, 166։



«Հյուսիսափայլի» անվանաթերթը

1 8 5 8

Փետրվարի 17.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» երկրորդ (փետրվարի) ամսատետրակը։ Նալբանդյանի գրչին են պատկանում՝*

1. «Էխսուսի դր Շևրեոզ», Կլեմանս Ռոբերտի գործը, թարգմանություն, (էջ 81—130)։

2. «Վայր բնկնող աստղեր», Կոմս Էմմանուել ստորագրությամբ (էջ 130—131)։

3. «Մահացուցակ» (Գ. Գեղամյանի մահվան առթիվ, էջ 143—154)։

4. [Դամբանական ճառ] (էջ 156—158)։

Փետրվարի 18.— *Կարդում է դամբանական՝ Ն. Արովյանի աշակերտ և իր համալսարանական ընկեր Գեորգ Գեղամյանի վաղաժամ մահվան առթիվ։*
Երկերի լիակատար ժող., *II*, 158—159։

Փետրվարի 28.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Современник»-ի 1858 թ. № 3-ը։ Այդ համարում են տպագրված Հ. Հայնեի մի քանի բանաստեղծությունները՝ Մ. Միխայլովի թարգմանությամբ։ Նալբանդյանը Հայնեի «Երազը» փոխադրել է Միխայլովի թարգմանությունից։*
Н. М. Чернышевская, Летопись жизни и деятельности Н. Г. Чернышевского, 1953, стр. 153.


Մարտի առաջին կեսը.— *Ավարտվում է «Հյուսիսափայլի» առաջին (հունվարի) ամսատետրակի տպագրությունը։*
Երկերի լիակատար ժող., *IV*, 48—49։

Մինչև մարտի 27.— *«Հյուսիսափայլի» առաջին (հունվարի) ամսատետրակն ուղարկվում է բաժանորդներին։*
Երկերի լիակատար ժող., *IV*, 48։

Մարտի 27, Մոսկվա.— *Նամակ Կ. Հայրապետյանին։ Նալբանդյանը տեղեկացնում է, որ «Հյուսիսափայլի» առաջին ամսատետրակն արդեն ուղարկված է, իսկ երկրորդը կուղարկվի այս շաբաթ. «ապրիլի մեջ կտպենք Մարտը և Ապրիլը, այնպես որ մայիսին կհավասարվինք»։ Նալբանդյանը բացատրում է, որ այդ ուշացումն իրենց հանցանքը չէ, հավանաբար, ակնարկելով գրաքննության հարուցած խոչընդոտները։ Այնուհետև հայտնում է, որ «Թափառական հրեայի» տպագրությունը կավարտվի մինչև ապրիլի 10-ը, որից*

հետո կձեռնարկի իր մյուս աշխատության (հավանորեն՝ «Մինին խոսք, մյուսին հարսն» վեպի) տպագրության գործին. խնդրում է նյութական աջակցություն, որպեսզի ապրիլի 20-ից սկսի տպագրությունը։
Երկերի լիակատար ժող., *IV*, 48—49։

Նույն օրը.— *Նամակ Սաղաթել Քայալյանին՝ «Մինին խոսք, մյուսին հարսն» վեպի տպագրության գործին աջակցելու մասին։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV*, 49։



«Հյուսիսափայլի» խմբագրատունը

Մինչև մարտի 28.— *Ավարտվում է «Հյուսիսափայլի» երկրորդ (փետրվարի) ամսատետրակի տպագրությունը։*
Հանդես գր. և պատմ., *VI*, 116—118։

Մարտի 28.— *Ստ. Նազարյանը Հովս. Իզմիրլյանին գրած նամակում, նկարագրելով «Հյուսիսափայլի» տպագրության հետ կապված դժվարությունները, նշում է Մ. Նալբանդյանի «անձնանվեր ձեռնտվությենը» «Հյուսիսափայլին»։*
Նույն տեղը։

Նույն օրը.— *«Հյուսիսափայլի» բաժանորդների թիվը հասնում է մոտ 200-ի։*
Նույն տեղը։

Մարտի 29.— *Գ. վ. Այվազովսկին ներքին գործերի մինիստրին հայտնելով, որ «բարձրագույնս» իրեն վստահված Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդի պարտականություններին անց-*

նելով, միաժամանակ իր պատրաստակամությունն է հայտնել կատարելու «հոգևոր գրաքննիչի» պարտավորությունները, և որ՝ իր կողմից ոչ մի արգելք չկա «Ճռաքաղի» հրատարակության համար, ավելացնում է։

«Այս մասին հայտնելով ձերդ բարձր գերազանցությանը, պատիվ ունեմ ամենախոնարհաբար խնդրելու ձեզանից կարգադրություն՝ արգելելու ընդհանրապես և ամենուրեք կրոնական հոդվածներ պարունակող նոր հրատարակվող գրքերի և գրական պարբերականների տպագրությունը, քանի դեռ այդպիսիները չեն նայվի իմ կողմից գրաքննական կարգով՝ ձերդ բարձր գերազանցության կարգադրության համաձայն»։

Մատենադարան, Մսերյաննեերի արխիվ, թղթ. 205, վ. 1300։

Ապրիլի 3.—*Մ. Մսերյանը խաչ. Լազարյանին բողոքելով «Հյուսիսափայլում» Նալբանդյանի մերկացումների դեմ, նշում է, որ նրա հոդվածում («Կրիտիկա—Հանդես նոր հայախոսության») «մոլորված, հայազգի մոսկվացի սխոլաստիկը, որ հազիվ թե մի երկու բառ ծուռ ու սխալ միմյանց մոտ շարել գիտե», ինքն է։*

Մատենադարան, Մսերյաննեերի արխիվ, թղթ. 207, վ. 1348։
Համմ. Երկերի լիակատար ժող., *II*, 143։

Ապրիլի 4.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում Կլեմանս Ռոթերտի «Դքսուհի դը Շևրեոզ» վիպակի՝ Նալբանդյանի թարգմանությունն առանձին գրքով։ Նալբանդյանն իր այս թարգմանությունը նվիրել է «Գեորգ Նազարյան Գեղամյանցի անմոռանալի հիշատակին»։*

«Քո անմոռանալի հիշատակին նվիրելով այս փոքրիկ աշխատությունը, կատարում եմ միայն իմ պարտականությունը,— գրում է Նալբանդյանը։

Քո զգացող սիրտը և պայծառ հոգին շատ անգամ զմայլել էր այս փոքրիկ գործի ընթերցանությամբ... Ընդունի՛ր, ուրեմն, իմ տխուր սրտի բխվածքը, ընդունի՛ր, ասում եմ, այս նվիրաբերությունը, որի վերա գրոշմված է քո քաղցր անունը ո՛չ թանաքով, այլ քո եղբոր աչքի արտասուքով» («Դքսուհի դը Շևրեոզ», Կլեմանս Ռոթերտի գործը, Միքայել Նալբանդյանցի աշխատությամբ», Մոսկվա, 1858)։

Հրատարակելով այս վիպակի հայերեն թարգմանությունը, Նալբանդյանը նպատակ է ունեցել կաթոլիկ հոգևորականության ոճակցիոն, ոճրագործ էության մերկացումը։ Այդ տեսակետից բնորոշ են վիպակի հերոսներից մեկի խոսքերն՝ ուղղված կաղնինայ ոը Ռիշելիեին. «Ժողովուրդն առնու է ձեզ վերջապես... Ազգը պիտի հատուցանն ձեզ առելության և նզովք։ Նույնիսկ պատմությունն արդարացնելու չէ ձեզ, և ապագայքը պատմելու են միայն ձեր սրած չարագործությունքը»։ «Դքսուհի դը Շևրեոզ», Կլեմանս Ռոթերտի գործը, Միխայել Նալբանդյանցի աշխատությամբ, *Մոսկվա, 1858*, 45։

Մինչև ապրիլի 10.— *Ավարտվում է Հ. Սյուի «Թափառական հրեա» վեպի առաջին հատորի թարգմանության տպագրությունը։*

Երկերի լիակատար ժող., *IV*, 49։

«Թափառական հրեան» նվիրելով Ստ. Նազարյանին, Նալբանդյանը նրան ուղղած ձոնի մեջ գրել է. «Գիտեմ, որ սեփական է քո, ամենեցուն հայրենի և ամենների բերանով վկայած համեստությանը՝ հեռի փախչել ամենայն արտաքին փառքից ու պատվից, հերիք համարելով քեզ քո սրտի խաղաղ ու պարզ երջանկությունը, բայց ես իմ փոքրիկ գործի ճակատը պսակելով քո միշտ գեղեցիկ անունով, կամեի միայն ընծայարերել քեզ, գիշեր ու ցերեկ երկաթի դիմացկուն աննուով, դառն հանգամանքների մեջ աշխատողիդ մեր նոր հայ մատենագրության վերա, որ Ռուսաստանի մեջ առաջին անգամ քեզանից զարկ ստացած, հառաջ է քայլում նույն ուղղությունով»։

Ապրիլի 19.— *«Մեղու Հայաստանի» շաբաթաթերթի խմբագիր Ստեփան քահանա Մանդինյանը, անդրադառնալով Նալբանդյանի առաջին հոդվածին («Կրիտիկա—Հանդես նոր հայախոսության»), այն անվանում է «ամենահանդուգն գրվածք», բողոքելով, որ «Կրիտիկայի» հեղինակը «պարսավում է ազգին», իսկ «հայոց գիտնականներին սխոլաստիկ» է անվանում։*

«Մեղու Հայաստանի», *1858*, № *16*, *127*։

Ապրիլի 25.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» երրորդ և չորրորդ (մարտի և ապրիլի) ամսատետրակները։*

Երրորդ ամսատետրակում Նալբանդյանի գրչին են պատկանում՝

1. «Աղբատ կին», Կոմս Էմմանուել ստորագրությամբ (էջ 186—188)։

2. «Հայ մարդու հայրենիքը», նույն ստորագրությամբ (էջ 188—190)։

3. «Աշխարհի կազմածը և նորա հրաշքները» (էջ 190—216)։

Չորրորդ ամսատետրակում՝

1. «Լուսին», Կոմս Էմմանուել ստորագրությամբ (էջ 264)։

2. «Նամակ առ հրատարակողը» (էջ 334—337)։

3. «Պրոպերցիա Բոսսի» (Լուդովիկոս Դելաւորի պատմությունը), թարգմանություն (էջ 250—263)։

4. Այս համարից Նալբանդյանը սկսում է տպագրել ժամանակի հուզող հարցերը շոշափող գրական-հրապարակախոսական իր ակնարկաշարը՝ «Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրության թերթերից» խորագրով (էջ 338—344)։

Ապրիլի 29.— *Նալբանդյանը գրում է «Նամակ առ հրատարակողը», որպես պատասխան «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում իր դեմ եղած հարձակումների։* «Հյուսիսափայլ», *1858, № 4, 334—337։*

Տե՛ս սույն «Տարեգրություններ», 1858, ապրիլի 19։

Մայիս.— *Հայ բուրժուական և կղերա-պահպանողական հոսանքի ներկայացուցիչներից ոմանք, Պետերբուրգում բողոքելով «Հյուսիսափայլի» «վնասակար» ուղղության դեմ, Խաչ. Լազարյանին խնդրում են՝ «սանձահարել կամ բոլորովին դադարեցնել այն»։*

МГОИА, ф. Лаз. института, д. 185, лл. 54—55.

Հունիսի 3.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» հինգերորդ (մայիսի) ամսատետրակը։ Նալբանդյանի գրչին են պատկանում՝*

1. «Առօրյա աշխարհ», Կոմս Էմմանուել ստորագրությամբ (էջ 374—375)։

2. «Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրության թերթերից» (էջ 376—386)։

3. «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյաներ» հոդվածաշարի առաջին հոդվածը (էջ 399—416)։

4. «Կրիտիկա. Ժողովրդական լեզվով թարգմանված և տպված Ռոբինզոնի պատմությունը Գամառ-Քաթիպայի աշխատությունով», Ս.-Պետերբուրգ, 1857 (էջ 412—420)։

Նույն համարում տպագրված է Հայտարարություն Նալբանդյանի թարգմանությամբ է. Այսուի «Թափառական հրեա» վեպի առաջին հատորի և Կլեմանս Ռորերտի «Դքսուհի դը Շևրեոզ» վիպակի լույս տեսնելու մասին։

Հունիսի 20.— *Գ. վ. Այվազովսկին Մտ. Նազարյանին ուղղած նամակում, շնորհակալություն հայտնելով «Հանդես նոր հայախոսության» երկրորդ հատորի և «Հյուսիսափայլի» ամսատետրակների համար, գրում է, թե ամսագրի տարածման մեծագույն արգելք է հանդիսանում այն, որ նրա էջերում երբեմն «տարապայման համարձակախոսությամբ» քննադատվում են «ազդի» և վերջինիս կողմից առանձնապես հարգված անձնավորությունների թերություններ։ Խորհուրդ է տալիս դեթ սկզբում զգույշ լինել։*

Գրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 308։

Հուլիսի 7.— *Նալբանդյանը գրում է «Նամակ առ հրատարակողը», որ Սերովբե Խաչատուրյան Շահբեգ ստորագրությամբ տպագրվում է «Հյուսիսափայլի» 1858 թ. յոթերորդ ամսատետրակում, էջ 72—76։*

Հուլիսի 12.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» վեցերորդ (հունիսի) ամսատետրակը։ Նալբանդյանի գրչին են պատկանում՝*

1. «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյաներ». Հոդված երկրորդ՝ Մխիթարյանք։ Ա.— Մխիթարյանց սկզբունքը։ Բ.— Մխիթարյանց բարոյականությունը։ Գ.— Մխիթարյանց մատենագրական գործունեությունը (էջ 456—485)։

2. «Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրության թերթերից» (էջ 496—507)։

Հուլիսի 14.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» յոթերորդ (հուլիսի) ամսատետրակը։ Նալբանդյանի գրչին են պատկանում՝*

1. «Նամակ առ հրատարակողը», Սերովբե Խաչատուրյան Շահբեգ ստորագրությամբ (էջ 72—76)։

2. «Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրության թերթերից» (էջ 76—86)։

«Հիշատակարանի» այս հատվածը Նալբանդյանը գրել է, հավանորեն, հուլիսի սկզբին մերձմոսկովյան մի ամառանոցում. «Մ՛վ «Հիշատակարան»... մինչև մոռացա՛ր, որ քո մի հատվածը (տպած «Հյուսիսափայլի», հուլիս, 1858) գրեցի մի ամառանոցում, ուր մի քանի բարեկամով գնացել էինք օդ վայելելու։ Գնացի՛ ես նոցա հետ ման գալու և բնության գեղեցիկ տեսարանքը վայելելու. ես չէի՛, որ այն ջերմ եղանակում, ծառի տակ, մի փայտյա, շինականի աթոռի վերա նստած լցնում էի քո էջերը»։ Երկերի լիակատար ժող., *I, 411։*

Հուլիսի 25.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» ութերորդ (օգոստոսի) ամսատետրակը։ Նալբանդյանի գրչին է պատկանում՝*

«Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրության թերթերից» *(էջ 137—167)։*

[Օգոստոսի 12].— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» իններորդ (սեպտեմբերի) ամսատետրակը։ Նալբանդյանի գրչին են պատկանում՝*

1. «Առաջարկություն», Կոմս Էմմանուել ստորագրությամբ (էջ 186—188)։

2. «Թե ինչպես է երկրագունդի ներքին կազմակերպությունը»՝ «Բնագիտականք» ընդհանուր վերնագրով, Ն..... ստորագրությամբ (էջ 225—241)։

3. «Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրության թերթերից» (էջ 242—248)։

Օգոստոսի 21.— Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» տասներորդ (հոկտեմբերի) ամսատետրակը։ Նալբանդյանի դրչին են պատկանում՝

1. «Նկատողություններ» (էջ 298—311)։

2. «Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրության թերթերից» (էջ 335—353)։

Նույն համարում տպագրված է Մա. Նազարյանի դրախոսությունը Ե. Սյուէ «Թափառական հրեա» վեպի առաջին հատորի՝ Նալբանդյանի թարգմանության մասին (315—334)։ Այս դրախոսության շարունակությունը չի տպագրվել։

Օգոստոսի 30.— «Մեղու Հայաստանի» լրագրում տպագրված «Նամակներում» Վահան Արամյանը (Զարմայր Մսերյան) առանձին կրքով խոսում է «անզգաստ և անհեռատես երիտասարդի» (Նալբանդյանի) «անխոհեմ գրվածքների» («Հիշատակարանի») դեմ, նշելով, որ այդտեղ «վարագուրված» ձևով ծաղրված են Ներսես կաթողիկոսը և այլ եկեղեցական ու աշխարհական «արժանահարգ անձինք»։

«Մեղու Հայաստանի», 1858, № 35, 278։
Համմա. Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. 193, վ. 213։

Մինչև սեպտեմբերի 1.— Նալբանդյանը հիվանդանում է, որ տևում է տասն օր։

Երկերի լիակատար ժող., IV, 50։

Սեպտեմբերի 1, Մոսկվա.— Նամակ Գրիգոր Սալթիկյանին։ Հայտնում է, որ նրա նամակներին չպատասխանելու պատճառն իր անդադար զբաղմունքներն էին, վերին աստիճանի թուլությունը և վերջին տասն օրվա հիվանդությունը։ Առանձին ուշադրություն է հրավիրում «Հյուսիսափայլի» յոթերորդ և ութերորդ ամսատետրակներում տպագրված Կոմս Էմմանուելի «Հիշատակարանի» վրա, ուր մերկացվում է կղերա-աղալական ռեակցիան՝ Խալիբյանը, Գ. վ. Այվազովսկին, Ս. վ. Ջալալյանը և սրանց արբանյակները։ Խնդրում է բացատրել չհասկացողներին, որպեսզի մերկացում-

ները նպատակին ծառայեն և ժողովուրդը ճանաչի իր թշնամիներին։ Խոստանում է այսուհետև ևս շարունակել մերկացումները և թշնամիների «աղբաթը» խառնել։ Տեղյակ լինելով «Հյուսիսափայլը» արգելելու ուղղությամբ ռեակցիոներների գործադրած դավադրություններին, գրում է, թե չպետք է թույլ տալ, որ «ճշմարտության թշնամիներն» իրենց նպատակին հասնեն. ընդդծում է ռեակցիայի դեմ միասնական ուժերով գործելու անհրաժեշտությունը. «Պետք է ձեռք ձեռքի տալ և միաբան ուժով ջարդել խավար վիշապի գլուխը»։ Հորդորում է աջակցել «Հյուսիսափայլի» բաժանորդների թիվն ավելացնելու գործին Ղրիմում և Նոր-Նախիջևանում։ Հայտնում է «Հյուսիսափայլի» ծավալը մեծացնելու վերաբերյալ իրենց մտադրության մասին։

Երկերի լիակատար ժող., IV, 50—51։

Նույն օրը.— Կ. Հայրապետյանին ուղղած նամակում նրա ուշադրությունը ևս հրավիրելով «Հյուսիսափայլի» յոթերորդ և ութերորդ ամսատետրակներում տպագրված «Հիշատակարանի» վրա, Նալբանդյանը խնդրում է՝ «չի հասկացողներուն հասկացնել բանի զորությունը, որ ճշմարտությունը ձայն ատանա այդ կորած և մոլորած քաղաքի [Նախիջևանի] մեջ»։ Վճռականություն է արտահայտում շարունակելու պայքարը գաղափարական հակառակորդների դեմ՝ մինչև նրանց ջախջախումը։ «Ազգի և ճշմարտության համար իմ կյանքը իմ աչքումը ոչինչ է և ամեն րոպե պատրաստ եմ զոհել, և այն օրից, երբ գրիչ վեր եմ առել ձեռքս, մինչև գերեզման ես պիտի պատերազմեմ սուրբյան և խավարի հետ, և, որքան թույլ տան մեզ շրջապատած հանգամանքը, պիտի խորտակեմ դավաճան վիշապի գլուխը»։ Դրա գրավականը նա համարում է «Հյուսիսափայլում» տպագրվող իր հոդվածները։ Կրկին անգամ ընդգծում է, որ ռեակցիայի միացյալ ուժերի դեմ պետք է պայքարել նույնպես միասնական ճակատով, և չպետք է թույլ տալ, որ «Հյուսիսափայլի» հրատարակությունը խափանելու՝ իրենց թշնամիների հույսն իրականանա։ Նալբանդյանը հորդորում է անձանձիր հետևել, որ «կանոնն մնա մեր ընկերության (партия) դրոշակը»։

Երկերի լիակատար ժող., IV, 51—52։

Սեպտեմբերի 13.— «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում Մովսես Խահակյանը «Հյուսիսափայլի» հինգերորդ ամսատետրակի «Հիշատակարանի» առթիվ գրած հոդվածում («Պատասխանի կրիտիկային Շահրեգի...»), նշելով, որ Շահրեգը նույն Կոմս Էմման-

նուիրն է, իր պաշտպանության տակ է առնում «արժանահիշատակ մեծատուններին» և «սրբազնագործ արեղաներին» Նալբանդյանի սուր հարվածներից։ Հոդվածագիրը ցավ է հայտնում, որ Շահբեգը «մեծատունների և հոգևոր իշխանների սիրտը կարևեր խոցում» է։

«Մեղու Հայաստանի», 1858, № 37, 291—294։

Սեպտեմբերի 27.— «Մեղու Հայաստանի» շարաթաթերթում տպագրելով ներքին գործերի մինիստր Լանսկոյի գրությունը Խալիբյան դպրոցի կանոնադրությունը հաստատելու մասին, Ստ. Մանդինյանը քաջալերական խոսքեր է ասում Գ. վ. Այվազովսկուն։ Ակնարկելով Նալբանդյանին, նա գրում է. «Քանի տեղ մի՛ դնեք, թե հայոց աբեղայից անուսում են անվանում, մեծատուններին և հարուստներին՝ ագահ ու ժլատ և ազգին՝ մանուկ... Այժմ, փառք աստծո, Հայաստանն ունի մեծ պաշտպան ազգի, եկեղեցվո և ուսման՝ աստվածազոր կայսրն ռուսաց, այդպիսի անձանց գրվածքը երբեք չի կոտրիլ ազգի սիրտը։

Նոքա յուրյանց խորհրդի հառաջ գնալու արգելքը հոգևորականությունն են ճանաչում, վասն որո միշտ անպատվությամբ են խոսում նորա վերա, որ ազգի սիրտը կտրեն մեզանից»։

«Մեղու Հայաստանի», 1858, № 39, 307—308։

Սեպտեմբերի 30.— Ստ. Նազարյանը Գր. Սուլթանյանին գրած նամակում հայտնում է, որ մտադրություն ունեն «ավելի փառավոր դիրքով տպել օրագիրը [«Հյուսիսափայլը»], ճոխացնել նորա բովանդակությունը և տեղ-տեղ պատկերազարդել, եթե բաժանորդների թիվն ավելանա»։ «Նոր Հոսանք», 1914, № 1, 130—133։

[Սեպտեմբեր].— Մ. Մսերյանը Մատթեոս կաթողիկոսին ուղղած նամակում, մատնացույց անելով «Հյուսիսափայլի» չորրորդ, յոթերորդ և իններորդ ամսատետրակներում տպագրված Կոմս Էմմանուելի «Հիշատակարանները», բողոքում է, որ Նալբանդյանն իր գրվածքներում ոչ միայն ընդհանրապես նախատում է ազգն ու եկեղեցին, այլև «իր սրտի դառնության մաղձն անխնա թափում է եկեղեցական և աշխարհական «արժանամեծար» անձնավորությունների վերա», ինչպիսիք են՝ Հ. Հոնանյանց, Հ. Խալիբյան, Ս. եպ. Ջալալյան և ուրիշներ։

Այս ամենը հայտնելով կաթողիկոսին, Մսերյանը խնդրում է նրան գրել... (նամակի սևագրության մեջ բաց է թողնված այն «բարձր աստիճանավորի» անունը, որին նկատի ուներ Մսերյանը), որպեսզի նա «սաստե» Նալբանդյանին, որովհետև վերջինս օրըստօրե ավելացնում է իր հանդգնությունը, և «արժանավոր անձանց» դեմ այդպիսի հոդվածներ գրելուց չի դադարում։

Առաջարկում է նույն «բարձրաստիճան» անձնավորության միջոցով Նալբանդյանին անպատճառ հեռացնել քաղաքից (Մոսկվայից)։ Եվ եթե կաթողիկոսին չհաջողվի այդ, ապա,— շարունակում է Մսերյանը՝ աշխատելով դիպչել կաթողիկոսի «թույլ տեղին»,— կարելի է համարել, թե մեր եկեղեցին գլորման վտանգի մեջ է։

Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. 207, վ. 2129։

Հոկտեմբերի 9, Մոսկվա.— Նալբանդյանի նամակը Մատթեոս (Գեորգ?) Վեհապետյանին։ Խնդրում է հանձն առնել և կազմակերպել «Հյուսիսափայլի» բաժանորդագրության գործը նրան վստահված թեմի մեջ։ Նշում է իր նոր հասցեն՝ На Никитской улице, в доме княгини Голицыной. Երկերի լիակատար ժող., IV, 53։

Հոկտեմբերի 11, Մոսկվա.— Գրում է «նամակ առ հրատարակողը», որով մերկացնում է Հ. Խալիբյանին, որպես հասարակական գումարները կողոպտողի. կոնկրետ օրինակից ելնելով, Նալբանդյանն ընդհանրացումներ է կատարում՝ դիմակազերծ անելով բուրժուազիային և վերջինիս պատվար ու հովանավոր հասարակարգը. «Իշխանություն կա՞ ձեռքումդ, հարո՞ւստ ես, ուրեմն ամենալավ, ամենապատվելի մարդը դու ես... զարկի՛ր, խեղդի՛ր, հալածի՛ր, ինչ կամիս արա՛, անդատապարտ ես, որովհետև հարուստ կամ իշխան լինելով, արդեն քո կողմը գրավել էիր Հռոմի պապի անմեղականությունը։ Քեզանից զարկվողը, խեղդվողը և հալածվողն է մեղավոր և դատապարտելի. դու դեռ ազգասեր անուն ևս կժառանգես...»։

Նալբանդյանը վստահություն է հայտնում, որ թեև «մի քանի պարոնների կողմից» պիտի բամբասվի, բայց «շատերի սրտից լսելու է ձայնակցություն»։

Նա խոստանում է «մի այլ ժամանակ, րոլորովին այլ հանգամանքների մեջ...» փաստաթղթերով հիմնավորապես դիմակազերծ անել Ներսես կաթողիկոսին, Խալիբյանին և մյուսներին. «Այո՛, մենք խոստանում ենք այդ, եթե հաջողի մեզ տպագրական մամուլի տակ ձգել մի ժամանակ «Մեր տեսած ու լսածը», որ բովանդակում է յուր մեջ մեր ազգի ժամանակակից ճիշտ պատմությունը»։

Երկերի լիակատար ժող., II, 265—273։

Հոկտեմբերի 20.— Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» տասնմեկերորդ (նոյեմբերի) ամսատետրակը։ Նալբանդյանի գրչին են պատկանում՝

1. «Երազ», Կոմս Էմմանուել ստորագրությամբ (էջ 412—415)։

2. «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք»։ Հոդված երկրորդ. Դ. Մխիթարյանց մատենագրական գործունեության շարժառիթը (էջ 416—427)։

3. «Նամակ առ հրատարակողը» (էջ 428—438)։

Մինչև հոկտեմբերի 25.— Մ. Մսերյանը, նպատակ ունենալով Նալբանդյանի դեմ արևմտահայ ռեակցիոներների հետ միասնական ճակատ կազմել, Ղուկաս Պալտազարյանին հայտնում է «Արշալույս Արարատյանի» դեմ Սերովբե Խաչատուրյան Շահբեգ ստորագրությամբ, «Հյուսիսափայլի» չորեքերորդ ամսատետրակում տպագրված Նալբանդյանի «Նամակի» մասին։

Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. 205, վ. 1061։

Հոկտեմբերի 25.— Ղ. Պալտազարյանը Մ. Մսերյանին «ազդ չում է հույժ»՝ ուղարկել իրեն «Հյուսիսափայլի» այն ամսատետրակը, որտեղ տպագրված է «Արշալույս Արարատյանի» դեմ ուղղված նամակը (Ս. Խ. Շահբեգի «Նամակ առ հրատարակողը»)։ Գրում է, թե ինքը երբեք չի տեսել հիշյալ օրագիրը («Հյուսիսափայլը») և չգիտե՝ «հայերե՞ն է այն, թե ռուսերեն» (ակնարկում է, թերևս, ռուս առաջավոր դեմոկրատական մտքի ազդեցության մասին). այնուհետև խնդրում է՝ «խորհրդաբար» տեղեկություններ հաղորդել «Սուրմակյաններին», այսինքն՝ «Հյուսիսափայլի» աշխատակիցների մասին։

Նույն տեղը։

Հոկտեմբերի 29.— Ռ. Պատկանյանը Մ. Փանյանին գրած նամակում, պատասխանելով, թե ինչո՛ւ իր «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը չի հանձնել «Հյուսիսափայլին», դժգոհություն է հայտնում այդ ամսագրի «հեղինակների» իր հանդեպ ունեցած մերժողական վերաբերմունքի առթիվ. «Ես հատկաբար [հատկապես] այդ օրագրի համար շատ բաներ էի աշխատել,— գրում է նա,— ի թիվս որոնց «Մեծն Նապոլեոնի պատմությունը»... բայց իմ առաջարկությունքն քաղաքավարությամբ հերքեցին... Նոքա չտպեցին իմ մի ոտանավորն... ունիմ և ուրիշ պատճառներ հեռանալու այդ օրագրի մասնակցութենեն»։

Ռ. Պատկանյանի դժգոհությունը, ըստ էության, Նալբանդյանից էր։ Պատկանյանի և իր համոզմունքների մեջ տեսնելով սկզբունքային տարբերություն և գործադրելով իր ազդեցությունը «Հյուսիսափայլի» խմբագրական գործերում, Նրա հրատարակության առաջին երկու տարում, Նալբանդյանն ինքն է եղել Ռ. Պատկանյանի՝ «Հյուսիսափայլի» համար ուղարկած երկերը մերժողը։ Պատկանյանի նամակում հիշատակված ոտանավորի մերժման հարցին անդրադառնալով իր «Հիշատակարանում», Նալբանդյանը գրում է. «Դարձյալ մի այլ նամակ ստացա պ. Գամառ-Քաթիպայից (Ս.-Պետերբուրգից), որ մեղադրում է ինձ, թե ինչո՛ւ համար նորա ուղարկած մի ոտանավորը չէ ընկել «Հյուսիսափայլի» մեջ, և թե ինչո՛ւ մի գրավոր տեղեկություն չեմ տվել նորան չտպվելու պատճառի մասին». խուսափելով ուղղակի պատասխանից և պատճառաբանելով թե «իմ ձեռքում ոչինչ չկա», Նալբանդյանը գրում է. «Իսկ ինչ որ վերաբերվում է «Հիշատակարանին», այո՛, այդ այլ բան է, այդտեղ ես իմ «Հիշատակարանի» անմիջական տերն եմ. միայն խնդրում եմ ամեն մի մարդուց, որ խնայեն իմ «Հիշատակարանը» և բան ուղարկելու ժամանակ, աշխատեն այնպիսի բան ուղարկել, որ և՛ յուրյանց, և՛ ինձ, և՛ պատվելի ընթերցողներին ժամանակի զուր կորուստ չլինի»։

Երկերի լիակատար ժող., I, 394—395։

Բնորոշ է, որ 1858 թ. մերժված «Մեծն Նապոլեոնի պատմությունը» տպագրվում է «Հյուսիսափայլում» 1860—1861 թթ., երբ Նալբանդյանը հեռացել էր «Հյուսիսափայլի» խմբագրությունից։

Հոկտեմբեր.— Գ. վ. Այվազովսկին Խ. Լազարյանին ուղղած նամակում խնդրում է հայտնել Ստ. Նազարյանին, որ առաջիկայում «Հյուսիսափայլի» էջերում տեղ չտա «անբարեմիտ և անվայել» հոդվածների (նկատի ունի հատկապես Նալբանդյանի հոդվածները և «Հիշատակարանը»), հակառակ դեպքում ստիպված կլինի գործել «օրինական ճանապարհով», ներքին գործերի մինիստրի ուշադրությունը դարձնելով այդ «անբարեմիտ և անվայել» հոդվածների վրա։ МГОИА, ф. Лаз. института, д. 185, лл. 54—55.

Նոյեմբերի 12.— Խ. Լազարյանը, Ն. Դ. Դելյանովին հայտնելով «Հյուսիսափայլում» տպագրված «անբարեմիտ և անվայել» հոդվածների առթիվ Գ. վ. Այվազովսկու բողոքի մասին, և իրավացի համարելով վերջինս, գտնում է, որ նման «անվայելուչ» հոդվածները պատիվ չեն բերում հրատարակչին։ Խ. Լազարյանը Դելյանովին հանձնարարում է անհապաղ կանչել Ստ. Նազարյանին, այս մասին տեղեկացնել և զգուշացնել, որ եթե նրա ամսագրում այսուհետև էլ կտպագրվեն այդպիսի հոդվածներ, ապա ինքն ստիպված կլինի դիմել Լազարյան ճեմարանի գլխավոր կառավարիչ գեներալ-ադյուտանտ իշխ. Ա. Ֆ. Օլովին և հատկապես Կովկասյան կոմիտեի կառավարիչ, գաղտնի խորհրդական Վ. Պ. Բուտկովին՝ վճռական

միջոցներ ձեռք առնելու համար։ Եվ չնայած ինքը դեռևս մայիս ամսին բողոքներ է ստացել «Հյուսիսափայլի» դեմ, բայց սպասել է, որ Նազարյանից անձամբ բացատրություն կլսի՝ հույս ունենալով համոզել նրան՝ վերջ դնելու «նմոթալի երկպառակությանը»։ Բայց այժմ Գ. վ. Այվազովսկու գրությունն ստիպում է իրեն այս գրավոր նկատողությունն անել, որովհետև այդ է պահանջում իր պաշտոնը և վերջինիս նկատմամբ ունեցած պատասխանատվությունը։ Այնուհետև Խ. Լազարյանն անհրաժեշտ է համարում Նազարյանին զգուշացնել այն անախորժ և նույնիսկ վատթար հետևանքներից, որ նրա համար կարող են առաջ գալ նրա «անթուլյատրելի և ապօրինի» գործողություններից՝ «անվայելուչ» ամսագիրը («Հյուսիսափայլը») հրատարակելիս։

Նույն տեղը։

Նոյեմբերի 26.— Ստ. Նազարյանը Խ. Լազարյանի նոյեմբերի 12-ի գրության առթիվ տված իր պատասխանում, մի կողմ թողնելով Նալբանդյանի հոդվածների համար առաջադրված մեղադրանքները, բացատրություններ է տալիս՝ ելնելով իր սեփական համոզմունքներից։ Նշելով, որ «ինքն այլ կերպ է մտածում, քան ուրիշները, և ուրիշներն էլ մտածում են այլապես, քան ինքը», Նազարյանն, ըստ էության, սահմանազատվում է Նալբանդյանից, զգալ տալով, որ իր վրա չի վերցնում նրա հոդվածների պատասխանատվությունը։

Իր մասին եղած մեղադրանքները «բոլորովին անհիմն» համարելով, Նազարյանը բացատրում է, որ ինքը «միշտ հարգել է և հարգում է իր ազգի արժանավոր քահանաներին», հետևապես իրեն չի կարելի մեղադրել ամբողջ հոգևորականության քննադատելու մեջ։ Այնուհետև, Ստ. Նազարյանը, համառոտակի կանգ առնելով «Հյուսիսափայլի» ամսատետրակների նյութերի վրա, նշում է, որ դրանց մեջ չի կարելի գտնել «չարամիտ» վերաբերմունք հայ հոգևորականների նկատմամբ։ Վերջում համոզմունք է հայտնում, որ Խ. Լազարյանը «չի հոժարի որևէ միջոցի դիմել՝ դադարեցնելու միակ հայկական ամսագիրը»։ «Գրական-գիտական ժողովածու», 1908, 57—60։

Մինչև նոյեմբերի 27.— Բաժանորդներին է ուղարկվում «Հյուսիսափայլի» տասնմեկերորդ ամսատետրակը։

Երկերի լիակատար ժող., IV, 55։

Նոյեմբերի 27, Մոսկվա.— Կ. Հայրապետյանին հայտնելով, որ արդեն ուղարկված է «Հյուսիսափայլի» տասնմեկերորդ համարը,



Նալբանդյանը նրա ուշադրությունն է հրավիրում այդ համարում տպագրված «Նամակ առ հրատարակողը» խորագիրը կրող իր հոդվածի վրա, որի մեջ նա մերկացնում էր Խալիբյանին, Գ. վ. Այվազովսկուն և սրանց արբանյակներին, որպես հասարակական գումարները կողոպտողների։ Հայտնում է նաև, որ Գ. վ. Այվազովսկին «Հյուսիսափայլի» մասին դանգատվել է Լազարյաններին, իսկ վերջիններս նամակով սպառնացել են, որ եթե ամսագիրը շարունակի այդ ուղղությունը, համապատասխան միջնորդություն կանեն՝ այն փակել տալու համար։ Կոահելով իր հակառակորդների դավադրական ծրագրերը՝ «այժմ նորա ամեն ջանք գործ պիտի դնեն, որ մենք աստրագրող չգտնելով, ընկնենք տարապայման նեղության մեջ», Նալբանդյանը հորդորում է Կ. Հայրապետյանին և իր համակրողներին՝ ամեն ջանք գործ դնել, որ ինչքան կարելի է ավելանան «Հյուսիսափայլի» բաժանորդները. «Աստրագրողների [բաժանորդների] բազմությունը մեր համար, բացի նյութականից, ունի և բարոյական օգուտ, որովհետև կարող ենք ցույց տալ պարծանքով, թե ահա ազգը ընդունում է, և այլն, և այլն, և այն ժամանակ կպատանձվեն մեր թշնամիների բերանները»։ Նալբանդյանը կոչ է անում «ջերմությամբ կպչել գործին»։ Խոսելով «Հյուսիսափայլի» նշանակության մասին, Նալբանդյանը գրում է. ««Հյուսիսափայլի» երեվիլը մեծ ազդեցություն գործեց ազգի վերա, շատ բաներ խոսեցավ օրագիրը, և շատ մարդիկ սկսեցին ուրիշ կերպ նայել բաների վերա...»։
Երկերի լիակատար ժող., *IV*, 55—56։

Նույն օրը.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» տասներկուերորդ (դեկտեմբերի) ամսատետրակը։ Նալբանդյանի գրչին է պատկանում՝*

Ֆարբ դ'Օլիվիեի «Թալիսմաններ» վիպակի հայերեն թարգմանությունը *(էջ 439—505)։*

Դեկտեմբերի 6.— *Խաչատուր Լազարյանը, դժգոհ Ստ. Նազարյանի բացատրություններից (տե՛ս նոյեմբերի 26), Ճեմարանի դիրեկտոր Ն. Դ. Դելյանովին ուղղած գրության մեջ իր զայրույթն է հայտնում «Հյուսիսափայլի» տասնմեկերորդ ամսատետրակի առթիվ, որ անցավ ամենայն սահման՝ անվայելուչ և դատապարտելի երկու հոդվածով (ակնարկում է Նալբանդյանի հոդվածները), որոնք, անձնական վիրավորանքներից բացի, պարունակում են նույնիսկ առելություն, թշնամություն և պարսավանք՝ ինչ որ օրենքը հետա-*

պնդում և գատի է ենթարկում։ Լազարյանը հիշեցնում է, որ երբ հրատարակիչն իր բնավորության համառությամբ կամ ընկերակիցների ըմբռոստությամբ թուլյատրված սահմաններից դուրս է գալիս, ապա ամսագիրն արգելվում է և միաժամանակ տուգանքի է ենթարկվում։

Այնուհետև հայտնելով, որ հիշյալ հոդվածների առթիվ լուսավորության մինիստրությունում քննություն է կատարվում, սպառնում է, որ եթե հրատարակիչն ու նրա աշխատակիցները «չսանձեն» իրենց կրքերը, ապա ինքը ստիպված կլինի դիմել Լազարյան ճեմարանի պետական կառավարչին և Կովկասյան կոմիտեի նախագահին, որպեսզի վերջ տրվի վնասակար բանակռվին, կամ թե՝ իսպառ արգելվի հայ ամսագրի («Հյուսիսափայլի») հրատարակությունը, որը ո՛չ միայն ո՛չ մի օգուտ չի տալիս, այլ, ընդհակառակը, առելություն և երկպառակություն է սերմանում։

Խնդրելով այս բոլորն հայտնել «Հյուսիսափայլի» հրատարակչին, Ս. Լազարյանն ավելացնում է, որ իր նպատակն է նախազգուշացնել՝ նրա համար վատ հետևանքներից։

ՄԳՈՒԱ, д. 185, лл. 61—64.

Դեկտեմբերի 7.— «Հյուսիսափայլի» տասնմեկերորդ (նոյեմբերի) ամսատետրակում տպագրված Նալբանդյանի «Նամակ առ հրատարակողը» հոդվածի առթիվ Գ. վ. Այվազովսկին լրտեսագիր է ուղարկում ներքին գործերի մինիստր Ս. Ս. Լանսկոյին, բողոքելով Նալբանդյանի սուր մերկացումների դեմ և պահանջելով՝ փակել «Հյուսիսափայլը», իսկ Նալբանդյանին պատժել «օրենքի ողջ խստությամբ»։

«Հոգևոր և մի քանի աշխարհիկ անձանց դեմ ուղղված նամակներն այդ ամսագրում նախ լույս էին տեսնում անանուն, իսկ հետո՝ Նալբանդյանի ստորագրությամբ։ Այդ հոդվածներում հեղինակն ամենաանարժան ձևով, թեև ո՛չ ուղղակի, այնուամենայնիվ, միանգամայն հասկանալի արտահայտություններով սևացնում է հանգուցյալ Ներսես կաթողիկոսին, Թիֆլիսի ներկա թեմական առաջնորդին [Ս. վ. Ջալալյանին], ինձ, Լազարյան ճեմարանի մի քանի պրոֆեսորների, տիտղոսավոր խորհրդական Խալիբյանին և ուրիշ շատերի, և արտահայտում է մեր կրոնի ու խստամբեր բարոյականության սկզբունքների ոգուն հակառակ մտքեր ու հասկացողություններ։

Եվ, վերջապես, նույն հեղինակը «Հյուսիսափայլի» խմբագրի անվամբ գրած և այդ ամսագրի 11-րդ, նոյեմբերյան գրքույկում տպված նամակում խիստ աղավաղված ու սխալ ձևով վերապատմելով իմ կառավարած թեմի եկեղեցական գումարների գործը, արդեն ուղղակիորեն վրդովեցուցիչ ու անպատկառ արտահայտություններով հարձակվում է հայերի մեջ այնքան հարգված հանգուցյալ կաթողիկոսի հիշատակի, իմ, պարոն Խալիբյանի և ուրիշ շատ անձնավորությունների վրա ու այդ գործի լուծումը պատկերում է ամենամռայլ և կեղծ լուսաբանմամբ, բացահայտորեն անբարեխղճության ստվեր գցելով այդ գործի ավարտմանը մասնակիցների վրա։ Այդ նամակն ամբողջովին գրված է ժողովրդին խռովելու և իմ կառավարմանը հանձնված հոտի մեջ երկպառակություն, անհամաձայնություն սերմանելու ակնհայտ նպատակով։

«Այս հանգամանքը,— ավելացնում է վերջում Գ. վ. Այվազովսկին,— ստիպեց ձերդ գերազանցության բարեացակամ ուշադրությանը ներկայացնել այն ողջ վնասը, որն անհրաժեշտաբար կառաջանա «Հյուսիսափայլ» ամսագիրը հետագայում էլ հայերի մեջ տարածելուց՝ նրա այդպիսի հակակրոնական և ո՛չ բարոյական ուղղության պատճառով և ամենախոնարհաբար խնդրել՝ ըստ հնարավորին շուտ արգելել այդ հրատարակությունն իր ներկա ոգով՝ չարիքը հենց սկզբից կտրելու համար, իսկ վերոհիշյալ հոդվածի հեղինակ Նալբանդյանին, որն արդեն հայտնի է օտար դավանությունների դեպարտամենտում, որպես վնասակար ու անհանգիստ մարդ՝ ենթարկել արժանի պատժի, օրենքի ողջ խստությամբ»։

Երկերի լիակատար ժող., II, 428—429։

Գ. վ. Այվազովսկու այս, ինչպես և այլ լրտեսագրերի մասին Նալբանդյանը տեղյակ էր. «Երկու տողում» այդ առթիվ նա գրում է. «... Արդեն նախընթաց տարիներում քանի անգամ ամբաստանվեցանք Ռուսիո ներքին գործոց մինիստրի առաջև, որպես անկրոն, որպես անբարոյական, որպես ապստամբ և խռովեցուցիչ ժողովրդյան։ Պ. Այվազովսկին առաջարկում էր թաչափայլ մինիստրին, «Հյուսիսափայլը» վճռապես օրագիրը դադարեցնել և մեզ ձգել սաստիկ պատժի տակ, օրենքի բովանդակ խստությամբ։ Բուցե պ. Այվազովսկին, հայրական հոգացողությամբ, պատրաստել էր մեզ տեղի բնակության Ներշինակ կամ Նամանիքը... (բուն առողջապահական խորհրդով)։ Պ. Այվազովսկին չէ կարող ուրանալ այս իրողությունքը. բան որում երկար քննություններ և գրագրություններ եղան մինիստրների և ցենզուրյան ժողովի մեջ, այլև առաջարկվեցան հարցմունքներ...»։

Երկերի լիակատար ժող., III, 31։

Դեկտեմբերի 10.— Գրաքննությունը տպագրության է թուլյա-

տրում «Հյուսիսափայլի» 1859 թ. առաջին (հունվարի) ամսատետրակը՝ Նալբանդյանի գրչին է պատկանում՝

«Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրության թերթերից»։ Նոր տարի.— Բեգզադեի նամակը.— Տրովատորի բովանդակությունը.— Բեգզադեի ազգաբանությունը.— Հայկական թեատրոն Մոսկվայի մեջ.— Սուրբ Մեսրոպի գերեզմանի այցելուի նամակը.— Գամառ-Քաթիպայի պահանջողության պատասխանը (էջ 66—79)։

Նույն համարում տպագրված է՝ «Մահացուցակ Աբրահամ Պողոսյանց փաստաբանի» (էջ 80—81), ստորագրված է Ս. Նազարյանց, սակայն ամսագրի առաջին կիսամյակի նյութերի ցանկում նշված է որպես Նալբանդյանի հեղինակություն։

Դեկտեմբերի 11.— Ն. Դ. Դելյանովը Խ. Լազարյանի հանձնարարությամբ, Ստ. Նազարյանին հայտնում է, որ «Հյուսիսափայլում» տպագրված [Նալբանդյանի] մի քանի հոդվածների առթիվ առաջացած բողոքներին կառավարությունը տեղյակ է և որ՝ լուսավորության մինիստրությունում քննում են, թե ի՛նչպես է պատահել, որ գրաքննությունը թույլատրել է նման հոդվածների տպագրությունը։ Այնուհետև, Դելյանովը գրում է, թե Նազարյանի բացատրությունն ուղարկված է թեմական առաջնորդին (Գ. վ. Այվազովսկուն), որից և կախված է «Հյուսիսափայլը» շարունակելու կամ դադարեցնելու հարցի վճիռը, և եթե նա պահանջի, ապա Լազարյանն ստիպված կլինի բարձրագույն իշխանության միջոցով դադարեցնել ամսագրի հրատարակությունը։ Ընդ որում, Լազարյանը ցանկություն է հայտնում, որպեսզի «Հյուսիսափայլն» առաջիկայում «արժանի լինի ձիտնական հրատարակչին» և «էապես նպաստի հայ ազգի կրոնաբարոյական զարգացմանը, բայց չունենա վնասակար հետևանք իրավական տեսակետից իրեն՝ հրատարակչի, և բարոյական առումով՝ նրա հայրենակիցների համար»։

МГОИА, ф. Лаз. института, д. 185, лл. 59—60.

Դեկտեմբերի 12.— Գ. վ. Այվազովսկին Խալիբյանին հայտնում է «Հյուսիսափայլի» տասնմեկերորդ (նոյեմբերի) ամսատետրակում հրատարակողին ուղղած նամակի առթիվ ներքին գործերի մինիստրին գրած դանոսի մասին. «Վերջին տետրակ «Հիւսիսափայլին» և գրուածն Մուխալին [Նալբանդյանի], որ ի նմա (զոր ընկալաք յերկին), ստիպեաց զիս գրել այսօր իսկ ուղղակի գիր բողոքանաց առ մինիստրն, և պահանջել՝ զի օրագիրն այն խափանեսցի ամենայն

СОВРЕМЕННИКЪ

1858

№ XII ДЕКАБРЬ

САНКТПЕТЕРБУРГЪ
ВЪ ТИПОГРАФІИ КАРЛА ВУЛЬФА
(На Невскомъ, домъ Завѣтнова № 58)

«Սովրեմեննիկ»-ի անվանաթերթը

փութով իբրև վնասակար եկեղեցւոյ և ազգի, իսկ Մուխալն այն պատուհասեցի ըստ օրինաց իբրև բանսարկու և խռովարար»։

Գեական թանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Դեկտեմբերի 13.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Սովրեմեննիկի» 1858 թ. № 12-ը։ Այդ համարում է տպագրված Ն. Գ. Չերնիշևսկու «Критика философских предубеждений против общинного владения» հոդվածը, որից քաղվածքներ է կատարել Նալբանդյանը՝ իր «Հեգելը և նորա ժամանակը» փիլիսոփայական աշխատությունը գրելիս։*

Նույն օրը. — *Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի առաջնորդական աթոռները Գ. վ. Այվազովսկու զեկուցման հիման վրա, հրամանագրում է՝ քահանաներին խստիվ արգելել «Հյուսիսափայլ» «որոմնացան» օրագրին բաժանորդագրվելն ու նրա տարածմանը նպաստելը. «... Բոլոր ողջամիտներին հայտնի է,— ասված է հրամանագրում,— որ այդ օրագրի ընդհանուր ոգին և բազմաթիվ առանձինները մեծապես վնասակար են հայ եկեղեցու ուղղափառ դավանության և քրիստոնեության ուղիղ վարքին, և առելություն են գրգռում Ներսես կաթողիկոսի, ինչպես և առհասարակ հոգևորականների դեմ, առանձնապես Ռուսաստանի հայոց թեմական առաջնորդների և պատվավոր իշխաններից ոմանց և ազգի բարերարների դեմ»։ Ելնելով վերոհիշյալից, առաջնորդական աթոռը Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությանը հրամայում է՝ հրամանագիրն առանալուն պես, քաղաքի քահանաներին հավաքել մի տեղ և ընթերցել «ի հանդիմանութիւն և ի կշտամբանս» նրանց, ովքեր հորդորիչ և պատճառ են հանդիսանում «որոմնացան» օրագիրը Նոր-Նախիջևան քաղաքում տարածելու, և «ի խրատ զգուշութեան» ուրիշներին, որպեսզի առաջիկայում որևէ մեկն գործակից և օգնական չլինի նման «վնասակար ձեռնարկութեան»։*

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 139, գ. 1981, թ. 4։

Մինչև դեկտեմբերի 19.— *Պետերբուրգում «Հյուսիսափայլի» համակրողներից մի խումբ բողոքի նամակ են գրում Գ. վ. Այվազովսկուն և ազդարարում, որ նա իզուր չձգտի «Հյուսիսափայլին» վնասելու կամ այն խափանել տալու, քանի որ դա մեծ դժգոհություն կարող է առաջացնել ժողովրդի մեջ։*

Երկերի լիակատար ժող., IV, 57։

Դեկտեմբերի 19, Մոսկվա.— *Նալբանդյանը Կ. Հայրապետյանին ուղղած նամակում հայտնում է, որ Գ. վ. Այվազովսկին լուսավորության մինիստրին զանգատվել է, թե «Հյուսիսափայլը» ժողովրդին ըմբոստացնում է հոգևորականության դեմ։ Այդ առթիվ իրենք (Նալբանդյանը և Նազարյանը) բողոք են ներկայացրել էջմիածնի Սինոդին, որ Այվազովսկին դուրս է գալիս իր՝ թեմական առաջնորդի իրավասության սահմաններից։ Ըստ էության այդ բողոքը գրել են արտաքնապես ցույց տալու համար, թե «Հյուսիսափայլի» (Նալբանդյանի) պայքարը ո՛չ թե ընդհանրապես հոգևորականության, այլ առանձին հոգևորականների դեմ է։*

Նալբանդյանը հայտնում է նաև, որ լուսավորության մինիստրը բացատրություն է պահանջել գրաքննական կոմիտեից, թե նա ինչպես է թույլ տվել այդպիսի «դղրդեցուցիչ հոդված» («Հյուսիսափայլում»), իսկ իրենք գրաքննական կոմիտեին գրել են, թե՝ թող մինիստրը բարեհաճի ուղղակի իրենցից բացատրություն պահանջել։

Հայտնելով, որ Պետերբուրգում «Հյուսիսափայլի» համակրողներից մի խումբ նամակ են գրել Գ. վ. Այվազովսկուն, զգուշացնելով նրան՝ իզուր չձգտել «Հյուսիսափայլին» վնասելու կամ այն խափանել տալու, որովհետև դա մեծ դժգոհություն կարող է առաջացնել ժողովրդի մեջ, և նշելով, որ Լազարյանները, «որպես Քշնամի ազգային լուսավորության», եթե կարողանան, ամեն կերպ կխափանեն «Հյուսիսափայլի» հրատարակության գործը, Նալբանդյանը խորհուրդ է տալիս, որ պետերբուրգցիների օրինակին հետևելով, Նոր-Նախիջևանում համակրողների մի խումբ նամակով զգուշացնի Գ. վ. Այվազովսկուն։ Նալբանդյանը նման բողոքներն իրենց համար նպատակահարմար է համարում և նշում է, որ հակառակ իրենց Քշնամիների ջանքերի, նրանց չի հաջողվի «Հյուսիսափայլը» խափանել տալ։

Անդրում է տեղեկացնել, թե ի՛նչ ազդեցություն գործեց իր «նամակ առ հրատարակողը»՝ տպագրված «Հյուսիսափայլի» տասնմեկերորդ ամսատետրակում։ Հայտնում է, թե տասներկուերորդը շուտով կուղարկվի բաժանորդներին, և որ ինքն սպասում է հնդկահայերի կտակների պատճեններին, որպեսզի հրատարակի «Հյուսիսափայլի» 1859 թ. առաջին համարում։

Երկերի լիակատար ժող., IV, 57—58։

Դեկտեմբերի 24.— *Հ. Խալիբյանին ուղղած նամակում Գ. վ. Այվազովսկին գրում է, թե գրաքննությունը վերացնելու լուրը բոլո-*

բովին անհիմն է, ընդհակառակն, կարող է դարձյալ ուժեղանալ «հանգուցյալ կայսրի» (Նիկոլայ I-ի) ժամանակվա խստությունը, որովհետև, ինչպես տեսնում ենք, Ռուսաստանում շատերն ազատությունն ի չար են գործ դնում: «Բայց,— ավելացնում է Այվազովսկին,— գրաքննությունը կվերացվի թե ոչ, մի բան հայտնի է, որ «չարալեզու» «Հյուսիսափայլն» այսուհետև լռելու է, ինչպես պաշտոնական գրություններով խնդրել եմ մինիստրից և Լազարյաններից»: Այնուհետև Այվազովսկին հայտնում է, թե Լազարյանները հույժ զայրացած են Նալբանդյանի և Նազարյանի դեմ, ինչպես երևում է Խաչ. Լազարյանի՝ իրեն, Այվազովսկուն և Ճեմարանի դիրեկտորին ուղղած նամակներից: Դրանով էլ չբավականանալով, նա, Այվազովսկին, Նալբանդյանի դեմ պատրաստել է մի «զորավոր պատասխան», որ տպագրելու է Թիֆլիսի և Պոլսի հայերեն թերթերում:

Գ. վ. Այվազովսկու այդ պատասխանը, մեզ անհայտ պատճառներով, չի տպագրվել:

Գրական թանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ:

Դեկտեմբերի 26.— Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությունը, ստանալով առաջնորդական աթոռի հրամանագիրը՝ «Հյուսիսափայլ» «որոմնացան» օրագրին բաժանորդագրվելն ու տարածման նպաստելն արգելելու մասին, քաղաքի բոլոր քահանաներին հրավիրում է ժողովի, ուր հրամանագրի ընթերցումից հետո, ներկաներից յուրաքանչյուրը սաղրագրությամբ պարտավորվում է հնազանդվել:

ՀՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 139, գ. 1891, թ. 3:

[Դեկտեմբեր].— Նալբանդյանի թշնամիները, «Խ. Ն. Տ.» սաղրագրության տակ թաքնված, թունոտ աթելությամբ լի մի պասկվիլ են տարածում, որ վկայում է, թե որքան դիպուկ ու խորն էր խոցում Նալբանդյանն իր քաղաքական հակառակորդներին:

Պասկվիլի հեղինակը հենց սկզբում մերկացնում է իր դասակարգային դեմքը, բողոքելով, որ Նալբանդյանի գրչի հարվածներից զերծ չեն մնացել «ո՛չ կաթողիկոս, ո՛չ արքեպիսկոպոս, ո՛չ ուղիմ վարդապետք, ո՛չ Մխիթարյան վանաց գիտնական և ազգասեր միաբանք, ո՛չ իշխանք, և ո՛չ որևիցե աստիճանի մարդիկ՝ մեծ և փոքր...»:

Այնուհետև, Նալբանդյանի կյանքի առանձին դրվագներն ու Նոր-Նախիջևանի իրազարձությունները պատմելով հայրեյան-Այվազովսկի խմբակցության մեկնաբանությամբ, պասկվիլի հեղինակն անդրադառնում է Նալբանդյանի գրա-

կան-հրապարակախոսական գործունեությանը «Հյուսիսափայլի» էջերում: Ուշագրավ է, որ պասկվիլի հեղինակը Նալբանդյանին սահմանազատում է «Հյուսիսափայլի» «գիտնական խոհեմ հրատարակչից», վերջինիս համար «անպատվաբեր» համարելով ամսագրի տասնմեկերորդ համարում տպագրված «Նամակ առ հրատարակողը» հոդվածի նման երկերը, և գտնելով, որ այսպիսի հոդվածները վնասում են հրատարակչին: «Իսկ եթե,— շարունակում է նա, կոզմնակի ձևով զգուշացնելով Նազարյանին,— գիտնական խոհեմ հրատարակիչը այսուհետև ալ թույլ տա քեզ այդօրինակ անճոռնի հոդվածներ տպել յուր ամսատետրին, ինքն գիտե»:

Գաղտագծ ռեակցիոներն ավելի հեռուն է գնում, Նալբանդյանին սպառնալով բանտարկությամբ ու աքսորով. «Օր կուգա, որ դու այդ լեզվովդ կուրծռվիս, և քեզ կորստյան պատճառ կուլինի»: Ըստ երևույթին, պասկվիլի հեղինակին ծանոթ էր Գ. վ. Այվազովսկու լրտեսագիրը, որով ներքին գործերի մինիստրին ահազանգ էր տրվում Նալբանդյանին «օրենքի ամենայն խստությամբ»:

Մատենադարան, Ձեռագրատուն, № 9137, թ. 16—21:

[Դեկտեմբեր].— *Խաչատուր Լազարյանը բժ. Ս. Տեր-Դուկասյանին ուղղած նամակում դատապարտում է Ստ. Նազարյանին, որ նա փոխանակ Մսերի, էմինի և ուրիշների նման «արժանավոր» աշխատակիցներ ընտրելու, ընկերացել է «վնասակար» Նալբանդյանին, որին փոխարքա Վորոնցովի, ներքին գործերի մինիստրության և ոստիկանության միջոցով կաթողիկոս Ներսեսը պահանջել էր ուղարկել էջմիածին՝ Սինոդի դատաստանին հանձնելու:*

Ա.Ճեպիպ Երկեր, 329—339:

[1858]

Նալբանդյանը գրում է «Ասվում է լսվելու համար» հոդվածը՝ հօգուտ աշխարհաբարի պաշտպանության:

Երկերի լիակատար ժող., II, 404—411:

Գրում է «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» սատիրան (փոխադրություն О. И. Сенковскому «Большой выход у сатаны» երկի), ուղղված ժամանակի հայ ռեակցիայի պարագլուխներ Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի, Ս. վ. Ջալալյանի, Գ. վ. Այվազովսկու, Մ. Մսերյանի և ուրիշների դեմ: Գրված է եղել «Հյուսիսափայլի» համար, բայց խմբագրի (Ստ. Նազարյանի) կամ գրաքննության արգելքով չի տպագրվել ժամանակին:

Երկերի լիակատար ժող., I, 185—218:

Ավարտվում է «Մինին խոսք, մյուսին հարսն» վեպի տպագրությունը: Լույս չի տեսել և տարածվել, մեզ անհայտ պատճառով:

Նալբանդյանը «Սովրեմեննիկի» 1858 թ. տասներորդ (հոկտեմբերի) համարում տպագրված Ե. Կարնովիչի «Обзор сочинений Наполеона III, императора французов» հոդվածից թարգմանում է մի հատված, վերնագրելով՝ «Լուդովիկոս-Նապոլեոն Բոնապարտեան»։

«Լուսա», *1904, № 3, 122—127։*

Համմ. «Современник», 1858, № 10, октябрь, 655—660.

«Հյուսիսափայլում» Նալբանդյանի կատարած դերի և նրա երկերի՝ ժամանակակիցների վրա ունեցած հմայիչ ազդեցության մասին Պ. Պոռշյանը պատմում է.

«... Ստեղծվում են երկու միմյանց հակառակ բանակներ, ներկայիս խոսքով՝ ազատամիտ և պահպանողական, այն ժամանակվան բառերով՝ օրսկուրանտ (խավարամիտ) և լուսավորյալ։ Առաջիններին ներկայացուցիչն է հանդիսանում Մոսկվայում Լազարյան ճեմարանի ուսուցչապետ Ստեփանոս Նազարյանցը, ունենալով Նալբանդյանցի նման կրակոտ ու պերճախոս աշխատակից։

... Ննջեր ունենք Նազարյանցի նոր աշխատակից, ճարտարախոս և ճարտասանամիտ քամ երիտասարդից, որը թեպետ միանգամից չի կարողացել կոկել ու հարթել նոր խմբագրի հրատարակությամբ լույս ընծայվող «Հյուսիսափայլի» էջերում համառ օրագրապետի գրարատա-աշխարհարար գերմանահոգի թարգմանական հոդվածների խոշ ու խութերը, բայց պարզ նկատվում է, որ «Նոր հայախոսության» հանգեսի Բ. հատորը ըստ կարի Նալբանդյանցի գրչի ներքո սրբագրվել է... Նազարյանցի գլխում մեխի նման ցցված էր յուր անհասկանալի նոր աշխարհարարի գերազանցությունը։ Նալբանդյանցը ... «Հյուսիսափայլում» իրեն յուր պատրոնին [Նազարյանին] հակադիր օրինակ տպագրում էր պերճաբան լեզվով և քաղցր բարբառով յուր ժամանակի հրատապ խնդիրներին վերաբերյալ հոդվածները, տեղ՝ իսկական տոորագրությամբ, տեղ՝ ֆելիետոններով և օրագիրներով՝ Կոմս Էմմանուել և ուրիշ կեղծ անուններով։ Գոհ էր Նալբանդյանցը. նա գիտեր, որ հինգ թերթանոց ամսաթերթերի միայն այն երեսներն են բացվում և կարդացվում, ինչ որ կրում է յուր սեփական տոորագրությունը, իսկ Նազարյանցը նույնպես գոհ էր, մտածելով, թե ինքը նոր Հայախոսության հիմնադիրն է։

... «Հյուսիսափայլի» միայն վերջին երկու-երեք էջերի թերթերն էին բացվում և Նալբանդյանցի՝ Կոմս Էմմանուել, Աբրահամ Դիոսկորոսյան Բարկենյանց և այլ կեղծանուն կրող գողտրիկ «Հիշատակարաններն» էին միմյանցից խլելով կարդացվում, իսկ ամսագրի մնացած բոլոր թերթերը, իրանց մեջ պարունակված Նազարյանցի անմարս թարգմանություններով և մի քանի մանավոր անհասկանալի հոդվածներով, բնավ չէին կարատվում...»։

Պ. Պոռշյան, Հուշեր, 1940, 143, 146—147, 152։

«Ամսի սկզբին ամեն բաժանորդ անհամբերությամբ սպասում էր «Հյուսիսափայլի» նոր համարը դուրս գալուն, որ կարդա Կոմս Էմմանուելի (Նալբանդյանի) «Հիշատակարանը» կամ մյուս հոդվածները։

Մ. Տեր-Գրիգորյան, Մ. Նալբանդյանի համառոտ կենսագրությունը, Ղազար Փարպեցու գրած թուղթը, XII։

Ժամանակակիցների վկայությամբ «Հյուսիսափայլը», հատկապես Նալբանդյանի երկերը, մեծ հմայք ու ազդեցություն ունեին աշակերտների վրա, որի համար վերջիններս ենթարկվում էին հալածանքների։

«Մինչդեռ վարժապետները շարունակ կռիվ էին մղում «Հյուսիսափայլի» հայտնած ազատ մտքերի դեմ, նույն վարժապետների աշակերտները անհագ սիրով «Հյուսիսափայլը» էին կարդում և նրա քարոզած ոգովը տոգորվում։ Միշտ այդպես է. երկու թերթից ազատագույնն է ընտրում նոր սերունդը. արգելքը միայն ավելի է քաղցրացնում նրա բովանդակությունը։ Իմ հիշած ժամանակ Ներսիսյան դպրոցի նորավարտ աշակերտները բոլորն էլ «Հյուսիսափայլին» էին համակրում և սրտաուրուխ սպասում Կոմս Էմմանուելի գրվածներին»։

Ղ. Ալիշան, Երկեր, III, 198։

Հովհաննես Քաջունյանը, վերակացու նշանակվելով Ներսիսյան դպրոցում, աշակերտների մեջ տարածում է «Հյուսիսափայլը», որը և դառնում է նրա հեռացման պատճառներից մեկը։ Քաջերներնին (Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը) այդ մասին իր հիշողություններում պատմում է.

«Հյուսիսափայլ»... Ներսիսյան դպրոցում... եպիսկոպոս Ջալալյանի, Թաչիրյանի, Ալբանյանի օրով... այդ ի՜նչ բան է, ի՜նչ հերձվածողություն...

Այսքանը բավական էր, որ Քաջունյանը ճանաչվեր ուղղակի վնասակար դպրոցի շահերին, մանավանդ, որ տեսուչ Ալբանյանն էլ մյուս կողմից էր գոչում, քն վերակացու Քաջունյանը աշակերտներին գրավել է յուր կողմը, էլ տեսուչ չեն ճանաչում, ամեն կարգադրություն առանց տեսչի է լինում... Հոգաբարձու Թաչիրյանը գոռում-գոչում էր գիշերօթիկ հասակավոր աշակերտների դեմ երես առ երես, թե... դուք ծածուկ կարդում եք Նազարյանցի նզովյալ օրագիրը»։

Հովհ. Քաջունյանի հեռացման դեմ Ներսիսյան դպրոցի աշակերտները բողոքի ցույց են կազմակերպում. հետևանքը լինում է այն, որ դպրոցի հոգաբարձու Թաչիրյանը դիմում է ոստիկանության, աշակերտների մի մասը ծեծի է ենթարկվում, իսկ մի քանիսը ձերբակալվում են։

«Ահա՛ քե օրքան քանկ է տրժենում «Հյուսիսափայլի» բնթերցումը Քիֆլիսում»։

«Արարատ», *1917, № 2—3, 162—166։*

Գաղափարական-քաղաքական հակառակորդների դեմ ուղղված Նալբանդյանի հարվածները հասնում են իրենց նպատակին. Զոհրաբ Մարությանցը (Զայրմայր Մաբյանը) խոստովանում է, որ Կոմսի (Նալբանդյանի) «մերձավորներից-խորհրդակիցներից» մեկի օգնությամբ հաջացել է, քե «սխոլաստիկե ո՛վ է, երազի մեջ մագիստրոսե ո՛վ է. այն մարդն, որո վերա գրված է «Հայ մարդու հայրենիքը» վերնագրով ոտանավորն, ո՛վ է, քե Շամիլե ո՛վ է, քե Բիգզադեն ո՛վ է և այլն»։

Նշելով, որ «սոսկ դարբնական անձնե հեռի է կոմսականե», Մաբյանն ակնարկում է Նալբանդյանի սոցիալական-գաղափարական կապը ժողովրդի աշխատավորական խավերի հետ։

Մատենադարան, Մաբյաններեի արխիվ, *թղթ. 192, վ. 123։*

Ստ. Նազարյանը 1858 թ. Կովկասից մի շարք հոդվածներ է ուղարկում «Հյուսիսափայլում» տպագրելու համար, բայց դրանցից ոչ մեկը չի տպագրում՝ խիստ քննադատական ոգու և մերկացնող բնույթի համար. «Շատերի մեջ,—

գրում է նա,— բանախոսությունը ցուցանում էր ամենևին մերկանդամ հմարտությունը, այլև վերաբերվում էր այնպիսի բարոյական ցավերի և ամոթալից հանգամանքների ազդի մեջ, որ անպատշաճ էր դրանց հրատարակել գրով, մանավանդ, որ դրա մի բարեկարգ տերության ցենզուրայի մեջ քննության տակ ընկնել ևս կարող չէին... Եվ ես անարժան համարեցի հրապարակով երկրորդել այն բանը, ինչ որ ժողովուրդը օր հանապազ տեսանում է յուր աչքի առաջև, ուրեմն և շատ լավ տեղյակ էր դորան»։ «Հյուսիսափայլ», 1859, 7-րդ ամսատետրակ, 568։

«Այդ տարին,— ասում է նրա [Նալբանդյանի] մոտ բարեկամներից մեկը (Հովհ. Բերբերյան),— Նալբանդի (այսպես էին նրան կոչում նրա մոտ բարեկամները) ամենալավ ժամանակներից մեկն էր։ Նրա սրախոսությունների ու հանաքների վերջը չկար. ամեն տեղ մտնում-նստում էր, ամեն տեղ հասնում, իսկ ամառվա վերջին օրերը նա պարապում էր միայն գրականությամբ. կարդում էր, գրում էր, պատրաստում էր հոդվածներ «Հյուսիսափայլի» համար։ Սակայն նրա դեղնած երեսը, նրա բարի և խելոք աչքերը, որոնք միշտ մտածություն էին արտահայտում, ցույց էին տալիս, որ նրա առողջությունը լավ չէ»։

«Նոր-դար», 1891, № 138։

1859

Հունվարի 3.— *Խաչ. Լազարյանը Մ. Մսերյանին գրում է, թե կառավարությանն արդեն հայտնի են ամսագրի («Հյուսիսափայլի») հրատարակիչների անբարեմտության հետևանքով առաջ եկած անախորժությունները և այն չարակամ մարդկանց անունները (նկատի ունի առաջին հերթին Նալբանդյանին), որոնք երկպառակություն են սերմանում, և որոնք դառնություն պատճառեցին նրան՝ Մսերյանին և հոգևորականներին։ Այնուհետև Լազարյանն ավելացնում է, որ ինքն էլ նկատողություն է արել, և որ՝ բարձրագույն իշխանությունը նրանց կանձի։*

Մատենադարան, Մսերյաններ արխիվ, թղթ. 206, վ. 1587։

Հունվարի 24.— *Գ. վ. Այվազովսկին Հ. Խալիբյանին հայտնում է ներքին գործերի մինիստրին գրած իր դանոսի արդյունքների մասին. մինիստրը, ստանալով իր բողոքը, հարկ եղածը գրել է լուսավորության մինիստրին, իսկ վերջինս բացատրություն է պահանջել, թե գրաքննիչ Բերոյանն ինչպես է համարձակվել նման բաներ թույլատրել տպագրության։ Վերջում Այվազովսկին հաստատ համոզմունք է արտահայտում, որ կառավարությունը չի լռի և չի թույլ տա, որ «վնասակար» «Հյուսիսափայլը» շարունակվի հրատարակվել։*

Գրական թանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Հունվարի 27. Մոսկվա.— *Նալբանդյանը ներկա է լինում Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների կազմակերպած թատրոնական ներկայացմանը։*

«Հյուսիսափայլի» առաջին (հունվարի) ամսատետրակում տպագրված «Հիշատակարանում», խրախուսելով ուսանողների այդ նախաձեռնությունը և նշելով թատրոնական բեմից ազգը դաստիարակելու կարևորությունը, Նալբանդյանը խիստ քննադատության է ենթարկում կլասիցիզմի ոգով գրված Սարգիս Վանանդեցու «Արիստակես» ազգային-պատմական ողբերգությունը և դրվատում Ալատաձյանի «Վա՜յ իմ կորած հիսուն ոսկի» կենցաղային կոմեդիան, ցույց տալով հայ դրամատուրգիայի զարգացման ռեալիստական ուղին։

Երկեր լիակատար ժող., I, 391—392։

Հունվարի 28.— *Ներքին գործերի մինիստր Լանսկոյը, ստանալով Գ. վ. Այվազովսկու դանոսը՝ «Հյուսիսափայլը» դադարեցնելու և Նալբանդյանին «օրենքի ամբողջ խստությամբ պատժելու» մասին, լուսավորության մինիստրից խնդրում է հայտնել իր կարծիքը՝ համապատասխան կարգադրություն անելու համար։*

«Հոգևորականության և մի քանի աշխարհիկ անձանց դեմ նրա («Հյուսիսափայլի») մեջ հոդվածներ սկսեցին երևալ սկզբում անստորագիր, իսկ ապա Նալբանդյանցի ստորագրությամբ,— գրում է նա։— Այդ հոդվածներում հեղինակն ամենաանպատշաճ ձևով, չնայած անուղղակի, սակայն միանգամայն հասկանալի արտահայտություններով, սևացնում է հանգուցյալ կաթողիկոս Ներսեսին, Թիֆլիսի այժմյան թեմական առաջնորդ (?) Այվազովսկուն, Լազարյան ճեմարանի մի քանի պրոֆեսորների և շատ ուրիշների, հայտնելով կրոնի ոգուն և բարոյական սկզբունքներին հակառակ մտքեր և արտահայտություններ։ Վերջապես, այդ հեղինակը «Հյուսիսափայլի» խմբագրին ուղղած նամակում՝ տպագրված այդ ամսագրի նոյեմբերի դրքում, ամենախեղաթյուրված և անճիշտ կերպով պատմելով Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի եկեղեցական գումարների դործի ընթացքի մասին, արդեն ուղղակի վրդովեցուցիչ և անպատշաճ արտահայտություններով հարձակվում է հայերի մեջ այնքան հարգված հանգուցյալ կաթողիկոսի, Այվազովսկու և ուրիշ անձանց վրա և այդ գործի ավարտը ներկայացնում է մոայլ և կեղծ լույսի տակ, բացահայտորեն անբարեխղճության մեղքեր գցելով գործի ավարտման մասնակիցների վրա։ Այդ ամբողջ նամակը գրված է ժողովրդին հուզելու, երկպառակություն և տարաձայնություն սերմանելու ակնհայտնի նպատակով։ ... Քան այդմ, վարդապետ

Այվազովսկին, կանխելու համար այն չարիքը, որ կարող է առաջ գալ հայերի մեջ «Հյուսիսափայլ» ամսագիրն այսուհետև ևս տարածելուց՝ իր այդպիսի հակակրոնական և անբարոյական ուղղությամբ, միջնորդություն է հարուցում այդ օրգանն իր այժմյան ոգով դադարեցնելու մասին, իսկ նամակի հեղինակին՝ Նալբանդյանցին ենթարկելու արժանի պատժի՝ օրենքների ամբողջ խստությամբ:

Թուական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 123/191։
Հմմտ. Երկերի լիակատար ժող., *II*, 428—429։

Փետրվարի 18.— *Լուսավորության մինիստր Կովալևսկին, Ս. Ս. Լանսկոյի հունվարի 28-ի գրության հիման վրա, Պետերբուրգի ուսումնական օկրուգի հոգաբարձուին խնդրում է «Հյուսիսափայլի» գրաքննիչ Բերոյանից բացատրություններ պահանջել:*

Թուական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 190։

Նույն օրը.— *Գ. վ. Այվազովսկին, հենվելով Խ. Լազարյանից ստացած տեղեկությունների վրա, Խալիբյանին հայտնում է, թե ոմանք Մոսկվայում և Պետերբուրգում ժողովրդին իրենց դեմ են գրգռում, և թե՝ դրա պատճառը Նալբանդյանն ու իր կողմնակիցներն են:* Թուական բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ:

Մարտի 4.— *Պետերբուրգի գրաքննական գլխավոր կոմիտեի նախագահին գրած իր բացատրականում Նազարյանը հայտնում է, թե՝ «Ձեր պահանջած մյուս տեղեկությունները, ինչպես և իմ ամսագրում տպագրված մի քանի հոդվածների թարգմանությունները ձեզ կներկայացնի ներկայումս Պետերբուրգում գտնվող պ. Նալբանդյանցը, որպես ձեր կողմից նշված հոդվածների հեղինակ»:*

Թուական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 313։

Մարտի 5.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» երկրորդ (փետրվարի) ամսատետրակը: Նալբանդյանի գրչին է պատկանում՝*

«Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրության թերթերից: *Հյուսիս.— Շահբեգի գերությունը.— Շամիլի խոսակցությունքը.— Շահբեգի երազը.— «Արևմուտք» օրագիրը» (էջ 148—166):*

Մարտի 7.— *«Մեղու Հայաստանի» լրագրում տպագրվում է Ստ. Պալասանյանի հոդվածը՝ ««Հյուսիսափայլ» օրագրին 11-րդ համարին մեջ տպված պ. Նալբանդյանցի նամակին վրա դիտողություն» խորագրով: Հոդվածագիրն անհրաժեշտ համարելով պատասխանել «ազնվական ու պատկառելի անձանց անվանը նախատինք բերող զրուցվածքներուն», ակնհայտնի կերպով ցույց է տալիս Խալիբյան-Այվազովսկի բուրժուա-կղերական խմբակցությանը պատկանելը: Նա իր պաշտպանության տակ առնելով Խալիբյանին, Ս. վ. Ջալալյանին, Գ. վ. Այվազովսկուն, Հովհ. վ. Բեգնազարյանին՝ Նալբանդյանի մերկացումներից, գտնում է, որ «... Այս ամեն անձանց վերա բսած խոսքերն այն հանցավորությանց կարգը կանցնին, որ առավել քրեական դատաստանի քննության խնդիրներ են, քան թե օրագրական հատվածոց»:*

Այնուհետև Պալասանյանը դատապարտում է «Հյուսիսափայլը», որ «արատավորեց իր թերթերը պ. Նալբանդյանցի նամակին նման գրվածքներով». նա անհրաժեշտ է համարում, որ Նալբանդյանի նման հեղինակները «մեկդի քաշվին» «Հյուսիսափայլից», հեղինակներ, որոնք «սարսափելի կիրքով մը լցված են անդադար մեկուն մեկալին դեմ, ուստի և անդադար խռովություն, վրդովմունք, գժտություն, տարաձայնություն կսերմանեն բերնով և գրչով... որոնք կջանան ժողովուրդը թշնամի ընել պատվավոր քաղաքացիներու դեմ»:

«Մեղու Հայաստանի», *1859, № 10, 75—80։*

Մարտի առաջին կեսը, Պետերբուրգ.— *Նալբանդյանը Պետերբուրգի գրաքննական գլխավոր կոմիտեին բացատրություններ է տալիս, ներկայացնելով «Հյուսիսափայլում» տպագրված իր մի քանի հոդվածների ռուսերեն թարգմանությունները:*

Թուական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 313։

Հետագայում «երկու տողում» այդ մասին նա գրում է, թե Գ. վ. Այվազովսկու դանոսի կապակցությամբ «... երկար քննություն և գրագրություն եղան մինիստրների և ցենզուրյան ժողովի մեջ, այլև առաջարկվեցան հարցմունքներ...»։

Երկերի լիակատար ժող., *III*, 31։

Մինչև մարտի 16, Մոսկվա.— *Շանր հիվանդանում է, որ տևում է 18 օր:*

Երկերի լիակատար ժող., *IV*, 59։

Մինչև մարտի 16.— *Բաժանորդներին է ուղարկվում «Հյուսիսափայլի» առաջին համարը:*

Երկերի լիակատար ժող., *IV*, 60։

Մարտի 16, Մոսկվա.— *Նամակ Գրիգոր Սալթիկյանին: Հայտնում է, որ հիվանդացած է եղել և պառկել է 18 օր մեծ նեղության*

մեջ (փետրվարի վերջը — մարտի առաջին կեսը), և այժմ լավացել է մի փոքր։

Ինդրում է 250 ռ., հիմնավոր պատճառը խոստանում է հաղորդել «էգուցվա» (մարտի 17-ի) պատվիրված նամակով։ Այնուհետև հայտնում է արտասահման մեկնելու իր մտադրության մասին, պատճառաբանելով հիվանդությունը. «Ես իմ տկարության պատճառով, խորհրդով Վանավինսկուն և Գլեբովին, գնում եմ սահմանից դուրս, այս բանը հարկավոր է իմ կյանքը փրկելու համար... մանրամասնությունը այս բանների էգուցվա նամակիցս կիմանաք։

Ես աստուծո հաջողելով մարտի 24-ին երեկոյան $6^1/_2$ ժամին դուրս կերթամ Մոսկվայից դեպի Վարշավա...»։

Սալթիկյանին զգուշացնում է, որ եթե իր գնալու լուրը տարածվի Նախիջևանում՝ ծնողներին հանգստացնի, թե ինքը ողջ և առողջ է և թե ուսանելու համար է արտասահման մեկնել. կրկին խոսիվ զգուշացնում է, որ առայժմ իր արտասահման գնալու մասին ոչ ոքի՝ «ոչ թշնամու և ոչ ամենամերձ բարեկամի» չհայտնի։

Երկերի լիակատար ժող., *IV*, 59—60։

Մարտի 17.— *Բաժանորդներին է ուղարկվում «Հյուսիսափայլի» երկրորդ ամսատետրակը։*

Երկերի լիակատար ժող., *IV*, 60։

[Մարտի 20].— *Բաժանորդներին է ուղարկվում «Հյուսիսափայլի» երրորդ ամսատետրակը։*

Նույն տեղը։

[Մինչև մարտի 24], Մոսկվա.— *Նալբանդյանը գրում է «Ո՜հ, աենյակ...» և «Անցած օրերի...» բանաստեղծությունները։*

Գրաքննության է ուղարկում «Ազգային ժառանգություններ» հոդվածը։

Երկերի լիակատար ժող., *I*, 72—73։

Երկերի լիակատար ժող., *IV*, 61։

Մարտի 24, երեկոյան ժամը $6^1/_2$-ին.— *Նալբանդյանը մեկնում է արտասահման՝ Վարշավայի վրայով։*

Երկերի լիակատար ժող., *IV*, 59։

Նույն օրը.— *Մ. Մաերյանն իր օրագրում նշում է. «Փախեաւ Նալբանդեանն ի Մոսկուայէ, թէ ո՛ւր՝ չէ յայտ», և ապա՝ «Ելն Նալբանդեանի ի Մոսկուայէ և չուիլն դէպի Փարիզ»։*

Անտիպ երկեր, 368։



Միքայել Նալբանդյան

Մարտի 31.— *Հասնում է Վարշավա։*

Երկերի լիակատար ժող., *IV*, *61*։

Նույն օրը, Վարշավա.— *Նամակ Գ. Սալթիկյանին։ Հայտնում է իր մտադրությունը երկու օր Վարշավա մնալու մասին՝ Ս. Պալասանյանի «Պ. Նալբանդյանցի նամակին վերա դիտողություն» հոդվածի պատասխանը գրելու համար։*

Երկերի լիակատար ժող., *IV*, *61—62*։

[Մարտի 31—ապրիլի 3...], Վարշավա.— *Ծանոթանում է քաղաքին։ Գրում է Ս. Պալասանյանի պատասխանը։ Չի պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *III*, *26—27*։

Ապրիլի 3 (15), Վարշավա.— *Գրում է նամակներ հարազատներին, Գ. Սալթիկյանին, Մ. Վեհապետյանին, Ս. Ալաջալյանին, Զեթուին (?, երկու նամակ)։ Այս բոլոր նամակները չեն պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV*, *261*։

Ապրիլի 4.— *Պետերբուրգի գրաքննական կոմիտեի նախագահին ուղղած իր ընդարձակ բացատրականում Մ. Բերոյանը կտրականապես հերքում է Գ. Ի. Այվազովսկու առաջադրած մեղադրանքները «Հյուսիսափայլի» դեմ, պնդելով, որ այդ ամսագրի հրատարակության սկզբից նրա մեջ չեն տպագրվել չարամիտ, կրոնի ոգուն հակառակ և կամ խաստամբեր բարոյականության ընդդեմ հոդվածներ։ Գալով «Հյուսիսափայլի» 1858 թ. 11-րդ ամսատետրակին, Բերոյանը պարտք է համարում Նալբանդյանի հոդվածները վերապատմել մանրամասնորեն, «որ հույժ կարևոր է ցույց տալու համար գլխավոր պատճառը, թե ի՛նչն է դրդել Այվազովսկուն դուրս գալու ընդդեմ Նազարյանի ու Նալբանդյանի և նեղություն պատճառելու իշխանությանն իր անօգուտ գանգատով»։*

Այնուհետև, թարգմանաբար մեջ բերելով Նալբանդյանի «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» հոդվածաշարի երկրորդ հոդվածի 4-րդ գլխի վերջին երկու պարբերությունը (Երկերի լիակատար ժող., II, 231), Բերոյանը նշում է, որ իրեն հայտնի չէ, թե Նալբանդյանն ո՛ւմ է նկատի ունեցել, գրելով Մխիթարյան միաբանության նախկին մի անդամի մասին, որն սկզբում պարսավելիս է եղել լուսավորչական հայերին, իսկ միաբանությունից հեռանալուց հետո, հրաժարվել է իր ասածներից։

«Ես,— նկատում է Բերոյանը,— որպես գրաքննական պարտականություն կատարող, քննում և ուշադրություն եմ դարձնում միայն նրա՛ վրա, ինչը որ ընդդեմ է կրոնին և կառավարությանը, և քանի ինձ չեն վերաբերում գրողների ծածուկ մտքերը, որպիսիք գուշակելիս ես կարող եմ սխալվել»։ Իսկ Նալբանդյանի «Նամակ առ հրատարակողը» հոդվածի ուսերեն ամբողջական թարգմանությունը Բերոյանը հարկ է համարում կցել իր բացատրականին, որպեսզի կարելի լինի դատել, թե ի՛նչ ոգով է այն գրված։ «Նալբանդյանն իր նկարագրության մեջ,— շարունակում է Բերոյանը,— շարագրում է միայն եկեղեցական գումարների գործը, ինչպես այն եղել է»։ Գտնելով, որ Նալբանդյանն իրավացի է այդ հարցում, Բերոյանն աններելի է համարում Ներսես կաթողիկոսի ցուցաբերած անսահմանի վստահությունը Խալիբյանի նկատմամբ, որն ի չարը գործադրեց այն։ Բերոյանը նշում է, որ Նալբանդյանն այդ բոլորը նկարագրել է, առանց բնավ կպչելու հոգևորականությանը և կրոնին, և այդ իմաստով ոչ մի պատճառ չկա նրան դատապարտելու։

Որպես եզրակացություն, Բերոյանը կրկնում է, որ «Նալբանդյանի ամսագրի մեջ մինչ այժմ տպագրված ընդհանրապես բոլոր հոդվածներում՝ անբարեմտության, անվայելչության և հակակրոնականության սովերն իսկ չկա և ամեն ինչ համապատասխանում է գրաքննական կանոնագրքին»։

Գեական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 190։

Ապրիլի 15 (27), Բեռլին.— Նալբանդյանը նամակներ է գրում Ստ. Նազարյանին, Վ. Ռ. Զոտովին, Կորսակովին (?) և Չեբուին (?, երկու նամակ)։ Ուղարկում է հոդված «Հյուսիսափայլին»։ Չեն պահպանվել։

Երեկոի լիակատար ժող., IV, 261։

Միևչև ապրիլի 23, Փարիզ.— Նալբանդյանը ծանոթանում է Ստ. Ոսկանի հետ։ Գ. վ. Այվազովսկին 1859 թ. դեկտեմբերի 26-ին Կոմս Սիվերսին (?) գրած ֆրանսերեն նամակում, Ստ. Ոսկանին դասելով Նալբանդյանի համախոհների կարգը, ի միջի այլոց, պատմում է նաև այդ հանդիպման մասին. «Թերթի («Արևմուտքի») խմբագիրը, որ գմյուռնացի մի հայ երիտասարդ է, Փարիզում և Արևվելքում ծանոթ իր ռևոլյուցիոն գաղափարներով, Հունիսյան (1848) ռևոլյուցիայի ժամանակ իր ձերբակալումով, իր խռովասեր նկարագրով, իր հակակրոնական և մանավանդ՝ հակառուս գաղափարներով, անցյալ ապրիլ ամսին Փարիզում բախտ ունեցավ հանդի-

պելու պարոն Նալբանդյանին, որը հաղորդեց իր ոչ նվազ կործանարար գաղափարները և ուրիշ փաստաթղթերի հետ նրան ներկայացրեց Խալիբյանի դեմ իր գրած և արդեն Նազարյանցի «Հյուսիսափայլում» հրատարակված այն հոդվածը, որի մասին ես պարտք էի համարել պաշտոնապես հայտնել մինիստրությանը, և որն արտատպվեց «Արևմուտքում»։ Պարոն Լազարյանն իր նամակներից մեկում ինձ արդեն հասկացրեց, որ այդ թերթը շրջում է Մոսկվայի և Պետերբուրգի հայերի ձեռքում»։

Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 10, վ. 361։

Ապրիլի 23 (մայիսի 5), Փարիզ.— Նամակներ Ստ. Նազարյանին, Գր. Սալթիկյանին, Հարազատներին (տուն), Տեր-Հարությունին (Գևոքչյան), Չեբուին (?) և Ռեդայեցին (?)։ Պահպանվել է միայն Գր. Սալթիկյանի նամակը։

Երեկոի լիակատար ժող., IV, 261։

Նույն օրը, Փարիզ,— Նամակ Գր. Սալթիկյանին. հայտնում է իր մտադրությունը՝ «Հյուսիսափայլը» արդելվելու դեպքում այն փոխադրել արտասահման (որը և նրա ուղևորության հիմնական նպատակն էր).

«Գիտեմ, թե ի՛նչ վիճակի մեջ է «Հյուսիսափայլը»... Ես հույս ունիմ, որ դուք, բոլոր մեր ճշմարտասեր և ազնվամիտ հայրենակիցք և բարեկամք, ինձ օգնական և ձեռնտու կլինիք, եթե Մոսկվա փակվի «Հյուսիսափայլը», նորից ուրիշ տեղ... վերանորոգելու և բոլոր մեր գլխից և ձեր գլխից, այլև ազգի և եկեղեցու գլխից անցածները ճշմարտությամբ հրատարակելու համար։ Հույս ունիմ և հույս մեծ է. մի՞թե մեր ազգի մեջ մինչև այժմ ևս խավարը և սուտը պիտի հաղթանակե լույսի և ճշմարտության վերա։ Մենք բոլոր բան հասկացողքս պարտական ենք ընդդեմ գինվորվել և ցույց տալ ժամանակով մեր ապագայից, որ ազգի համար անհոգ չենք եղել, որ ազգի թշնամիների հարձակմունքին դեմ ենք դրել մեր կուրծքը և ճակատը, որ ազգի օգտի համար զոհել ենք մեր հանգստությունը, հայրենիքը և այլն, և այլն»։

Երեկոի լիակատար ժող., IV, 62—63։

Ապրիլի 24 (մայիսի 6).— Նալբանդյանը Փարիզից մեկնում է Լոնդոն։

Երեկոի լիակատար ժող., IV, 62։

Ապրիլի 28 (մայիսի 10), Լոնդոն.— Նամակներ Ստ. Նազարյանին, Սահակ Սաֆինին, Հարազատներին (տուն), Հովհ.

Թյուայուզյանցին, Սահակ Ալաջալյանին և Չեթուին (?)։ Չեն պահպանվել։
Երկերի լիակատար ժող., *IV*, 231։

Ապրիլի 29 (մայիսի 11), Լոնդոն.— *Նալբանդյանը նամակ է գրում [Մարիա Արսենևնա] Բոգդանովային։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV*, 261։

Ապրիլ.— *Ռեակցիոն մամուլն ի դեմս «Ճռաքաղի», ակնհայտ թշնամանքով է ընդունում Նալբանդյանի քննադատությունը «Արիստակես» ողբերգության բեմադրության մասին։*
«Ճռաքաղ», *1859, № 4, 141—145*։

Մայիսի 3(15), Լոնդոն.— *Նամակ Չեթուին (?)։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV*, 262։

Մայիսի 5(17), Լոնդոն.— *Նամակ Անանիա Սուլթանշահին։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

Մինչև մայիսի 11.— *Պետերբուրգի գրաքննական կոմիտեն մերժում է Նալբանդյանի պատասխան հոդվածը Ստ. Պալասանյանի դեմ։*

Այդ առթիվ, Նազարյանը Աբել վ. Մխիթարյանին ուղղած նամակում, նրա մի հոդվածի կապակցությամբ, գրում է. «Ես սաստիկ տարակուսանք ունիմ այդ գրվածքի տպագրության թույլտվության մասին, պատճառ, մի նմանապիսի և շատ գեղեցիկ պատասխանատվություն պ. Նալբանդյանցի գրչից և կողմից ընդդեմ Պալասանյանին, այս օրերումս հետ դարձուց ինձ ցենսուրյան կոմիտետը, պահանջելով, որ ռուսերեն թարգմանած դորան ուղարկեի նորան. քան որում, այլապես կարող չէր ցենսուրյան կոմիտետը վճռել գրչագրի տպագրությունը։ Ասել է, թե անկարելի էր մեզ պաշտպանել մեզ, երբ որ մյուսները դաղանաբար հարձակվում էին մեր վերա։ Եվ Նալբանդյանցի գրվածք լինելով մի մեծապարունակ ճառ, համարյա թե ճիգ բերք տպած [տպագրական հինգ մամուլ], անկարելի էր ինձ ձեռնամուխ լինել գործի աուսերեն թարգմանությանը, որ պիտո էր հափշտակեր ձեռքիցս մի ամիս ժամանակ և ամենևին խառնակեր իմ գործակատարության ընթացքը։ Հեղինակը լինելով այժմուս Թեմզի վերա Լոնդոնումը, հետ ուղարկեցի նորան յուր գրվածքը, խնդրելով տպել նորան «Արևմուտք» օրագրի մեջ, որ Փարիզումը հրատարակվում է պ. Ոսկանյանցի ձեռքով» («Մուրճ», 1902, № 5, 131—133)։ Իր մայիսի 27-ի նամակում, ուղղված դարձյալ Ա. վ. Մխիթարյանին, Նազարյանը վերստին անդրադառնալով Նալբանդյանի հոդվածին, գրում է. «Հույս ունիմ, որ նա իր գեղեցիկ և զորավոր ճառը շուտով կտպե մի այլ տեղ, և մենք կկարդանք դորան ուրեխեն տպագրած։ Այս բանը դրեցի Միքայելի հոդու վերա» («Մուրճ», 1902, № 5, 135)։ Նալբանդյանի այս հոդվածը ևս չի պահպանվել։

Մինչև մայիսի 11.— *Բաժանորդներին է ուղարկվում «Հյուսիսափայլի» չորրորդ (ապրիլի) ամսատետրակը։*
«Մուրճ», *1902, № 5, 131—132*։

Մայիսի 11(23), Լոնդոն.— *Նամակ Ամբրոսիոս Գալֆայանին։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV*, 262։

Նույն օրը, Լոնդոն.— *Նամակ Ստ. Ոսկանին։ [Հոդված?] «Արևմուտքին»։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

Մայիսի 12(24), Լոնդոն.— *Նամակ Ղևոնդ Ալիշանին։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

Մայիսի 15.— *Ստ. Ոսկանը, ողջունելով «Հյուսիսափայլի» հրատարակությունը, գրում է. ««Հյուսիսափայլ» անուն ամսատետր մ'առինք Մոսկվային և բերկրալիր տեսանք, որ միտքի աղատության և լուսավորության տեսիլները ասպարեզ մ' ունին Ռուսիայի ազգայիններու մեջ։ Թե' տիպին մաքրությունը, թե' հոդվածներուն ընտրությունը և թե' աշխարհաբար լեզվին ձևը մեծ գովեստի արժանի կթվին մեզ և կփափագինք ի բոլոր սրտե, որ Թյուրքիայի մեջ տարածվի այս հրատարակումը։ ... Իզմիրի, Պոլսի և ուրիշ քաղաքներու հայերը պիտի ամենևան տեսնելով, որ հյուսիսեն կփայլի լույսը...»։*
«Արեւմուտք», *1859, № 10, 79*։

Մայիսի 18.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» հինգերորդ (մայիսի) ամսատետրակը։*

Նալբանդյանի գրչին է պատկանում՝

«Ազգային ժառանգություն» հոդվածը Նոր-Նախիջևան քաղաքին հնդկահայերի թողած ժառանգության մասին. կից տրված են կտակների պատճենները (էջ 379—407)։

Այս հոդվածով Նալբանդյանը հարուցում է Մասնհ Բարաջանի կտակները ձեռք բերելու հարցը, առաջարկելով, որ Նոր-Նախիջևանի հասարակությունը մի «բանագնաց և հարազատ մարդ բնորեն յուր միջից և ուղարկե նորան արևելյան Հնդկաստան օրինավոր վերահասության գործելու համար»։ Գծելով ճանապարհորդության ուղեգիծը և որոշելով մոտավոր ծախսերը, Նալբանդյանն անհրաժեշտ է համարում ձեռք բերված գումարները գործադրել «ազգի լուսավորության» օգտին, հիմնելով «ազգային աշխարհական ուսումնարան, որի տեղը լինելու էր ինքը անմիջապես ազգը, առանց դիմելու դեպի հոգևոր մարդերի գործակցությունը»։
Երկերի լիակատար ժող., *II*, 277։

Մայիսի 18(?).— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» ութերորդ (օգոստոսի) ամսաւտերակը։*
Տե՛ս նույնիս։

Մայիսի 20 (հունիսի 1), Լոնդոն.— *Նամակներ Ստ. Նազարյանին և Սահակ Ալաջալյանին։ Հոդված «Հյուսիսափայլին»՝ Կոմս Էմմանուել ստորագրությամբ։ Չեն պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV, 262։*

Մայիսի 22 (հունիսի 3), Լոնդոն.— *Նամակներ Ստ. Նազարյանին և Մատթեոս Վեհապետյանին։ Չեն պահպանվել։* Նույն տեղը։

Մայիսի 27 (հունիսի 8), Բրյուսել.— *Նամակներ Հովհ. Քյաթիպյանին և Սարգսին (?)։ Երկու նամակ ուղարկում է Ստ. Ոսկանին տպելու։ Չեն պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Ստ. Նազարյանը Ա. վ. Մխիթարյանին գրած նամակում հայտնում է, թե «Հյուսիսափայլի» հինգերորդ ամսաւտերակն օրերս կուղարկվի բաժանորդներին, և թե ուշացման պատճառը Նալբանդյանի պատասխան-հոդվածն էր՝ գրված Պալասանյանի դեմ։*
«Մուրճ», *1902, № 5, 135։*

Մայիսի 30 (հունիսի 11), Էսսեն.— *Նամակներ Ստ. Նազարյանին, Սահակ Ալաջալյանին և Դրուցքոյին (?)։ Չեն պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV, 262։*

[Մինչև մայիսի 31].— *Նալբանդյանը գրում է «Մանկության օրեր» բանաստեղծությունը։* Երկերի լիակատար ժող., *I, 96—97։*

Մայիսի 31, Էմս (Գերմանիա).— *Գրում է «Ապոլոնին» բանաստեղծությունը։* Երկերի լիակատար ժող., *I, 93։*

Մայիս.— *«Ճռաքաղն» ակամա խոստովանում է «Հյուսիսափայլի» (Նալբանդյանի) հոդվածների ուժեղ ազդեցությունը ժողովրդի վրա. «...Մեր ժողովուրդն շատերն (որպես աչքս տեսած եմ և լսում եմ) հույժ գայթակղվեցան «Հյուսիսափայլի» շնորհքով։ Որպես օրինակ Զ. Մսերյանը պատմում է, թե ինչպես շատերն իրեն մեղադրել են Խալիբյան ուսումնարանի մասին գրած հոդվածի համար, առարկելով, թե՝ «հիմնադրի սեփական արդյամբքն շինված չէ... ինչպես բացահայտ գրված է «Հյուսիսափայլի» մեջ։ Պարզ է,*

որ Մսերյանի դեմ վկայակոչելով «Հյուսիսափայլը», «շատերը» նկատի են ունեցել Նալբանդյանի «Նամակ առ հրատարակողը», տպագրված «Հյուսիսափայլի» 1858 թ. 11-րդ ամսաւտերակում։

Այնուհետև Մսերյանը հիշեցնելով Նալբանդյանի մյուս հոդվածները, որոնք «կպչում են Ներսես կաթողիկոսի և ապա այլ անձանց պատվին», զգուշացնում է. «Չէ՛ պարտ ուրեմն (կրկնում եմ և ես) զայս բաներս անտես առնել՝ իբր չնչին իմն համարելով, ըստ որում փորձն իսկ շատ անգամ ցույց է տված, որ ի փոքր կայծե մեծաբոց հրդեհներ հառաջացած են...»։ «Ճռաքաղ», *1859, № 5, 189։*

Հունիսի 1.— *Ստ. Ոսկանն «Արևմուտքում» արտատպում է Նալբանդյանի «Նամակ առ հրատարակողը».*

«Հյուսիսափայլեն» առնելով հոս կդնենք երկար հոդված մը, որ մասնավոր ուշադրության արժանի է, և որ պ. Գ. Այվազովսքիին վարքին վրա նոր լույս մը կծավալե... Շնորհակալ ենք «Հյուսիսափայլեն», որ այս վկայությունը բերավ մեզ։ Հուսանք, թե ուրիշ վկաներ ևս չպիտի պակսին»։ «Արևմուտք», *1859, № 11, 82—85։*

Հունիսի 9(21), Էմս.— *Նամակներ Սահակ Ալաջալյանին և Սարգսին (?)։ Չեն պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 262։*

Հունիսի առաջին կեսը, Ոդեն, Մայնի վրա, Ֆրանկֆուրտի մոտ.— *Նալբանդյանը գրում է «Իտալացի աղջկա երգ 1859 թվականից» բանաստեղծությունը։* Երկերի լիակատար ժող., *I, 93—95։*

Հունիսի առաջին կեսը, Ֆրանկֆուրտ Մայնի վրա.— *Նամակ Հովհ. Քյաթիպյանին։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV, 262։*

Հունիսի 15.— *Ավարտվում է «Նամակ առ հրատարակողը» հոդվածի արտատպությունն «Արևմուտքում»։*
«Արևմուտք», *1859, № 12, 90—92։*

Հունիսի 18(30), Հոմբուրգ (Էսսեն).— *Նալբանդյանը վերսկսում է Կոմս Էմմանուելի «Հիշատակարանը», որ ընդհատվել էր Ճանապարհորդության պատճառով («Հյուսիսափայլ», 1859, օգոստոս, № 8, էջ 647—659)։* Երկերի լիակատար ժող., *I, 410—421։*

Հունիսի 26.— *Չերնիշևսկին ժամանում է Լոնդոն՝ Գերցենի հետ տեսակցելու։* **А. И. Герцен**, Полн. собр. соч., XXII, 300.

Հունիս.— Ռևակցիոն մամուլը («Ճռաքաղ»), Նալբանդյանի հայացքներն անհամատեղելի համարելով Նազարյանի ուղղությանը, զարմանք է հայտնում, որ «Հյուսիսափայլի» խմբագիրն իր ամսագրում տեղ է տալիս «այդպիսի» հոդվածների (նկատի ունի Նալբանդյանի հոդվածները)։

Հենվելով իր համախոհներից ոմանց կարծիքի վրա, Զ. Մսերյանը ցանկություն է հայտնում, որ «պ. Նազարյանն հօգուտ յուր և հօգուտ ազգին խոհեմաբար փոխե այսուհետև ոյր «Հյուսիսափայլի» այսօրինակ խրատուցիչ և բազմաց գայթակղեցուցիչ և վըշտացուցիչ ընթացքը...»։ «Ճռաքաղ», 1859, № 6, 223—224։

Հուլիսի 4(16), Փարիզ.— Նամակներ Ստ. Նազարյանին և Սահակ Ալաջալյանին։ «Հյուսիսափայլին» ուղարկում է «Մեռելահարցուկ» վեպի Ա—Զ գլուխները (տպ. «Հյուսիսափայլ», 1859, № 8, օգոստոս, էջ 581—629)։ «Հիշատակարանի» ճանապարհորդական տպավորություններին նվիրված հատվածը («Հյուսիսափայլի» նույն №-ը, էջ 647—659) և հոդվածներ։ Վերջիններս անհայտ են. թերևս արգելվել են գրաքննության կողմից։

Երկերի լիակատար ժող., IV, 262։

Հուլիսի 7(19).— Վերադարձին լինում է Վարշավայում։

Նույն տեղը։

Նույն օրը, Վարշավա.— Նամակներ Հովհ. Թյուսյուզյանին, Ճանիկ Արամյանին, Սարգսին (?) և Մարկոսին (?)։ Չեն պահպանվել։

Նույն տեղը։

Հուլիսի 8.— Գր. Սալթիկյանին գրած նամակում Ստ. Նազարյանը հայտնում է, որ Նալբանդյանից ստացել է «ուրախարեր տեղեկություններ», որոնց հետ նա (Սալթիկյանը) կարող է ծանոթանալ Հայրապետյանի նամակից, և գործել ըստ Նալբանդյանի խորհուրդների։ Այնուհետև տեղեկացնում է, որ Նալբանդյանը շուտով կվերադառնա, և որ ոչինչ վտանգ («Հյուսիսափայլը» դադարեցնելու համար) այլևս չկա։ «Լումա», 1902, № 5, 210—211։

Հուլիսի 17.— Լուսավորության մինիստրի օգնական Ն. Մուխանովը Ս. Ս. Լանսկոյին ուղարկելով Նալբանդյանի «Նամակ առ հրատարակողը» հոդվածի ռուսերեն թարգմանությունը, գտնում է, որ «Նալբանդյանի նամակը չպետք է թույլատրվեր տպագրության»։ Ավելացնում է, որ հրամանագրել է գրաքննական կոմիտեին՝ հատուկ ուշադրություն դարձնել «Հյուսիսափայլ» ամսագրին։

Գրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 190։



Անանիա Սուլթանշահ

Նույն օրը.— Ն. Մուխանովը Բերոյանի բացատրականի առթիվ Պետերբուրգի ուսումնական մարզի հոգաբարձուի օգնականին հաղորդում է, որ տպագրության թույլատրված Նալբանդյանի նամակի հենց միայն բովանդակությունը ցույց է տալիս, որ Բերոյանը գրաքննական կանոններից լուրջ շեղումներ է կատարում, և այդ նամակը ենթակա չէր տպագրության գրաքննության կանոնադրքի առաջին հոդվածի համաձայն, այդ պատճառով, խնդրում է կարգադրել Բերոյանին՝ «Հյուսիսափայլում» տպագրվելու համար նախատեսված հոդվածները քննելիս խստորեն հետևել գրաքննության որոշումներին։

Նույն տեղը։

Հուլիս.— «Հյուսիսափայլի» թղթակիցը հայտնում է, որ Թիֆլիսի հայ երիտասարդության կողմից «Հյուսիսափայլը» ջերմ ընդունելություն է գտել. «... Քանի սիրով կարդում են քաղաքիս երիտասարդները ձեր «Հյուսիսափայլը». որքան սիրեցին, պատվեցին դրան, զարմացան և վառվեցան ի սեր հայրենյաց... 18 տետրակ ամսագրիդ քանի՞, քանի՞ նոր մտքեր բերեց հանձնեց մեզ...»։

«Հյուսիսափայլ», 1859, չորեքորդ ամսատետրակ, 578։

Հուլիս.— «Ճռաքաղում» տպագրվում է «Մ. Խահակյանցի պատասխանին Շահբեգի նկատողությանցը»։ Հոդվածագիրը նշում է, որ Շահբեգը (Նալբանդյանը) «առհասարակ մեծատուններին վատաբանելու ճանապարհն է բռնել», որ «նա հրաժարվում է վարդապետներից, հրաժարվում է քահանաներից, առհասարակ հոգևորականներից»։

«Ճռաքաղ», 1859, № 7, հավելված, 1—12։

Հուլիս.— Տպագրվում է «Հյուսիսափայլի» ութերորդ (օգոստոսի) ամսատետրակը։

Այդ համարից սկսվում է «Մեռելահարցուկ» վեպի տպագրությունը. գլուխներ՝ Ա—Զ (էջ 581—629)։ Շարունակվում է «Հիշատակարանի» տպագրությունը։ «Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրության թերթերից։ «Հիշատակարանի» խոսակցությունքը.— Շահբեգի նամակը.— Թիֆլիզու առաջնորդի «Ճանապարհորդության» երկրորդ հատորը.— Փարիզյան ազգային դպրոցը.— «Հրեշտակ Հայաստանի» նոր օրագիրը.— Մուրադյան վարժարանի աղոթքը» (էջ 647—659)։

Իր ճանապարհորդական տպավորությունների մասին «Հիշատակարանում» Նալբանդյանը գրում է.

«երկար և անդադար ճանապարհորդությունքը Եվրոպայում, ամսօրյա ժամանակով դեղերվիլը հանքային ջրերում, տկարության կատաղաբար զայրանալը և սրանից պատճառված աննկարագրելի ֆիզիկական թուլությունը համարյա թե գրկել էին ինձ կարողությենից գրիչ ձեռք վեր առնուլ Մյուս կողմից բյուր նորանոր ապավորություններ պատերազմ բանալով ուղեղիս մեջ, աշխատում էին յուրաքանչյուրը առաջին տեղը բռնել «Հիշատակարանումս». բայց ես թողնում եմ նորանց, մինչև որ մի փոքր նստի նոցա ջերմությունը, որպեսզի սառն աչքով կարողանամ նկատել նորանց, մանավանդ, որ այդ բաները համարյա թե հարակցություն չունին իմ նվիրական ազգային խնդիրների հետ: Ի՛նչ օգուտ ինձ Լոնդոնի հայկական կերպարանքից, ի՛նչ օգուտ Փարիզի փառավոր և զեխ դեմքից, Բեռլինի և Գերմանիայի մտածող փիլիսոփայական պատկերից, մինչ նոցա հետ միասին աչքիս առաջև են գալիս ավերակ Հայաստանը, ցիր ու ցան ժողովուրդը, անդաստիարակ և նյութապաշտության հոգով գործնականապես տոչորված ազգի զավակները, անխորհուրդ և տղայական փառասիրությամբ հիվանդ, միակողմանի, ուսումնական անվանված պարոնները, որ թիթեռնակի պես թրթռում են ճրագի շուրջ կողմով, երբ սա երևում էր հայկական թանձր խավարով պատած խոնավ գետնափորի մեջ...

Ամեն մի զվարճալի տեսարան, ամեն մի կրթված ու բարեկարգ ազգ պատճառում էր իմ մեջ մի տրտում մտածություն, որ սիրելի չէ հայերին, քան որում ծա՛նր բան է անձնաքննությունը... մտածություն, դարձյալ մտածություն, անվե՛րջ մտածություն...

... Շատ պատահեցա գեղեցիկ և պատվական հոգու տեր մարդկերի, որոնք դարձան ինձ շատ լավ ծանոթք, բայց նոքա պարապում էին կամ յուրյանց ազգային գործերով, կամ ընդհանուր մարդկության գործերով: Օրերը և շաբաթները վազում էին ջրի պես, բայց և ո՛չ մի խոսք այն բաների համար, որոնց մասին խոսելու ծարավը թեղդում էր ինձ. խոսք, որ մոտ էր իմ սրտին և հոգուն, որ վաղուց արդեն դարձել էր իմ կյանքը, իմ հոգին, իմ արյունը և ուղեղը»:

«Հյուսիսափայլ», *1859, VIII, 648—649*:
Երկերի լիակատար ժող., *I, 411—412*:

Օգոստոսի 19.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» իններորդ (սեպտեմբերի) ամսատետրակը: Շարունակվում է տպագրվել «Մեռելահարցուկը», գլուխներ՝ է—Թ (էջ 665—708)*:

«Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրության թերթերից: *Վերնագլ.*—Փարիզի Մուրադյան և ազգային վարժարանքը.—Ամբրոսիոս և Խորեն վարդապետք.— Լամարթինի «Ներդաշնակությունքը» հայերեն.— Ուրիշ գրքերի ձեռնարկություններ.—Հ. Ղևոնդ Ալիշանյանց (Նահապետ).— Նորա «Նվագները» (Հայրունի).— Գրիգոր վարդապետ Կապարաճի Կարապետյան.— «Ընծայ».— «Ընծայի ընդունելությունը».— «Ընդունելության» ընդդեմ մի թերթ.— Կարապետ վարդապետ Շահնազարյանց.— Հին հայ հեղինակների տպագրությունը՝ «Շար հայ մատենագրաց» անունով.— Արամյան տպարան.— «Փեղիքս և Պավլինե».— Ազգային երիտասարդքը Փարիզի մեջ.—«Արևմուտք» կիսամսագիրը.— Թյուրքիայում հայ օրագրերի օրե օր շատանալու հայտարարությունքը.— Յենսոր Թյուրքիայում տպելի գրքերի և օրագրերի վերա» (էջ 725—750)*:

«Հիշատակարանի» այս հատվածում է առաջին անգամ տպագրվել «Ազատություն» բանաստեղծությունը:

Օգոստոս.— *«Հյուսիսափայլի» բաժանորդների թիվը հասնում է 350-ի*:

Կազմակերպվում է ամսագիրը Պոլիս առաքելու գործը:

«Հյուսիսափայլ», *1859, ամսատետրակ VIII, 662*.

Սեպտեմբերի 28, Մոսկվա.— *Նամակներ Ճանիկ Արամյանին և Հովհ. Թյուսյուզյանին: Չեն պահպանվել*:

Երկերի լիակատար ժող., *IV, 262*:

[Հոկտեմբերի սկիզբը].— *Բաժանորդներին է ուղարկվում «Հյուսիսափայլի» ութերորդ (օգոստոսի) ամսատետրակը*:

Գր. Սուլթանյանին ղրած նամակում Մտ. Նազարյանը գանգատվում է, որ «Յենգուրայի դանդաղությունը և անհոգությունը... շատ անգամ շաբաթներով ետ է ձգում արձակման տոմսակը»:

Գրական թանգարան, *վ. 453/2, ԺՀ*:

[Հոկտեմբերի 17].— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» տասներորդ (հոկտեմբերի) ամսատետրակը: Նալբանդյանի գրչին է պատկանում՝*

«Մեռելահարցուկ», գլուխ Ժ (էջ 753—771):

«Նամակագրություն», Ծատուր Պողոսյանց և Մարտիրոս Սաֆյանց ստորագրությամբ, որ վերագրվում են Նալբանդյանին (էջ 808—821):

Նույն համարում (էջ 774—805) տպագրված է Ան. Սուլթանշահի «Հայոց ազգի լուսավորիչքը» պիեսը, որ հեղինակը նվիրել է Նալբանդյանին. «Յուր պատվելի եղբոր Միքայել Ղազարյան Նալբանդյանցին սիրող և մեծարող սրտի անխարդախ նվեր»: Ինչպես վկայում է Սմբ. Շահազիզը, այս երկի ստեղծմանը մասնակից է եղել Նալբանդյանը:

Ս. Շահազիզյան, Ամառնային նամակներ, Մ., 1897, 195:

Հոկտեմբերի 27, Մոսկվա.— *Նամակ Գր. Սալթիկյանին: Նալբանդյանը հայտնում է իր նյութական ծանր վիճակի և «Հյուսիսա-*

փայլից» հեռանալու որոշման մասին, որ հետևանք էր, ըստ էության, իր և Նազարյանի միջև արդեն խորացող գաղափարական տարաձայնությունների։ Հայտնում է, որ չնայած նյութական ծանր վիճակին, բարոյապես թուլացած չէ և կարող է շատ աշխատել։ Նույն նամակում հայտնում է իր որոշումը Պետերբուրգ գնալու և կանդիդատական քննություն տալու մասին, «որպեսզի մի արժանավոր տեղ ծառայություն գտանելով, կարողանա օրական ապրուստ ճարել և բժշկությունը շարունակել»։ Նշում է, որ առողջ է և «տխրությունը իսպառ» փարատվել է։

Երկերի լիակատար ժող., *IV, 63—65։*

Նույն օրը. Մոսկվա.— *Նամակ Կար. Հայրապետյանին «Հյուսիսափայլից» հեռանալու և իր մտադրությունների մասին։ Չի պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV, 65։*

Մինչև հոկտեմբերի վերջը, Մոսկվա.— *Գրում է «Կուտանք հազարը, կըլլա բազարը» երեք գործողությամբ կատակերգությունը (մնացել է միայն ձեռագրի անվանաթերթը, որի վրա բերված է Բուալոյի «Արվեստ բերթության» երկից մի քանի տող)։*

Գրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 6։

[**Հոկտեմբերի վերջը**].— *Մեկնում է Պետերբուրգ։*

Նոյեմբերի 1.— *«Արևմուտքն» արտատպում է «Թափառական հրեայի» թարգմանության առաջաբանը։*

«Արևմուտք», *1859, № 21, 161—163։*

Նոյեմբերի 2(14), Պետերբուրգ.— *Նամակներ Հովհ. Քաթիպյանին, Ստ. Ոսկանյանին և Հովհ. Իյուսյուզյանին։ Ստ. Ոսկանյանին ուղարկում է նաև իր «բողոքը» «Արևմուտքի» հրատարակիչների անարդար վերաբերմունքի դեմ, որի հետևանքով «Արևմուտքը» հետագայում փակվեց։ Չեն պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV, 263։*

Նույն օրը.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» տասնմեկերորդ (նոյեմբերի) ամսատետրակը։*

Նալբանդյանի գրչին են պատկանում՝

1. *«Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրության թերթերից։ Ներածություն.— Բեգզադեի յոթն հրաշալիքը.— Խառն լուրեր.— Մի արեզակի ֆանտաստիկոսություն» (էջ 907—918)։*

2. *Նամակներ, Մարտիրոս Սառաֆյանց և Ադոլֆ Բլումենթալ առորագրությամբ, որ վերագրվում են Նալբանդյանին (էջ 902—906)։*

Նոյեմբերի 15.— *Ավարտվում է «Թափառական հրեայի» թարգմանության առաջաբանի արտատպությունը «Արևմուտքում»։*

«Արևմուտք», *1859, № 22, 169—172։*

Նոյեմբերի 18, Պետերբուրգ.— *Գր. Սալթիկյանին գրած նամակում Նալբանդյանը հայտնում է, որ կանդիդատական քննությունները տալու համար եկել է Պետերբուրգ. մայիսին քննությունները հանձնած կլինի, որից հետո մտադիր է Փարիզ մեկնել և այնտեղ երկու տարի մնալով, Փարիզի Ակադեմիայում բժշկության դոկտորի քննություն տալ։ Դրա համար խնդրում է իր բարեկամների նյութական աջակցությունը։ Հայտնում է, որ Փարիզում եղած ժամանակ թե՛ ֆրանսացի, թե՛ հայ ազնիվ բարեկամներ է ձեռք բերել, ուսումնասիրել է Փարիզի հիվանդանոցը և Ակադեմիան։*

Երկերի լիակատար ժող., *IV, 65—66։*

[**Նոյեմբեր**].— *Նալբանդյանը Մ. Վեհապետյանին է ուղարկում 326 օրինակ Էժեն Սյուի «Թափառական հրեա» վեպի առաջին հատորի իր թարգմանությունից և Կլեմանս Ռոբերտի «Թքսուհի դը Շեբեռզից» 71 օրինակ՝ Աստրախանում տարածելու համար։*

Մ. Վեհապետյանի 1862 թ. նոյեմբերի 28-ին Հովհ. Թերբերյանին գրած նամակից պարզվում է, որ Նալբանդյանն այդ շրջանում դրամական միջոցներ չունենալով, դրել էր Վեհապետյանին և խնդրել գրքերի դրամը հասցնել իրեն։ Մ. Վեհապետյանը կատարել է Նալբանդյանի ցանկությունը։

Մատենադարան, Կաթ. դիվան, *թղթ. 196, թ. 89 և 91։*

Մինչև դեկտեմբերի 15.— *Ստ. Ոսկանյանն ստանում է Նալբանդյանի բողոքը՝ «Արևմուտքի» դեմ ռեակցիոներների սկսած հալածանքի կապակցությամբ։*

«Արևմուտք», *1859, № 24, 185—186։*

Դեկտեմբերի 15.— *Նալբանդյանի բողոքի առթիվ Ստ. Ոսկանյանը գրում է. «Արևմուտքի» ճշմարիտ հիմնադիրները պարտք կհամարին իրենց հասարակության իմացնել, թե Ռուսիայեն երկու բողոքագիր ընդունած են ազատամիտ և ուսումնասեր ազգայիններե ստորագրյալ։ Արդո ստորագրողք կբողոքեն «Արևմուտքի» վրա*

Տաճկաստանի մեջ տարածված թշնամական լուրերուն դեմ։ Կցավինք, որ չպիտի կրնանք աս բողոքագիրները հրատարակել, որովհետև «Արևմուտքը» կդադրի աս օրվանե ետքը։ Հոս մեր խորին շնորհակալությունը մատուցանելով Ռուսիայի մեր ազատասեր ազգայիններուն, կիմացնենք, որ երբեք մոռանալու չենք իրենց մեզի աված քաջալերությունը և համակրությունը։

«Արևմուտք», *1859, № 24, 185—186։*

Դեկտեմբերի 21.— *Բաժանորդներին են ուղարկվում «Հյուսիսափայլի» տասնմեկերորդ (նոյեմբերի) և տասներկուերորդ (դեկտեմբերի) ամսատետրակները։* Ֆրակաև բանգարան, վ. *134/10։*

Դեկտեմբերի 26.— *Գ. վ. Այվազովսկին կոմս Սիվերսին ուղղած նամակում նրա ուշադրությունն է հրավիրում Ստ. Ոսկանի հետ Նալբանդյանի ունեցած հանդիպման փաստի վրա։*

Տե՛ս սույն «Տարեգրություններ», 1859, մինչև ապրիլի 23։

1 8 6 0

Հունվարի 14.— *Մսեր Մսերյանը Մատթեոս կաթողիկոսին բողոքագիր է ներկայացնում «Հյուսիսափայլում» տպագրվող Նալբանդյանի երկերի և առանձնապես «Մեռելահարցուկ» վեպի դեմ. նա բողոքում է, որ Նալբանդյանը «վարկաբեկում է» «նշանավոր անձանց», ինչպես, օրինակ՝ «ազնվատոհմ, մեծանուն վաճառական Հովհաննես Ստեփանյան. Հովնանյանցին» (Մսերյանն, անշուշտ, նկատի ուներ «Հյուսիսափայլի» 1859 թ. տասներորդ ամսատետրակում տպագրված «Մեռելահարցուկ» վեպի 10-րդ (ժ) գլուխը, որի մեջ, ի դեմս Հովնաթանյանցի, Նալբանդյանն անողոք մերկացման էր ենթարկել հիշյալ վաճառականին)։ Մսերյանը նշում է, որ չնայած Նալբանդյանն այդ անձնավորություններին ծաղրի է ենթարկում կեղծանուններով, բայց բոլոր ընթերցողներն իմանում են, թե ո՛ւմ մասին է խոսքը։ Բողոքագրի վերջում Մսերյանն ավելացնում է, թե Նալբանդյանի գրածներից առավել վշտացածները մտադիր են բողոքագրով դիմել կաթողիկոսին և խնդրել, որ նա որևէ միջոցով կասեցնի «չարիքը», որից հետագայում ազգի մեջ կարող են առաջանալ մեծամեծ երկպառակություններ, կռիվ և աղմուկ։*

Մատենադարան, Մսերյաննեի արխիվ, *թղթ. 207, վ. 1930։*

Հունվարի 20.— *«Մեղուն» «Հյուսիսափայլի» 1859 թ. № 11-ից արտատպում է Կոմս Էմմանուելի «Հիշատակարանի» մի հատվածը՝ ««Հիշատակարանիս» աչքերը բաց են...» բառերից մինչև «Մեր աչքի առաջև են հայոց ազգի համար սորանից հարյուր տարի հետո գալոց օրերը»։* «Մեղու», *1860, հունվարի 20, № 86, 14—15։*

Համմա. «Հյուսիսափայլ», *1859, նոյեմբեր, 907—909։*

Հունվարի 29.— *Գ. վ. Այվազովսկին Հ. Խալիբյանին ուղղած նամակում հայտնելով, որ «Հյուսիսափայլը» դարձյալ իրենց ծաղրուծանակի է ենթարկել (նկատի ունի «Հյուսիսափայլի» 1859 թ. 10-րդ ամսատետրակում տպագրված՝ Նալբանդյանի մասնակցությամբ գրված Ան. Սուլթանշահի «Հայոց ազգի լուսավորիչքը»), գրում է, թե այդ մասին լուսավորության մինիստրը լսել է և օրերս փոխելու են Նալբանդյանի խորհրդակից գրաքննիչ Բերոյանին, իսկ Նազարյանին անելու են խիստ նկատողություն։*

Նույն նամակում Այվազովսկին Խալիբյանին հորդորում է չհուսահատվել, հիշեցնելով, որ իրենց թիկունքին կանգնած է ցարական կառավարությունը՝ քանի որ իրենց բոլոր ձեռնարկումները միայն մինիստրից կախում ունեն։

Ֆրակաև բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Մինչև փետրվարի 4.— *Նալբանդյանը նամակներ է գրում (թվով 16) զանազան անձնավորություններ։ Հասցեատերերի անունները և նամակները չեն պահպանվել։* Երևանի լիակատար ժող., *IV, 263։*

Փետրվարի 5, Պետերբուրգ.— *Նամակներ Ա. Սուլթանշահին, Վանկային (Հովհ. Սահրատյան?) և Մ. Վեհապետյանին։ Չեն պահպանվել։* Նույն տեղը։

[Մինչև փետրվարի 8].— *Մրագրում է կատարել իր երկրորդ ճանապարհորդությունն արտասահման։*

Երևանի լիակատար ժող., *II, 315։*

Փետրվարի 8, Պետերբուրգ.— *Նամակ Մատթեոս Զուխաճյանին Գ. վ. Այվազովսկու «Վարդապետարանի» մասին։ Թավանաբանական հարցերն առիթ ծառայեցնելով և օգտագործելով կաթողիկոսի և Այվազովսկու միջև եղած տարաձայնությունները, Նալբանդյանը մերկացնում է իր քաղաքական հակառակորդին որպես ցարական լրտեսի։*

Երևանի լիակատար ժող., *II, 312—323։*

Փետրվարի 9, Պետերբուրգ.— *Նամակ Կովալևսկուն։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 263։*

[Փետրվարի 10], Պետերբուրգ.— *Նամակ անհայտ անձնավորության։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Փետրվարի 11, Պետերբուրգ.— *Գրում է փետրվարի 8-ին Մատթեոս Չուխաճյանին ուղղած իր նամակի երկրորդ վարիանտը՝ Գ. վ. Այվազովսկու «Վարդապետարանի» մասին։* Երկերի լիակատար ժող., *II, 312—328։*

Փետրվարի 13.— *Գ. վ. Այվազովսկին Հ. Խալիբյանին հայտնում է, թե լուսավորության մինիստրը մտադիր է անպատճառ փոխել «Հյուսիսափայլի» գրաքննիչ Բերոյանին։* Գեական բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Փետրվարի 15.— *Հ. Խալիբյանը, հիմնվելով Մոսկվայից եկողների հաղորդած լուրերի վրա, Գ. վ. Այվազովսկուն հայտնում է Նալբանդյանի և Նազարյանի սուր բախման մասին. գոհունակությամբ է նշում, որ նրանց միջև «ճեղք է բացվել». ցանկություն է հայտնում, որ «անիրավության ցեղդոր Բերոյանցին փոխեին»։ Համաձայնելով Գ. վ. Այվազովսկու հետ, որ իրենք քաղաքական հակառակորդներից վախենալու հիմք չունեն, որովհետև իրենց դրծերը կախված են մինիստրից և ոչ մեկ ուրիշից, Խալիբյանն իր կողմից ավելացնում է, թե իրենց հետ են «նախ՝ աստված» և ապա՝ «նորին կայսերական մեծություն»։* Նույն տեղը։

Փետրվարի 16, Պետերբուրգ.— *Նալբանդյանը նամակ է գրում Կ. Հայրապետյանին և ուղարկում Գ. վ. Այվազովսկու «Միջակ վարդապետարան ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ» գրքի առթիվ ն. թ. փետրվարի 11-ին Մատթեոս Չուխաճյանին գրած նամակի պատճենը։ Կ. Հայրապետյանին ուղղած այս նամակը չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 263։*

Փետրվարի 17, Պետերբուրգ.— *Նամակ Հայրապետյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Փետրվարի 18 (մարտի 1).— *«Կոլոկոլում» (№ 64) լույս է տեսնում «Письмо из провинции» նամակը՝* Русский человек *ստորագրությամբ։ Նամակի հեղինակը, որ ենթադրվում է Չերնիշևսկին կամ Դոբրոլյուբովը, քննադատելով Գերցենի լիբերալ տատանումները, նամակն ավարտում է հետևյալ խոսքերով. «... Ո՛չ, մեր վիճակը սարսափելի է, անտանելի, միայն կացինը մեզ կարող է փրկել, և կացինից բացի ոչինչ չի օգնի։ Այս միտքը, կարծեմ, արդեն հայտնել են ձեզ, և զարմանալիորեն այն ճիշտ է,— ուրիշ փրկություն չկա։ Դուք արիք ամեն բան, ինչ կարող էիք անել, որպեսզի օգնեք գործի խաղաղ լուծմանը. այժմ փոխեցեք տոնը, և Ֆո՛ղ ձեր «Կոլոկոլը» ո՛չ թե մաղթանքի կոչի, այլ ահազանգի՛։ Կա՛ցնի կոչեցեք Ռուսաստանը»։*

Н. Г. Чернышевский, Полн. собр. соч., т. VII, М., 1950, стр. 1001—1004.

Փետրվարի 19, Պետերբուրգ.— *Նամակներ Անանիա Սուլթանշահին և Հովհ. Բերբերյանին։ Չեն պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 263։*

Փետրվարի 21, Պետերբուրգ.— *Նամակներ իր քրոջ՝ Վառվառեի ամուսին Մարտիրոս Մյասնիկյանին և Կ. Հայրապետյանին։ Չեն պահպանվել։* Նույն տեղը։

Փետրվարի 24, Պետերբուրգ.— *Նամակ Անանիա Սուլթանշահին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Փետրվարի 25.— *«Մեղու Հայաստանի» թերթում տպագրված իր նամակում Սկայորդին (Զարմայր Մսերյանը) Մոսկվայից հաղորդում է, որ «Հյուսիսափայլը» դեռևս հրատարակված չէ և միտք ևս չունի հրատարակվելու։ Նամակագիրը նշում է երկու պատճառ. նախ՝ բաժանորդներ չունենալը և ապա՝ Կոմս Էմմանուելի (Նալբանդյանի) և Նազարյանի պատակոտումը. «Կոմս Էմմանուելն այսուհետև, չգիտեմ ինչ պատճառավ, չէ կամենում գործակից լինել հրատարակչին» (Ստ. Նազարյանին), վերջում ավելացնելով՝ «գուցե այլ պատճառ լինի», նամակագիրը, հավանաբար, ակնարկում է գրաքննության արգելքը։*

«Մեղու Հայաստանի», 1860, մարտի 19, № 12, 93։

Փետրվարի 26, Պետերբուրգ.— *Նամակ Մ. Վեհապետյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 263։*

Փետրվարի 28, Պետերբուրգ.— *Նամակ Կ. Հայրապետյանին։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

Մարտի 9, Պետերբուրգ.— *Նամակ Ստ. Նազարյանին։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

Մարտի 10, Պետերբուրգ.— *Նամակ Կովալևսկուն՝ Փարիզ։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

Նույն օրը.— *Սկայորդին (Զարմայր Մսերյանը) Մոսկվայից «Մեղու Հայաստանի» լրագրին հաղորդում է, որ նվիրատվությունների շնորհիվ «Հյուսիսափայլը» շարունակում է հրատարակվել։*
«Մեղու Հայաստանի», *1860, № 14, 106։*

Մարտի 15, Պետերբուրգ.— *Նամակ Մովսես Ալամխանյանին։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV, 263։*


Մարտի 16, Պետերբուրգ.— *Նամակներ Կ. Հայրապետյանին, Դ. Գարագաշին, Կ. Ուստիմովիչին և իր եղբայր՝ Ղ. Նալբանդյանին։ Չեն պահպանվել։*
Նույն տեղը։

Մարտի 19, Պետերբուրգ.— *Նամակ Սիմեոն Մուշեղյանին (?)։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

Մարտի 21, Պետերբուրգ.— *Նամակներ Կ. Ուստիմովիչին, Վանկային (Հովհ. Սահրատյան?) և Մ. Վեհապետյանին (2 նամակ)։ Չեն պահպանվել։*
Նույն տեղը։

Մարտի 22, Պետերբուրգ.— *Նամակ Կ. Հայրապետյանին Դր-Պետրովիչի (?) մասին։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV, 264։*

Մարտի 26.— *Ռեակցիոն-կղերական «Մեղու Հայաստանի» լրագրում «Հյուսիսափայլի» դեմ գրված հոդվածի հեղինակը (Հովսեփ Չերքեզյան) հատկապես դժգոհում է Կոմս Էմմանուելի «Հիշատակարանում» կատարված մերկացումների առթիվ (նկատի ունի «Հյուսիսափայլի» 1858 թ. №№ 7 և 8-ը). նշում է, որ Նալբանդյանը «աննեբելի և համարձակ արհամարհանքով» է խոսում Ս. եպ. Զա-*



Աշտարակի վիմագրերից

լալյանի, Ներսես Աշտարակեցու, Գ. վ. Այվազովսկու, առհասարակ ամբողջ հոգևորական դասի և «մեր հայոց ազգի նշանավոր և երեվելի անձանց» մասին. հոդվածագիրը դժգոհում է, որ Նալբանդյանը «Մեր հոգևոր հովիվներին և ազգի առաջնորդներին կոչում է «սուտ ազգասերներ, օրսկուրանտներ, եզվիտներ, Մաքիավելու հոգով տոգորված կամ խմորված մարդիկներ, խաբեբաներ, խավարի զավակներ, հիմարներ, կամակոր տգետներ, ստության սպասավորներ, խավարի զինվորներ, ճշմարտության հակառակորդներ, խավարասերներ և այլն, և այլն»։ «Մեղու Հայաստանի», 1860, № 13, 100։

Մարտի 27, Պետերբուրգ.— *Նամակ Կ. Հայրապետյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 264։*

Մարտի 28, Պետերբուրգ.— *Նամակներ Կ. Ուստիմովիչին և Ստ. Նազարյանին։ Չեն պահպանվել։* Նույն տեղը։

Մարտի 29, Պետերբուրգ.— *Նամակներ Կ. Հայրապետյանին և իր եղբորը՝ Սերոբ Նալբանդյանին։ Չեն պահպանվել։* Նույն տեղը։

Մարտի 30, Պետերբուրգ.— *Եղբոր՝ Լուսեղեն Նալբանդյանի գործի առթիվ նամակ է գրում Կ. Հայրապետյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 67։*

Նույն օրը, Պետերբուրգ.— *Նամակ եղբորը՝ Լուսեղեն Նալբանդյանին. գրում է, որ ամառն անպատճառ Նոր-Նախիջևանում կլինի. իսկ նրա (եղբոր) գործի մասին հայտնում է, թե գրել է Կ. Հայրապետյանին, որ վերջինս հոգա։* Նույն տեղը։

Նույն օրը, Պետերբուրգ.— *Նամակներ եղբորը՝ Ղազարոս Նալբանդյանին և Կ. Հայրապետյանին։ Չեն պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 264։*

Ապրիլի 4.— *Պետերբուրգի համալսարանի Արևելյան ֆակուլտետի հայ-վրաց-թաթարական բաժնում Նալբանդյանը քննություն է տալիս պատմությունից։* Երկերի լիակատար ժող., *IV, 276։*

Նույն օրը.— *Սկայորդին (Զարմայր Մսերյանը) Մոսկվայից «Մեղու Հայաստանի» լրագրին գրած իր նամակում, հիմնվելով*

«Հյուսիսափայլի» 1860 թ. առաջին ամսաթերակի խմբագրական «Մանուցման» այն տողերի վրա, թե «Հյուսիսափայլի» բովանդակ ծանրությունը մնում է այժմ նորա (Ստ. Նազարյանի) վերա», եզրակացնում է, թե «Կոմս Էմմանուելը այսուհետև գործակից լինելու չէ պ. Նազարյանցին»։ Ռեակցիոն մամուլը, ի դեմս «Մեղու Հայաստանի» լրագրի, առանձին գոհունակությամբ էր պնդում «Հյուսիսափայլից» Նալբանդյանի հեռանալու լուրը, արտահայտելով ամբողջ ռեակցիոն բանակի բուռն ցանկությունը՝ որքան հնարավոր է շուտ ազատվել Նալբանդյանի նման «վտանգավոր» հակառակորդից։

Նույն նամակում Սկայորդին հայտնում է, որ Ան. Սուլթանշահի (Նալբանդյանի աշխատակցությամբ գրած) «Հայոց ազգի լուսավորիչքը» ինքնուրույն գործ չէ, այլ թարգմանված է «Современник»-ի 1859 թ. № 8-ից։ «Մեղու Հայաստանի», 1860, № 17, 129—130։

Ապրիլի 6, Պետերբուրգ.— *Նամակ Ստ. Նազարյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 264։*

Նույն օրը.— *Գ. վ. Այվազովսկին, հիմնվելով Հովհ. Լազարյանի՝ իրեն գրած նամակի վրա, հայտնում է Խալիբյանին, թե «Հյուսիսափայլը» դադարեցված է և կառավարությունը չի թույլատրել հայերեն լեզվով նոր լրագիր հրատարակել։*

Փաստը վկայում է, թե այդ ժամանակ որքան մեծ է եղել «Հյուսիսափայլը» փակելու վտանգը, որ նրա հակառակորդները խոսում են դրա՝ իբրև արդեն կատարված փաստի մասին։

Գրական թանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Ապրիլի 8, Պետերբուրգ.— *Նամակ Մալյում Հազարյանին՝ Պոդիս։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 264։*

Ապրիլի 10, Պետերբուրգ.— *Նամակ Մատթեոս Չուխաճյանին, որպես պատասխան վերջինիս՝ ն. թ. մարտի 13-ի կոնդակի։* Երկերի լիակատար ժող., *II, 328—329։*

Ապրիլի 11, Պետերբուրգ.— *Համալսարանում քննություն է տալիս ռուսաց լեզվից։* Երկերի լիակատար ժող., *IV, 276։*

Նույն օրը, Պետերբուրգ.— *Նամակ Կ. Ուստիմովիչին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 264։*

Ապրիլի 13, Պետերբուրգ.— *Նամակ Ստ. Նազարյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Ապրիլի 14, Պետերբուրգ.— *Նամակ Ստ. Նազարյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Ապրիլի 19, Պետերբուրգ.— *Նամակ Ստ. Նազարյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ Կ. Հայրապետյանի նամակը Նալբանդյանին. առաջարկում է նրան Հարությունն Աճեմյանի հետ մեկնել Կալկաթա՝ հնդկահայերի կտակների գործով։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV*, 68։

Ապրիլի 20, Պետերբուրգ.— *Նամակ Մելքոն Փանյանին՝ Հովհ. Պատկանյանի աշխատանքները (նկարները) տարածելու գործում նրան աջակցելու մասին։* Երկերի լիակատար ժող., *IV*, 67—68։

Նույն օրը, Պետերբուրգ.— *Նամակ Ղազարոս Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV*, 264։

Ապրիլի 21.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» հինգերորդ (մայիսի) ամսատետրակը։ Նալբանդյանի գրչին է պատկանում՝*

«Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրության թերթերից։ Համառակաբար խոսվածք ազգին վերաբերյալ.— Պարոն Շահրեդի և պ. Տիրատուրյանի նամակները.— Վեհափառ կաթողիկոսի պատկերը» (էջ 378—396)։ Երկերի լիակատար ժող., *I*, 452—467։

Ապրիլի 22, Պետերբուրգ.— *Համալսարանում քննություն է հանձնում հայոց լեզվից։* Երկերի լիակատար ժող., *IV*, 276։

Նույն օրը, Պետերբուրգ.— *Նամակներ (2) Մ. Վեհապետյանին։ Չեն պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV*, 264։

Ապրիլի 26, Պետերբուրգ.— *Համալսարանում քննություն է տալիս աստվածաբանությունից։* Նույն տեղը։

Ապրիլի 27, Պետերբուրգ.— *Նալբանդյանն ստանում է Կ. Հայրապետյանի Ն. թ. ապրիլի 19-ի նամակը՝ հնդկահայերի թողած ժառանգության գործով Կալկաթա մեկնելու առաջարկությամբ։* Երկերի լիակատար ժող., *IV*, 68։

Ապրիլի 30, Պետերբուրգ.— *Նալբանդյանն ի պատասխան Կ. Հայրապետյանի առաջարկության՝ հնդկահայերի կտակների գործով Կալկաթա մեկնելու վերաբերյալ, մանրամասն շարադրելով նման ճանապարհորդության և գործի հանգամանքները բոլոր կողմերից՝ առաջարկում է իր պայմանները։* Երկերի լիակատար ժող., *IV*, 68—73։

Նույն օրը, Պետերբուրգ.— *Մի այլ նամակ Կ. Հայրապետյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV*, 264։

Մայիսի 1, Պետերբուրգ.— *Նամակ Մելքոն Փանյանին։ Նալբանդյանը խնդրում է իրեն ուղարկել 1857 թ. Կոստանդնուպոլսում տպագրված աշխարհաբար Աստվածաշնչի մի օրինակը, որն իրեն շատ անհրաժեշտ է՝ «Հյուսիսափայլի» 1860 թ. №№ 1 և 2-ում արված դատողությունների առթիվ գրելու մի հոդված, որի մեջ քննելու է «մեր Աստվածաշունչի թերությունքը»։* Երկերի լիակատար ժող., *IV*, 74։

Նույն օրը, Դորպատ.— *Նազարյանը Սոդա Ալեքսանդրյանին գրում է, թե «Հյուսիսափայլի» 1860 թ. №№ 2 և 3-ի ուշացման պատճառը, ինչպես Պետերբուրգում իրեն հայտնել է Նալբանդյանը, փոստի անկանոն աշխատանքն է եղել. ապրիլի 14-ին գրաքննությանն ուղարկված համարներն ստացվել են միայն ապրիլի 24-ին։* Գրական թանգարան, վ. 134/10։

Մայիսի 3, Պետերբուրգ.— *Համալսարանում քննություն է տալիս վրաց լեզվից։* Երկերի լիակատար ժող., *IV*, 276։

Մայիսի 5, Պետերբուրգ.— *Համալսարանում քննություն է տալիս թուրքերենից։* Նույն տեղը։

Նույն օրը, Պետերբուրգ.— *Նամակ Ստ. Նազարյանին, «ձեռագրով» (հոդված «Հյուսիսափայլի» համար?)։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV*, 264։

Մայիսի 7.— *Ստ. Նազարյանը Աբել եպ. Մխիթարյանին ուղղած նամակում հայտնում է, որ «Հյուսիսափայլի» 1860 թ. №№ 1, 2 և 3-ն արդեն ուղարկված են բաժանորդներին, իսկ № 4-ը թեպետ տպագրված է, բայց գրաքննական կոմիտեից արձակման թույլտվություն դեռևս չի ստացված։* «Մուրճ», *1902, № 5, 143։*

Նույն օրը.— *«Մեղու Հայաստանի» լրագրում տպագրված նամակում «Հովհան Տիրանյան Աբրահամբեգյան» կեղծ անվան տակ թաքնված ռեակցիոն հրապարակախոսներից մեկը «Մեռելահարցուկ» վեպի և «Հիշատակարանի» մերկացումներից խոցված, Նալբանդյանին անվանում է «խռովարար», «չարաբարո», իսկ նրա երկերը՝ «խռովասեր գրվածքներ»։ Նամակագիրը պատմում է, թե ինչպես Մոսկվայի վաճառականներից մեկը (ակնարկից երևում է, որ դա Հովնաթանյանի նախատիպը հանդիսացող Հովհաննես Հովնանյանն է) Նալբանդյանի վեպը կարդալիս խիստ գազազում է, տեսնելով, որ «Հրատարակողը... խոստացած նպատակին անհարմար ու խռովասեր գրվածքներ է տպագրում յուր խռովարար օգնականի [Նալբանդյանի] ննդավոր խորհուրդներին հետևելով»։*

Նամակագիրը վերջում պատմելով «Հայոց ազգի լուսավորիչքը» գրվածքի բովանդակությունը, ավելացնում է, թե ինքը շատերից է լսել, որ դա գրված է Խալիպյան ուսումնարանի վրա։

«Մեղու Հայաստանի», *1860, № 19, 149։*

Մայիսի 13, Պետերբուրգ.— *Նամակներ Ստ. Նազարյանին և Հովհ. Բերբերյանին։ Չեն պահպանվել։*


Երկերի լիակատար ժող., *IV, 264։*

Մայիսի 19, Պետերբուրգ.— *Նամակ Հովհ. Բերբերյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Մայիսի 20, Պետերբուրգ.— *Նամակ Ստ. Նազարյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Մայիսի 24.— *Գործադրության մեջ է մտնում արևմտահայերի «ազգային սահմանադրությունը»։*

Սարուխան, Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թյուրքիայում, Ա. հատոր, Թիֆլիս, 1912, 16։



Կարապետ Հայրապետյան

Նույն օրը, Պետերբուրգ.— *Նամակ Ստ. Նազարյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV*, 264։

Մայիսի 30.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» վեցերորդ (հունիսի) ամսատետրակը։*

Նալբանդյանի գրչին է պատկանում՝

«Հիշատակարան Կոմս Էմմանուելի օրագրության թերթերից»։ *Պ. Չերքեզյանցի հայհոյությունքը.— Պ. Խուդաբաշյանի գիրքը.— պ. Բաբկենյանցի նամակը.—Սկայորդու տարածած լուրերը.—«Հյուսիսափայլը» և «Հիշատակարանս».— Կ. Պոլիսի հայոց և հունաց պատրիարքների փոփոխությունքը (էջ 462—486)։*

Հունիսի 1, Պետերբուրգ.— *Նամակներ Ստ. Նազարյանին և Կ. Հալրապետյանին։ Չեն պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV*, 264։

Հունիսի 2, Պետերբուրգ.— *Նամակ Հովհ. Բերբերյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Հունիսի 3, Պետերբուրգ.— *Նամակ Ստ. Նազարյանին։ Չի պահպանվել։ Ուղարկում է նաև հերթական «Հիշատակարանը», որ տպագրվում է «Հյուսիսափայլի» նույն թվականի 6-րդ ամսատետրակում. դա «Հիշատակարանի» վերջին հատվածն է։ Ճանապարհորդությունը, ապա բանտարկությունն ու աքսորը Նալբանդյանին հնարավորություն չտվին շարունակելու իր «Հիշատակարանը»։* Նույն տեղը։

Հունիսի 6, Պետերբուրգ.— *Նամակ Ստ. Նազարյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

[Մինչև հունիսի 7].— *Նալբանդյանը գրում է* «Об изучении армянского языка в Европе и научном значении армянской литературы» *դիսերտացիան և ներկայացնում է Պետերբուրգի Համալսարանի Արևելյան ֆակուլտետի դեկանին՝ կանդիդատի աստիճան ստանալու համար։* Երկերի լիակատար ժող., *II*, 330—345։

Հունիսի 7.— *Պետերբուրգի Համալսարանի Արևելյան ֆակուլտետի դեկան Ա. Մուխինսկու ստորագրությամբ Նալբանդյանին տրվում է վկայական, որ նա, որպես նույն Համալսարանի Արևելյան*

ֆակուլտետի հայ-վրաց-թաթարական բաժնի կողմնակի (посторонний) ունկնդիր, այդ բաժնի ծրագրով քննություն է հանձնել և դիսերտացիա ներկայացնելով, արժանացել է կանդիդատի աստիճանի։

Երկերի լիակատար ժող., *IV, 313—314։*

Հունիսի 8, Պետերբուրգ.— *Նամակներ Կ. Հալրապետյանին, Ղազարոս Նալբանդյանին և Մ. Վեհապետյանին։ Չեն պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV, 264։*

Հունիսի 10, Պետերբուրգ.—*Նամակ Ստ. Նազարյանին։ Չի պահպանվել։*

Նույն տեղը։

Հունիսի 15.— *Նալբանդյանը Պետերբուրգից մեկնում է։*

Երկերի լիակատար ժող., *IV, 272։*

Հունիսի 16.— *Հասնում է Մոսկվա։*

Նույն տեղը։

Նույն օրը.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» յոթերորդ (հուլիսի) ամսատետրակը։*

Նալբանդյանի գրչին է պատկանում՝

«Մանկության օրեր», Կոմս Էմմանուել ստորագրությամբ (էջ 22—23)։

Հունիսի 20.— *Հ. Սվաճյանի «Մեղուն» արտատպում է Կոմս Էմմանուելի «Հիշատակարանը»՝ «Հյուսիսափայլի» 1860 թ. 5-րդ ամսատետրակից։*

«Մեղու», *1860, № 101, 130—133։*

Նույն համարում «Մեղուի» խմբագրությունն իր ընթերցողներին հրավիրում է բաժանորդագրվել «Հյուսիսափայլին»՝ Ընթերցասիրաց ընկերության դրասենյակում (էջ 135)։ Նույն ծանուցումը կրկնվում է «Մեղուի» նաև հաջորդ համարներում։

Հունիսի 25.— *Ռեակցիոն-կղերական մամուլն ի դեմս «Մեղու Հայաստանի» լրագրի, «Հյուսիսափայլի» հրատարակությունը դադարեցնելու պահանջ է դնում, համարելով այդ «հասարակության» (այսինքն՝ կղերա-աղայական դասի) համար նույնքան «օգտակար», որքան «մահը մի նշավակյալ չարագործ և նենգամիտ մարդու»։*

«Մեղու Հայաստանի», *1860, № 26, 204։*

Հունիսի 27, Պետերբուրգ.— *Համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետի դեկանը համալսարանի ռեկտորին զեկուցում է Նալբանդյանի «Об изучении армянского языка в Европе и научном значении армянской литературы» դիսերտացիայի մասին։*

Անտիպ երկեր, *287։*

Նույն օրը.— *Նալբանդյանը Մոսկվայից մեկնում է Նոր-Նախիջևան։*

Երկերի լիակատար ժող., *IV, 272։*

Հուլիսի 6.— *Նալբանդյանը հասնում է Նոր-Նախիջևան։*

Նույն տեղը։

Հուլիսի 9.— *Գ. վ. Այվազովսկին Հ. Խալիբյանին գրում է, թե Պետերբուրգից իր ստացած տեղեկության համաձայն, Նալբանդյանը Նոր-Նախիջևան է մեկնել. այնուհետև հույս է հայտնում, որ Նախիջևանում Նալբանդյանն «իրեն խելքին ու խոսքին հետևող քիչ մարդ կգտնե»։*

Գրական բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Հուլիսի 15.— *Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ Կարապետ Հայրապետյանի նախագահությամբ տեղի է ունենում հասարակական ժողով՝ նվիրված հնդկական կտակների գործով Կալկաթա ուղարկելու համար պատվիրակներ ընտրելու հարցին։ Ժողովն ընթանում է Նալբանդյանականների և Խալիբյանականների բուռն պայքարի մթնոլորտում։ Նալբանդյանի թեկնածությունը հանդիպում է Խալիբյանականների կատաղի դիմադրությանը։ Այնուամենայնիվ, Նալբանդյանն ընտրվում է. նրան ընտրողները լինում են մեծ մասամբ քաղաքի արհեստավորության ներկայացուցիչները. «ռամիկները և ստորադաս ժողովուրդն ստորագրեցին ընտրությունը, որոնք ո՛չ գիր գիտեն և ո՛չ գրի զորությունը (տե՛ս սույն «Տարեգրությունը», 1860, օգոստոսի 9)։ Որպես երկրորդ պատվիրակ, ընտրվում է սևաստոպոլցի վաճառական Հարություն Աճեմյանը։ Խալիբյանականները ցանկանալով Նալբանդյանի թեկնածությունը տապալել, առաջարկում են պատվիրակների ընտրության մասին հայտնել թեմի առաջնորդ Գ. վ. Այվազովսկուն և ստանալ նրա համաձայնությունը, հավատացած լինելով, որ նա Նալբանդյանի թեկնածությունը չի հաստատելու։ Սակայն Նալբանդյանականների ճնշման տակ ժողովն այդ առաջարկը մերժում է։*

Ե. Շահազիզ, Մի էջ Մ. Նալբանդյանի կենսագրությունից,

«Տարազ», *1900, № 7, 98։*

Հուլիսի 18.— *Սկայորդին (Զարմայր Մսերյանը) Մոսկվայից «Մեղու Հայաստանի» լրագրին հաղորդում է. «Հյուսիսափայլի» վեցերորդ տետրակը դեռ չհրատարակված, ամենայն քունջերում խոսում էին նորա մեջ տպագրելի հոդվածոց վերա [«Հյուսիսափայլի» այդ համարում է տպագրված Կոմս Էմմանուելի վերջին «Հիշատակարանը»], որո վասն և նորա գուրս գալուն սպասում էին համարյա թե ամենեքյանք օրեօր, ժամե ի ժամ, րոպե ի րոպե»։*

«Մեղու Հայաստանի», *1860, № 32, 252։*

Հուլիսի 19, Նոր-Նախիջևան.— *Նամակ Հ. Աճեմյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 264։*

Հուլիսի 26, Նոր-Նախիջևան.— *Նամակներ Ղ. Խաֆաֆյանին և Խալիբյանին (?)։ Չեն պահպանվել։* Նույն տեղը։

[Օգոստոսի 5].— *Խալիբյանականներից 10 հոգի Նոր-Նախիջևանի քաղաքային Մագիստրատ բողոք են ներկայացնում Նալբանդյանի ընտրության դեմ, բայց քաղաքագլուխ Կ. Հայրապետյանը խալիբյանականների այդ բողոքը թողնում է անհետևանք։*

Ե. Շահազիզ, Մի էջ Մ. Նալբանդյանի կենսագրությունից, «Տարազ», *1900, № 7, 98։*

Օգոստոսի 8, Նոր-Նախիջևան.— *Քաղաքային Մագիստրատը հաստատում է Նոր-Նախիջևանի հասարակության կողմից, հնդկահայ կտակների գործի առթիվ, Նալբանդյանին տված լիակատար լիազորության վկայականը՝ «երեսփոխանական թուղթը»։*

Երկերի լիակատար ժող., *IV, 282—283։*

Օգոստոսի 9.— *Հնդկահայերի կտակների գործով Նալբանդյանի ընտրությունը և նրա Կալկաթա մեկնելը խափանելու նպատակով Խալիբյանը Մատթեոս կաթողիկոսին ուղղած նամակում Նալբանդյանին բնութագրում է որպես «անկարգ և չար ճանապարհի» վրա կանգնած անձնավորություն, որին, այդ պատճառով, հալածում էր դեռևս Ներսես կաթողիկոսը. այնուհետև Խալիբյանը հայտնում է, թե Նալբանդյանի ընտրությանը դեմ էին «քաղաքի իշխաններից բազմաթիվ առաջադաս անձնավորություններ», թե նրա ընտրությունն ատորագրել են «ռամիկները և ատորադաս ժողովուրդը, որոնք ո՛չ գիր գիտեն և ո՛չ գրի գործություն»։*

Ե. Շահազիզ, Դիվան Միքայել Նալբանդյանի, *357։*

Օգոստոսի 13, Նոր-Նախիջևան.— *Հ. Խալիբյանի յուրացրած հասարակական դումարների հարցի առթիվ Նոր-Նախիջևան քաղաքի և շրջակա գյուղերի բնակիչների կողմից ընտրված պատգամավորները, պաշտոնական գրությամբ երեսփոխան են նշանակում Նալբանդյանին և լիազորում են նրան՝ կաթողիկոսի առաջ պաշտպանելու Նոր-Նախիջևանի հասարակության շահերն ընդդեմ Հ. Խալիբյանի և Գ. վ. Այվազովսկու։* Երկերի լիակատար ժող., *IV, 75։*

Ձմմտ. Գրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 170։*

Նույն օրը, Նոր-Նախիջևան.— *Նալբանդյանը Կ. Հայրապետյանից ստանալով հնդկահայ կտակներին վերաբերող փաստաթղթերը և հազար ռուբլի ճանապարհածախս՝ տալիս է ստացագիր («Ջեռնագիր»)։* Երկերի լիակատար ժող., *IV, 282—283։*

Օգոստոսի 14, Նոր-Նախիջևան.— *Քաղաքագլուխ Կ. Հայրապետյանի անունից Նալբանդյանը գրություն է գրում Մատթեոս կաթողիկոսին։ Շարադրելով Հնդկաստանի հայերի կողմից Նոր-Նախիջևանին արված կտակների հանդամանքները, և հայտնելով, որ հուլիսի 15-ին հասարակական ժողովը մոտ երեք հարյուր հոգու մասնակցությամբ լիազոր-ներկայացուցիչներ է ընտրել Նալբանդյանին և Հարություն Աճեմյանին՝ հիշյալ կտակների գործով Կալկաթա մեկնելու համար, Հայրապետյանը խնդրում է հաստատել Մագիստրատի տված երեսփոխանական թուղթը։ Կտակներից ստացված գումարը հասարակական դումարների հետ միասին (նկատի ունի Խալիբյանի յուրացումները) հնարավորություն կտան Նոր-Նախիջևանում կառուցել «նոր ավազան լուսավորության»՝ դպրոց։*

Գրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 123/187, թ. 66։*

Օգոստոսի 17.— *Նալբանդյանը Նոր-Նախիջևանից մեկնում է Էջմիածին։* Երկերի լիակատար ժող., *III, 346։*

Օգոստոսի 20.— *Հ. Սվաճյանի «Մեղուն» արտատպում է «Մանկության օրեր» բանաստեղծությունը՝ «Հյուսիսափայլի» 1860 թ. 6-րդ ամսատետրակից։* «Մեղու», *№ 107, 183։*

Օգոստոսի 24.— *Նալբանդյանը հասնում է Թիֆլիս։* Երկերի լիակատար ժող., *III, 346։*

Օգոստոսի 24—սեպտեմբերի 3, Թիֆլիս.— *Նալբանդյանը հանդիպումներ է ունենում Ղազարոս Աղայանի, Միքայել Միանսարյանի, Պետրոս Սիմոնյանի և ուրիշների հետ։ Ղ. Աղայանը Մ. Նալբանդյանի հետ ունեցած հանդիպման մասին գրում է. «Այս մարդուն [Նալբանդյանին] առաջին անգամ ես տեսել էի Թիֆլիս, ուր եկել էր էջմիածին գնալու համար։ Այդ ժամանակ մենք հափշտակվեցանք նրա ճարտար հայախոսության վրա։ Գրական լեզվով մենք դեռևս թոթովում էինք. այդպես չէր Նալբանդյանցը. նրա լեզուն արդեն կազմակերպվել էր և խոսում էր այնպես, ինչպես որ գրվում էր»։*

Ղ. Աղայան, Իմ կյանքի գլխավոր դեպքերը, Երկեր, III, 85։

Օգոստոսի 25.— *Մտ. Նազարյանը գրաքննական կոմիտեին հայտնում է, որ Ռափայել Պատկանյանն իր կողմից նշանակված է «Հյուսիսափայլի» աշխատակից և խնդրում է այսուհետև նրանից ընդունել «Հյուսիսափայլում» տպագրվելու համար գրաքննական կոմիտե ներկայացվող հոդվածները։*

Դեպան բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 316։

Օգոստոսի 26, Թիֆլիս.— *Նամակներ Կ. Հայրապետյանին (երկու նամակ) և Ղ. Նալբանդյանին։ Չեն պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., IV, 265։

Նույն օրը.— *Գ. վ. Այվազովսկին Հ. Խալիբյանին հայտնում է, թե Նալբանդյանի մասին արդեն գրել է էջմիածնի Սինոդի դատախազ Միրաքյանին, գրելու է նաև բարձրագույն իշխանության, որպեսզի կանխվեն Նալբանդյանի և նրա կողմնակիցների գործողությունները և թույլ չտրվի, որ նրանք հաղթեն։*

Դեպան բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Օգոստոսի 27, Թիֆլիս.— *Նամակ Մատթեոս Զուխաճյանին։ Չի պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., IV, 265։

Նույն օրը.— *Կովկասի փոխարքայի դիվանատունն ստանում է «անձնագիր՝ արտասահման մեկնելու համար։*

Երկերի լիակատար ժող., III, 382։

Նույն օրը.— *Գ. վ. Այվազովսկին Սինոդին ուղարկելով Պարսկաստանի և Հնդկաստանի թեմի առաջնորդ Թադեոս արքեպիսկոպոսի՝ իրեն ուղղած գրությունը, խնդրում է տալ նրան վավերացրած հավատարմագիր՝ Կատարինե Խոջամալյանի կտակը ձեռք բերելու համար։ Ռեակցիոն-կղերական բանակը, Գ. վ. Այվազովսկու դլխավորությամբ, այդպիսով աշխատում էր խանգարել Նալբանդյանին հնդկահայ կտակների գործում և կանխելով նրան՝ կորզել հասարակապատական գումարները։*

Մատենադարան, Սինոդի օրագրություններ, 1860, թ. 234—244։

Սեպտեմբերի 3, Թիֆլիս.— *Նամակ Կ. Հայրապետյանին։ Չի պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., IV, 265։

Նույն օրը.—*Նալբանդյանը Թիֆլիսից մեկնում է էջմիածին։*

Երկերի լիակատար ժող., IV, 272։

Սեպտեմբերի 6.— *Հասնում է էջմիածին։*

Երկերի լիակատար ժող., IV, 75։

Նույն օրը.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» 11-րդ (նոյեմբերի) ամսատետրակը.*

Նալբանդյանի գրչին է պատկանում՝

«Նամակ Կոմս Էմմանուելին», Սարգիս Տեր-Միքայելյան Վարշամյանց աստրագրությամբ (էջ 384—396)։

Սեպտեմբերի 6—հոկտեմբերի 15.— *Նալբանդյանը լինում է Օշական գյուղում և գրում է «Օշական» բանաստեղծությունը (առաջին տպագրությունը՝ «Մեղու», 1860, № 117)։*

Երկերի լիակատար ժող., I, 98—99։

Սեպտեմբերի 7, էջմիածին.— *Մատթեոս կաթողիկոսին ներկայացնելով Խալիբյանի յուրացրած գումարների գործը վարելու համար Նոր-Նախիջևանի հասարակության իրեն տված հավատարմագիրը, Նալբանդյանը պաշտոնական գրությամբ հայտնում է, որ պատրաստ է թե՛ գրավոր և թե՛ բանավոր պարզաբանել գործը՝ հանուն ազգի իրավունքների պաշտպանության։*

Երկերի լիակատար ժող., IV, 75։

Սեպտեմբերի 8, էջմիածին. — *Նամակ Հարություն Համաշխյուռին։ Չի պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., IV, 265։

Սեպտեմբերի 10.— *Հ. Սվաճյանի «Մեղուն» արտատպում է «Ազատություն» բանաստեղծությունը՝ «Հյուսիսափայլի» 1859 թ. 9-րդ ամսատետրակից։*

«Մեղու», 1860, № 109, 198—199։

Սեպտեմբերի 11, էջմիածին.— *Նամակ Կ. Հայրապետյանին։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV, 265։*

Սեպտեմբերի 13.— *Նալբանդյանի հակառակորդներից ոմն Հակոբ Սուրենյան Մատթեոս կաթողիկոսին հայտնում է, թե Նալբանդյանը Նոր-Նախիջևանի քաղաքային Մագիստրատում, բազմության ներկայությամբ, «անվայել» խոսքեր է ասել կաթողիկոսի և թեմական առաջնորդի (Գ. վ. Այվազովսկու) հասցեին։*
Գրական բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։


Սեպտեմբերի 14, էջմիածին.— *Նամակ Մտ. Նազարյանին։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV, 265։*

Սեպտեմբերի 19, էջմիածին.— *Նամակներ Կ. Հայրապետյանին, Դ. Նալբանդյանին, Պ. Սիմոնյանին, Հ. Քալանթարյանին։ Չեն պահպանվել։*
Նույն տեղը։

Սեպտեմբերի 23.— *Սինոդը լսում է Նալբանդյանի՝ սեպտեմբերի 7-ի «Հայտարարությունը» Խալիբյանի յուրացրած հասարակական գումարների մասին։ Հակառակ Նալբանդյանի ներկայացրած պերճախոս փաստերին, Սինոդն, ըստ էության, պաշտպանելով Խալիբյանին և Այվազովսկուն, որոշում է վերջինից «բացատրություն» պահանջել, նպատակ ունենալով այդպիսով ձգձգել գործի քննարկումը։*
Մատենադարան, Սինոդի օրագրություններ, *1860, թ. 132—146։*
Տե՛ս նաև սույն Տարեգրությունը, *1860, հոկտեմբերի 10։*

Սեպտեմբերի 26, էջմիածին.— *Նամակներ Հ. Վարդազարյանին (?), Կ. Հայրապետյանին և Պ. Սիմոնյանին։ Չեն պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV, 265։*

Հոկտեմբերի 10, էջմիածին.— *Նոր-Նախիջևանի հասարակական ժողովի ներկայացուցիչներին ուղղած պաշտոնական գրությամբ Նալբանդյանը հաղորդում է, որ էջմիածին հասնելու հետևյալ օրվանից կաթողիկոսի և Սինոդի առաջ հարուցել է Խալիբյանի յուրացրած գումարների խնդիրը, սակայն, չնայած իր բերած փաստերին, Սինոդը բացահայտ կերպով պաշտպանել է Խալիբյանին ու Այվազովսկուն և խնդիրը թողել առկախ։ Նալբանդյանն ավելացնում է, որ եթե ինքն արտաքսահման մեկնելու համար չշտապեր, կբողոքեր*



Գաբրիել Տեր-Հովհաննիսյան

Սինոդի ապօրինի գործողությունների դեմ. նա հորդորում է հասարակական ժողովի ներկայացուցիչներին՝ շարունակել այդ գործը և չթողնել, որ ժողովրդական գումարները կորչեն, քանի որ այդ գումարներով պետք է բաց արվի ուրիշ դպրոցներից շատ բանով գերազանց մի ազգային դպրոց։ Երկեր լիակատար ժող., *IV*, 78—81։

Նույն օրը.— *Կաթողիկոս Մատթեոս Զուխաճյանը հաստատում է Նոր-Նախիջևանի հասարակության ն. թ. հուլիսի 15-ի որոշումը՝ Նալբանդյանին և Հ. Աճեմյանին հնդկահայերի կտակների գործի լիազոր-ներկայացուցիչներ ընտրելու մասին և այդ առթիվ նրանց տրված վկայականը՝ «երեսփոխանական թուղթը»։*

Երկեր լիակատար ժող., *IV*, 76։

Նույն օրը, էջմիածին. — *Նալբանդյանը պաշտոնական գրությամբ հայտնում է Կ. Հայրապետյանին, որ կաթողիկոսը հաստատել է «երեսփոխանական թուղթը», ինչպես և հուլիսի 15-ի հասարակական ժողովի եզրակացությունը՝ իրեն և Աճեմյանին երեսփոխաններ ընտրելու վերաբերյալ՝ հակառակ Խալիբյանի և Այվազովսկու կողմնակիցների դրության, որով նրանք կաթողիկոսին խնդրել էին չհաստատել այդ ընտրությունը։ Այնուհետև հաղորդում է, որ երկու կամ երեք օրից մեկնելու է Թիֆլիս՝ Կովկասի փոխարքայից համապատասխան փաստաթղթեր ստանալու և «երեսփոխանական թուղթը» հաստատել տալու համար։ Թիֆլիսում մի քանի օր մնալուց հետո, երբ ձեռքերպվեն փաստաթղթերը, կմեկնի Փոթի և այնտեղից շոգենավով՝ Կոստանդնուպոլիս։*

Երկեր լիակատար ժող., *IV*, 76—77։

Հոկտեմբերի 11, էջմիածին.— *Նամակ Կ. Հայրապետյանին։ Չի պահպանվել։*

Երկեր լիակատար ժող., *IV*, 265։

Հոկտեմբերի 14, էջմիածին.— *Մատթեոս կաթողիկոսի անունից Նալբանդյանը գրում է մի պաշտոնական գրություն (նախ հայերեն բնագիրը և ապա դրա ռուսերեն թարգմանությունը) Կովկասի փոխարքա Ա. Ի. Բարյատինսկուն։ Պարզաբանելով Հնդկաստանի հայերի՝ Նոր-Նախիջևան քաղաքին թողած կտակների հարցը, խնդրում է, որպեսզի փոխարքան համապատասխան բանակցություններ վարի՝ Կալկաթայում Նալբանդյանին և Աճեմյանին Նոր-Նախիջևանի հասարակության լիազոր-ներկայացուցիչներ ճանաչել տա-*

լու համար։ Գրության վերջում հիշեցնում է, որ փոխարքան ընդառաջելով կաթողիկոսի միջնորդությանը, ո՛չ միայն «բարերարած» կլինի Նոր-Նախիջևանի հասարակությանը, այլև նպաստած կլինի, որ մի նշանավոր դումար օտար պետությունից՝ Անգլիայից փոխադրվի Ռուսաստան։

Գրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 123/187, 80։*

[Հոկտեմբերի 1—15], էջմիածին.—*Նալբանդյանն ականատես է լինում, թե ինչպես էջմիածնի հոգևորականները ծեծում են հայ մշակներին, երբ վերջիններս պահանջում են իրենց աշխատանքի վարձը։*

«Երկու տողում» Նալբանդյանն այդ մասին պատմում է.

«...Մեք այդ ժպիրհ ընթացքը հոգևորների նկատեցինք նաև էջմիածնի մեջ (1860, հոկտեմբեր)։ Մի առավոտ, սննկիս առաջը բարձրացած աստիկ աղմուկից և աղաղակից յոտիված դուրս եկա պատճառն իմանալու համարւ ծավելով տեսա, որ երկու ծախսարար աբեղայք ծեծել են տալիս մի քանի հայ մշակներ, այն պատճառով, որ այդ մարդիկը առանց կերակրի մնալու պայմանով չկամեին աշխատիլ։ Եկեղ և անպաշտպան հայերի մեջքին բավական փայտ իջուցանելուց հետո, երեի թե այս հայկական ինկվիզիտորների կերքը չէր նստել, որովհետև նոցանից մինը՝ կարապետ անուն, անպատկառապես և միանգամայն կատաղած ինքը սկսեց աքացի և բռնցի չարդել արդեն դիշատվածներից մի խեղճ պատանի։ Քիթը բերանը արյունաթաթավ, մաղապուրծ փախավ դահճի ձեռքից ողորմելի պատանին...»։

Նալբանդյանն իր խորին զայրույթն արտահայտելով այս դեպքի առթիվ, կրոնական ժողովից պահանջում է՝ «Աստիկ պատվեր տալ բոլոր եկեղեցականներին, առանց աստիճանի և պաշտոնի խորության, չհամարձակվիլ ձեռք վերցնել կամ գավազան բարձրացնել հայոց ազգի գավակները գանակոծելու և գիշատելու համար (տե՛ս «Մեղու», թիվ 127). այդ հոգևորականությունն չէ՛, այլ անարգ դասնություն»։

«Երկու տող», Փարիզ, *1861, 31։*

Երկերի լիակատար ժող., *III, 28։*

Հոկտեմբերի 15, Երեկոյան ժ. 9.— *Նալբանդյանը էջմիածնից մեկնում է Թիֆլիս։*

Երկերի լիակատար ժող., *IV, 272։*

Հոկտեմբերի 15-ի գիշերը, ժ. 11.— *Հասնում է Երևան։ Հաջորդ առավոտյան այցի է գնում Քանաքեռ և ապա շարունակում է ճանապարհը դեպի Թիֆլիս։*

Գրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 123/30։*

Հոկտեմբերի 19.— *Հասնում է Թիֆլիս։*

Երկերի լիակատար ժող., *IV, 272։*

[Հոկտեմբերի 19-ից հետո], Թիֆլիս.— *Նամակ Մ. Վեհապետյանին։ Չի պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV, 265։*

Հոկտեմբերի 21, Թիֆլիս.— *Նամակ Կ. Հայրապետյանին։ Չի պահպանվել։*

Նույն տեղը։

Նույն օրը, Թիֆլիս.— *Նամակ «Կոռնկին» (?)։ Չի պահպանվել։*

Նույն տեղը։

Հոկտեմբերի 22, Թիֆլիս. — *Նամակներ Մ. Չուխաճյանին, Ե. վ. Կարապետյանին, քվաքեռներին (?), Գ. վ. Տեր-Մատթեոսյանին, եղիազար եպիսկոպոսին, Մ. վ. Բարամյանին, Հ. Քալանթարյանին։ Չեն պահպանվել։*

Նույն տեղը։

Նույն օրը, Թիֆլիս.— *Նամակ է գրում Երևան, բժիշկ Ագոստինին (?)։ Չի պահպանվել։*

Գրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 123/178բ։*

Հոկտեմբերի 24, Թիֆլիս.— *Նամակ Մ. Սանասարյանին։ Չի պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV, 265։*

Հոկտեմբերի 26, Թիֆլիս.— *Նամակ Կ. Եզյանին։ Չի պահպանվել։*

Նույն տեղը։

Հոկտեմբերի 28, Թիֆլիս.— *Նամակ Կ. Հայրապետյանին. հայտնում է, որ փոխարքայի դրասենյակից անհրաժեշտ փաստաթղթերը կստանա երկու-երեք օրից, և կշտապի դուրս գալ Թիֆլիսից, որպեսզի Փոթիում լինի նոյեմբերի 8-ին, երբ շոգենավը մեկնում է Տրապիզոն։*

Երկերի լիակատար ժող., *IV, 81—82։*

Նույն օրը, Թիֆլիս.— *Եվս երկու նամակ Կ. Հայրապետյանին։ Չեն պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV, 265։*

Նոյեմբերի 1, Թիֆլիս.— *Կովկասի փոխարքա Ա. Ի. Բարյատինսկին հաստատում է հնդկահայերի կտակների գործի առթիվ Նոր-Նախիջևանի հասարակության՝ Նալբանդյանին տված հավատարմագիրը («երեսփոխանական թուղթը») և պաշտոնական գրությամբ դիմում է Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին, որ վերջինս հիշյալ խնդրի մասին տեղեկացնի Անգլիայի կառավարությանը։*

Երկերի լիակատար ժող., *IV, 87։*

Նույն օրը, երեկոյան. — *Նալբանդյանը, չսպասելով երկրորդ պատվիրակ՝ Հարություն Ամեմյանին, որի ուղեկցությունը կարող էր խանգարել արտասահմանի ճանապարհորդության հետ կապված իր քաղաքական ծրագրերին, Թիֆլիսից շտապ մեկնում է Փոթի։*

Երկերի լիակատար ժող., *IV, 90։*

[Նոյեմբերի 1—13]. — *Հակաակորդները հետապնդում են Նալբանդյանին, նպատակ ունենալով արտասահման մեկնելուց առաջ նրան ձերբակալել տալ։ Տեղյակ լինելով թշնամիների դավերին, իր արտասահման մեկնելու ժամանակը Նալբանդյանը գաղտնի է պահում։ Թիֆլիսում նա հայտարարում է, թե ինքը երեք օրից կրկին վերադառնալու է էջմիածին, այնինչ շտապ մեկնում է Փոթի։ Իսկ այստեղ, երբ Հայրապետյանից տեղեկանում է, որ հետաքրքրվում են իր ո՛ւր լինելով, պատվիրում է պատասխանել, թե Նալբանդյանը Փոթիում չէ։ Գ. վ. Այվազովսկին Խալիբյանին գրած նամակում պատմելով, թե իբր Նալբանդյանն այնքան է շտապել, որ Փոթիում, առանց այլևս սպասելու շոգենավի, նստել է մի առագաստանավ և հապճեպ մեկնել Տրապիզոն, ավելացնում է. «Թուի թէ Նալպանան երկնչի ի Սիպիրէ»։*

Գրական բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Նոյեմբերի 7. — *Նալբանդյանը հասնում է Փոթի, ուր մնում է մինչև նոյեմբերի 13-ը՝ սպասելով շոգենավի։*


Երկերի լիակատար ժող., *III, 346, IV, 273։*

Նոյեմբերի 9. — *Կ. Հայրապետյանի նամակը Նալբանդյանին. հայտնում է, որ ուղարկում է 600 ֆ. ստերլինգ։ Նամակը հասցեագրված է՝ Կոստանդնուպոլսի ռուսական հյուպատոսարանի դրասենյակ։*

Գրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. *123/99։*


Նոյեմբերի 13. — *Նալբանդյանը Փոթիից մեկնում է Բաթում։*

Երկերի լիակատար ժող., *IV, 273։*



ՔԱՐՏԵԶ-ՍԽԵՄԱ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ 1860-1862 ԹԹ. ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ



Կազմեց՝ Խ. ԱՄԱՏԵՒՅԱՆ
Գծագրեց՝ Հ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՀՆԴԿԱՍՏԱՆ

1860, նոյեմբ. 14—1862, մայիսի 25

1 8 6 0

Նոյեմբերի 14.— *Նալբանդյանը հասնում է Բաթում և նույն օրը մեկնում Տրապիզոն։* Երկերի լիակատար ժող., *IV, 273։*

Նոյեմբերի 15.— *Հասնում է Տրապիզոն։* Նույն տեղը։

Նոյեմբերի 16, Տրապիզոն.— *Նամակ Մ. Սանասարյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 265։*

Նույն օրը.— *Տրապիզոնից մեկնում է Պոլիս։* Երկերի լիակատար ժող., *IV, 273։*

Նոյեմբերի 20.— *Ճանապարհին բազմաթիվ նեղություններ կրելով, հասնում է Պոլիս։* Երկերի լիակատար ժող., *IV, 90, 273։*

[Նոյեմբերի 20—դեկտեմբերի 21].— *Նալբանդյանը մասնակցում է Պոլսի հայոց Բարեգործական ընկերության հիմնադրմանը և ընկերության նիստերից մեկում ելույթ է ունենում։*
«Մամուլ», *1871, № 152, 377։*
«Նոր կյանք», *1899, № 13, 195։*

[Նոյեմբերի 20—դեկտեմբերի 21].— *Պոլսում Նալբանդյանի և Հ. Սվաճյանի նախաձեռնությամբ «Մեղվի» շուրջը համախմբված արևմտահայ դեմոկրատներից կազմակերպվում է մի ընկերություն, որ հակառակորդների կողմից «դոնամիջյան ժողովարան» կամ «ժո-*

դովակ» է հորջորջվում, որովհետեւ ընկերության ժողովները տեղի էին ունենում «Մեծ նոր խանի» (բարվանսարա) «վերին» և «ներքին» դռների միջև գտնվող սենյակում։ Պոլսում եղած ժամանակամիջոցում Նալբանդյանը եռանդուն մասնակցություն է ունենում ընկերության աշխատանքներին, նույնիսկ նախագահում է ժողովները. «Նալբանդյանցին գալով,— գրում է Զամուռճյանը,— իրեն ասույթ երեւույթը որքան տևեց նե՝ այդ ժողովակին դրավոր փաստաբանն եղավ...», կամ՝ «... հիշյալ ժողովակը և անոր մեկ-երկու շաբաթվան նախագահ Նալբանդյանցը...»։

Հովհ. Տերոյենց, Մ. Մ. Այվազյանին եամակիե ճենուրյուիր, Պոլիս, 1861, 9, 18։

Նոյեմբերի 20-ից հետո, Պոլիս.— *Նալբանդյանը ներկայանում է Պոլսի ռուսական դեսպան Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկուն. վերջինս խորհուրդ է տալիս, նախքան Կալկաթա մեկնելը, գնալ Լոնդոն, այնտեղի ռուսական դեսպան Բրունովի միջոցով գործը պարզել անգլիական կառավարության հետ և ապա մեկնել Կալկաթա։*

Երկերի լիակատար ժող., IV, 38։

Նոյեմբերի 22, Պոլիս.— *Նամակներ հարազատներին և Կ. Հայրապետյանին։ Չեն պահպանվել։* *Երկերի լիակատար ժող., IV, 266։*

Նոյեմբերի 29, Պոլիս.— *Նամակ Կ. Հայրապետյանին։ Չի պահպանվել։* *Նույն տեղը։*

Նոյեմբերի 30.— *«Մեղուն» (Հ. Սվաճյանը) խմբագրական հոդվածով ողջունում է Նալբանդյանի ժամանումը Պոլիս.*

«Անցած շաբթու Տրապիզոնի շոգենավով Պոլիս հասավ պարոն Մ. Նալբանդյան։ Շատոնց ի վեր կճանչնինք պարոն Նալբանդյանը իր հրատարակութիւններովը «Հյուսիսափայլ» օրագրին մեջ, և իր ոգվուն ու սկզբանցը լավ ծանոթ ըլլալով հուվին, հուվին կօրհնեինք նաև իր և իր արժանապատիվ աշխատակիցներուն ջանքերը ի լուսավորություն ազգին և մանավորապես ռուսեռնակ ազգայնոց։ «Հյուսիսափայլը», գիտեն ընթերցողք, մեկ հատիկ ազատ օրագիրն է հայոց ի Ռուսիա... Բայց «Հյուսիսափայլի» հատկությունը այս չէ միայն. անի, աներկբա կրնանք ըսել, է՛ն պատվական հայ օրագիրն է Ռուսիո մեջ ո՛չ թե միայն սկզբունքներովն ու ազատամտությամբը, այլ նաև նյութերուն ընտրությամբն ու մեջը փայլած ամեն տեսակ գիտություններովը։ Ուստի, հիրավի բախտ մը կհամարինք մեզի համար պարոն Նալբանդյանին ի Պոլիս գալուստն ու մեր ճանչվորությունը իրեն հետ։

Երջանիկ պետք է համարի ան ալ ինքը, որ ասանկ տեղն մը հանդիպեցավ իրեն գալ ի Պոլիս. ասանկ տեղն մը, ուր ազգը սահմանադրական կառավարու-

թյան ներքև կգտնվի, ուր ընդհանուր շարժում մը կա դեպի հառաջադիմություն...

Ուրախ ենք դարձյալ մենք ալ, որ պարոն Նալբանդյան մեր մեջը Ռուսիո լուսավորյալ ազգայնոց ներկայացուցիչն է և անշուշտ իր դարձին պիտի պատմե իր հայրենակցացը, թե ինչպե՞ս հայերը հոն անքուն կմնան. մեր իզձերն ու ջանքերը անոնց հասկցնելով, զանոնք ալ մեզի գործակից ընելու պիտի աշխատի, որպեսզի միևնույն հողի վրա եթե չկրնանք միանալ, գոնե միանանք սրտով ու տենչանոք, երկրով ու կրոնքով վարատական հայքս...»։

«Մեղու», 1860, № 117, 258—259։

«Երկու տոդում» անդրադառնալով արեմտահայ դեմոկրատական նրիտասարդության իրեն ցույց տված ջերմ ընդունելությանը, Նալբանդյանը գրում է. «... երբ մեր փոքրությունը ոտք կոխեց Պոլիս, ազգային լրագիրները մի երկու տող գրեցին մեր մասին, մանավանդ արևելյան, միանգամայն և նահապետական հյուրասիրությենից շարժված, քան թե պարտականությենից դեպի մեր արժանավորությունը, որ բնավ պահանջողության հանդգնություն չունի... Մենք չենք կարող բան գտանել Պոլսի ազգայինների մեզ ցույց տված համակրության մասին մեր առ ի սրտե անկեղծ շնորհակալությունը հայտնելու։ Լռում ենք, որ մեր սիրտը զգա և յուր լեզվով խոսի, այսպիսի դիպվածներում նորա խոսքը թեև ուրիշին անլսելի, բայց բան ինքյան ավելի վեհ է, քան թե մարդկեղեն բարբառը...»։

«Երկու տող», Փարիզ, 1861, 7։
Երկերի լիակատար ժող., III, 16։

Նալբանդյանի թողած տպավորությունը Պոլսում այնքան ուժեղ է եղել, որ, ինչպես պատմում են ժամանակակիցները, այդ այցելությունից 20 տարի անցած, արեմտահայ մտավորականներից շատերը, հիշելով Նալբանդյանին, ասել են. «Այո՛, այնպիսի մարդ մենք այլևս չտեսանք»։

«Փարոս Հայաստանի», 1881, № 3, 19։

Նույն օր.— *«Մեղուն» տպագրում է Նալբանդյանի «Օշականը» բանաստեղծությունը, հետևյալ ծանոթությամբ. «Ուրախությամբ սրտի կհրատարակենք հետագա հանգերը, որ Կոմս Էմմանուելին ներշնչել են իր այցելությանը առեն ս. Մեսրոպա և Մամիկոնյան վահանա գերեզմաններին, իր այս անգամվա ուղևորությանը»։*

«Մեղու», 1860, № 117, 259—260։

Դեկտեմբերի 6, Պոլիս.— *Նամակներ Կ. Հայրապետյանին և Փափազյանին (?)։ Չեն պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., IV, 266։

Նույն օր.— *Հովսեփ Չերքեզյանը բողոքագիր է ներկայացնում էջմիածնի Սինոդին, առաջարկելով հավաքել «Հյուսիսափայլի» 1860 թ. № 10-ի բոլոր օրինակները և «հրո ճարակ դարձնել», այլև արգելել «Հյուսիսափայլում» կամ որևէ այլ գրքում կրո-*

նական բովանդակությամբ հոդվածներ տպագրելը՝ առանց էջմիածնի Սինոդի քննության և հրամանի։

Մատենադարան, Սինոդի օրագրություններ, 1861, թղթ. 53, թ. 284—285։

Դեկտեմբերի 10.— «Մեղուն» տպագրում է Նալբանդյանի «Հրաշափառ խայտառակություն» պամֆլետը՝ Ս. Շահբեգ ստորագրությամբ, որի մեջ մերկացված է Զամուռձյանը որպես խավարամոլ ռեակցիոներ։

«Մեղու», 1860, № 118, 269—270։

Երկերի լիակատար ժող., II, 293—295։

Դեկտեմբերի 13, Պոլիս.— Նամակ Մ. Սանասարյանին։ Չի պահպանվել։

Երկերի լիակատար ժող., IV, 266։

Դեկտեմբերի 14, Պոլիս.— Նամակներ Մ. Բուդաղյանին, Ղ. Խաֆաֆյանին, Կ. Հայրապետյանին, Մ. Վեհապետյանին և Ս. Նազարյանին։ Չեն պահպանվել։

Նույն տեղը։

Դեկտեմբերի 15.— Կղերա-ռեակցիոն հոսանքի ներկայացուցիչները (Գ. վ. Այվազովսկի, Հ. Խալիբյան, Թ. եպ. Բեգնազարյան և ուրիշներ) շարունակում են հետապնդել Նալբանդյանին։ Գ. վ. Այվազովսկին նրա դեմ ֆրանսերեն լեզվով մի ընդարձակ նամակ է գրում Կովկասի փոխարքա Ա. Ի. Բարյատինսկուն։

Թուրքական թանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Դեկտեմբերի 17.— Գ. վ. Այվազովսկին Հ. Խալիբյանին հայտնում է, որ ինքն արդեն նամակ է ուղարկել Պոլիս Նալբանդյանի դեմ. այնուամենայնիվ, դարմանալի չէ,— գրում է նա,— եթե Պոլսում գտնվեն մի քանի «շարախնդացներ», որոնք առժամանակ հավատան Նալբանդյանին։ Այնուհետև հաղորդում է Թ. եպ. Բեգնազարյանից ստացած նամակի բովանդակությունը, թե «իզուր և անօգուտ է Նալբանդյանի գալը Հնդկաստան. եթե հատկարավոր հավատարմագրեր էլ ունենա,— ումից ուզում է լինի,— նա ոչինչ չի կարողանա ստանալ»։

Այստեղից երևում է, թե Նալբանդյանի քաղաքական հակառակորդները ո՛չ մի միջոցի առաջ կանգ չառնելով, օգտագործելով ամենուրեք ունեցած իրենց կապերը, ձգտում էին խափանել Նալբանդյանի ճանապարհորդությունը, քանի երևույթին, կասկածով, որ նա հնդկահայ կառավարների գործից բացի, ուներ նաև քաղաքական նպատակներ։ Թերևս հենց այդ մասին էր գրել Այվազովսկին փոխարքա Բարյատինսկուն՝ դեկտեմբերի 15-ի իր նամակում։

Թուրքական թանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։



Հարություն Ավանյան

Դեկտեմբերի 19, Պոլիս (Բերա). — *Նալբանդյանը գրում է «Մեղվի» խմբագիր Հ. Սվաճյանին ուղղած հրապարակական նամակ, պահանջելով՝ ժողովրդի կեղեքիչ, ոճրագործ և անբարոյական Պողոս վարդապետին դատել և պատժել քաղաքացիական օրենքով։*

Երկերի լիակատար ժող., *II*, 302—306։

Դեկտեմբերի 20.— *«Մեղուն» տպագրում է Նալբանդյանի հիշյալ նամակը՝ Պողոս վարդապետի դեմ։*

«Մեղու», *1860*, № *119*, *273—276*։
Երկերի լիակատար ժող., *II*, *302—306*։

Նույն օրը, Պոլիս.— *Նամակներ Մ. Միանսարյանին, հարազատներին, Մ. Սանասարյանին, Կ. Հայրապետյանին, Ստ. Նազարյանին, թվաբեռներին (?)։ Չեն պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV*, *266*։

Դեկտեմբերի 21.— *Նալբանդյանը Պոլսից նավարկում է Մարսել, նպատակ ունենալով այնտեղից անցնել ուղիղ Լոնդոն։ Սակայն Միջերկրական ծովում սկսում է մրրիկ, որ տևում է վեց օր ու գիշեր. մրրիկը շոգենավը մղում է դեպի Սիցիլիա կղզին։*

Երկերի լիակատար ժող., *IV*, *88*։

Նույն օրը.— *Ստ. Նազարյանը, պատասխանելով Մատթեոս կաթողիկոսի նույն թվականի նոյեմբերի 26-ի կոնդակին, որով առաջարկվում էր իրեն փոխել «Հյուսիսափայլի» ուղղությունը և այլևս հայ լուսավորչական եկեղեցու ոգուն ընդդեմ հոդվածներ չտպագրել, հայտնում է, որ առաջիկայում ևս շարունակելու է «Հյուսիսափայլի» հրատարակությունը նույն ոգով և ուղղությամբ։*

Գրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 123/189*, *թ. 10—11*։

Չնայած Նազարյանի այս հավաստիացումին, Նալբանդյանի հեռանալուց հետո «Հյուսիսափայլը» ռեակցիայի դրոհի առաջ տեղի տվեց։

Մինչև դեկտեմբերի 24.— *Պոլսից Գ. վ. Այվազովսկուն տեղեկացնում են, թե Նալբանդյանը Պոլսի երիտասարդության կողմից ջերմ ընդունելության է արժանացել։ Դեկտեմբերի 24-ի իր նամակով Այվազովսկին այդ լուրը Հ. Խալիբյանին հաղորդելով, Նալբանդյանին ջերմ ընդունելություն ցույց տված երիտասարդներին անվանում է «թեթևամիտ յուրանման և ոչ խոհական» անձնավորություններ։* Գրական թանգարան, Նար-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Դեկտեմբերի 25 (26?).— *Փոթորկի պատճառով Նալբանդյանին տանող շոգենավը կանգ է առնում Սիցիլիայի Մեսինա նավահանգստում. «Մրրիկը չթողնց ինձ ուղղակի նավել դեպի Մարսելյ՝ հարկադրվեցա ուռք կոխել Սիկիլիա [Սիցիլիա] կղզին։ Երբ մեր շոգենավը մոտեցավ ծովեզրին, Մեսինայի նավահանգստում կանգնած էր մի ահագին բազմություն աշխույժ երիտասարդների, որոնց կարմիր շապիկը վկայում էր, թե պատկանում են իտալական հերոսին՝ Գառիբալդիու բանակին։ Այդ վառվռուն երիտասարդների դեմքի վերա գծագրված էր ուրախություն և խղճի հանգստություն. նոցա ճակատը փայլում էր արժանավոր պարծանքով։*

... Մեսինա մոտ երեկոյիս (դեկտեմբերի 26 [?] հին ոճով) գնացի տեսանել թատրոնը և երբ ընդհատության միջոցին դուրս եկա դահլեճունը թաթակ ծխելու, այն բավական ընդարձակ դահլիճի մեջ, ուր գտանվում էր ավելի, քան թե երկու հարյուր հոգի, կար մի մեծ աղմուկ և շփոթ։ Մոտծեցի մոտենալ բազմության և հասկանալ պատճառը, բայց հազիվ թե կարողացել էի ուռքս շարժել տեղից և ահա բազմության գլխի վերա շողացին երկու սուր։ Երջակա բազմությունը, հեռացնելով միմյանցից այդ չերմացած գլուխները, հնար տվեց մեզ հասկանալու, թե սուր մերկացնողքը երկու սպայք էին, մինը Վիկտոր Էմմանուելյան, իսկ մյուսը՝ Բուրբոնյան, որ դղյակից թատրոն էր եկել և դահվեճունում հանդիպելով անպատվության՝ կամեցել էր արյունով լվանալ յուր անարգությունը։

Թե ուր տարին նորան և ինչ եղավ վերջը՝ չիմացա, բան որում թատրոնական գործողությունքը սկսված լինելով, մոտ թատրոն և մյուս օր ուղևորվեցա Նեապոլիս»։

Երկեր լիակատար ժող., *IV*, 82—84։

Դեկտեմբերի 26.— *Նալբանդյանը մի այլ շոգենավով մեկնում է Մեսինայից դեպի Մարսել։* Երկեր լիակատար ժող., *IV*, 83։

Դեկտեմբերի 27.— *Շոգենավը բեռնաթափման համար կանգ է առնում Նեապոլում։ Օգտվելով առիթից, Նալբանդյանը շրջակայում է քաղաքում, դիտում ճարտարապետական հուշարձանները, ծանոթանում քաղաքական անցուդարձին.*

«Քաղաքի մեջ փառավոր հրապարակների վերա հոյակապ ճարտարությամբ քանդակագործված արձանքը, որ երբեմն դրված էին Բուրբոնների փառքի համար, այժմ ջարդ ու փշուր խորտակված թավալվում են փոշու մեջ։ Երևում է, որ սորանից իրր երկու հար-

յուր տարի առաջ, Արդուսյան դուքսի ընդդեմ ապստամբության ժամանակակից անցքերը, թեթև կերպով կրկնվել են դարձյալ Նեապոլսի մեջ. Ֆրանսիսկոս երկրորդի անվանագիրը, որ դրված էր որևիցե հրապարակական կամ տերութենական շինվածքների ճակատում, այդ բոլորը առանց ամենայն բացառության, խորտակված են այժմուս և նոցա փոխանակ դրվում է Վիկտոր Էմմանուելի անվանագիրը։ Ամենայն տեղ, սկսած տերութենական շինվածքներից մինչև գինետունքը, մինչև վարսավիրանների խանութները, ծածանվում է Սարդինյան դրոշակը և ազգի բերանը ուրախությամբ արտաբերում է յուր ազատիչների անունները»։ Երկեր լիակատար ժող., *IV*, 85։

Դեկտեմբերի 30, Նեապոլ.— *Նամակ Հարությունն Սվաճյանին. նկարագրելով դեկտեմբերի 25—30-ը Մեսինայում և Նեապոլում տեղի ունեցող անցքերը, խորհրդածություններ է անում Իտալիայի ազգային-ազատագրական շարժման և հայ ժողովրդի քաղաքական վիճակի շուրջը։* Երկեր լիակատար ժող., *IV*, 82—86։

Նույն օրը, Նեապոլ.— *Նամակ Մկրտիչ Աղաթոնին։ Չի պահպանվել։* Երկեր լիակատար ժող., *IV*, 265։

Դեկտեմբերի 31.— *Նալբանդյանը լինում է Հռոմում։* Երկեր լիակատար ժող., *IV*, 85։

Նույն օրը.— *Լույս է տեսնում «Պոլսեցի լուսավորչական հայեր» ստորագրությամբ հայտարարություն՝ բողոք Պողոս վարդապետի կեղեքումների և չարագործությունների դեմ։ Հայտնելով իրենց դժգոհությունը կրոնական ժողովի որոշումից, հայտարարության հեղինակները, Նալբանդյանի նման (տե՛ս «Տարեգրություն», 1860, դեկտեմբերի 19), պահանջում են, որ չարագործ հոգևորականը, նախ՝ հասարակական պարսավանքի ենթարկվի և, ապա՝ պատժվի քաղաքացիական օրենքով։*

Ջամուռճյանը նշում է «Հայտարարության» հեղինակների ազդեցությունը Նալբանդյանից։ Վերջինիս դեկտեմբերի 19-ի նամակից մեջ բերելով այն տողերը, ուր Նալբանդյանը պահանջում է քաղաքացիական պատժի ենթարկել Պողոս վարդապետին, Ջամուռճյանը գրում է. «Այս խոսքիս համար է, որ Նալբանդյանցը դեկտեմբերի 31-ին ելած հայտարարությունը Հանող ժողովակին նախադահ քսինք։ Նալբանդյանցին նամակին թվականն է դեկտեմբերի 19, հայտարարությենեն 12 օր առաջ»։

Հովհ. Տերոյենց, Մ. Մ. Այվազյանին նամակիե ննեություներ։ Պոլիս, 1861, 21։

Դեկտեմբեր. — «Մասյաց Աղավնին» խմբագրական հոդվածում, մեջ բերելով Նալբանդյանի՝ Սարգիս Տեր-Միքայելյան Վարշամյանց ստորագրված նամակի այն տողերը, թե՝ «1858 թվականը արժանի է ոսկեղեն տառերով արձանագրվելու ամենայն բանասեր հայկազնի հիշատակարանի մեջ...» («Հյուսիսափայլ», 1860, № 11), գրում է. «... «Հյուսիսափայլը» հիրավի 1858-ին ծնավ ազգիս մեջ, բայց իբրև հրեշ մը և ոչ թե լույս մը... այդ բազմարդյուն ըսած օրագրին արդյունքն է խռովություն, պղտորություն, հակառակություն սերմանել ազգիս մեջ. ... ահա, ըստ մեր կարծյաց, այս կողմանե անմոռանալի է 1858 թվականին մեր ազգին դլխուն բերած կարեւաւոր, բայց նոր պատիժը»:

«Մասյաց Աղավնի և Սիածան Հայաստանյայց», 1860, № 12, 193:

Վերջին ընդգծված բառով («կարեւաւոր») Գ. վ. Այվազովսկու օրգանն ակնարկում էր «Հյուսիսափայլը» փակելու մասին, որի շուրջը աշխույժ դրագրություն էր սկսվել Սինոդի, Կովկասի փոխարքայի, Կովկասյան կոմիտեի, ներքին գործերի ու լուսավորության մինիստրությունների և Պետերբուրգի գրաքննական կոմիտեի միջև:

1 8 6 1

Հունվարի 3.— Նալբանդյանը Նեապոլից նավարկում է դեպի Ջենովա:

Երկերի լիակատար ժող., IV, 273:

Հունվարի 4.— Նալբանդյանը հասնում է Ջենովա: Տեսնելով, որ ձմեռային եղանակին ծովային ճանապարհորդությունը վնասում է իր առողջությանը, որոշում է այնուհետև ճանապարհը շարունակել ցամաքով: Ջենովայում նստում է երկաթուղի և անցնում մինչև Ալպյան ձյունածածկ լեռների ստորոտները. այստեղից Թուրինի և Սավոյի վրայով, մինչև Փարիզ անցնում է մերթ ջորիով, մերթ սահնակով և մերթ դարձյալ երկաթուղով՝ սաստիկ ցրտերի պատճառով՝ ենթարկվելով մեծամեծ նեղություններու:

Երկերի լիակատար ժող., IV, 88, 91:

Նույն օրը.— Գ. վ. Այվազովսկին Հ. Խալիբյանին ուղղած նամակում հայտնում է, թե առաջիկա շաբաթ Հայրապետյանի մասին գրելու է Ստրոգոնովին և եկատերինոսլավի նահանգապետին, և թե՝ Նոր-Նախիջևանի խաղաղության համար պետք է այնտեղից անպատճառ հեռացնել Գաբրիել Պատկանյանին և Ադափիրյանին:

Հայտնում է նաև, որ Նալբանդյանի մասին արդեն գրել է Պոլսի «պատավորներին» (այսինքն՝ ռեակցիոներներին). Նալբանդյանը չերմ ընդունելություն է գտել Պոլսի միայն «չերմագլուխ երիտասարդներից ոմանց կողմից», որոնք «անպիտան փշի նման ամեն տեղ կան»:

Դրական բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ:

Հունվարի 6(18).— Վաղ առավոտյան հասնում է Փարիզ:

Երկերի լիակատար ժող., IV, 273:

Հունվարի 10(22).— Փարիզից մեկնում է Լոնդոն:

Նույն տեղը:

Հունվարի 11(23).— Հասնում է Լոնդոն:

Նույն տեղը:

Հունվարի 12(24).— Կ. Հայրապետյանին ուղղած նամակում նկարագրում է իր ճանապարհորդության ընթացքը՝ Փոթիից մինչև Լոնդոն: Հայտնում է, որ հետևյալ օրը (հունվարի 14-ին) ներկայանալու է Լոնդոնի ռուսական դեսպանին՝ հնդկահայերի կտակների գործով: Նշում է Լոնդոնի իր հասցեն՝ 40 Longham Street Great, Portland Street: Այս նամակը, որոշ փոփոխություններով, ուղարկել է հունվարի 13(25) թվագրով:

Երկերի լիակատար ժող., IV, 87–92:

Նույն օրը.— Նալբանդյանը նամակներ է գրում Հովհ. Սահրաթյանին և Ղ. Խաֆաֆյանին: Չեն պահպանվել:

Երկերի լիակատար ժող., IV, 266:

Հունվարի 13.— Ս. վ. Ջալալյանը Հ. Խալիբյանի առաջադրանքի համաձայն նրան տեղեկություններ է հաղորդում Նալբանդյանի մասին. հայտնում է, որ Նալբանդյանը թե՛ էջմիածնում և թե՛ Թիֆլիսում «զանազան չարութիւններ» է գործել իրեն՝ Ս. վ. Ջալալյանի, Հ. Խալիբյանի և Գ. վ. Այվազովսկու նկատմամբ: Այնուհետև, առույգ է համարում այն լուրը, թե Նալբանդյանը Թիֆլիսից Նազարյանին ուղղած նամակներում «անպատիվ բաներ» է գրել ո՛չ միայն կաթողիկոսի, այլև էջմիածնի ամբողջ միաբանության մասին: Միաժամանակ հերքում է տարածված լուրը, թե իբր 238 հոգի այդ առթիվ Նալբանդյանի դեմ բողոքագիր են ուղարկել կաթողիկոսին: Գտնում է, որ նման եռանդ և դատողություն Թիֆլիսում սակավադեպ է:

Դրական բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ:

Հունվարի 16(28), Լոնդոն.— *Նամակ Հովհ. Բերբերյանին: Չի պահպանվել:* Երկերի լիակատար ժող., *IV*, *266*:

Հունվարի 17(29), Լոնդոն.— *Նամակներ Մ. Բուդաղյանին, Յ. Ռուդնևին, հարազատներին, Պ. Սիմոնյանին, Մ. Միանսարյանին, Հովհ. Բերբերյանին, Ճ. Արամյանին, Ստ. Նազարյանին, «Մեղվին» (Հ. Սվաճյանին), Հովհ. Քաթանյանին, Կ. Հայրապետյանին, «քվաքեռներին» (?): Չեն պահպանվել:* Երկերի լիակատար ժող., *IV*, *266—267*:

Հունվարի 18(30), Լոնդոն.— *Նալբանդյանն ստանում է Հովհ. Բերբերյանի՝ Փարիզից ուղած հեռագիրը, որով իրեն շտապ Փարիզ է կանչում:* Թուրքական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 123/178*:

Նույն օրը.— *Մեկնում է Փարիզ:* Երկերի լիակատար ժող., *IV*, *273*:

Հունվարի 19.— *Հասնում է Փարիզ:* Նույն տեղը:

Հունվարի 29.— *Մատթեոս կաթողիկոսը Սինոդին առաջադրում է շտապ տնօրինել «Հյուսիսափայլ» վնասաբեր օրագրի իսպառ խափանման և խանգարման» մասին, օրագիր, որ Մոսկվայում հրատարակվելով, դայթակղություն է առաջացնում ազգի մեջ:* Թուրքական բանգարան, Գ. Աղանյանի ֆոնդ, *վ. 1084, թ. 2*:

[Հունվար].— *Չամուռճյանը տպագրում է Նալբանդյանի «Հրաշափառ խայտառակություն» պամֆլետի (տե՛ս սույն «Տարեգրություն», 1860, դեկտեմբերի 10) պատասխանը՝ «Խայտառակության քննություն» վերնագրով: Գևերի գոյությունը հավատալը քրիստոնեական կրոնի մի էական մասը համարելով, Չամուռճյանն այն եզրակացությանն է գալիս, որ Նալբանդյանը, հերքելով գևերի գոյությունը, հերքում է նաև քրիստոնեական կրոնը, այլ խոսքով՝ Նալբանդյանն անհավատ է: Նալբանդյանի «մաերիմ սիրելին» համարելով Վոլտերին և վերջինիս խոսքերը մեջ բերելով, թե «սատանա չեղածին պես փրկիչ ալ չըլլար», Չամուռճյանը գրում է. «Ուրիշներեն չես կրնար սովրիլ նե, ատ քու խելակից բարեկամդ սովրե, որ սատանա չկա ըսողը, փրկիչ ալ ճանչնալու չէ»:* «Ծրեակ», *1860, № 86, 49—53*:

[Հունվար].— *Չամուռճյանը տպագրում է «Մեղվի» խմբագրին ուղղած Նալբանդյանի հրապարակական նամակի (տե՛ս սույն «Տա-*

րեգրությունը», 1860, դեկտեմբերի 20) պատասխանը, ուր փորձում է ո՛չ այնքան պաշտպանել ոճրագործ Պողոս վարդապետին, որքան «հերքել» Նալբանդյանի նամակի քաղաքական իմաստը՝ վախեցնելով ժողովրդի վրա նրա ունեցած ազդեցությունից: Չամուռճյանը հատկապես կանգ է առնում Նալբանդյանի նամակի այն տողերի վրա, որտեղ ասված է. «Բնական օրենքը,— վեհմակա՞ն օրենք, գերագույն բոլոր մարդկային օրենքներից, վաղուց արդեն հասկացուցել է աշխարհին, թե մարդիկ հավասար իրավունքներով դուրս եկան արարչագործ աստուծո ձեռքից...»:

Նալբանդյանի այս միտքը Չամուռճյանը համարում է «անցյալ դարուն վերջը և ներկա դարուն կեսին (1848-ին) Գաղղիա և եւրոպա բոլոր ամբոխ ի վրա ընդ սոցիալիստ–ներուն կամ կարմիր հասարակապետական–ներուն գրությունը»: Այնուհետև Չամուռճյանը եզրակացնում է, որ Նալբանդյանի պաշտպանած բնական օրենքը՝ մարդկանց հավասար իրավունքներով ծնված լինելու մասին, հակասում է «աստվածադիր» օրենքին, քանի որ աստված մարդկանց անհավասար է ստեղծել: Վերջում Չամուռճյանն ավելացնում է, թե Նալբանդյանը Պողոս վարդապետի «շար վարքը» առիթ է ծառայեցրել՝ «մոլար դրություններ և հերետիկոսություններ» տարածելու: «Ծրեակ», *1860, № 87, 83—102*:

Նալբանդյանը «երկու տողում» գրում է, որ Պոլսից իր ստացած տեղեկությունների համաձայն, Չամուռճյանի այդ հոդվածը «ամեն տեսակ մարդերից ցուրտ ընդունելություն է գտել»: Երկերի լիակատար ժող., *III*, *15*:

Փետրվարի 1(13), Փարիզ.— *Նամակներ «Մեղվին» (Հ. Սվաճյանին) Չերնովի (?) մասին, Ա. Սուլթանշահին, Լալաևին և Բուդաղյանին: Չեն պահպանվել:* Երկերի լիակատար ժող., *IV*, *257*:

Նույն օրը.— *Նոր-Նախիջևանի հասարակական գումարների յուրացումների գործը ծածկելու նպատակով Գ. վ. Այվազովսկին Նալբանդյանի և այդ հարցում նրա համախոհների դեմ նամակներ է գրում ցարական մի շարք բարձր աստիճանավորների՝ Եկատերինոսլավի նահանգապետ Սիվերսին, Նովորոսիյսկի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետ Ստրոգոնովին, Կովկասի փոխարքա Բարյատինսկուն և զինվորական մինիստր Միլյուտինին: Իր ծանոթների միջոցով Պետերբուրգի «բարձր» շրջաններում նա,— ինչպես հայտ-*

նում է Հ. Խալիբյանին գրած նամակում,— գրել է ավել եկատերինոսլավի նահանգապետին, որպեսզի վերջինս հատկապես իր մոտ կանչի Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ Կ. Հայրապետյանին և խիստ նկատողություն անի ու բացատրի, որ թեմի բոլոր գործերը տնօրինվում են «բարձրագույն հաճությամբ», հետևապես այդ գործերի նկատմամբ հարուցվող «բոլոր արգելքներն ու դավերը» կպատժվեն։

Գրական բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Նույն օրը.— «Փարիզ» թերթը հաղորդում է, որ Հնդկաստանից եկած լուրերի համաձայն, այնտեղ բերքի սակավություն է և խիստ թանկություն։

«Փարիզ», 1861, № 39։

Փետրվարի 2.— Նալբանդյանը Փարիզից մեկնում է Լոնդոն։

Երկերի լիակատար ժող., IV, 273։

Փետրվարի 3.— Հասնում է Լոնդոն։

Նույն տեղը։

Փետրվարի 5(17), Լոնդոն.— Նալբանդյանին կանչում են ռուսական դեսպանատուն, ուր դեսպանության խորհրդական կոմս Բլուդովը, Լոնդոնի ռուսական դեսպան բառոն Բրունովի հանձնարարությամբ, հայտնում է, որ անգլիական կառավարությունը, Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրի միջնորդության համաձայն, Նալբանդյանին ճանաչել է որպես լիազոր պատվիրակ (լիակատար երեսփոխան) Նոր-Նախիջևանի հայերի կողմից՝ հնդկահայերի կտակների գործում, և որ այդ մասին արդեն հրամանագրված է կայսեր՝ անգլիական ընդհանուր նահանգապետին։ Միաժամանակ կոմս Բլուդովն առաջարկում է Նալբանդյանին՝ երեսփոխանական թուղթը ներկայացնել Ռուսաստանի հյուպատոսին հաստատության։

Երկերի լիակատար ժող., IV, 93։

Նույն օրը, Լոնդոն.— Նամակներ Մ. Միանասյանին, «Մեղվին» (Հ. Սվաճյան), Պոլսի ռուսական փոստին, էլիգյուզելին (2 նամակ), Հ. Սվաճյանին, Հովհ. Քյաթիպյանին, Կովալևսկուն, Գ. Մալենցովին և հարազատներին։ Չեն պահպանվել։

Երկերի լիակատար ժող., IV, 267։

Փետրվարի 6(18), Լոնդոն.— Նամակներ Ղ. Խաֆաֆյանին և Մ. Վեհապետյանին։ Չեն պահպանվել։

Նույն տեղը։

Փետրվարի 8(20), Լոնդոն. — Նալբանդյանը ներկայանում է Լոնդոնի ռուսական հյուպատոսարան «երեսփոխանական թուղթը» հաստատելու, սակայն հյուպատոսը նրան հայտնում է, թե նախքան այդ, հիշյալ փաստաթուղթը դեսպանության միջոցով պետք է ներկայացնել «ֆոռն օֆֆիս» (արտաքին գործերի ատյան) և ապա ռուսական հյուպատոսարան։

Երկերի լիակատար ժող., IV, 93։

Նույն օրը, Լոնդոն.— Նալբանդյանը Կ. Հայրապետյանին ուղղած պաշտոնական նամակում հայտնում է, որ թեև իր երեսփոխանության թուղթը կարող է հաստատվել մինչև փետրվարի վերջը հին տոմարով, սակայն ինքը հնարավորություն չի ունենա անմիջապես ուղևորվելու Կալկաթա։ Դրան արգելք է հանդիսանում ծովային երկարատև ճանապարհը ձմեռ ժամանակ (Մարսելից մինչև Կալկաթա նավարկելու է 38 օր)։ Ուստի մտադիր է Լոնդոնում գործերն ավարտելուց հետո մեկնել մի այլ վայր (Ֆրանսիա), ուր կենսամիջոցներն ավելի էժան են, քան Անգլիայում, և այնտեղ սպասել մինչև մարտի կեսը, նոր ապա մեկնել Կալկաթա։

Երկերի լիակատար ժող., IV, 93—94։

Նույն օրը, Լոնդոն.— Կ. Հայրապետյանին գրում է երկրորդ նամակը, որը չի պահպանվել։

Երկերի լիակատար ժող., IV, 267։

Նույն օրը.—Հ. Խալիբյանը Գ. վ. Այվազովսկու ձեռքով Մատթեոս կաթողիկոսին գրած նամակում իր գժգոհությունն ու վրդովմունքն է արտահայտում, որ կաթողիկոսը Նալբանդյանի նկատմամբ բարյացակամ վերաբերմունք է ցույց տվել, իր կոնդակում նրան կոչելով մի նոր «Գրիգոր Մագիստրոս», իսկ Նոր-Նախիջևանի խռովարարների պարագլուխ Հայրապետյանն իր համախոհներով հանդգնել են նրան երեսփոխան ընտրել և ուղարկել Էջմիածին. մինչդեռ «անօրեն չարյացապարտ Նալբանդյանը», որ վրդովում է ո՛չ միայն թեմի, այլև ամբողջ ազգի խաղաղությունը, գրով և խոսքով հայհոյում է վեհափառ կաթողիկոսներին, եպիսկոպոսներին, վարդապետներին ու քահանաներին՝ արժանի է բանտի և աքսորանքի։

Այնուհետև, Խալիբյանը հիշեցնում է, որ մի քանի տարի առաջ Մոսկվայում, իր «շարագործությունների» համար Նալբանդյանը ձերբակալվել է ու բանտարկվել, և միայն Ներսես կաթողիկոսի «վազահաս» մահվան շնորհիվ է ազատվել դատապարտությունից։

Գրական բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Փետրվարի 9(21), Լոնդոն. — *Նալբանդյանը ներկայանում է ռուսական դեսպանատուն՝ «երեսփոխանական թուղթը» հաստատելու համար։* Երկերի լիակատար ժող., *IV*, *93*։

Փետրվարի 10.— *«Մեղու» հանդեսում տպագրվում է Մատթեոս Այվազյանի «Եկեղեցվո կառավարությունը սահմանադրակա՞ն է, թե միապետական» հոդվածը, որով հեղինակը պաշտպանում է Նալբանդյանի պահանջը՝ ոճրագործ Պողոս վարդապետին քաղաքացիական օրենքով պատժելու մասին։*

«Մեղու», *1861*, *№ 124*, *35—40*։

Նույն օրը.— *Ջամուռճյանի՝ «Նալբանդյանի մեկ նամակին վրա» հոդվածի առիթով Սվաճյանը «Մեղվում» գրում է. «Այս հոդվածը պ. Նալբանդյանին դեմ գրված լլլալով, չենք ուզեր անոր իրավունքը հափշտակելով անոր փոխանակ մենք պատասխանել. ուստի կթողունք, որ պ. Նալբանդյանին ձեռքը հասնելով նրեակին նույն թերթը, ինքը պատասխանն միանգամայն և կխմացնենք, թե անոր լուած ատենը մենք պատրաստ ենք անոր փաստերը պաշտպանելու։ Բայց որովհետև այս հոդվածին մեջ տեղ-տեղ քարեր կա մեզի դեմ ալ արձակված, և որովհետև պ. Նալբանդյանին պատիվին ու արժանյաց դեմ թշնամական ոգով գրված է այս հոդվածը ծայրե ի ծայր, պարտք կհամարինք, եթե ոչ մեզի դեմ նետված այն անզոր քարերեն ինքզինքնիս պաշտպանելու, գեթ պ. Նալբանդյանին պատվույն նախանձախնդրությամբ մեկ քանի խոսք ընելու...»։*

Այնուհետև, անդրադառնալով Ջամուռճյանի այն դիտողությանը, թե իբր տպագրելով Նալբանդյանի նամակը և ընթերցողների ուշադրությանը հանձնելով այն, ինքը պատասխանատվությունից խուսափել է, Սվաճյանը վճռականապես հայտարարում է. «... Մենք պ. Նալբանդյանին գրած նույն հոդվածին ամեն մեկ տողին, ամեն մեկ բառին պատասխանատու ու պաշտպան ենք»։

Պատասխանելով Ջամուռճյանի այն հանդիմանությանը, թե Նալբանդյանը Պոլիս հասնելուն պես, «Մեղուն» նրան անվերապահորեն գովել է, Սվաճյանը գրում է. «Պ. Ջամուռճյան դիտնալու է, որ պ. Նալբանդյան Պոլիս հասած ատեն մեզի համար նոր մարդ մը չէր. մենք զանի երեք տարիե ի վեր կճանչենք և անոր քաղցր ձայնը երբեմն-երբեմն «Մեղուի» թերթերու միջոցով մեր ընթերցողաց ականջին ալ հասուցած էինք»։ «Մեղու», *1861*, *№ 124*, *33—34*։

Փետրվարի 11(23), Լոնդոն.— *Նամակ Կովալյսկուն։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV*, *267*։

Փետրվարի 13(25), Լոնդոն.— *Նամակներ Հովհ. Սահրատյանին և Վարդերես Խալիբյանին (?)։ Չեն պահպանվել։* Նույն տեղը։

Փետրվարի 15(27), Լոնդոն.— *Նամակներ Մ. Ն. Պանովային, Ֆ. Ռուդնևին, Ղ. Խաֆաֆյանին, «Մեղվին» (2 նամակ), հարազատներին և Կովալյսկուն։ Չեն պահպանվել։* Նույն տեղը.

Փետրվարի 19.— *Ալեքսանդր II ցարի «մանիֆեստը» ճորտատիրության «վերացման» մասին. ««Գյուղացիական ռեֆորմը» ճորտատերերի ձեռքով իրագործվող բուրժուական ռեֆորմ էր։ Դա քայլ էր Ռուսաստանը բուրժուական միապետության վերածելու ուղիով»։*

Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., հատ. 17, Հայպետհրատ, *1950*, *131*։

Մինչև փետրվարի 22 (մարտի 6), Լոնդոն.— *Անգլիայի արտաքին գործերի ատյանում («Ֆոռն օֆֆիս») հաստատվում է Նալբանդյանի «երեսփոխանական թուղթը»։* Երկերի լիակատար ժող., *IV*, *94*։

Փետրվարի 22 (մարտի 6), Լոնդոն.— *Նալբանդյանը Կ. Հայրապետյանին ուղղած պաշտոնական նամակում հայտնելով, որ Անգլիայի արտաքին գործերի ատյանն արդեն հաստատել է իր երեսփոխանության թուղթը, և որ այժմ իրեն մնում է ստանալ ռուսական դեսպանությունից անգլիական կառավարության՝ Հնդկաստանի ընդհանուր նահանգապետին ուղղած հրամանի պատճենը կամ այդ հրամանի համարն ու թվականը, գրում է, թե իրենք՝ հակառակորդները, Գ. վ. Այվազովսկու գլխավորությամբ, Թեոդոսիայում կազմել են և Ղրիմի՝ անգլիական հյուպատոսի միջոցով հաստատել երեսփոխանության մի թուղթ, որով նրանք ձգտում են հնդկահայերի կտակների համաձայն կուտակված գումարներն իրենց ձեռքը վերցնել։ Նալբանդյանը վճռականորեն բողոքում է և խնդրում է միջոցներ ձեռք առնել կանխելու իրենց թշնամիների այդ ոտնձգությունները. Նալբանդյանն ավելացնում է, որ եթե Կ. Հայրապետյանը, որպես Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ, և հասարակությունը լռեն, ապա դրանից ազդը կվնասվի և իրենք ապագայի առաջ պատասխանատու կմնան։* Երկերի լիակատար ժող., *IV*, *94—96*։

Նույն օրը, Լոնդոն.— Նամակներ Կ. Հայրապետյանին (երկրորդ նամակը), Ղ. Խաֆաֆյանին (2 նամակ) և Կովալևսկուն։ Չեն պահպանվել։
Երկերի լիակատար ժող., IV, 267։

Փետրվարի 23 (մարտի 7), Լոնդոն.— Նալբանդյանը ձեռք է բերում ատրճանակ՝ 6 փամփուշտանոց, 50 փամփուշտով։
Գրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 123/178։

Փետրվարի 28.— Հ. Սվաճյանը «Հյուսիսափայլի» համարները չատանալով, ենթադրում է, թե այն «դադրած պիտի ըլլա»։ «Մեծ ցավ է մեզի, եթե իրավ է ասի»,— ավելացնում է նա։ Միաժամանակ իր ստացած մասնավոր տեղեկությունների վրա հիմնվելով, հայտնում է, թե «չատ մը մարդիկ ժողվվեր կխնդրեն եղեր «Հյուսիսափայլի» խմբագիրներեն, որ շարունակեն իրենց հանդեսը»։
«Մեղու», 1861, № 126, 49։

[Փետրվար].— Ջամուռճյանը պատասխանելով Սվաճյանի «Ըրքնաղ հյուրընկալություն» հոդվածին, գրում է, թե Նալբանդյանն իր նամակում («Մեղու», 1860, № 119), պաշտպանելով բնական օրենքը, և «ուրիշի իրավունքին մոռենալը և ընկերական կամ ընտանեկան պայմաններում դրժելը շատ անգամ և շատ դիպվածի մեջ բնական օրենքեն շեղած կամ խոտորած» համարելով, ժխտում է ավետարանի տասնաբանյա պատվիրանների ատովածադիր օրենք լինելը։ Այնուհետև, Նալբանդյանի նամակի յուրաքանչյուր տողի և բառի պատասխանատվությունը վերցնելը անխոհեմություն համարելով, Ջամուռճյանը Սվաճյանին անվանում է «ազգային ժողովքի մը դեմ առանձին ժողովքի գլուխ» և «ազգին մեջ հերձիք և երկպառակություն ձգող»։
«Արևակ», 1860, № 93, 285—287։

Մարտի 1(13), Լոնդոն.— Նալբանդյանը նամակներ է գրում Ճ. Աբամյանին և Գ. Մալենցովին։ Չեն պահպանվել։
Երկերի լիակատար ժող., IV, 267։

Մարտի 2(14), Լոնդոն.— Նամակներ Կ. Հայրապետյանին և Ղ. Խաֆաֆյանին։ Չեն պահպանվել։
Նույն տեղը։

Մարտի 4(16), Լոնդոն.— Նամակ Կ. Եզյանին։ Չի պահպանվել։
Երկերի լիակատար ժող., IV, 268։

Մարտի 5.— Հրապարակվում է ցարի փետրվարի 19-ի «մանիֆեստը»։ Չերնիշևսկու ռևոլյուցիոն խմբակը մշակում է գործունեության ծրագիր՝ ցարի «մանիֆեստին» հակադրվելու և այն մերկացնելու համար. «Չերնիշևսկին, որպես գյուղացիական հարցի գիտակ, պետք է գրեր գյուղացիներին ուղղված կոչը. Շելգունովը և Ն. Օբրուչևը իրենց վրա վերցրին դինվորներին ուղղված կոչը. ազնվադավորներինը՝ հանձնարարեցին Շչապովին, իսկ հետո ամին նույնպես Նիկոլայ Գավրիլովիչին [Չերնիշևսկուն]. երիտասարդ սերնդի կոչը վերցրին Շելգունովը և Միխայլովը»։
М. Лемке, Политич. процессы, П., 1923, стр. 318.
Н. М. Чернышевская, Летопись жизни и деятельности Н. Г. Чернышевского, М., 1953, стр. 201.

Մարտի 7(29), Լոնդոն.— Նալբանդյանը ձեռք է բերում սուր՝ դավազանի (ձեռնափայտի) մեջ, գաղտնի զսպանակով։
Գրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 123/178։

Մարտի 9(21), Լոնդոն.— Նամակ Անանիա Սուլթանշահին։ Չի պահպանվել։
Երկերի լիակատար ժող., IV, 268։

Մարտի 13.— Նալբանդյանը Լոնդոնից մեկնում է Փարիզ։
Երկերի լիակատար ժող., IV, 273։

Մարտի 14.— Հասնում է Փարիզ։
Նույն տեղը։

Նույն օրը.— Արևմտահայ լիբերալ գործիչ Նշան Պ. Օտյանը Մկրտիչ Խրիմյանին ուղղած նամակում հայտնելով, որ ինքը վերջերս (1860 թ. նոյեմբերի 20—դեկտեմբերի 21) Պոլսում տեսնվել է Նալբանդյանի հետ, և նրան բնութագրելով որպես «շիտակը գլխի տեր մարդ, բայց անդին ծայր հակառակասեր ոգի՝ ինք և իր նմանները», ավելացնում է՝ «այսքան շափազանցութենե զգուշանալու է»։
Մատենադարան, Գ. եպ. Տեր-Վազրյանի արխիվ, թղթ. 2, վ. 53։

Մարտի առաջին կեսը.— Պոլսում լուր է տարածվում, թե Նալբանդյանը մի գրքույկ է գրում Ջամուռճյանի դեմ։ Արևմտահայ դեմոկրատները հասարակական կարծիք են ստեղծում ընդդեմ Ջամուռճյանի։ Ինչպես երևում է մամուլի տվյալներից, նույնիսկ հակառակորդ կողմը Նալբանդյանի գրքույկին («Երկու տող») սպասում էր «սաստիկ հետաքրքրությամբ մը»։
«Արևելյան դար», 1861, № 24, 203—205։

Մարտի 23 (ապրիլի 4), Փարիզ.— *Նալբանդյանը հեռագրում է Կ. Հայրապետյանին, խնդրելով փոխադրել 600 ֆունտ ստեռլինգ՝ «զանազան պետքերի, Ճանապարհածախսի և Կալկաթայում ապրելու համար»։ Նշում է, որ «Հնդկաստանում սով է տիրում. ամեն ինչ թանկ է»։*

Ռուսական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 123/178։

Մարտի 23.— *Կոստանդնուպոլսի պատրիարք Սարգիս արքեպիսկոպոսը և կրոնական ժողովը հրամանագրում են Հովհ. Տերոյենցին (Ջամուռճյանին) պատասխանել Մ. Այվազյանի նամակին («Եկեղեցվո կառավարությունը սահմանադրակա՞ն է, թե միապետական») և հերքել նրա մեջ արտահայտված «գայթակղեցուցիչ» մտքերը։*

Հովհ. Տերոյենց, Մ. Մ. Այվազյանին ճամակին ինքնությունը Էրիսառնեական եկեղեցվո կառավարությանը վրա, Կոստանդնուպոլիս, 1861։

Մարտի 29.— *Ստ. Նազարյանը Աբել եպ. Մխիթարյանին ուղղած նամակում հայտնում է, որ Նալբանդյանից ոչ մի լուր չունի, որ նա բոլորովին չի գործակցում «Հյուսիսափայլին» և իրեն մոռացել է։ Նամակի շարունակության մեջ անդրադառնալով «Հյուսիսափայլի» վիճակին, գրում է, թե բաժանորդները շատ քիչ են և հազիվ հաղ կարելի է ծախսը ծածկել։*

«Մուրճ», 1902, № 5, 145։

Մարտի երկրորդ կեսը.— *Գյուղացիական ապստամբությունների սկիզբը Պենզայի և Տամբովի նահանգներում։ Ապրիլի սկզբին շարժումը լայն ծավալ է ստանում, ընդգրկելով մի շարք գավառներ։ Չյորնի Գայ և մի քանի այլ գյուղերում մահակներով, եղաններով, բահերով զինված գյուղացիությունը դիմադրում է ապըստամբությունը ճնշելու համար ուղարկված զորամասերին։ Ալեքսանդր II ցարի հատուկ հրամանով դեներալ Դրենյակինը մեծ զորամասեր կենտրոնացնելով ապստամբության վայրը, բարբարոսական հաշվեհարդար է կատարում ցարի և ճորտատերերի դեմ ըմբոստացած գյուղացիների նկատմամբ։*

Н. Ростов, Крестьянские волнения в 1861 г., М., 1936, стр. 35—45.

Ռուսաստանում ծավալվող գյուղացիական շարժումների առթիվ Կ. Մարքսը գրում էր. «Իմ կարծիքով, ամենամեծ անցքը, որ այժմ տեղի է ունենում աշխարհում, մի կողմից ստրուկների շար-

ժումն է Ամերիկայում, որ սկսվում է Բրաունի մահով, մյուս կողմից՝ ստրուկների շարժումը Ռուսաստանում»։

Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Հատընտիր նամակներ, Երևան, 1936, 197—198։

[Մարտ], Փարիզ.— *Նալբանդյանը գրում է «Երկու տողը»։*

Երկերի լիակատար ժող., III, 15—37։

[Մարտ].— *Լոնդոնում կազմակերպվում է հայկական տպարան՝ ազատ հրատարակությունների համար։ Պետք է ենթադրել, որ այդ գործի նախաձեռնողը եղել է Նալբանդյանը. «Երկու տողում» հայկական տպարանի հիմնադրումը Լոնդոնում Նալբանդյանը համարում է կատարված փաստ. «... Լոնդոնում ևս դրված է արդեն հայկական ազատ տպագրության համար մի մամուլ։ Լսում ենք, թե «Փարիզ» լրագիրը մանրամասն տեղեկություն պիտի տա այդ տպարանի մասին, որ մի նոր առհավատչյա է ազգի հառաջադիմության»։*

«Երկու տող», Փարիզ, 1861, 24։

Պարզված չէ, թե ինչո՛ւ այդ տպարանի կազմակերպման գործը հենց սկզբում խափանվեց։

[Մարտ].— *«Մեղվի» հրատարակչին քանի մը խրատներ» հոդվածում Ջամուռճյանը կրկին հարձակվելով Սվաճյանի վրա, թե ինչո՛ւ է նա դրվատում Նալբանդյանին և իր վրա վերցնում նրա յուրաքանչյուր տողի ու բառի պատասխանատվությունը, գրում է. «Պ. Նալբանդյանցը դովելեդ ի՞նչ վատկեցար։ Տված դովեստեդ կարծեցի, որ այն մարդը չես ճանչնար և չես գիտեր, որ Պրոմեթեոս մըն է, երբեմն Ս. Շահրեդ կըլլա, երբեմն Կոմս Էմմանուել կըլլա, երբեմն Մ. Նալբանդյանց կըլլա, գուցե երբեմն ալ Ղուկաս Պողոսյան կամ ուրիշ բան ըլլա»։*

Այնուհետև, Ջամուռճյանը մեղադրում է Սվաճյանին «Հյուսիսափայլը» կարդալու և նրանով զմայլելու համար։ Պնդելով, որ նա «Հյուսիսափայլին» էլ գովում է առանց ճանաչելու, վերջինս բնութագրելու համար վկայակոչում է Գ. վ. Այվազովսկուն. «Հյուսիսափայլին» դիմումները, ընթացքն և աշխատությունը՝ ուղղակի մեր ազգային դավանության և ամենայն ազգային գեղեցիկ հատկությանց դեմ պատերազմիլ և ջնջել, փշացնել է»։ Ջամուռճյանը գտնում է, որ

«Հյուսիսափայլը» անհավատություն է քարոզում, քանի որ տիեզերքի շարժիչ ուժը նյութի մեջ է տեսնում և ոչ աստծու. «... Ուրեմն բոլոր տիեզերքը շարժողը նյութն է եղեր, կամ նյութը բոլոր տիեզերաց շարժող է եղեր»,— բացագանչում է Ջամուռճյանը.— «Քրիստոնյայք կհավատան, թե բոլոր տիեզերաց շարժողն աստված է...», «... Քու հավնած «Հյուսիսափայլիդ» նյութեղեն աստվածը չեմ ուզեր»։

«Երեւակ», *1860, №№ 94, 95 և 96։*

Ապրիլի 1(13), Փարիզ.— *Նալբանդյանը նամակ է գրում «Մեղվին» (Հ. Սվաճյանին)։ Չի պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV, 268։*

Նույն օրը.— *«Ճռաքաղում» տպագրված «Երազ» երգիծական բանաստեղծության մեջ,— որ ուղղված է «Հյուսիսափայլի» և Նալբանդյանի դեմ,— սպառնալիք է արվում, որ «կրոնի դավաճաններին» սպասում է կախաղան։*

«Ճռաքաղ», *1861, հատ. Բ, տետրակ ԺԷ, 276—280։*

Ապրիլի 5.— *Գրաքննիչը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» 1861 թվականի № 5-ը, որտեղ զետեղված է Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի «Տեր-Սարգիս» վեպը։*

Ապրիլի 10(22), Փարիզ.— *Նալբանդյանը պատվիրում է Փոքր Ասիայի քարտեզը 78×160 սմ չափով, 1500 օրինակ։*

Դրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 123/178։*

Մինչև ապրիլի 11(23), Փարիզ.— *Լույս է տեսնում «Երկու տողը» Ճանիկ Արամյանի հրատարակությամբ։* Նույն տեղը։

Ապրիլի 11(23), Փարիզ.— *Նալբանդյանը Ճ. Արամյանից ստանում է «Երկու տողի» թղթի և տպագրության հաշիվը։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Գ. վ. Այվազովսկին էջմիածնի Սինոդի դատախազին ուղղած նամակում հայտնում է, թե Նոր-Նախիջևանի և շրջակա գյուղերի բնակչության մեջ տարիներ տևող հակառակությունն ու երկպառակությունը վերջին շրջանում գնալով ավելի էին սաստկանում, և դրան նպաստում էր Կ. Հայրապետյանը, ուստի և Եկատերինոսլավի նահանգապետ Սիվերսը, կանչելով նրան իր մոտ, հանդիմանել է։ Վերջում հայտնում է նաև, որ ինքը Նոր-Նախիջևա-*

ՄԻՔԱՅԵԼԻ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ԵՐԿՈՒ ՏՈՂ

Ճշմարտությունը կրօն է,
Հարան միայն խնդրեցէք,
Իսկ հարանից ոչինչ։

ROBERT OWEN



ՓԱՐԻԶ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ
—
1861

«Երկու տողի» անվանաթերթը

նում տիրող խռովությունների մասին բողոք է գրում Նովորոսիյսկի «ընդհանրական կուսակալին» (նահանգապետին), խնդրելով Գաբ. Պատկանյանի աքսորումը։

Մատենադարան, Սինոդի պրոկուրորի գրասենյակի գործեր, թղթ. 23, վ. 16, բբ. 1—4։

Ապրիլի 12(24), Փարիզ.— Նալբանդյանը «Մեղվին» (Հ. Սվաճյանին) է ուղարկում 300 օրինակ «Երկու տողից»։

Երկերի լիակատար ժող., IV, 268։

Նույն օրը, Փարիզ.— Նալբանդյանը նամակներ է գրում Լոնդոն (?), Կովալևսկուն և Ղ. Խաֆաֆյանին («Երկու տողի» մասին)։ Չեն պահպանվել։ Նույն տեղը։

Նույն օրը.— Սպասկի գավառի Բեզդնա գյուղում տեղի է ունենում ճորտ գյուղացիության բազմահազար ցույցն ընդդեմ «գյուղացիական ռեֆորմի»։ Ցարական կառավարությունն ապստամբ գյուղացիներին ճնշելու համար զենք է գործադրում՝ հատուկ այդ նպատակի համար կանչված զորամասերի միջոցով. սպանվում և վիրավորվում են ավելի քան 400 գյուղացի։

Н. Ростов, Крестьянские волнения в 1861 г., М., 1936, стр. 30—33.

Բեզդնայի դեպքերի առթիվ Գերցենը «Կոլոկոլում» գրում է. «Ռուսական արյունը դեռ պես է հոսում. բոլոր կողմերից հասնող լուրերը սարսափով, արցունքով են լցնում մեր սրտերը...»։ Գերցենը կոչ է անում չմոռանալ «այն կանչը, որը շրթունքներին մեռան Բեզդնայի նահատակները՝ «ազատությո՜ւն, ազատությո՜ւն»։

«Колокол», 1861, от 15 мая, № 98/99.

Ապրիլի 19.— Նալբանդյանը Փարիզից ուղևորվում է դեպի Կալկաթա։ Երկերի լիակատար ժող., IV, 273։

Ապրիլի 20.— Հասնում է Մարսել։ Նույն տեղը։

Ապրիլի 21 (մայիսի 3), Մարսել.— Նամակ Ճ. Արամյանին։ Չի պահպանվել։ Երկերի լիակատար ժող., IV, 268։

Ապրիլի 22 (մայիսի 4), Մարսել.— Նամակներ Հովհ. Բերբերյանին, Մ. Բուդաղյանին, Ա. Մուրադյանին, Կ. Հայրապետյանին,

Մ. Միանսարյանին, Ստանիսլավ Սաֆինին, Լյուլեին (?), Տրապիզոնի շոգենավային ընկերությանը և եղբորը՝ Սերոբ Նալբանդյանին։ Չեն պահպանվել։ Նույն տեղը։

Ապրիլի 23.— Մարսելից մեկնում է։ Երկերի լիակատար ժող., IV, 273։

Ապրիլի 28.— «Հյուսիսափայլը» և Ստ. Նազարյանի գրվածքները քննելու համար նշանակված հանձնաժողովը Սինոդին է ներկայացնում իր եզրակացությունը, հայտնելով, որ «Հյուսիսափայլի» ամսատետրակներում բազմաթիվ հոդվածներ պարունակում են այնպիսի մտքեր, որոնք հակառակ են «հայ լուսավորչական եկեղեցու» և «հայրապետական կանոնադրության»։

Գրական թանգարան, Աղանյանի ֆոնդ, վ. 1084, թ. 4։

Ապրիլի 29.— Նալբանդյանը հասնում է Ալեքսանդրիա։ Երկերի լիակատար ժող., IV, 273։

Մինչև ապրիլի 30.— Պոլսում ստացվում է Նալբանդյանի «Երկու տողը»։ «Մեղու», 1861, № 132։

Ապրիլի 30.— Հ. Սվաճյանը «Մեղվում» ծանուցում է տպագրում «Երկու տողի» մասին և ընթերցողներին հանձնարարում է ձեռք բերել այն՝ «Ընթերցասիրաց թանգարանում»։

«Մեղու», 1861, № 132, 107—108։

«Մեղվի» նույն համարից Սվաճյանն սկսում է հատվածաբար տպագրել Նալբանդյանի այդ երկը՝ «Հատվածք Մ. Նալբանդյանցի «Երկու տողեն»» վերնագրով, տալով հետևյալ բացատրությունը. ««Երկու տող» անուն տետրակը մեր բաժանորդներու ամենուն ալ ձեռքը հասցնելն անկարելի ըլլալով, հարկ համարեցինք այն տետրակեն քաղված մը ընել մեր թերթին մեջ, ինչպես կտեսնեք»։

Նույն տեղը, 109—110։

Ջամուռճյանն իր «Մ. Մ. Այվազյանին նամակին քննությունը» գրքույկում, անդրադառնալով «Երկու տողից» «Մեղվում» տպագրվող հատվածներին, գրում է. ««Մեղուն» առայժմ «Երկու տողը» կտոր-կտոր իր մեջը ընդունել և հրատարակել սկսած է. գուցե հարն ալ պաշտպանությունը ընե, և հիրավի, այս տետրակը ուրիշ

բանի համար չէ ալ նե՝ հայտնապես «ես հավատ չունիմ» ըսելու համար «Մեղվին» պաշտպանությանը արժանի է»։

Հովհ. Տերոյենց, Մ. Մ. Այվազյանին նամակին հեղեղություններ, Պոլիս, 1861, 18։

Նույն օրը.— *«Արևելյան դար» ռեակցիոն թերթում թունավոր ատելությամբ գրված անստորագիր մի հոդված է տպագրվում Նալբանդյանի և նրա «երկու տողի» դեմ։*

Պատմելով, որ «երկու տողի» տպագրվելու մասին նախապես իմացած է եղել դեռևս մեկ ու կես ամիս առաջ «Նալբանդացեղ» անձերից (Նալբանդյանի համախոհներից), հոդվածագիրը շարունակում է. «Եվ սակայն այն ատենեն ի վեր սաստիկ հետաքրքրությամբ մը կսպասեինք այս բանիս գործնականապես հառաջ դալուն, և վերջապես ահա այս անգամ Պոլսո մեծ Նոր խանի Ընթերցասիրաց Թանգարանի միջնորդությամբ հանկարծ երևնցավ մեր աչքերուն այն հրեշը՝ իրրև կերպարանս անհավատի առյալ...»։

Այնուհետև հոդվածագիրը նկատում է, որ Նալբանդյանի համար Չամուճյանի հոդվածին պատասխանելը եղել է միայն պատրվակ, որ «երկու տողի» ստեղծման համար Պոլսոյ վարդապետն ու Գ. վ. Այվազովսկին սոսկ առիթ են ծառայել, որ Նալբանդյանի նպատակը եղել է «առանց բացառության, բարոյության անհավատության և անկրոնության»։

Հոդվածագիրն առանձին եռանդով ընդգծում է նաև «երկու տողի» և «Մեղվի» որոշ հոդվածների գաղափարական հարազատությունը. «կարծես թե,— գրում է նա,— հիշյալ գրությունները և կամ այն հոդվածն հորինողը Պոլսո ոճով Նալբանդյանց «Մեղուն» էր, և կամ այս «երկու տողը» շարադրողը Ռուսաստանի ոճով «Մեղու» Նալբանդյանցն է։

Ահա ասով կհաստատվի նաև, թե՝ այն և այս, և կամ ասոնց նման ժամանակ-ժամանակ դուրս եկած (հայտնի և անհայտ) ի վնաս ազգի և կրոնի գրությունները «Մեղուի» և Նալբանդյանցի համակամ խորհրդակցությամբը եղած են...»։

Վերջում հոդվածագիրն առաջարկում է «երկու տողը» հանձնել Պոլսի կրոնական գերագույն ժողովի և էջմիածնի Սինոդի «օրինավոր դատաստանին».

«... Այսպիսին եկեղեցվո հալածիչ և քահանայական կարգի թշնամի համարյալ... ուղղակի հերետիկոս և հերձվածող անվանել, և այնպես իրրև աղանդապետ դատապարտել»։ **«Արևելյան դար», 1861, № 24, 203—205։**

Մինչև մայիսի 1.— *Պոլսի ռեակցիոներներից ոմն Տ. Գ. Հ. (?) Գ. վ. Այվազովսկուն է ուղարկում Նալբանդյանի «երկու տողը»։ «Մասյաց Աղավնիի» մեջ տպագրված նամակում Այվազովսկին ուրախությամբ է նշում, որ Պոլսի իր այդ համախոհը և ինքը միանման են «դատում և հասկանում» կրոնական ժողովի, մի քանի «պատվավոր» անձնավորությունների և մանավանդ՝ եկեղեցականների դեմ գրված Նալբանդյանի «երկու տողը»։*

Ջժխտելով «երկու տողում» տպագրված իր նամակների վերաբերական լինելը, Գ. վ. Այվազովսկին բուռն գայրույթ է արտահայտում «Միխիթարյանց մեծավորի»՝ Գ. Հյուրմյուզյանի դեմ՝ իր այդ նամակները հրապարակ հանելու համար. «Ոխակալությունը չէ թողուցած Միխիթարյանց մեծավորին մտածել այդ գործողության ժամանակը, թե հապա ի՛նչ մեծամեծ վնասներ կրնային ծագիլ իրեն և յուր միաբանությանը, եթե հանկարծ այն հին աստենադպիրն ալ [այսինքն՝ ինքը՝ Գ. վ. Այվազովսկին] ելներ տպագրությամբ հրատարակեր նորա և քանի մը գլխավոր միաբաններուն առ ինքն գրված... նամակները... բայց...»։ **«Մասյաց Աղավնի», 1861, № 9, 105։**

«Երկու տողի» այս արձագանքը ցույց է տալիս, որ մերկացնելով իր քաղաքական հակառակորդներին, Նալբանդյանին միաժամանակ հաջողվել է օգտագործել նրանց մեջ եղած ներքին հակասությունները և պառակտել ու թուլացնել ռեակցիայի ուժերը։

Մայիսի 1(13), Ալեքսանդրիա.— *Նամակներ է գրում եղբորը՝ Սերոբ Նալբանդյանին, Կ. Հայրապետյանին, Ստանիսլավին [Սաթին], Հ. Սվաճյանին (3 նամակ), Մ. Սանասարյանին, Մ. Բուդաղյանին, Ղ. Խաֆաֆյանին, Հովհ. Քյաթիպյանին և Ճ. Արամյանին։ Չեն պահպանվել։* Երկեր լիակատար ժող., IV, 268։

Մայիսի 2(14), առավոտյան ժ. 9-ին.— *Ալեքսանդրիայից մեկնում է։* Երկեր լիակատար ժող., IV, 273։

Նույն օրը, կեսօրից հետո, ժ. 4-ին.— *Հասնում է Կահիրե։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նամակ է գրում Հ. Սվաճյանին։ Չի պահպանվել։* Երկեր լիակատար ժող., IV, 268։

Մայիսի 4(16), Կահիրե.— *Նամակներ Ստ. Նազարյանին և Հակոբյանին (?)։ Չեն պահպանվել։* Նույն տեղը։

Մայիսի 5, առավոտյան ժ. 8-ին.— *Կահիրեից մեկնում է։* Երկեր լիակատար ժող., IV, 273։

Նույն օրը, ժ. 3-ին.— *Հասնում է Սուեզ։* Նույն տեղը։

Մայիսի 6(18), Սուեզ.— *Նամակներ Մ. Միանասարյանին, հարազատներին, Ղ. Խաֆաֆյանին, Կ. Հայրապետյանին, Կովալսկուն, Ստանիսլավին (Սաթին) և Ալփիարին։ Չեն պահպանվել։* Երկեր լիակատար ժող., IV, 268։

Մայիսի 7, կիրակի օր.— *Սուեզից մեկնում է։ «Սուեզից մինչև այստեղ (Կալկաթա) 24 օր ծովի վերա էի. շատ մրրիկների ևս հանդիպեցի» (Ա. Սուլթանշահին 1861 թ. հունիսի 26-ին գրած նամակը)։* Երկերի լիակատար ժող., *IV, 103։*

Մայիսի 10.— *«Մեղվում» շարունակվում է «Երկու տողի» տպագրությունը հատվածաբար։* «Մեղու», *1861, № 133, 119—130։*

Մայիսի 13.— *Հասնում է Ադեն (Թաւմոր)։ «Կարմիր ծովից դուրս գալու ժամանակ կանգնեցանք չորս ժամ Ադեն քաղաքի առջև։ Սա հին Թաւմորն է արաբական, որ երբեմն Սողոմոն շինեց և որ վերջումը նյութ եղավ արաբական բանաստեղծներին. իհարկե, հիշում ես Անթարը»։* Երկերի լիակատար ժող., *IV, 109։*

Նույն օրը, Ադեն.— *Նամակ է գրում Կ. Հայրապետյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 269։*

Նույն օրը, երեկոյան.— *Ադենից մեկնում է։* Երկերի լիակատար ժող., *IV, 273։*

Մայիսի 22.— *Նալբանդյանը հասնում է Ցեյլոն։ «Թաւմորից [Ադեն] գնացինք Ցեյլոն կղզին, ուր երբեմն Հիզվիթները գնացել էին, երբ այս դժոխային կարգը նոր էր հիմնվում»։* Երկերի լիակատար ժող., *IV, 109։*

Նույն օրը, Ցեյլոն.— *Նամակ Կ. Հայրապետյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 269։*

Մայիսի 23.— *Ցեյլոնից մեկնում է։* Երկերի լիակատար ժող., *IV, 273։*

Մայիսի 27.— *Հասնում է Մադրաս։* Նույն տեղը։

Նույն օրը, երեկոյան.— *Մադրասից մեկնում է։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Գ. վ. Այվազովսկին Հ. Խալիբյանին ուղղած նամակում հայտնում է, որ գեներալ-նահանգապետ Սորոգոնովի՝ Նալբանդյանի վերաբերյալ գրավոր հարցումին ինքը գրում է «ընդարձակ և զորավոր» մի պատասխան, որ հաճելի կլինի նաև Խալիբյանին։* Գրական բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Մայիսի 30 (հունիսի 11).— *Նալբանդյանը քանչորս օր նավարկելուց հետո, հասնում է Կալկաթա։* Երկերի լիակատար ժող., *IV, 99։*

Նույն օրը.— *«Մեղվում» շարունակվում է «Երկու տողի» տպագրությունը հատվածաբար։* «Մեղու», *1861, № 135, 136։*

Հունիսի 1(13), Կալկաթա.— *Նալբանդյանը ներկայանում է Կալկաթայի ընդհանուր վարչության նախագահ Հագին, որպես Նոր-Նախիջևանի հասարակության լիազոր ներկայացուցիչ՝ հնդկահայ ժառանգության գործում։ Հագը հայտնում է, որ կտակների գործը պետք է վարել դատարանի միջոցով՝ անգլիական օրենքների համաձայն։ Կալկաթաբնակ հայերը հայտնում են Նալբանդյանին, որ Հագը խաղաղությամբ չի հանձնելու ժառանգությունը, քանի որ եկամտի հինգ տոկոսն ինքն է ստանում։* Երկերի լիակատար ժող., *IV, 99—101։*

Հունիսի 5(17), Կալկաթա.— *Նալբանդյանն այցելում է օրենսգետ Պողոս Պալին. վերջինս երեսփոխանական թղթի բնագիրը և դրա անգլերեն թարգմանությունը կտակի հետ միասին ուղարկում է Հագին պաշտոնական գրությամբ։* Նույն տեղը։

Հունիսի 10.— *Ավարտվում է «Երկու տողի» հատվածների տպագրությունը «Մեղվում»։* «Մեղու», *1861, № 136, 144։*

Հունիսի 12(24), Կալկաթա.— *Նալբանդյանը պաշտոնական գրությամբ Կ. Հայրապետյանին հայտնում է, թե Կալկաթայի անգլիական իշխանությունները խոշընդոտներ են հարուցում և որ ինքը փաստաթղթեր ու տեղեկություններ է հավաքում կտակների գործը դատարան հանձնելու համար։* Երկերի լիակատար ժող., *IV, 99—107։*

Նույն օրը, Կալկաթա.— *Նամակ Հովհ. Խաչիկյանին. խնդրում է հաղորդել տեղեկություններ կտակարարներ Եղիա Մահտեսի Հակոբյանի և Մարգիս Ծատուր Աղավելյանի մասին, որոնք, ինչպես իրեն՝ Նալբանդյանին հայտնի է, զգալի ժառանգություն են թողել Հօգուտ Նախիջևանի դպրոցի և տպարանի։*

Երկերի լիակատար ժող., *IV, 96—98։*

Հունիսի 12(24), Կալկաթա.— *Նամակներ Կ. Հայրապետյանին (երկրորդ նամակը, ոչ պաշտոնական), Ղ. Խաֆաֆյանին, հարա-պատներին, Ֆ. Ռուդնևին և Կովալևսկուն: Չեն պահպանվել:*

Երկերի լիակատար ժող., *IV, 269:*

Նույն օրը.— *Էջմիածնի Սինոդը, քննելով Հովսեփ Չերքեզյանի բողոքագիրը «Հյուսիսափայլի» և Ստ. Նազարյանի դեմ, որոշում է խնդրել Կովկասի փոխարքային, որպեսզի վերջինս ներքին գործերի մինիստրի միջոցով արգելել տա «Հյուսիսափայլ» ամսագրում կրոնական հոդվածների, ինչպես և գրքերի տպագրությունը՝ առանց կաթողիկոսի և Սինոդի հրամանի, և ապա՝ հրամանագրել թեմական առաջնորդներին, որ վերջիններս իշխանության ձեռքով շտապ հավաքեն «Հյուսիսափայլի» 1860 թ. № 10-ի բոլոր օրինակները և ուղարկեն Սինոդի տնօրինությանը:*

Մատենադարան, Սինոդի օրագրություններ, *1861, թղթ. 53, թ. 290:*

Հունիսի 14(26), Կալկաթա.— *Նալբանդյանը, որպես Նոր-Նախիջևանի հասարակության լիազոր ներկայացուցիչ, օրենսգետ Պողոս Պալի միջոցով, պահանջ է ներկայացնում անգլիական կառավարիչ Հադին՝ հնդկահայ կտակների վերաբերյալ:*

Երկերի լիակատար ժող., *IV, 110:*

Նույն օրը, Կալկաթա.— *Պաշտոնական նամակով տիկին Վառվառե Էլիազին խնդրում է տեսակցության օր նշանակել՝ Կատարինե Խոջամալլյանի կտակի հետ կապված հարցերը պարզելու համար:*

Երկերի լիակատար ժող., *IV, 107:*

Նույն օրը, Կալկաթա.— *Գլխավոր կառավարիչ Հադի գրությունը Նալբանդյանին, որով ծանուցում է, թե Մասեհ Բաբաջանյանի գործի մասին Պողոս Պալից ստացած բոլոր թղթերն ուղարկել է իր փաստաբանին, խնդրելով նրա խորհուրդը, որի պատասխանն ստանալուց հետո, կրկին գրելու է Պ. Պալին՝ Նալբանդյանի փաստաբանին:*

Երկերի լիակատար ժող., *IV, 282:*

Հունիսի 15(27), Կալկաթա.— *Նալբանդյանի նամակը Հ. Գ. Արգարյանին: Չի պահպանվել:*

Երկերի լիակատար ժող., *IV, 269:*

Հունիսի 15(27), Կալկաթա.— *Օրենսգետ Պողոս Պալի գրությունը Նալբանդյանին, որին կից ուղարկում է գլխավոր կառավարիչ Հադի պատասխանը Մասեհ Բաբաջանյանի ժառանգության մասին:*

Երկերի լիակատար ժող., *IV, 282:*

Նույն օրը, Կալկաթա.— *Նալբանդյանն ստանում է Վառվառե Էլիազյանի հունիսի 15-ի նամակը, որով Կատարինե Խոջամալլյանի կտակի գործի մասին բանակցելու համար տեսակցություն է նշանակվում հունիսի 21-ը (հուլիսի 3):*

Երկերի լիակատար ժող., *IV, 282:*

Նույն օրը.— *Լույս է տեսնում «Կոլոկոլի» № 101-ը, որտեղ տպագրված է Ն. Պ. Օգարևի հոդվածը 1861 թ. փետրվարի 19-ի «մանիֆեստի» մասին՝ «Ճորտատիրական նոր իրավունքի վերլուծությունը» վերնագրով:*

«Ճորտատիրական հին իրավունքը փոխարինված է նորով,— գրում է նա:— Ընդհանրապես ճորտատիրական իրավունքը չի վերացված: Ժողովուրդը խաբված է ցարի կողմից»:

З. П. Базилева, «Колокол» Герцена. ОГИЗ, 1949, стр. 170—171.

Հունիսի 16(28), Կալկաթա.— *Հադը հնդկահայերի կտակների գործի առթիվ Նալբանդյանի ներկայացրած պահանջի առթիվ պատասխանում է, որ հարցը կարող է վճռվել միայն անգլիական դատարանի միջոցով:*

Ձեռակ բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 123/104:*

Երկերի լիակատար ժող., *IV, 110:*

Հունիսի 17(29), Կալկաթա.— *Հովհ. Խաչկյանի նամակը Նալբանդյանին. հայտնում է, թե Եղիա Հակոբյանի և Սարգիս Աղավելյանի կտակների մասին ոչ մի տեղեկություն չունի: Ուղարկում է Թ. եպ. Բեգնազարյանին ուղղած իր նամակի պատճենը՝ Կատարինե Խոջամալլյանի կտակի մասին:*

Ձեռակ բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 123/97:*

Երկերի լիակատար ժող., *IV, 282:*

Հունիսի 21 (հուլիսի 3), Կալկաթա.— *Նալբանդյանը Վառվառե Էլիազյանի հետ բանակցում է Կատարինե Խոջամալլյանի կտակի գործի մասին:*

Երկերի լիակատար ժող., *IV, 282:*

Հունիսի 22 (հուլիսի 4), Կալկաթա.— *Նամակ օբենգեթ Պողոս Պալին։ Հայտնելով, որ Սարգիս Ազամալյանի կտակած գումարի (250000 հնդկական ռուփի) կեսը պատկանում է Նոր-Նախիջևանին, Նալբանդյանը խնդրում է նրա աջակցությունը, որ այն հասնի ըստ պատկանելույն։*

Երկերի լիակատար ժող., *IV, 108։*

Հունիսի 26 (հուլիսի 8), Կալկաթա.— *Նամակ Ա. Սուլթանշահին։ Հայտնում է, որ տեղի անգլիական դատարանում («Սուպրիմ կորտ») երեք դատ ունի հնդկահայ կտակների առթիվ, բայց հաջողության վրա վստահ է, քանի որ Նախիջևանի մեջ մի հոյակապ դպրոց տեսնելու հույսը քաջալերում է իրեն և զորացնում իր «ֆիզիկական թուլությունը՝ պատճառված դժոխային ջերմուխներից»։*

Գրում է, որ ծայր աստիճան շոգը, կտակների հետ կապված գործերը հնարավորություն չեն տալիս «Հյուսիսափայլին» աշխատակցելու։ Ա. Սուլթանշահին խորհուրդ է տալիս «Հյուսիսափայլի» համար «գեթ մի հատ ազատամիտ բան թարգմանել»։ Հույս է հայտնում, որ նա կկատարի իր խորհուրդը, քանի որ «այդ օրագիրը մեր թախտի օրգանն է»։

Երկերի լիակատար ժող., *IV, 108—109։*

Նույն օրը, Կալկաթա.— *Նամակներ [...? անհայտին], Ստանիսլավին (Սաթին), Ալփիարին, Մ. Միանասարյանին, Հ. Սվաճյանին, Հակոբյանին, Մ. Վեհապետյանին, Ճ. Արամյանին, հարազատներին, Դ. Խաֆաֆյանին, Կ. Հայրապետյանին։ Չեն պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV, 265։*

Հունիսի 30.— *Հ. Խալիբյանը Գ. վ. Այվազովսկուն ուղղած նամակում հաղորդում է, թե Եկատերինոսլավի նահանգապետ կոմս Սիվերսը հունիսի 13-ին գալով Նոր-Նախիջևան, Կ. Հայրապետյանից և Մագիստրատի անդամներից բացատրություն է պահանջել, թե՝ դուք ի՞նչ իրավունքով, առանց իմ գիտության, Նալբանդյանին Հնդկաստան եք ուղարկել։*

Գրական բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Հուլիսի 1. — *«Կոլոկոլում» տպագրվում և միաժամանակ առանձին գրքույկով լույս է տեսնում Ն. Օգարևի «Ի՞նչ է հարկավոր ժողովրդին» կոչը, որը կազմվել և մշակվել է Ն. Ա. Սերնո-Սոլովևիչի, Ն. Ն. Օբրուչևի, Ա. Ա. Սլեպցովի և Նալբանդյանի խորհուրդներով և ցուցումներով։*

А. И. Герцен, Полн. собр. соч. и писем, под ред. М. К. Лемке, 1919, т XI, стр. 136, 138—146.

Н. П. Огарев, Избранные социально-политические и философские произведения, 1952, т. I, стр. 842—843.

Հուլիսի 3(15), Կալկաթա.— *Կատարինե Խոջամալյանի կտակի համաձայն, Նալբանդյանը պահանջ է ներկայացնում Վառվառե Էլիազյանին. վերջինս մերժում է, առարկելով, թե նույնպիսի պահանջ ներկայացրել է նաև Գ. վ. Այվազովսկին։ Նալբանդյանը որոշում է դիմել դատարան, ցույց տալու, որ Այվազովսկու պահանջն անօրինական է, քանի որ նա ժողովրդի կողմից լիազորված չէ։*

Երկերի լիակատար ժող., *IV, 115։*

Հուլիսի 11(23), Կալկաթա.—*Նամակներ Կովալևսկուն և Կ. Հայրապետյանին։ Չեն պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV, 269։*

Հուլիսի 18(30), Կալկաթա.— *Նամակներ Մ. և Դ. Խաֆաֆյաններին։ Չեն պահպանվել։*

Նույն տեղը։

Հուլիսի 20 (օգոստոսի 1), Կալկաթա. — *Օբենգեթ Պ. Պալի գրությունը, որով Նալբանդյանին հրավիրում է հետևյալ օրվա (հուլիսի 21—օգոստոսի 2) դատական նիստին։*

Երկերի լիակատար ժող., *IV, 282։*

Հուլիսի 22 (օգոստոսի 3), Կալկաթա.— *Պ. Պալի գրությունը, որով Նալբանդյանին հրավիրում է դատարան՝ կտակների գործով։*

Նույն տեղը։

Մինչև հուլիսի 26.— *Գ. վ. Այվազովսկին ֆրանսերեն մի ընդարձակ նամակ է գրում Եկատերինոսլավի նահանգապետ կոմս Սիվերսին Նալբանդյանի և նրա համախոհների դեմ։ Նույն բովանդակությամբ նամակ էլ գրում է Նովորոսիյսկի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետ Սորոգոնովին։*

Գրական բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Հուլիսի 26.— *Գ. վ. Այվազովսկին Հ. Խալիբյանին հայտնում է, թե «Նալպանատամիտը» (Նալբանդյանի համախոհները) իրենց և Խալիբյան ուսումնարանի դեմ աննպաստ կարծիքներ են տարածում։*

Նույն տեղը։

Հուլիսի 27 (օգոստոսի 8), Կալկաթա.— Նալբանդյանի պաշտոնական գրությունը Կ. Հայրապետյանին. մանրամասն նկարագրելով կտակների գործի ընթացքը, պատմում է, թե ինչպիսի խոչընդոտներ են հարուցում մի կողմից անգլիական իշխանություններն ու դատաստանական օրգանները և մյուս կողմից՝ Գ. վ. Այվազովսկին և նրա արբանյակները՝ իրենց կեղծ լիազորագրով։ Նալբանդյանը վճռական բողոք է հայտնում Գ. վ. Այվազովսկու որոգայթների դեմ, որոնց նպատակն է կողոպտել և յուրացնել հասարակությանը պատկանող գումարները։ Նալբանդյանը ցույց է տալիս, որ նման փորձեր կատարվել են նաև անցյալում Գ. վ. Այվազովսկու համախոհների կողմից. Ներսես կաթողիկոսը նույնիսկ հնդկահայ կտակների լիազոր է նշանակած եղել այն ժամանակվա Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովին... Բարեբախտաբար այդ փորձերն անցել են անհաջող։

Նալբանդյանը խոստանում է այդ ամենի մասին ժամանակին գրել և հրատարակել՝ մերկացնելով հակառակորդներին։

Հույս է հայտնում, որ մինչև օգոստոսի վերջը տեղի կունենա դատարանի վճիռը։ Երկերի լիակատար ժող., IV, 110—116։

Նույն օրը, Կալկաթա.— Նամակներ հարազատներին, Ղ. Խաֆաֆյանին, Վ. Խալիբյանին (?), Ալփիարին, «Մեղվին» (Հ. Սվաճյանին) և Ստանիսլավին (Սաթին)։ Չեն պահպանվել։

Երկերի լիակատար ժող., IV, 269։

Օգոստոսի 2(14), Կալկաթա.— Նամակ Ղ. Խաֆաֆյանին։ Չի պահպանվել։ Նույն տեղը։

Օգոստոսի 3(15), Կալկաթա.— Նամակ Պողոս Պալին։ Չի պահպանվել։ Նույն տեղը։

Օգոստոսի 4(16), Կալկաթա.— Պ. Պալի դրությունը, որին կից Նալբանդյանին է ուղարկում Բաբաջանյանի կտակի գործի և բողոքների տպագրված պատճենները։ Երկերի լիակատար ժող., IV, 282։

Օգոստոսի 10(22), Կալկաթա.— Նամակներ Կ. Հայրապետյանին, Ղ. Խաֆաֆյանին և հարազատներին։ Չեն պահպանվել։

Երկերի լիակատար ժող., IV, 269—270։

Նույն օրը.— Գրաքննությունը տպագրության է թույլատրում

«Հյուսիսափայլի» իններորդ (սեպտեմբերի) և տասներորդ (հոկտեմբերի) ամսատետրակները, Նալբանդյանին վերագրվող հետևյալ հոդվածներով.

1. «Նամակ Կոմս Էմմանուելին», Ա. Ա. Ե... ստորագրությամբ (9-րդ ամսատետրակ, էջ 221—225)։

2. «Հռոմեական նամակ», Ալֆոնզո Ռաբբի ստորագրությամբ (10-րդ ամսատետրակ, էջ 301—330)։

Օգոստոսի 16.— «Փարիզ» լիբերալ թերթն իր խմբագրական հոդվածում անդրադառնալով «Մասյաց Աղավնու» այն դիտողությանը, թե «Փարիզում» զետեղված «Նամակ Կալկաթայեն» խորագրով հոդվածի հեղինակը խոսում է ««երկու տողին» ոճով կամ բերնովը», նկատում է, որ «Փարիզը» ««երկու տողին» ոճով կամ բերնովը չխոսիր և խոսելիք ալ չունի, քանի որ մեջերնին կարծյաց դանագանություն կա»։ «Փարիզ», 1861, № 52։

Օգոստոսի 17(29), Կալկաթա.—Նալբանդյանի երկտողը Կ. Վրթանեսյանին, որով տեղեկություն է խնդրում կտակարար Մասեհ Բաբաջանյանի թաղման վայրի մասին։

Երկերի լիակատար ժող., IV, 117։

Օգոստոսի 22.— Սուլթանական կառավարության հրամանով փակվում է «Մեղուն»։ Հ. Սվաճյանն այդ առթիվ օգոստոսի 23-ին առանձին թերթիկով տպագրած իր «Ազդարարությամբ» հայտնում է. «Պատիվ ունիմ ծանուցանելու իմ ազնիվ ընթերցողացս, որ երեկ իրիկուն, սեպտեմբերի 3 (օգոստոսի 22) թվականով նամակ մը ընդունեցի Բ. Դոռնեն, որ հանկարծական հրամանով մը առժամանակյա կերպով կդադարեցնեն «Մեղվին» հրատարակությունը, մինչև որ նոր հրաման մը գա»։ Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 193, վ. 147։

Օգոստոսի 28 (սեպտեմբերի 9), Կալկաթա.—Նամակներ Կ. Հայրապետյանին և Ղ. Խաֆաֆյանին։ Չեն պահպանվել։

Երկերի լիակատար ժող., IV, 270։

Օգոստոսի 29.— Մատթեոս կաթողիկոսը հատուկ կոնդակով հավանություն է տալիս Հովհ. Տերոյենցի (Զամուռճյանի) «Մ. Մ. Այվազյանին նամակին քննությունը» գրքույկին՝ հրատարակության համար։ «Երևակ», 1861, № 114, հավելվածք, 203—206։

Ամառ.— Բևռլինում լույս է տեսնում Ն. Սերնո-Սոլովևիչի

«Окончательное решение крестьянского вопроса» *գրքույկը, որի առաջաբանում ասված է. «Ես հրապարակում եմ նախագիծ, որով-հետև փետրվարի 19-ի օրենքով չլուծված կամ, ավելի ճիշտ՝ աղավաղված գյուղացիական հարցը կարելի է լուծել միայն երկու կերպ. կամ ընդհանուր եռգնման միջոցով կամ կացիններով. երրորդ ելք չկա, իսկ հարցը չլուծված չի կարող մնալ. հետևապես, այն մարդիկ, որոնք բռնություն չեն ցանկանում, պետք է գործադրեն այն ամենը, ինչ կա իրենց իշխանության տակ՝ եռգնմանն աջակցելու համար:* **М. Пемке**, Очерки освободительного движения 60-х годов, СПБ, 1908, 46.

[Ամառ].— *Պոլսում լույս է տեսնում Հովհ. Տերոյենցի (Չամուռճյանի) «Մ. Մ. Այվազյանին նամակին քննությունը եկեղեցվո կառավարության վրա» գրքույկը: Չամուռճյանի գրքույկն, բուռ էության, ուղղված էր դեմոկրատական այն շարժման դեմ, որ 50-ական թվականներին սկսվելով արևմտահայ իրականության մեջ, 1860 թվականի սկզբներին նոր թափ էր ստացել նալբանդյանի անմիջական ազդեցության շնորհիվ: Պոլսոց վարդապետի հարցը, ինչպես նաև հայ եկեղեցու կառավարման բնույթի հետ կապված խնդիրները լոկ պատրվակ էին, որոնց քողի տակ ահեղ էր դաղափարական-քաղաքական սուր պայքար: Պաշտպանելով հայ եկեղեցու «միապետական» իրավունքները, Չամուռճյանը և արևմտահայ ռեակցիայի մյուս պարագլուխները պաշտպանում էին միապետությունն ընդհանրապես, իրրև քաղաքական կառավարման «աստվածագիր» ձև: Նրանք լավ էին հասկանում, որ Նալբանդյանը և արևմտահայ դեմոկրատները՝ Հ. Սվաճյան, Մ. Այվազյան, Կ. Փանոսյան և ուրիշներ, Պոլսոց վարդապետի հարցի առնչությամբ, պաշտպանելով ժողովրդի իրավունքները կրոնական խնդիրներում, բուռ էության, քաղաքական-հասարակական գործերում ժողովրդի ակտիվ, վճռական մասնակցության հարցն էին բարձրացնում: Իր գրքույկում Չամուռճյանը «օրինավոր» է համարում կառավարման մեջ այն փոփոխությունները, որոնք մտցվում են «պետության գլխուն կողմեն» և որոշակի կերպով դատապարտում է ժողովրդական ապստամբության ուղին. «ես ժողովուրդին ո՛չ խնդրություն ընելու իրավունքը կճանչնամ, և ո՛չ ապստամբություն հանելու...». այնուհետև վկայակոչելով «աստվածաշունչ պատգամը», թե՝ ով որ հակառակ է իշխանության, հակառակ է աստուծո հրամանին, Չամուռճյանը գրում է. «Ըսածներես կհասկցվի, որ պ. Մատթեոսին [Այվազյան] բսածներուն հետևությամբ, աշխարհական կառավարության մեջ խնդրություն կամ ապստամբություն, իսկ եկեղեցականի մեջ խառնակություն և շփոթություն ելլելը անխորշելի է»:*

Հովհ. Տերոյենց, Մ. Մ. Այվազյանին նամակին ննութիւնը, 35—36:

Իր գրքույկի բազմաթիվ էջերում Չամուռճյանն այն միտքն է արտահայտում, որ թե՛ Մ. Այվազյանը և թե՛ բոլոր «մեղվականները» («գռնամիջյան ժողովարանը») անհավատություն և ապստամբություն քարոզելով, կապվում են Նալբանդյանի հետ: Չամուռճյանի գրքույկը, փաստորեն, Նալբանդյանի դեմ է ուղղված:

Սեպտեմբերի 11(23), Կալկաթա. — *Նամակներ Ալփիարին, Մ. Հակոբյանցին (?), Հ. Սվաճյանին, Կ. Հայրապետյանին և Ղ. Խաչֆաչյանին: Չեն պահպանվել:* Երկերի լիակատար ժող., *IV, 270:*

Սեպտեմբերի 15-ից հետո.— *Պետերբուրգի համալսարանում հարյուրավոր ուսանողների առաջ բարձրաձայն ընթերցվում է «Երիտասարդ սերնդին» կոչը: Այդ մասին իր հիշողություններում վրաց նշանավոր հրապարակախոս Ն. Նիկոլաձեն գրում է.*

«Սրտի թրթիռով էինք լսում ընթերցողին, որ ավելի ու ավելի էր ոգևորությամբ համակվում: Կոչի մեջ ամեն ինչ մեզ համար հայտնագործության նշանակություն ուներ: Ո՛չ թե նրա համար, որ օպոզիցիոն գրականությունը մեզ անծանոթ էր. մեզանից շատերը կարդում էին «Կոլոկոլը», «Պոլյարնայա զվեզդան» և Գերցենի այլ հրատարակությունները: Բայց դրանց մեջ կար ծաղր, խոցող սարկազմ, իսկ այստեղ ուղղակի հնչում էր ապստամբության կոչ, ո՛չ թե ուղղելու, այլ տապալելու ամբողջ իրավակարգը: Կոչի առանձին արտահայտություններն ու ամբողջ բովանդակությունը չեմ հիշում, բայց նրա ընդհանուր տոնը, որ հնչում էր որպես նզովք՝ մինչև մահ չեմ մոռանա: Համենայն դեպս, ինձ վրա կոչը թողեց այդպիսի տպավորություն: Իմ ամբողջ մարմինը փշաքաղվեց... Կոչի արտաքին տեսքը, նրա բնաբանը, այն ակամա սարսուռը, որ ապրեցի ես կոչի ընթերցման պահին կայսերական համալսարանի մեծ դահլիճում հազարավոր բազմության առաջ՝ այսօր էլ իմ աչքի առջև է, կարծես թե երեկ լիներ: Каторга и ссылка, 1927, № 33, стр. 36.

Սեպտեմբերի 18.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» տասնմեկերորդ (նոյեմբերի) ամսատետրակը: Նալբանդյանի գրչին է պատկանում՝*

«Խալացի աղջկա երգ 1859 թվականից», *Կոմս Էմմանուել ստորագրությամբ. գրության վայրը նշված է «Զոդեն. Մայնի վերա Ֆրանկֆուրտի մոտ» (էջ 400—402):*

Սեպտեմբերի 20.— *Նալբանդյանը տոմս է վերցնում «Կոլումբո» շոգենավի համար՝ սեպտեմբերի 23-ին Կալկաթայից մեկնելու մտադրությամբ:* Գրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *123/109:*

Սեպտեմբերի 21 (հոկտեմբերի 3), Կալկաթա.— *Նալբանդյանը լիազորագիր է տալիս Ս. Աբգարին և Պ. Պալին՝ իրավունք վերապա-*

հելով նրանց ստանալ և իրեն ուղարկել Մասեհ Բաբաջանի ժառանգությունից Նոր-Նախիջևանին հասնող գումարի մնացորդը։ Առանձին գրությամբ բացատրում է, որ նրանց վրա է դնում այդ պարտականությունը, որովհետև ինքն այլևս չի կարող մնալ Կալկաթայում։ Շահազիզ, Տիվան Միքայել Նալբանդյանի, *187—189։*

Սեպտեմբերի 25.— *Տեղի է ունենում Պետերբուրգի համալսարանի ուսանողության բազմահազար ցույցը, որը ցրվում է զորքի միջոցով. հարյուրավոր ուսանողներ բանտարկվում են Պետրոպավլովյան բերդում։*

Հետևյալ օրը (սեպտեմբերի 26-ին) Պետերբուրգի համալսարանը փակվում է։ Каторга и ссылка, 1927, № 33, стр. 38—39.

Սեպտեմբերի 26.— *Նալբանդյանի հարուցած գործի առթիվ Կալկաթայի դատական ատյանը կայացնում է իր վճիռը՝ հօգուտ Նոր-Նախիջևանի։*

Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, *ֆ. 139, գ. 940, թ. 11։*

Սեպտեմբերի 27, Կալկաթա.— *Նալբանդյանի երկտողը Սեթ Աբգարյանին, որով խնդրում է իր հաշվին 50 ռուփի վճարել ծեր և աղքատ Ռեթեոսին, իբրև վարձատրություն նրա բազմօրյա աշխատության։*

Երկերի լիակատար ժող., *IV, 117։*

Նույն օրը.— *Հաջողությամբ ավարտելով հնդկական կտակների գործը, Նալբանդյանը մեկնում է Կալկաթայից։*

Երկերի լիակատար ժող., *IV, 273։*

Հոկտեմբերի 3.— *Գ. վ. Այվազովսկին Մատթեոս կաթողիկոսին ուղղած նամակում գրում է, թե Նալբանդյանը և նրա համախոհները հետզհետե ուժեղանում են Նոր-Նախիջևանում, Թիֆլիսում և Կոստանդնուպոլսում, թե նրանք ժողովրդին դեպի «անկրոնության վիհն են տանում, և ժողովուրդը հուզված է, ինչպես մրրկալից հողմերի ուժգնությունից փոթորկված ծովը... Այդ նրանք են,— շարունակում է Այվազովսկին, նկատի ունենալով գլխավորապես Նալբանդյանին,— որ «Հյուսիսափայլի» մեջ «անհնարին հանդգնությամբ» ամենայն չարախոսություն և հայհոյություն» են գրում նեղսես կաթողիկոսի, էջմիածնի, եկեղեցականների, Խալիբյանի, իրեն՝ Գ. վ. Այ-*

վազովսկու և ուրիշ շատերի դեմ. նրանք են, որ չեն թողնում ի կատար ածելու Սինոդի որոշումը՝ ջանալով, որ ներքին գործերի մինիստրի ձեռքով չխափանվի «այն դիվաշունչ օրագրի» («Հյուսիսափայլի») հրատարակությունը. նրանք են, որ դարձյալ բորբոքում են Նոր-Նախիջևանի բնակչության մեջ երկպառակության հրդեհը, որի սկզբնապատճառը Նալբանդյանն է՝ բացահայտ ապստամբության և անհնազանդության մղելով ժողովրդին, որն արդեն շեղվել է՝ Միքայել Նալբանդյանի և նրա համախոհների «չարաթույն վարդապետության» (ուսմունքին) հետևելով։

Մատենադարան, Երիցյանի ար խիվ, *թղթ. 150, վ. 143։*

Հոկտեմբերի 8(21), Մադրաս.— *Նամակ Սեթ Աբգարյանին։ Չի պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV, 270։*

Հոկտեմբերի 12.— *Մոսկվայի Տվերսկայա հրապարակում տեղի է ունենում ուսանողական ցույց, որին մասնակցում են ավելի քան 500 հոգի. 340 հոգի ձերբակալվում են։*

«Համրավարեր Ռուսիա», *1861, № 7, 3—4։*

Հոկտեմբերի 21.— *Գրաքննության գլխավոր վարչության նախագահ Պուտյատինը Կովկասյան կոմիտեի անդամ Բուդկովին հայտնում է, որ «Հյուսիսափայլի» 1860 թ. 10-րդ գրքի 312 և 313 էջերում արված դատողությունները հայ հոգևորականության մասին, իրոք, չպետք է թույլատրվեին տպագրության, բայց դրանք հիմք չեն տալիս ամսագիրը փակելու համար։ Այնուհետև հայտնում է, որ Պետերբուրգի գրաքննական կոմիտեին կարգադրված է՝ այսուհետև թույլ չտալ այդ ամսագրում վիրավորական արտահայտություններ հայ հոգևորականության դեմ և այդ մասին տեղեկացնել ամսագրի խմբագիր Ստ. Նազարյանին։*

Տեղեկագիր Հայկական ՍՍՌ Գիտ. ակադեմիայի, հաս. գիտ., *1948, № 11, 79—80։*

Հոկտեմբերի 23, Մադրաս.— *Նամակներ Թ. Խ. Ավետումին, Ս. Հ. Աբգարին, Պ. Հ. Պալին և եղբորը (?)։ Չեն պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV, 270։*

Հոկտեմբերի 24.— *Նալբանդյանը հասնում է Սուեզ։*

Երկերի լիակատար ժող., *IV, 273։*

Նույն օրը.— *Մտնում է Կահիրե։* Նույն տեղը։

Հոկտեմբերի 28.— *Կահիրեից մեկնում է։* Նույն տեղը։

Հոկտեմբերի 29.— *Հասնում է Ալեքսանդրիա։* Նույն տեղը։

Հոկտեմբերի 30 (նոյեմբերի 11), Ալեքսանդրիա.— *Նալբանդյանի հեռագիրը Ղ. Խաֆաֆյանին՝ Հոլանդիա։ Չի պահպանվել։*
Թուրքական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. *123/178բ։*

Հոկտեմբերի 31 (նոյեմբերի 12), Ալեքսանդրիա.— *Նամակներ Կ. Հայրապետյանին, Ղ. Խաֆաֆյանին և Սերոբ Նալբանդյանին։ Չեն պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV, 270։*

Նոյեմբերի 2.— *Ալեքսանդրիայից մեկնում է։*
Երկերի լիակատար ժող., *IV, 273։*

Նոյեմբերի 3.—*Ձերբակալվում և Պետրոպավլովյան բերդում բանտարկվում է Վ. Ա. Օբրուչևը։*
М. Н. Гернет, История царской тюрьмы, 345.

Նոյեմբերի 4.— *Նալբանդյանը հասնում է Երուսաղեմ։*
Երկերի լիակատար ժող., *IV, 273։*

Նոյեմբերի 8.— *Երուսաղեմից մեկնում է։* Նույն տեղը։

Նոյեմբերի 9.— *Հասնում է Յոպպե (Յաֆֆա)։* Նույն տեղը։

Նոյեմբերի 11.— *Հասնում է Ալեքսանդրետ։*
Երկերի լիակատար ժող., *IV, 274։*

Նոյեմբերի 14(26), Ալեքսանդրետ.— *Նամակներ Սեթ Հ. Աբգարյանին, Անջելո Ռոզետտոյին և Ստանիսլավին (Սաքին)։*
Երկերի լիակատար ժող., *IV, 270։*

Նույն օրը.— *Ալեքսանդրետից մեկնում է։*
Երկերի լիակատար ժող., *IV, 274։*

Նոյեմբերի 17.— *Վախճանվեց Ն. Ա. Դոբրոլյուբովը։*
С. А. Рейсер, Летопись жизни и деятельности Н. А. Добролюбова, М., 1953, стр. 314.

Նոյեմբերի 18(30), Ալեքսանդրետ.— *Նալբանդյանի հեռագիրը Հ. Ավաճյանին։ Չի պահպանվել։*
Թուրքական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *123/178բ։*

Նույն օրը.— *Հասնում է Իզմիր։* Երկերի լիակատար ժող., *IV, 274։*

Նույն օրը.— *Իզմիրից մեկնում է։* «Ծաղիկ», *1861, № 15։*

Նույն օրը.— *«Արշալույս Արարատյան» թերթը, հիմնվելով Կալկաթայից ստացած մասնավոր նամակի վրա, հաղորդում է, որ Նալբանդյանը հաջողությամբ ավարտելով հնդկահայ կտակների գործը, մեկնել է Կալկաթայից։* «Արշալույս Արարատյան», *1861, № 662։*

Նոյեմբերի 20.— *«Ծաղիկ» տասնօրյա թերթը Նալբանդյանի Իզմիր ժամանելու առթիվ գրում է.*

«Հայկական գրականության ասպարեզին ախոյաններեն արժանահարգ պ. Նալբանդյանցը, որուն տաղանդը և անհատական արժանավորությունը և ազգասեր ոգին ու սիրտը արդեն շատերուն հայտնի է, նոյեմբերի 18-ին Աղեքսանդրիայեն Իզմիր հասավ՝ իր ի Հնդկաստան ճանապարհորդութենեն վերադառնալով, և նույն օրը ավստրիական շոգենավով մեկնեցավ ի Պոլիս։

«Հաշտենիք» և «Վասպուրական» ընկերությանց մեծարգո անդամներուն հետ մենք ևս պատիվ ունեցանք իր հետը տեսություն ընելու և ի մոտուստ նշմարելու և ստուգելու, ինչ որ արդեն լսած և իմացած էինք իր ազատականության և ազգասիրության վրա, երբ կկրեր անիկա իր ազատական դրոշը, որուն բունության ձեռոք ծալված ըլլալուն տրամադիր լուրը արդեն առած ենք։

Ճշմարիտ սկզբունքներու վրա հիմնված դրության մը չշարժիր ժամանակին շունչեն, և հօգուտ հանրության անխախտ կմնա այն՝ ապագային մեջ, նաև պարագաներու բունության առջև։ Համոզված ենք, թե արդո Մ. Նալբանդյանցը այսպիսի փրկավետ դրության մը տեր է և իր տեսությունը թեև կարճատև եղավ, սակայն մեր հիշողությունը համակրության այնպիսի դրոշմով մը կնքեց, զոր ժամանակին թևը անկարող պիտի ըլլա սրբել և ջնջել։
«Ծաղիկ», *1861, № 15, 120։*

Նույն օրը.— *Նալբանդյանը Հնդկաստանից վերադառնալիս մտնում է Պոլիս։ «Մեղուն», հատուկ խմբագրական հոդվածով, նշե-*

լով Նալբանդյանի երկրորդ այցելությունը, գրում է. «Պ. Միքայել Նալբանդյանց, նոր-նախիջևանցի երիտասարդը, Բեդերսպուրկի համալսարանի ընտրելի, մեր և հայ ազգին ողջամիտ մասին սիրելի բարեկամը մայրաքաղաքս հասավ թերթիս թվույն թվականովը [նոյեմբերի 20] Հնդկաստանեն գալով և երուսաղեմ ալ հանդիպելով»: Այնուհետև, համառոտակի տեղեկություններ տալով կատակների մասին և բարձր գնահատելով Նալբանդյանի դերն այդ գործում, թերթն ավելացնում է. «... Կվերջացնենք մեր խոսքը, հայտնելով մեր ուրախությունը պ. Նալբանդյանցի փառավոր հաջողության վրա, անոր մասուցանելով ազգին կողմեն մեր խորին շնորհակալությունը և հուսալով, որ Նախիջևանի ազգայինք, շնորհիվ բարեհիշատակ հանգուցյալներուն արդյանց և շնորհիվ անոնց բարերարության կյանք տվող պ. Նալբանդյանցի տաժանելի աշխատության կյանք տվող պ. Նալբանդյանցի տաժանելի աշխատությանցը, կարող պիտի ըլլան դաստիարակության, կրթության և հասարակության ամենահարկավոր և գլխավոր պիտույքը ձեռք բերած, ազգային տանը մեկ անկյունին հիմն ալ իրենք դնելու»:

Վերջում Սվաճյանը հայտնում է, որ մի քանի օրից հետո Նալբանդյանը Պոլսից մեկնելու է Լոնդոն՝ կտակների գործն ավարտելու համար:

«Մեղու», 1861, № 146, 217—218:


Դեկտեմբերի 1(13), Պոլիս.— Նամակներ Հ. Սվաճյանին և Պ. Մելիտոսյանին: Չեն պահպանվել: Երկերի լիակատար ժող., IV, 270:

Նույն օրը.— Իզմիրի «Մաղիկ» տասնօրյա հանդեսը, ստանալով «Հյուսիսափայլի» համարները, իր ուրախությունն է հայտնում նրա անխափան հրատարակվելու առթիվ և հանձնարարելով ընթերցողներին, հատկապես հիշեցնում է, որ այդ ամսագրի հրատարակիչներից մեկն է Նալբանդյանը: ««Հյուսիսափայլը» հայ հանդեսներուն երևելիներեն մեկն է, և իր պարունակած զանազան օգտակար նյութերեն ընթերցողն ինքնին կրնա համոզվիլ և խոստովանիլ մեր ըսածին ստուգությունը: Իզմիր ստորագրության տեղն է «Վասպուրական» թանգարանը»:

«Մաղիկ», 1861, № 16:

Դեկտեմբերի 6.— Գ. վ. Այվազովսկին Եկատերինոսլավի նահանգապետ կոմս Սիվերսին ուղղած նամակում գրում է, թե ինքը միանգամայն համաձայն է Կ. Հայրապետյանի և նրա համախոհների դեմ գործադրելու կառավարական խիստ միջոցներ, առանց որոնց թեմի գործերը վարելն իր համար կդառնար չափազանց ծանր մի բեռ:

Ռուական թանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ:


«Մեղվի» անվանաթերթը

Դեկտեմբերի 11.— *Հ. Ջերքեզյանը Մատթեոս կաթողիկոսին ուղղած նամակում իր դժգոհությունն է հայտնում, որ «Հյուսիսափայլի» տպագրությունն արգելելու մասին Սինոդի որոշումը մինչև այսօր անկատար է մնացել։ «Հյուսիսափայլի» «վնասակարության» վերաբերյալ նոր փաստեր բերելով, Ջերքեզյանը խնդրում է, որ կաթողիկոսն իր «աստվածապարգև և կայսերատուր իշխանությամբ» ի կատար ածի «Հյուսիսափայլ» կոչված «վնասաբեր և ազգակործան օրագրի խափանման պանծալի գործը», որ նա արդեն սկսել է։ Եվ այդ նպատակով խնդրում է կրկին դիմել Կովկասի փոխարքայի միջնորդությանը։*

«Մասյաց Աղավնի», *1862, № 16, 186—188։*

Դեկտեմբերի 12.— *Կ. Հայրապետյանի նամակը Նալբանդյանին. գրում է, թե այժմ ամեն ինչ լավ է. խնդրում է փետրվար ամսին (1862 թ.) լինել Պետերբուրգում, հույս հայտնելով, որ այնտեղ միմյանց հետ տեսնվելուց հետո, թերևս, միասին Նախիջևան էլ գնան՝ «կատր մը ժողովուրդի հետ սեր վայելելու, վարժատուն բանալու և այլն, և այլն... Ուզում եմ, որ չենացնեմ, մեկ տպարան ալ կհետևենք ունենալու, որ Նախիջևանը ուրիշ քաղաքներու կարոտություն չունենար. այդ ամենը մենք Ձեզ հետ պիտո է անենք...*

Միմիայն շատ կուխնդրեմ Ձեզ, պիտո է խոհեմությամբ, երկայնամտությամբ և համբերությամբ բան անել, մի՛ նեղանաք. այժմ ամեն կողմից նայում են Ձեր ու մեր վերա (թեև ոչինչ չենք արած, բացի լավից, ոչինչ չգիտենք բացի ճշմարտությունից). ուրեմն պիտո է զգուշություն։ Մեր բարեկամք ամենեքյան լավ են և անփոփոխ նույն հաստատ դրության մեջն են. դրսվանց կատր մը պարկեշտություն, խոնարհություն, լուռ ու մունջ կենալ պետք է այսպիսի միջոցներր»։ ЦГИАМ, ф. ОППС, д. 54, лл. 179—180.

Դեկտեմբերի 14, Երեկոյան.— *Պոլսի Արևելյան թատրոնում Նալբանդյանը դիտում է «երկու հիանապետներ» և «երկու մոռացկոտներ» պիեսների բեմադրությունը։ Ներկայացումից առաջ Նալբանդյանը, ինչպես վկայում է Ա. Այվազյանը, «իմաստալից ճառ մը կըսե, որ բուռն ծափահարությամբ կընդմիջվի և կդնահատվի, և օրինակն կհրատարակվի նույն տարվա «Մեղու» հանդեսին մեկ թվույն մեջ»։*

Ա. Այվազյան, Շար հայ կենսագրությանց, հ. II, Պոլիս, 1893, 113։

Դեկտեմբերի 17, Բերա (Պոլիս).— *Նալբանդյանը գրում է «Ազգային թատրոն Պոլսի մեջ» հոդվածը, որ, հավանորեն, դեկտեմբերի 14-ի երեկոյան Արևելյան թատրոնում, ներկայացումից առաջ, արտասանած ճառի շարադրանքն է։*

Երկերի լիակատար ժող., *II, 307—311։*

Դեկտեմբերի 20.— *«Մեղուն» տպագրում է «Ազգային թատրոն Պոլսի մեջ» հոդվածը։* «Մեղու», *1861, № 147, 225—228։*

Նույն համարում արտատպվում է «Իտալացի աղջկա երգ 1859 թվականից» բանաստեղծությունը (էջ 228—229)։

Նույն օրը.— *«Փարիզը» «Արշալույս Արարատյան» թերթից արտատպում է Նալբանդյանի՝ հնդկահայ կտակների գործն ավարտելու և կալկաթայից մեկնելու լուրը։* «Փարիզ», *1861, № 57։*

Դեկտեմբերի 22, Պոլիս.—*Նալբանդյանը Պոլսի ռուսական դեսպանի հանձնարարությամբ գրում է* «Армяно-грегорианская община в Константинополе» *զեկուցագիրը, որտեղ, նկարագրելով արևմտահայերի իրավաքաղաքական ծանր վիճակը Թյուրքիայում և նշելով հայ ժողովրդի համակրությունը Ռուսաստանի նկատմամբ, անհրաժեշտ է համարում ռուս կառավարության միջամտությունը, որի շնորհիվ կարելի կլինի կասեցնել անգլո-ֆրանսիական ազդեցությունը, որ տարածվում է միսիոներների պրոպագանդայի և այլ միջոցներով։* Երկերի լիակատար ժող., *II, 346—358։*

Դեկտեմբերի 26.— *Պոլսի ռուսական դեսպան Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկին Կովկասի փոխարքայի տեղակալ Գ. Դ. Օրբելիանիին է ուղարկում Նալբանդյանի «Պոլսահայ լուսավորչական համայնքը». լիովին հավանություն տալով Նալբանդյանի դիտողություններին, դեսպանը նշում է, որ արծարծված խնդրի նկատմամբ Նալբանդյանն ունի «շահագրգիռ հայացք»։* Անտիպ երկեր, *424—425։*

Դեկտեմբերի 27.— *Նալբանդյանը Պոլսից մեկնում է Լոնդոն։*
Երկերի լիակատար ժող., *IV, 274։*

Դեկտեմբերի 31.— *«Մեղվում» տպագրվում է «Ապոլոնին» բանաստեղծությունը։* «Մեղու», *1861, № 148, 236։*
Երկերի լիակատար ժող., *I, 92։*

1 8 6 2

Հունվարի 2.— *Նալբանդյանը հասնում է Մարսել։*
Երկերի լիակատար ժող., *IV*, 274։

Հունվարի 4, Մարսել.—*Նամակներ Հովհ. Բերբերյանին, Ղ. Նալբանդյանին, Ղ. Խաֆաֆյանին, Կ. Հայրապետյանին և Կյուրեղին(?)։ Չեն պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV*, 270։

Նույն օրը.— *Մարսելից մեկնում է Փարիզ։*
Երկերի լիակատար ժող., *IV*, 274։

Հունվարի 5.— *Հասնում է Փարիզ։* Նույն տեղը։

Հունվարի 8.— *Փարիզից մեկնում է Լոնդոն։* Նույն տեղը։

Հունվարի 9.— *Հասնում է Լոնդոն։* Նույն տեղը։

Հունվարի 15.— *Արտաքին գործերի մինիստր Ա. Մ. Գորչակովը Կովկասյան կոմիտեին է ուղարկում «Պոլսահայ լուսավորչական համայնքը», խնդրելով վերջինիս մասին կոմիտեի կարծիքը։*
Անտիպ երկեր, *426*։

Հունվարի 17.— *Կովկասյան կոմիտեն արտաքին գործերի մինիստրին վերադարձնելով «Պոլսահայ լուսավորչական համայնքը», նախազգուշացնում է Նալբանդյանի հաղորդած տեղեկություններին անվերապահորեն վստահելուց. նա վկայակոչում է Նալբանդյանին «մոտիկից ճանաչողների» [Գ. վ. Այվազովսկի, Ե. Լազարյան, Ի. Դելյանով և նմանների] կարծիքը, թե Նալբանդյանը սիրում է խառնվել ուրիշների գործերին և ձգտում է շարունակ ազդեցություն ձեռք բերել հայերի մեջ գոյություն ունեցող զանազան պարտիաների վրա»։*
Անտիպ երկեր, *426—427*։

Հունվարի 20, Լոնդոն.— *Նամակ Մ. Չուխաճյանին. բողոքում է Ջուղայի առաջնորդ Թադեոս եպիսկոպոս Բեգնազարյանի բռնությունների և շահատակությունների դեմ. նկարագրում է Ջուղայի ժողովրդի թշվառ վիճակը. բնակիչներից շատերը մնտեսական ծանր վիճակում են, նույնիսկ՝ զրկված օրական հացը հայթայթելու հնարավորությունից. գրում է, որ այդ մասին բազմաթիվ փաստեր և*



Միքայել Նալբանդյան

տեղեկություններ ունի, որ հրապարակելու է։ Քանի որ ժողովրդի բողոքը՝ նրան հարստահարող հոգևորականության կողմից արհամարհանքի ու ծաղրի է ենթարկվում, Նալբանդյանն անհրաժեշտ է համարում տպագրական մամուլի միջոցով, ո՛չ միայն հայերեն, այլև ուրիշ լեզուներով մերկացնել հոգևորականների բռնություններն ու հարստահարությունները ժողովրդի նկատմամբ։

Եղկերի լիակատար ժող., *IV*, *118—122*։

Նույն օրը, Լոնդոն.— *Երկրորդ նամակը Մ. Չուխաճյանին. հայտնելով, որ Կալկաթայի հայկական եկեղեցում էջմիածնին պատկանող զգալի գումար է կուտակվել, խնդրում է կարգադրություն անել, հիշեցնելով, որ այդ գումարը կարելի է օգտագործել էջմիածնում դպրոց հիմնելու համար։*

Եղկերի լիակատար ժող., *IV*, *122—123*։

Հունվարի 22 (փետրվարի 3), Լոնդոն.— *Նամակ Հովհ. Խաչկյանին. հայտնում է, որ Ջուղայի ժողովրդի ծանր վիճակի և հոգևորականների հարստահարությունների մասին գրել է կաթողիկոսին, ինչպես նաև Թիֆլիսի և էջմիածնի իր բարեկամներին, որպեսզի նրանք ևս բողոքեն։* Եղկերի լիակատար ժող., *IV*, *123—124*։

Նույն օրը, Լոնդոն.— *Նամակներ Ղ. Խաֆաֆյանին և Ս. Հ. Աբգարյանին։ Չեն պահպանվել։* Եղկերի լիակատար ժող., *IV*, *271*։

Հունվարի 23 (փետրվարի 4), Լոնդոն.— *Նամակներ եղբայրներին, Ղ. Խաֆաֆյանին, Հովհ. Բերբերյանին, Ս. Սուլթանշահին, Ֆ. Ռուդնևին և Կովալևսկուն։ Չեն պահպանվել։* Նույն տեղը։

Հունվարի 24 (փետրվարի 5), Լոնդոն.— *Նամակ «Մեղվին» (Հ. Սվաճյանին)։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Հունվարի 26 (փետրվարի 7), Լոնդոն.— *Նամակներ Ղ. Խաֆաֆյանին և Կովալևսկուն։ Չեն պահպանվել։* Նույն տեղը։

Հունվարի 27.— *«Արշալույս Արարատյան» կղերա-ռեակցիոն թերթը տպագրում է էջմիածնի Սինոդի 1861 թ. հուլիսի 8-ի որոշումը՝ «Հյուսիսափայլի» հրատարակությունն արգելելու վերաբերյալ Կովկասի փոխարքայի առաջ հարց հարուցելու մասին։*

«Արշալույս Արարատյան», *1862*, *հունվարի 27*։

Հունվարի 28 (փետրվարի 9), Լոնդոն.— *Նամակներ Հովհ. Քյաթիպյանին և Կ. Հայրապետյանին: Չեն պահպանվել:*
Երկերի լիակատար ժող., *IV, 271:*

Հունվարի 29 (փետրվարի 10), Լոնդոն.— *Նամակներ [Մ.] Հակոբյանցին և Ալփիարին: Չեն պահպանվել:* Նույն տեղը:

Հունվարի 30 (փետրվարի 11), Լոնդոն.— *Նամակ Մ. Բուդաղյանին: Չի պահպանվել:* Նույն տեղը:

Հունվարի 31 (փետրվարի 12), Լոնդոն.—*Նամակներ «պապային» (?) և «Մեղվին» (Հ. Սվաճյանին): Չեն պահպանվել:* Նույն տեղը:

Հունվար.— *Մարկիզ դե-Տրավերսեն Լոնդոնում ծանոթանում է Գերցենի և նրա ընկերների հետ:*
M. Лемке, Очерки освободит. дзижения 60-х годов, 106.

Հավանաբար, Նալբանդյանը դե-Տրավերսեի հետ ծանոթացել է հենց այդ ժամանակ:

Փետրվարի 1(13), Լոնդոն.— *Նամակ Կովալևսկուն: Չի պահպանվել:* Երկերի լիակատար ժող., *IV, 271:*

Փետրվարի 3(15), Լոնդոն.—*Նամակ Տ. Փեշտմալճյանին: Չի պահպանվել:* Նույն տեղը:

Փետրվարի 5(17), Լոնդոն.—*Նամակ Մ. Բուդաղյանին: Չի պահպանվել:* Նույն տեղը:

Փետրվարի 7(19), Լոնդոն.—*Նամակներ «պապային» (?) և «Մեղվին» (Հ. Սվաճյանին): Չեն պահպանվել:* Նույն տեղը:

Փետրվարի 9(21), Լոնդոն.— *Նամակ Հովհ. Քյաթիպյանին: Չի պահպանվել:* Նույն տեղը:

Փետրվարի 12.—*Լոնդոնից մեկնում է Փարիզ:*
Երկերի լիակատար ժող., *IV, 271:*

Փետրվարի 13.— *Հասնում է Փարիզ:* Նույն տեղը:

Փետրվարի 14(26), Փարիզ.— *Նամակներ Կալկաթայի իր ծանոթներին՝ Պ. Միլիտոսյանին, Պ. Պալին, Բ. Խ. Ավետումյանին, Գ. Մ. Դավթյանին և Ս. Հ. Աբգարյանին: Չեն պահպանվել:*
Երկերի լիակատար ժող., *IV, 271:*

Փետրվարի 14.— *«Փարիզ» թերթը, հաղորդելով էջմիածնի Սինոդի որոշումը «Հյուսիսափայլի» մասին, գրում է. ««Հյուսիսափայլը» բնավ կարդացած չեմք, և չեմք գիտեր ամենևին, թե նա ի՛նչ կքարոզե: Բայց եթե անոր հրատարակածները մոլար գաղափարներ ալ լինին, գարձյալ անիկա դադարեցնել տալը խղճի և տպագրական ազատութեան դեմ է և դարուս ոգվույն հակառակ»: Թերթը գտնում է, որ «մոլար գաղափարների» դեմ պետք է պայքարել «անմոլար» գաղափարներ տարածելով, այսինքն՝ ազատ բանակռվի միջոցով: «Դարուս ոգվույն» հակառակ լինելուց բացի, «Հյուսիսափայլը» փակելը հոդվածագիրը պայքարի անօգուտ ձև է համարում. «Ի՞նչ կըրնանք ընել,—հարցնում է նա,—եթե վաղը «Հյուսիսափայլի» արգո հեղինակները կամ ուրիշ անձինք Եվրոպա գան, օրինակի աղազավ, Անդրիա երթան, և մեր չուպած մոլորութիւնները ազատորեն և առատորեն տպագրեն ու տարածեն. կրնա՞նք հոն ալ միջնորդ մը գտնել տպագրածնին խափանելու կամ իրենց ընթերցողներուն ձեռքեն խլելու: Ո՛չ երբեք: Եվ ահա Լոնտոա (Լոնդոն) հրատարակված «Զանգակ» («Колоколъ») անուն ռուսերեն օրագիրը մեզի օրինակ կրնա լինել»:*
«Փարիզ», *1862, № 61:*

Փետրվարի 19 (մարտի 3), Փարիզ.— *Երկու նամակ «պապային» (?): Չեն պահպանվել:* Երկերի լիակատար ժող., *IV, 271:*

Փետրվարի 21—22 (մարտի 5—6).—*Նալբանդյանը լինում է Կալեում (Յրանսիա):*
Գրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 123/178բ:*

Փետրվարի 24 (մարտի 8), Լոնդոն.— *Նամակ Հովհ. Քյաթիպյանին: Չի պահպանվել:* Երկերի լիակատար ժող., *IV, 272:*

Փետրվարի 27 (մարտի 11), Լոնդոն.— *Ծածկագրի տակ Նալբանդյանը մակագրում է. «Պահպանելի օրինակ: Ճիշտ է: 11 մարտի նոր ոճով, 1862, Լոնդոն»:*
Երկերի լիակատար ժող., *IV, 284—285. ներդիր:*

Նույն օրը, Լոնդոն.— *Նամակ Հովհ. Քյաթիպյանին։ Չի պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV*, 272։

Փետրվարի 28 (մարտի 12), Լոնդոն.— *Նամակներ Մ. Բուդաղյանին, Ղ. Խաֆաֆյանին, «պապային» (?) և Հ. Սվաճյանին։ Չեն պահպանվել։*

Նույն տեղը։

Փետրվար.— *Չամուռճյանն «Արշալույս Արարատյան» թերթից, առանձին գոհունակությամբ, ամբողջովին արտատպելով էջմիածնի Սինոդի որոշումը «Հյուսիսափայլի» մասին, շտապում է եզրակացնել, թե՝ «պետության հրամանով ալ ասկեց ետքը [նրա] հրատարակությունը արգելեր են»։ «Այս պարբերականս գովողներն ալ, քաջալերողներն ալ, շատկեկ բաժանորդ գտնելու աշխատողներն ալ նույն դատապարտության տակ են»,— գրում է Չամուռճյանը, ակնարկելով Սվաճյանին և մյուս «մեղավականներին»։*

Անդրադառնալով Նալբանդյանին, Չամուռճյանը նշում է, որ նա «ուղղափառ հավատի դեմ» իր նետերն արձակում էր «Հյուսիսափայլի» միջոցով, ինչպես և հետագայում, Պոլիս գալով՝ «Մեղվի» միջոցով։ Սակայն «Փարիզը» Նալբանդյանը չկարողացավ օգտագործել, որովհետև «Շահնազարյան վարդապետը անոր հոդված չէր տար տպելու։ Ուստի հարկ եղավ Նալբանդյանցին իր «երկու տող» խոսքը առանձին տետրակով տպել և Կոստանդնուպոլիս ձրի բաժնելու համար խրկել «Մեղվի» խմբագրին, որ ան ալ հատը հինդական դուրուշ ծախելով, ստակը հեղինակին մոլորությունը իր պարբերականին մեջ տարածելու գործածեց»։

Արևմտահայ դեմոկրատներին գալով, Չամուռճյանը նշում է, որ նրանք, կաթոլիկոսի իշխանությունը չճանաչելով, իրենց «մոլար վարդապետություններու դատապարտությունը» նույնքան բանի տեղ կդնեն, ինչքան Վոլտերն ու Ռուսսոն՝ իրենց գրքերի դատապարտությունը։

«Բևեռ», *1862, № 133, 79—86։*

Մինչև մարտի 1.— *Ա. Ի. Գերցենն ստանում է Ն. Ա. Սերնո-Սոլովևիչի* «Какой исход для России из нынешнего ее положения» *գրքույկը։*

А. И. Герцен, Полн. собр. соч., т. XV, 70.

[Մարտի սկիզբը], Լոնդոն.— *Նալբանդյանն սկսում է գրել «Երկբագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը։*

КОЛОКОЛЪ

ПРИБАВОЧНЫЕ ЛИСТЫ КЪ ПОЛЯРНОЙ ЗВѢЗДѢ

VIVOS VOCO·

(ВТОРОЕ ИЗДАНІЕ)

Выходитъ по мѣрѣ ея выхода въ Англіи, чрезъ 6 недѣль. Выписывается во Франціи Russische Buchhandlung — 2, Judd Street, Brunswick Square, W. C.

ЛИСТЪ 1.

1 Іюня 1857

Въ Германіи и Австріи подписка принимается во всѣхъ Почтамтахъ, Книжныхъ магазинахъ и Бюро Газетъ.

ПРЕДИСЛОВІЕ

Россія тяжело молчала,
Какъ подземное море,
Когда огненная гора
Огнь, дымъ и пламя,
Но тотъ, который что есть силъ
Ревѣлъ всемірный потопъ,
Онъ съ тупою мукою вопроса
Не знаетъ, что ждать отъ моря,
И мысль его не проникла
Какая жизнь въ роковой силѣ
Рядомъ—не чудовища,
Сомкнулъ вѣчную дремоту.
На гладкихъ чертахъ и волнахъ,
Какъ знаки русскихъ могилъ,
Глазъ мелькаетъ ея крутыя
Страшныя разрушенія не отмѣтили,
Звучныхъ ея волнъ не разнесло—
Не далъ пронзить востокъ
Не потонулъ что есть силы

Онъ тупою мукою вопроса
Къ потопу, что здѣсь нашелъ
Въ глубокомысленномъ просторѣ
И не находитъ отвѣта
Для мучительнаго Гдѣ.

Времена съ разными датами
Для насъ только одинъ годъ,
Теперь вотъ, сказали они...
Запомнятъ, позабудутъ, замѣтятъ,
И имъ не будетъ не до времени,
Имъ—тѣснятся потомки гордые—
Имъ колоссальное творится
Россія людей не интересуетъ,
И время ихъ мало не станетъ,
И непремѣнно въ тѣсномъ
Исчезнетъ нерасчетливое племя,
Съ сомнительнымъ добромъ самодовольно,
Замкнетъ за всѣ замками.

ПОЛЯРНАЯ ЗВѢЗДА выходитъ слишкомъ рѣдко, мы не имѣемъ времени писать ее чаще. Между тѣмъ событія въ Россіи мелькаютъ быстро, имъ надобно давать ходъ, ихъ надобно обсуждать тотчасъ. Для этого мы предпринимаемъ новое періодическое изданіе. Не опредѣляя сроковъ выхода, мы постараемся ежемѣсячно издавать одинъ листъ, иногда два, подъ названіемъ КОЛОКОЛЪ.

О направленіи говорить нечего, оно тоже, которое и въ Полярной Звѣздѣ, тоже, которое проводитъ исключительно черезъ всю нашу жизнь. Вездѣ, во всемъ, всегда, были со стороны зла—противъ насилія, со стороны разума—противъ пристрастія, со стороны пользы—противъ произвола, со стороны развивающейся народности—противъ отсталости нравственной. Такими обязаны мы быть и впредь.

Въ отношеніи къ Россіи, мы хотимъ стремленія, но всѣ стремленія только тогда, со всей силой неотвязной мысли,—чтобъ въ нихъ скрыта была основа настоящей пользы, убѣжденіе могучее разрушить ее. Для этого мы теперь, какъ въ 1825 году,* стоимъ передъ необходимымъ, неотлагаемымъ вопросомъ:

Объ освобожденіе крестьянъ—отъ рабства!

Объ освобожденіе крестьянъ—отъ помѣщиковъ!

Объ освобожденіе общественнаго состоянія—отъ чиновъ!

* Декабрьскій Императорскій заговоръ.

Не ограничиваясь впрочемъ этими вопросами Колоколъ посвященный исключительно русскимъ интересамъ, будетъ говорить обо всѣхъ, кто бы ни былъ затронутъ—всѣмъ ужасомъ или гордымъ сознаніемъ высокомѣрія, встрѣченныхъ нами, или всѣмъ ужасомъ и преступленіемъ, совершенныхъ и совершаемыхъ ими.

Къ такому обращенію ко всѣмъ соотечественникамъ, дѣлающимъ намъ любовь къ Россіи и отчизнѣ нашей не только слушать нашъ Колоколъ, но и самимъ звонить въ него!

Появленіе новаго русскаго органа служащаго дополненіемъ къ Полярной Звѣздѣ не есть дѣло случайное и зависящее отъ одного личнаго произвола, а отвѣтъ на потребность, мы должны его подать.

Для того чтобы объяснить это, я напомню короткую исторію нашего типографскаго станка.

Русская Типографія, основанная въ 1853 году въ Лондонѣ, была закрыта. Открывая ее, я обратился къ нашимъ соотечественникамъ съ призывомъ, изъ котораго возьмутъ слѣдующія строки:

" Отчего мы молчимъ?

" Неужели намъ нечего сказать?

" Или мы молчимъ только оттого, что мы не смѣемъ говорить?

" Дома нѣтъ ни одной свободной русской рѣчи,—она можетъ раздаваться внѣ, если только въ часъ пріидетъ.

" И чѣмъ ближе къ намъ тяготѣетъ молчать, чего намъ стоитъ скрывать всякое чувство, всякую мысль, всякій порывъ.

" Открытая типовая рѣчь—великое дѣло, было большой рѣчи—нѣтъ полной свободы. Не дорого за все дать жизнь, оставить отечество, бросить достояніе. Скрывается только слабое, боящееся, встрѣчное, " молчаніе знакъ согласія," оно явно выражаетъ отрѣченіе, безчеловѣчность, сознаніе головы, созданную безправность.

" Открытое слово—гордое, гласное призваніе, переходитъ въ дѣйствіе.

" Время печатать по русски въ Россіи, какъ вамъ кажется. Одобряется ли это вами? Это показите вы

" Но тѣ дѣла печатать по русски за границею '—какъ могутъ распространяться. Гдѣ? Вопросительныя знаки!

«Կոլոկոլի» առաջին համարի էջանշաններից

Մարտի 6(18), Լոնդոն.— *Նամակներ Հ. Նուրիջանյանին, Կ. Հայրապետյանին, Ղ. Խաֆաֆյանին, Հովհ. Բերբերյանին և եղբայրներին։ Չեն պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV*, 272։

Մարտի 7(19), Լոնդոն.— *Նամակ «Մեղվին» (Հ. Սվաճյանին)։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Մարտի 10(22), Լոնդոն.— *Նամակներ Ղ. Խաֆաֆյանին և Կ. Հայրապետյանին։ Չեն պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Գերցենի «Կոլոկոլում» տպագրվում է Տվերի նահանգի լիբերալ ազնվականության դիմումը Ալեքսանդր II ցարին՝ գյուղացիական ռեֆորմի մասին։ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ Նալբանդյանն ամբողջությամբ թարգմանաբար արտատպելով այդ դիմումը՝ տալիս է իր մեկնաբանությունները և տեղեկություններ է հաղորդում դիմումն ստորագրողների և նրանց նկատմամբ ցարական կառավարության գործադրած հալածանքի մասին։* Երկերի լիակատար ժող., *III*, 60—61։

Մարտի 14(26), Լոնդոն.— *Նամակ Տ. Փեշտմալճյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV*, 272։

Մարտի 15(27), Լոնդոն.— *Նամակ Տ. Փեշտմալճյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Մինչև մարտի 16(28).— *Լոնդոն է ժամանում Ն. Վ. Ալբերտինին։* **А. И. Герцен**, Полн. собр. соч., т. XV, 78.

Հավանորեն, այդ ժամանակ էլ Նալբանդյանը ծանոթանում է Ալբերտինիի հետ։

Մարտի 21 (ապրիլի 2), Լոնդոն.— *Ստանում է թույլտվություն Բրիտանական թանգարանի ընթերցարանից օգտվելու համար։*
Գրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 123/166*։

Մարտի 26, Լոնդոն.— *Գրում է «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության առաջաբանը՝ ուղղված հայ երիտասարդությանը։* Երկերի լիակատար ժող., *III*, 41։

Մարտի 29 (ապրիլի 10), Լոնդոն.— *Նամակներ Ս. Հ. և Հ. Գ. Աբգարյաններին, Ս. Թագվորյանին և Տ. Փեշտմալճյանին։ Չեն պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV*, 272։

Մինչև մարտի 30 (ապրիլի 11).— *Նալբանդյանն այցելում է Գերցենին։* **А. И. Герцен**, Полн. собр. соч., т. XV, 105, XXII, 320.

Այդ մասին Ն. Ա. Տուչկովա-Օգարևան իր հիշողություններում պատմում է. «Բակունինի Լոնդոնում եղած ժամանակ Ռուսաստանից եկածներից հիշում եմ մի հայի՝ Նալբանդով ազգանունով։ Նա կլիներ երեսուն տարեկան, գեղեցիկ չէր, ո՛չ էլ ճարպիկ, թաշվող էր, բայց բարի ու խելացի, ամեն լավ բանի համակրող։ Նա մեծ միջոցների տեր էր, ինչպես նկատելի էր և ինչպես նախապես լսել էինք նրա բնկեր Ս-ից։ Ավարտելով, կարծեմ, Մոսկվայի համալսարանի դասընթացը, նա ճանապարհորդում էր իր բավականության համար [?]. եղել էր Չինաստանում [?]. Ռուսաստան վերադառնալիս լսել էր «Կոլոկոլի» ու Գերցենի մասին և որոշել էր լինել Լոնդոնում։ Երբ նա առաջին անգամ եկավ Ալեքսանդր Իվանովիչի մոտ, հուզմունքից հազիվ էր կարողանում խոսել, սակայն, հետո, ուրախացած Գերցենի սիրալիր ընդունելությունից, շատ հաճախ էր լինում մեզ մոտ... Այդ տարօրինակ մարդը մոտ երկու ամիս ապրեց Լոնդոնում, միանգամայն գոհ Անգլիայում լինելու համար, և չունենալով ոչ մի մասնակցություն ռուսական պրոպագանդայի գործերում [?]։ Սակայն Ռուսաստան վերադառնալու ճանապարհին նա ձերբակալվեց և բանտարկվեց արևելյան ինչ-որ մի բերդում, ուր, հավանորեն, նրան մոռացան։ Նա կործանվեց Բակունինի անզգուշությունից, որ Ռուսաստանի բարեկամներից մեկին գրած նամակում գովել էր նրան։ Բակունինի նամակներն, իհարկե, փոստում բաց էին արվում։ Նրա մասին իմաց էին տվել սահմանապահներին, և Նալբանդովը գոհ գնաց Բակունինի հետ ունեցած բարեկամության։ Մենք այլևս երբեք չիմացանք միանգամայն լավ և արժանավոր այդ մարդու վիճակի մասին։ Ցավալի է խոստովանել, որ Բակունինի անզգուշությունից միայն Նալբանդովը չէ, որ տուժել է»։
Н. А. Тучкова-Огарева, Воспоминания, Л., 1929, стр. 313—314.

Մարտի 30 (ապրիլի 11).— *Ի. Ս. Տուրգենևին ուղղած նամակում Գերցենը գրում է. «Այս երկտողը քեզ կհանձնի ազնվագույն և ամենաբարի բժշկության դոկտոր և հայ Նալբանդովը։ Սիրով ընդունիր նրան. նա դրան լիովին արժանի է։ Վաղուց չէ, որ նա եղել է Կալկաթայում, իսկ այժմ մեկնում է Moskow...»։*
А. И. Герцен, Полн. собр. соч., т. XV, 105.

Մարտի 31 (ապրիլի 12), Լոնդոն.— *Նամակ Տ. Փեշտմալճյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV*, 272։

Ապրիլի 3(15), Լոնդոն.— *Նամակ Ս. Բագվորյանին։ Չի պահպանվել։*

Նույն տեղը։

Ապրիլի 4(16).—*Ս. Ս. Գրոմեկոյին ուղղած նամակում Ն. Վ. Ալբերտինին Նալբանդյանի մասին գրում է. «Գրում եմ ձեզ, թանկագին Ստեփան Ստեփանովիչ, Լոնդոնի իմ բարի ծանոթի՝ Նալբանդովի միջոցով։ Այս առիթից օգտվում եմ ձեզ ասելու շատ բաներ, ինչ որ այլ կերպ չէր կարելի ասել։ Եթե նամակս գրելու համար մնացած ժամանակը կարճ լինելու պատճառով որևէ բան չկարողանամ ասել, ապա դա կլրացնի Նալբանդովը, մի մարդ, որ լիովին վայելում է Լոնդոնի ռուսների հարգանքը»։*

М. Лемке. Очерки освобод. движения 60-х годов, 136.

Նույն օրը.— *Լոնդոնից մեկնում է Փարիզ։*

А. И. Герцен, Полн. собр. соч., т. XV, 105—108.

Ապրիլի 6(18).— *Հասնում է Փարիզ։*

Երկերի լիակատար ժող., *IV*, 274։

Ապրիլի 9(21).— *Ա. Ի. Գերցենը նամակներ է գրում Նալբանդյանին և Ի. Ս. Տուրգենևին՝ դնելով վերջինիս հասցեագրած ծրարում (Նալբանդյանին գրած նամակը չի հայտաբերված)։*

«Երբ ես նամակը տվի Նալբանդովին, քո վիպակը [«Հայրեր և որդիներ»] Լոնդոնում չէր սաացվել,— գրում է Գերցենը Տուրգենևին։— Նա [Նալբանդովը] ևս երեք օր մնաց... Նալբանդովը շատ ու շատ ազնիվ և լավ մարդ է։ Մի՛ թույլ տա, որ նա այստեղ բերի Բ[ակունին]ի կնոջը։

Ներփակ նամակս տուր Նալբ[անդովին], եթե նա չի մեկնել։ Եթե մեկնել է՝ այն բե՛ր քեզ հետ (թեկուզ և հավատացած եմ, որ չես գա)։

А. И. Герцен, Полн. собр. соч., т. XV, 108—110.

Մինչև ապրիլի 12(24), Փարիզ.— *Նալբանդյանը տեսակցում է Տուրգենևի հետ։ Ինչպես երևում է Բակունինի ապրիլի 12-ի (24) նամակից, այդ հանդիպման ժամանակ Տուրգենևը շատ լավ տպավորություն է ստանում Նալբանդյանից և այդ մասին գրում է Բակունինին (տե՛ս ապրիլի 12(24))։*

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 76.



Ա. Ի. Գերցեն

Ապրիլի 12(24). — *Բակունինի նամակը Նալբանդյանին. խընդրում է աջակցել՝ իր կնոջն Իրկուտսկից Տվերի նահանգը տեղափոխելու գործին: «Ես, մենք բոլորս շատ ուրախ ենք, որ դուք արժանացել եք ձեր Տուրգենևի սիրուն, և քանի որ զգացմունքները միշտ փոխադարձ են լինում, ապա նա էլ, անկասկած, ոչ պակաս սիրվել է ձեր կողմից»,— գրում է Բակունինը Նալբանդյանին:*

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 75—76.

Ապրիլի 22, Փարիզ. — *Նամակ Լոնդոնի բանկի կառավարչին՝ հնդկահայ կտակների գործի առնչությամբ:*

Գրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 123/119:

Ապրիլի 24 (մայիսի 6). — *Բակունինի նամակը Նալբանդյանին՝ կրկին իր կնոջ Իրկուտսկից Տվերի նահանգը տեղափոխելու միջոցների մասին. խնդրում է Նալբանդյանի աջակցությունը: Ն. Ի. Վորոնովին հանձնարարում է, որպես միանգամայն լավ, օգտակար և կատարելապես վստահության արժանի մարդու. խնդրում է, որ Նալբանդյանը Վորոնովին ծանոթացնի Թիֆլիսի իր համախոհների հետ: Նամակին կից է գաղտնի բառարանը:*

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 76—79.

Մինչև ապրիլի 27 (մայիսի 9). — *Նամակ Մաձինիին: Անհայտ:*

Երկերի լիակատար ժող., III, 438—440:

Ապրիլի 27 (մայիսի 9), Փարիզ. — *Նալբանդյանի նամակը Ս. Թագվորյանին: Չի պահպանվել, սակայն, ինչպես երևում է Թագվորյանի պատասխանից, այդ նամակում Նալբանդյանը դժգոհել է Պոլսի իր համախոհների թուլությունից և դանդաղկոտությունից. «ապստիան ինձ համար մահ է»,— գրել է Նալբանդյանը: Նա դրժգոհություն է հայտնել նաև, որ իր նամակը Մաձինիին դեռևս չի հանձնված:*

Նույն տեղը:

Ապրիլի 28 (մայիսի 10). — *Բակունինի նամակը Նալբանդյանին. հայտնում է Լոնդոնի (Գերցենի) հրատարակությունները Ռուսաստանում տարածելու միջոցների մասին: Գերցենի և իր անունից խնդրում է, որ Նալբանդյանը Պոլսի և Թիֆլիսի իր համախոհների միջոցով կազմակերպի այդ գործը և դրանում աջակցի Ն. Ի. Վորոնովին:*

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 80—81.

Մայիսի 4(16).— *Բակունինի նամակը Նալբանդյանին՝ իր կնոջն Իրկուտսկից Տվերի նահանգը փոխադրելու հարցի շուրջը։*

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 81—82.

Մայիսի 14(26).— *Ս. Բագվորյանի նամակը Նալբանդյանին, զեկուցում է գործերի ընթացքի և նրա հանձնարարությունների կատարման մասին. հայտնում է, որ գաղտնի բառարանն ստացել են։ Կազմակերպվում է կոմիտե «Լոնդոնի լոժի» (Գերցենի խմբակի) ղեկավարությամբ. ձեռնարկված է Ջեյթունում նախապատրաստվող ապստամբությանն օգնելու գործը։*

Երկերի լիակատար ժող., *III*, 438—440։

Հետագայում, Բագվորյանի այս նամակն ընկնելով ցարական կառավարության ձեռքը, դառնում է Նալբանդյանի մեղադրության «իրեղեն ապացույցներից» մեկը։

Մայիսի առաջին կեսը, Փարիզ.— *Նալբանդյանն իր լուսանկարներն ուղարկում է Լոնդոն՝ Գերցենին, Օգարևին և Տխորժևսկուն։*

ЦГИАМ, ф. Следств. комиссии, д. 27, л. 54.

[Մայիսի առաջին կեսը], Փարիզ.— *Նալբանդյանը Հ. Նուրիջանյանից ստանում է իր խնդրանքով նրա թարգմանած «Բաղադրություն վառոդի» ձեռնարկը։*

ЦГИАМ, ф. ОППС, 1862, д. 51, лл. 454—463.

Մայիսի 21 (հունիսի 2), Փարիզ.— *Ի. Ս. Տուրգենևը երկտող է գրում Նալբանդյանին, հայտնելով, որ ինքը Ռուսաստան կմեկնի հետևյալ օրը, սակայն ո՛չ թե առավոտյան ժամը 7-ին, այլ երեկոյան 5-ին։ «Եթե դուք,— գրում է Տուրգենևը,— կմեկնեք առավոտյան, ապա իմացեք, որ Պետերբուրգում ես կիջևանեմ Կլեյի հյուրանոցում, իսկ Բեռլինում՝ «Սանկտ-Պետերբուրգում», երբ գաք, ապա անպայման տեղեկացրեք ինձ»։*

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 83.

Մինչև մայիսի 22 (հունիսի 3), Փարիզ.— *Նալբանդյանը մի քանի անգամ տեսակցում է Ի. Ս. Տուրգենևի հետ. վերջինիս մոտ էլ հանդիպում է Նիչիպորենկոյին։*

И. С. Тургенев, Сочинения, т. XII, стр. 457.

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

ՈՐՊԷՍ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

ԱՇԽԱՏԱՍԻՐՆԵՑ

ՍԻՄԷՕՆ ՄԱՆԻԿԵԱՆ



1869

«Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ»
աշխատության անվանաթերթը

Մայիսի 22 (հունիսի 3).— *Տուրգենևը Փարիզից մեկնում է Պետերբուրգ։*

М. К. Клеман, Летопись жизни и творчества И. С. Тургенева, 1934, стр. 133.

Նույն օրը, Լոնդոն.— *Բակունինի նամակը Լ. Չերնեցկուն. խնդրում է հայտնել, թե ստացվե՞լ են, արդյոք, «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության տպագրված օրինակները՝ Նալբանդյանին ուղարկելու համար։*

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 82.

Մինչև մայիսի 25 (հունիսի 6).— *Փարիզում լույս է տեսնում «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը՝ Սիմեոն Մանիկյան ծածկանունով։*

Մայիսի 25 (հունիսի 6).— *Բակունինի նամակը Նալբանդյանին. գրում է, թե «Երկրագործության» օրինակների ստացվելու վերաբերյալ Չերնեցկուց պատասխան չունի, և հենց այսօր (մայիսի 25) ինքն անձամբ կգնա նրա մոտ, և ինչքան որ ստացված լինի՝ կուղարկի։ Հայտնում է, թե ստացել է Նալբանդյանի լուսանկարները, որոնք մեծ ուրախություն են պատճառել Գերցենին և Օգարևին։*

«Դուք կուրախանայիք, եթե տեսնեիք, թե ինչպիսի ուրախությամբ և՛ Բարոն Տիզենհաուզենը (Գերցենը), և՛ նրա բարեկամ Կոստերովը (Օգարևը) ձեր նկարներն ընդունեցին ինձնից»։

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 82—83.

ՎԵՐԱԴԱՐՁ ԵՎ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

1862 մայիսի 25—26—1862 հուլիսի 24

1 8 6 2

Մայիսի 25-ին կամ 26-ին.— *Նալբանդյանը վերադառնում է Պետերբուրգ։*

Երկեր լիակատար ժող., *III*, *346*։

Մայիսի 29.— *Ցարը հավանություն է տալիս Գոլովնինի զեկուցագրին՝ Գերցենի ազդեցության դեմ պայքարելու միջոցառումների մասին։*

А. И. Герцен, Полн. собр. соч., т. XV, 427.

Մայիսի 31.— *Պետերբուրգի Միտնինսկայա հրապարակում հայտարարվում է ռևոլյուցիոներ-դեմոկրատ Վ. Օբրուչևի դատավճիռը՝ երեք տարով տաժանակիր աշխատանքների և այնուհետև ընդմիշտ Սիբիր աքսորելու մասին։*

Госуд. прест. в России в XIX веке, т. I, стр. 112.

Նույն օրը, Պետերբուրգ.— *Նամակ Հ. Արգարյանին. ցավակցություն է հայտնում նրա որդու (?) մահվան առթիվ։ Չի պահպանվել։*

Ցրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. *123/94*։

Հունիսի 1, Պետերբուրգ.— *Նալբանդյանը տեսակցում է Ի. Ս. Տուրգենևի հետ և տալիս է նրան 300 ռ.՝ Բակունինի կնոջը Իրկուտսկից Տվերի նահանգը փոխադրելու համար. այդ մասին Տուրգենևը Նալբանդյանին տալիս է ստացական։*

ЦГИАМ, ф. ОППС, 1862, д. 51, л. 261.

Հունիսի 4(16).— *Բակունինի նամակը Նալբանդյանին. խընդրում է շտապեցնել իր կնոջն Իրկուտսկից Տվերի նահանգը և ապա Լոնդոն տեղափոխելու գործը. ցանկություն է հայտնում, որ կնոջը դեպի Լոնդոն ուղեկցի Նալբանդյանը։*

Գրում է, որ արդեն ստացել է «Երկրագործության» օրինակները և չորս օրից կուղարկի երկու օրինակ։ Նամակից երևում է, որ Օգարևը նույնպես մասնակցել է «Երկրագործությունը» Ռուսաստան փոխադրելու գործին։

«Կոստերովը [Օգարևը] նույնպես հանձն առավ մի քանի օրինակ ուղարկել Ձեզ»։

«Աչքի լույսի պես պահպանեցեք Պյոտր Ալեքսանդրովիչ Յուրկովին [Նալբանդյանին], նա ոսկի մարդ է»,— ավելացնում է Բակունինը, ակնարկելով, որ Նալբանդյանը զգուշանա ոստիկանության հետապնդումներից։

М. Лемке, Очерки освободительного движения 60-х годов, 129—131.

Նույն օր.— *Բակունինը եղբոր կնոջը՝ Ն. Ա. Բակունինային ուղղած նամակում Նալբանդյանի մասին գրում է.*

«Դու լա՛վ ծանոթացիր Նալբանդովի հետ, փայփայի՛ր նրան։ Նա ոսկի մարդ է՝ ամբողջովին հոգի և ամբողջովին նվիրվածություն։ Հենց առաջին րոպեից, կարծում եմ, կսիրես նրան։ Ի. Ս. Տուրգենևն, ահա, օրինակի համար, ուրիշ բան է. նա նույնպես շատ բարի է, բայց՝ ասված էլ գիտե, որ ինքն ասված է։ Նա [Տուրգենևը] և՛ խելացի է, և՛ սիրալիր, բայց չի մոռանում իրեն. չունի այն սուրբ պարզությունը, որ ունի Նալբանդովը, որը գրավում է ո՛չ թե խելքով, այլ սրտով, թեկուզ, իհարկե, որպես իսկական հայ, շատ խորամանկ է, երբ անհրաժեշտ է։ Իմ նամակը նրան փոստով մի՛ ուղարկիր, ավելի լավ է քեզ մոտ պահիր, կամ՝ ո՛չ, ավելի լավ է հանձնի՛ր Տուրգենևին, և կամ կարգադրիր հանձնել հենց Պետերբուրգում պ. Խաֆաֆովին՝ На Васильевском острове, в Биржевом переулке, в доме Меняева, под № 46, Պյոտր Ալեքսանդրովիչ Յուրկովին [Նալբանդյանին] հանձնելու համար»։

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 124—125.

Հունիսի 8—12(20—24).— *Ա. Ի. Գերցենի և Ն. Պ. Օգարևի նամակը Ն. Ա. Սերնո-Սոլովևիչին։ Գերցենը, տեղյակ լինելով, որ ցարական կառավարությունը պատրաստվում է փակել «Սովրեմեննիկը», պատրաստակամություն է հայտնում այն հրատարակել Լոնդոնում կամ Ժնևում՝ Չերնիշևսկու հետ միասին։ Նամակում ջերմ խոսքեր կան Նալբանդյանի մասին. «N-ը ոսկի հոգի ունի. նվիրված է անշահախնդիր, նվիրված է միամտորեն՝ սրբության հասնող չափով»,— գրում է Օգարևը։*

«Կարծեմ խոսքը մեր հեռացած արևելյան բարեկամի մասին է,— ավելացնում է Գերցենը։— Բարևեցեք նրան. նա գերազնվագույն մարդ է. ասացեք նրան, որ մենք հիշում ու սիրում ենք իրեն»։ Պ. Ա. Վեստոշնիկովի ձերբակալության ժամանակ Նամակն ընկավ ոստիկանական օրգանների ձեռքը։

А. И. Герцен, Полн. собр. соч. и писем, т. XV, 219—220.

Հունիսի 13–ից մինչև հուլիսի 7.— *Ցարական գաղտնի գործակալների տվյալներով, Նեկրասովի, Սերնո-Սոլովևիչի և ուրիշների թվում, Չերնիշևսկու մոտ եղել է «նորերից» նաև Բալանդինը, որ ենթադրվում է, թե Նալբանդյանն է։*

«Վովետական գրականություն և արվեստ», *1952, № 6։*

Հունիսի 19.— *Ցարի հրամանով ութ ամսով դադարեցվում է «Սովրեմեննիկի» հրատարակությունը։*

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 22.

Մինչև հունիսի 20.— *«Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության տպագրված օրինակներն ստացվում են Պոլսում։* «Մեղու», *1862, № 165, 137—140։*

Հունիսի 20.— *«Մեղուն» տպագրում է «Ով այսօր հող չունի, վաղը հաց չունի» խմբագրական հոդվածը, գրված «Երկրագործության» որոշակի ազդեցությամբ։ Նշելով, որ արդեն նյութական կյանքի թշվառությունները, աղքատությունը, իրենց ողբալի հետևանքներով, «բախում են ազգի դուռը», և, ժողովրդի տնտեսական կյանքի պայմանները բարելավելու հարցն առաջադրելով, հոդվածի հեղինակը (Հ. Սվաճյանը) գրում է.*

«Ո՛չ միայն ուսմամբ կեցցե մարդ, այլ միանգամայն և հացիվ։ Այս համոզմամբ է, որ ճշմարիտ հայու մը [նկատի ունի Նալբանդյանին] ըսածին նման, ով որ այսօր հող չունի, վաղը հաց չունի ըսելով, նույնը մինչև մեր վերջին շունչը պիտի կրկնեմք, ապահով

ըլլալով մեր էության շափ, թե հասարակ ժողովրդի մը համար ուղղակի, և մնացած մասի համար անուղղակի, բայց և այնպես անհրաժեշտ,— ինչպես որ ջուրը ձուկին համար,— միակ աղբյուր ապրուստի և հարստության՝ երկրագործությունն է, քան զի, երբ որ ազգ մը կազմող անհատներուն մեծագույն մասը երկրագործությամբ և առհասարակ գյուղական անտեսությամբ կպարապի, այն ժամանակ այն ազգի ընդհանրությունը հարուստ և ապահովյալ է, որովհետև անոր հիմը բնականապես դրված է և բնության վրա»: «... Ազգին հիմը երկրիս մակերևույթի վրա դրված է, և օդին մեջ կախված չէ»: «... Երկրագործությունը միայն պիտի փոխե մեր թշվառության, կաթոտության և աղքատության շապիկը»: «Հողը գործելու և արդյունավորելու իրավունքն անկողոպտելի իրավունք մ' է»,—հայտարարում է հոդվածագիրը:

Այնուհետև, Սվաճյանն առաջարկում է հիմնել երկրագործական ընկերություն:

Նույն տեղը:

Նույն օրը. Պետերբուրգ.— *Նալբանդյանը գրում է «Հայտարարություն» Հայաստանի քարտեզի տպագրության մասին:*

Երկերի լիակատար ժող., *II, 290—294:*

Նույն օրը, Պետերբուրգ.— *Նամակ Ա. Սուլթանշահին. հայտնելով Հայաստանի քարտեզը տպագրելու իր ծրագրի մասին, Նալբանդյանը խնդրում է եռանդուն կերպով աջակցել բաժանորդագրության գործին:*

Երկերի լիակատար ժող., *IV, 124—125:*

Հունիսի 22.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» հինգերորդ (մայիսի) ամսատետրակը:*

Նալբանդյանի գրչին է պատկանում՝

«Հայտարարություն», Հայաստանի պատմական քարտեզի տպագրության հանգամանքների, քարտեզի բնույթի և բաժանորդագրության պայմանների մասին (էջ 235—240):

Հունիսի 23 (հուլիսի 5).—*Պ. Ա. Վետոշնիկովի միջոցով Բակունինը Նալբանդյանին է ուղարկում ևս 10 օրինակ «Երկրագործությունից»: Նալբանդյանին ուղղած նամակում նա հայտնում է, որ դրանով ուղարկած կլինի ընդամենը 14 օրինակ, և որ, եթե Նալբանդյանը ցանկանա, էլի կուղարկի:*

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 27—28.



Ն. Գ. Օգարև

[Հունիսի 24 կամ 25].— *Նալբանդյանը Պետերբուրգից մեկնում է Մոսկվա։* ЦГИАМ, ф. ОППС, 1862, д. 50, л. 41.

[Հունիսի 24 կամ 25].— *Հասնում է Մոսկվա։* Նույն տեղը։

[Մինչև հունիսի 25], Պետերբուրգ.— *Գրում է «Նկատողություն» հոդվածը Վարդան վարդապետի «Համաքրմն պատմության» գրքի 1862 թ. Վենետիկի հրատարակության առթիվ։*
Երկերի լիակատար ժող., *III, 219—228։*

Հուլիսի 2.— *Մոսկվայից մեկնում է Նոր-Նախիջևան։*
ЦГИАМ, ф. III отд., I эксп., 1862, д. 230, ч. 76, л. 9.
Երկերի լիակատար ժող., *IV, 315—316։*

Հուլիսի 3.— *Ձերբակալվում է Դ. Ի. Պիսարևը՝ ցարական կառավարությանը Գերցենի մերկացումներից պաշտպանող Շեդո-Ֆեռոտիի գրքույկի դեմ գրած հոդվածի համար։ «Կյանքի ամեն մի արտահայտությունը ճնշող մեր կառավարության գործողությունների մեջ,— գրում է Պիսարևը,— նկատելի է մի նոր դիծ՝ ճիզվիթի վախլուկ սաորություն։ Շարունակելով աքսորել, գլխատել, տանջել, գնդակահարել, նա գործադրում է թաքուն, սաոր, բայց իրեն միանգամայն վայել միջոցներ այնտեղ, ուր կոպիտ բռնությամբ ոչինչ չի կարելի անել։* Проф. **М. Н. Гернет**, История царской тюрьмы, т. II, 246—247.

Հուլիսի 7.— *Պետերբուրգում ձերբակալվում է Ն. Գ. Չերնիշևսկին և բանտարկվում Պետրոպավլովյան բերդի Ալեքսեևյան ռավելինում։ Չերնիշևսկու ձերբակալությունը մեծ հուզմունք է առաջացնում ռուս հասարակության, հատկապես երիտասարդության դեմոկրատական լայն շրջաններում։ Պետերբուրգի Վասիլևսկայա իգական գիմնազիայի աշակերտուհի Լյուբով Կովեդյաևան ցարին ուղղած նամակում գրում է. «Կյանքն ինձ համար արժեք չունի և նրանից զրկվելն ինձ համար չի լինի մի առանձին պատիժ, դրա համար առաջարկում եմ ձեզ՝ բանտարկեցե՛ք ինձ մի այնպիսի խցում, ուր ես հազիվ կարողանամ շարժվել. հյուծեցե՛ք ինձ քաղցից, վերջապես, զրկեցե՛ք ինձ իմ միակ մխիթարությունից՝ գրքերից, վարվեցե՛ք ինձ հետ ինչպես կամենաք, միայն թե փրկեցե՛ք, փրկեցե՛ք Չերնիշևսկուն»։*
Проф. **М. Н. Гернет**, История царской тюрьмы, т. II, 259.

Նույն օրը.— *Լոնդոնի ռուս պրոպագանդիստների՝ Գերցենի, Օգարևի և ընկ. հետ ունեցած կապերի համար ձերբակալվում և Պետրոպավլովյան բերդն է ուղարկվում Ն. Ա. Սերնո-Սոլովևիչը։*

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 39—40.

Նույն օրը.— *Նալբանդյանին Պետերբուրգում չգտնելով, ցարական կառավարությունը նրան հետապնդելու և ձերբակալելու գործը հանձնարարում է գյուղացիական ապստամբությունները գաղանորեն ճնշելու մեջ հռչակված, «նորին մեծության շքախմբի» գեներալ Դրենյակինին։*

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 40.

Նույն օրը, գիշերվա ժ. 3.— *Երրորդ բաժանմունքի պետ Պոտապովը ժանդարմների շեֆ Դոլգորուկովին հայտնելով Չերնիշևսկու, Սերնո-Սոլովևիչի և Վետոշնիկովի ձերբակալության մասին, գրում է. «Բոլորն ուղղակի Ալեքսեևյան ռավելին են ուղարկված... Խաֆաֆովը նույնպես ձերբակալված է, բայց նրա մոտ ոչ միայն կասկածելի, այլև նույնիսկ տարակուսելի ոչինչ վճռականապես չի գտնված. նամակը նրան է հասցեագրված եղել՝ Նախիջևանի իր հայրենակից Նաբալդինին [Նալբանդյանին] հանձնելու համար, որին, ինչպես նաև Բելոզերսկուն Սամարայում և Ժուկովսկիներին՝ Ուֆայում, ձերբակալելու մասին կարգադրություն արված է։ Դրենյակինը մեկնում է վաղը»։*

Процесс Н. Г. Чернышевского, 1939, Саратов, 41—42.

Հուլիսի 9.— *Երրորդ բաժանմունքը Լոնդոնի պրոպագանդիստների (Գերցենի, Օգարևի և ընկ.) հետ հարաբերություններ ունենալու մեջ մեղադրվողների՝ Ն. Ա. Սերնո-Սոլովևիչի, Մ. Նալբանդյանի և մյուսների գործը հանձնում է ցարի կողմից նշանակված քննիչ-հանձնաժողովին՝ իշխան Ա. Ֆ. Գոլիցինի նախագահությամբ։*

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 40

Հուլիսի 10, երեկոյան.— *Նալբանդյանը հասնում է Նոր-Նախիջևան. նրա բարեկամներն ու համախոհները ջերմ ընդունելություն են կազմակերպում, և ինչպես վկայում է ժամանակակիցներից մեկը՝ «կառքերով ու ձիերով նրան ընդառաջ են գնում և օվսաննաներով քաղաք ընդունում...»։* «Մշածան», *1865, № 2, 45։*

Հուլիսի 11.— *Գեներալ Դրենյակինը եկատերինոսլավի նահանգապետին հեռագրով կարգադրում է՝ Նալբանդյանին ձերբակալել և երկու ժանդարմի ուղեկցությամբ ուղարկել երրորդ բաժանմունք։*

Երկերի լիակատար ժող., *IV, 316։*

Հուլիսի 12.— *Եկատերինոսլավի նահանգապետ գեներալ Ռինդինը կարգադրում է նահանգի ժանդարմական խմբի պետ Պոտապովիչին՝ մեկնել Նոր-Նախիջևան, ձերբակալել Նալբանդյանին՝ նախապես խուզարկելով և բռնագրավելով նրա մոտ գտնված բոլոր թղթերը, և ապա երկու ժանդարմի ուղեկցությամբ տանել Եկատերինոսլավ։*

Երկերի լիակատար ժող., *IV, 317։*

Հուլիսի 13, Նոր-Նախիջևան.— *Նալբանդյանը պաշտոնական գրությամբ քաղաքագլուխ Կ. Հայրապետյանին խնդրում է հասարակական ժողով հրավիրել՝ հնդկական կտակների գործի մասին հաշվետվություն տալու համար։*

Երկերի լիակատար ժող., *IV, 126։*

Հուլիսի 14, առավոտյան, Նոր-Նախիջևան.— *Եկատերինոսլավի ժանդարմական խմբի պետ Ժարկո Պոտապովիչը երկու ժանդարմի ուղեկցությամբ խուզարկում է Նալբանդյանների բնակարանը, բռնագրավում է բազմաթիվ թղթեր, թերթեր, լուսանկարներ, հայերեն և ռուսերեն զանազան նամակներ և ձերբակալելով Նալբանդյանին՝ տանում է Եկատերինոսլավ։*

ЦГИАМ, ф. ОППС, 1862, д. 51. л. 226.

Երկերի լիակատար ժող., *IV, 317։*

Նալբանդյանի ձերբակալությունը մեծ հուզմունք է առաջացնում Նոր-Նախիջևանի հասարակության մեջ։

«Արշալույս Աւարատյան», *1862, № 684։*

Հուլիսի 15, առ. ժ. 9. — *Եկատերինոսլավի գեներալ-նահանգապետ Ռինդինը հեռագրում է Պետերբուրգ, երրորդ բաժանմունքի պետ Պոտապովին, որ Նալբանդյանը ձերբակալված է։*

Երկերի լիակատար ժող., *IV, 316։*

[Հուլիսի 15].—*Նալբանդյանի ձերբակալության լուրը յուրահատուկ արձագանք է գտնում ռեակցիոներների բանակում։ Այդ մասին Ղ. Աղայանն իր հիշողություններում գրում է. «Միակ մարդը [Նալբանդյանը], որ դրանց [Այվազովսկու, Գալֆայանի, Խալիբյանի և ընկ.] մաղձը խառնում էր ստեպ, բռնվեց հենց մեր այնտեղ [Թեո-*

դոսիայում] եղած ժամանակ. է՛լ դրանց քեֆին քեֆ չէր հասնիլ։ Տեսնելու էր, թե ինչքա՜ն ուրախացան, ի՜նչ խնճույք սարքեցին, երբ Խալիբյանից հեռագիր ստացվեց, թե՝ «բռնվեցավ մեր թշնամին»։

Ղ. Ագայան, Երկեր, III հատ., 41։

Հուլիսի 16.— *«Բարձրագույնս հաստատված» քննիչ-հանձնաժողովը արտաքին գործերի մինիստրության թարգման Ասկարխանովին է հանձնում վետոշնիկովի մոտ գտնված և Նալբանդյանին հասցեագրված «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը (չիմանալով, որ Սիմեոն Մանիկյանն ինքը Միքայել Նալբանդյանն է)՝ քաղվածքներ կատարելու և իր եզրակացության հետ միասին հանձնաժողովին ներկայացնելու համար։*

ЦГИАМ, ОППС, 1862, д. 50, лл. 396—398.

Երկերի լիակատար ժող., *IV, 357—358։*

Հուլիսի 18, ժ. 2.— *Գեներալ Ռինդինը հեռագրում է Պետերբուրգ՝ երրորդ բաժանմունքի պետ Պոտապովին, որ Նալբանդյանն իր թղթերի հետ միասին ուղարկված է Մոսկվայի նահանգապետի տրամադրության տակ՝ Պետերբուրգ տարվելու համար։*

ЦГИАМ, ф. III отд., I эксп., 1862, д. 230, ч. 76, л. 13.

Երկերի լիակատար ժող., *IV, 317։*

Մինչև հուլիսի 20.— *«Մեղվի»՝ Նոր-Նախիջևանի թղթակիցը, որ այդ ժամանակ գտնվում էր Սիմֆերոպոլում, նամակով Սվաճյանին հայտնում է Նալբանդյանի ձերբակալության լուրը։*

«Մեղու», *1862, № 172։*

Հուլիսի 20.— *Իզմիրի «Ծաղիկը» «Հյուսիսափայլն» արգելել տալու վերաբերյալ էջմիածնի Սինոդի որոշմանն անդրադառնալով, բողոքում է «Մասիսի» դեմ, որ սա «Հյուսիսափայլը» նույնացնում է Ջամուռճյանի ռեակցիոն-ճիզվիթական «Զոհալ» ամսագրի հետ. «... երկու թերթերուն սկզբանցը մեջ,— գրում է «Ծաղիկը»,— անհուն վեհ մը կնշմարենք։ «Զոհալի» սկզբունքն էր* **ճիզվիթություն**, *և դիտավորությունը՝ ազգը ի պապականություն հրավիրել։ «Հյուսիսափայլի» սկզբունքն է՝ խորհելու, խոսելու և հրատարակելու ազատություն, և նպատակն է՝ կրոնական վերանորոգություն։ Այս ազատությունը քանի որ ամեն ազատություններու աղբյուրը և նվիրականն է, և քանի որ յուր նպատակն է ճշմարտություն մը խոսիլ, կրոնական իշխանությունը անոր այս իրավունքը չկրնար բռնաբա-*

րել։ Այնուհետև, «Ծաղիկն» շտապում է հայտարարելու, որ ինքը «Հյուսիսափայլի» կրոնական հոդվածները ո՛չ պաշտպանում է և ո՛չ էլ պաշտպանելու միտում ունի. ավելին, նա գտնում է, որ՝ «Հյուսիսափայլի» պահանջածը եթե եկեղեցիին հիմը [հիմքը] պիտի դղրդե, եթե վտանգավոր մոլորություն մը պիտի հաստատե, ան ատեն հրատարակածը ճշմարտություն մը չէ, և հետևաբար արժանի է դատապարտության (ընդգծումը «Ծաղիկինն» է)։ Ըստ էության, պաշտպանելով Նազարյանի լիբերալ-վերանորոգչական ծրագիրը, «Ծաղիկը» վճռականորեն դատապարտում էր Նալբանդյանի՝ «եկեղեցիին հիմը դղրդող», ռևոլյուցիոն-դեմոկրատական «վտանգավոր» սկզբունքները։

«Ծաղիկ», *1862, № 39, 324—325։*

Հուլիսի 22, Կալկաթա.— *Թովմաս Մելքումյանի և Ս. Ս. Ստեփանոսյանի նամակը Նալբանդյանին. հայտնելով տեղի հոգևորականների միջև եղած երկպառակությունները, նամակագիրները գրում են. «Իրավի, Ձեր հրամանքդ շատ դեղեցիկ եք գրել Ձեր «Երկու տողին» մեջն, էջ 22. «Ո՛րտեղ մի գայթակղություն, որի պատճառը չէր եկեղեցական, ո՛րտեղ հաբատահարություն, որի հերոսը չէր եկեղեցական, ո՛րտեղ խռովություն, որի խմորը չէր եկեղեցական»։*

Ձեռական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 123/102։*

Հուլիսի 24.— *Մոսկվայի օբեր-պոլիցմեյստերը զեկուցում է III բաժանմունքի պետին, որ Նալբանդյանն իր թղթերով, երկու ժանդարմի հսկողությամբ, բերված է Մոսկվա և ըստ «բարձրագույն հրամանի», ուղարկվում է Պետերբուրգ։*

ЦГИАМ, ф. III отд., I эксп., 1862, д. 230, ч. 76, л. 9.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԱՎԼՈՎՅԱՆ ԲԵՐԴՈՒՄ

1862 հուլիսի 27—1865 մայիսի 13

1 8 6 2

Հուլիսի 27.— *Նալբանդյանը բերվում է Պետերբուրգ և բանտարկվում Պետրոպավլովյան բերդի Ալեքսեևյան ռավելինի № 8 խցում։*

Երկերի լիակատար ժող., *IV, 318։*

Նույն օրը.— *Պետրոպավլովյան բերդի պարետ գեներալ-լեյտենանտ Սորոկինը Ալեքսանդր II-ին զեկուցագիր է ներկայացնում, թե՝ «ի կատարումն կայսերական մեծության հրամանի», Նալբանդյանը բանտարկված է։*


ЦГИАМ, ф. III отд., I эксп., 1862, д. 230, ч. 76, л. 15.

Երկերի լիակատար ժող., *IV, 318։*

Օգոստոսի 1—2.— *Տեղի է ունենում Զեյթունի զինված ապըստամբությունը։ Ապստամբած հայ բնակչությունը հերոսական մարտեր է մղում և փայլուն հաղթանակ տանում սուլթանական բազմահազար զորքերի դեմ։*

«Կռունկ հայոց աշխարհին», *1863, № 3, 213—230։*

Օգոստոսի 7.— *Արտաքին գործերի մինիստրության թարգման Ասկարխանովը քննիչ-հանձնաժողովին է հանձնում «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունից թարգմանված քաղվածքները, իր եզրակացության հետ միասին։ Քաղվածքները կատարված են աշխատության այն մասերից, ուր մերկացվում և խարազանվում են բուրժուական օրենքները սեփականության, «ազատության, հավասարության և եղբայրության» մասին, բուր-*



Վեմով դարխախտածոպ

ժուական պետությունների, այդ թվում նաև ցարական Ռուսաստանի գաղութային դաժանաբարո քաղաքականությունը՝ «քաղաքակրթություն» կեղծ անվան տակ։ Ասկարխանովը նշում է, որ գիրքը գերազանցորեն ուղղված է տիրող պետական կարգերի դեմ։

ЦГИАМ, ф. ОППС, 1862, д. 51, л. 228.

Երկերի լիակատար ժող., *IV, 352—357։*

Նույն օրը.— *Քննիչ-հանձնաժողովը, ծանոթանալով «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունից Ասկարխանովի կատարած քաղվածքներին և եզրակացնելով, որ այդ գրքում «պարսավանքի է ենթարկվում Ռուսաստանում և ուրիշ պետություններում գոյություն ունեցող կառավարական և հասարակական կարգը», որոշում է հարցաքննել Նալբանդյանին, թե ի՞նչ նպատակով է նրան ուղարկված վերոհիշյալ գրքույկը։*

ЦГИАМ, ОППС, 1862, д. 51, л. 263.

Երկերի լիակատար ժող., *IV, 357—358։*

Օգոստոսի 9(21).— *Ա. Ի. Գերցենը և Ե. Վ. Սալիաս դե-Տուրնեմիրին գրած նամակում խոր վիշտ է հայտնում Չերնիշևսկու, Ն. Ա. Սերնո-Սոլովևիչի և մյուսների ձերբակալության առթիվ. «Սարսափելի ցավալի է, որ Մ[երնո] Մ[ոլովևիչին], Չեր[նիշևսկուն] և մյուսներին վերցրել են։*


Դա մեր սրտի վրա բացված անբուժելի վերք է. բայց հարցը դրվում է, և եթե նա դրվում է, ապա պետք է դրվի հենց այնպես, ինչպես Օգարևն է դնում. լիբերալների պարտիան, որը չի կարողանա կանգնել այդ դիրքի վրա, կճզմվի երկու անիվների միջև»։

А. И. Герцен, Полн. собр. соч., т. XV, 390—391.

Օգոստոսի 13.— *Քննիչ-հանձնաժողովի նախագահ իշխան Ա. Ֆ. Գոլիցինը զեկուցում է ցարին, թե Նալբանդյանի մոտ հայտնաբերված նամակագրության համաձայն, Լոնդոնի պրոպագանդիստները (Գերցեն, Օգարև և ուրիշներ) ձգտում են իրենց հրատարակությունները տարածել Կովկասում։*

Նույն օրը ցարը հրամայում է՝ հայտնել Կովկասի փոխարքայի պաշտոնակատար Գ. Դ. Օրբելիանիին, որպեսզի վերջինս նախազգուշական միջոցներ ձեռք առնի Լոնդոնի ռուս պրոպագանդիստների երկերը Կովկասում տարածելու դեմ։

ЦГИАМ, ОППС, 1862, д. 51, л. 284.



Ն. Գ. Չերնիշևսկի

Մինչև օգոստոսի 14.— *Փոքիում տեղեկություններ են ստացվում Նալբանդյանի բանտարկության մասին։*
Դրական թանգարան, Աղաճյանի ֆոնդ, վ. 1055։

Օգոստոսի 14.— *Ա. Ֆ. Գոլիցինը Կովկասի փոխարքայի պաշտոնակատար Գ. Դ. Օրբելիանիին ուղարկելով Նալբանդյանին հասցեագրված Բակունինի նամակների քաղվածքները, հայտնում է ցարի հրամանը՝ Լոնդոնի ռուս պրոպագանդիստների հրատարակությունները Կովկասում տարածելու դեմ նախազգուշական միջոցներ ձեռք առնելու մասին։*
ЦГИАМ, ОППС, 1862, д. 51, л. 285.
Երկերի լիակատար ժող., *IV, 319—320*։



Պետրոպավլովյան բերդի Ալեքսեևյան ռավելինի խցերից մեկը (Դեկաբրիստ Զուբկովի գծանկարից)։

Օգոստոսի 31.— *«Մեղուն» «Հյուսիսափայլից» արտատպում է Նալբանդյանի «Հայտարարությունը» Հայաստանի քարտեզը հրատարակելու մասին։ «Մեղվի» նույն համարում հոդված է տպագրվում «Հյուսիսափայլի» մասին։ Նշելով, որ այդ ազատախոս ամսագիրը փակել տալու՝ թշնամիների ջանքերը իզուր անցան, սակայն ակնարկելով հատկապես Նալբանդյանի դեմ գործադրվող հալա-*

ծանքները, դեռևս անտեղյակ նրա բանտարկության, «Մեղուն» (Հ. Սվաճյանը) գրում է.

«Այսօր ալ մարդկության թշնամիներն անոր բարեկամներուն մահը կխնդրեն, բայց անկարող են ատոր, և միայն անոնց ձեռքը կարելու փորձ կփորձեն. արի բազուկը չքոնվիր երբեք և եթե օր մը կապեն այն բազուկը, հետևյալ օրը դարձյալ կարձակվի՝ նորեն աշխատելու համար հօգուտ մարդկության»:

«Մեղու», 1862, № 170, 177—182:

Օգոստոս.— Նալբանդյանին Ալեքսեևյան ռավելինի № 8 խցից տեղափոխում են № 17 խուցը:

ЦГИАМ, ф. III отд., I эксп., 1862, д. 75, л. 46.

Սեպտեմբերի 14(26).— «Փարիզ» թերթն իր ստացած տեղեկությունների վրա հիմնվելով, որոշ անճշտություններով, հաղորդում է Նալբանդյանի ձերբակալության լուրը. «պ. Մ. Նալբանդյանց ռուսիարնակ ազգասեր հայը բավական ծանոթացած է մոտերս նաև Թուրքաստանի [Թյուրքիայի] մերազնյայց, որուն համար կլսեմք, թե անցյալները Ռուսաստան դառնալեն հետո, հայու մը կողմանե սոսկալի մատնության մը զոհ լինելով, Նախիջևանի մեջ հանկարծ բռնվեր է ռուսաց ոստիկանության զինվորներեն և Սեն Փեթրպուրկ տարվեր: Եվ իբր թե յուր քովը Ռուսաստան մտնելո արգիլյալ գրքյանք գտնվելով, իր վերա եղած ամբաստանության ապացույց համարվեր է այն, և հանցավոր դատվելով, Սիպիրիա աքսորվեր է»: Վերջում դրվատանքի խոսքեր ասելով, ցանկություն է հայտնում, որ այդ լուրը բոլորովին սուտ լիներ, և «ազգը չպարտավորվեր այսպիսի ցավալի վնասու մը վերա ալ ողբալ»: «Փարիզ», 1862, № 76:

Սեպտեմբերի 20.— Հ. Սվաճյանը «Մեղվում» տպագրում է ընդարձակ հոդված Մ. Նալբանդյանի ձերբակալության առթիվ: Նորանախիջևանի թղթակցի նամակի հիման վրա հաղորդելով մի քանի մանրամասնություններ Նալբանդյանի ձերբակալության հանգամանքների վերաբերյալ, Սվաճյանն արտահայտում է արևմտահայ գրական-հասարակական լայն շրջանների համակրանքն ու հարգանքը հայ մեծ հրապարակախոսի նկատմամբ, բնութագրելով նրան որպես «ազատության բարեկամի», որը ձգտում է «ո՛չ միայն իր ազգին, այլ ընդհանուր մարդկության ազատությանը»: Սվաճյանը նշում է, որ Նալբանդյանի ձերբակալությունը խոր հուզմունք է առաջացրել ավելի լայն շրջաններում, նաև հայ իրականությունից դուրս. «... Բազմաթիվ բարեկամներ, լման ազգ մը, շատ մը օտարազգիք խռոված և անհանդիստ սրտով ամեն օր անոր ազատության լուրը կսպասեն»: «Շատ մը օտարազգիք» ասելով, Սվաճյանը, անշուշտ, նկատի ուներ, առաջին հերթին, Նալբանդյանի ռուս բարեկամներին:

«Մեղու», 1862, № 172, 197—199:

Սեպտեմբերի 21.— «Բարձրագույնս հաստատված» քննիչ-հանձնաժողովի նախագահ Ա. Ֆ. Գոլիցինը, ցարի տված հրամանի համաձայն, Կովկասի փոխարքայի պաշտոնակատարին լրացուցիչ տեղեկություններ է հաղորդում Լոնդոնի ռուս պրոպագանդիստների երկերը Կովկասում տարածելու վերաբերյալ, կցելով Նալբանդյանի մոտ գտնված հետևյալ փաստաթղթերի պատճենները. 1. Գաղտնի բառարանը, 2. Ս. Թագվորյանի նամակը (թյուրիմացաբար նշված է Հ. Սվաճյանի անվամբ), 3. Կ. Հայրապետյանի 1861 թ. դեկտեմբերի 12-ի նամակը Նալբանդյանին: Միաժամանակ, հանձնաժողովն ավելորդ չի համարում ավելացնել, որ Նալբանդյանը, ինչպես երևում է նրա թղթերից, 1861 թ. մայիսին գտնվելով արտասահմանում, նամակագրություն է ունեցել «ոմն Միանսարյանի հետ, որ բնակվում է Թիֆլիսում»: ЦГИАМ, ф. ОГПС, 1862, д. 52, л. 3.

Սեպտեմբերի 22.— «Արշալույս Արարատյան» թերթը Թեոդոսիայի իր թղթակցի հուլիսի 25-ի նամակից քաղելով, հայտնում է Նալբանդյանի ձերբակալության լուրը. «Պատճառք հանկարծադեպ իրացս անհայտ են մեզ և ամենեցուն... Բայց զինչ և իցե, նախիջևանցիք տագնապյալ են հույժ ընդ եղյալն, որպես կարող եր դուշակել»:

«Արշալույս Արարատյան», 1862, № 684:

Սեպտեմբերի 23 (հոկտեմբերի 5).— Ի. Ս. Տուրգենևին ուղղած նամակում Մ. Բակունինը Նալբանդյանի մասին գրում է. «Իսկ ի՞նչ լուր Նալբանդովից, ի սեր աստծո, աշխատիր իմանալ նրա վիճակի մասին: ... Ի միջի այլոց, ես մարկիզի [դե-Տրավերսեի] համար չեմ վախենում. նա երեխայի նման անմեղ է: Ասենք, Նալբանդովն էլ անմեղ է, նա էլ կապեր չունի, և նրա կուրծքն էլ թույլ է, իսկ բանտը կրծքի հիվանդների համար լավ չէ: Իմացի՛ր, ինչ որ միայն հնարավոր է իմանալ և տեղեկացրո՛ւ ինձ...»:

И. С. Тургенев, Сочинения, т. XII, 702.

Հոկտեմբերի 11(23).— *Ի. Ս. Տուրգենևին ուղղած նամակում Մ. Բակունինը Նալբանդյանի մասին գրում է. «... Իմ մյուս հոգսը Նալբանդովն է. ասում են, թե նա եղել է Պետրոպավլովյան բերդում, իսկ այժմ կորել է, ոչ ոք չգիտե, թե ուր։ Իմացի՛ր Տուրգենև»։*

И. С. Тургенев, Сочинения, XII, 704.

Հոկտեմբերի 13, 16, 18, 23, 24 և 25.— *«Բարձրագույնս հաստատված» քննիչ-հանձնաժողովը Նալբանդյանին ենթարկում է հարցաքննության։*

Երկերի լիակատար ժող., *III, 345—417։*

Հոկտեմբերի 30.— *«Բարձրագույնս հաստատված» քննիչ-հանձնաժողովը Ն. Գ. Չերնիշևսկուն ենթարկում է հարցաքննության։*

М. Лемке, Полит. процессы, 222.

Մինչև նոյեմբերի 2.— *Նալբանդյանը գրում է երկու նամակ ծնողներին։ Չեն պահպանվել։*

Մատենադարան, Կար. դիվան, թղթ., *196, վ. 91։*

Նոյեմբերի 2.— *Հովհ. Բերբերյանը Նոր-Նախիջևանից Մ. Վեհապետյանին ուղղած նամակում գրում է. «Միքայելը յուր ծնողաց երկու հատ գիր գրեց. հուսով ենք, որ շուտով արձակվի. նորա անմեղությունը ասված գիտե, և մի՞թե անմեղությունը կարող է տանջվիլ չարաչար. ո՛չ. մենք հուսով ենք, որ նա շուտով կգա»։*

Նույն տեղը։

Նոյեմբերի 3.— *Ստ. Նազարյանը Հովհ. Սայաթնովյանին ուղղած նամակում արտահայտում է իր բացասական դիրքորոշումը Նալբանդյանի ռևոլյուցիոն գործունեության վերաբերյալ, համարելով այն «մի հիմար անձնապաստանություն և անձնասեր ամբարտավանություն»։*

«Հանդես գրականական և պատմական», *VI, 140։*

Նոյեմբերի 9.— *Նալբանդյանի ձերբակալության լուրը ծանր տպավորություն է թողնում հայաբնակ հեռավոր վայրերում. «Փարիզի» թղթակիցը նոյեմբերի 9-ին Խարբերդից իրեն ուղղված մի նամակից բերում է հետևյալ տողերը. ««Մեղուն» ալ կստանամք, բայց ընտոր կցավինք պ. Նալբանդյանցին վրա...»։*

«Փարիզ», *1863, № 83։*

Նոյեմբերի 14.— *«Մեղվի» վրա հիմնվելով, «Փարիզը» ճշտում է Նալբանդյանի ձերբակալության մասին իր հաղորդած լուրը. «Լրագրուս 76 թվովը մեծարգո պ. Նալբանդյանցի բռնվիլը ծանուցանելով, Սիպիրիա աքսորվեր է, ըսեր էինք, մեր լսածին համեմատ։ Բայց այս շաբթու Պոլսո «Մեղվին» 172 թվույն մեջ կկարդամք, թե նա Ս. Փեթրպուրկ տարված ու հոն բանտարկյալ է։ Բայց ի՞նչ է հանցանքը,—ահա այդ է, որ, կըսե «Մեղուն»,—ոչ որ դիտե տակավին... Առայժմ մեր գիտցածը սա է, որ պ. Նալբանդյանցը Փեթրպուրկի մեջ բանտարկված է»։*

«Փարիզ», *1862, № 79։*

Նոյեմբերի 19.— *Երևանի զինվորական գեներալ-նահանգապետ Շչերբով-Նեֆեդովիչը, ի կատարումն ներքին գործերի մինիստրության հրամանագրի, նահանգի ոստիկանական հիմնարկներին ուղղած «հույժ գաղտնի» գրությամբ հայտնելով, որ Ռուսաստանում տարածում են գտել քաղաքական էմիգրանտ Ն. Պ. Օգարևի հակակառավարական երկու կոչը՝ լիտոգրաֆիկ հրատարակությամբ, որոնք լի են «վրդովեցուցիչ պահանջներով», կարգադրում է ուշադիր հետևել, թե ինչ ձևով են դրանք տարածվում, և գտնել հանցավորներին։*

Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, *ֆ. 38/102, գ. 19, թ. 2։*

Նոյեմբերի 20.— *Կալկաթայի «Ծղրայրասեր» թերթը Նալբանդյանի բանտարկության լուրը հաղորդելով, գրում է, թե նրա բարձր արժանիքների մասին կարող են վկայել ինչպես հնդկահայերը,— որոնք առիթ են ունեցել նրան տեսնելու,— նույնպես և այլ քաղաքների՝ նրան լավ ճանաչող հայերը։ Այնուհետև, նշելով, որ Նալբանդյանն «արիաջան վաստակոք և աննկուն հոգվով» կարողացավ ձեռք բերել հնդկահայերի՝ Նոր-Նախիջևանին կտակած ժառանգությունը, թերթը սրտանց ցավ է հայտնում պետանի և ազգասեր այդ գործչի համար, որը միշտ ազգի օգտի մասին էր մտածում։ Վերջում ավելացնում է, թե ուրախ ենք հայտնելու, որ մեր երևելի և համբավավոր անձնավորություններից ոմանք դիմել են կաթողիկոսին, որպեսզի վերջինս միջնորդի ռուսական տերության առաջ՝ Նալբանդյանին ազատելու մասին։*

«Ծղրայրասեր», *1862, № 26։*

Նոյեմբերի 22.— *Ղ. Նալբանդյանը դիմում է քննիչ-հանձնաժողովին, խնդրելով թույլտվություն՝ կամ տեսնվելու եղբոր հետ և կամ նամակը հանձնելու նրան։ Հանձնաժողովը, ելնելով «գործի հանգամանքներից», տեսակցելը գտնում է անկարելի, իսկ նամակը*

որոշում է հանձնել Նալբանդյանին՝ բերդի պարետային վարչության միջոցով։
ЦГИАМ, ф. ОППС, 1862, д. 53, л. 357.

Նոյեմբերի 24-ին.— Հ. Խալիբյանը Գ. վ. Այվազովսկուն ուղղած նամակում գրում է, թե իրենց հակառակորդ պարտիայի բոլոր գործողությունները մինչև այժմ էլ ղեկավարում են Նալբանդյանը, Հայրապետյանը և մի քանի ուրիշներ։ «Նրանց հանդգնությունն ավելի հեռուն է տարածվել,— շարունակում է Խալիբյանը,— ինչպես կարելի է ենթադրել այն բանից, որ այդ պարտիային պատկանող Նալբանդյանը վերջերս կառավարության կարգադրությամբ հանկարծակի ձերբակալվել է և իր բոլոր թղթերով ուղարկվել է Պետերբուրգ»։ Վերջում Խալիբյանն ավելացնում է, թե հիշյալ հանգամանքները բավարար հիմք են տալիս, որպեսզի գործը ներկայացվի ներքին գործերի մինիստրի «արդար բարեհայեցողությանը»։
Դրական թանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Նոյեմբերի 25.— Նամակ եղբորը՝ Ղ. Նալբանդյանին. բացատրություններ է տալիս հնդկահայ կտակների գործի վերաբերյալ և ցանկություն հայտնում տեսակցելու նրա հետ՝ հանգամանորեն խոսելու այդ, ինչպես նաև իր դրամական հաշիվների մասին։
ЦГИАМ, ф. ОППС, 1862, д. 53, л. 461.

Դեկտեմբերի 3.— Ղ. Նալբանդյանը դիմում է քննիչ-հանձնաժողովին, խնդրելով թույլատրել տեսակցելու եղբոր հետ հնդկահայ կտակների գործով։ Հանձնաժողովը որոշում է թույլատրել՝ նկատի ունենալով դիմումի մեջ բերված պատճառաբանությունը։
Նույն տեղը։

Նույն օրը.— Նալբանդյանի նամակը Պետրոպավլովյան բերդի պարետ Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։
ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Դեկտեմբերի 8.— Ա. Ի. Նիչիպորենկոն քննիչ-հանձնաժողովին տված իր ցուցմունքներում հայտնում է, թե Բակունինը Նալբանդյանին հասցեագրված երկտողը իրեն հանձնելիս ասել է, որ կեղծիքի համար անհնազանդ ձեռք է բերել Նալբանդյանը։
ЦГИАМ, ф. ОППС, д. 53, л. 461.

Դեկտեմբերի 10.— Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։
ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Դեկտեմբերի 13.— Նալբանդյանը քննիչ-հանձնաժողովին գրավոր դիմում է, խնդրելով՝ իր եղբոր Ղազարոս Նալբանդյանին հանձնել հնդկահայերի կտակներին վերաբերող փաստաթղթերը և թույլ տալ իրեն տեսակցելու եղբոր հետ՝ այդ առթիվ անհրաժեշտ բացատրություններ տալու. «Որովհետև,— գրում է Նալբանդյանը,— ինձանից բացի ոչ ոք չգիտե դրանց նշանակությունը և այդ գործի հանգամանքները, մինչդեռ դրանք մեր հասարակության աղքատ մասին են վերաբերում»։ «Պայքար», 1923, № 12—13, էջ։
Բնագիրը՝ ЦГИАМ, ф. ОППС, д. 54, л. 193.

Նույն օրը.— «Բարձրագույնս հաստատված» քննիչ-հանձնաժողովի պահանջով, երդումից հետո, Նալբանդյանն իրեն առաջարկված հարցերին պատասխանելով, պնդում է իր նախկին ցուցմունքների վրա, որ ինքը «Լոնդոնի ոուս վտարանդիների գործակալը չի եղել, և չի ծառայել նրանց պրոպագանդայի տարածմանը», չի ունեցել «ոչ մի մասնակցություն նրանց գործունեության մեջ»։
ЦГИАМ, ф. ОППС, 1862, д. 54, лл. 208—210.

Դեկտեմբերի 14.— Նալբանդյանի դիմումի առթիվ (հնդկահայ կտակներին վերաբերող թղթերը եղբորը հանձնելու մասին), քննիչ-հանձնաժողովը որոշում է թույլ տալ, որ Նալբանդյանը, հանձնաժողովի անդամների ներկայությամբ, նայի թղթերը և եղբորը հանձնի դրանցից այնպիսիները, որոնք գործի հետ ոչ մի կապ չունեն։
ЦГИАМ, ф. ОППС, 1862, д. 54, л. 220.

Դեկտեմբերի 28.— Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։
ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Դեկտեմբերի 30.— Նալբանդյանը նամակ է գրում Ղ. Նալբանդյանին։ Հուսադրում է նրան և խնդրում հանգստացնել ծնողներին և քույրերին։ Պատվիրում է՝ խնդրել Անանիա Սուլթանշահին, որպեսզի վերջինս ձեռք բերի սորգոյի սերմեր և ուղարկի Նոր-Նախիջևան՝ այնտեղ փորձարկելու համար. դրան Նալբանդյանն առաջնակարգ նշանակություն է տալիս։ Հնդկաստանից ինքը վերցրած է եղել սորգոյի սերմեր, սակայն այն ճամպրուկը, որի մեջ էր դրել սերմերը՝ կորել է Ճանապարհին (Սաուտհամպտոնում)։ Այնուհետև, գործնական խորհուրդներ է տալիս սորգոյի սերմերը ցանելու և ծլարձակումից հետո խնամելու մասին։
Երկերի լիակատար ժող., IV, 126—133։

Դեկտեմբերի 31.— *Լոնդոնի ռուս պրոպագանդիստների հետ հարաբերություններ ունենալու մեջ մեղադրվողների, այդ թվում նաև Նալբանդյանի գործը հանձնվում է Սենատ։*

М. Лемке, Очерки освободит. движения 60-х годов, 157.

1863

Հունվարի 11.— *Նալբանդյանը սկսում է բանտի իր օրագիրը։*

Երկերի լիակատար ժող., *IV, 285։*

Նույն օրը.— *Հայտնում են, որ նրա գործը հանձնված է կառավարող սենատի դատաստանին։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Եղբոր՝ Ղ. Նալբանդյանի հետ միասին, քննիչ-հանձնաժողովի ներկայությամբ, նայում և առանձնացնում է հրնդկահայ կտակներին վերաբերող թղթերը։ Ղ. Նալբանդյանը հիշյալ թղթերն ստանալով, քննիչ-հանձնաժողովին տալիս է ստացական։*

ЦГИАМ, ф. ОПИС, 1862, д. 54, л. 469.


Հունվարի 13.— *Տեսակցում է [Անանիա] Սուլթանշահի, Ղ. Նալբանդյանի և ուրիշների հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 285։*

Հունվարի 18.— *Նամակ Կ. Հայրապետյանին։ Հայտնելով, որ իր եղբոր միջոցով արդեն ուղարկված են հնդկահայերի կտակների գործին վերաբերող պաշտոնական թղթերը, խնդրում է՝ նրան պահ տված դումարը, ինչպես և այդ փաստաթղթերը պահպանել խնամքով՝ մինչև իր գործի (դատավարության) ավարտը, որպեսզի կտակի գումարները գործադրվեն Նոր-Նախիջևանի աղքատ բնակչության լուսավորության օգտին։ Նալբանդյանն զգուշացնում է Հայրապետյանին, որ չլինի թե խալիբյանականները խարդավանքով յուրացնեն այդ փողը, ինչպես նրանք վարվեցին եկեղեցական գումարների հետ։*

Գրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. *73։*
Երկերի լիակատար ժող., *IV, 134—138։*

Հունվարի 19.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Նույն օրը.— *Գ. վ. Այվազովսկին Հ. Խալիբյանին գրում է, թե Թիֆլիսում լուր է տարածվել, որ Նալբանդյանն ազատվել է բան-*



Ն. Ա. Սերնո-Սոլովևիչ

АРХИВ ПОЛИЦИИ

ЕГО

ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА

СОБСТВЕННОЙ КАНЦЕЛЯРІИ

ОТДѢЛЕНІЕ III.

I ЭКСПЕДИЦІИ

№ 230

О революціонномъ духѣ народа въ Россіи и о распространеніи по немъ слуховъ возмутительныхъ воззваній

Часть 76.

о Михаилѣ Балбановѣ

145 л.

Երրորդ բաժանմունքում կազմված Նալբանդյանի
գործին անվանաթերթը

տից և շրջում է Պետերբուրգում. ապա ավելացնում է, որ իր կարծիքով դա անհիմն զրույց է, քանի որ, եթե այդ ճիշտ լիներ՝ վաղուց հայտնի կլիներ Նոր-Նախիջևանում և Թեոդոսիայում։

Գրական թանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Հունվարի 27.— *Նալբանդյանն ստանում է գրքեր։*

ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հունվարի 29.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* Նույն տեղը։

Փետրվարի 1.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։ Բերդի հիշատակարանում այդ տեսակցությունը համարում է «վերջինը», ըստ երևույթին, նախազգուշացված լինելով, որ այլևս տեսակցություններ չեն թույլատրվելու։* Երկերի լիակատար ժող., *IV, 285։*

Փետրվարի 3.— *Հ. Խալիբյանը, պատասխանելով Գ. վ. Այվազովսկու հունվարի 19-ի նամակին,— որտեղ խոսվում էր Նալբանդյանի ազատվելու վերաբերյալ Թիֆլիսում տարածված լուրերի մասին,— գրում է. «Դրեք վասն Նալպանտին, թե գոյալ է ազատություն, բայց տեղվույս լուրն [է], իբր թե այնքան թեթևացուցել են [Նալբանդյանի վիճակը], որ ուզեցողքն տեսնելու՝ կարող են գնալու տեսնելու. ասեն թե՝ ազատություն ալ պետք է գտնու. այսքան է մեր գիտցածն»։*

Գրական թանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Փետրվարի 4.— *Ս. Գ. Սուլթանշահը ցարի անունով խնդրագիր է ներկայացնում Սենատ. նշելով, որ Նալբանդյանին ճանաչում է փոքրուց և որ նա իր ազգականն է, խնդրում է իր երաշխավորությամբ և անձնական պատասխանատվությամբ ազատել նրան բանտից՝ նախքան դատավճիռը։* ЦГИАМ, ф. ОППС, 1862, д. 56, л. 55.

Փետրվարի 12.— *Նալբանդյանին առաջին անգամ կանչում են Սենատ՝ հարցաքննության։* ЦГИАМ, ф. ОППС, 1862, д. 56, л. 113.
Երկերի լիակատար ժող., *IV, 285։*

Սենատում նրանից ստորագրություն են վերցնում, որ հարցաքննությունը սպառնական-բռնադատական չի եղել, և որ նա հաստատում է իր գրավոր ցուցմունքները։

ЦГИАМ, ф. ОППС, д. 56, л. 116.

Նույն օրը.— *Նալբանդյանը բանավոր դիմում է Սենատին՝ իրեն երաշխավորությամբ ազատելու և իր ազգականների ու այն անձնավորությունների հետ տեսակցել թույլատրելու մասին, որոնց հետ տեսակցել թույլատրված է եղել՝ նախքան իր գործը Սենատ հանձնելը։* ЦГИАМ, ф. ОППС, 1862, д. 56, л. 119.

Նույն օրը.— *Սենատը որոշում է՝ Նալբանդյանի դիմումն իրեն երաշխավորությամբ ազատելու մասին նկատի առնել այն հարցը վճռելու ժամանակ, թե՝ այդ գործով մեղադրվողները կարո՞ղ են, արդյոք, բանտից ազատվել (երաշխավորությամբ)։*

Տեսակցության մասին Սենատը որոշում է հայտնել Սանկտ-Պետերբուրգի գինվորական գեներալ-նահանգապետին. Սենատը տեսակցություն թույլատրելուն դեմ չէ, եթե այդ չի հակասում բանտի օրենքներին։ Նույն տեղը։

Փետրվարի 13.—*Նալբանդյանը Բերդի հիշատակարանում նշում է, որ Սենատը թույլատրել է իրեն տեսակցել ազգականների հետ։*
Երկերի լիակատար ժող., *IV, 285։*

Նույն օրը, երեկոյան.— *Ղ. Նալբանդյանի միջոցով ստանում է «Հանրագիտական բառարանի»* [«Энцикл. словарь, составл. русскими учен. и писателями»] *5-րդ հատորը։*

Երկերի լիակատար ժող., *IV, 141։*

Փետրվարի 14.— *Նամակ Ղ. Նալբանդյանին. հայտնում է, որ նախորդ օրվա երեկոյան ստացել է «Հանրագիտական բառարանի» 5-րդ հատորը. իր ուրախությունն է արտահայտում Ա. Սուլթանշահի՝ Մոսկվայից Պետերբուրգ ժամանելու առթիվ։ Խնդրելով շնորհակալություն հայտնել Ա. Սուլթանշահին՝ նրա բժշկական խորհուրդների համար, նշում է, որ բանտային պայմանները հնարավորություն չեն տալիս իր հիվանդության դեմ «հարձակողական գործողությունների» դիմելու, որ առայժմ ինքը կարող է «միմիայն պաշտպանողական դիրք ընդունել»։ Խնդրում է նամակ գրել հարազատներին և հանգստացնել նրանց։ Անկեղծ վիշտ ու ափսոսանք է հայտնում Ֆ. Մ. Ռուդնևի մահվան առթիվ։ Բուռն կարոտ է արտահայտում երաժշտության նկատմամբ, որից զրկված է բանտում. «Երանի ձեզ բոլորիդ, որ հնարավորություն ունեք վայելելու հրաշալի երաժշտության թովիչ հնչյունները. ինչ վերաբերում է ինձ, բացի երբեմնակի իմ մենատանին հասնող զանգերի տրտում զո-*

զանջից, ահա յոթ ամիս է, ինչ ուրիշ ձայն չեմ լսում»։ Կրկին խընդրում է ուղարկել «գրքեր, գրքեր և գրքեր», սակայն ուշադիր ընտրություն կատարել, «որպեսզի նրանք կարողանան քիչ թե շատ զբաղեցնել ինձ ու միաժամանակ համապատասխանեն անհրաժեշտ հարցասիրության պահանջներին»։ «Վեպերը ձանձրացրել են, իսկ բառարանները զվարճք են առաջացնում»։ Խնդրում է իր համար բերել Շլոսսերի և Մակոլեի երկերը։

Երկերի լիակատար ժող., *IV 138—144։*

Փետրվարի 15.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Փետրվարի 16, երեկոյան.— *Ղ. Նալբանդյանի միջոցով ստանում է Լ. Ֆոշեի «Очерки Англии» գիրքը՝ Դեմենտևի և Ալեքնիկովի թարգմանությամբ (Պետերբուրգ, 1862) և սկսում է կարդալ։*

Երկերի լիակատար ժող., *IV, 149։*

Փետրվարի 17.— *Նամակ Ղ. Նալբանդյանին. հաղորդում է, որ հնարավորություն է ունեցել դուրս գալու բանտի բակը.*

«Այսօր հրաշալի եղանակ էր, և ես նրանից օգտվեցի 20 րոպե. կարող էի բաց օդում ավելի մնալ, բայց քամի էր ու հեռևելով առածին, թե՝ «լավից քիչ-քիչ», վերադարձա բնակավայրս, որպեսզի ավարտեմ դեռևս առավոտյան սկսած նամակս»։

Երկերի լիակատար ժող., *IV, 153։*

Ղ. Նալբանդյանին գրած նույն նամակում հայտնելով, որ ստացել է Պարտիզպանական ընկերության և Օվսյաննիկովի ցուցակները Sorghum Saccharatum-ի նմուշների հետ, ինչպես և Լ. Ֆոշեի «Очерки Англии» գիրքը, դարձյալ հիշեցնում է Շլոսսերի և Մակոլեի երկերի մասին, խնդրում է բերել մի քանի հատոր միասին, «և ոչ թե հոմեոպաթիկ չափերով՝ մեկական գրքույկ»։ Հանդիմանում է եղբորը՝ նրա նամակում արտահայտված հուսահատական տրամադրության համար. հորդորում է իր առողջության վերաբերմամբ հանգիստ լինել. «բոլորովին չեմ կարող պարծենալ նրանով, բայց հուսահատվել դեռ շուտ է, մանավանդ, որ վաղուց արդեն տառապանքներին սովորել եմ. իմ կյանքի ճանապարհին երրեք վարդեր չեն փթթել...»։

Կրկին խնդրում է հանգստացուցիչ նամակ գրել տանեցիներին, թաքցնելով իրենց տեսակցությունների ընդհատվելը, որը «կարող է նրանց շատ վշտացնել»։ Ա. Սուլթանշահին որևէ աշխատանք հանձնարարելու համար խորհուրդ է տալիս առայժմ սպասել. հույս է հայտնում, որ մինչ այդ իր «հորիզոնն էլ կպարզվի» և ի վիճակի կլինեն «միասին զբաղվելու կենդանաբանությամբ և բուսաբանությամբ, որոնց կարիքը մեր հայրենի գրականության համար այնպես խիստ զգալի է»։ Խնդրում է շնորհակալություն հայտնել Ս. Գ. Սուլթանշահին՝ իր նկատմամբ նրա ջերմ վերաբերմունքի համար [նկատի ունի Ս. Գ. Սուլթանշահի դիմումը՝ երաշխավորությամբ իրեն բանտից ազատելու մասին]։ Ցավ է հայտնում, որ «մեր «Հյուսիսափայլը» արդեն գոյություն չունի և ասպարեզը մնացել է գրական դաճաճներին»։

Իր կարծիքն հայտնելով Լ. Ֆոշեի գրքի ներածության մասին, անհրաժեշտ է համարում այդ գիրքը «քննարկել մինչև ոսկորների ծուծը», սակայն, ինքն այժմ ի վիճակի չէ այդ աշխատանքը կատարելու։ Այժմ նամակներն իսկ գրում է ընդմիջումներով, որովհետև երկար գրելն անդրադառնում է կրծքի և մեջքի վրա։ Վրդովմունք է հայտնում բանտային կյանքի դեմ, այն համարելով «կենդանի մահ, ո՛չ ավելի»։

Երկերի լիակատար ժող., *IV, 144—154։*

Փետրվարի 18.— *Նալբանդյանին դուրս են բերում բանտի բակում «զբոսնելու». «Այսօր հրաշալի եղանակ էր և ես դարձյալ դուրս եկա պարտեզ զբոսնելու ու մնացի երեք քառորդ ժամ»։*

Երկերի լիակատար ժող., *IV, 157։*

Նույն օրը, երեկոյան ժամը 9.— *Նամակ Ղ. Նալբանդյանին. գրում է, թե՝ «վաղուց անհամբեր սպասում եմ թուլլավության տեսակցության համար, որը գեթ մի քանի րոպե մոռացնել է տալիս տաղտկալի իրականությունը»։ Հայտնում է, թե իր առողջությունն ընդհանուր առմամբ՝ ոչինչ, բայց փայծաղը երեկվանից անհանգստացնում է։ Ուրախ է, որ Անանիա Սուլթանշահը զբաղվում է իր հիվանդությամբ և պատվիրում է զննաղան փորկարար միջոցներ։ Այնուհետև գրում է, թե դեռևս զբաղված է Լ. Ֆոշեի գրքով, իսկ Ան. Սուլթանշահի մատնանշած հոդվածը հրեաների մասին [«Հանրագիտական բառարանում»] կկարդա։*

Երկերի լիակատար ժող., *IV, 154—160։*

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Փետրվարի 19.— «Մեղուն» ցավելով՝ նշում է «Հյուսիսափայլի» հրատարակության դադարելը. դրա պատճառը համարելով՝ ազատախոսության, իրավասիրության և անաչառության համար թշնամիներից կրած հալածանքները, «Մեղուն» գրում է. «Կրկին ցավ կզգանք մենք «Հյուսիսափայլի» խափանվելեն. մեկ մը, որ ազգերնիս պիտի զրկվի ստանալե այն վսեմ ու ազատ գաղափարները, որ այս օրագիրը հինգ տարիե ի վեր թանձր գլուխներու մեջ մտցնել կաշխատեր և որք մեր դարու գաղափարներն են. երկրորդ, որ անով կիմանանք, թե ինչպես Պոլսո մեջ, նույնպես ալ Ռուսաստանի մեջ կան այնպիսի հայեր, որ ազգը միշտ տպիտության, նախապաշարմանց ու խավարին մեջ պահել կսիրեն, վասն զի անոնցմով ու անոնց մեջ է, որ միշտ իրենց շահը գտած են ու կգտանեն դեռ այսօր»։

«Մեղու», 1863, № 189, 53—54։


Նույն օրը.— Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։ ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Փետրվարի 20, կեսօրից հետո.— Ղ. Նալբանդյանի միջոցով ստանում է Շլոսսերի «Համաշխարհային պատմության» երկրորդ հատորը, Մակոլեի «Անգլիայի պատմության» երկրորդ հատորը և Գերվինուսի «XIX դարի պատմության» առաջին պրակը։

Երկերի լիակատար ժող., IV, 163։

Նույն օրը, երեկոյան ժամը 9.— Նամակ Ղ. Նալբանդյանին. տեղեկացնելով Շլոսսերի, Մակոլեի և Գերվինուսի գրքերն ստանալու մասին, և այդ առիթով շնորհակալություն հայտնելով, Նալբանդյանը խնդրում է Շլոսսերն ուղարկել «ո՛չ թե աշխարհի ստեղծագործությունից, այլ հռոմեական պատմությունից սկսած... Մենք գրական գիտության հետևողներ ենք և մեր ամբողջ ուժը կենտրոնացնում ենք ուսումնասիրելու ա՛յն, ինչ գիտությանը հաստատապես հայտնի է, այլ ո՛չ թե ենթադրաբար, կամ տարապայմանորեն»։ Խոսելով դարձյալ «Հանրագիտական բառարանի» մասին, գտնում է, որ «Եվրոպա» հոդվածում հայերի թիվը նվազեցրած է։ Հրեաների մասին անհրաժեշտ է համարում գրել մի ամբողջ ուսումնասիրություն, բայց դա թողնում է «ավելի հարմար ժամանակի, քան այժմս է»։

Հայտնում է, որ առողջությունը վատ չէ։ Հավանաբար, եղբոր միջոցով տեղեկացած լինելով արևմտահայ մամուլում և ժողովրդի մեջ իր նկատմամբ արտահայտված ջերմ վերաբերմունքի մասին, գրում է. «Ինչ վերաբերում է հայերի համակրությանը, ինձ մնում է



Նալբանդյանի 1863 թ. փետրվարի 24-ին Պետրոպավլովյան բերդից գրած նամակի վերջին էջը

միայն նրանց շնորհակալություն հայտնել. այժմ ուրիշ ոչինչ չեմ կարող հատուցանել»:

Ան. Սուլթանշահին խնդրում է նամակ գրելիս իր կողմից շնորհակալություն հայտնել Ուստիմովիչին և Կովալևսկուն՝ իրեն ուղարկած ողջույնի համար: Հիշում է ուսանողական տարիները, իրենց հավաքույթները, պարապմունքներն ու զրույցները:

Եղբորը խնդրում է՝ տեղեկություններին հանգստացուցիչ նամակ գրել և, թեև տեսակցությունն ընդհատված է, հայտնել, որ առաջվա նման տեսակցում են:

Երկերի լիակատար ժող., IV, 160—167:

Փետրվարի 20.— Նալբանդյանի դատական գործի կապակցությամբ Նոր-Նախիջևանում տեղի է ունենում բնակչության բոլոր դասերի ներկայացուցիչներից հարյուր հոգու «ընդհանուր խուզարկություն» (повальный обыск) Նալբանդյանի վարքի մասին: Բոլորը հաստատում են Մագիստրատի նախագահ Դանիել Գարագաշի վկայությունը. «Նախիջևանի բնակիչ, Սանկտ-Պետերբուրգի համալսարանի կանդիդատ Միքայել Նալբանդյանին ես բավականաչափ լավ ճանաչում եմ որպես իր վարքի բոլոր կողմերով գերազանց անձնավորության. նրա ո՛չ մի վատ արարմունքը երբեք ես չեմ տեսել, և դրա համար էլ նրա վարքին միանգամայն հավանություն եմ տալիս, մանավանդ, որ նա մեր հասարակության կողմից լիազորված լինելով՝ Նախիջևանի համար հույժ նշանակալից դրամական արժեք ներկայացնող հնդկական կտակների գործով, իր ազնվությամբ ամբողջովին արդարացրեց հասարակության վստահությունը»:

ЦГИАМ, ф. ОППС, д. 57, лл. 349—354

Փետրվարի 21.— Նոր-Նախիջևանի հայկական Մագիստրատը նախագահ Դ. Գարագաշի առորագրությամբ հաստատում է Պետերբուրգի համալսարանից 1860 թ. հունիսի 7-ին Նալբանդյանին կանդիդատի աստիճան շնորհելու վկայականը, որ պահանջվել էր դատավարության կապակցությամբ:

Երկերի լիակատար ժող., IV, 313—314:

Նույն օրը.— Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:

ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Փետրվարի 22.— Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:

Նույն տեղը:

Փետրվարի 24.— Նամակ Ղ. Նալբանդյանին: Եղբոր նամակից տեղեկանալով Բոքլի «Քաղաքակրթության պատմությունն» ուղարկելու մտադրության մասին, հայտնում է իր գոհունակությունը: Գրում է, որ նամակի հետ վերադարձնում է Գերվինուսը («XIX դարի պատմության» առաջին պրակը) և «Հանրագիտական բառարանը»: «Մակոլեյը վերջացնելու վրա եմ, այնուհետև կսկսեմ Շլոսսերը և ապա նորից Ֆոշեն: Մակոլեյն իր մշտական հումորով ինձ մեծ հաճույք է պատճառում: Գերվինուսն առայժմ լուրջ գրող է, չգիտեմ ինչ կլինի հետագայում»: Գրում է, որ ինքը գրքերը ո՛չ թե սոսկ կարդում է, «այլ ուսումնասիրում՝ վերլուծական և քննադատական տեսակետից: Դրանք (այդ գրքերը) շատ բան չեն տալիս ինձ, բայց գիտության մեջ չպետք է արհամարհել և շատ քիչը, մանավանդ, որ ես ուրիշ զբաղմունք չունեմ»: Հայտնում է իր բուռն ցանկությունը, որպեսզի Ա. Սուլթանշահը չմեկնի Մոսկվա, այլ մնա Պետերբուրգում, որովհետև նրանից է տեղեկություններ ստանում այն շրջանից, ուր մի ժամանակ ինքն ապրել է. նրանից է առնում ընկերների և ազգականների կարոտը:

Հարազատներին և բարեկամներին չվհատեցնելու համար հույս է հայտնում, որ իր գործը բարեհաջող վախճան կունենա և կազատվի բանտից. այդ իմաստով կրկնում է Վ. Հյուգոյի «Ռյուի Բլազ» դրամայի հերոսներից մեկի՝ Դոն-Չեզար դե Բազանի խոսքերը. «Աշխարհում ամեն ինչ չափ ունի, ամեն ինչ վախճան ունի»:

Խնդրում է նորություններ հաղորդել Մոսկվայի թատերական աշխարհից:

Երկերի լիակատար ժող., IV, 167—173:

Փետրվարի 25.— Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:

ПБЛ. ф. А. Ф. Сорокина.

Փետրվարի 27.— Հ. Խալիբյանը, Գ. Խաչրանյանի նամակի հիման վրա, Գ. վ. Այվազովսկուն հայտնում է, թե փետրվարի 20-ին Նոր-Նախիջևանի ժանդարմային պաշտոնյայի ներկայությամբ «ընդհանուր խուզարկություն» է եղել (повальный обыск) և որ այդ հրամանը Պետերբուրգից է տրված: Այնուհետև տեղեկացնելով, թե «Հայտնի մարդոցմեն մեկին ձայն տված չեն» և 106 հոգի «ատաբրիդ» արել են, վախ է արտահայտում, որ «իհարկե այնուհետև կարձակվի [Նալբանդյանը], թեև այս մասին ես մերոնց գրեցի, բայց ոչինչ շահ»:

Գրական թանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ:

Նույն օրը.— Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։ ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Փետրվարի 28.— *Կալկաթայի «Եղբայրասեր» տասնօրյա թերթը խմբագրական ընդարձակ հոդված է տպագրում Նալբանդյանի ձերբակալության առթիվ. հոդվածագիրը ջերմ, հուզիչ տողերով դիմում է իրեն, Նալբանդյանին, արտահայտելով հնդկահայերի խոր սերն ու համակրանքը նրա նկատմամբ.*

«Իցիւ թէ չէր եկեալ քո աստ ի Հնդիկս, ազգասէր և ի վերայ ազգին անձնադիրդ Նալբանդեանց, քանզի յայնժամ ոչ ճանաչելով զքեզ և ոչ գիտելով զչափ տաղանդոյդ և զազգասէր եռանդեանդ՝ սակաւ ինչ թուէր յաչս մեր կորուստ անգին ազգայնոյդ, որոյ վասն զարդիս այսքան ցաւագնիմք։ Ամենայն հնդկահայ, որոյ բախտաւոր է եղեալ ծանօթանալ ընդ քեզ և խօսակից ընդ քեզ լինել, մինչ աստ առ մեզ էիր, ձեռս ի վեր առ բարձեալն համբարձեալ անդադար աղօթէ վասն ազատութեան հայրենասէր դիւցազնիդ. դիւցազն, այո՛, և արժան իսկ ես այսմ վերատաւուրեան, վասն զի կորստեամբ անձին քո գնեցեր զայս անուն, որպէս և մարգարէաբար ասացեալ էիր յերկտողիդ, թէ՝ «Պաշտպանել այն հայի առաքուր կոխված իրավունքը է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը։ Եվ այս նպատակին հասանելու համար չէ՛ պիտո ընկրկինք ո՛չ բանտի և ո՛չ արսորի առաջև, ո՛չ միայն բանիվ և գրչով, այլև գենքով և արյունով, եթե մի օր արժանի լինինք գենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը ելիրել և սրբել մեր արյունով»։

«Այո՛,— շարունակում է հոդվածագիրը,— չընկրկեցար և զոհ եղեր անձնանուէր վասն ազգիդ։

Թէ ուր ես՝ չգիտեմք. յամենայն լրագիրս ազգիս որք առաքեն աստ՝ որոնեալ վասն քո՝ ո՛չ կարեմք գտանել զլուր ինչ զքէն։ Ո՛վ, լուր ազատութեանդ ի մազաց անպարտելի արծուոյն քանիո՛ն լինի պատճառք ցնծութեան հնդկաբնակ հայոցս»։

Այնուհետև համառոտակի ծանոթացնում է Նալբանդյանի գրական-հրապարակախոսական գործունեության հետ՝ «Հյուսիսափայլի» էջերում և նշում, որ նա իր «ազատ և աներկիւղ գրվածովք», խոցում էր իր տխերիմ թշնամիների սիրտը՝ «առավել... քան զսուր երկայրի»։ Ապա, նշելով Նալբանդյանի ծառայությունը հնդկահայ կուսակիների գումարները ձեռք բերելու գործում՝ «ազգի աղքատ մանուկների համար» դպրոց հիմնելու նպատակով, հոդվածագիրը շարունակում է.

«Թէ զի՞նչ է կարծեցեալ յանցանք նորա, ո՛վ նորա դատախազ, և ո՛ւր և յի՞նչ վիճակի գտանի նա այժմ, ամենեին անյայտ է ի մէնջ, և կարօտիմք հեռաւոր եղբարց մերոց ծանօթութեան, սակայն որչափ և կարեմք մակաբերել ի գրուածոց նորա, որք առ մեզ առ այժմ գտանին, Ազատութիւն երևի լինել միայն նորա հանցանքն և հոգևորականքն դատախազ, իսկ կառավարութիւն ոտասց կազմ և պատրաստ առաքել ի Սիբիրիայ զամենեսեան, որք համարձակեն կոչել զանձինս հայրենասէրք և բարեկամք Ազատութեան։

Ե՛րթ, և՛րթ, Նոր Վարդանդ Հայաստան աշխարհի, ուրանօր առաջնորդէ քեզ ճակատագիրն։ Թէ արևակէզ ջերմութիւն Հնդկաստան աշխարհիս ո՛չ կարաց խամրեցուցանել զծաղիկ ազգասիրութեանդ, անշուշտ և այժմ ցրտասառոյց ձմեռնային Սիբիրիոյ, եթէ անդ իցես դժբախտաբար, ո՛չ կարեն հովացուցանել զհնոց սիրոյդ, որ ի մանկութենէ հետէ երևի լինել վառ բորբոքեալ ի սրտիդ։

Ո՛չ ժամանակ և ո՛չ իսկ մահ կարէ բառնալ զյիշատակ քոյ ի մէնջ. որդիք ի հօրէ լուեալ զանուն պատուելոյդ, հաղորդէ զայն հետագային իւրոց խորին տրտմութեամբ, այն ինչ անուանք թշնամեացդ անհետացեալ կորնչին ընդ քշուառ և անձնանախատ կենաց իւրեանց ի հավիտենական մոռացութեան»։

«Եղբայրասեր», *1863, №№ 33—36, 265—296։*

Մարտի 2.— *Նամակ Ղ. Նալբանդյանին. հայտնում է, որ Մակոլեի 3-րդ հատորը («Անգլիայի պատմությունը») և Բոթլի «Քաղաքակրթության պատմությունը» ստացել է։ Խնդրում է ուղարկել Շլոսսերի «XVIII դարի պատմությունը» և Գերվինուսի «XIX դարի պատմության» շարունակությունը (2-րդ հատորը)։ Գրում է, որ արդեն «ութ ամիս դիշեր-ցերեկ» կարդում է և որ դա իր միակ զբաղմունքն է, «որից ոչ մի կերպ չի կարելի հրաժարվել»։ Մոտալուտ տնտեսական հույսը դժալի չափով թուլացած է դտնում։ Առողջությունը գնալով վատանում է. օրգանիզմն անընդհատ հիվանդագին վիճակումն է, մեկ այս, մեկ այլ մասում։*

Երկերի լիակատար ժող., *IV, 173—180։*

Նույն օրը.— Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։ ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Մարտի 4.— *Սենատը մերժում է Ս. Գ. Սուլթանշահի խնդիրը՝ Նալբանդյանին երաշխավորությամբ ազատելու մասին և որոշում է նրան՝ մինչև դատական գործի ավարտը, թողնել Պետրոպավլովյան բերդում, և այս մասին հայտնել Ս. Գ. Սուլթանշահին՝ Սանկտ-Պետերբուրգի գեներալ-նահանգապետի միջոցով։*

ЦГИАМ, ф. ОППС, 1862, д. 56, лл. 342—343.

Մարտի 5.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և Անանիա Սուլթանշահի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 285։*

Մարտի 6.— *Պետերբուրգի զինվորական գեներալ-նահանգապետը տեղեկացնում է Սենատին, որ Նալբանդյանին թույլատրվել է տեսակցել միայն հարազատների հետ։*

ЦГИАМ, ф. ОППС, 1863, д. 57, л. 2.
М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 174.

Մարտի 7.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Մարտի 13.— *Նամակ Ղ. Նալբանդյանին. նամակը, ըստ երեվույթին, հասցեատիրոջը չի հանձնվում։ Չի պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV, 285։*

Մարտի 17.— *Մարտի 13-ի նամակի պատասխանը չստանալով, Նալբանդյանը կրկին գրում է եղբորը։ Չի պահպանվել։*

Նույն տեղը։

Մարտի 20.— *Կալկաթայի «Եղբայրասեր» լրագիրը հատվածներ է արտատպում «Երկու տողից». «Մեք ազատակամ նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու...» բառերից մինչև «...ձանձրալի է մի ըստ միոջն թվել»։*

Երկերի լիակատար ժող., *III, 23—24։*

Նույն համարում, «Հյուսիսափայլի» 1859 թ. 9-րդ ամսատետրակից, արտատպված է «Հիշատակարանի» հետևյալ հատվածը՝ «Ուր չկա մտքի և բանականության ազատություն...» բառերից մինչև «Ազատություն» բանաստեղծությունը ներառյալ։

«Եղբայրասեր», *1863, № 35, 292—293։*

Համմ. Երկերի լիակատար ժող., *I, 441—442։*

Մարտի 21.— *Մարտի 13-ի և 17-ի նամակների պատասխանը չստանալով, վերստին կրկնում է նամակը։ Չի պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV, 285։*

Նույն օրը.— *Բերդի պարետային վարչությունից հայտնում են, որ դարձյալ դադարեցված է տեսակցությունն ազգականների հետ, և «վերստին խնդրվում է թույլտվություն»։* Նույն տեղը։

Մարտի 22.— *Ի. Ս. Տուրգենևը Փարիզից, ռուսական դեսպանի միջոցով ուղարկում է իր գրավոր ցուցմունքները քննիչ հանձնաժողովին. հաստատելով, որ «Նալբանդովի բոլոր ցուցմունքները միանգամայն ճշմարիտ են», Տուրգենևը գրում է. «Հենց նույն [1862] մայիս ամսում և հենց նույն առիթով ես Փարիզում ծանոթացա պ. Նալբանդովին, տեսնվեցի նրա հետ 3—4 անգամ, իսկ խոսել եմ նրա հետ բացառապես Բակունինի կնոջը Սիբիրից Տվերի նահանգը տեղափոխելու միջոցների մասին»։*

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 162—163.

Երկերի լիակատար ժող., *III, 435—436։*

Մարտի 24.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*

Երկերի լիակատար ժող., *IV, 285։*

Մարտի 27.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*

Նույն տեղը։

Նույն օրը.— *Խնդրում է բերդի պարետային վարչությունից, որ իրեն թույլ տան տեսակցելու եղբոր հետ՝ գոնե զատկին։*

Երկերի լիակատար ժող., *IV, 181։*

Մարտի 29.— *Ղ. Նալբանդյանին գրած նամակում իր ուրախությունն է հայտնում, որ տանեցիք բոլորն էլ ողջ-առողջ են։ Գրում է, թե երրորդ օրն է, ինչ բերդի պարետային վարչությունից խնդրել է թույլտվություն եղբոր հետ տեսակցելու, բայց պատասխանը դեռ չի ստացել։ Նաև հայտնում է, որ շատ ուրախ է Անանիա Սուլթանշահի գալով, չնայած միևնույն է՝ նրան չի տեսնելու։*

Երկերի լիակատար ժող., *IV, 180—182։*

Մարտի 30, առավոտյան ժամը 7-ին.— *Նույն նամակում ավելացնում է, թե եղբորից սպասած նամակը չստանալով, վերջացնում է։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Ապրիլի 1.— *Սկսում է գրել «Մեր լեզվի արմատական բարեփոխության փորձ» աշխատությունը։ Այդ մասին բերդի հիշատակարանում, ապրիլի 3-ին, նշում է. «Ժողովրդական քերականության վերա սկսեցի աշխատել ապրիլի 1-ից»։*

Երկերի լիակատար ժող., *IV, 285։*

Նույն օրը.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և «այլոց» (?) հետ։* Նույն տեղը։

Ապրիլի 4.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Ապրիլի 6.— *Ս. Գ. Սուլթանշահի միջոցով ստանում է գրքեր։*

Երկերի լիակատար ժող., *IV, 182։*

Ապրիլի 7.— *Ղ. Նալբանդյանի միջոցով ստանում է երկու նամակ, գրված ապրիլի 4-ին և 6-ին, որոնցից մեկի մեջ Ա. Սուլթան-*

շահը Նալբանդյանի բարեկամների և ծանոթների մասին շատ հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում, մասնավորապես Մարիա Նիկոլայևնա Պանովայի մասին, որն իր անկեղծ զգացմունքներն է արտահայտել Նալբանդյանի նկատմամբ։ Նույն նամակում Ա. Սուլթանշահը տեղեկություններ է հաղորդում ամերիկացի միսիոներ Բարտոլդի՝ Թյուրքիայի հայ բողոքականների մասին տպագրած հոդվածի վերաբերյալ։

Երկերի լիակատար ժող., IV, 186—187։

Ապրիլի 8.— Նամակ Ղ. Նալբանդյանին։ Շնորհակալություն հայտնելով Ս. Գ. Սուլթանշահի ուղարկած գրքերի և Անանիա Սուլթանշահի հաղորդած տեղեկությունների համար, Նալբանդյանն իր վիճակով մտահոգված հարազատներին ու բարեկամներին հուսադրում է. «Պետք է հուսալ, որ մոայլ օրը հավետ այդպես չի մնա. ամպերը կանցնեն, գարնանային հովը կփչի և արևը կծագի՝ լուսավորելու և ջերմացնելու մոայլ և սառն դեմքերը՝ հոգնած երկար ժամանակ տանջանքի լծի տակ համբերելուց»։

Անդրադառնալով Ա. Սուլթանշահի տեղեկություններին՝ պատասխանում է Բարտոլդի մասին, Նալբանդյանը մերկացնում է արևմտյան միսիոներների քարոզչական գործունեության հետին նպատակները Թյուրքիայում և Հայաստանում. «Հայերը Թյուրքիայում բոլորովին պաշպաշտական են։ Անգլիական և ֆրանսիական կառավարություններն այդ հանգամանքը գործադրում են իրենց օգտին»։

Այնուհետև Նալբանդյանը գրում է, որ ինքն առողջ է և բավական լուրջ պարապում է (ապրիլի 1-ից սկսած «Ժողովրդական քերականության» վրա)։ Նամակի շարունակության մեջ նա շարադրում է իր այդ աշխատության,— որին այստեղ տալիս է «Մեր լեզվի արմատական բարեփոխության փորձ» վերնագիրը,— հիմնական բովանդակությունը.

«Շարադրել հնի քայքայման և նորի կազմավորման ընթացքը... շարադրել նոր լեզվի համեմատական քերականությունը։ Դրանից հետո գրել (հենց այստեղ) քերականության փորձ, որպես ձեռնարկ այն բոլոր դպրոցների համար, որտեղ լսվում է հայերեն խոսքը»։ Նալբանդյանը գրում է, որ դա լինելու է իր հիմնական զբաղմունքը, որին նվիրելու է իր բոլոր ուժերը և իր ծրագիրը կկատարի, եթե մահը չխանգարի։ Եվ ավելացնում է, որ բանտից ազատվելուց հետո էլ նվիրվելու է միայն այդ աշխատանքին և մինչև չավարտի՝ ուրիշ ոչ մի տող չի գրելու, «բացի, իհարկե, քննադատությունից և

ինձ վերա եղած հարձակումների պատասխաններից, որոնց ես դեռ չեմ պատասխանել։ Ես պարտքի տակ եմ»։

Երկերի լիակատար ժող., IV, 182—190։

Նույն օրը.— Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։

ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Նույն օրը.— Տեղի է ունենում Նոր-Նախիջևանի հասարակական ժողովը, ուր հասարակությունն իր գոհունակությունն ու երախտագիտությունն է արտահայտում Նալբանդյանի նկատմամբ՝ հնդկահայ կտակների գործը հաջողությամբ գլուխ բերելու համար։

Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 139, գ. 580, թթ. 55—57։

Ապրիլի 9.— Նալբանդյանը տեսակցում է եղբոր (Ղազարոսի) և Հովհաննեսի [Սահրատյան] հետ։

Երկերի լիակատար ժող., IV, 285։

Մինչև ապրիլի 11.— Խնդրում է եղբորը՝ Ղ. Նալբանդյանին, իր համար ձեռք բերել Գ. Ախվերդյանի հրատարակած Սայաթ-Նովայի երգերը։

Երկերի լիակատար ժող., IV, 193—194։

Ապրիլի 12.— Նամակ Ղ. Նալբանդյանին։ Հայտնում է, որ եղբայրն իրեն սխալ է հասկացել և Սայաթ-Նովայի փոխարեն, ուղարկել է Սեյադի (Պետրոս Մադաթյանի) երգերը։ Խնդրում է՝ ծանոթներից ձեռք բերել և ուղարկել իրեն «Սոս և Վարդիթերը» և «Վերք Հայաստանին», որ իրեն չափազանց կուրախացներ։ Ավելացնում է, որ իրեն հարկավոր են էլի մի քանի գրքեր ու բառարաններ, բայց այդ մասին այժմ ոչինչ չի գրում, հույս ունենալով, որ եղբորը թերևս կհաջողվի երաշխավորությամբ իրեն դուրս բերել բանտից։ Նալբանդյանը նշում է, որ «ընդհանրապես դեռ շատ սակավ են» իր նոր ձեռնարկության («Մեր լեզվի արմատական բարեփոխության փորձ») համար անհրաժեշտ նյութերը։ Այնուհետև, Նալբանդյանը հիմնավորում է աշխարհաբարի պատմական իրավունքը, հերքելով հակառակորդների հայացքները գրաբարի «գեղեցկության» և «մշակվածության» վերաբերյալ։ Խնդրում է իր ողջույնը հայտնել երկու սեռի բարեկամներին և չմոռանալ «Սոս և Վարդիթերն» ու «Վերք Հայաստանին»։

Երկերի լիակատար ժող., IV, 190—196։

Ապրիլի 12.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV, 285։*

Ապրիլի 14.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Եղբոր նամակում Ա. Սուլթանշահի հաղորդած տեղեկությունների մասին գրում է, թե իրեն շատ հետաքրքրական կլինի մի օր կարդալ նրա մատնանշած հոդվածները «Կոռնկ» ամսագրում, իսկ Տարոնի բարբառի մասին Գ. Ախվերդյանի արտահայտած կարծիքի առթիվ հայտնում է իր տեսակետը, թե նոր լեզուն (աշխարհաբարը) ի՛նչ չափով և ի՛նչպես պետք է օգտվի բարբառներից՝ չտրկանալով և չենթարկվելով նրանցից և ո՛չ մեկին. «Միևնույն պատմական պատճառը, որ հարկադրել է ժողովրդին թողնել հին ձևը՝ կհարկադրի նրան չենթարկվել բացարձակորեն որևէ բարբառի ձևերին»։ Ընդհանրապես, նամակում Նալբանդյանը խտացրած ձևով շարադրում է աշխարհաբարի մշակման սկզբունքները՝ շարունակելով նախորդ (ապրիլի 12-ի) նամակում արծարծած մտքերը։ Վերջում հայտնում է իր նոր ծրագիրը. «Ես նյութեր եմ պատրաստում ֆիզիկո-ֆիլոլոգիական, պատմա-աշխարհագրական մի մեծ աշխատության ներածության համար, մի բան, որ դեռևս բոլորովին չէ եղել... բայց այդ նյութերն ինձ մոտ դեռևս բաժան-բաժան են, որովհետև դրում եմ յուրաքանչյուր թեղի մասին առանձին։ Այստեղ այդ նյութերն ընդհանրացնել չեմ կարող և հնարավոր էլ չէ՝ նախքան աշխատանքս ավարտելը և նախքան իմ ազատվելը»։** Երկերի լիակատար ժող., *IV, 196—204։*

Ապրիլի 15.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Ապրիլի 16.— *Տեսակցում է եղբոր՝ Ղ. Նալբանդյանի, Ա. Սուլթանշահի, Ստ. Նազարյանի և Լ. [Խաֆաֆյանի] հետ (Երկերի լիակատար ժող., IV, 285)։ Այս տեսակցության մասին Ստ. Նազարյանը 1864 թ. մարտի 2-ին Մատթեոս Վեհապետյանին ուղղած նամակում գրում է. «Անցյալ տարին ես Պետերբուրգում լինելով, երես առ երես հանդիպեցանք միմյանց. քաղցր տեսություն արդարև. բայց ի՛նչ օգուտ նորան, և ի՛նչ մխիթարություն ինձ. ես չկարողացա տալ նորան բաժին իմ ազատությունից, բացի մի քանի չոր ու ցամաք բարեկամական և ցավակցական խոսքից. հարյուրակնյա պահապանը ներկա էր, խոսվածքն ես ռուսերեն»։*
«Արձագանք», *1896, № 123։*

Նույն օրը.— *Սենատը հարցաքննում է Ալբերտինիին. այն հարցին, թե ինչի՛ վրա է հիմնված ձեր կարծիքը, որ Նալբանդյանը լիովին վայելում է Լոնդոնի ռուսների հարգանքը, Ալբերտինին պատասխանում է. Լոնդոնում ապրող ռուսները, այն է՝ Մարտյանովը, Կովալևսկին, Ցրիկը նրա (Նալբանդյանի) մասին միշտ արտահայտվում էին լիակատար հարգանքով և երախտագիտությամբ։*
ЦГИАМ, ф. ОППС, 1862, д. 57, лл. 267—268.
Հմմտ. М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 176.

Ապրիլի 18, Երևոյան.— *Ղ. Նալբանդյանի միջոցով ստանում է Բոքլի «Անգլիայի քաղաքակրթության պատմությունը» գրքի առաջին հատորի առաջին մասը (1863, Պետերբուրգ), Կ. Բեստուժև-Ռյումինի թարգմանությամբ։* Երկերի լիակատար ժող., *IV, 207։*

Ապրիլի 19.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Հայտնում է, որ ստացել է Բոքլի «Անգլիայի քաղաքակրթության պատմության» առաջին հատորի առաջին մասը, բայց այդ մասն արդեն կարդացել է նախկին հրատարակությամբ (թարգմ. Բույնիցկու)։ Հիշեցնելով, որ մոտ օրերս լույս կտեսնի Իլենկովի «Տեխնիկական քիմիայի» երկրորդ հատորը, խնդրում է ստանալիս կազմել տալ ճիշտ այնպես, ինչպես կազմված է առաջին հատորը։*

Մտահոգություն է արտահայտում Գրիգոր (Գրիշա) Ալաջալյանի վիճակի նկատմամբ, խնդրում է, որպեսզի Ա. Սուլթանշահը «իր ամբողջ ուժը, ամբողջ փորձառությունը» գործադրի, «որպեսզի նրան դուրս բերի արժանավայել ուղու վրա, որպեսզի ստիպի նրան աշխատել և կանդիդատի քննություն տալ ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետի համար»։ Ավելացնում է, որ «եթե նրան [Ա. Սուլթանշահին] այդ գործը հաջողվի, ապա նա ինձ մեծագույն ծառայություն մատուցած կլինի, դեռ չեմ ասում, որ նա փրկած կլինի մի խորտակվող մարդու»։

Հայտնում է, որ «մեծ բավականությամբ» տեսնվել է (ապրիլի 16-ին) «մեր հարգելի, հավետ աղնիվ բարեկամ պարոն Նազարյանցի հետ»։ Երկերի լիակատար ժող., *IV, 204—209։*

Ապրիլի 22.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV, 285։*

Ապրիլի 23.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Ապրիլի 25.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և Կ. Տոլյանի հետ։*
Երկերի լիակատար ժող., *IV*, 285։

Ապրիլի 28.— *Նամակներ Ղ. Նալբանդյանին և հարազատներին։ Չեն պահպանվել։* Նույն տեղը։

Ապրիլի 29.— *Նալբանդյանի նամակները Սորոկինի միջոցով հանձնվում են եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Ապրիլի 30.— *Նալբանդյանը Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը կարդալիս գրքի լուսանցքում նշում է իր դիտողությունները։ Վեպի առաջին հրատարակության (1858) 221 էջում ցույց տալով Մոսիի հոր մասին Աբովյանի աշքից վրիպած հակասությունը, դիտում է. «Իհարկե, անուշադրություն է Աբովյանի կողմից. նրա սիրտը կրակ է ընկած, էլ որտե՞ղ նրա աչքին կգային այսպիսի հակասություններ. մնաց որ՝ իրանից հետո էլ տպված գործը, գուցե քե ինքը տպեր՝ սրբագրեր այս և ուրիշ մի քանիսը։*


Իսկ գրքի վերջին մաքուր թերթի վրա Նալբանդյանը նշել է «Վերքի» այն էջերը, որտեղից գրաքննությունը հանել է հոգևորականների և գյուղի իշխանության (տանուտերի) դեմ ուղղված երգիծական սուր նկարագրություններ։ «Այս գրքի բաց թողած տեղերը, երեսի համարով, եր. 15, 16, 17, 19, 33, 34, 39, 43, bis, *նայելով բովանդակության, բացի 39 երեսից, մնացած չտպվածքը բոլորը կղերի պատճառով է. իսկ 39 եր. պատշաճի պատճառով, ինչպես կարելի է կարծել։*

Եր. 177, բաց թողած, երևի քաղաքական պատճառով»։

Գրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, № 123/382։

Նալբանդյանի նշած՝ «Վերքի» 1858 թ. 15, 16, 17, 19, 33, 34, 39, 43 և 177 էջերը համմտ. Աբովյանի Երկերի լիակատար ժողովածուի III հատորի 9, 10—11, 12—14, 24, 25, 29, 31—32 և 122 էջերի հետ։

Նույն օրը.— *«Մեղուն» խորին զայրույթով դատապարտում է հայ ռեակցիոներներին, և հատկապես Գ. վ. Այվազովսկուն՝ Նալբանդյանի ձերբակալությունը համարելով նրանց դավադրությունների հետևանքը. «Դեռ այս տարի այն սևագիծ Ատրպեն [ակնարկում է Գ. վ. Այվազովսկուն], այն կույր տգիտությունը լրբաբար*



«Վերք Հայաստանի» վեպի 1858 թ. հրատարակության մի էջը՝ Նալբանդյանի դիտողություններով

հարձակեցավ այն լուսատու ջահին՝ Մ. Նալբանդյանցին վրա և մահաբույր թույներ ժայթքելով, և՛ զանի ի չիք դարձուցանել ջանացզանի սև գրպարտություններով խավարասեր և մարդախոշոր բրոնության մատնեց, ուր այն վսեմ գրիչը լուսյան դատապարտվեցավ ամիսներով՝ ի տրտմություն ճշմարիտ հայոց»:

Այնուհետև, «Մեղուն», հիմնվելով Ռուսաստանից ստացած նամակների վրա, հաղորդում է Նալբանդյանի ազատության լուրը, որ միմիայն նրա համախոհների և բարեկամների բաղձանքն էր. «... Անտեղեն եկած նամակներեն կիմանանք, և ուրախությամբ սրտի կավետենք ճշմարտասեր ազգայինները, որ վերջապես արդարության յուր վսեմ ու անընկճելի գլուխը բարձրացնելով, անմեղ Նալբանդյանցին ապաշխարանաց քողը պատռեր և դուրս հաներ է զանի՝ համոթ յուր սուտ զրպարտչաց»:

«Մեղու», *1863, № 197, 113—115:*

Մայիսի 1.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Պատասխանելով Ա. Սուլթանշահի գրած նամակին, Նալբանդյանն իր ուրախությունն է հայտնում կենդանաբանական այգու բացման առթիվ, ընդգծելով, որ՝ «Նրա հիմքում ընկած է գործնական նպատակ, որը զարմանալիորեն գիտությունը մոտեցնում է հասարակությանը և ընդհակառակն»: Նշելով, որ «բնության ուսումնասիրությունը՝ սոցիալական տեսակետից մեծ նշանակություն ունի», Նալբանդյանը Ա. Սուլթանշահի համար գործունեության մի ամբողջ ծրագիր է առաջարկում, խորհուրդ տալով սոսկ բժշկության սահմաններից դուրս գալ և պարապել գիտություններով: Իր ուրախությունն է հայտնում, որ Անանիային զբաղեցնում է սաղմնաբանությունը. առաջարկում է զբաղվել այդ գիտությամբ, ցանկություն հայտնելով, որ ինքն էլ, առաջին հնարավոր դեպքում, պիտի զբաղվի սաղմնաբանությամբ: Ա. Սուլթանշահին խորհուրդ է տալիս ուսումնասիրել արհեստականորեն ձկներ բազմացնելու խնդիրը. նրա ուշադրությունն է հրավիրում նաև «Coccinella» ընտանիքին պատկանող որդերի պատմության ուսումնասիրության վրա, նշելով, որ դա գործնական նշանակություն ունի Հայաստանի համար: Կարևոր է համարում «Արարատյան դաշտի հայ շինականների բարբառով մի փոքրիկ բրոշյուր հրատարակել և սովորեցնել նրանց, թե ինչպես պետք է աճեցնել որդերը, իսկ դա կարևոր բան է այնտեղի աղքատ շինականների համար»: Մի քանի առաջադրանքներ ևս տալով Ա. Սուլթանշահին, Նալբանդյանը նկատում է. «Ոչ արիստոկրատները ձեռքերը ծալած նստեն, իսկ մենք կոչված ենք աշխատելու»: Հայտնում է, որ ինքը շարունակում է աշխատել աշխարհաբարի քերականության վրա, որը, թեև դանդաղ, բայց առաջ է գնում:*

Երկերի լիակատար ժող., IV, 209—216:

[Մայիսի 2—հունիսի 2].— Նալբանդյանը տառապում է ռևմատիզմով և ընդհատում է պարապմունքը «Մեր լեզվի արմատական բարեփոխության փորձ» աշխատության վրա: «Ամբողջ մայիսը համարյա դուր անցավ գարշելի ռևմատիզմի պատճառով, որովհետև ոչ մի դեպքում հնարավոր չէր մարդու պես նստել և աշխատել քիչ թե շատ կռացած. ստիպված էի շիփշիտակ նստել, կարծես օխլով կուլ տված լինեի»:

Երկերի լիակատար ժող., IV, 220:

Մայիսի 3.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Մ. Ալամխանյանի, Մարիա Աֆանասևնայի (?) և Մադդաղինեի (?) հետ:*

Երկերի լիակատար ժող., IV, 286:

Մայիսի 7.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*

Նույն տեղը:

Մայիսի 8.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:*

ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Նույն օրը.— «Պեգասյան թռչնիկ» լրագիրը «Ուրախառիթ լուր մը» վերնագրով «Մեղվից» արտատպում է Նալբանդյանի ազատության հնարավոր լուրը:

«Պեգասյան թռչնիկ», *1863, № 9, 65:*

Մայիսի 9.— *Ղ. Նալբանդյանի միջոցով ստանում է և սկսում կարդալ Հ. Թ. Բոքլի «Անգլիայի քաղաքակրթության պատմությունը» գրքի երկրորդ մասը:*

Երկերի լիակատար ժող., IV, 286:

Մայիսի 10.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Հովհաննեսի (Սահրատյան) և Աճեմյանի հետ:*

Նույն տեղը:

Մայիսի 13.— *Նամակ է ստանում Անանիա Սուլթանշահից: Չի պահպանվել:*

Նույն տեղը:

Մայիսի 19.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:*

ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Մայիսի 20.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Ս. Գ. Սուլթանշահի և տեր Մատթեոսի (?) հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 286։*

Մայիսի 23.— *Նամակներ Ղ. և Ս. Նալբանդյաններին։ Չեն պահպանվել։* Նույն տեղը։

Մայիսի 30.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հունիսի 3.— *Շարունակում է գրել մոտ մեկ ամիս տևած հիվանդության (ռևմատիզմ) պատճառով ընդհատված «Մեր լեզվի արմատական բարեփոխության փորձ» ուսումնասիրությունը։* Երկերի լիակատար ժող., *IV, 220։*

Նույն օրը.— *Տեսակցում է եղբայրների հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 286։*

Հունիսի 6.— *Նամակ Ղ. Նալբանդյանին և Ա. Սուլթանշահին։ Հայտնում է, որ անիծված ռևմատիզմը համարյա մի ամիս իրեն տանջելուց հետո,— որի պատճառով ամբողջ մայիսը համարյա զուր անցավ,— արդեն թուլացել է, և չորրորդ օրն է, ինչ ինքը կրկին սկսել է պարապել «Մեր լեզվի արմատական բարեփոխության փորձ» աշխատության վրա։ Սակայն նշում է, որ մի քանի օրից հետո ստիպված կլինի կանգ առնել, որովհետև անհրաժեշտ գրքեր ու նյութեր ձեռքի տակ չունի։ Մինչև այժմ գրել է մոտ 15 տպագրական թերթ, որը հազիվ կազմի ներածության կեսը և քերականության քառորդը, մինչդեռ ամբողջ աշխատությունը, իր ծրագրի համաձայն, 30—35 տպագրական թերթից պակաս չի լինելու։*

Խնդրում է ողջույններ հաղորդել Կովալևսկուն և Ուստիմովիչին, և առաջինին շնորհավորել դիսերտացիայի համար։ Խնդրում է հաճախակի գրել. գանգատվում է գրքի պակասությունից և շնորհակալություն է հայտնում Ս. Գ. Սուլթանշահին Բոկի՝ «Առո՛ղջ եղեք» գրքի համար։ Երկերի լիակատար ժող., *IV, 216—221։*

Հունիսի 12.— *«Փարիզ» թերթը Նալբանդյանին Պետրոպավլովյան բերդում տեսած մի անձնավորության (?) տված տեղեկությունների հիման վրա, մանրամասնություններ է հաղորդում նրա վիճակի մասին. «Իբր ականատես անձի մը մեզի հաղորդած տեղեկու-*

Քեննեն կիմանամք, թե պ. Նալբանդյանը ամենայն զգուշությամբ կպահվի ամրոցի մը մեջ Նևա գետին կզմիներեն մեկին վրա Փեթրըպուրկի մոտը... Ցուր եղբայրը շաբաթը մեկ կամ երկու անգամ կրնա քովն երթալ ու տեսնվիլ։ Օթևանը ցամաք է, միայն՝ ինչպես կերևի կալանավորին երեսի գույնեն, անոր շարժողության ընթացքը բավականին նեղ պիտի լինի, քանզի շատ նիհարած է մարմնով, թեպետ հոգով միշտ քաջ ու արի... Լուր կա, թե երկու ամիսե հետո (հունիսի վերջերը) դեպի լավը վճռվի անոր վիճակը, որուն կցանկամք ի բոլոր սրտե»։ «Փարիզ», *1863, № 93։*

Հունիսի 13.— *Նամակներ Ղ. Նալբանդյանին, ծնողներին և Մ. Վեհապետյանին։ Չեն պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV, 286։*

Հունիսի 17.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Ս. Գ. Սուլթանշահի և Միքայել Տեր-Գրիգորյանի հետ։* Նույն տեղը։

Հունիսի 19.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

Հունիսի 20 — *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հունիսի 24.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Լ. Խ.-ի (Խաֆաֆյան) և Հովհաննեսի (Սահրատյան) հետ։*
Երկերի լիակատար ժող., *IV, 287։*

Հունիսի 27.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

Հունիսի 28.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հունիսի 29, 30.— *Բերդի հիշատակարանում նշում է առողջության բարելավումը՝ նախորդ օրերի համեմատությամբ։*
Երկերի լիակատար ժող., *IV, 287։*

Հուլիսի 1.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Մարտին Մակարիչ Մյասնիկյանի, Ս. Գ. Սուլթանշահի և Մ. Զ.-ի (Մոիսեյ Զաքարիչ—Մովսես Բուդաղյան) հետ։* Նույն տեղը։

Նույն օրը և հուլիսի 2.— *Բերդի հիշատակարանում նշում է առողջության հարաբերական բարելավումը։* Նույն տեղը։

Հուլիսի 3.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հուլիսի 8.— *Տեսակցում է եղբոր՝ Ղ. Նալբանդյանի, Հովհաննեսի (Սահրատյան), Հորեղբորորդի Ալեքսանդրի և Անանիա Սուլթանշահի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 287։*

Մինչև հուլիսի 10.— *Ղ. Նալբանդյանի միջոցով ստանում է «Северная пчела» թերթի այն համարը, որտեղ տպագրված է եղել Նոր-Նախիջևանի արտոնությունների դեմ ուղղված հոդվածը։*

Նալբանդյանի բարեկամները նրան խնդրում են պատասխանել այդ հոդվածին։ Երկերի լիակատար ժող., *IV, 221—227։*

Հուլիսի 10.— *Ստանում է և սկսում է կարդալ Գ. Ֆ. Կոլբի՝* «Руководство к сравнительной статистике» *Ա. Կորսակի թարգմանությամբ և Լյուիսի՝* «Физиология обыденной жизни» *գրքերը։ Գրում է նամակ Ղ. Նալբանդյանին, բայց անհայտ պատճառներով նամակը ոչնչացնում է։* Երկերի լիակատար ժող., *IV, 287։*

Հուլիսի 11.— *Բերդի հիշատակարանում նշում է, որ չնայած առողջությունն առաջվանից լավ է, բայց՝ «տակավին շատ տխուր եմ։ Լերդս ու գլուխս ցավում են»։ Գրում է, թե նամակ չստանալու պատճառով տրամադրությունը վատ է։* Նույն տեղը։

Հուլիսի 12.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

Հուլիսի 13.— *Պատասխանում է եղբոր՝ հուլիսի 10-ի նամակին, որով «Северная пчела» թերթի հոդվածի հերքումը գրելու համար նրան տեղեկություններ էին հաղորդվում Նոր-Նախիջևանի և շրջակա հայ գյուղերի բնակչության թվի, զբաղմունքի մասին և այլն։ Նալբանդյանն իր դիտողություններն է անում, ճշտումներ է*

մտցնում այդ տեղեկությունների մեջ, և ավելացնում է. «Պարոն Մորզովը թող տպագրե իր պատասխանը, ես չեմ կարող շուտով վերջացնել, որովհետև իմ անիծյալ հիվանդության հետևանքով ինձ համար դժվար է աշխատելը»։ Լսելով, որ եղբոր մոտ է եղել «Արշալույս Արարատյան» ռեակցիոն թերթի խմբագիր Ղուկաս Պալտազարյանը, խստիվ պատվիրում է եղբորը՝ այլևս նրան չընդունել։ Նալբանդյանը Ղուկաս Պալտազարյանին մերկացնում է, զգուշացնելով իր բարեկամներին, որ նա «մի վարձկան է, որ աշխատում է հօգուտ Թյուրքիայի և Անգլիայի, և իր զզվելի թերթի հրատարակության համար ստանում է անշան մի գումար Թյուրքիայի անգլիական դեսպանատնից... Նա, իբրև թյուրքական լրտես, յուրաքանչյուր ամիս մատնություններ է անում, ի պաշտոնե...»։

Երկերի լիակատար ժող., *IV*, 221—227։

Նույն օրը.— Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։ ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Նույն օրը.— Բանտի վերակացուի միջոցով գեներալ Սորոկինին գրավոր բողոք է ուղարկում, թե կերակրի և թեյի մեջ միջատներ են լինում։ Երկերի լիակատար ժող., *IV*, 287։

Հուլիսի 15.— Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Ս. Գ. Սուլթանշահի, Ա. Սուլթանշահի և Բաղդասարի (?) հետ։ Նույն տեղը։

Նույն օրը.— Նամակ Ղ. Նալբանդյանին. խնդրում է գրքեր բերել։ Նամակ տանեցիներին՝ Ավետիքի անունով, թվագրված՝ հուլիսի 17։ Չեն պահպանվել։ Երկերի լիակատար ժող., *IV*, 230, 287։

Հուլիսի 16.— Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։ ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Հուլիսի 17.— Նալբանդյանին են հանձնում եղբոր՝ Ղ. Նալբանդյանի ուղարկած գրքերը, որ ինքը չէր խնդրել։ Հետ է դարձնում։ Երկերի լիակատար ժող., *IV*, 287։

Հուլիսի 18.— Նամակ Ղ. Նալբանդյանին։ Խնդրում է ուղարկել այն գրքերը, որոնց մասին գրել էր հուլիսի 15-ին։ Հայտնում է իր հիվանդության (լարդի բորբոքում) ծանր ընթացք ստանալը։

«Առանց գրքերի չափազանց ձանձրալի է, իսկ ես քեզ արդեն գրել եմ, որ հիվանդության հետևանքով ամենևին չեմ կարող մի լուրջ բանով զբաղվել։ Մի հոդված անգամ մեր քաղաքի մասին չեմ կարողանում գրել. գլխացավս, անիծված լյարդի մեծանալուց առաջացած կողքիս ցավը, ինձ զրկում են պարապելու հաճույքից։ Դրժվարությամբ եմ նստում մի հասարակ նամակ գրելու համար»։

Հայտնում է իր բուռն ցանկությունը՝ «ծառայելու Մոսկվայի նորահաստատ կենդանաբանական այգու բարգավաճման գործին», սակայն այդ չի կարողանա անել, քանի որ տառապում է բանտում, և քանի որ օդընտելացման ընկերությունը չի ընձեռնել բարոյական միջոցներ։ Հույս է հայտնում, որ Ա. Սուլթանշահը այդ մասին լուրջ հարաբերությունների մեջ կմտնի օդընտելացման ընկերության դիրեկտորների հետ, կշահագրգռի նրանց, իսկ արդյունքի մասին կտեղեկացնի իրեն։ Երկերի լիակատար ժող., *IV*, 228—231։

Հուլիսի 19.— Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։ ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Հուլիսի 20.— Ղ. Նալբանդյանի միջոցով գրքեր է ստանում։ Երկերի լիակատար ժող., *IV*, 287։

Հուլիսի 22.— Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Ս. Գ. Սուլթանշահի և Անանիա Սուլթանշահի հետ։ Նույն տեղը։

Հուլիսի 24.— Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։ Երկերի լիակատար ժող., *IV*, 288։

Հուլիսի 25.— Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։ ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Հուլիսի 29.— Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Կ. Հայրապետյանի, Դ. Գարագաշի և Ս. Գ. Սուլթանշահի հետ։ Տեսակցության ժամանակ Կ. Հայրապետյանին լրացուցիչ բացատրություններ է տալիս՝ հնդկահայ կտակների գործի վերաբերյալ։ Երկերի լիակատար ժող., *IV*, 226, 288։

Հուլիսի 30.—«Մեղուն» արտատպում է «Եղբայրասերում» տպագրված լուրը Նալբանդյանի մասին, ավելացնելով. «Ախ՛ղճ «Եղբայ-

բասեր». պ. Նալբանդյանցի ազգասիրական խանդը ճանչնալուդ համար դուն ալ անհավատութեյան կնիքով պիտի դրոշմվիս, քանզի սպանիական ոգին [ինկվիզիցիան] ասկե ուրիշ վարձք չկրնար տալ քեզի։ Անի ամեն դարու մեջ և ամեն տեղ այս վատ ընթացքով ազգասեր և ճշմարտասեր անձինք կարատավորե։ Քանի՜ քանի՜ ազգասեր անձինք իր ժահաբույր և մահահոտ ճիրաններուն որս ըրած է անխիղճ զրպարտութիւններով»։ «Մեղու», *1863, № 210, 220։*

Օգոստոսի 1.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։ Բերդի հիշատակարանում նշում է հիվանդության վատթարացումը։* Երկերի լիակատար ժող., *IV, 288։*

Օգոստոսի 2.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Օգոստոսի 3.— *Ստանում է գրքեր։* Նույն տեղը։

Օգոստոսի 5.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Դ. Գարագաշի և Ս. Գ. Սուլթանշահի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 288։*

Օգոստոսի 5 լույս 6-ի գիշերը.— *Հիվանդությունը վատթարանում է։* Նույն տեղը։

Օգոստոսի 6.— *Մինչև երեկո շարունակվում է հիվանդության նույն ընթացքը։ Երեկոյան մի փոքր լավ է զգում։* Նույն տեղը։

Օգոստոսի 7.— *Պատասխանում է Ղ. Նալբանդյանի նամակին։ Չի պահպանվել։ Գիշերը հիվանդությունը կրկին սաստկանում է։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Օգոստոսի 8—9.— *Չնայած իր գործադրած բժշկական միջոցներին, հիվանդության մեջ դեպի լավը փոփոխություն չի նկատվում։* Երկերի լիակատար ժող., *IV, 288։*

Օգոստոսի 10.— *Բերդի հիշատակարանում նշում է, որ մինչև կեսօր շարունակվեց հիվանդության ծանր ընթացքը. կեսօրից մինչև երեկոյան ժամը 10-ը հանգիստ է զգում։* Նույն տեղը։

Օգոստոսի 12.— *Սկսում է գրել «Հեգելը և նորա ժամանակը»։* Երկերի լիակատար ժող., *III, 293—297։*

Նույն օրը.— *Բերդի հիշատակարանում նշում է, որ լավ է զգում։ Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Մարիա Աֆանասևնայի, Մադդալինեի (?), Ս. Գ. Սուլթանշահի, Հովհաննեսի (Սահրատյան) և եղբորորդի Ալեքսանդրի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 288։*

Օգոստոսի 13, 14 և 15.— *Շարունակում է գրել «Հեգելը և նորա ժամանակը»։* Երկերի լիակատար ժող., *III, 298—308։*

Օգոստոսի 15.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 288։*

Օգոստոսի 16, մինչև կես գիշեր.— *Շարունակում է գրել «Հեգելը և նորա ժամանակը»։* Երկերի լիակատար ժող., *III, 308—316։*

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

[Օգոստոսի 17].— *Ավարտում է «Հեգելը և նորա ժամանակը»։ Ջեռքի տակ ունենալով «Современник» ամսագրի 1858 թ. № 12-ը՝ իր աշխատության մեջ ընդարձակ մեջբերումներ է կատարում Ջերնիշևսկու «Критика философских предубеждений против общинного владения» հոդվածից։* Երկերի լիակատար ժող., *III, 316—317։*

Նույն օրը.— *Պատասխանում է քրոջորդի Ավետիքի նամակին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 288։*

Օգոստոսի 19.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Ղազարոս Խաֆաֆյանի և Վարդերեսի (?) հետ։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Օգոստոսի 20 (սեպտեմբերի 1).— *Ա. Ի. Գերցենը Մ. Ա. Բակունինին ուղղած նամակում դատապարտում է նրա անզգուշությունը*

Նալբանդյանին և Վորոնովին նրա զոհերը. համարելով. «Քո շաղակրատությամբ դու ո՛չ միայն Նալբանդովին կործանեցիր, այլ, օրինակի համար՝ նաև Վորոնովին. նրա անվան ավելորդ հիշատակումը Նալբանդովին գրած քո նամակում նրան բանտ հասցրեց, իսկ ապա՝ աքսոր»:

А. И. Герцен, Полн. собр. соч., т. XVI, 492.
Հմմտ. Литературное наследство, № 41—42, стр. 78.

Օգոստոսի 21.— *Ստանում է գրքեր:* Նույն տեղը:

Օգոստոսի 22.— *Նամակ Ղ. Նալբանդյանին. խնդրում է շերամաբուծության ձեռնարկ: Չի պահպանվել:*
Երկերի լիակատար ժող., *IV*, 288:

Օգոստոսի 23.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Օգոստոսի 26.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Ս. Գ. Սուլթանշահի, Հովհ. Սահրատյանի և Հովակիմի (?) հետ:*
Երկերի լիակատար ժող., *IV*, 288:

Օգոստոսի 28.— *Ղ. Նալբանդյանի միջոցով ստանում է Բոքլի «Անգլիայի քաղաքակրթության պատմությունը» և շերամաբուծության ձեռնարկ (?): Պատասխան է գրում եղբոր նամակին: Չի պահպանվել:* Նույն տեղը:

Սեպտեմբերի 1.— *Պատասխանում է Հովհ. Բերբերյանի նամակին:*
Երկերի լիակատար ժող., *IV*, 289:

Սեպտեմբերի 2.—*Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և Հովհ. Սահրատյանի հետ: Բերդի հիշատակարանում նշում է, թե օգոստոսի 28-ի իր նամակը եղբայրը չի ստացել, ըստ երևույթին, բանտային վարչության արգելքի հետևանքով:* Նույն տեղը:

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Սեպտեմբերի 4.— *Ստանում է Անանիա Սուլթանշահի նամակը:*
Երկերի լիակատար ժող., *IV*, 289.

Սեպտեմբերի 5.— *Պատասխանում է Ղ. Նալբանդյանի և Ա. Սուլթանշահի նամակներին: Չեն պահպանվել:* Նույն տեղը:

Սեպտեմբերի 6.— *Ղ. Նալբանդյանի միջոցով ստանում է Լ. Ռանկեի «Римские папы, их церковь и государство в XVI и XVII столетиях» գիրքը:* Նույն տեղը:

Սեպտեմբերի 9.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Ղ. Խաֆաֆյանի և Անանիա Սուլթանշահի հետ:* Նույն տեղը:

Սեպտեմբերի 12.—*Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:* Նույն տեղը:

Սեպտեմբերի 14.— *Ղ. Նալբանդյանի միջոցով ստանում է «Общественная польза» հրատարակչական ընկերության գրացուցակը:* Նույն տեղը:

Սեպտեմբերի 16.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և Հովհ. Սահրատյանի հետ:* Նույն տեղը:

Սեպտեմբերի 19.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:* Նույն տեղը:

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Սեպտեմբերի 23.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Ս. Գ. Սուլթանշահի և Անանիա Սուլթանշահի հետ: Եղբոր միջոցով ստանում է շերամաբուծության և սորգոյի մշակության վերաբերյալ գրքեր:*
Երկերի լիակատար ժող., *IV*, 289:

Սեպտեմբերի 26.—*Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:* Նույն տեղը:

Սեպտեմբերի 27.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Սեպտեմբերի 30.— *Տեսակցում է եղբոր և Հովհ. Սահրատյանի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 289։*

Հոկտեմբերի 3.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հոկտեմբերի 7.— *Տեսակցում է Միք. Տեր-Գրիգորյանի, Ս. Գ. Սուլթանշահի, Ղ. Խաֆաֆյանի և Սարգսի (?) հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 289։*

Հոկտեմբերի 9.— *Եղբայրը գրում է, թե «տանից ո՛չ լուր կա և ո՛չ նամակ», որ անհանգստություն է պատճառում Նալբանդյանին։* Նույն տեղը։

Հոկտեմբերի 10.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Հոկտեմբերի 11.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հոկտեմբերի 12.— *Եղբոր միջոցով ստանում է Մենդելեևի* «Органическая химия» *աշխատությունը (2-րդ հրատ., Ս. Պետերբուրգ, 1863)։ Եղբայրը հայտնում է, որ Նալբանդյանի հոկտեմբերի 10-ին գրած նամակը չի ստացել։ Ըստ երևույթին, 3-րդ բաժանմունքն արգելել է այդ նամակը ևս հասցեատիրոջը հանձնել։* Երկերի լիակատար ժող., *IV, 289։*

Հոկտեմբերի 14.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Ս. Գ. Սուլթանշահի, Մարիա Աֆանասևնայի (?), Մագդաղինեի և Հովհ. Սահրատյանի հետ։* Նույն տեղը։

Հոկտեմբերի 16.— *Մ. Վեհապետյանի նամակը Ղ. Նալբանդյանին. խորհուրդ է տալիս առանց ուշացնելու հեռանալ և որևէ կերպ ազատել Նալբանդյանին բանտից և չթողնել, որ նրա վիճակն այդպես շարունակվի. բնավ չհավատալ ուրիշների հուսադրական խոսքերին, որովհետև նա չունի բարեկամ և բոլորը նրան խաբում են՝ իրենց որպես բարեկամ ձևացնելով և դրա համար էլ անտարբեր են. դուք ջանացեք, դուք հնար մտածեցեք որևէ կերպով նրան փրկելու. որքան երկարի, այնքան կդժվարանա այդ գործը։ Այնուհետև, պատվիրում է իր ողջույնը հաղորդել նրան (Նալբանդյանին) և հուսադրել։* Ռուսական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 123/134։*

Հոկտեմբերի 17.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 290։*

Հոկտեմբերի 19.— *Եղբայրը հայտնում է, որ հոկտեմբերի 17-ին Նալբանդյանի գրած նամակը դեռևս չի ստացել. «Երևի այս էլ 10-ի [հոկտեմբերի] նամակիս քովն է գնացել», նշում է Նալբանդյանը Բերդի հիշատակարանում, ակնարկելով, որ այդ նամակն էլ 3-րդ բաժանմունքում արգելված կարող է լինել։ Նալբանդյանին մտատանջություն է պատճառում եղբոր հայտնած «շատ խուլ լուրը», թե տանից նամակ է ստացել, ուր «մեր ծնողաց մասին լավ չեն գրում»։* Նույն տեղը։

Հոկտեմբերի 21.— *Տեսակցում է Հովհ. Սահրատյանի, Մ. Տեր-Գրիգորյանի և Վարդերեսի (?) հետ։* Նույն տեղը։

Հոկտեմբերի 24.— *Նամակներ Ղ. Նալբանդյանին և քրոջորդի Ավետիք Վատուժյանին։ Չեն պահպանվել։* Նույն տեղը։

Հոկտեմբերի 25.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հոկտեմբերի 28.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և Մ. Բուդաղյանի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 290։*

Հոկտեմբերի 30.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Հոկտեմբերի 31.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Նոյեմբերի 4.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և ուրիշների (?) հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 290։*

Նույն օրը, երեկոյան.— *Նամակ է գրում եղբորը և դրքեր խրնդրում։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ՊԲԼ, ֆ. Ա. Ֆ. Сорокина.

Նոյեմբերի 6.—*Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*
Երկերի լիակատար ժող., *IV, 290:*

Նույն օրը.— *Բերդի հիշատակարանում նշում է, որ եղբոր միջոցով ստացել է «հին հեղինակները» (?):* Նույն տեղը:

Նոյեմբերի 7.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ՊԲԼ, ֆ. Ա. Ֆ. Сорокина.

Նոյեմբերի 11.— *Տեսակցում է եղբոր և ուրիշների (?) հետ:*
Երկերի լիակատար ժող., *IV, 290:*

Նոյեմբերի 14.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*
Նույն տեղը:

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ՊԲԼ, ֆ. Ա. Ֆ. Сорокина.

Նոյեմբերի 18.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Հովհ. Սահրատյանի և Ս. Գ. Սուլթանշահի հետ:*
Երկերի լիակատար ժող., *IV, 290:*

Նույն օրը.— *Եղբոր միջոցով ստանում է բառարաններ (?):*
Նույն տեղը:

Նոյեմբերի 20.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*
Նույն տեղը:

Նոյեմբերի 25.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Ս. Գ. Սուլթանշահի և Ղ. Խաֆաֆյանի հետ:* Նույն տեղը:

Նոյեմբերի 26.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*
Նույն տեղը:

Նոյեմբերի 28.— *Բերդի հիշատակարանում վրդովմունքով նշում է, որ նոյեմբերի 26-ին գրած նամակը եղբորը չեն հանձնել. «26-ին*

նամակ էի գրել և թողել բերդակալի [բերդի պարետի] մոտ, կարծելով, թե եղբայրս կգա կառնու, բայց չեկավ, նամակն էլ այնտեղ մեռելկոխ եղավ»: Գրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 1:

Նոյեմբերի 29.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*
Երկերի լիակատար ժող., *IV, 290:*

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ՊԲԼ, ֆ. Ա. Ֆ. Сорокина.

Նոյեմբերի 30.— *«Մասիսի» խմբագրին ուղղած նամակի հեղինակը (Հ. Ջ.) սխալ համարելով Հովս. Վարդանյանի «Սահմանադրական ճշմարտություններ» գրքույկում երկրագործության մասին արտահայտված կարծիքը և խոսելով երկրագործության նշանակության մասին, եղրակացնում է. «Ուրեմն՝ երկրագործությունն է ազգի մը վիճակին բարվոքմանն ու... ուղիղ ճանապարհը»:*
«Մասիս», *1863, № 616:*

Դեկտեմբերի 1.— *Նոյեմբերի 30-ի նամակով եղբայրը հայտնում է մոլի ռեակցիոներ Հ. Չերքեզյանի մահը:*
Երկերի լիակատար ժող., *IV, 290:*

Դեկտեմբերի 2.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և ուրիշների (?) հետ:* Նույն տեղը:

Դեկտեմբերի 3.— *Ընդարձակ (վեց թերթի վրա) նամակ է գրում Ղ. Նալբանդյանին հնդկական կտակների գործի և Նոր-Նախիջևանի դպրոցի մասին: Չի պահպանվել:* Նույն տեղը:

Դեկտեմբերի 4.— *Նամակներ քրոջորդիներ Ավետուշին ու Գաբրիելին և Հովհ. Բերբերյանին: Չեն պահպանվել:*
Երկերի լիակատար ժող., *IV, 291:*

Դեկտեմբերի 5.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ՊԲԼ, ֆ. Ա. Ֆ. Сорокина.

Դեկտեմբերի 7.— *Հովհ. Բերբերյանին գրած նամակում խընդրում է իր անունից դիմել Անդրեաս արքեպիսկոպոսին (որ կաթողի-*

կոսի հանձնարարությամբ Նոր-Նախիջևան էր գնացել խալիբյանի յուրացրած հասարակական գումարների խնդրով) գործը վարել «հանուն արդարության, խստապահանջ արդարության»:
Երկերի լիակատար ժող., *IV, 237:*

Դեկտեմբերի 9.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և Հովհ. Սահրատյանի հետ:*
Երկերի լիակատար ժող., *IV, 291:*

Դեկտեմբերի 11.— *Գրում է «Նկատողություն» հոդվածը՝ «Մեղուի» մեջ տպագրված՝ «Նկարագիր միսիոներական երեսնամյա ընթացից ի Տաճկաստան և տարաբախտություն հայ ժողովրդյան» (1862, №№ 176—179 և 1863, №№ 220—223, 226) հոդվածի առթիվ:*
Երկերի լիակատար ժող., *IV, 304—307:*

Նույն օրը.— *Եղբոր միջոցով գրքեր է ստանում:*
Երկերի լիակատար ժող., *IV, 291:*

Դեկտեմբերի 12.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*
Նույն տեղը:

Դեկտեմբերի 13.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:*
ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Դեկտեմբերի 14.— *Եղբոր նամակից տեղեկանում է, որ Աննա Սուլթանշահը նոյեմբերի 24-ին Թիֆլիսից դուրս է եկել:*
Երկերի լիակատար ժող., *IV, 291:*

Դեկտեմբերի 16.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ:*
Նույն տեղը:

Դեկտեմբերի 17.— *Աննա Սուլթանշահի նամակը Նալբանդյանին: Գրում է Անդրեաս արքեպիսկոպոսի՝ Նոր-Նախիջևան ժամանելը՝ Մատթեոս կաթողիկոսի հանձնարարությամբ եկեղեցական գումարների խնդիրը քննելու նպատակով: Այս նամակի բովանդակությունը Նալբանդյանին հայտնում է եղբայրն իր նամակով:*
Երկերի լիակատար ժող., *IV, 237:*

Դեկտեմբերի 18.— *Եղբոր միջոցով գիրք է ստանում:*
Երկերի լիակատար ժող., *IV, 291:*

Դեկտեմբերի 19.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*
Նույն տեղը:

Դեկտեմբերի 20.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:*
ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Դեկտեմբերի 23.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և ուրիշնեբի (?) հետ:*
Երկերի լիակատար ժող., *IV, 291:*

Դեկտեմբերի 26.— *Եղբոր միջոցով գիրք է ստանում:*
Նույն տեղը:

Դեկտեմբերի 27.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ:*
Նույն տեղը:

Դեկտեմբերի 30.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Մարիամ Աթանասյանի (Աֆանասևնա?) և Մադդաղինեի (?) հետ:*
Նույն տեղը:

Դեկտեմբերի 31.— *Բերդի հիշատակարանում նշում է. «Ժամը 11-ին երեկոյան: Այս 1863 թիվը վերջացնելու վրա եմ, բյուր տեսակ մտածություններով: Երանի թե 1864-ը, որ մեկ ժամից կգա, ավելի երջանկություններ լիներ: 12 ժամ, 1863. ընծայի ընդունելություն: Գնա՛ց ու էլ գալիք չունի»:*
Նույն տեղը:

[1 8 6 3]

Այս թվականին գրված կարելի է համարել հետևյալ երկերը.

1. «Երկու խոսք, թե ինչպես էր մեր հայացքը մի օրագրի պաշտոնականության մասին»:
Երկերի լիակատար ժող., *II, 395—403:*

2. «Սուրբ Մեսրովբի տոնին»: *ԵՒագրություն:*
Երկերի լիակատար ժող., *I, 101—102:*

3. «Կնդուկ պոշատի և նորա Սանչոյի մկրտությունը»:
Երկերի լիակատար ժող., *I, 103:*

4. «Կայսրակ»:
Երկերի լիակատար ժող., *I, 113—126:*

Նալբանդյանը, կարդալով Ա. Թոքվիլի «Демократия в Америке» գրքի առաջին հատորը ռուսերեն թարգմանությամբ (Կիև, 1860), քաղվածքներ է կատարում գրքի այն էջերից, որտեղ մերկացվում է եվրոպացիների գաղութային, թալանչիական քաղաքականությունը հենց սկզբից. «Դեռ նոր հաստատվել էին այնտեղ,— ասում է Թոքվիլը,— և ահա ներս բերին ստրկությունը, որ մինչև այսօր տևում է...»:

Երկերի լիակատար ժող., *III, 318*:

1 8 6 4

Հունվարի 1.— *Նամակ Ա. Սուլթանշահին: Պատասխանում է դեկտեմբերի 17-ի նրա նամակին, որի բովանդակության մասին տեղեկացել էր եղբոր միջոցով: Գրում է, որ իրեն շատ է հետաքրքրում Անդրեաս արքեպիսկոպոսի Նոր-Նախիջևան գալը, քանի որ այդ վերաբերում է «եկեղեցական դումարների գործին, որոնց համար, ահա, կարելի է ասել 15 տարի է արդեն, ինչ մենք պատերազմ ենք մղում»: Ընդգծում է, որ հիշյալ դումարների կարիքն այժմ Նոր-Նախիջևանի հասարակությունն ավելի, քան երբևիցե, զգում է, նկատի ունենալով Սահակ-Մեսրոպի ճեմարանը վերականգնելու և բարենորոգելու ծրագիրը:*

Նալբանդյանը գրում է, որ Գ. վ. Այվազովսկու կայացրած հաշտությունը կեղծ ու ապօրինի է, որովհետև դա կատարված է ո՛չ թե հասարակության, այլ մի քանի մարդկանց կամքով: Նա հաստատ համոզմունք է հայտնում, որ Խալիբյանի և մյուսների յուրացրած դումարների գործի արդարացի քննությունը հակայական օգուտ կբերի ո՛չ միայն նյութական, այլև բարոյական տեսակետից: Վերջապես պ.պ. Ալաջալյանները և ընկ. գուցե հասկանան, որ հասարակական գործում նրանք ո՛չ մի դեպքում ավելի կարևորություն, ավելի ձայն չունեն, քան վերջին ջրկիրը և չքավորը, որ հրապարակում բանջարեղեն է վաճառում»:

Նալբանդյանը գրում է, որ ինքն այդ գործի մասին ավելի է մտածում, քան իր բանտարկության մասին, քանի որ այն «վերաբերելով հասարակական շահին և հասարակական քաղաքակրթության գործի զարգացման գրավականին, ըստ ամենայնի, ավելի քան արժանի է բոլոր մտածող մարդկանց ուշադրությանը»:

Վերջում նոր խորհուրդներ է տալիս սորգոյի աճեցման վերաբերյալ, որպեսզի երկրորդ անգամ դրական արդյունք ստացվի:

Երկերի լիակատար ժող., *IV, 232—242*:

Նույն օրը.— *Ղ. Նալբանդյանի միջոցով ստանում է «Հյուսիսափայլ» և «Կռունկ» ամսագրերը:*

Երկերի լիակատար ժող., *IV, 291*:

Նույն օրը.— *«Ծաղիկ» տասնօրյա հանդեսում Գր. Չիլինկիրյանը, վ. Հյուգոյի «Քշվառներ» վեպի բովանդակությունը վերարտադրելով, հետևյալ խորհրդածություններն է անում, որոնց մեջ նկատելի է Նալբանդյանի «Երկրագործության» յուրովի արձագանքը. «Հացի պետքը, հացի խնդիրը... այնպիսի սարսափելի խնդիր մը, որ կարծեմք դժվարավ պիտի լուծվի: Հացի խնդիրը... կենաց և մահու խնդիր է, և եթե այս դարս չկրնա լուծելու զայն հանդարտությամբ, օր մը պիտի տեսնենք այնպիսի հեղափոխություն մը, որու նմանը պատմության մեջ չպիտի նշմարվի»:*

«Ծաղիկ», *1864, № 69, 53*:

Հունվարի 2.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*

Երկերի լիակատար ժող., *IV, 291*:

Հունվարի 3.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:*

ՊԲԼ, ֆ. Ա. Ֆ. Сорокина.

Հունվարի 7.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ, ինչպես նշում է Բերդի հիշատակարանում՝ «Դրսևանց, հազիվ կես ժամ»:*

Գրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 1:

Նույն օրը.— *Նամակ բրոջորդի Ավետիքին: Չի պահպանվել:*

Երկերի լիակատար ժող., *IV, 291*:

Հունվարի 8.— *Եղբոր նամակի միջոցով լուրեր է ստանում Նոր-Նախիջևանից:*

Հունվարի 9.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:*

ՊԲԼ, ֆ. Ա. Ֆ. Сорокина.

Հունվարի 13.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ:*

Երկերի լիակատար ժող., *IV, 291*:

Հունվարի 15.— *Գրքեր է ստանում:*

ՊԲԼ, ֆ. Ա. Ֆ. Сорокина.

Հունվարի 16.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հունվարի 20.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*
Երկերի լիակատար ժող., *IV, 291։*

Հունվարի 22.— *Նամակ եղբորը՝ Գրիգոր Նալբանդյանին։ Հուսադրելով, որ «աշխարհումս անվերջ բան չկա, եթե դա այդպես է, ապա, ուրեմն, ինձ այժմ հալածող դժբախտությունը նույնպես վերջ ունի», Նալբանդյանը կրկին ու կրկին խնդրում է հանգստացնել ծնողներին, որոնց դրությունն իրեն ամենից ավելի է տանջում։ Գրում է, որ իր գործն անշարժ ընկած է Սենատում և չգիտե ու չի կարող ասել, թե երբ կվերջանա։*
Երկերի լիակատար ժող., *IV, 242—244։*

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հունվարի 27.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*
Երկերի լիակատար ժող., *IV, 291։*

Հունվարի 30.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

Հունվարի 31.— *Ի. Ս. Տուրգենևը Սենատում հաստատում է քննիչ-հանձնաժողովին Փարիզից ուղարկած իր ցուցմունքները, որ Լոնդոնի ռուս պրոպագանդիստների և Նալբանդյանի հետ ինքը հարաբերությունների մեջ է մտել միայն Բակունինի կնոջը Սիբիրից Տվերի նահանգը փոխադրելու հարցի առնչությամբ։*
М. Лемке. Очерки освобод. движения 60-х годов, 206—207.
Երկերի լիակատար ժող., *III, 437—438։*

Փետրվարի 1(13).— *Ավարտում է «Սոս և Վարդիթերի» «Կրիտիկան»։*
Երկերի լիակատար ժող., *III, 119—189, 193—215։*

Նույն օրը.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV, 292։*

Փետրվարի 3.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*
Նույն տեղը։



Պետր Պատչան

Փետրվարի 5.— *Դիմում է ներկայացնում Պետրոպավլովյան բերդի պարետ գեներալ-լեյտենանտ Ա. Ֆ. Սորոկինին, խնդրելով թույլ տալ իրեն «Հյուսիսափայլում» տպագրվելու համար զբաղվել թարգմանություններով և գրական-գիտական հոդվածներ «կազմելով»։*

Դիմումի վերջում նշելով, թե «դրա դրդապատճառը խմբագրության կողմից տրվելիք նյութական վարձատրությունն է», Նալբանդյանն աշխատել է կանխապես ցրել հնարավոր կասկածները, թե ինքը կարող է «հակակառավարական մտքեր» անցկացնել իր հոդվածներում։ Երկերի լիակատար ժող., *IV, 245—246։*

ЦГИАМ, ф. III отд., I эксп., 1862, д. 230, ч. 76, л. 39.

Փետրվարի 6.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV, 292։*

Նույն օրը.— *Պետրոպավլովյան բերդի պարետ Սորոկինը, երբորդ բաժանմունքի գլխավոր պետին ներկայացնելով Նալբանդյանի դիմումը՝ «Հյուսիսափայլի» համար թարգմանություններ կատարելու և հոդվածներ գրելու մասին, խնդրում է՝ այդ առթիվ լինելիք կարգադրության վերաբերյալ իրեն տեղյակ դարձնել։*
Երկերի լիակատար ժող., *IV, 320—321։*

Փետրվարի 7.— *Ստանալով Նալբանդյանի դիմումը՝ թարգմանություններ կատարելու և հոդվածներ գրելու համար իրեն թույլտվություն տալու մասին և այդ առթիվ բերդի պարետ գեներալ-լեյտենանտ Սորոկինի զեկույցը, իշխան Դոլգորուկովը վերջինիս վրա մակագրում է. «Թույլտվության համար ներկայացված է բարձրագույնս հաստատված գլխավոր քննիչ-հանձնաժողովին».—«Ինչպե՞ս են վարվում Չերնիշևսկու գրվածքների հետ»։ Եվ ապա՝ «Նրա (Նալբանդյանի) գործը հանձնաժողովն արդեն ավարտել է. նա հանձնված է Սենատի դատաստանին»։* Նույն տեղը։

Փետրվարի 8.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Փետրվարի 10.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*
Երկերի լիակատար ժող., *IV, 292։*

Փետրվարի 11.— *Երրորդ բաժանմունքի պետ իշխան Դոլգորուկովը Պետրոպավլովյան բերդի պարետ Սորոկինին տեղեկացնում է, որ Նալբանդյանին «կարող են թույլ տրվել գրական զբաղմունքներ, պայմանով միայն, որ նրա կազմած հոդվածները ներկայացվեն «նորին կայսերական մեծության սեփական գրասենյակի երրորդ բաժանմունք»։*
Անտիպ երկեր, *637։*

Փետրվարի 13.— *Եղբոր միջոցով գրքեր է ստանում։*
Երկերի լիակատար ժող., *IV, 292։*

Նույն օրը.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

Նույն օրը.— *Պետրոպավլովյան բերդի պարետ Սորոկինը Նալբանդյանին հայտնում է երրորդ բաժանմունքի թույլտվությունը գրական աշխատանքով պարապելու վերաբերյալ, «պայմանով միայն, որ նրա հոդվածները ներկայացվեն երրորդ բաժանմունք»։*
Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։*
ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Փետրվարի 17.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և Մագդաղինեի հետ։*
Երկերի լիակատար ժող., *IV, 292։*

Փետրվարի 19.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։*
ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Փետրվարի 20.— *«Սոս և Վարդիթերի» «Կրիտիկան» բերդի պարետի միջոցով ներկայացնում է երրորդ բաժանմունք՝ «քննության»։ Այդ մասին նշում է Բերդի հիշատակարանում։*
Երկերի լիակատար ժող., *IV, 292։*

Փետրվարի 21.— *Պետրոպավլովյան բերդի պարետ գեներալ-լեյտենանտ Սորոկինը «երրորդ բաժանմունքին ի պատշաճ կարգադրություն» ներկայացնելով Նալբանդյանի «Սոս և Վարդիթերի»*

«Կրիտիկան», հայտնում է նրա ցանկությունը՝ ձեռագիրը երրորդ բաժանմունքից վերադարձվելուց հետո հանձնել իր եղբորը՝ Ղ. Նալբանդյանին։
Երկերի լիակատար ժող., *IV, 321—322։*

Փետրվարի 24.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*
Երկերի լիակատար ժող., *IV, 292։*

Նույն օրը.— *Երրորդ բաժանմունքը, արգելելով «Սոս և Վարդիթերի» «Կրիտիկան» տպագրության թույլատրելը, որոշում է այն թողնել երրորդ բաժանմունքի գործերում՝ մինչև Նալբանդյանի դատավարության ավարտը։*
Երկերի լիակատար ժող., *IV, 321—322։*

Փետրվարի 28.—*Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*
Երկերի լիակատար ժող., *IV, 292։*

Փետրվարի 29.— *Սվաճյանը Ռուսաստանից ստացած մասնավոր նամակների հիման վրա նոր տեղեկություններ է հաղորդում Նալբանդյանի վիճակի մասին. «Ինչպես միշտ, այնպես ալ հիմա, պ. Նալբանդյանցը գործակից է «Հյուսիսափայլին» և անոր հոդվածները ամեն թիվի մեջեն ա՛լ չպիտի պակսին։ Սակայն, ասկե չպիտի հետևցնել, թե անի ազատված է հիմա. չէ՛, Բենքերսպուրկի մեջ, սուրբ Պետրոսի բերդը կգտնվի, բայց իրեն թույլտվություն եղած է այժմ հրատարակության մասնակից ըլլալ։ Անշուշտ, իր գրվածքները Մոսկվա՝ [«Հյուսիսափայլ»] օրագրի խմբագրատունը հասնելեն առաջ բանի մը խիստ քննության ենթակա պիտի ըլլան։*

Գիտեմ, կցանկայիք անոր վրա մանրամասն տեղեկություն ունենալ՝ «Մեղվիդ» միջոցով իր բարեկամներուն հաղորդելու համար, բայց հիմակուհիմա սաչափ միայն հարմար կդատիմ ըսել, որ կանուխ կամ ուշ իր անմեղությունը պիտի հաղթանակե, վասն զի հանցանք մը գործած չունի։ Արդեն մխիթարություն մըն է թե՛ իրեն, թե՛ իր ընտանիքին և թե՛ սիրելի բարեկամաց, որ իր քաշածները հանցանքի մը համար չէ...»։
«Մեղու», *1864, № 233, 50։*

Մարտի 2.—*Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*
Երկերի լիակատար ժող., *IV, 292։*

Նույն օրը.— *Ստ. Նազարյանը Մատթեոս Վեհապետյանին ուղղած նամակում Նալբանդյանի բանտարկությունը համարում է հեռանք նրա «երիտասարդական չափից դուրս համարձակության»։*

նրա «վտանգավոր և տարապայման բնավորության»: Նազարյանը հիշեցնում է, որ իրենք (ինքը և Մ. Վեհապետյանը), տեսնելով Նալբանդյանի բնավորության այդ գծերը, միշտ նրա համար նախազուշակել են այդպիսի ապագա: Այնուհետև պատմում է 1863 թ. ապրիլի 16-ին (տե՛ս) բանտում Նալբանդյանի հետ իր ունեցած տեսակցության մասին: «Արձագանք», *1896, № 123:*

Մարտի 5.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*
Երկերի լիակատար ժող., *IV, 292:*

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Մարտի 9.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ:*
Երկերի լիակատար ժող., *IV, 292:*

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Մարտի 11.— *Քերոբի [Պատկանյան] գրքերը վերադարձնում է:*
Երկերի լիակատար ժող., *IV, 292:*

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Մարտի 12.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*
Երկերի լիակատար ժող., *IV, 292:*

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Մարտի 16.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ:*
Երկերի լիակատար ժող., *IV, 292:*

Նույն օրը.— *Պոլսի կրոնական ժողովում Կ. Յուբյուճյանի և Հ. Չամուռճյանի միջև ծագած վեճը քննելիս պատրիարքի այն հարցին, թե ի՞նչ է նշանակում «դռնամիջյան հերետիկոս», Չամուռճյանը հետևյալ բացատրությունն է տալիս. «Ժամանակավ Մեծ Նոր Խանին վերի դռները մեջ սենյակ մը կար, ուր գիրք և այլն կծախ-*

վեր: Քանի մը տարի առաջ [1860, 1861]... [Միքայել Նալբանդյան] անուն մեկը եկավ և դիվաց գոյությունն ուրացավ: Այն սենյակը հաճախողներեն ոմանք ալ այն անձը գովեցին ու պաշտպանեցին»:
«Մասիս», *1864, № 643—644:*

Մարտի 18.— *Ղ. Նալբանդյանի միջոցով ստանում է հունարեն «Աստվածաշունչը»՝ հայերեն թարգմանության հետ համեմատելու համար: Վերադարձնում է Կորյունի գիրքը («Վարք Մաշտոցի»):*
Երկերի լիակատար ժող., *IV, 292:*

Մարտի 19.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*
Նույն տեղը:

Մարտի 20.—*Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Մարտի 23.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ:*
Երկերի լիակատար ժող., *IV, 292:*

Նույն օրը.— *Ղ. Նալբանդյանին է հանձնում Սերոբ Նալբանդյանին գրած իր նամակը՝ թվագրված մարտի 25-ին: Չի պահպանվել:*
Նույն տեղը:

Մարտի 25.— *Եղբոր միջոցով ուղարկված թերթերը բանագրավում է բերդի պարետը:*
Նույն տեղը:

Նույն օրը.— *Գրքեր է ստանում:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Մարտի 26.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*
Երկերի լիակատար ժող., *IV, 292:*

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Մարտի 28.— *Տեղեկանում է, որ երրորդ բաժանմունքն արգելել է իրեն հոդվածներ տպագրել «Հյուսիսափայլում»: Նույն օրը Քերդի հիշատակարանում նշում է. «Նամակ ստացա եղբորիցս, որով հայտնում է, թե չեն թույլ տալիս ինձ բան տպել «Հյուսիսափայլում» մինչև իմ գործի վճիռը»:*
Երկերի լիակատար ժող., *IV, 292:*

Մարտի 30.— *Տեսակցում է եղբոր՝ Ղ. Նալբանդյանի հետ:*
Նույն տեղը:

Ապրիլի 1.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*
Նույն տեղը:

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Ապրիլի 6.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ:*
Երկերի լիակատար ժող., *IV, 292:*

Ապրիլի 8.— *Եղբոր միջոցով ստանում է «Հյուսիսափայլի» 1864 թ. № 2-ը: Այդ մասին նշում է Բերդի հիշատակարանում:*
Նույն տեղը:

Նույն օրը.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*
Նույն տեղը:

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Ապրիլի 13.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ:*
Երկերի լիակատար ժող., *IV, 292:*

Ապրիլի 16.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*
Երկերի լիակատար ժող., *IV, 293:*

Ապրիլի 17.—*Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Ապրիլի 18.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» երրորդ (փետրվարի) ամսատետրակը: Նալբանդյանի գրչին է պատկանում՝*
«Ազգային բշվառություն», *Ստ. Նազարյանի ստորագրությամբ (էջ 158—173):*
Այդ հոդվածի Նալբանդյանի գրչին պատկանելը վկայում է Ղ. Ագայանն իր հիշողություններում. «Աշխատակից չուներ [Ստ. Նազարյանը]. ամեն ինչ ինքն էր թարգմանում, շատ անգամ ոչինչ բաներ և զանազան կեղծ անուններով: Մի հոդված միայն, որ կրում էր «Ազգային բշվառություն» վերնագիրը, Նալբանդյանի գրածն էր, թեև Նազարյանցի իսկական անունն էր ստորագրված»:
Ղ. Ագայան, Երկեր, Գ. հատոր, *1940, 66:*

Ապրիլի 20.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ:*
Երկերի լիակատար ժող., *IV, 293:*

Ապրիլի 23.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*
Նույն տեղը:

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Ապրիլի 27.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ:*
Երկերի լիակատար ժող., *IV, 293:*

Ապրիլի 29.—*Նամակներ Ղ. և Ս. Նալբանդյաններին: Չեն պահպանվել:*
Նույն տեղը:

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Մայիսի 4.— *Չերնիշևսկուն հայտարարվում է Սենատի դատավճիռը՝ նրան յոթ տարով տաժանակիր աշխատանքների և ապա ընդմիշտ Սիբիր ուղարկելու մասին:*
М. Лемке, Политические процессы в России 1860-х гг., 487.

Մայիսի 5.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ:*
Երկերի լիակատար ժող., *IV, 293:*

Նույն օրը.— *Ստանում է «Հյուսիսափայլի» 1864 թ. երրորդ ամսատետրակը:*
Նույն տեղը:

Մայիսի 7.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:*
Նույն տեղը:

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Մայիսի 11.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ:*
Երկերի լիակատար ժող., *IV, 293:*

Մայիսի 14.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Բերդի հիշատակարանում նշում է, որ «այս թուղթը չէ գնացել» (ըստ երևույթին՝ արգելվել է երրորդ բաժանմունքում)։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Մայիսի 18.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*
Նույն տեղը։

Նույն օրը.— *Գրաքննությունը տպագրության է թույլատրում «Հյուսիսափայլի» չորրորդ (մարտի) ամսատետրակը։ Նալբանդյանի գրչին է պատկանում՝*
«Ուղերձ առ Մեչուխեշայն ի Կոստանդնուպոլիս», Փառախոտ Յոլակյանց ստորագրությամբ (էջ 255)։

Մայիսի 19.— *Պետերբուրգի Միտնինսկայա հրապարակում հայտարարվում է կառավարող Սենատի դատավճիռը Ն. Գ. Չերնիշևսկու վերաբերյալ. «Խռովահույզ կոչ գրելու, տարածելու նպատակով, այն գաղտնի տպագրության հանձնելու և՝ Ռուսաստանում գոյություն ունեցող կառավարական կարգը տապալելու համար միջոցներ ձեռնարկելու մեջ մեղադրվող Չերնիշևսկուն զրկել բոլոր իրավունքներից, յոթ տարով աքսորել հանքահորերը՝ տաժանակիր աշխատանքների, և ապա ընդմիշտ բնակեցնել Սիբիրում»։*
Госуд. прест. в России в XIX веке, т. I, стр. 123.

Մայիսի 20, առավոտյան ժամը 10.— *Ն. Գ. Չերնիշևսկին աքսորվում է Սիբիր։*
М. Лемке, Политические процессы в России 1860-х гг., 1923, стр. 495.

Մայիսի 21.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., IV, 293։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. Ա. Ֆ. Сорокина.

Մայիսի 25.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*
Երկերի լիակատար ժող., IV, 293։

Նույն օրը.— *Նամակ Ս. Նազարյանին։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Մինչև մայիսի 28.— *Ա. Սուլթանշահի նամակը Կ. Հայրապետյանին. տեղեկություններ է հաղորդում Նալբանդյանի վիճակի մասին։ Չի պահպանվել։*
Ծրական բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ, *վ. 175։*

Մայիսի 28.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., IV, 293։

Նույն օրը.— *Ստանում է գրքեր։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։*
Նույն տեղը։

Նույն օրը.— *Կ. Հայրապետյանի նամակը Ա. Սուլթանշահին. անհանգստություն է արտահայտում Նալբանդյանի բանտարկությունը երկարելու առթիվ։*
Ծրական բանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ, *վ. 175։*
Ե. Շահազիզ, Դիվան Միխայել Նալբանդյանի, 327։

Հունիսի 1.— *Նալբանդյանին երկրորդ անգամ կանչում են Սենատ հարցաքննության։ Նրանից վերցնում են ստորագրություն, որ իր գործը դատող սենատորի դեմ կասկած չունի և որ Սենատում իր նկատմամբ բռնություն չի գործադրվել։*
ЦГИАМ, ф. ОППС, 1862, д. 58, л. 411.
Երկերի լիակատար ժող., IV, 293։

Նույն օրը, երեկոյան ժամը 6-ին.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և Ս. Գ. Սուլթանշահի հետ։* *Երկերի լիակատար ժող., IV, 293։*

Հունիսի 4.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Հունիսի 6.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։*
Նույն տեղը։

Հունիսի 8.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*
Երկերի լիակատար ժող., *IV, 293։*

Հունիսի 12.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Եղբոր միջոցով հեռագիր է տալիս Նոր-Նախիջևան։ Չեն պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։*
ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Հունիսի 15.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և Ա. Սուլթանշահի հետ։*
Երկերի լիակատար ժող., *IV, 293։*

Նույն օրը.— *Բերդի հիշատակարանում նշում է. «Այսօր հիվանդացա, ջերմ ունեի»։*
Նույն տեղը։

Այդ օրվա իր վիճակի մասին, հունիսի 17-ի նամակում եղբորը գրում է.

«Դուք, երևի, հիշում եք, որ մեր տեսակցության պահին ես դանդաղում էի տենդային կացությունից, որով բռնված ես զարթնեցի երկուշաբթի առավոտյան։ Տեսակցությունից հետո տենդս ուժեղացավ, իսկ երեկոյան դեմ փոխվեցավ խստագույն պարոքսիզմի, այնպես որ բժիշկ Կեպեն, հավանորեն, ավելի չի դողացրել, որոնելով Ֆրանկլինին բևեռային սառույցների մեջ»։
Երկերի լիակատար ժող., *IV, 248։*

Հունիսի 16.— *Հիվանդությունը շարունակվում է։*
Երկերի լիակատար ժող., *IV, 293։*

Հունիսի 17.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Հայտնում է, որ մտադիր է մի փոքրիկ նամակ ուղղել Խալիբյանին և բողոքել եղբոր (Գրիգորի) արարքի դեմ, որ վերջինս առանց իր գիտության դիմել է այդպիսի քայլի։ (Նրբորը բանտից ազատելու համար Գրիգորը դիմել էր Խալիբյանի «օգնությանը»?!)։ Նալբանդյանն այդպիսի մի նամակ անհրաժեշտ է համարում, որպեսզի Խալիբյանը չկարծի, թե եղբայրն այդ արել է իր ներշնչմամբ, այլ որպեսզի նա «միան-*

գամ ընդմիշտ հավատացած լինի, որ ես ավելի շուտ կհամաձայնվեմ դիմել Մեֆիստոֆելի օգնությանը, քան թե նրա»։ Պատմում է տենդի սաստկանալը տեսակցությունից (հունիսի 15) հետո և իր բուժական միջոցառումները, որի հետևանքով այժմ լավ է զգում։ Հիշեցնում է, որ մոռացել են (եղբայրը և Անանիան) բերել իր վաղուց խնդրած Շերրի գիրքը («Всеобщая история литературы», Петербург, 1863)։

Խնդրում է Ա. Սուլթանշահին տեղեկանալ՝ լույս չե՞ն տեսել, արդյոք, Բոքլի «Անգլիայի քաղաքակրթության պատմության» երկրորդ հատորի երկրորդ պրակը, Մակոլեի «Անգլիայի պատմության» երկրորդ հատորը, Պրուդոնի «Պատերազմ և խաղաղության» երկրորդ հատորը։ Հետաքրքրվում է, թե ինչո՛ւ է դանդաղում Իլենկովի «Քիմիայի» և Ջ. Վերդու «Տրովատորի» (Հովհ. Սահրատյանի հայերեն թարգմանության) տպագրությունը։
Երկերի լիակատար ժող., *IV, 246—249։*

Հունիսի 17.— *Բերդի հիշատակարանում նշում է հիվանդության մեղմանալը։*
Երկերի լիակատար ժող., *IV, 293։*

Նույն օրը.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Նույն տեղը։

[Հունիսի 17—24].— *Երկտող է գրում Խալիբյանին, որ եղբայրը (Գրիգորը) նրան դիմել է ինքնագլուխ կերպով, առանց իր գիտության և որ ինքը, Նալբանդյանը, կհամաձայնվի ավելի շուտ դիմել Մեֆիստոֆելի, քան թե նրա՝ Խալիբյանի «օգնությանը»։*
Երկերի լիակատար ժող., *IV, 248—262։*

Հունիսի 18.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Հունիսի 21.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։*
Նույն տեղը։

Հունիսի 22.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*
Երկերի լիակատար ժող., *IV, 294։*

Հունիսի 23.— *Նամակներ Ղ. և Գ. Նալբանդյաններին։ Չեն պահպանվել։*
Նույն տեղը։

Նույն օրը.—*Նղբոր միջոցով ստանում է Կ. Շտաուդի և Ս. Պ. Վելիկդանի (?) աշխատությունները։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է նղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հունիսի 24.— *Նամակ Գ. Նալբանդյանին, վերջինիս հարուցած ժառանգական իրավունքների մասին։ Խնդրում է չանհանգստացնել մորը, ազատ պահելով նրան վիրավորանքներից։ Խորհուրդ է տալիս սպասել իր վերադարձին. «Մի՛ վախենար, ես այստեղ չեմ մնանի և աստծո օգնությամբ հույս ունեմ քեզ հետ շուտով տեսնվելու»։*

Նալբանդյանը խստությամբ դատապարտում է նրան՝ Խալիբյանին դիմելու համար. ամեն բանի մասին լռել է, բայց այդ մասին չի կարող լռել։ «Ասա՛, խնդրեմ, ո՞ւր է քո գլուխը։ Դու ինձ հարկադրեցիր բողոք գրել նրան. իսկ ես չէի կամենա որևէ հարաբերության մեջ մտնել նրա հետ»։ Երկերի լիակատար ժող., *IV, 249—252։*

Հունիսի 26.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 294։*

Հունիսի 29.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Նույն տեղը։

Հուլիսի 1.— *Նամակ Հովհաննեսին (Սահրատյան?)։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Հուլիսի 6.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Նույն տեղը։

Հուլիսի 7.— *Հովհաննեսի (Սահրատյան?) միջոցով ստանում է գրքեր։* Նույն տեղը։

Հուլիսի 13.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Նույն տեղը։

Հուլիսի 14.— *Բերդի հիշատակարանում նշում է. «Այսօր տաբեզուխ է բանտարկությանս, սկսյալ 14 Հուլիսից, 1862։ Երկո՛ւ տարիս։* Նույն տեղը։

Հուլիսի 15.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Հուլիսի 16.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է նղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հուլիսի 20.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 294։*

Հուլիսի 23.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է նղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հուլիսի 27.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 294։*

Հուլիսի 28, Պետերբուրգ.— *Հովհ. Սահրատյանի նամակը Նալբանդյանին. հայտնում է, որ նրա պատվիրած գրքերից ուղարկում է երկուսը ֆրանսերեն լեզվով (?), երեք գրքույկ «Материнская любовь» վերնագրով։*

Գրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 123/96։*

Օգոստոսի 3.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 294։*

Օգոստոսի 5.— *Նալբանդյանին փոխադրում են № 14 խուցը։* ЦГИАМ, ф. III отд., I эксп., д. 75, л. 46. Երկերի լիակատար ժող., *IV, 294։*

Օգոստոսի 7.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 294։*

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է նղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Օգոստոսի 9.— *Նամակ հարազատներին, թվագրված օգոստոսի 11-ին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 294։*

Օգոստոսի 10.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և Անանիա Սուլթանշահի հետ։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. Ա. Ֆ. Сорокина.

Օգոստոսի 13.— *Նամակներ Ղ. Նալբանդյանին և քրոջորդի Ավետիքին։ Չեն պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV*, 294։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. Ա. Ֆ. Сорокина.

Օգոստոսի 17.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV*, 295։

Օգոստոսի 20.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. Ա. Ֆ. Сорокина.

Օգոստոսի 24.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV*, 295։

Օգոստոսի 26.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Օգոստոսի 27.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. Ա. Ֆ. Сорокина.

Օգոստոսի 31.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV*, 295։

[Օգոստոս].— *Պետերբուրգում լույս է տեսնում Ջ. Վերդիի «Տրուվատոր» («Տրուբադուր») օպերայի տեքստը՝ Հովհ. Սահրատյանի թարգմանությամբ. «Տրուվատոր, ողբերգություն չորս մասի բաժանված. երաժշտություն պ. Հովսեփի Վերդի, աշխատություն Հովհաննեսի Սահրատյանց, Ս.-Պետերբուրգ, 1864»։*

«Ազդի» մեջ Հովհ. Սահրատյանը նշում է, որ «սորանից քանի տարի առաջ» այդ գործը հայերեն թարգմանելու խորհուրդը իրեն տվել է Մ. Նալբանդյանը։ Թարգմանիչը ցրքի մի օրինակը նվիրել է

Նալբանդյանին, հետևյալ մակագրությամբ. «Ազնիվ պարոնի Միքայելի Նալբանդյանց, այս թարգմանության տված բարի խորհուրդին համար շնորհակալությամբ և հարգությամբ նվիրում է թարգմանիչն»։ Գրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 123/383։

[Ամառ].— *Գրում է «Աղցմիք» հակակրոնական-սատիրական բանաստեղծությունների շարքը և «Արկածք նախահորն» պոեմը։* Երկերի լիակատար ժող., *I*, 127—155։

Սեպտեմբերի 3.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV*, 295։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. Ա. Ֆ. Сорокина.

Սեպտեմբերի 7.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV*, 295։

Սեպտեմբերի 10.—*Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. Ա. Ֆ. Сорокина.

Նույն օրը.—*Նոր-Նախիջևանում 80-ամյա հասակում վախճանվում է Նալբանդյանի հայրը՝ Ղազար Գրիգորի Նալբանդյանը։ Ստ. Նազարյանը «Հյուսիսափայլում» մահագիր է տպագրում, հայտնելով ամսագրի «մի ժամանակ քանքանավոր մատենագրական աշխատակցի»՝ Նալբանդյանի հոր մահը։* «Հյուսիսափայլ», *1864, 9-րդ ամսատետրակ, 646*։

Սեպտեմբերի 14.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV*, 295։

Սեպտեմբերի 17.—*Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. Ա. Ֆ. Сорокина.

Սեպտեմբերի 21.— *Տեսակցում է Մադդաղինեի (?) և Հովհ. Սահրատյանի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 295։*

Սեպտեմբերի 22.—*Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Սեպտեմբերի 24.—*Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 295։*

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Սեպտեմբերի 25.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* Նույն տեղը։

Սեպտեմբերի 28.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 295։*

Սեպտեմբերի 29.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Հոկտեմբերի 1. —*Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 295։*

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Հոկտեմբերի 5.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Մադդաղինեի և Ղ. Խաֆաֆյանի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 295։*

Հոկտեմբերի 8.— *Եղբոր նամակից տեղեկանում է հոր վախճանվելու մասին։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Հոկտեմբերի 10.— *Նամակ Ա. Սուլթանշահին, թվագրված հոկտեմբերի 12-ին։* Երկերի լիակատար ժող., *IV, 295։*

Հոկտեմբերի 11.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Հոկտեմբերի 12.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և Հովհաննեսի (Սահրատյան) հետ։ Տանից ստացած նամակները խիստ վատ են անդրադառնում տրամադրության վրա։* Երկերի լիակատար ժող., *IV, 295։*

Հոկտեմբերի 15.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 296։*

Հոկտեմբերի 19.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Նույն տեղը։

Հոկտեմբերի 22.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Հոկտեմբերի 26.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV, 296։*

Հոկտեմբերի 29.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Նոյեմբերի 2.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Ա. Սուլթանշահի, Հովհ. Բերբերյանի, Մադդաղինեի և Բերուբեի (?) հետ։* Նույն տեղը։

Նոյեմբերի 5, առավոտյան.— *Նամակ Ղ. Նալբանդյանին, թվագրված նոյեմբերի 4-ին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Մինչև նոյեմբերի 6.— *Նոր-Նախիջևանի հասարակության մի նշանակալից մասը դիմում է կաթողիկոսին, խնդրելով հեռացնել Գ. վ. Այվազովսկուն իրենց թեմի առաջնորդի պաշտոնից: Հարցը սուր կերպով էր դրվում, թերևս, նրա համար, որ Գ. վ. Այվազովսկին համարվում էր Նալբանդյանի ձերբակալության գլխավոր հանցավորներից մեկը:*

Գրական թանգարան, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ:

Նոյեմբերի 6.— *Հ. Խալիբյանը Նովորոսիյսկի և Բեսարաբիայի գեներալ նահանգապետ Պ. Ե. Կոցեբուին հայտնելով Գ. վ. Այվազովսկուն իր պաշտոնից հեռացնելու վերաբերյալ Նոր-Նախիջևանի հասարակության դիմումի մասին, խնդրում է՝ ներքին գործերի մինիստրի միջոցով (որին իրենք դիմել են) թույլ չտալ, որ այդ իրագործվի, և Գ. վ. Այվազովսկուն թողնել իր տեղում:*

«Եթե,— շարունակում է Խալիբյանը,— կառավարությանը հաճելի կլինի մեր հասարակությանը բարերարություն անել, ապա մինչև նոր ընտրությունները Հայրապետյանին քաղաքագլխի պաշտոնից հեռացնելը՝ բոլոր խարդավանքներին վերջ տալու, խաղաղություն և կարգ ու կանոնը վերականգնելու միակ և վճռական միջոցն է»:

Նույն տեղը:

Նույն օրը.— *Հ. Խալիբյանը և իր կուսակից այլ «աղաներ» (Գևորգ Խաթրանյան, Մանուկ Ալաջալյան, Սերոբ Զորչոփյան և ուրիշ.) խնդրագիր են ուղղում Խաչ. Լաղարյանին, որ վերջինս միջնորդի ներքին գործերի մինիստրի առաջ Գ. վ. Այվազովսկուն թեմի առաջնորդի պաշտոնում թողնելու մասին: Ավելացնելով, որ Պետերբուրգում ևս կան Գ. վ. Այվազովսկուն թշնամի մի քանի անձնավորություններ, անհրաժեշտ են համարում «ամենախոնարհաբար խընդրել», որ նա (Խ. Լաղարյանը) ձեռք առնի իրենից կախված միջոցները:*

Նույն տեղը:

Նոյեմբերի 7.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և Ղ. Խաֆաֆյանի հետ:* Երկերի լիակատար ժող., *IV*, *296*:

Նոյեմբերի 9.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Հովհ. Սահրատյանի և Հ. Աճեմյանի հետ:* Նույն տեղը:

Նոյեմբերի 12.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:* Նույն տեղը:

Նոյեմբերի 13.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը:* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Նոյեմբերի 16.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և Հովհ. Սահրատյանի հետ:* Երկերի լիակատար ժող., *IV*, *296*:

Նոյեմբերի 18.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:* Նույն տեղը:

Նոյեմբերի 19.— *Եղբոր միջոցով ստանում է Փավստոս Բուզանդի «Պատմությունը»:* Նույն տեղը:

Նոյեմբերի 25.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Ղ. Խաֆաֆյանի և Հովհ. Սահրատյանի հետ:* Նույն տեղը:

Նույն օրը.— *Եղբոր միջոցով Մոսկվայից գրքեր է ստանում:* Նույն տեղը:

Նոյեմբերի 26.— *Նամակ Ղ. Նալբանդյանին: Չի պահպանվել:* Նույն տեղը:

Նոյեմբերի 27.— *«Արշալույս Արարատյան» թերթը, արտատպելով «Ազգային Քշվառություն» հոդվածը, շտապում է նախազգուշացնել ընթերցողներին՝ նրա մեջ արտահայտված մտքերը հայտարարելով «սխալ և ազգավնաս»: «Այս հոդվածը,— գրում է թերթը,— որ՛ւի է կրիվք [կրթով], և ազգային երևելիները, պեյերը, էֆենտիները և հոգևոր հովիվները շարաշար կպախարակե և կղրպարտե, կերևի, թե դադարյալ «Մեղու» լրագրին ներշնչությամբը գրված է:*

Չենք դիտեր, թե ազգային երևելիները, պեյերը, էֆենտիները ու հարուստները, որոնք ազգին պարծանք ու պաշտպաններն են, ազգին մեջեն հանելով, խեղճ ու աղքատ ժողովուրդը ինչպե՞ս պիտի կրնա հառաջ երթալ առանց դրամո»:

«Արշալույս Արարատյան», *1864*, *№№ 767*, *769*:

Նոյեմբերի 30.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Ս. Գ. Սուլթանշահի, Ղ. Խաֆաֆյանի և Մագդաղինեի (?) հետ:*

Երկերի լիակատար ժող., *IV*, *296*:

Նոյեմբեր.— Նալբանդյանին № 14 խցից տեղափոխում են № 17-ը, ուր մնում է մինչև բերդից դուրս գալը։

ЦГИАМ, ф. III отд., I эксп., д. № 44.

Դեկտեմբերի 3.— Ղ. Նալբանդյանի նամակից տեղեկանում է մոր հիվանդության մասին, նաև՝ որ Հովհ. Բերբերյանն ու Ա. Սուլթանշահը տասն օրից Փարիզից կվերադառնան։

Երկերի լիակատար ժող., IV, 296։

Նույն օրը.— Նամակներ Ղ. Նալբանդյանին և Ան. Ֆր. Իվան-ին (?) մոր հիվանդության մասին։ Չեն պահպանվել։ Նույն տեղը։

Նույն օրը.— Գրաքննությունը տպագրության է թույլատրում Սմբատ Շահազիզի «Լևոնի վիշտը և դանագան բանաստեղծություններ» ժողովածուն։ Պոեմի երրորդ գլխի վերջին տողերը նվիրված են Նալբանդյանին.

... Բայց քեզ հանում եմ այս տխուր դասից,
Ո՛վ նոր հայախոս և ազնիվ մշակ.
Քեզ կարող էի անմահ փուշերից
Քաջ մարտիրոսի բոլորել պսակ։

Քնարիդ լարերն ազատ շարժվում են,
Երբ ազատ քո կամք, ազատ քո հոգին.—
Այդպես սոխակներ ներդաշնակում են,
Հեռու վանդակից, թփերի միջին։

Սրտիդ կսկիծը — կսկիծ է ազգի,
Եվ ո՛չ մի դիմակ կեղծավորության,
Գրչիդ վաստակը — մեծություն հայի,—
Թեև հայասերք են քո գավաճան։

Ո՛վ, ազգի անդամ, հավերժ հարգելի,
Քո՛ղ մխիթարեն կուրծքիս հառաչանք
Պայծառ ճակատդ Հայրենասիրի,
Որի վարձն եղավ ապերախտ զրկանք։

Լևոնի վիշտը, ժամանակակից վեպ, չորս գլուխ բաժանված և զանազան բանաստեղծություններ. Մոսկվա, 1865, 102—103։

Գրական ավանդության համաձայն, Նալբանդյանը, կարդալով Ս. Շահազիզի պոեմը, ասել է. «Լևոնի վիշտը — դա իմ վիշտն է» («Նոր-Դար», 1892, № 56)։ 1865 թ. ոգևորներին երրորդ բաժանմունքի անանուն գործակալը իր լրտեսագրում նշելով, որ այդ գիրքը պարունակում է կառավարության դեմ ուղղված մտքեր, ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ ոմանց կարծիքով «Լևոնի վիշտը» միևնույնն է, թե «Նալբանդովի վիշտը»...

Անտիպ երկեր, 705։

Դեկտեմբերի 5.— Ղ. Նալբանդյանը հայտնում է, որ դեկտեմբերի 3-ի նամակը չի ստացել (ըստ երևույթին, երրորդ բաժանմունքն արգելել է)։ Չի պահպանվել։ Երկերի լիակատար ժող., IV, 296։

Նույն օրը.— «Մեղուն» մերկացնում է Գ. վ. Այվազովսկուն որպես մոլի ռեակցիոների և ցարական լրտեսի։ Հայտնում է, որ բացի ներքին գործերի մինիստրին գրածից, Այվազովսկին ֆրանսերեն լեզվով մի գաղտնի նամակ էլ ուղարկել է կոմս Սիվերսին, այս վերջին լրտեսագրի մի պատճենը Մեչուխեչայի ձեռքն անցած լինելով, նա՝ Մեչուխեչան (Հ. Սվաճյանը) խոստանում է մի օր հրատարակել՝ ֆրանսերեն բնագրի հետ միասին։ Այդ նամակում Գ. վ. Այվազովսկին, կոմս Սիվերսին հիշեցնելով, որ Նալբանդյանը պահվում է բերդում, խնդրում է նրան տալ խստագույն պատիժ, որը պետությանը մեծամեծ օգուտներ պիտի բերե, որովհետև Նալբանդյանի պատժվելը նրա նման խռովարարներին խրատ կարող է լինել։

Զարմանալին այն է, գրում է «Մեղուն», որ կոմս Սիվերսին գրած այդ գաղտնի նամակի օրինակները հիմա շրջում են շատերի մոտ։

«Մեղուն» ցույց է տալիս, որ Այվազովսկին «Իր բանականությունը իսպառ զոհեր է իր սրտի կատաղությանը»՝ խճճվելով հակասությունների ցանցում. մեկ հայտարարում է, որ Նալբանդյանը մեծ ազդեցություն ունի ժողովրդի վրա, հետո նրան անվանում է «ոմն Նալբանդյանց, զոր բնավ մեկը չճանչեր», և հետո, թե՝ Այվազովսկին բացարձակ ազդեցություն ունի բոլոր հայերի և մանավանդ Տաճիաստանի հայերի վրա, բայց Նալբանդյանն սպանել է նրա ազդեցությունը... «Ստույգ է,— շարունակում է «Մեղուն»,—որ ճիզվիթները երբեք չկրցան սիրել տրամաբանությունը, բայց այս չափ ալ չկրցան չարշարել զանի»։

«Մեղու», 1864, դեկտեմբերի 5, հավելված՝ «Կտոր մը այվազովսքիաբանություն»։

Դեկտեմբերի 7.— Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և Հովհ. Բերբերյանի հետ։ Երկերի լիակատար ժող., IV, 296։

Դեկտեմբերի 10.— *Սենատի դատավճիռը Լոնդոնի ռուս պրոպագանդիստների հետ հարաբերություններ ունենալու մեջ մեղադրվողների գործի վերաբերյալ։ Դատավճռի մեջ Նալբանդյանի մասին ասված է.*

«Սանկտ-Պետերբուրգի համալսարանի կանդիդատ Միքայել Նալբանդովին, Լոնդոնի պրոպագանդիստների հանցավոր մտադրություններին տեղյակ լինելու, լոնդոնյան արգելված հրատարակությունները Ռուսաստանում տարածելում նրանց աջակցելու և Հարավային Ռուսաստանում, հայերի մեջ, հակակառավարական շարժում ծավալելու ձգտման համար թողնել ուժեղ կասկածանքի տակ, և ապա, որպես անբարեհույս անձի, ներքին գործերի մինիստրի հայեցողությամբ, աքսորել Ռուսաստանի հեռավոր քաղաքներից մեկը՝ ոստիկանության խիստ հսկողության տակ»։

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 221—223.

Նույն օրը.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*

Նույն տեղը:

Դեկտեմբերի 11.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։*

ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Դեկտեմբերի 14.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի և Ա. Սուլթանշահի հետ։*

Երկերի լիակատար ժող., *IV*, 297։

Դեկտեմբերի 17.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*

Նույն տեղը:

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։*

ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Դեկտեմբերի 21.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*

Երկերի լիակատար ժող., *IV*, 297։

Դեկտեմբերի 24.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*

Նույն տեղը:

Դեկտեմբերի 25.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։*

ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Դեկտեմբերի 28.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*

Երկերի լիակատար ժող., *IV*, 297։

Դեկտեմբերի 31.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։*

ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Նույն օրը.— *Նամակներ է ստանում Հովհ. Սահրատյանից և Ա. Սուլթանշահից։*

Երկերի լիակատար ժող., *IV*, 297։

Բերդի հիշատակարանում գրում է. «1864-ն էլ վերջացուցինք, բայց տխրությամբ. տեսնինք նորը, որ ահա զարկում է. շնորհավոր նոր տարի։ 1865, 1 հունվարի. ժամ առաջին»։

Նույն տեղը:

[1864]

Գրում է «Մամիկոնյան մեծ վահանի պատասխանը» և «Հիշենք» բանաստեղծությունները՝ «Գամառ-Քաթիպայի բանաստեղծությունները» գրքի (Մոսկվա, 1864, դրաքննության թույլտվությունը՝ ն. թ. մարտի 31) ընթերցումից հետո։

Երկերի լիակատար ժող., *I*, 107—110։

1865

Հունվարի 1.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*

Երկերի լիակատար ժող., *IV*, 297։

Հունվարի 4.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։*

ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Նույն օրը.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*

Երկերի լիակատար ժող., *IV*, 297։

Հունվարի 7.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*

Նույն տեղը:

Հունվարի 8.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։*

ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հունվարի 11.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*
Երկերի լիակատար ժող., *IV*, 297։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հունվարի 13.— *Հիվանդությունը ծանրանում է, մարմնի վրա երևում են խուլ բշտիկներ։ Խնդրում է բժիշկ կանչել։*
Երկերի լիակատար ժող., *IV*, 297։

Նույն օրը.— *Բերդի պարետին ուղարկում է մի գրություն՝ խընդրելով օրենսգրքի 9-րդ հատորը։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Ստանում է գրքեր։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հունվարի 14.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* Նույն տեղը։

Հունվարի 15.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV*, 297։

Նույն օրը.— *Բերդի հիշատակարանում նշում է հիվանդության վատթարանալը։ «15-ին տկարությունս շարունակվում է ամենայն կատաղությամբ. բոլոր մարմինս ուռած է՝ ոտից մինչև գլուխս, և գիշերը ջերմ ունիմ, այսինքն՝ ցրտություն, բայց լուսադեմին քրտինք։ Քուն չկա իսպառ... 15 լույս 16 զարհուրելի գիշեր անցուցի. 5 ժամը (առավոտյան) զարկել էր, որ քնեցի, այն էլ 7-ին զարթեցա քորից և ցավից։ Քրտինք ունեի»։* Նույն տեղը։

Հունվարի 16—17.— *Բերդի հիշատակարանում նշում է հիվանդության մերթ հարաբերական բարելավումը և մերթ՝ վատացումը։*
Նույն տեղը։

Հունվարի 17.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։*
Երկերի լիակատար ժող., *IV*, 298։

Հունվարի 18—20.— *Բերդի հիշատակարանում նշում է հիվանդության փոփոխական ընթացքը։* Նույն տեղը։



Սմբատ Շահազիզ

Հունվարի 20.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։*
Երկերի լիակատար ժող., *IV*, *298*։

Հունվարի 21—22.— *Բերդի հիշատակարանում նշում է վիճակի հարաբերական բարելավումը։* Նույն տեղը։

Հունվարի 22, առավոտ.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Հունվարի 23—24.— *Բերդի հիշատակարանում նշում է «եղընջյան տենդի» արտահայտվելը։* Նույն տեղը։

Հունվարի 25.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Նույն տեղը։

Հունվարի 26—27.— *Տենդը շարունակվում է։* Նույն տեղը։

Հունվարի 28.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Հունվարի 29—30.— *Հիվանդության ընթացքի մեջ փոփոխություն չի նկատվում։* Երկերի լիակատար ժող., *IV*, *298*։

[Հունվար?].— *Նամակ-երկտող ընկերոջը (Անանիա Սուլթանշահին)։ Գրում է, որ բերդում կմնա տակավին 6—8 ամիս ամենաքիչը. նամակն ուղարկում է «այլ ճանապարհով». «Եթե նամակս հասնի ձեռքդ, դուցե այլ նամակներ դրեմ մանրամասն տեղեկություններով քո հարցրած և մեզ հետաքրքրած հարցերի մասին...»։* Երկերի լիակատար ժող., *IV*, *255*։

Փետրվարի 1.— *Տեսակցում է Հովհ. Սահրատյանի և Ա. Սուլթանշահի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV*, *298*։

Փետրվարի 2.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Փետրվարի 3—7.—*Հիվանդության ընթացքի մեջ փոփոխություն չի նկատվում։* Երկերի լիակատար ժող., *IV*, 298—299։

Փետրվարի 7.— *Երկտող Ուդովին (?)։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV*, 299։

Փետրվարի 8.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, բժշկի (?), Ղ. Խաֆաֆյանի և Մադդաղինեի հետ։* Նույն տեղը։

Փետրվարի 8—9.— *Բերդի հիշատակարանում նշում է հիվանդության վատթարանալը։* Նույն տեղը։

Փետրվարի 10.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Փետրվարի 10—14.— *Բերդի հիշատակարանում նշում է վիճակի հարաբերական բարելավումը։* Նույն տեղը։

Փետրվարի 11.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Փետրվարի 15.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Երկերի լիակատար ժող., *IV*, 299։

Նույն օրը.— *Վիճակն սկսում է վատթարանալ։* Նույն տեղը։

Փետրվարի 16—18.— *Շարունակվում է նույն վիճակը։* Նույն տեղը։

Փետրվարի 18.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Փետրվարի 18—21.— *Շարունակվում է նույն վիճակը։* Երկերի լիակատար ժող., *IV*, 299։

Փետրվարի 21—22.—*Բերդի հիշատակարանում նշում է. «Ցեղինճը [տենդը] արդեն քանի օր է թույլ է, բայց հաղը և կուրծքիս ցավը իսպառ բամեց ուժս»։* Նույն տեղը։

Փետրվարի 22.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի հետ։* Նույն տեղը։

Նույն օրը.— *Հ. Խալիբյանի և Գ. վ. Այվազովսկու համախոհներից Գր. ավագ քահանա Սուքիասյանը Ալեքսանդր Լազրիչին (Թայիրյան?) ուղղած նամակում հայտնում է, թե Նոր-Նախիջևանի քաղաքացիների մեջ օրեցօր սաստկանում է երկպառակությունը, և որ՝ «սասված ինքն անկարող է հանգցնել երկպառակության այդ հրդեհը»։ Ինչպես երևում է նամակի հետագա տողերից, Խալիբյանի և Այվազովսկու դեմ ժողովրդի հուզմունքն այնքան ուժեղ է եղել, որ Խալիբյանը շտապ հեռագրել է Նովորոսիյսկու և Բեսարաբիայի զինվորական դեներալ-նահանգապետին, իսկ վերջինս, Պետերբուրգում խորհրդակցելով ներքին գործերի մինիստրի հետ, հեռագրով հրամանագրում է Կ. Հայրապետյանին՝ հայտարարել ժողովրդին, որ «ոչ ոք չհամարձակվի՝ Այվազովսկուց բացի այլ իշխան կամ առաջնորդ ճանաչել և նույնիսկ խոսել նրա դեմ, հակառակ դեպքում պատասխանատու է քաղաքագլուխը»։* Մատենադարան, Երիցյանի ֆոնդ, *թղթ. 149, վ. 76*։

Փետրվարի 22—23.— *Հիվանդության ընթացքի մեջ փոփոխություն չի նկատվում։* Երկերի լիակատար ժող., *IV*, 299։

Փետրվարի 23—24.— *Բերդի հիշատակարանում նշում է. «Ավելեմ մանավորապես»։* Նույն տեղը։

Նամակներ է գրում Ղ. և Ս. Նալբանդյաններին։ Չեն պահպանվել։ Նույն տեղը։

Փետրվարի 24.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ՊԲԼ, ֆ. А. Ф. Сорокина.

Փետրվարի 25—26.— *Բերդի հիշատակարանում նշում է. «Մինչև մարտի 1-ը, որ չեմ գրել, եղինճը դրեթե աներևույթանում է, բայց կուրծքիս ցավը և հազը, ինչպես և վերևը ասված է, հոգիս հանեց»։*

Երկերի լիակատար ժող., *IV, 299։*

Մարտի 1.— *Տեսակցում է Ղ. Նալբանդյանի, Մագդաղինեի, Գոհարինեի, Հովհ. Սահրատյանի և Ա. Սուլթանշահի հետ։*

Նույն տեղը։

Նույն օրը.— *Կատարում է վերջին գրանցումը Բերդի հիշատակարանում։*

Նույն տեղը։

Մարտի 4, 5, 15, 19 և 25.— *Նալբանդյանի նամակները Սորոկինի միջոցով հանձնվում են եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Մարտի 30.—*Ցարը հավանություն է տալիս Լոնդոնի ռուս պրոպագանդիստների (Գերցենի և ընկ.) հետ հարաբերություններ ունենալու մեջ մեղադրվողների գործի առթիվ Սենատի տված «կարծիքին»։* М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 224.

Ապրիլի 8.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Ապրիլի 9.— *Պետական խորհուրդը հաստատում է կառավարող Սենատի կայացրած դատավճիռը՝ Լոնդոնի պրոպագանդիստների հետ հարաբերություններ ունենալու մեջ մեղադրվողների գործի վերաբերյալ։* М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 223.

Ապրիլի 15.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

Ապրիլի 27.— *Սենատի դռնբաց նիստում հայտարարվում է Լոնդոնի պրոպագանդիստների հետ հարաբերություններ ունենալու մեջ մեղադրվողների դատավճիռը։*

М. Лемке, Очерки освобод. движения 60-х годов, 224.

Նալբանդյանն ստորագրություն է տալիս, որ Սենատի դռնբաց նիստում դատավճիռն իրեն հայտարարված է։

«Գայֆար», *1923, № 12—13, 9»*

Ապրիլի 29.—*Պետերբուրգի գեներալ-նահանգապետ Սուվորովը Պետրոպավլովյան բերդի պարետ Ա. Ֆ. Սորոկինին է հայտնում իրեն ի կատարումն հաղորդված պետական խորհրդի՝ «բարձրագույնս հաստատված» կարծիքը՝ «Լոնդոնի վտարանդիների հետ հակաօրինական հարաբերություններ» ունենալու մեջ մեղադրվողների գործի վերաբերյալ։*

Սուվորովն ավելացնում է, որ իր կողմից «առաջարկված է բանտակարգության վարչության 2-րդ դեպարտամենտին՝ անհապաղ կարգադրություն անել վճիռն ի կատար ածելու՝ Նիկոլայ Սերնո-Սոլովևիչի, Պավել Վետոշնիկովի և Նիկոլայ Վլադիմիրովի նկատմամբ 15-րդ հատորի 541-րդ հոդվածի հիման վրա, իսկ ինչ վերաբերում է Նալբանդյանին, ապա մինչև նրա մասին ներքին գործերի մինիստրի կողմից կարգադրություն լինելը, նա պիտի հանձնվի Ս.-Պետերբուրգի օբեր ոստիկանապետի տնօրինությանը։

Երկերի լիակատար ժող., *IV, 322—324։*

Նույն օրը.— *Պետրոպավլովյան բերդի պարետ Սորոկինը, երրորդ բաժանմունքի գլխավոր պետին զեկուցելով Պետերբուրգի զինվորական գեներալ-նահանգապետ Սուվորովի՝ իրեն ի կատարումն հաղորդած պետական խորհրդի «բարձրագույնս հաստատված կարծիքը», խնդրում է թույլտվություն՝ ի կատար ածելու Սուվորովի կարգադրությունը։*

Նույն տեղը։

Մայիսի 7.— *Սուվորովը, երրորդ բաժանմունքի գլխավոր պետ վ. Ա. Դոլգորուկովին հայտնելով, որ Սենատի որոշումը՝ Նալբանդյանին ոստիկանության հսկողության տակ Ռուսաստանի հեռավոր քաղաքներից մեկը, ներքին գործոց մինիստրի հայեցողությամբ, աքսորելու մասին՝ չի կատարված, քանի որ բերդի պարետ Սորոկինն այդ մասին դիմել է երրորդ բաժանմունքի թույլտվությունը ստանալու համար,— որի հետևանքով Նալբանդյանը մինչև այժմ մնում է բերդում,—Դոլգորուկովի «բարի հայեցողությանն» է թողնում խնդրել, որ «սրան համանման դեպքերում Ս.-Պետերբուրգի բերդի պարետին իրավունք վերապահվեր անհապաղ կատարելու քարձրագույն հաճության վրա հիմնված պահանջները»։*

Երկերի լիակատար ժող., *IV, 324—326։*

Մայիսի 9.— *Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը։* ПБЛ, ф. А. Ф. Сорокина.

[Մինչև մայիսի 13].— *Լազարյան ճեմարանի նախկին աշակերտի այցելությունը Նալբանդյանին՝ բերդում.*

«Դրսից Պետերբուրգում պատահելով, ես կամեցա տեսնվել վարժապետիս հետ։ Ես գնացի նորա մոտ գիներալ Սուլթանշահի և նորա [Նալբանդյանի] ղազարոս եղբոր հետ, որոնք միշտ այցելում էին նորան։ Ինձ տեսնելուն պես, նա փարվեցավ և սկսավ արտասվել։ Նա թեև առանձին կերպով ծերացած չէր երեվում, բայց շատ նիհարած էր, ճակատը բացված և կզակները դուրս ցցված։ Վարժապետ Նալբանդյանից համարյա ոչինչ չէր մնացել, առաջվա Նալբանդյանցին հիշեցնում էին միայն աչքերը, որ վտիտ և չոր դեմքի վերա շարունակում էին կրակի պես վառվիլ ու ցոլալ։ Իմ այցելությունս կարճատև եղավ, որովհետև չէի ուզում անհանգիստ անել նորան. առանց այն էլ իմ այցելությունս, իբրև նրբեմնական աշակերտի, շատ վրդովեց նորան։ «Դո՞ւ, ինչպե՞ս եղավ, որ դու եկար ինձ այցելության»,— հարցրեց նա։ Ես պատկանում էի հակառակ բանակին՝ Մսերի, էմինի, ուստի նա չէր սպասում իմ կողմից համակրություն. իմ այցելությունս նորա համար անակնկալ էր։ «Ես եկա,— պատասխանեցի ես,— հարցնելու, թե ի՞նչ է նշանակում հայերեն մտածել, որ դուք միշտ կրկնում էիր մեզ ձեր դասերի ժամանակ»։ Նա մի քանի խոսքով մեկնեց ինձ յուր ասածի միտքը, իսկ յուր կյանքի պայմանների մասին միայն այսքանը կարողացավ ասել՝ «Ա՜խ, այն Այվազը...»։ Ե. Շահազիզ, Միխայել Ղազարյան Նալբանդյանց, *1897, 116*։

ԱՔՍՈՐ ԵՎ ՄԱՀ

1865 մայիսի 13—1866 ապրիլի 14

1865

Մայիսի 13.— *Նալբանդյանին ուղարկում են Պետերբուրգի ավագ ոստիկանապետի մոտ՝ Ռուսաստանի հեռավոր քաղաքներից մեկը, ոստիկանության խիստ հսկողության տակ, աքսորելու համար։*

Երկերի լիակատար ժող., *IV, 326—327*։

Նույն օրը.— *Վերոհիշյալի մասին Պետրոպավլովյան բերդի պարետ Սորոկինը զեկուցագիր է ներկայացնում Ալեքսանդր II ցարին։*

Նույն տեղը, նաև՝
ЦГИАМ, ф. III отд., I эксп., 1862, д. 230, ч. 76, л. 7.

Նույն օրը.— *Համանման զեկուցագիր Սորոկինն ուղարկում է երրորդ բաժանմունքի գլխավոր պետին։*

Երկերի լիակատար ժող., *IV, 327—328*։

Նալբանդյանը բանտից դուրս գալուց հետո, մինչ աքսորավայր մեկնելը, ոստիկանության հսկողության տակ, ապրել է Պետերբուրգում, Խաֆաֆյանի բնակարանում՝ Васильевский Остров, Биржевой переулок, дом Меняева.

Գրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 354*։

Բանտից դուրս գալու ժամանակ Նալբանդյանի առողջական վիճակի մասին Մ. Տեր-Գրիգորյանը գրում է.

«... Հիվանդությունն այն տեղը հասուցել էր նորան, որ ճանաչել կարելի

չէր. այն աստիճանի լղարել էր, որ միայն ոսկոր ու կաշի էր գարձել. էլ առաջվա աշխուժությունն ու կենդանությունը վրան չէր մնացել. բոլոր բարեկամների ու ծանոթների սիրտը մղկտում էր, նայելով առաջվա կրակոտ հայկազնի ուրվականի վրա»։

Մ. Տեր-Գրիգորյան, Մ. Նալբանդյանցի հավատոտ կենսագրությունը. Ղ. Փարպեցու գրած թուղթը, XVIII—XIX։

Մայիսի 15.— *Ա. Ի. Գերցենը իր որդուն՝ Ա. Ա. Գերցենին ուղղած նամակում հայտնում է Սենատի դատավճիռը՝ Ն. Ա. Սերնո-Սոլովևիչի, Նալբանդյանի և մյուսների գործի վերաբերյալ։*

А. И. Герцен, Полн. собр. соч., т. XVIII, стр. 92.

[Մայիսի երկրորդ կեսը — նոյեմբերի վերջը], Պետերբուրգ.— *Գրում է «Նկատողություն» հոդվածը՝ Վարդան պատմիչի «Պատմության» վենետիկյան հրատարակության առթիվ։*

Երկերի լիակատար ժող., *III, 219—228։*

Մայիսի 25.— *Ա. Սուլթանշահը, Նալբանդյանին տված բժշկական վկայականում թվելով նրա հիվանդությունները,— վերին և ստորին վերջավորությունների խրոնիկական հոդացավ, աջ կողքատակի պլևրի խրոնիկական բորբոքում, թոքերի բշտիկների լայնացում, շնչափողի խրոնիկական կատառ, ընդախտ՝ օրգանիզմի լիակատար հյուծվածության և ուժասպառության պայմաններում,— գրում է.*

«Այս հիվանդությունները պահանջում են գործուն և ամենաեռանդուն բժշկություն, որին և ձեռնարկված է ներկայումս։

Հիվանդության տևողությունը հայտնի չէ, սակայն, հիվանդի կասկածելի վիճակը, համենայն դեպս, պահանջում է նրան բնակության ուղարկել տաք կլիմա ունեցող վայր՝ արմատապես բուժվելու համար, այլապես հիվանդի կյանքին անխուսափելի վտանգ է սպառնում...»։

Սակայն, հակառակ Ա. Սուլթանշահի այս վկայականին, ինչպես և հետագայում պրոֆ. Ս. Պ. Բոտկինի տեղեկանքին, թե Նալբանդյանի վիճակը շատ ծանր է և նրա կյանքին վտանգ է սպառնում, ներքին գործերի մինիստրությունը մերժեց Նալբանդյանին հարավային նահանգներից մեկն ուղարկելու միջնորդությունը, ինչպես նաև իր՝ Նալբանդյանի դիմումն այդ բովանդակությամբ, և նրան աքսորավայր նշանակեց Սարատովի նահանգի Կամիշին քաղաքը։

Երկերի լիակատար ժող., *IV, 314—315։*



Միքայել Նալբանդյան

Հունիսի 1, Պետերբուրգ.— *Գրում է դիմում արդարադատության մինիստրության պաշտոնյա Ն. Մ. Մեղենցովին՝ 1862 թ. հուլիսի 14-ին, ձերբակալության ժամանակ, իրենից վերցրած իր բոլոր թղթերը, աշխարհագրական քարտեզները և լուսանկարները վերադարձնելու մասին, որոնք 1863 թ. հունվարի 15-ին, քննիչ-հանձնաժողովը ուղարկած է եղել արդարադատության մինիստրություն: Դիմումի տակ նշված է հասցեն՝* Васильевский Остров, дом Меняева, на квартире Хафафова.

Երկերի լիակատար ժող., IV, 253:
ЦГИАМ, ф. III отд., I эксп., 1862. д. 230, ч. 76, л. 72.

Հունիսի 2.— *Պետերբուրգի Միտինինսկայա հրապարակում հայտարարվում է Ն. Ա. Սերնո-Սոլովևիչի դատավճիռը. «Ռուսական կառավարության դեմ Լոնդոնի պրոպագանդիստների չար մտադրություններին մասնակցելու, նրանց հանցավոր բովանդակությամբ արտասահմանյան երկերը տարածելու, չդատապարտված պետական հանցագործ Կելսիևի հանցավոր մտադրությունները գիտենալով, նրան իր մոտ ապաստան տալու և կառավարության գործողությունների ու կառավարման ձևը հանդգնաբար պարսավելու համար, Սերնո-Սոլովևիչին զրկել բոլոր իրավունքներից և ընդմիշտ աքսորել Սիբիր»:*

Государственные преступления в России в XIX веке, т. I, стр. 130.

Հունիսի 5.— *Ն. Ա. Սերնո-Սոլովևիչն աքսորվում է ընդմիշտ Սիբիր:*

Проф. **М. Н. Гернет**, История царской тюрьмы, т. II, изд. 2-е, 1951, стр. 345.

Հունիսի 20, Պետերբուրգ.— *Նալբանդյանի նամակը «Մեղու Հայաստանի» թերթի խմբագրին: Խնդրում է տպագրել իր «Հայտարարությունը» Հայաստանի քարտեզի վերաբերյալ: Հույս է հայտնում, որ չի մերժվի իր խնդիրը՝ «քանի որ էլ չեմ կարող հրատարակել մեր «Հյուսիսափայլի» մեջ, որովհետև նա արդեն լռած է»:*

«Մեղու Հայաստանի», 1865, հուլիսի 10, № 25, 196:

Նույն օրը, Պետերբուրգ.— *Գրում է «Հայտարարություն» 1862 թվականի հունիսին իր ձեռնարկած Հայաստանի աշխարհագրական*

քարտեզի հրատարակության գործը շարունակելն անհնարին լինելու մասին, հայտնելով, որ բաժանորդները քարտեզի գործակալներից կարող են բաժնեգինը ետ առնալ։

«Այժմ, որովհետև դեպքերի ընթացքն այնպիսի արդյունք բերին, որ ինձ անհնարին պիտի լինի այլևս իրագործել իմ գաղափարը, որ էր կազմել մեր հայրենիքի կարելի եղածին չափ ստույգ և ճշգրիտ քարտը, ուստի և հրատարակում եմ այս ներկա հայտարարությամբ, ամենեներուն լսելու համար, որ թե արդո հասարակությունից ո՛վ և իցե ստորագրված և արծաթ վճարելով տոմսակ առած է իմ վերը հիշված հայտարարության մեջ անվանված պարոններից, այնպիսի ազնիվ պարոնը թող հաճի տոմսակը վերադարձնելով այն արդո պարոնին, պահանջել յուր արծաթը»։

Երկերի լիակատար ժող., *IV*, *254*։

Հունիսի 27—28.— *Թիֆլիսում տեղի է ունենում համքարների ցույցը, որն արտահայտում էր ժողովրդի բուռն ցասումն ու բողոքը ցարական կառավարության հարկային ճնշումների դեմ։*

«Թատրոն», *1899*, *№ 2*, *57—75*, Նոր-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Հուլիսի 10.— *«Մեղու Հայաստանի» թերթում տպագրվում է Նալբանդյանի «Նամակ առ խմբագիրը» և «Հայտարարությունը»։*

Տե՛ս հունիսի 20։

Հուլիսի 26, Պետերբուրգ.— *Նամակ-երկտող եղրոջը՝ Սերոբ Նալբանդյանին։ Գրում է, որ իր լուսանկարը մոր համար ուղարկել է, և խնդրում է մոր լուսանկարը Ռոստովում հանել տալ ու իրեն ուղարկել անպատճառ։ Խոստանում է գնալու տեղից (աքսորավայրից) անմիջապես գրել, բայց դեռ մի քանի օր մնալու է Պետերբուրգում։*

Երկերի լիակատար ժող., *IV*, *255*։

Օգոստոսի 14.— *Ղ. Պալտազարյանը Մ. Մսերյանին ուղղած նամակում հարցնում է Նալբանդյանի վիճակի մասին, հայտնելով, որ Հնդկաստանից իրեն խնդրել են հաղորդել՝ Նալբանդյանն արդյոք դեռևս բանտո՞ւմն է, թե ազատված է բանտարկությունից։*

Մատենադարան, Մսերյանների ֆոնդ, *թղթ. 205*, *վ. 1138*։

Սեպտեմբերի 25.— *Նալբանդյանին ուղղած նամակում Ստ. Նազարյանը, հայտնելով, որ այլևս հնարավորություն չունի պահելու*

իր մոտ եղած նրա ձեռագրերն ու գրքերը, խնդրում է կարգադրություն անել. «Ձեզ հայտնի կլինի, որ դուք շատ ու շատ տարիներ առաջ իմ մոտ դրած ունիք չեմոդան ամենևին լիքը, թե ի՛նչ թղթերով կամ գրքերով՝ ինձ անհայտ է, որովհետև ինչպես կապած ու կաշկանդած հանձնել եք ինձ, այնպես ողջ և առողջ ձգած այնտեղ կա. նույնպես և ձեր վատաբախտ էժեն Սյուի «Թափառական հրեայի» թարգմանության օրինակները, և բավական բազմաթիվ...»։

Գրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 123/103*։
«Լումա», *1904*, *№ 6*, *167—169*։

Հոկտեմբերի 14(26), Բեռլին.— *Ա. Սուլթանշահի նամակը Նալբանդյանին։ Հայտնում է, որ ձեռք է բերում նրա պատվիրած գրքերը, և հարցնում է, թե էլ ի՞նչ գրքեր է ցանկանում։ «Շատ ու շատ պիտո է ուրախացնե ինձ քո պատվական գիրդ. մի՛ խնայիր, գրե՛, մի՛ թողուր բոլորովին միայնակ քեզ միշտ հարազատ, սիրող եղբորդ, և անխարդախ բարեկամիդ, քյասիբ և որբ Անանիա Սուլթանիդ»։ Վերջում, «Հետ գրության» մեջ ավելացնում է, թե՝ «Պարոն Հայրապետյանը վերստին միաձայն քաղաքագլուխ է ընտրված. շատ ու շատ ուրախ եմ. Vivat! Наша опять взяло!!!»։*

Գրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 123/114*։

[Հոկտեմբերի երկրորդ կեսը].— *Նալբանդյանը դիմում է ներքին գործերի մինիստրությունն, խնդրելով, որ Վյատկայի նահանգի փոխարեն իրեն աքսորավայր նշանակեն Տավրիկյան նահանգը, քանի որ իր կյանքը կարող է պահպանվել միայն բարենպաստ կլիմայական պայմաններում։*

Գրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 353*։

[Հոկտեմբերի երկրորդ կեսը].—*Պրոֆեսոր Ս. Պ. Բոտկինը Նալբանդյանին տալիս է բժշկական վկայական, նշելով, որ նա գտնվում է ծայրահեղ հիվանդ՝ թոքախտի փոխվելու սպառնացող վիճակում, և որ նրա կյանքը պահպանելու համար՝ նրան անհրաժեշտ է բնակվել առողջ և տաք կլիմա ունեցող վայրերում։*

Գրական բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 353*։
Երկերի լիակատար ժող., *IV*, *329—330*։

Հոկտեմբերի 29.— *Ներքին գործերի մինիստր Վալուևը երրորդ բաժանմունքի պետ Պոտապովին հայտնում է, թե ինքը նախապես*

Նալբանդյանի համար աքսորավայր է նշանակած եղել Վյատկայի նահանգը. սակայն, Պետերբուրգի գինվորական գեներալ-նահանգապետ Սուվորովի միջոցով ստանալով Ս. Պ. Բոտկինի՝ Նալբանդյանին տված բժշկական վկայականը, այս անգամ աքսորավայր է նշանակում նույն Վյատկայի նահանգի «հարավային» քաղաքներից մեկը։ Ստանալով Նալբանդյանի դիմումը՝ իրեն բնակավայր Տավրիկյան նահանգը նշանակելու մասին, Վալուևը կտրականապես մերժում է, Տավրիկյան նահանգն անհարմար գտնելով, պատճառաբանելով, թե Նալբանդյանը հայ է, իսկ այնտեղ հայեր են ապրում, ի վերջո, նա որոշում է Նալբանդյանին աքսորել Սարատովի նահանգի հարավային քաղաքներից մեկը, համաձայնելով, որ մինչև Նալբանդյանի հիվանդության թեթևանալը, նրան թույլ տրվի մնալու Պետերբուրգում։

ЦГИАМ, ф. III отд., I эксп. 1862, д. 230, ч. 76, лл. 82—83.

Նոյեմբերի 1.— *Ներքին գործերի մինիստրը երրորդ բաժանմունքի գլխավոր պետ Դոլգորուկովին գրում է, թե «Պետական քարտուղար Վալուևը, նկատի ունենալով Նալբանդյանի հիվանդագին վիճակը,— որը, ըստ պրոֆեսոր Բոտկինի վկայության, գտնվում է ծայրահեղ կացության մեջ՝ սպառնալով թոքախտի փոխվելու,— հանձնարարում է Նալբանդյանին աքսորել Սարատովի նահանգի հարավային քաղաքներից մեկը»։*

ЦГИАМ, ф. III отд., I эксп., 1862, д. 230, ч. 76, лл. 84, 85.
Երկերի լիակատար ժող., *IV, 328—330։*

Նոյեմբերի 3.— *Երրորդ բաժանմունքի գլխավոր պետ Դոլգորուկովը ներքին գործերի մինիստրին հայտնում է, որ, նկատի ունենալով (?) Նալբանդյանի հիվանդագին վիճակը, նրան Սարատովի նահանգը «բնակության» (?) ուղարկելու դեմ ինքն արգելք չի հարուցում։*

Երկերի լիակատար ժող., *IV, 330։*

[Նոյեմբերի 3].— *Երրորդ բաժանմունքը ժանդարմների կորպուսի 7-րդ օկրուգի պետին հայտնելով, որ Նալբանդյանը Լոնդոնի ռուս պրոպագանդիստների հետ «հանցավոր հարաբերություններ ունենալու մեղադրանքով» թողնված է խիստ հսկողության տակ և, որպես անբարեհույս անձն, աքսորվում է Սարատովի նահանգը՝ ոստիկանության խիստ հսկողության տակ», կարգադրում է, որ ժանդարմների կորպուսի կողմից Նալբանդյանի վրա «պատշաճ հսկողություն» սահմանվի։*

Երկերի լիակատար ժող., *IV, 330—331։*

[Նոյեմբեր].— *Ղ. Աղայանը ծանոթանում է Նալբանդյանի հետ։ Իր հիշողություններում նա գրում է. «Այդ ժամանակ ծանոթացա ես Միքայել Նալբանդյանցին, որ ազատություն ստացավ գեներալ Սուլթանշահի երաշխավորությամբ (?)... Հիմա նրան խոսել արգելել էին բժիշկները. թոքախտը մաշել էր նրան և առաջվա Նալբանդյանի տավերագիծն էր մնացել։ Բայց որքա՜ն զարդացել էր մտավորապես և որքա՜ն ետ թողել իրանից Ս. Նազարյանցին։ Համակիր չէր այլևս ո՛չ նրա լեզվին և ո՛չ նրա ուղղությանը, համարելով հետամնաց և պահպանողական։ Նալբանդյանցը աշխարհից կտրվելով, չէ՛ր կտրվել ժամանակակից գրականությունից, շարունակ կարդացել էր միայնության մեջ և շատ էր մտածել... Նա ասում էր. «Մեր ազգին հարկավոր է գիտական զարգացում. ««Հյուսիսափայլը» այդ դերը կատարել կարող չէ, հարկավոր են նոր ու թարմ ուժեր, ժամանակակից սոցիալական գիտություններին քաջ հմուտ»։ «... Նալբանդյանցի տաղանդը, մտավոր զարգացումը, լեզվի հարստությունը անհամեմատ բարձր էր Ռ. Պատկանյանից, իսկ բնավորությամբ շիփ-շիտակ էր Նալբանդյանցը, ինչպես ուղիղ վեր բարձրացող մի բարդի, մինչդեռ Պատկանյանցը մի տատասկ էր՝ փուված գետնի երեսին, որի մոտով անցնել չէր կարելի անպատիժ»։*

Ղ. Աղայան, Երկեր, *III, 85—86, 111։*

[Նոյեմբերի վերջը].— *Մեկնում է իր աքսորավայրը՝ Սարատովի նահանգի Կամիշին քաղաքը։*

Դեկտեմբերի 6.— *Նալբանդյանը, հիվանդ վիճակում, մեծ դժվարությամբ դեպի իր աքսորավայրը՝ Կամիշին գնալիս, անցնում է Կամենկո կայարանով։ Այդ մասին 1863 թ. դեկտեմբերի 8-ին, Նալբանդյանի եղբորը՝ Գրիգորին ուղղած նամակում, ոմն Մելքոն Օշակով, գրում է. «Հայտնեմ ձեզ, որ ամսույս 6-ին եխպորդ Մուխալին ժանտատումով տեղես անցուցել են. և պետք է կենա Քամիշին. բոշտավոյ ստանցիի սամոռիթելին ասմունքեն նա՛ պետք է ըլլա, և ասաց, որ խիստ պեթեր հիվանդ է եղած, չեխոթքա. տատհալաթ, տիժարությունով կերթա եղած. ես տեղս չիլնալով, տեղով չիմ կանալ գրելու. կարելի էր ես հոս ըլլայի նե, կտեսնվեի, զերե բոշտավոյ ստանցին դիմացս է»։*

Թղթակց բանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *վ. 137։*
Դիվան Մ. Նալբանդյանի, *338—339։*

Դեկտեմբերի 7.— *Մանր վիճակում, «առավել մեռած, քան թե կենդանի», հասնում է իր աքսորավայրը՝ Սարատովի նահանգի Կամիշին քաղաքը։*

Երկերի լիակատար ժող., *IV, 256։*

Դեկտեմբերի 7—11, Կամիշին.— *Անցկացնում է անկողնում՝ ուժեղ տենդով բռնված։* Նույն տեղը։

Դեկտեմբերի 13, Կամիշին.— *Նալբանդյանը գրում է առաջին նամակն աքսորավայրից Ք. Տ.-ին (?)։ Հայտնում է ճանապարհին կրած տառապանքները և ծանր վիճակում Կամիշին հասնելը. «Ամսիս 7-ին մտա Կամիշին առավել մեռած, քան թե կենդանի. ճանապարհին քաշածներս անտանելի էին իմ վիճակում, բայց դարձյալ վերջին ուժերս և ոգիներս գործ դնելով, դիմացանք։ Հասա այստեղ հազիվ, մի քնակարան գտա և 4 օր պառկած էի ջերմով բռնված. մինչև ստիպվեցա հրավիրել տեղվույս բժիշկներից մինը...»։ Խնդրում է իրենից շատ նամակ չպահանջեն, գրելու ուժ և զորություն չունի. «Ձայս տողերը գրում եմ, բայց կուրծքս և թիկունքս ցավից իրեղդում են»։* Նույն տեղը։

[1863—1865]

1. *Գրում է «Ժ. Ժ. Ռուսսոյի ճիշատակին» և «Հենրիկոս Թովմաս Բոքլի ճիշատակին» բանաստեղծությունները։*
Երկերի լիակատար ժող., *I, 104—106։*

2. *Թարգմանում է Ղազար Փարպեցու «Պուղբր» և գրում է ընդարձակ ծանոթագրություններ։*
Երկերի լիակատար ժող., *III, 231—290։*

1866

[Հունվարի 15], Կամիշին.— *Գավառապետի միջոցով դիմում է ներքին գործերի մինիստրին, խնդրելով թույլատրել իրեն մեկնել Սամարայի գավառը կումիսով բուժվելու՝ մայիսի 1-ից մինչև օգոստոսի 15-ը։* Երկերի լիակատար ժող., *IV, 258։*

[Հունվարի երկրորդ կեսը], Կամիշին.— *Նամակ բարեկամներից մեկին (?). պահպանվել է նամակի մի պատառիկը միայն. հայտնում է, որ արդեն դրել է գավառապետին՝ խնդրելով թույլ տալ մեկնել Սամարայի գավառը, մայիսի 1-ից մինչև օգոստոսի 15-ը, կումիսով բուժվելու, թեև մինչև մայիս դիմանալու հույս չունի, և դա ո՛չ թե իր դուշակությունն է, այլ բժիշկների կարծիքը։ Նշում է հիվանդության առավել սաստկանալը, ամեն օր կրկնվող ջերմը, հազը, քրտինքը... Վատ անունդը, ամեն քայլափոխին բարոյական անախորժություններ... «Բժիշկը ինձ պատվիրում է սաստիկ խաղաղություն հոգվո, բայց ինչո՞ւմ են խաղաղ. մի չնչին խաղաղություն ի՞նչերով է ձեռք գալիս, ի՛նչ օգուտ, գրել չեմ կարող, խոհեմությամբ հասկացիք»։* Երկերի լիակատար ժող., *IV, 260։*

Հունվարի 28, Կամիշին.— *Նամակ քրոջը՝ Գայանե Խաչատրյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 258։*

Փետրվարի 8, Կամիշին.— *Նամակ Գ. Նալբանդյանին, վերջինիս՝ հայրական ժառանգության շուրջը եղած տարաձայնությունների մասին գրած նամակի առթիվ։ Հայտնում է, որ իր ներկա վիճակում սիրտ չունի նրանց (եղբայրների) «անճոռնի կռիվները» մտիկ անելու, և քանի որ նրանց նամակներում էլ թույլ են տրվում «անպատշաճ և անճոռնի բաներ», ուստի և դրանց պատասխանելը իր գործը չէ։ Բայց, որովհետև իր «աքսորը և տկարությունը մինչև այժմ տևում են և դեռ կարող են երկարել», ուստի բարվոք է համարում ժառանգության հարցի մասին տեղի (Նոր-Նախիջևանի) Մագիստրատին մի խնդիր գրել (տե՛ս փետրվարի 11)։ Իր ուղածը «կատարյալ արդարություն է և իրավունք»։ Հորդորում է եղբորը՝ գործը վերջացնել առանց դատաստանական աղմուկի, որ անպատշաճ է։ Գրում է, որ մայիսի 1-ին գնալու է Սամարայի գավառը «խրմրզ» (կումիս) խմելու. այդ առթիվ արդեն մեկ ամիս է, ինչ դիմել է մինիստրին և հույս ունի այս օրերս հրամանն անպատճառ ստանալու։ Կվերադառնա օգոստոսի 15-ին, և եթե մինչ այդ իրեն թույլ չտրվի Նախիջևան գնալու, այդ դեպքում կարող են իրեն տեսության գալ։* Երկերի լիակատար ժող., *IV, 257—258։*

[Փետրվարի 8], Կամիշին.— *Նամակ Ղ. Նալբանդյանին։ Չի պահպանվել։* Երկերի լիակատար ժող., *IV, 258։*

Փետրվարի 9 կամ 10.— *Սիբիրյան աքսորավայրում, Իրկուտսկում, վախճանվում է Ն. Ա. Սերնո-Սոլովևիչը։ Մայիսի 1-ին Գերցենը «Կոլոկոլում» (№ 219) գրում է.*

«Ամենաառաքինի, ամենամաքուր, ամենաազնիվ Սերնո-Սոլովևիչ... նրան էլ սպանեցին... Նրա թշնամիները՝ ըստ իրենց դիրքի՝ ամենանզովյալ հետադիմականները,— պետական խորհրդի անդամ-

ները,— ապշած էին Սերնո-Սոլովևիչի արիությամբ, պարզությամբ, հերոսությամբ։ Այդ մարդն այնքան մաքուր էր, որ «Մոսկովսկիե Վեդոմոստին» չհայհոյեց նրան, քննության ժամանակ նրա մասին դանոսներ չգրեցին, թե նա՝ հրձիգ է կամ գող... Նա նոր ժամանակների գարեհան լավագույն ավետաբերներից մեկն էր Ռուսաստանում... Եվ նա սպանված է... Միխայլովը մեռավ, Սերնո-Սոլովևիչը մեռավ, Չերնիշևսկին հիվանդ է...»։

М. Лемке, Очерки освобод. дэижения 60-х годов, 228. 229—230.

Փետրվարի 11, Կամիշին.— Նամակ քրոջը՝ Գայանե Խաչատրյանին։ Նրան մխիթարելու համար, գրում է, որ վիճակն առաջվանից ավելի վատ չէ և եթե ասի, որ մի քիչ էլ լավ է՝ սուտ չի լինի. ջերմն ամեն օր չի բռնում, և բռնելիս էլ՝ առաջվա նման չի տանջում. հույսը կոմիսի և մեկ էլ՝ առաջիկա ձմեռը կամ տաք տեղ, կամ Նախիջևան գնալու վրա է, բայց Ղրիմը իրեն շատ լա՛վ կլիներ։ Մեծ դժվարությամբ է նամակ գրում, հոգին դուրս գալով։ Հայտնում է, թե հետևյալ փոստով Հովհ. Բերբերյանին էլ նամակ կուղարկի։ Գրում է, որ ահա տասը օր է, ինչ բուք-բորանը, սառնամանիքը իրեն տանը մեջ բանտարկել են. օրը երկու անգամ վառարան են վառում, բայց չի տաքացնում։ Երկեր լիակատար ժող., IV, 258—259։

Նույն օրը.— Խնդիր Նոր-Նախիջևանի Մագիստրատին՝ հոր ժառանգության շուրջը եղբայրների հարուցած վեճի առթիվ։ Հայտնում է, որ ժառանգության նկատմամբ Գրիգոր և Լուսաղեն եղբայրներից բացի, իրավունք ունեն նաև մայրը և քույրը՝ Գայանե Խաչատրյանը, հետևապես վերջիններիս չպետք է դրկել։ Չի պահպանվել։ Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 139, գ. 193, թթ. 21—22։

[Փետրվարի 11-ից հետո].— Նամակ Հովհ. Բերբերյանին։ Չի պահպանվել։ Երկեր լիակատար ժող., IV, 259։

Փետրվարի 12.— Սամարայից 60 կիլոմետր հեռավորության վրա գտնվող կոմիսի բուժավայրը մեկնելու մասին Նալբանդյանի դիմումի առթիվ, ներքին գործերի մինիստրը երրորդ բաժանմունքի պետին ուղղած գրությամբ «հնարավոր է համարում թույլատրել» նրան (Նալբանդյանին) մեկնել հիշյալ բուժավայրը։

ЦГИАМ, ф. III отд., I эксп., 1862, д. 230, ч. 76, л. 87,



Ղազարոս Ագայան

Փետրվարի 15.— *Երրորդ բաժանմունքի պետը ներքին գործերի մինիստրին հայտնում է իր համաձայնությունը՝ Նալբանդյանին, իր դիմումի համաձայն, կումիսի բուժավայրը մեկնել Թուլլատրելու մասին։* Գրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 355բ։

Ցարական սատրապները իրենց «բարեհաճությունը» ցույց տալու րոպեին շատ լավ գիտեին, որ Նալբանդյանի վիճակն անհույս է, և որ նա կվախճանվի մինչև բուժավայր մեկնելը (Նալբանդյանը մտադիր էր բուժավայր մեկնել մայիս ամսին, մինչդեռ մարտի 31-ին նա այլևս չկար)։

Նույն օրը.— *Մ. Մամուրյանը, ռեակցիոներներին մերկացնելով, հիշատակում է Շահբեդի (Նալբանդյանի) նամակը Ջամուռճյանի դեմ։* «Պաղին», 1866, № 114, 413։

Մարտի 14.— *Կ. Հայրապետյանը՝ հնդկահայ կտակների գործը «պարզելու» համար Եկատերինոսլավի նահանգապետի նշանակած պաշտոնյա Կատակազիին ուղղած իր բացատրականում գրում է, որ Նալբանդյանը հնդկահայ կտակների մասին հաշիվ չի տվել, որովհետև վերադարձի չորրորդ օրը ձերբակալվել և տարվել է Պետերբուրգ։ Ինչ վերաբերում է իտալական բանկի արժեւոմաներին, որ Նալբանդյանը բերել է կանխիկ դրամի փոխարեն, ապա 1863 թ. ապրիլի 8-ի հասարակական ժողովը ո՛չ միայն դա հակաօրինական չի համարել, որի համար Նալբանդյանը ենթարկվեր դատական պատասխանատվության (ինչպես կարծում է Կատակազին), այլև ժողովը Նալբանդյանի նկատմամբ իր երախտադիտությունն է արտահայտել, որ նա, իր առողջությունը և նույնիսկ կյանքը վտանգի ենթարկելով, գլուխ է բերել այդ կարևոր գործը։ Հայրապետյանը նշում է, որ ինքը, նկատի ունենալով գործի դժվարությունը, աշխատել է ընտրել վճռական, կրթված և գործունյա մի այնպիսի մարդու, ինչպիսին Նալբանդյանն էր, և եթե նա հանձն չառներ, կտակների գործը գլուխ չէր գա և հնդկահայերի ժառանգությունն ընդմիշտ կկորչեր։*

Այնուհետև, անդրադառնալով այն հարցին, թե ինչո՛ւ ընտրված երկու պատվիրակներից միայն Նալբանդյանն է մեկնել, Հայրապետյանը բացատրում է, որ Նոր-Նախիջևանի հասարակական ժողովի 1860 թ. հուլիսի 15-ի որոշման մեջ նախատեսված է եղել, որ եթե պատվիրակներից մեկը, ինչ-ինչ պատճառով, բացակայի, լիազորությունը պահպանում է իր ուժը մյուսի համար. այդ կետը վճռականորեն պահանջել է մտցնել որոշման մեջ Նալբանդյանն ինքը,

նշելով, որ այլ կերպ ինքը ուղղակի կհրաժարվի մեկնելուց, քանի որ գործը կարող է ձգձգվել և նույնիսկ տապալվել։

Այստեղից ակնհայտ երևում է, որ Նալբանդյանը նախօրոք գործը կարգադրել էր այնպես, որ ինքը մենակ մեկնի՝ ազատ լինելով երկրորդ անձնավորության ներկայությունից, որ խանգարելու էր իր քաղաքական գործունեությունը՝ ուղևորության ընթացքում։ Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. արխիվ, ֆ. 139, գ. 580, ԹԹ. 55—57։

Մարտի 29.— *Կամիշլին է գալիս Ղազարոս Նալբանդյանը։*

Ե. Շահազիզ, Դիվան Միխայել Նալբանդյանի, 346։

Մարտի 31, Կամիշլի.— *Նալբանդյանը վախճանվում է։*

Նույն տեղը։

Ապրիլի 2.— *Կամիշլին է գալիս Գրիգոր Նալբանդյանը։*

Նույն տեղը, 347։

Ապրիլի 7.— *Սարատովի նահանգապետից թույլտվություն է ստացվում Նալբանդյանի դիակը, նրա վերջին ցանկության համաձայն, Նախիջևան տանելու։* Նույն տեղը, 346։

Ապրիլի 7—13.— *Նալբանդյանի դիակը եղբայրները փոխադրում են Նոր-Նախիջևան՝ վոլգայով մինչև Ցարիցին, ապա երկաթուղով մինչև Կալաչ, իսկ այստեղ դնելով «Կոզակ» շոգենավը, Դոնի վրայով, բերում են Նոր-Նախիջևան։*

Ե. Շահազիզ, Դիվան Միխայել Նալբանդյանի, 346—347։
Երկերի լիակատար ժող., IV, 331։

Ապրիլի 13, երեկոյան.— *Նոր-Նախիջևանի նավահանգստում Նալբանդյանի դիակը դիմավորում է քաղաքի համարյա ամբողջ բնակչությունը, արտասուոր հանդիսավորությամբ, պատվով և երաժշտությամբ, ինչպես վկայում են պաշտոնական փաստաթղթերը և ժամանակակիցները։ «...Մեծարեցին մեծ պատվով... և բազում բյուրավոր ժողովրդոք եկին ընդառաջ, քնարով, տավղով, մեծաձայն փողովք և սրնգոք, և չքնաղ տեսարան եղև հայեցողաց»։*

Նույն տեղը։

Մերերի պատմածի համաձայն, Նալբանդյանի դագաղը տարել են քաղաք՝ Դոնի ափից մինչև Լուսավորիչ եկեղեցին փոված կարմիր մահուդի վրայով։ «Նոր կյանք» շաբաթաթերթ, 1907, № 13։

Նույն օրը.— *Հովհ. Բերբերյանը Նալբանդյանի մահվան մասին հեռագրում է Թիֆլիս՝ «Մեղու Հայաստանի» թերթին, որը հեռագիրն առանձին տպագրում է մահագիր։*

«Մեղու Հայաստանի», 1866, № 14։

Ապրիլի 14.— *Առավոտյան ժամը 9½-ին սկսվում է Նալբանդյանի թաղման արարողությունը։ Ժողովուրդը խումն բազմությամբ, Նալբանդյանի դագաղը ձեռքերի վրա պահած, տանում է քաղաքից հինգ կիլոմետր հեռավորության վրա գտնվող Սուրբ Խաչ վանքը. «Ամեն հարգող մարդ,— գրում է իր հուշերում Հովհ. Պապասինյանը,— աշխատում էր մի անգամ, մի քանի վայրկյան բռնել դագաղը»։*

Երկերի լիակատար ժող., IV, 331, 340—342։
Գրական թանգարան, նար-Նախիջևանի Մագիստրատի ֆոնդ։

Դա վատ, կենդանի արտահայտությունն էր այն ջերմ համակրանքի ու խոր հարգանքի, որ ժողովուրդը տածում էր իր իրավունքների պաշտպանությանը մինչև վերջ նվիրված մեծ հայրենասերի նկատմամբ, միաժամանակ դա մի ղորեղ ցույց էր հայ ռեակցիոներների և նրանց թիկունքին կանգնած ցարական կառավարության դեմ։

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԵՎ
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1829

Նոյեմբերի 2.— Նալբանդյանի ծննդյան տարին և օրը նշելով, հիմք ենք ընդունել 1853 թ. օգոստոսի 25-ին Քիշինևի Կոնսիստորիայի տված վկայականը (Գրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 178)։

Նալբանդյանը 1852 թ. ապրիլի 20-ին Մատթեոս Վեհապետյանին ուղղած «Հայտարարության» մեջ իր ծննդյան օրը համարում է 1829 թ. հոկտեմբերի 26-ը։ Ե. Շահազիզը հավաստի է համարում այս վերջինը և ոչ վկայականի տվյալը։ Նոյեմբերի 2-ը, Ե. Շահազիզի բացատրությամբ, Նալբանդյանի մկրտության օրն է, քանի որ, ըստ հայկական սովորության, մկրտության ծեսը կատարվում էր երեխայի ծննդյան յոթերորդ օրը, և այդ օրն էլ գրանցվում էր. այստեղից ենթադրվում է, որ Կոնսիստորիայի չափաբերական մատյանում արձանագրվել է մկրտության օրը (նոյեմբերի 2-ը) ծննդյան օրվա (հոկտեմբերի 26-ի) փոխարեն։ («Տեղեկագիր գիտ. և արվ. ինստիտուտի», 1931, № 5, էջ 7)։

Այնուամենայնիվ, մենք գերադասությունը տվել ենք Նալբանդյանի ծննդյան վկայականին, որպես վավերական փաստաթղթի։

1845

Նոյեմբեր.— Գ. Պատկանյանի «Արարատ» ամսագրում Նալբանդյանը տպագրել է չորս բանաստեղծություն՝ «Ժամանակ», «Մի՛ այլ յաստեղս լուծաճաճանչս Ուրանիա սիդասցի...», «Հիմարաց՝ ուսման վրա ունեցած կարծիքը» և «Հերքումն չիմարական կարծեաց, զոր անմիտք ունին ի վերայ ուսման»։ Թե այս չորսից հատկապես ո՛րը նկատի ունի Գ. Պատկանյանը, ասելով, թե Նալբանդ-

յանը հորինել է հանպատրաստից Մ. Եկենյան վարժապետի հետ մրցելիս՝ հայտնի չէ։

1846

Մարտի 27.— Նալբանդյանը Մ. Եկենյանի «դպրոցն» հաճախելու օրերին գրում է մի դրաբար շարադրություն (նոյն մասին). հետագայում նա այդ շարադրությունն իր դիմումի հետ միասին ուղարկում է Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությանը, որպեսզի վերջինս Մ. Եկենյանի «ուղղումներից» դաղափար կազմի նրա «դիտության» աստիճանի մասին։

Հայկական ՍՍՌ Գետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 2192, թ. 12։
Տե՛ս սոորև՝ 1847, մայիսի 26։

1847

Մայիսի 26.— Նալբանդյանը գրում է «Հայտարարություն Նոր-Նախիջևանի հոգևոր կառավարությանը՝ վարժապետ Մկրտիչ Եկենյանի մասին։ Վերջերս հայտաբերված այս փաստաթուղթը մի շարք նոր տեղեկություններ է պարունակում Նալբանդյանի և Մկ. Եկենյանի փոխհարաբերությունների մասին։ Իր «Հայտարարության» մեջ Նալբանդյանը նշում է, որ Եկենյանը հենց սկզբից վատ է տրամադրված եղել իրեն, որպես Գ. Պատկանյանի աշակերտի։ Նա միշտ կասկած է հայտնել իր շարադրությունների ինքնուրույնության մասին, ասելով, թե դրանք օրինակված են, իսկ երբ, վարժապետի կասկածները ցրելու համար, գրել է հենց Եկենյանի և ուրիշների ներկայությամբ, այս անգամ էլ այլ միղադրանք է բարդել, թե՝ նախապես անգիր արածն ես դրի առել։ Մինչդեռ Եկենյանը աղավաղել է նրա շարադրությունները, և որպես ապացույց, Նալբանդյանը հոգևոր կառավարության ուշադրությանն է հանձնում 1846 թ. մարտի 27-ի շարադրությունը՝ վարժապետի «ուղղումներով»։

Նալբանդյանը զգույշ, բայց որոշակիորեն հասկացնել է տալիս, որ Եկենյանը չունի գիտելիքների այն անհրաժեշտ պաշարը, որ գոհացնի իրեն. նա հրաժարվել է իր հետ քերականություն պարապելուց, պատճառաբանելով, թե դու (այսինքն՝ Նալբանդյանը) գիտես, ճարտասանությունը դատարկ բան է հայտարարել, իսկ տրամաբանություն, խոստովանել է, թե ինքն էլ «սովորած չէ». Եկենյանի իմացածը միայն պարզագրություն է, որը սովորելու ինքը (Նալբանդյանը) կարողություն չունի։

Հայկական ՍՍՌ Գետ. կենտր. արխիվ, ֆ. 54, գ. 2192, թ. 11։

Հոգևոր կառավարության գործերում պահվող այլ փաստաթղթերից երևում է, որ Եկենյանի աշակերտներից շատերը, հետևելով Նալբանդյանի օրինակին, նույնպես բողոքել են իրենց վարժապետի դեմ, նշելով, որ նրա «դպրոցում» հնարավոր չէ մի բան սովորել։

1848

Նոյեմբերի 12.— Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդարանի քարտուղար եղած շրջանում (1848 թ. հուլիս—1853 թ. հուլիս) Նալբանդյանը մեծ մասամբ լինելով Քիշինևում,— որտեղ դտնվում էր առաջնորդարանը,— երբեմն, բուժվելու նպատակով, կամ պաշտոնական գործերով եղել է Օդեսայում, Խերսոնում, Սիմֆերոպոլում, Թեոդոսիայում կամ այլուր։

«Տարեգրության» մեջ նշելով Նալբանդյանի՝ այդ քաղաքներում լինելու ժամանակը, գերազանցապես հիմք ենք ընդունել այն փաստաթղթերը, որոնց տակ նա սովորություն է ունեցել տարեթվի և ամսաթվի հետ միասին նշանակել նաև վայրը։

1853

Հունիսի 5.— *Հ. Խալիբյանի այս, ինչպես և հուլիսի 3-ի և 1854 թ. մայիսի 8-ի նամակները գրված են Մ. Եկենյանի ձեռքով։*

Հուլիսի 6.— *Նալբանդյանի դիմումը Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի կոնսիստորիային, որով խնդրում է ծննդյան վկայական։*
Երկերի լիակատար ժող., IV, 311։

Հուլիսի 11.— *Ամենայն հավանականությամբ, իրեն հետապնդող ոստիկանությանը մոլորեցնելու նպատակով, Մոսկվա մեկնելուց առաջ, Քիշինևում Նալբանդյանը լուր է տարածած եղել, թե պաշտոնական գործով դնում է Իզմայիլ։*

Հոկտեմբեր.— *Պաշտոնական փաստաթղթերը ցույց են տալիս, որ Նալբանդյանը դասավանդել է Լազարյան ճեմարանի առաջին և երկրորդ դասարաններում։ Այստեղ բերված նախկին ճեմարանցու վկայությունը, թե Նալբանդյանին ինքն աշակերտել է երրորդ դասարանում՝ իրականությանը չի համապատասխանում։*

1854

Հունվարի 25.— *Մ. Մսերյանն իր անթվակիր նամակում, ուղղված Հավանաբար Ս. վ. Ջալալյանին, հատկապես նշում է, որ*

Ստ. Նազարյանը մեծ ջանք է գործադրել Նալբանդյանին ձերբակալությունից ազատելու համար։

«Ս. Ե. Նազարեանց,— գրում է Մ. Մսերյանը,— յետ երաշխաւոր զանձն կացուցանելոյ վասն Նալբանդեանի, սուտ վկայութիւն ևս առեալ ի բժշկէ դհիւանդութենէ նորա, արգել մինչև ցայսօր զկատարումն պահանջողական հրամանի տեղակալին կովկասեան սահմանաց՝ ծանուցելոյ ի Մագիստրատէն Նոր-Նախիջևանայ ի պոլիցիայն տեղւոյս։ Եւ ո՛չ այս միայն, այլև բազում ինչ գրեալ առ Իվան Դաւիթիչ Դէլեանովն ի Պ. Բուրգ, յորդորեաց և հաւանեցոյց զնա պաշտպան կալ ստահակին ամենայն զօրութեամբ, և զամենայն հնարս ի գործ դնել յազատութիւն նորա ի ձեռաց կաթողիկոսին»։

«Հայմա», 1901, գիրք Ա., 288։

Մայիսի 19. — *Նալբանդյանը Լազարյան ճեմարանի վարչությանը ստորագրություն է տալիս, որ իրեն տեղյակ են դարձրել Մոսկվայի հոգևոր կառավարության 1854 թ. մայիսի 10-ի գրության մասին։*

МГОИА, ф. Лаз. института, д. 179, л. 7.

Մայիսի 26, Մոսկվա.— *Ինչպես պարզվում է 1854 թ. հուլիսի 27-ին Ե. Լազարյանին ուղղած Մ. Վեհափետյանի գրությունից, Նալբանդյանը մտադիր է եղել Պետերբուրգում տեսնվել Հովհ. Լազարյանի հետ և խնդրել վերջինիս միջնորդությունը Մոսկվայի համալսարանն ընդունվելու համար։*

ЦГИАЛ, ф. 880, 1853, д. 312.

Սեպտեմբերի 2.— *Ինչպես հայտնի է, Նալբանդյանի դիմումը մերժվել է՝ նրա տված անբավարար քննության պատճառով («Անտիպ երկեր», էջ 389)։ Քննական թերթիկի վրա, հազիվ նշմարելի է «отказано» մակագրությունը՝ առանց ստորագրության։ Թերթիկի ներքևի մասում, ազատ տարածության վրա, Նալբանդյանի ձեռքով գրված է.* «Документ обратно получил, Михаил Налбандов». *Նույնը Նալբանդյանը կրկնել է իր դիմումի վրա՝* «документ»-*ը փոխարինելով* «свидетельство» *բառով (խոսքը Լազարյան ճեմարանի տված վկայականի մասին է)։*

Սակայն, առաջին անհաջողությունից հետո Նալբանդյանը չի հրաժարվել Մոսկվայի համալսարանում սովորելու մտքից. ինչպես երևում է, նա 1855 թվականին կրկին դիմել է, այս անգամ իբրև իսկական ուսանող նույն (բժշկական) ֆակուլտետն ընդունվելու

մտադրությամբ։ Քննական թերթիկում Նալբանդյանի ստացած գնահատականները դարձյալ գոհացուցիչ չէին։

Քննական թերթիկի վերջին սյունակում, Նալբանդյանի անվան դիմաց գրված է՝ «отк»., *այսինքն՝* «отказать» («Общий список на звание студента, с показанием среднего вывода показаний каждого». Медицинский факультет.—МОГИА, ф. 418, д. 489, л. 16). *Մոսկվայի համալսարանի արխիվում Նալբանդյանի վերաբերյալ այլ փաստաթղթեր դեռևս չեն հայտաբերված, որոնք սպառիչ կերպով պարզեին, թե ե՛րբ է նա ընդունվել, որքա՛ն է տևել նրա ուսման ընթացքը համալսարանում, և թե որո՛նք են եղել նրա մերժվելու իսկական պատճառները։ Մեր կարծիքով այս վերջին հարցում դեր է խաղացել այն հանգամանքը, որ Նալբանդյանը Մոսկվայի ուսումնականատանը ճանաչված էր իբրև քաղաքականապես անբարեհուսա անձնավորություն։ Այդ տեսակետից ուշագրավ է Լազարյան ճեմարանից Նալբանդյանի ստացած վկայականի վրա ինչ-որ մեկի ձեռքով արված հետևյալ դիտողությունը.* «Возвращено за необяснением нет ли препятствия к слушанию лекций».

Եվ չնայած, որ Լազարյան ճեմարանի վարչությունը, անշուշտ, դարձյալ Մ. Վեհափետյանի միջնորդությամբ, Նալբանդյանին տված տեղեկանքում ավելացնում է, թե այդպիսի «արգելքներ չկան», այնուամենայնիվ, հավանական պետք է համարել, որ Մոսկվայի համալսարանի ռեկտորատը, տեղյակ լինելով Նալբանդյանի քաղաքական «անբարեհուսությանը», ամեն կերպ աշխատել է արգելել նրա մուտքը համալսարան։ Անբավարար գնահատականների պատրվակով քաղաքականապես «անբարեհույս» անձնավորությունների առջև համալսարանի դռները փակելը «օրինական» մի ձև էր. նման փաստերը քիչ չեն։ Մոսկվայի ուսումնական օկրուգի հոգաբարձու Ս. Գոլիցինը 1834 թ. հունիսի 28-ին համալսարանի պրոռեկտորին առաջարկում էր թույլ չտալ, որ Ն. Պ. Օգարևը դասախոսություններ լսի (Տե՛ս В. П. Гурьянов, К студенческой биографии Н. П. Огарева. «Вестник Московского университета», 1953, № 4, стр. 167). *Ինչպե՞ս է պատահել, ապա, որ երկրորդ մերժումից հետո էլ, այնուամենայնիվ, Նալբանդյանը որպես «ազատ» կամ «կողմնակի» ունկնդիր հաճախել է համալսարան և բժշկական ֆակուլտետում լսել դասախոսություններ։*

Այս հարցի վրա որոշ լույս է սփռում Մոսկվայի ուսումնական օկրուգի հոգաբարձուի 1855 թ. դեկտեմբերի 15-ի գրությունը համալսարանի խորհրդին։ Գրության մեջ ասված է. «30-го ноября за

№ 3549, я имел честь сообщить, что государь император изволил всемилостивейше разрешить допущение в университет неограниченное число студентов по всем факультетам...» (МОГИА, ф. 418, д. 25, л. 6—7).

Ցարի այս «բարեհաճ» կարգադրությունը հնարավորություն էր տալիս համալսարանի ռեկտորատին մեղմելու խստությունները, մասնավորապես բժշկական ֆակուլտետի նկատմամբ, մանավանդ, որ պատերազմի հետևանքով բժիշկների պահանջը մեծացել էր։

Պետք է ենթադրել, որ ահա այս պայմաններում Նալբանդյանին հաջողվել է թուլյավություն ստանալ, որպես ազատ ունկնդիր, լսելու բժշկական ֆակուլտետի դասախոսությունները։

Սեպտեմբերի 11, 16 և 23.— *Ս. Ի. Զևլենոյը, նախքան Հովհ. Լազարյանի կարգադրությունն ստանալը, շտապել էր հեռացնել Նալբանդյանին՝ չտարակուսելով, որ կատարում է իր շեֆի կամքը։*

Սեպտեմբերի 20.— *Ս. Ի. Զևլենոյը Լազարյանների Մոսկվայի դրասենյակին հայտնում է, որ Լազարյան ճեմարանի հայոց լեզվի ուսուցչի պաշտոնակատար Միքայել Նալբանդյանը ստացել է աշխատավարձ տարեկան 350 ռ. հաշվով, ամսական 29 ռ. 16½ կոպեկ, այրիների և որբերի կենսաթոշակի համար պահվող երկու տոկոսը հանած՝ 28 ռ. 58¼ կոպեկ, որպիսի աշխատավարձով նա «բավարարված» է ատ սույն թվականի սեպտեմբերի 1-ը։*

МГОИА, ф. Лаз. института, д. 179, л. 16.

1855

Մարտի 5.— *Հակառակ ցարական կառավարության ձեռք առած միջոցառումներին, Գերցենի հրատարակությունները թափանցում էին Ռուսաստանի նույնիսկ ամենախուլ վայրերը։*

«Յուրաքանչյուրին հայտնի է,— դրում էր բարոն Կորֆը ներքին գործերի մինիստր Վալուևին,— որ մեզանում արտասահմանյան հրատարակությունների մշտական դրաքննության գոյության ժամանակ էլ չկար և չի եղել արգելված դիրք, որ անհնար լիներ ճարել. հենց այն ժամանակ, երբ կառավարությունն ամենախիստ կերպով հետապնդում էր լոնդոնյան հայտնի հրատարակությունները, վերջիններս Ռուսաստանում տարածվում էին հազարավոր օրինակներով և դրանք կարելի էր գտնել ամեն տան մեջ, եթե չասենք՝ ամենի գրպանում...»։ М. Лемке, Эпоха цензурных реформ, стр. 137.

1857

Հուլիսի 22.— *1857 թ. ամառը Նալբանդյանի արտասահման կատարած ուղևորության մասին Պատկանյանի հիշյալ նամակը միակ որոշակի վկայությունն է. այս կապակցությամբ իմաստավորվում է նաև Մ. Մսերյանի խիստ լակոնիկ նշումն իր օրագրում 1857 թ. օգոստոսի 28-ին, որով, հավանորեն նկատի ուներ Նալբանդյանի վերադարձը արտասահմանից. «Նալբանդյանն եկն» («Անտիպ երկեր», էջ 744)։ Տարօրինակն այն է, որ Նալբանդյանի բոլոր կենսագիրներն անխտիր, խառն ու շփոթ են ներկայացնում արտասահման կատարած Նալբանդյանի ուղևորությունների ժամանակն ու հանգամանքները, չնայած որ այդ կենսագիրներից երեքը ոչ միայն լավ ծանոթ էին Նալբանդյանին, այլև որոշ չափով մտերմական հարաբերությունների մեջ էին եղել նրա հետ, ինչպես, օրինակ, Միք. Տեր-Գրիգորյանը և Միք. Միանսարյանը, իսկ Նալբանդյանի մահվան առթիվ «Մեղու Հայաստանի» լրագրում տպագրված կենսագրական հոդվածի հեղինակ Ավետիք Խազեղյանը Նալբանդյանի հայրենակիցն էր և դպրոցական ընկերը, հետևապես պետք է, որ լավ ծանոթ լիներ իր նշանավոր դասընկերոջ կյանքի հանգամանքներին։ Սակայն, ուշագրավ է այն, որ նրանք երեքն էլ խոսում են Նալբանդյանի՝ արտասահման կատարած երեք ուղևորությունների մասին, չնայած, կրկնում եմ, շփոթված են թվականները։ 1857 թ. ուղևորության մասին ավելի հստակ է Ա. Խազեղյանի հաղորդածը. «1858 թվականի վերջերը (այսինքն՝ 1859 թ. մարտի վերջին—Ա. Ի.) Նալբանդյանցը տկարության պատճառով գնաց արտաքո սահմանի (ինչպես տարի մի առաջ էլ գնացել էր) և շրջեցավ Պոլիս (?), Փարիզ և Վեննա (?)...» («Մեղու Հայաստանի», 1866, № 19, էջ 147, ընդգծումն իմն է—Ա. Ի.)։*

Արծարծվող հարցի պարզաբանման համար որոշակի հիմքեր է տալիս նաև ինքը՝ Նալբանդյանը։ Ուշագրավ են հատկապես «Փաթաթական հրեայի» «Առաջաբանի» հետևյալ տողերը. «Մեր ազգի մեջ կան շատ և շատ անուսումն մարդիկ, ինչպես նաև պատվելի մեջ կան շատ և շատ անուսումն մարդիկ, ինչպես նաև պատվելի Մխիթարյանց մեջ, որոնց շատերին ես ինքս պատահել եմ, որոնք բացի Rosarium և Pater noster աղոթելուց, այլ բան չգիտեին» (Երկերի լիակատար ժող., հատ. II, էջ 68։ Ընդգծումն իմն է—Ա. Ի.)։ Պարզ է, որ «Մխիթարյանց շատերին» Նալբանդյանը չէր կարող պատահել ո՛չ Մոսկվայում, ո՛չ Պետերբուրգում, այլ միայն Վիեննայում կամ Վենետիկում։ Այս կապակցությամբ չի կարելի հաշվի

չառնել 1858 թ. «Հիշատակարանի» այն տողերը, ուր ասված է, որ ինքը՝ Կոմս Էմմանուելը «անցյալ տարի» (այսինքն՝ 1857 թ.) եղել է Մարիենբադում. «... Մոքո՞ւմդ է այն Լինդման անունով հաստատփոր և զվարճախոս բժիշկը..., որ անցյալ տարի տեսանք Մարիենբադումը»[1] (Երկերի լիակատար ժող., հատ. I, էջ 369—370)։ Բերված այս փաստերը հիմք են տալիս ասելու, որ Նալբանդյանը 1857 թ. ամառը «Հյուսիսափայլի» համար տառեր ու կլիշեներ բերելու նպատակով մեկնել է արտասահման, ամենայն հավանականությամբ՝ Վիեննա, Մարիենբադի վրայով։ Սակայն այստեղ անհրաժեշտ է ցրել մի տարակուսանք, որ կարող է ծագել «Թափառական հրեայի» «Առաջաբանի» կապակցությամբ։ «Թափառական հրեայի» թարգմանությունը տպագրության է հանձնված եղել 1856 թվականի հոկտեմբերին, իսկ այն լույս է տեսել միայն 1858 թվականի սկզբներին։ Հարց է ծագում. 1857 թ. ամառը Մխիթարյանների հետ ունեցած իր հանդիպման մասին Նալբանդյանն ի՞նչպես կարող էր հիշատակել մի գրքում, որ տպագրության է հանձնված եղել այդ հանդիպումից առաջ՝ 1856 թ. հոկտեմբերին։ Սակայն, նկատի ունենալով, որ «Առաջաբանը» թվագրված է հռոմեական թվանշաններով, հավանական պետք է համարել, որ այն («Առաջաբանը») Նալբանդյանը գրել է արտասահմանից վերադառնալուց հետո, երբ «Թափառական հրեայի» առաջին մամուլներն արդեն տպագրված էին, ուստի հարկ է եղել «Առաջաբանը» տպագրելիս թվակարգել հռոմեական թվանշաններով։

Ավելորդ չենք համարում ուշադրություն հրավիրել նաև մի այլ հանգամանքի վրա. 1857 թ., երբ Մատթ. Վահագետյանը գտնվում էր Մոսկվայում, Նալբանդյանն էր գրում հայերեն և ռուսերեն այն բոլոր գրությունները, որ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմական առաջնորդը հարկ էր համարում ուղղել պաշտոնական անձանց կամ հաստատություններին. Մատենադարանում պահվող այդ փաստաթղթերի սևագրությունները, որոնց գրության ժամանակը նշված է, 1857 թ. ընդհատվում են հունիսի 20-ով և վերսկսվում նույն թվականի սեպտեմբերի 2-ին. այդ հիմք է տալիս ենթադրելու, որ ընդհատումը տեղի է ունեցել Նալբանդյանի արտասահման կատարած ուղևորության պատճառով, մանավանդ, որ ընդհատման ամիսները (հուլիս—օգոստոս) համապատասխանում են Նալբանդ-

[1] Բուժավայր Չեխոսլովակիայի ժողովրդական դեմոկրատական հանրապետությունում։

յանի ուղևորության ամիսներին։ (Մատենադարան, Սիմոդի ֆոնդ, թեմական գործեր, թղթ. 27, վ. 9)։

Հուլիս .— Նալբանդյանը մտադրություն է ունեցել հուլիսին մեկնել Նոր-Նախիջևան. «Այս ամառ, հուլիսի վերջերին կամ կեսերին,— գրում է նա Գր. Սալթիկյանին 1857 թ. հունիսի 1-ի նամակում,— հույս ունիմ Նախիջևանում քեզ տեսանել» (Երկերի լիակատար ժող., հատ. IV, էջ 46)։ Հավանական պետք է համարել, որ Նալբանդյանն իր այս մտադրությունը չի իրագործել արտասահման մեկնելու պատճառով։ Տե՛ս 1857, օգոստոսի 22։

1858

Ապրիլի 29.— «Նամակ առ հրատարակողը» Նալբանդյանը գրել է ապրիլի 29-ին, ինչպես այդ նշված է նամակի տակ, սակայն «Հյուսիսափայլի» չորրորդ ամսատետրակը, որտեղ տպագրվել է նամակը, դրաքննությունը թույլատրել է ապրիլի 25-ին. այս հակասությունը, ըստ երևույթին, պետք է բացատրել նրանով, որ հիշյալ նամակը դրաքննության է ներկայացվել լրացուցիչ կերպով, երբ ամսատետրակն արդեն ստորագրված է եղել տպագրության։

Նոյեմբեր—դեկտեմբեր.— Այս ամիսներին «Հիշատակարանի» տպագրությունը «Հյուսիսափայլում» ընդհատվում է։ 1859 թ. հունվարի ամսատետրակում տպագրված «Հիշատակարանում» Նալբանդյանն այդ բացատրում է իր հիվանդությամբ. «... Սկսանում եմ ահա իմ «Հիշատակարանի» տարեկան շրջանառությունը, որ հիվանդությանս պատճառով քանի ամիս արդեն մնացած էր բարձի բողի» (Երկերի լիակատար ժող., հատ. I, էջ 386)։ Սրան հաջորդող տողերում արված ակնարկները հիմք են տալիս եզրակացնելու, որ իսկական պատճառը՝ այդ ժամանակ «Հյուսիսափայլի» և Նալբանդյանի դեմ սկսված հալածանքներն էին, ռեակցիայի ճնշումը, որին տեղի տալով, Նազարյանը Նալբանդյանին առաջարկել էր մեղմել տոնը։ (Երկերի լիակատար ժող., I, 387)։

Հավանական է, որ Նալբանդյանը դերադասել է չտպագրել, քան «մեղմել տոնը», կամ թե՝ գրաքննությունն արգելել է այդ ամիսների «Հիշատակարաններին» տպագրությունը։

Ակնարկն այն մասին, թե Բեդրադեն «խիստ շատ ուրախանում

է Կոմս Էմմանուելին հասած «անբախտության» համար, առավել հավանական է դարձնում մեր ենթադրությունը, որ խոսքը վերաբերում է «Հյուսիսափայլի» և Նալբանդյանի նկատմամբ գործադրվող ճնշումներին։

«Հյուսիսափայլը» արտասահման փոխադրելու միտքը Նալբանդյանի մեջ ծագում է, ըստ երևույթին, 1858 թ. վերջերին, երբ սկսում են խիստ հալածանքներ «Հյուսիսափայլի» դեմ և երբ Գ. վ. Այվազովսկին ներքին գործերի մինիստրին գրած իր լրտեսագրում առաջարկում է ամսագիրը փակել, և Նալբանդյանին պատժել օրենքի ամենայն խստությամբ։ Նալբանդյանի այդ մտադրությունը դաղտնիք չի մնացել նույնիսկ նրա գաղափարական հակառակորդների համար, ինչպես երևում է Իսահակյանցի ակնարկներից, որոնց առթիվ Նալբանդյանը նկատում է. «Պ. Իսահակյանցը թույլ է տալիս ինձ Անգլիա գնալ, հարուստ ընկերությունների անդամ դառնալ։ Տեսանո՞ւմ եք, սիրելի ընթերցողք, ինչպես բարի սիրտ ունի պարոնը. ամենևին խափան չէ իմ Անգլիա գնալուն... Ցնծա՛, Շահրեզ, աշխարհի ամենայն կողմը ճանապարհդ բաց է, պասպորտ տվողդ պատրաստ, ո՛ր օրիդ ես ապատում, ի՛նչ ես փտում Բեդուկալեում»։ (Երկերի լիակատար ժող., I, 372)։

«Հյուսիսափայլը» 1858 և 1859 թթ., մասամբ նաև 1860 թ., շնորհիվ Նալբանդյանի աշխատակցության, նրա կրակոտ հրապարակախոսական հոդվածների, նրա «Հիշատակարանի», գեղարվեստական արձակի և բանաստեղծությունների, շոշափում էր հասարակության համար կենսական նշանակություն ունեցող շատ հարցեր, բորբոքում էր պայքար, լայն հետաքրքրականություն էր առաջացնում, այդ է պատճառը, որ բաժանորդների թիվը հատկապես առաջին երկու տարում ավելի քան կրկնակի շատ էր, քան հետագա տարիներին. այսպես՝ 1858 թ. «Հյուսիսափայլն» ուներ 296 բաժանորդ (321 օրինակ), 1859 թ.՝ 342 բաժանորդ, այնինչ 1862 թ. բաժանորդների թիվն իջնում է մինչև 170-ի։ «Փարն», 1880, № 1, 76։

Նալբանդյանի նկատմամբ աշակերտության, և մանավանդ Ներսիսյան դպրոցի աշակերտության ջերմ վերաբերմունքի մասին են վկայում «Հյուսիսափայլի» 1860 թ. №№ 5 և 6-ի՝ Ներսիսյան դպրոցին պատկանող օրինակների վրա արված դիտողությունները։ «Հյուսիսափայլի» այդ համարներում տպագրված Կոմս Էմմանուելի «Հիշատակարանի» լուսանցքներում և տողամեջերին արված դիտո-

ղություններից բերում ենք առավել ուշագրավները. № 5-ի «Հիշատակարանի» վերնագրի տակ գրված է. «Կարդացի երկու անդամ. անմահ է անունդ. կեցցե՛» (էջ 378)։ Իսկ «Հիշատակարանի» առաջին պարբերության վերջում ընթերցողն ավելացրել է՝ «Ցանկալի կլիներ, որ յուրաքանչյուր հայ այդ ուղղությունը ունենար» (էջ 378). Հատվածի վերջում մատիտով գրված է՝ «Ով որ Կոմս Էմմանուելի անունը պարծանքով չի հիշիլ, թող նա ենթարկվի այն պատժին, ինչ պատժի ենթարկվեց Վասակը բանտում և Մեհրուժանը Սմբատիցը...» (շարունակությունը եղծված է, չի կարդացվում)։ Այնուհետև, թանաքով ավելացված է՝ «Հանգիստ քո ոսկերաց. երանի այն հային, որ կհետևի քո օրինակին»։

«Հյուսիսափայլի» նույն տարվա № 6-ի «Հիշատակարանի» վերջին էջի վրա ընթերցողներն իրենց ջերմ վերաբերմունքը Նալբանդյանի նկատմամբ արտահայտել են հետևյալ տողերով. «Անմահ է անունդ Հավիտյան հայ սերնդի մեջ», և ապա՝ «Անմոռանալի կմնա անունդ հայ սրտերի մեջ, սիրելի Մ. Ն. կամ Կ. Էմ.»։

«Հյուսիսափայլի» հիշյալ օրինակները պահվում են Ա. Մյասնիկյանի անվան Հանրային գրադարանի մամուլի բաժնում։

[1858]

«Ավսում է լսվելու համար».— Նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի II հատորի ծանոթագրություններում կարծիք է հայտնված, որ Նալբանդյանն իր այս երկը գրել է 1863—1864 թվականներին Պետրոպավլովյան բերդում և իբրև ապացույց բերված է «հեղինակի հղկված, մաքուր գրական լեզուն և ոճը»։ Մինչդեռ հոդվածի բովանդակությունը (կրքոտ բանակռիվ գրաբարամոլների դեմ, Նազարյանի ջերմ պաշտպանությունը՝ «Հանդես նոր հայախոսության» դրքի քննադատության առթիվ), ինչպես նաև հենց լեզուն ու ոճը վկայում են, որ այն գրված է 1858 թվականից ոչ ուշ։

Նալբանդյանի այս երկի «Լումայում» տպագրված տեքստը, որ ունի «Հառաջաբան» ենթավերնագիրը,—և որը թյուրիմացաբար դուրս է մնացել երկերի լիակատար ժողովածուի տեքստից,—հիմք է տալիս կարծելու, որ «Ասվում է լսվելու համարը» ոչ թե մի առանձին հոդված է, այլ լոկ առաջաբան հունական դիցաբանությանը նվիրված, մեզ անհայտ, մի աշխատության. «Առաջին անգամ,—գրում է Նալբանդյանը,— պատշաճ համարեցանք փոքր ի շատե հանդես հանել հայոց մանուկների առաջև Հունաստանի հին կրոնագիտությունը...»։ «Լումա», 1903, № 6, 24—26։

1858—1859

Նալբանդյանի առանձնակի դերը «Հյուսիսափայլի» հրատարակության գործում նշում է նաև Ալ. Երիցյանը. ««Հյուսիսափայլի» առաջին երկու տարիքը, որ ամսագրիս ամենաեռանդուն գործունեության տարիքն են, դեռ ևս մի ընտրություն կա (խոսքը նյութերի ընտրության մասին է—Ա. Ի.), մի կյանք է երևում։ Բայց այսուհանդերձ էլ արդեն ամսագրին այդ կենդանություն տվողը դրա օգնական տաղանդավոր Նալբանդյանցն է... Նալբանդյանցը աշխատում է կենդանացնել ամսագիրը յուր «Հիշատակարաններով», կամ «Մխիթար և Մխիթարյանք», «Ազգային ժառանգություն», «Մեռելահարցուկ» և այլ այսպիսի հոդվածներով...

«Հյուսիսափայլը» կարդացվում էր մանավանդ Նալբանդյանցի աշխատակցության ժամանակ։ Կարդացվում էր դա, որովհետև ոչ միայն յուր սակավաթիվ սիրողները աշխատում էին տարածել այդ ամսագիրը, այլև նույնիսկ առողները, ինչքանիք կարդում էին, կարծելով դրա ամեն մի տողի մեջ... յուրյանց վրա հարձակմունք տեսնել...»։

«Փարձ», *1880, № 1, 83—84։*

1859

Ապրիլի 15(27), Բեռլին.— *Կարելի է հավանական համարել, որ այս թվականով Նազարյանին ուղարկած հոդվածը՝ «Հյուսիսափայլի» 1859 թ. փետրվարի ամսատետրակում տպագրված «Հիշատակարանն» է («Հյուսիսափայլ», 1859, փետրվար, էջ 148—166. Հմմտ. Երկերի լիակատար ժող., հատ. I, էջ 395—410), որը նա պրել է Մոսկվա—Վարշավա—Բեռլին ճանապարհին, գնացքում, ինչպես ինքը վկայում է «Հյուսիսափայլի» ն. թ. օգոստոսի ամսատետրակի «Հիշատակարանում». «Ո՛վ Հիշատակարան... քո վերջին հատվածը չդրեցի՞, մինչ գնում էի շոգեշարժ կառքով...» (Երկերի լիակատար ժող., հատ. I, էջ 411)։ «Վերջին հատված» ասելով, Նալբանդյանը նկատի ունի «Հյուսիսափայլի» ն. թ. փետրվարի ամսատետրակում տպագրված «Հիշատակարանը»։*

Ապրիլի 29.— *Բոգդանովայի անունը հիշատակվում է նաև Նալբանդյանի ծոցատետրում՝* Md. Bogdanoff: *Մեր կարծիքով, դա ոչ թե օպերային պարուհին է, ինչպես ենթադրվում է (Անտիպ երկեր, էջ 722), այլ 60-ական թվականների ռևոլյուցիոն շարժման մաս-*

նակից, Չերնիշևսկու, Գերցենի և Ն. Սերնո-Սոլովևիչի հետ գործակցած ռուս հին ռևոլյուցիոներ Մարիա Արսենևնա Բոգդանովան։

«Սովետական գրակ. և արվեստ», *1952, № 6, «Ն. Գ. Չերնիշևսկու և Մ. Նալբանդյանի գաղափարական կապերի հարցի շուրջը»։*

Մայիսի 18.— *Այս ամսաթվով է նշված նաև ութերորդ (օգոստոսի) ամսատետրակի գրաքննության թույլտվության ժամանակը, որ, մեր կարծիքով, թյուրիմացության արդյունք է։*

Օգոստոսի 19.—*«Հյուսիսափայլի» 1859 թ. իններորդ (սեպտեմբերի) ամսատետրակի գրաքննության թույլտվության ժամանակը նշված է հոկտեմբերի 17-ը, մինչդեռ տասներորդ (հոկտեմբերի) ամսատետրակինը՝ օգոստոսի 19-ը։ Թյուրիմացության հետևանք համարելով այդ, նշել ենք ընդհակառակը։*

1860

Ապրիլի 6.— *Ակնարկն այն մասին, թե Պետերբուրգի հայերից ոչ ոքի թույլ չեն տվել թերթ հրատարակելու, վերաբերում է Մովսես Բուդաղյանին։*

Ռ. Պատկանյանի 1856 թ. օգոստոսին Գ. Քանանյանին ուղղած նամակից տեղեկանում ենք, որ Մ. Բուդաղյանը դեռ այդ ժամանակ (1856 թ.) մտադիր է եղել հրատարակելու հայերեն շաբաթաթերթ. «1858-ից Բուդաղյանը մտադիր է հայոց լրագիր (газета) հրատարակել շաբաթական, և անպատճառ մեր տառերով և մեր մոտ ցանկանում է տպել...»։ («Մուրճ», 1905, № 4, 87)։

Թե ե՛րբ է Բուդաղյանը ներկայացրել իր դիմումը գրաքննության գլխավոր վարչությանը, հայտնի չէ, սակայն բաժանորդագրությունն արդեն սկսած է եղել, որ 1860 թ. փետրվարի 11-ին ստանում է մերժումը։

«Հյուսիսափայլի» 1860 թ. մարտի ամսատետրակում, նույն թվականի մարտի 15-ի թվակիր հրապարակական նամակով, Մ. Բուդաղյանը հայտնում է, որ ի պատասխան իր դիմումի, «Անցյալ ամսո [փետրվարի] 11-ին ցենզուրայի գլխավոր կառավարությունը, փոխանակ թույլտվության, թղթով հայտնեց ինձ, թե առանձին պատճառներե հորդորված լինելով, չկարե բավականություն տալ իմ խնդրույս»։ Այնուհետև, Բուդաղյանն իր բաժանորդներին խնդրում է ևս ստանալ մուծած բաժանորդագինը։ («Հյուսիսափայլ», 1860, մարտ, 243—244)։

Հունիսի 27.— *Հ. Աճեմյանը 1860 թ. հունիսի 29-ի նամակում Կ. Հայրապետյանին գրում է, թե Նալբանդյանը Մոսկվայից Նոր-Նախիջևան է մեկնել հունիսի 24-ին։*

Դրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *123/187, թ. 54բ։*

Հուլիսի 19.— *Նալբանդյանի այս նամակի մասին հիշատակում է Հ. Աճեմյանը։* Դրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, *123/187, թ. 57ա։*

Սեպտեմբերի 6.— *Պետերբուրգի ուսումնական օկրուգի կառավարիչը հաստատում է համալսարանական խորհրդի որոշումը՝ Նալբանդյանին «Սանկտ-Պետերբուրգի կայսերական համալսարանի թեկնածուի» գիտական աստիճան շնորհելու մասին։*

Տե՛ս 1860, հոկտեմբերի 19։

[Սեպտեմբերի 6—հոկտեմբերի 15].— *Նալբանդյանը էջմիածնում կատուցվելիք դպրոցի օգտին նվիրում է հարյուր ռուբլի։*

Մատենադարան, Սիճոդի օրագրություններ, *թղթ. 51, վ. 196։*

Այս փաստի վրա մեր ուշադրությունը հրավիրեց Մատենադարանի դիտաշխատակից ընկ. Ա. Ադամյանը։

Հոկտեմբերի 19.— *Պետերբուրգի համալսարանի խորհուրդը Նալբանդյանին տալիս է վկայական (դիպլոմ), որ նա Արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-վրաց դրականության բաժնում ենթարկվելով քննության, հայոց լեզվից, հայոց պատմությունից, վրաց լեզվից, վրաց ժողովրդի պատմությունից, ազգաբնջանական լեզվից և ռուս դրականությունից ստացել է գերազանց, իսկ ռուսերենից, ֆրանսերենից և աստվածաբանությունից՝ լավ գնահատականներ։ Համալսարանի ուսումնական խորհուրդը Նալբանդյանին հատկացրել է արժանի թեկնածուի գիտական աստիճանին, որը սեպտեմբերի 6-ին հաստատվել է ուսումնական օկրուգի կառավարչի կողմից։*

Նալբանդյանի վկայականն ստորագրել են՝ համալսարանի ռեկտոր Պլետ Պլետնյովը, ֆակուլտետի դեկան Ա. Մուխլինսկին և համալսարանի խորհրդի քարտուղար՝ Ա. Սավինսկին։

Դրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ։

Հոկտեմբերի 22.— *«Գնացած թղթերի» մատյանում ևս երեք անգամ հիշատակվում են Խմբեռները, միանգամայն հավանական է, որ բառը գործածված է կոնսպիրատիվ նպատակով, և ոչ մի առնչություն չունի կրոնական այն ազանդի հետևորդների հետ, որոնց անողոք մերկացրել ու խարանել է Նալբանդյանը։*

Երկերի լիակատար ժող., *IV, 304—307։*

Նոյեմբերի 20—դեկտեմբերի 21.— *Ժամանակակիցների հիշողությունների համաձայն, Նալբանդյանը Պոլսում մի քանի օր հյուրընկալվում է Օտյանների ընտանիքում։ Ինչպես հայտնի է, «Սոս և Վարդիթեր» «Կրիտիկան» Նալբանդյանը նվիրել է Խաչ. Օտյանին՝ Դր. Օտյանի եղբորը. սրանց հայրը՝ Պողոս Օտյանը ազգային սահմանադրության գործիչներից էր, անդամ առաջին «քաղաքական ժողովի»։ Դեռևս պարզված չէ, թե ի՛նչ բնույթ է ունեցել Նալբանդյանի մտերմությունը Խաչ. Օտյանի հետ։ Նալբանդյանի գործած տպավորության մասին նույն հիշողություններում ասված է. «Կոմս էմմանուելի ազնիվ ոգին և բոցաշունչ ազատասիրությունը խոր տպավորություն գործեցին ունկնդիրներուն վրան, ինչպես լսած եմ բազմահիշատակ Գրիգոր Օտյանենն»։* «Բազմավեպ», *1917, № 10, 392։*

Դեկտեմբերի 25(26?).— *Նալբանդյանը Հ. Սվաճյանին 1860 թ. դեկտեմբերի 30-ին գրած նամակում Մեսինա մտած օրը ցույց է տալիս դեկտեմբերի 26-ը (Երկերի լիակատար ժող., հատ. IV, էջ 84), մինչդեռ «Ճանապարհորդության ընթացքը» նկատողություններում նշում է դեկտեմբերի 25-ը։*

Երկերի լիակատար ժող., *IV, 273։*

1861

Հունվար.— *Վ. Ի. Կելսիևի ցուցմունքները հիմք են տալիս կարծելու, որ Նալբանդյանը Գերցենի և նրա խմբի հետ ծանոթացել և կապեր է հաստատել 1861 թ. հունվարին. «Ես նրան հանդիպեցի Տրյուբների մոտ,— գրում է Վ. Ի. Կելսիևը,— ուր (Տրյուբների դրախանութը — Ա. Ի.) նա մտել էր ռուսների հանդիպելու մտադրությամբ։ Ինձ համար հետաքրքրական էր զրուցել հայ մարդու հետ նրանց (հայերի) գործերի մասին, իսկ նա ուզում էր սիրաբար բաց անել ռուս մարդու առաջ և թարգմանիչ գտնել՝ միտումնավոր հարաբերությունների մեջ մտնելու համար։ Ամբողջ օրը մենք միասին անցկացրինք, եղանք մի քանի գրասենյակներում, որոնց հետ նա ուզում էր բանակցել՝ մետաքսի առևտրի վերաբերյալ. ես նրան շատ դուր եկա այն բանի համար, որ իմ համակրությունը հայտնեցի Թյուր-*

քիայի հայ ժողովրդի (народность) վերականգնման գաղափարին՝ Արարատից մինչև Միջերկրական ծովը։ Այդ օրը և երկու շաբաթվա ընթացքում, նրա Լոնդոնում եղած ժամանակ, ես մի քանի անգամ ցանկություն հայտնեցի լինել Ասիայում, ցավելով, որ չունեմ անձնագիր,—իսկ նա... խոստանում էր ինձ համար անձնագիր ձարել։

Այդ 1861 թ. սկզբին էր։ Նա գնաց Կովկաս [?], ես նրան մոռացա, ոչ մի նշանակություն չտալով նրա խոստմանը, երբ, հանկարծ, կրկին երևաց 1862 թ. հունվարին և հանդիսավորությամբ ինձ հանձնեց անձնագիրը» («Литературное наследство», № 41—42, А. И. Герцен, II, 1941, Москва, стр. 440).

Ինչպես Ն. Տուչկովա-Օգարևան, վ. Ի. Կելսիևը ևս Նալբանդյանին համարում է «սովորական առևտրական». այդ փաստը մի անգամ ևս վկայում է, որ Նալբանդյանը ինչպես Ռուսաստանում, այնպես էլ արտասահմանում, գործել է, խստիվ պահպանելով կոնսպիրացիայի կանոնները. հենց նույն Կելսիևն էլ վկայում է, որ «ավելի նշանակալից և ավելի ականավոր անձնավորությունները Գերցենի հետ մենակ էին տեսակցում» (նույն տեղը, էջ 418)։

Ապրիլի 12(24).—*«Գնացած թղթերի» ցանկում հասցեատիրոջ անվան տեղ գրված է «Լոնդոն». պարզ է, որ Նալբանդյանը զգուշության համար խուսափել է հասցեատիրոջ անունը նշելուց։ Անհավանական չէ, որ դա լինի Գերցենը։*

Օգոստոսի 22.— *«Մեղվի» հրատարակության արգելքը տևում է երկու ամիս, մինչև հոկտեմբերի 31-ը։ «Բարձրագույն» հրամանի մեջ, որով թույլատրվում էր «Մեղվի» հրատարակությունը, պահանջվում էր «ազգային ներկա գործոց վրա քացարձակ լռություն պահել»։*

«Մեղու», 1861, № 144, 201»

Մինչև սեպտեմբերի 27.— *Հ. Սվաճյանին ուղղած նամակներից մեկում Նալբանդյանը գրում է, թե հրապարակելու է մի «Հայաստարություն», որով պիտի մերկացնի Գ. վ. Այվազովսկու դավերը հնդկահայ կտակների հարցում, պատմելով «գործին բուն եղելությունը»։ Չի պահպանվել։ Հավանական է նաև, որ հնարավորություն չի ունեցել իրագործելու իր մտադրությունը։*

«Մեղու», 1862, № 172, 197—199»

Սեպտեմբերի 27—հոկտեմբերի 24.— *Դուրս գալով Կալկաթայից, Նալբանդյանը, մինչև Սուեզ հասնելը, մոտ մեկ ամիս մնացել է Ճանապարհին, մեծ մասամբ Մադրասում և մի քանի օր էլ Ցեյլոն կղզու Գալլ քաղաքում. «Կրիտիկայում» խոսելով օդային հոսանքների առաջացման և ուղղության մասին, Նալբանդյանը գրում է. «Երկու անգամ կանգնելով հնդկական Մադրասի նավահանգստում և, մի քանի օր մնալով Սեյլան կղզու Գալլ քաղաքում (point de Calle), ես նույնպես վայելած եմ այս բնության զվարթարար պարգևը, էշ նահատակ եղած լինելով ցերեկվա գժոխային ջերմությունից» (Երկերի լիակատար ժող., հատ. III, էջ 159—160)։ Հայտնի է, որ Նալբանդյանն շտապում էր օր առաջ մեկնել Կալկաթայից («Դիվան», էջ 188), սակայն, առայժմ հնարավոր չեղավ պարզել, թե ի՛նչն է նրան հարկադրել այդքան ժամանակ մնալու Մադրասում և Ցեյլոնում։*

Նոյեմբերի 20.— *«... Իր ազատական դրոշի... բռնության ձեռոք ծալված ըլլալուն արտմատիք լուրը» ասելով, «Մասիկը», ամենայն հավանականությամբ, նկատի ուներ էջմիածնի Սինոդի 1861 թվականի հունիսի 12-ի որոշումը «Հյուսիսափայլի» մասին, ըստ երևույթին, Պոլսում և Զմյուռնիայում լուրը չափազանցնելով, «Հյուսիսափայլը» արդեն փակված էին համարում։*

Տե՛ս սույն «Տարեգրություն», 1861, հունիսի 12։

1862

Ապրիլի 16(28).— *Ի. Ս. Տուրգենևի նամակը Ա. Ի. Գերցենին՝ վերջինիս նույն թվականի մարտի 30-ի (ապրիլի 11-ի) նամակի պատասխանը։ Հայտնում է, որ Նալբանդյանն իր վրա թողել է շատ լավ տպավորություն։*

«NN-ը իսկապես սքանչելի երիտասարդ է, և ես նրան անկեղծորեն սիրեցի»։ «Современник», 1913, кн. 9, стр. 5.

[Մայիսի 16].— *Քննիչ-հանձնաժողովին տված «ցուցմունքներում» Նալբանդյանը նշում է, որ ինքը Փարիզից մեկնել է մայիսի կեսին, այնտեղ մնալով մոտ մեկ ամիս։ Բեռլինի «Մանկո-Պետերբուրգ» հյուրանոցի տված հաշվեթղթից երևում է, որ Նալբանդյանը Բեռլինում է եղել մայիսի 17-ին (նոր տոմարով 29-ին). այստեղից կարելի է եզրակացնել, որ, իրոք, Նալբանդյանը Փարիզից մեկնել*

է մայիսի կեսին, այսինքն՝ 15-ին կամ 16-ին։ Այս դեպքում տարակուսանք է հարուցում Տուրգենևի նույն թվականի մայիսի 21-ի երկտողը Նալբանդյանին, գրված Փարիզում, թե ինքը մեկնում է «վաղը» (մայիսի 22-ի) երեկոյան։ Հավանական է, սակայն, որ հիշյալ երկտողը գրելիս Տուրգենևին հայտնի չէր, որ Նալբանդյանն արդեն մեկնել էր։

Մայիսի 25-ին կամ 26-ին.— *Նալբանդյանի՝ Պետերբուրգ հասնելու ճիշտ օրը դեռևս չի որոշված. նշել ենք այն ժվյալը, որ նա հաղորդել է քննիչ-հանձնաժողովին։*

Երկերի լիակատար ժող., *III*, 346։

[Մայիսի 26—հունիսի 25].— *Երկերի լիակատար ժողովածուի III հատորի ծանոթագրողները ենթադրում են, որ Նալբանդյանը «Նկատողություն» հոդվածը վարդան վարդապետի «Հավաքումն պատմության» 1862 թ. Վենետիկի հրատարակության մասին, գրել է Պետրոպավլովյան բերդում (էջ 484). Մինչդեռ կան հիմքեր այդ հոդվածի գրության ժամանակը սահմանելու 1862 թ. մայիսի 26-ից մինչև հունիսի 25-ը։*

Իր հոդվածի ծանոթագրության մեջ Նալբանդյանը գրում է. «Երկու օր սարաձից հառաջ, բազմաթիվ բարեկամք, խառնագոչյուն աղաղակներով իմ վերա գալով, բռնի հափշտակեցին այդ գիրք [*վարդան վարդապետի «Հավաքումն պատմության»*], որ տանին կարդան։ *Արդյոք գրքի բրդգված կտորները պիտի հետ առանա՞մ, այդ մասին ևս տարակույս ունիմ, որովհետև նոցա տանելը սովորական տանելու նման չէր, և մինչև սենյակիցս դուրս գալը արդեն բանի մի անգամ խլեցին իրարու ձեռքից» (Երկերի լիակատար ժող., III, 226)։*

Ընդգծված տողերը պարզորոշ ցույց են տալիս, որ Նալբանդյանն այդ հոդվածը գրել է մինչև բանտարկվելը, երբ նրա գարեկամներն ու ընկերներն ազատ էլ ու մուտ են ունեցել իր բնակարանը։ Քիչ հավանականություն կա ենթադրելու, որ այն գրված է բերդից դուրս գալուց հետո, մինչև աքսորավայր մեկնելը՝ 1865 թ. մայիսի 13-ից մինչև նոյեմբերի վերջը ընկած ժամանակամիջոցում։

[Հունիսի 27—28].— *Նալբանդյանի՝ Պետերբուրգից մեկնելու և Մոսկվա հասնելու ժամանակը նշվում է մոտավոր ճշտությամբ։ Քննիչ-հանձնաժողովին տված իր ցուցմունքներում Նալբանդյանն ասում է, որ Պետերբուրգում մոտ մեկ ամիս, և Մոսկվայում, հունիսի վերջերին, չորս օր մնալուց հետո, մեկնել է Նոր-Նախիջևան (Երկերի լիակատար ժող., հատ. III, էջ 346)։ Պաշտոնական փաստաթղթերից հայտնի է, որ նա Մոսկվայից մեկնել է հուլիսի 2-ին. նկատի ունենալով այդ տվյալը և այն, որ Նալբանդյանը Մոսկվայում մնացել է ընդամենը չորս օր, Պետերբուրգից Մոսկվա գալու ժամանակը պետք է ընդունել հունիսի 27-ը կամ 28-ը։*

Ղ. Խաֆաֆյանը քննիչ-հանձնաժողովին տված իր ցուցմունքներում նշում է, թե Նալբանդյանը Պետերբուրգից Մոսկվա է մեկնել հունիսի 24-ին կամ 25-ին։

Նոյեմբերի 25.— *Պետրոպավլովյան բերդից գրած Նալբանդյանի մոտ 125 նամակից մեզ է հասել ընդամենը 22 նամակ։ Հայտնի է, որ Նալբանդյանին թույլատրված էր նամակագրություն ունենալու միայն եղբոր՝ Ղազարոսի հետ. ահա թե ինչո՛ւ բերդից գրած բոլոր նամակները հասցեագրված են եղբորը. ըստ էության իր այդ նամակներով Նալբանդյանը խոսում էր դրսի աշխարհի իր բոլոր բարեկամների և ընկերների հետ, որ պարզորոշ երևում է յուրաքանչյուր նամակի բովանդակությունից։ «Տարեդրության» մեջ Նալբանդյանի՝ բերդից գրած նամակները նշված են Ղազարոս Նալբանդյանի անունով։*

Դեկտեմբերի 3.— *Պետրոպավլովյան բերդի պարետ Ա. Ֆ. Սորոկինը, ըստ երևույթին, «նորին կայսերական մեծության սեփական գրասենյակի» երրորդ բաժանմունքի պետի ցուցումով, մի առանձին տետրակում օրը-օրին նշել է, թե Ալեքսեևյան ռավելինի բանտարկյալներից յուրաքանչյուրին ե՛րբ է նամակ հանձնվել և ե՛րբ՝ նրանից իր ազգականին։ Նալբանդյանի վերաբերյալ առաջին գրանցումն արված է 1862 թ. դեկտեմբերի 1-ին, վերջինը՝ 1865 թ. մայիսի 9-ին։ Այնուհետև, առանց տարեթվի, միայն ամսաթվերով, նշված են Նալբանդյանի ստացած և ուղարկած նամակներից մի քանիսը, հետևյալ վերնագրով.* Передано для прочтения писем с разр. г. Потапова в А. Р. [Алексеевский равелин]. *Նալբանդյանի ուղարկած նամակները նշված են հետևյալ ամսաթվերով. հոկտեմբերի 1, 14, 25. նոյեմբերի 6, 12, 30։*

«Բերդի հիշատակարանում» Նալբանդյանն ակնարկներ է արել, որ իր նամակներից մի քանիսը չեն հանձնվել եղբորը, ինչպես ինքն է ասում՝ «մեռելկոխ» են եղել։ *Պետք է ենթադրել, որ Սորոկինի ցու-*

ցակում հատուկ նշված այս վեց նամակը ևս չեն հանձնվել հասցեատիրոջը։

Բոլոր տվյալներից երևում է, որ Սորոկինն իր տեղակում նշել է նամակների հանձնման օրը և ոչ թե դրանց գրության ժամանակը. այսպես՝ 3. XII. От Налбандова к брату, և այլն։ «Տարեգրության» մեջ նշել ենք՝ «1862. դեկտեմբերի 3.—Նալբանդյանի նամակը Սորոկինի միջոցով հանձնվում է եղբորը» և այլն։

Անհրաժեշտ ենք համարել Նալբանդյանի նամակների վերաբերյալ «Բերդի հիշատակարանի» և Սորոկինի ցուցակի տվյալները նշել զուգահեռաբար։

Սորոկինի տեղակից Նալբանդյանին վերաբերող հատվածը մեզ է տրամադրել ֆիլ. գիտ. թեկնածու Կ. Գրիգորյանը։

1863

Հուլիսի 29 և օգոստոսի 5.— Նալբանդյանին այցելողների թվում երկերի լիակատար ժողովածուի IV հատորում (էջ 288) նշված է ոմն Ե. Բ., մինչդեռ ձեռագրում Գ. Բ. է՝ Դանիել Բորոսյան Գարագաշյանի (կամ Քառաքաշի) անուն-հայրանվան սկզբնատառերը։

Հմմտ. Երկերի լիակատար ժող., *IV, 78 և 288։*
Գրական թանգարան, Նալբանդյանի ֆոնդ, վ. 1։

Նոյեմբերի 28.— «Մեռելկոխ» բառը,— որով Նալբանդյանն ակնարկում է, թե նոյեմբերի 26-ի իր նամակը բռնվել է բերդի պարեհի կամ երրորդ բաժանմունքի կողմից,— վերծանվեց «Բերդի հիշատակարանի» ձեռագիրը կրկին անգամ և ուշադիր ուսումնասիրելիս։ Անտիպ երկերում (էջ 266) և Երկերի լիակատար ժողովածուի IV հատորում (էջ 290) այդ բառի փոխարեն դրված են կախման կետեր (.....)։

1864

Հունվարի 7.— «Գրավանց, հազիվ...» բառերը վերծանվեցին «Բերդի հիշատակարանի ձեռագիրը» կրկին անգամ և ուշադիր ուսումնասիրելիս։ Անտիպ երկերում (էջ 267) և Երկերի լիակատար ժող.-ի IV հատորում (էջ 291) այդ բառերի փոխարեն դրված են կախման կետեր։

[Թեոդոր].— Գրում է «Ազգային Բշվառություն» հոդվածը։

Ապրիլի 18.— Մեկ տարվա ընդհատումից հետո, «Հյուսիսափայլի» առաջին ամսատետրակը լույս տեսավ 1863 թ. դեկտեմբերին, երկրորդը՝ 1864 թ. հունվարին և այլն։ Սրանով պետք է բացատրել, որ «Հյուսիսափայլի» այդ տարվա ամսատետրակների №№-ը չեն համապատասխանում ամիսներին։

Հունիսի 17.— Հայտնի չէ՝ Նալբանդյանը գրե՞ց իր բողոք-նամակը Խալիբյանին, թե՞ ոչ։ Անանիա Սուլթանշահը բացառապես այդ հարցի առթիվ գրված մի նամակում ամենավճռական և ամենախիստ կերպով դատապարտում է Գրիգորի ստորացուցիչ արարքը.

«Գիտի՞ս դուն,— գրում է նա,— որ եթե օրենքը եղբորդ տասը կտոր անելու ըլլար, դենե նա Այվազին ու Խալիբին ձեռքեն ազատվելու ամենևին չէր կամենար, չէր խոնարհեր, չէր ցածանար քեզ պես՝ նոցա նման աշխարհին հայտնի ավազակներուն գլուխ ճկել... Մեր պատվական եղբոր սուրբ, պատվական անունը և պատիվը խաղալիք անելը մի՛ համարձակիր և ռաստ էկող հանած, վարած փեղվենկներուն ոտքին տակը մի՛ ձգեր... Երբ Միքայելը ազատ լիներ, օրինավոր ու ոչ այսպես քո վարձդ կուտար...»։

Այնուհետև, Սուլթանշահը հայտնում է, որ իրենց (նկատի ունի իրեն և Նալբանդյանի մյուս բարեկամներին) պարտքն են համարում «Խալիբին ալ իմացնել, որ ամենևին չի համարձակի որին ասիս խնդիրքը լսելով Միքայելին գործին մեջ մտնելու և նրան անպատիվ անելու. նրա համար տասը անգամ կործանվիլը, մեյմը Խալիբին կամ Այվազին ձեռքով ազատվելեն աղեկ է»։

Ե. Շահազիզ, Դիվան Միհայել Նալբանդյանի, 333—335։

1865

Մայիսի 13.— *Մ. Տեր-Գրիգորյանի վկայության համաձայն, Պետրոպավլովյան բերդից դուրս գալուց հետո Նալբանդյանը վեց ամիս հիվանդ վիճակում մնում է Պետերբուրգում (Միք. Տեր-Գրիգորյան, «Մ. Նալբանդյանցի համառոտ կենսագրությունը», «Ղազար Փարպեցու Թուղթը» դրքին կից. Ս.-Պետերբուրգ, 1868, էջ XIX)։ Նալբանդյանի 1866 թ. դեկտեմբերի 15-ի նամակից հայտնի է, որ նա Կամիշլին է հասել 1865 թ. դեկտեմբերի 7-ին, ուրեմն, Պետերբուրգից աքսորավայր պետք է մեկնած լինի նոյեմբերի վերջերին։*

1865 թ. հունիսի 1-ին արդարադատության մինիստրության պաշտոնյա Ն. Մ. Մելենցովին Նալբանդյանի գրած դիմումի մեջ նշված հասցեից երևում է, որ նա Պետրոպավլովյան բերդից դուրս գալուց հետո, մինչև աքսորավայր մեկնելը, ապրել է Պետերբուրգում, Ղազարոս Խաֆաֆյանի բնակարանում (Васильевский Остров, дом Меняева).

Հայտնի է այն փաստը, որ Նալբանդյանի հանդիսավոր թաղման գործում Կ. Հայրապետյանի դեմ խալիբյանի և ուրիշների հարուցած մեղադրանքներից մեկն էլ այն է եղել, որ Նալբանդյանին նա թույլ է տվել օթևանելու Պետերբուրգի իր բնակարանում, որտեղ ամեն ինչ պատրաստ է եղել նրա (Նալբանդյանի) համար։ Կ. Հայրապետյանը չի հերքել այդ փաստը, ավելացնելով, որ «Նալբանդովի հետ մտերմական հարաբերության մեջ չի եղել, և եթե թույլ է տվել իր դրծակատարին թողնել Նալբանդովին ապրելու իր բնակարանում, ապա նա այդ արել է հիշելով Նալբանդովի մատուցած ծառայությունը Նախիջևան քաղաքին, երբ նա Հնդկաստանում ստացել է այնտեղ վաճառված հայերի կողմից Նախիջևանին կտակած դրամները» («Գրական ժառանգություն», առաջին գիրք, 1940 թ. էջ 79)։

Գործակատարը, որին Կ. Հայրապետյանը կարգադրել է թույլ տալ Նալբանդյանին ապրելու իր (Հայրապետյանի) բնակարանում, հենց նույն Ղ. Խաֆաֆյանն է, որի հասցեն նշված է Նալբանդյանի վերոհիշյալ դիմումի մեջ։

1862—1865

Մ. Նալբանդյանը Պետրոպավլովյան բերդում և բերդից դուրս գալուց հետո, մինչև աքսորավայր մեկնելը, ձեռքի տակ է ունեցել հետևյալ գրքերը, որոնց մի մասն օգտագործել է այդ ժամանակամիջոցում գրած իր աշխատություններում և նամակներում (տրվում է հիմնական գրականության ցանկը)։

Բերված աստղանիշը ցույց է տալիս, որ տվյալ գիրքը եղել է Նալբանդյանի սեփականությունը և այժմ պահվում է նրա գրադարանում՝ Գրական թանգարանում։

* Աբովյան Խ., Վերք Հայաստանի, Թիֆլիս, 1858։

Ագաթանգեղոս, Կ. Պոլիս, 1709։

Ագաթանգեղոյ պատմութիւն, Վենետիկ, 1862։

Ախվերդյան Գ., Սայաթ-Նովա, Մոսկվա, 1852։

* Աստվածաշունչ, Վենետիկ, 1805։

Մ. Տեր-Գրիգորյանը վկայում է, որ Նալբանդյանը բանտում ուսումնասիրելով հունական և հրեական լեզուները, «Աստվածաշնչի» հայերեն թարգմանությունը համեմատել է հունական թարգմանության և հրեական բնագրի հետ։

* Ավետիքեան Գ., Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815։

* Բագրատունի Ա., Տարերք հայերէն քերականութեան, Վենետիկ, 1864։

Եղիշէ վարդ., Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, հրատ. Յովհ. Քաթանեանց, Մոսկվա, 1861։

Նալբանդյանի գրադարանում պահվում են Եղիշեի 1859 և 1864 թթ. Վենետիկի և 1861 թ. Թեոդոսիայի հրատարակությունները։

* Զենոբ, Պատմութիւն Տարոնոյ զոր թարգմանի Զենոբ Ասորի, Վենետիկ, 1832։

Խորենացի Քերթողահայր, Պատմութիւն հայոց, Ամստերդամ, 1695։

Նալբանդյանի գրադարանում պահվում է՝ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, երկր. տպ., Վենետիկ, 1865։

Կիրակոս Գանձակեցի, Մոսկվա, 1858։

Նալբանդյանի գրադարանում պահվում է այս գրքի 1865 թ. Վենետիկի հրատարակությունը։

Կորիւն, Պատմութիւն վարուց և մահուան սուրբ եւ երանելւոյ սրբոյն Մեսրովպայ վարդապետի մերոյ թարգմանչի ի Կորիւն վարդապետէ, յաշակերտէ նորին, Վենետիկ, 1834։

* Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1793։

Նալբանդյանը մտադիր է եղել աշխարհաբարի վերածելու Ղ. Փարպեցու նաև «Պատմությունը»։

* Ղազարայ Փարպեցւոյ Թուղթ առ Վահան տէրն Մամիկոնէից, ի լոյս ընծայեաց Միքրտիչ էմին, Մոսկվա, 1853։

Ղ. Փարպեցու «Թուղթը» թարգմանելիս Նալբանդյանն օգտագործել է այս հրատարակությունը, որ պահվում է նրա գրադարանում։ Գրքի լուսանցքներում կան Նալբանդյանի ձեռքով արված նշումներ։

* «Մեղու» (Պոլիս), 1862—1863 թթ.։

* Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմութիւն հայոց, Մոսկվա, 1853։

Յովհաննու Իմաստասիրի Օձնեցւոյ, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833։

* Չամչեան Միխայէլ, Պատմութիւն հայոց, հատորներ Ա., Բ. և Գ., Վենետիկ, 1784—1786։

* [Պատկանյան Գ.], Շաւարշ երկրորդ կամ նորոգյալ Հայաստան, պատմ. բանաստեղծություն, Պետերբուրգ, 1864։

Պողոյեան Գ., Սոս և Վարդիթեր, Թիֆլիս, 1860։

Սերէոս եպիսկոպոս, *Պատմութիւն ի Հերակլէն, Կ. Պոլիս, 1851:*

Ստեփաննոս վարդ. Տարօնեցի *(Ասողիկ), Տիեզերական պատմութիւն, Փարիզ, 1859:*

* Վարդան վարդ., *Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862:*

* Վերդի Ջ., *Տրուվատոր, ողբերգութիւն չորս մասն բաժանված, երաժշտութիւն պ. Հովսեփի Վերդի, աշխատութիւն Հովհաննեսի Սահրատյանց, Ս.-Պետերբուրգ, 1864:*

* *Араго Ф.*, Биографии знаменитых астрономов, физиков и геометров, тт. I, II и III, СПБ., 1859 и 1861.

* *Араго Ф.*, Гром и молния, СПБ., 1859.

* *Араго Ф.*, Общепонятная астрономия, СПБ., 1861.

Араго Ф., Астрономия, III, кн. XX.

Бок К. Э., Будьте здоровы! Популярные медицинские беседы, СПБ., 1864.

Бокль Г.-Т., История цивилизации в Англии, пер. К. Бестужева-Рюмина и Н. Тиблена, изд. Н. Тиблена. 2 т., СПБ., 1864.

Бутковский Ал., Весталки, римские непорочные девы, М., 1862.

Гайм Р., Гегель и его время, пер. Сольяникова, СПБ., 1861.

Гервинус Г., История XIX века, СПБ., 1862—1864.

Даниель Г.-А., Краткий учебник географии, перев. Корсак, М., 1863.

* *Ильенков П. проф.*, Курс химической технологии, т. I, 2-е изд., СПБ., 1861.

* *Катрфаж А.*, Превращение в мире животных, пер. Журковского, под ред. Хотинского, СПБ., 1859.

* *Кольб Г. Ф.*, Руководство к сравнительной статистике, пер. А. Корсака, с добавл., изд. Н. Тиблена, т. I, СПБ., 1862.

* *Либих Юст*., Письма о химии, пер. под ред. Алексеева, тт. I и II, СПБ., 1861.

Նալբանդյանի գրադարանում պահվում է այս գրքի նաև 1855 թ. Մոսկվայի առաջերեն հրատարակությունը: «Կրթական» մեջ նշված է 1858 թ. Մյունխենի չորրորդ հրատարակությունը:

Лихутин М. Д., Русские в азиатской Турции в 1854—55 гг. Из записок о военных действиях Эриванского отряда, СПБ., 1863.

Льюис Г., Физиология обыденной жизни, пер. с англ. проф. Рачинского и Березенкова, М., 1864.

Маколей Т.-Б., Полное собрание сочинений, пер. под ред. Н. Тиблена и Г. Думшина, тт. I—XII, СПБ., 1860—1864.

Менделеев Д. И., Органическая химия, 2-е изд. исправл. и дополн., СПБ., 1863.

* *Молинари Г.*, Курс политической экономии, ч. I, СПБ., 1860.

Գրքի երկրորդ անվանաթերթի վրա, Նալբանդյանի ձեռքով, հավանորեն բանաուռմ, մատիտով գրված է՝

„Глупее и подлее этого сочинения едва ли я когда нибудь от рода читал. Примеч. Налбанд[ова]".

* *Патканов К.*, Исследование о составе армянского языка, СПБ., 1864.

* *Прескотт В.*, История царствования Филиппа II, короля испанского, часть I, СПБ., 1858.

Прудон П.-Ж., Война и мир, исследование о принципе и содержании международного права, 2 т., СПБ., 1864.

* *Ранке Л.*, Римские папы, их церковь и государство в XVI и XVII столетиях, пер. с немецкого, Берлин, 1834, Санктпетербург, 1842.

„Современник", 1858, № 12.

Токвиль Ал., Демократия в Америке, пер. А. Якубович, тт. I и II, Киев, 1860.

* *Фишер К.*, История новой философии, пер. Н. Страхова, изд. Н. Тиблена, тт. I и II, СПБ., 1862—1863.

* *Фоше Л.*, Очерки Англии, СПБ., 1863.

* *Цейс Густав*, Учебник всеобщей истории с точки зрения культуры, ч. I, СПБ., 1862.

* *Циммерман*, Общие физические явления или т. н. общая физика, СПБ., 1861.

* *Циммерман*, Теплота и главнейшия применения ея к технике, СПБ., 1861.

* *Циммерман*, Об электричестве и магнетизме, СПБ, 1861.

* *Шерр И.*, Всеобщая история литературы, СПБ., 1863.

Шлоссер Ф. К., История восемнадцатого столетия и девятнадцатого до падения французской империи, с особенно

подробным изложением хода литературы, тт. I и II., СПБ., 1858.

„*Энциклопедический словарь, сост. русскими учеными и писателями*", под ред. А. А. Краевского и П. Л. Лаврова, тт. I—VI, 1861—1863.

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

1866

Ապրիլի 16.— *«Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը հաղորդում է Նալբանդյանի մահը.*

«Ամսույս 13-ին Նոր-Նախիջևանից ստացանք մի հեռագրական լուր, որն որ, թեև ակամա և սրտի ցավոք, բայց ստիպված ահա հաղորդում ենք մեր ընթերցողներին։ Տարակույս չունինք, որ այս լուրը ամեն զգացող և բարեմիտ հայի սիրտը պետք է խորը խոցոտե։ Երեթե բոլոր հայ հասարակութիւնը ծանոթ աշխույժ և եռանդուն Միքայել Նալբանդյանը, իր ծաղիկ հասակումը փոխվել է առ ոտր, տրտմութեան մեջ թողնելով ո՛չ միայն իր անմխիթար ծնողը և ազգականներուն, այլ ամեն իրան ծանոթ ու բարեմիտ հայերուն, որոնց ամենքի համակրութիւնը, հարգը և սերը գրաված ուներ իր եռանդուն և աշխույժ գրութիւններովը, մանավանդ «Հյուսիսափայլ» բազմարդյուն և ընտիր օրագրի մեջ, «Կոմս Էմմանուելի հիշատակարանը» մակագրութեամբ։ Ցավում ենք, որ այժմ անձեռնհաս ենք այս մասին մանրամասն տեղեկութիւն հաղորդելու, որ ապագային ենք թողնում, բայց տարակույս չունինք, որ ամեն եշմարիտ և բարեզգաց հայ, մեզ հետ միասին, կցանկա նորա հոգուն հավիտենական հանգիստ...»։

Վերջում հոդվածագիրը հույս է հայտնում, որ «մի շքեղ և իրան արժանի շիրիմ զարդարե հայոց տարաժամ թառամած այս ծաղկի գերեզմանը»։

«Մեղու Հայաստանի», 1866, № 14, 107—108։

Ապրիլի 24.— *Բանահավաք և բանասեր Գեորգ Տեր-Ադեքսանդրյանը, իր վիշտն հայտնելով Նալբանդյանի մահվան առթիվ, ընդգծում է, որ «շատ քիչ են մեզանում առհասարակ նրա պես երիտասարդներ, որոնք իրանց գրչով շուտ ու մուտ լինեն ազգի հայութենին վերաբերած հարկավոր խնդիրներու։ Այնուհետև, հեղինակը վճռականորեն նշում է Նալբանդյանի բացառիկ դերը «Հյուսիսափայլ» ամսագրում. ««Հյուսիսափայլ» անունով ժուրնալը, կարող ենք հաստատ ասել, որ եթե ուներ արժանավորութիւն, դա էր միայն էս հանգուցյալի աշխատութիւններով, որոնք որ տպվում էին առհասարակ Կոմս Էմմանուել անունով»։*

«Վանեցական», 1866, № 7, 27։

Ապրիլ.— «Հայկական աշխարհ» ամսագիրը, հաղորդելով Նալբանդյանի մահվան տխուր լուրը, նրա երկերի հրատարակության հարցն է հարուցում. «Նալբանդյանի բոլոր հարգողներին չպիտի հուսահատեցնեն միայն կորուստի ցավը, այլ ամենեքյանս պիտի միշտ մտաբերենք, որ մեր առաջ դրված է, որպես գեղեցիկ հիշատակ, նորա ազնիվ և արթուն գրական աշխատությունը և անդադար գործունեությունը։ Ուստի նորա հարգողները պիտի աշխատեն, որ այդ ցրված աշխատությունները հավաքվեն միասին մի գրքում և կազմեն Նալբանդյանի արժանավոր հիշատակ»։ «Հայկական աշխարհ», 1866, № 1—2, 71։

[Ապրիլ].— Հովհ. Քուչուբեգյանը ռուսերենից թարգմանում է Թոմաս Մուրի մի բանաստեղծությունը, նվիրելով այն Նալբանդյանի հիշատակին. «Նվեր Կոմս Էմմաուելի հիշատակին. Պատանի երգիչ. իռլանդական երգ»։ Հետագայում այդ բանաստեղծությունը «Իռլանդական երգ (ռուսականից)» վերնագրով, առանց Նալբանդյանի անվան հիշատակության (հավանաբար գրաքննության արգելքով), տպագրվում է «Հայկական աշխարհ» ամսագրում։

«Հայկական աշխարհ», 1867, № 9, 377—378։

Տպագրում ենք ձեռագիր վարիանտը.

Դեպի կըռիվ պատերազմի
Պատրաստվելով պատանին,
Դեն է ձրգում յուր խաղաղ կյանքի
Օրերը քաղցր ու թանկագին...

Ձեռների մեջ քնար ու սուր,
Առաջ գընաց քաջի պես,
Նա ուրախ էր, և ո՛չ տըխուր,
Նա երգում էր երգ այսպես.

«Ո՛վ երգերի դու արձագանք,
Իմ հայրենիք սրբազա՛ն,
Դո՛ւ իմ ազգի թագ ու պարծանք,
Դո՛ւ պաշտելի հավիտյան։

Ահա՛ ըզդ այս իմ սուր սուսեր
Վճռե հարկեր ըշնամյաց,
Երգի՛ր, քընա՛ր, թո՛ղ ղոհ, նըվեր
Լինի իմ կյանք հայրենյաց։

Ահեղ կըռվի մեջ ղոհ դարձավ
Քաջ երգիչը վառ սիրով...
Եվ հավիտյան թառամեցավ
Մաղկած առույգ հասակով...

Նա դեն ձգեց յուր սուր սուսեր
Ալիքների մեջ այնտեղ...
Երբ հնչեցուց քնարի լարեր
Այսպես երգով փառահեղ.

«Ո՛վ իմ լարեր մեղմահնչիկ,
Ձեր հետ աճա երգեցի,
Ազատությո՛ւն, սե՛ր, հայրենի՛ք,
Ես ի սրտե խնդրեցի...

Վերջին անգամ չունիմ հընար,
Երգել իմ երգ այս տեղում,
Ուր շղթայքով սարկություն
Միայն իր ձայնն է հընչում...»։

Գրական թանգարան, Քուչուբեգյանի ֆոնդ, վ. 11, 41։

Ինչպես երևում է Քուչուբեգյանի պահպանված սևագրերից, նա ձեռնարկած է եղել գրել Նալբանդյանի հիշատակին նվիրված մի այլ բանաստեղծություն ևս։ Ձեռագրերում մնացել է միայն վերնագիրը և մի տող.

<Ի մահ Մ. Նալբանդյանցի>
Նվեր Մ. Նալբանդյանցի հիշատակին.
Նահատակ.
Ո՛հ, ինչպես դու դառը վիճակ...։

Հայտնի չէ՝ ավարտած եղե՞լ է այս բանաստեղծությունը, թե ոչ։

Գրական թանգարան, Քուչուբեգյանի ֆոնդ, վ. 12։

Մայիսի 21.— «Մեղու Հայաստանի» լրագրում տպագրվում է Նալբանդյանի Քաղման նկարագրությունը և համառոտ կենսագրությունը։ Հեղինակը՝ Ա. Խ. (հավանորեն՝ Ավետիք Խազեչյան, Նալբանդյանի դասընկերը Գաբր. Պատկանյանի պարոցում), հոդվածի սկզբում գրում է. «Աշխարհիս երեսին ամեն տեղ հազվագյուտ են լինում այնպիսի մարդիկ, որոնք իրանց քանքարով, աշխատությամբ և այլ հոգևոր հատկություններով ծառայում լինեն իրանց հասարակության օգտին։ Ուստի և այսպիսիների, մանավանդ վաղահաս մահը շատ զգալի է լինում նույն հասարակության համար։ Այսպես ահա՛. երիտասարդ Միքայել Նալբանդյանցի մահն էր, որ շատ զգալի եղավ բոլոր Նախիջևանի հասարակության համար...»։ «Մեղու Հայաստանի», 1866, № 19, 145—147։

Հունիսի 12.— Գ. Տեր-Ազեքսանդրյանը, «Մեղու Հայաստանի» լրագրի № 19-ում տպագրված Ա. Խ.-ի հոդվածից քաղելով, կենսագրական տեղեկություններ է հաղորդում Նալբանդյանի մասին։ Նշելով Նալբանդյանի մեծ ծառայությունը հնդկահայ ժառանգության ձեռք բերման գործում, հոդվածագիրը խուլ կերպով ակնարկում է նրա բանտարկության և աքսորի մասին. «Բայց էդ ժամանակից սկսած նրա օրերը անմխիթար անցկացան...»։

«Վաճառական», 1866, № 14, 56։

Հուլիսի 15.— Զմյուռնիայի «Մաղիկ» կիսամսյա հանդեսում Մ[իք]. Նալբանդյանի մահվան առթիվ Մ. Մամուրյանը գրում է.

«Թիֆլիսի «Հայկական աշխարհ» անուն ամսագրին մեջ կկարդանք հետևյալ գուժալի լուրը. «Նալբանդյանը վերջացրեց իր կյանքը ապրիլի 13-ին [պետք է լինի՝ մարտի 31-ին]։ Մի մարդ պակսեցավ Հայկական աշխարհից...

Կարճ եղավ Նալբանդյանի օրը, բայց անխորհուրդ չէր դա հավակացող հայերի համար։

Ա՜հ, Սիպերիայի սառնամանյաց պես ցուրտ են այս խոսքերը, ինչպես են պժգալի և դիվաշունչ «Օրևակին» մեջ գրված դամբանական մաղթանքը այս ազնատալի կորուստին վրա...

Իր կյանքը ուսմանց և գիտությանց նվիրող ուսումնական մը, իր հանճարը և գործունեությունը ազգի օգտին համար անդուլ գործող ազգասեր մը, իր անզուսպ և առույգ գրչով՝ արմատացած զեղծումները, նախապաշարումները և մոլությունները խափան ջնջելու համար աշխատող հայասեր մը, ազգին տունը փլող վտանգները մի առ մի ցույց տվող, անոնց դրպարտություններ փոշի դարձնող քաղաքագետ փաստաբան մը, ճշմարտության և ազատության համար հոգի և շունչ տվող գործոն իմաստասեր մը, վերջապես, Նոր-Նախիջևանի մանկտվույն համար քառասուն տարին ի վեր կտակյալ գումար մը ազատելու նպատակավ, իրև ազգային երեսփոխան Ռուսիայեն Հնդկաստան, Հնդկաստանեն յԱնգղիա կայծակի արագությամբ վազող և անհնարին տառապանք կրելեն ետև՝ իր ձեռնարկությունը ի կատար հանելով՝ քանի մը տարի առաջ առաջ փառոք Նոր-Նախիջևան դարձող բարերար պատանի մը Սիպերիայի [?] մեկ ամայի խորշը հանկարծ կվախճանի և «Հայկական աշխարհը» մեր մեջեն մարդ մը պակսեցավ կըսե... և «Օրևակը» անոր դիակին առջև կկենդա... ի՜նչ սառնարյուն... ի՜նչ դժոխային ժպիտ...

Չէ, մարդ մը չի պակսեցավ, տեր մը չընկավ հայոց աշխարհեն, մոլորյալ մը իր պատիժը չի գտավ, ինչպես ճեղվիթաբար կակնարկե պ. Չամուրճյանը, այլ Հայաստանի տխուր հորիզոնին վրա փայլող աստղ մը մարեցավ Նալբանդյանցի մահվամբը։ Նալբանդյանցը չէ՛ր այն մարդերու դասեն, որ կենաց ատորին աստիճանին վրա կսողան և ինչպես որ եկան, այնպես կդառնան ի հող, առանց ապրելու բարոյապես և մտապես։

Բայց ո՞ր հայը կղգա այսօր այս մեծ մարդուն արժեքը, ո՞վ պիտի նկարագրե անոր կյանքը, գործը և մահը, ո՞վ պիտի վերցունե այն վարագույրը, որով ծածկված են անշուշտ Նալբանդյանցի կենաց վերջին տարիներուն տանջանքը, ո՞վ պիտի պահանջե անոր դատապարտության պարագաները գիտնալ և քննել այն վճիռը, որով աքսոր գնաց։ Այս պաշտոնը ընդհանրապես բոլոր ազգին և մասնավորապես Ռուսաստանի ճշմարիտ հայոց կվերաբերի, վասնզի Նալբանդյանցի հանճարը բոլոր ազգը կգրկեր, վասնզի այս կամ այն կուսակցական մարդ չէր նա, այլ ընդհանրության։ Սակայն, ինչպես Արովյանը և իր մահը անհայտ և անվրեժ կմնան, նույնպես կմնան Նալբանդյանցը և իր մահը մոլեին մեջ...

... Նալբանդյանցը մեռած չէ՛, և ահա ձայն կարձակե Սիպերիայի խորեն.

Ազատությո՜ւն, գոչեցի, քեզ որոնա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ, քեզ դավ դնեն ջընամին.
Ես մինչ ի մահ, կախաղան, մինչև անարգ մահու սյուն,
Պիտի գոռամ, պիտ՝ կրկնեմ անդադար. ազատությո՜ւն։

Այս վանեմ և ապառնալից գոչումը, որ Նալբանդյանցի կենաց և մահու բոլոր խորհուրդը կպարունակե, իր մահարձանին վրա պետք է արձանագրել, ինչպես որ պետք է դրոշմվի ամեն հայ սրտի մեջ իրրև նվիրական կտակ մը, որուն գործադրությունը ապագա սերունդին հանձնված է։ Արդարև սկզբունքի մը համար

*մեռնիլ գեղեցիկ է, և այս տեսակ նահատակության արդյունքն է և պիտի ըլլա միշտ մարդկային ազգի հառաջադիմությունը, քանի որ ճշմարիտ կոչտ զորությունը թումբեր կկանգնե ժամանակիս հառաջադեմ հոսանքին դեմ, սակայն այս մահը, այս չարչարանքը պետք է հանդիսապես կատարվի, պետք է, որ նահատակը խաչը կռնակը առած, Գողգոթա լեռան գագաթը ելնե և այնտեղ խաչվի... և ոչ քեն չորս պատի մեջ, Սիպերիայի անծպելի սառերուն մեջ իրրև ոճրագործ ավազակ մը տանջվի։ Ի՜նչ օգուտ. քաղաքակիրթ դահիճը որչափ անագորույն, նույնչափ և վարպետ է, և մինչդեռ դաշույնը գաղտագողի անմեղին սիրտը կխոթե գողգողալով՝ աչքը նոին կդարձնե ու ականջները կգոցե, որպեսզի անոր աշաց ճառագայթները չի տեսնե, անոր սրտաշարժ խոսքերը չի լսե, չի վարանի, չի վրդովի և իրեն հետ չի վրդովին նաև հանդիսականները և արդարության ու վրեժխնդրության չի գոչեն...

Դարձյալ այս գգուշությունն ալ մամուլին տիրապետության ժամանակ անօգուտ է. վկա Լոնդոնի ռուսերեն Զանգակ լրագիրը. անօգուտ է, այո՛, վասն զի եթե Նալբանդյանցը Արովյանին պես անեհետույր լիներ անգամ, ազատասեր գրիչները չի պիտի դանգաղեին անոր նահատակության պարագաները փնտրել, երևան հանել և հռչակել, ինչպես որ այսուհետև երկարորեն ևս պիտի հռչակվին, անշուշտ, եթե ո՛չ ի Ռուսաստան, գեթ այլուր, վասն զի Նալբանդյանցը ինչպես կենդանության աեեն, նույնպես մահվանեն ետև պիտի գործե ազգին մեջ, քանի որ շղթան և սուրը չեն կրնար կաշկանդել և սպանել այն լուսատու գազափարները, որ հռետոր կանգնեցավ նա և որոնք իրրև ամպրոպային փոթորիկներ կորուստն թագակիր բռնավորներու գլուխներուն վրա, մինչև որ փայլակն ու կայծակը պայթին և քաղ ու գլուխ այրին, տոչորին. վասն զի Նալբանդյանցը հավատքի մը համար, ճշմարտության և ազատության հավատքին համար գոհ ընկավ, և այն, որ հավատ մ՚ունի, ինչպես որ Ջ. Ս. Միլլ կրսե, զորություն մ՚է ընկերական, որ մինակ շահ ունեցող իննսուն ու ինը անձերու ուժին կհավասարի, վասն զի (պ. Միլլին խոսքերին են) այն օրը, որ Երուսաղեմի մեջ առաջին մարտիրոսը քարկոծեցավ... ո՞վ կրնար երևակայել, որ քարկոծ եղող մարդուն կողմը այն ժամանակ ընկերության մեջ ամենեն զորավոր իշխանությունն էր... միևնույն եղանակավ Վորմսի ժողովին մեջ Վիթեմպերկի վանական մը ընկերական զորություն մը դարձավ, որ Սպանիո Կարլոս ե-ին և նույն վայրը գումարված բոլոր իշխաններուն զորություններեն գերագույն էր... Նալբանդյանցի ազատական հայրենասիրությունն զորություններն գերագույն էր... Նալբանդյանցի ազատական հայրենասիրությունն անդադար հրավեր մ՚ունի կարդալու մեզ, և ազգը նվիրական պարտք մը կատարելու...

«Ծաղիկ», հանդես կիսամսյա, 1866, հուլիսի 15, № 124, 489—491։

Հուլիսի 23.— «Արշալույս Արարատյանը» նույնությամբ արտատպում է «Վաեառական» լրագրի հաղորդած լուրը Նալբանդյանի մահվան մասին։

«Արշալույս Արարատյան», 1866, № 784։

Նույն օրը.— Նալբանդյանի մահվան առթիվ գրած հոդվածում Չամուռճյանը հատկապես ընդգծում է, որ նա «ընդդեմ քաղաքական կառավարության հայտնած ազատամոլ սկզբունքներուն համար Սիպիրիա [?] աքսորված էր...»։

Գազագած ռեակցիոներն իր միջնադարյան խավարամտությունը քարոզելու համար Նալբանդյանի մահվան առիթն իսկ օգտագործելով, այնուամենայնիվ

խոստովանում է, որ Նալբանդյանը «հանճարեղ և քանքարի տեր ուսումնական երիտասարդ մ'էր»։ «Երեակ», *1866, № 124, 217։*

Օգոստոսի 6.— *Նույնիսկ լիբերալ մամուլում խուլ վրդովմունք է առաջացնում Չամուռճյանի հիզվիթական հոդվածը՝ գրված Նալբանդյանի մահվան առթիվ. «Մասիսի» աշխատակիցը հայտարարում է, որ Չամուռճյանի կարծիքներն իրեն զզվանք են պատճառում, և բողոքում է, թե ինչպես Չամուռճյանը «Նալբանդյանցի հիշատակը կվատահամբավե, և հետո փարիսեցիական կեղծավորությամբ «աստված հոգին լուսավորե» կըսե...»։* «Մասիս», *1866, № 757։*

Հոկտեմբերի 1.— *Չամուռճյանը, պատասխանելով «Հայկական աշխարհի» բողոքին, փորձում է արդարացնել իր ցինիզմը Նալբանդյանի հիշատակի հանդեպ, տողերի եռևում, սակայն, չկարողանալով թաքցնել իր չարախինդ գոհունակությունը նրա բանտարկության, աքսորի և մահվան առթիվ։*

Չամուռճյանը որոշակիորեն եզրակացնում է, որ Նալբանդյանի «անհավատությունը» տրամաբանորեն հանգում էր քաղաքական «անհնազանդության». «Ծկեղեցվո անհնազանդ գտնվելն անթաժանելի է քաղաքական կառավարության անհնազանդ բլլալը. պարզ բանիք... հավատո սանձը մեկդի դնողները միշտ քաղաքական հնազանդության սանձն ալ նետելու հոժարություն և փափագ ունին...»։

Այնուհետև, նշելով, որ «Հայկական աշխարհի» խմբագիրը «յուր գովաբանած և դմայլած օրինակին» (Նալբանդյանին) հետևելով, վտանգավոր ուղի է ընտրել, Չամուռճյանը Թիֆլիսի առաջնորդի ուշադրությունն է հրավիրում և առաջարկում է «զգաստացնել» «Հայկական աշխարհի» խմբագրին։

«Երեակ», *1866, № 133, 389—390։*

1867

Հունվարի 21.— *«Արշալույս Ռուսաստանը» «Մանզումեի էֆքյար» լրագրից արտատպում է «Հանգուցյալ Նալբանդյանցի վրա երկու խոսք» հոդվածը, հետևյալ ծանոթությամբ. «Ի տեղեկություն Հնդկաստանի մեր բնթերցողաց, արժան կհամարիմք հանգուցյալ Նալբանդյանց Միքայելի վրայոր գրված հետագա հոդվածը հրատարակել «Արշալույսի» միջոցավ։ Այս հոդվածը «Մանզումեի էֆքյար» լրագրին կքաղեմք, որ ինքն ալ «վաճառական» լրագրին առած է՝ կ. Պոլսո հայերենի դարձնելով զայն»։* «Արշալույս Ռուսաստանի», *1867, № 797։*

Հունվարի 28.— *«Մեղու Հայաստանի» լրագրում տպագրվում է Գ. Բ. (?)՝ Գեորգ Բարխուդարյանի՝ «Վայր ընկնող աստղերի» նմանությամբ գրված «Աստղեր» բանաստեղծությունը՝ նվիրված Նալբանդյանի հիշատակին։*

Ա Ս Տ Ղ Ե Ր

(Նվեր Մ. Ն. ճիշատակին)

«Հայրի՛կ, ա՞խ, ինչ գեղեցիկ է
Պարզ երկինքը գիշերով,
Ինչպե՞ս սիրուն զարդարած է
Նա անհամար աստղերով։

Թե ուղիղ է, որ ամեն մարդ
Մի աստղ ունի երկնքում,
Ինչի՞ ապա բոլոր աստղերն
Միատեսակ չեն փայլում։

Ինչի՞ համար միայն տեղ-տեղ
Վառվռում են լույս աստղեր,
Իսկ մեծ մասը այնպես մնար են,
Ասես թե են միայն կայծեր.
Ի՜նչ լավ կըլիներ, որ բոլորն էլ
Այնպես պայծառ փայլեին,
Ինչպես ահա՛, տե՛ս այն աստղը,
Որ վառվում է մեր գլխին»։

«Ձա՛, իմ որդի, դեղեցիկ է
Պարզ երկինքը գիշերով,
Նորան այդպես զարդարել է
Աստված՝ կարող յուր ձեռով.
Ճշմարիտ է, ամեն մարդ էլ
Մի աստղ ունի երկնքում.
Ես քեզ կասեմ՝ ինչի՛ ոմն էլ
Միատեսակ չեն փայլում։

Ինչպես այստեղ, երկրի վերա
Մարդիկ միմյանց չեն նման,
Հասքով, դործով, վարք ու բարքով
են միմյանցից զանազան,
Ահա՛ այդպես էլ երկնքում
Բոլոր մարդկանց աստղերը
Հայելու պես ցույց են տալիս
Իրանց տիրոջ պատկերը։

Բայց մի՛ կարծիր, որդյակ քաղցրիկ,
Որ այն վառ-վառ աստղերը,—
Որոնք իրանց պայծառ լուսով
Զարդարում են նեները,—
Հարուստներին են պատկանում,
Կամ աշխարհիս մեծերին,—
Չէ՛, ոսկին, իշխանությունը
Այնտեղ ոչինչ չունեն գին։

Շատ իշխան կա, որի աստղը
Հազիվ-հազ պսպղում է,
Աղքատ էլ կա, որի աստղը
Գոհարի պես փայլում է։

Ինչ մարդ այստեղ զարդարած է
Առաքինի գործերով,
Նորա աստղն էլ միշտ վառած է
Գնդեցիկ, պայծառ լուսով»։—

«Հայրի՛կ, ա՞խ, տե՛ս, այն գնդեցիկ
Մեծ աստղը թառավ յուր տեղից,
Թուավ ու հանգավ և մի պայծառ
Գիծ թողից յուր ետևից.
Ասա՛, հայրի՛կ, այն ո՞վ աստղն էր,
Ափսո՛ս, ինչի՞ նա հանգավ.
Տե՛ս, երկնքի այն մի կողմը
Ինչպես հանկարծ մթնեցավ»։

«Հա՛, իմ որդի, հազար ափսո՛ս,
Որ պակասեց երկնքից
Այն վառ աստղը, որ գնդեցիկ
Լույս էր տալիս վերևից։
Այս լոպեին մի ազնիվ մարդ
Աստծուն տվեց յուր հոգին։
Մի ազնիվ մարդ, որ միշտ անկեղծ
Ծառայել է յուր ազգին»։

«Մեղու Հայաստանի», *1867, № 3, էջ 22—23։*

Մարտի 7.— Պոլսի «Արևելյան թատրոնում» բեմադրվում է Մ. Սեւեֆճյանի «Վարդան Մամիկոնյան» պիեսը՝ Պետրոս Ադամյանի մասնակցությամբ (Վարդան Մամիկոնյան)։ Պիեսի բեմադրությունն ավարտվելուց հետո ներկայացվում է մի տեսարան՝ նվիրված Նալբանդյանի հիշատակին. բեմում պատկերացվում է սիբիրյան ձյունապատ դաշտում մեռած մի շիրիմ, որտեղից բարձրանում է Նալբանդյանի «ոգին» և արտասանում «Ազատություն» բանաստեղծությունը։ Այնուհետև, Մ. Սեւեֆճյանը մի ճառ է արտասանում ցարական միապետության դեմ։

«Ժամանակ», *մարտի 11։*

Քերված հնչակավոր դեմագոգ Գ. Հ. Ադամյանի և կենսագրություն, *1896, էջ ՃԹ։*

Մարտի 11.— «Մասիս» թերթը, նշելով, որ «Վարդան Մամիկոնյան» ողբերգության բեմադրությունը (մարտի 7-ին) մեծ հաջողություն է գտել թատերասեր հասարակության կողմից, հայտնում է, թե այսօր (մարտի 11-ին), «բազմաթիվ ազգայնոց» խնդրանոք ներկայացումը կրկնվելու է «ի հիշատակ պ. Մ. Նալբանդյանցի, որուն վրա ալ նաև գնդեցիկ բանախոսություն մը և իր մեկ գնդեցիկ տաղերգությունը պիտի արտասանվին Գարագաշյան օրիորդներեն։ Ամեն ջանք և պատրաստություն ի գործ դրված են այս ազգային հանդեսն ամեն մասամբ կատարյալ ընելու համար»։

«Մասիս», *1867, № 787։*

Ապրիլի 4.— «Անձնանվեր ընկերության» անունից «Մասիսի» խմբագրին ուղղած նամակում Ո. Շահանյանը հայտնում է, թե Մ. Սեւեֆճյանի «Վարդան Մամիկոնյան, փրկիչ հայրենյաց» ողբերգությունը երրորդ անգամ ներկայացվելու է ապրիլի 6-ին. «Նաև,— ավելացնում է նամակագիրը,— ի հիշատակ Մ. Նալբանդյանցի հորինված ճառը վերստին պիտի առնվաբանն օրիորդ Ե. Գարագաշյան առաջին դերասանուհին, ըստ խնդրանաց բազմաթիվ հասարակության»։ Այնուհետև նշվում է, թե ո՛րտեղ և ո՛ւմից կարելի է ձեռք բերել հանդեսի տոմսերը։

«Մասիս», *1867, № 25։*

Ապրիլի 6.— Պոլսում տարածվում է Նալբանդյանի լուսանկարը՝ «Ազատություն» բանաստեղծության հետ միասին տպագրված։ Այդ առիթով «Մասիսը» հետևյալ «Մանուցումն» է անում. «Մոսկվայի «Հյուսիսափայլ» լրագրի նախկին խմբագիր հանգուցյալ Մ. Նալբանդյանցի լուսանկար պատկերը, որուն ներքև Ազատության վրա իր հորինած գողտրիկ երգը տպված է, երեք զուրուշ գնով կծախվի Մահմուտ փաշան Դաշրքճի խանին քով, գրավաճառ Մ. Գեորգին և Քյուրքճի խանին դիմացը՝ պ. Հ. Գամաֆյանին խանութներեն։

«Մասիս», *1867, № 791։*

Հուլիսի 1.— «Կիլիկիա» ամսագիրը Նալբանդյանի մասին գրում է. «Թիֆլիզի «Վաճառականն» անուն լրագրուն մեջ կկարդամք Միքայել Նալբանդյանցի մահը, բայց Նալբանդյանց չպիտի մեռնի հայոց համար. «Հյուսիսափայլերն» ողջ պիտի պահեն զանի, որոնց էջերը հաճախ լեցուցած էր. իր գործերը պիտի հիշատակվին, ու պիտի արձանագրեն զինքը մեր պատմության ազգասիրաց ցանկին մեջ»։

«Կիլիկիա», *1867, № 1, 28։*

Հուլիսի 8.— Ղուկաս Պալտազարյանը Մահր Մսերյանին գրած նամակում խնդրում է նրա կարծիքը Նալբանդյանի մասին, ավելացնելով, թե՝ «ոմանք նրան (Նալբանդյանին) բարձրացնում են մինչև երկինք, ուրիշներն իջեցնում են մինչև դժոխք, իրև մի խառնակիչ, անհավատ» երիտասարդի։ Վերջում հայտնում է, թե Թիֆլիսից ուղարկել են Նալբանդյանի կենսագրությունը, որի մեջ նա «շարաշար դատապարտվում է»։

Մատենադարան, Մահրյաններ ֆոնդ, *թղթ. 205, վ. 1170։*

Հոկտեմբերի 15.— *Միք. Նալբանդյանի մահվան առաջին տարեդարձի առթիվ Մ. Մամուրյանը գրում է «Մ. Նալբանդյանց — իր կենաց վերջին պարագաները» հոդվածը։*

«Շուրջ տարի մը առաջ, երբ ձայն եւլավ, թե Նալբանդյանց մեռեր է, բոլոր այն հայերը, որ այս հանճարեղ և հայրենասեր անձը կճանչեին, խոր տրտմության մեջ ընկղմեցան և քաջ զգալով, որ Նալբանդյանց գոհ ընկած է գաղտնի դարաձեռ ընկղմեցան և քաջ զգալով, որ Նալբանդյանց գոհ ընկած է գաղտնի դարաձեռ նակալության մը, անեծք կարդացին անոր քշնամիներուն դեմ և անհամբեր էին դեռ անոր կենսագրությունը կարդալով՝ մխիթարվիլ։ Այս մխիթարությունը կապասեին մեր ռուսահայկական հայերուն կողմեն, որ ավելի մոտ և գրեթե ականատես ըլլալով այս կանխահաս մահվան, ավելի դյուրություններ ունեին պետք եղած տեղեկությունները քաղել և դեռ գոհ ընել։ Բայց ավա՜ղ, օրեր, ամիսներ անցան և տակավին չտեսանք գրված մը, որ այս տխուր պաշտոնը կատարեր։ Դամբանական լռություն մը կտիրե Նալբանդյանցի կենաց վրա, ինչպես կտիրե նույնպիսի անտարբերություն մը ատրուկ հայերու սրտերուն մեջ։ Թեև այն կյան-

քը, այն անձնվեր, արդյունավոր և աղմկալի կյանքը թե՛ հայ գրականության, թե՛ ազգային դատախարակության և թե՛ ապագային համար բրած մեծամեծ ծառայութիւններովը օգտավետ դասեր կրնա ընծայել մեզի։ Է՛հ, ստրուկ հայը իր գովասանութիւնը, դամբանական ճառերը, ներբողները ամիրային, մեծատունին, աստիճանավորին համար կպահե, իսկ ճշմարտութեան և ազատութեան նահատակի մը համար արտասուք մ՚անգամ չունի... և որ աղետալին է, շատ տեղ իր սիրականին վրա լալու հրաման չունի...

